4431, 4432
4433

281.62
2-22

Ժ-599
281·6 (09)

# ԶԱՄԲՌ

ԳԻՐՔ

Որ կոչի քէշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող ընաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէից:

ՀԱՄԱԺՈՂՈՎԵՑԵԱԼ ԵՒ ՇԱՐԱԴՐԵՑԵԱԼ

Ի ՍԻՄԷՕՆԷ ՑԱԻՍԱՀԱՐ ԵՒ ՎՇՏԱԿՈԾ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԷ ԵՐԵՒԱՆՑԻՈՅ:

ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ Նոյնակերտի Աթոռոյս, խնամարան եւ ինչութիւն իմա նստող Հայրապետաց, գործակալաց եւ համայն հարազատից պաշտօնէից սորին:

Յամի ներմարմնութեան Տեառն, հազար եօթն հարիւր վաթսուն եւ հինգ — 1765, ՌՁԿԵ —:

Իսկ ըստ Հայոցս թուականի, հազար երկու հարիւր տասն եւ չորս:

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԻԳ — 1873

11080

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

892-2006

## ԱՌԱՋԻ.

Մի օրինակ և եթ էր մատենիս ՋԱՄԲՌ անուանելոյ, որ իբրև գանձարան մթերէր յինքեան ոչ միայն զհակիրճ եկեղեցական պատմութիւն Հայաստանեայց յառաջին դարէ անտի ցերրորդ քառորդ եօթնետասաներորդի դարու, և յատկապէս զինչ ինչ անցեալ և զժամանակակից երևելի և նշանաւոր անցս և զտառապանս Էջմիածնի ևն, այլ և զտեղեկութիւնըս և զցուցակս ազգի ազգի կալուածագրոց, հողոց, գիւղօրէից, արքունական հրովարտակաց, արտօնագրոց, կալուածագրոց, ընծայագրոց և այլոց և այլոց, զորս աշխատասիրեալ է արժանայիշատակ և բազմարդիւն Կաթուղիկոս ամենայն Հայոց Սիմէօն Երևանցի ցվերջին ամն Հայրապետութեան իւրոյ։

Թէպէտ կտակեալ է Լուսահոգին Սիմէօն՝ որպէս զի Յաջորդ Հայրապետք և Գահակալք Ս. Էջմիածնի շարունակեսցեն և արձանագրեսցեն ի ամին զանցս իւրաքանչիւր ժամանակաց իւրեանց, սակայն անգիտանամք զարգելման՝ եթէ ընդէ՞ր մնացեալ էր ցարդ ապարդիւն և ոչ ոք հոգացեալ արձանագրել զեր

ինչ՝ որպէս հրահանգեալ և խնդրեալ էր Լուսահոգի Սիմէօն Կաթուղիկոս:— Արդարև գըտանին ի Հայրապետական Աթոռս Կոնդակք, հրովարտակք, կալուածագիրք և թղթեանք պիտանիք յաւուրց անտի Հայրապետութեան Յաջորդաց Սիմէօնի, յորս երևին ինչ ինչ նշանաւոր անցք արժանիք յիշատակաց, միանգամայն դէպք դառնագինք, զրկանք, բռնութիւնք, տառապանք և խարդաւանութիւնք ի յետին ժամանակս նիւթեալք յօտարաց· բայց քանի առաւել արժանահաւատ լինէին այնոքիկ և անկորուստ ապահովէին իբրև ի միում յամփոփ յիշատակագրութեան և դիւրութիւն մեծ ընծայէին ընթերցողացն ամենից՝ եթէ պատմագրէին ի մին Մատենիս, զորպիսիս այժմ ստիպիմք ծաղկաքաղել ի յիշատակարանաց և ի հատ և կտոր թղթեանց՝ ոչ սակաւ աշխատութեամբք և դժուարութեամբք:

Ի վերայ այսր ամենայնի՝ երկուցեալ ի ժանեաց ժամանակին՝ թողեալ զայլ և այլ թերութիւնս և առանց յապաղելոյ զտպագրութիւն սորին,— զի ոչ բազում ամք էին յորմէ հետէ ազատեցաւ սա ի գերութենէ . . . — փոյթ եղև՛ տալ ի լոյս ըստ հրամանի Վեհ. Հայրապետի ամենայն Հայոց Տեառն և Տեառն Գէորգեայ Դ. Ազգասէր Կաթուղիկոսի, զի մի՛ որպէս երբեմն զրկեսցի Մայր Աթոռս և Ազգ մեր նաև յայսպիսւոյ պատուական Գանձարանէ:



Արդ խորաքննին և բանագէտ անձանց է գործ՝ առանց դեգերելոյ ի բծախնդրութիւնս թերևս վայրապարս՝ կշռել զարժանաւորութիւն և զկարևորութիւն Մատենիս՝ մանաւանդ ի ժամանակիս յայսմիկ, և առ յապայն,— որպէս զի ըստ արժանւոյն պսակեսցի նպատակ Հեղինակին՝ եթէ ուշադիր վերծանողք հանդերձ բաղդատութեամբ ժամանակաց և տերանց և գաղափարաց՝ զաչս մտաց յարցեն ի սմա և քըննեսցեն:

Նա և չէ հնար ընթերցանելեաց չափել զընդարձակութիւն պարունակութեանց մատենիս և առանց թողելոյ զարտասուս յականողեաց, և այնպէս է մեզ կարծել, զի ողք, հառաչք, թառանչք և վիշտք ծանունք պարտին լինել և ի ժամանակիս՝ ըստ արտաքին բերմանց՝ քան զորս ակնարկէ և յիշէ Սիմէօն Կաթուղիկոս և արտասուէ ի մեծ վիշտ:

Ի վերջ գրոցս յաւելաք զհակիրճ կենսագրութիւն Արժանայիշատակ Հեղինակին և զգիտողութիւնս ինչ զժամանակակից իրաց:

Փութամք կատարել և զպարտս մեր յայտնելով զհաւաստիս խորին շնորհակալեաց առ բարեպաշտս Գանձակեցի Ազգայինս՝ որք ըստ յորդորանաց Առաջ.— փոխանորդի Գրիգոր Վարդապետի Տէր Ստեփաննոսեանց՝ կանխավճար ստորագրութեամբք գումարաց նպաստեցին ծախուց տպագրութեան Մատենիս, զորոց

զանուանս ընդ գումարացն դրոշմեցաք ի վերջ գրոցս։

— Եթէ ընդ ամենայն տեղիս Ազգայինք մեր այսպիսի ըղձիւք և բաժանորդագրութեամբք օգնեսցեն Տպարանի Մայր Աթոռոյս սակս տպագրութեանց այլ և այլ ընտիր ձեռագիր մատենագրութեանց՝ դասագրոց և այլոց, անշուշտ նպաստ մեծ ընծայեսցեն Հայկ. մատենագրութեան և գրականութեան։ —

Տ. ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առ դիւրեցուցութիւն ինչ առաւելապէս տրուեալ է Նորին Հեղինակէ, վասն առաջիկայ գրոյս որ կոչի Ջամբռ և Յիշատակարան սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և այլոց ընդհանուր վանօրէից սորին:

Քանզի աշխարհս և աշխարհայինքս են միշտ ի փոփոխման և ենթադրեցեալք զանազանից պէսպէսութեանց ըստ վճռահատութեանց սրբազանից գրոց, և այս այնքան սաստկապէս, մինչ զի ոչ ինչ ունին ի հաւաստութեան: Քանզի ապագայքն հաւաստի տրամադրութիւնքն տան անհաւաստութիւն ներկայականաց, որոց և զունեցեալսն տան ունել տարակուսանօք, և զչունեցեալսն կարծեօք: Արդ այսց ամենից փոփոխմանց և տրամադրութեանց շտեմարանն և մանաւանդ ներգործական և ծնողական պատճառն է ժամանակն, որ ի հոլովմն անդադարապէս՝ հոլովէ ընդ ինքեան և զորպիսութիւնս ժամանակաւորաց: Ապա ուրեմն կարի հարկաւոր է մեզ ժամանակաւորացս՝ զնոյն ինքն զժամանակն ունել միշտ առաջեան իբրև զհայելի, և ի նմանէ ուսանիլ զօգուտն մեր որքան եմք ի նմա սևեռեցեալք: (Քանզի ժամանակն ունի զանցեալս, զներկայս, և զապառնիս, որ անցելովն խրատէ զներկայականս, և զգուշացուցանէ զապագայականսն): Եւ այս որո՞վ եղանակաւ կարէ լինել՝ եթէ ո՛չ ներկայացուցանելով մեզ զորպիսութիւնս անցելոցն, յորս լիապէս երևին բոլոր որպիսութիւնք փոփոխմանց յաջողութեանց և ձախորդութեանց, օգտից և վնասուց, փորձառիթ բերմանց և նոցին հնարիցն: Արդ այս թէպէտ ամենայն մարդոյ է հարկաւոր, որք (գոլով բանականք և ենթարկեցեալք պէսպէս հոգոց և փոփոխմանց,) ըստ չափու կարօտին հայելւոյ և հնարագոյց օրինակաց, սակայն ևս առաւել յատկացելոց և գլխաւորաց՝

և բազմապէս հոգունակաց անձանց։ Ապա որքան ես առաւել հարկաւորագոյն է սրբոյ Աթոռոյս Էջմիածնի նստող Հայրապետաց և նոցին գործակալաց և միաբանիցն սեպհականաց, և մանաւանդ յայսպիսում վտանգաշատ ժամանակիս։ Քանզի սուրբ Աթոռս է շնորհօքն Աստուծոյ մեծանուն և հռչակեցեալ, լցեալ միաբանիւք և պէսպէս պաշտօնէիւք, պերճացեալ երևելի զարդուք և կահիւք, ծոխ փառօք և անթագուցանելի հանդիսիւք, ունող բազմապիսեաց ելից և մտից։ Նա վերջապէս գոլով քաղաք ի վերայ լերին՝ որ ոչ կարէ թաքչել ըստ Տեառն բանի։ Ըստ անուանն՝ իշխող բազմաց, ըստ գործոյն՝ և ոչ միոյ, ի լեզուս՝ ունող ամենայն բարեաց, և ի յինքն՝ կարօտ յամենայնի։ Գտանեցեալ ընդ իշխանութեամբ անիշխան տերանց խստասրտաց և գազանաբարոյից յափշտակողաց, և ինքն անզօր և անուր։ Նպատակ բուռն և ամենակերպ պահանջողաց իւրայնոց և այլայնոց, և ինքն կամաւոր և երկիւղիւ մուրացող։ Արդ այսպիսւոյ տան և սորին տանուտեառն՝ և գործակալացն և հարազատ ընտանեացն որքան հարկաւոր է ի հայելիս և ի հնարացոյց խրատս և յօրինակս անցելոցն պարապիլ, գիտութեան փորձառողացդ թողում։

Արդ ես յետինս ի սպասաւորաց և ստրուկս ի պաշտօնէիցն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի՝ Սիմէօն լոկ և եթ անուամբ Կաթուղիկոս, որ պատահեցայ ի վերջին և յամենաթշուառ ժամանակիս, ի ՌՄԺԲ թուոջս մերում, տեսի՝ զի յառաջնոց լուսահոգեաց և երանելեաց Հայրապետացն մերոց (որոց բարերարութիւնքն, օգտարարութիւնքն, և արիւնախառն քրտամբք աշխատութիւնքն յոլովք և անջնջելիք են ի վերայ սրբոյ Աթոռոյս, որոց զարդիւնսն վայելեմք մեք ի վաստակս նոցա մտանելով, սակայն) ոչ ոքն էր արարեալ զփոյթ ի գիր արկանել և արձանացուցանել զորպիսութիւնսն սրբոյ Աթոռոյս և զպարագայսն սորին, գոնէ և զառ ինքեամբք եղեալ պատահմունսն, յորոց ոչ սակաւ օգուտք յառաջանային յետնոցս և յառաջանալոց էին ի ժամանակս ժամանակս։ Արդ ես յամենայնի անար-



դիւնս և անպէտս՝ որովհետև չունէի զկարօղութիւն և չկարացայ խոկ ինձէն յատկապէս զարդիւնաւոր գործ ինչ յառաջացուցանել, զայս գտի ինձ բանեալ, և իբր զդիմակալ երեսաց իմոց, այս ինքն զարարեցեալ բարերարութիւնսն և զոսկեփայլ գործսն նախնեաց երանելեաց (որք ծածկեցեալք էին և որպէս թէ անհետացեալք խաւարաւ մոռացութեան և անգիտութեան՝) ի լոյս բերեալ փայլեցուցից. որովք ոսկեպէս անուանք նոցին փառաւորեսցին մշտնջենապէս ի սուրբ Աթոռոջս ի մէջ տաճարիս Աստուծոյ, ընդ որս և ես և իմս այս՝ գոնէ իբրև զևեցեղէն հաշուեցեալ յիշատակիցուք։ Վասն որոյ յառաջադրեցի զայս գիրք, որ կոչի Յիշատակարան, և պարունակօղ բնաւից որպիսութեանցն սրբոյ Աթոռոյս։ Քանզի գրեցի ի սմա զամենայն որպիսութիւնսն, այս ինքն զորպիսաբար հաստատիլն, զորպիսաբար կեալն և կառավարիլն սորին և սորին Աթոռակալացն՝ ներքսապէս և արտաքսապէս։ Զորքանաբար տարածումն իշխանութեանն և պատուոյն և զերբեմնական տկարութիւնն և զվշտակրութիւն, զ՛ի սմա նստող Կաթուղիկոսունսն, որոց և զորպէսն, և յորս զառաւել բարերարսն։ Այլ և զինչ ունիլն սորին, զորպէս և զերբ ունիլն, այս ինքն Նուիրականն, Առաջնորդականն, և զայլ արդիւնաբեր տեղիսն որպիսութեամբքն իւրեանց՝ զմիւլքատու 1) գեօղօրայսն, զմիւլքսն, այս ինքն զայգիս, զջրաղացս, զդինկս, զտունս, զխանութս, զսերմանելի տեղիսն, զջուրս և զառուս, և զայլս այսպիսիս հանդերձ իւրաքանչիւր Տաճկական և Հայկական ղաբալայական 2), վագֆական 3), վկայական և վեճունական գրովքն իւրեանց, և թէ երբ և որոց ձեռօքն։ Այլ և զթագաւորական՝ զռնակալական և զդատաւորական գրեանսն սորին, հանդերձ պարագայիւքն իւրեանց, և մանաւանդ զմաաֆութիւն 4) սորին՝ թէ որպէս, որքան, և երբ, այլովք պարագայիւքն։

---

1) Միւլք, կալուածք, երկիր, արդիւնք, ևլն։ — 2) Ղաբալայ, կալուածագիր։ — 3) Վագֆ. կալուած, ժառանգութիւն, կտակեալ ինչք բարեպաշտական յօգուտ հասարակաց ևլն։ — 4) Մաաֆ, ազատ, ազատութիւն, ևլն։

Այլ և արձանացուցաք ի սմա զնշանաւոր և զ՚ի մտի պահելի իրակութիւնս և զօգտաբեր և զվնասատու պատահմունս անցելոց՝ ի յօրինակ և ի հայելի ապագայից, զի զօգտաբերսն առ ձեռն ունելով, ի վնասակարացն խոյս տայցէք։ Այլ և արձանացուցաք ի սմա զամենայն որպիսութիւնս երկրիս և շրջակայիցն վանօրէից մերոց հանդերձ պարագայիւքն իւրեանց. և վերջապէս զխտուռն մեր և ջանք այս էր՝ զի գիրքս այս լիցի հանրականապէս պարունակօղ, հայելի և ծանուցանօղ ամենից որպիսութեանց և ապագայից սրբոյ Աթոռոյս և վանօրէիցն մերոց, և յաւիտենական և մշտայիշող արձան իրակութեանցն անցելոց ի զգուշութիւն յապա եկելոց։ Վասն որոյ խնդրի ի մերազնէից և ի կարդակցաց եղբարցդ իմոց զկնի մեր յաջորդողաց (որոցդ է հարկաւոր և շատ պիտանի մանաւանդապէս՝ որպէս փորձելոց էք) նախապէս՝ զի որպէս նուաստութիւնս մեր ի նախնեաց անտի մինչև ցառ մեօք զմնացեալսն և ունեցեալսն, զնոցին ունեցման գրեանսն և զայլ պարագայսն մեծաւ տաժանմամբ և բազմաւ աշխատութեամբ (մինչ գրեթէ ի կեանս իմ այս էր մեծ հոգ և ցաւն իմ,) առ ձեռն բերեալ, զանհետացեալ և նսեմացեալսն ի լոյս ածեալ և վերանորոգեալ, զանկանոնսն ընդ կանոնիւք արկեալ, զցան և զցիրսն ի մի ժողովեալ, և որպէս թէ՝ ի զանազանից գեղեցկագունից և յանուշահոտունեաց ծաղկանց փնջեալ և եդեալ ի տուփս յայս՝ առ ձեզ ընծայեցաք. Նմանապէս և դուք ըստ այսմ կանոնի ամբողջապէս և հաւատարմօրէն պահելով՝ զկնի յաջորդողացդ ձերոց ընծայեցէք, զի մի՛ անհետասցին և կորիցեն և այսպէս մնացեալք որպէս և շատքն անհետացեալք են յանհոգութենէ անցելոցն երանելեաց։ Երկրորդապէս, զի որպէս մեք՝ եթէ նախ քան զմեզ անցելովքն, և թէ զմեօք պատահեցեալսն՝ գլխաւոր, և հարկաւոր և զ՚ի մտի ունելի գործսն և զեղելութիւնսն (թէ օգտաւէտ և թէ վնասաբեր,) ի գիր արկեալ արձանացուցաք ի սմա, նմանապէս և դուք զառ ձեօք եղեալսն ի սմա գրեալ ի յիւրաքանչիւր տեղւոջն արձանացուսջի՛ք։ Քանզի անցելոցն



անցք՝ խրատք և վարդապետութիւնք են յետնոց։ Երրորդապէս՝ որք վայելէքդ զսա, օգտիք, և ևս յաւելուք, յիշեցէք անգամ մի ի մաքուր յաղօթս ձեր զնախկին հեղինակս սորին. որպէս զի և դուք յիշեսջիք ի յապա եկելոցն ձերոց։ Ողջ լերուք։

## Գլ. Ա.

Ցուցումն ճառին որպիսութեան սրբոյ Աթոռոյս Էջմիածնի ի սկզբանէ յօրինելոյն մինչև ի յամայութեանն և ի վերանորոգութեանն. Գործելով և ասելով ինչ պատմութեան վասն սրբոյ Աջոյ Լուսաւորչին մերոյ.

Սուրբ և Աստուածային՝ Քրիստոսակերտ և լուսանկար ամենից Հայոց Աթոռս Էջմիածին, առ յոր էջ Միածին Բանն Աստուած հայրական փառօք, հրաշալի լուսով և բազմութեամբ զօրօք հրեշտակաց, և ձեւակերպեալ յօրինեաց զսա աստուածային լուսով, ըստ որում և հրաշակերտեաց սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր ի յաթոռ յատկապէս ազգիս Հայոց, և մայր ամենայն Եկեղեցեաց և շնորհածին ծնող նոցին մանկանց, եղև ի ՅԵ թուոջ մարդեղութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Քանզի որպէս ի հնումն եցոյց Մովսիսի (որ առաջնորդէր հնոյն Իսրայէլի) զձև խորանին ի շինել յատուկ տեղի և բնակարան աստուածութեան իւրոյ, և ի դաստիարակ և տեղի ապաւինի հնոյ ժողովրդեանն, նոյնպէս և ի նորումն եցոյց զձև խորանիս այսմիկ սրբոյն Գրիգորի (որ եղև առաջնորդ նորոյս Իսրայելի) ի շինել յատուկ տեղի և բնակարան ինքեան՝ ի մայր և դաստիարակ՝ և տեղի ապաւինի նորոյս ժողովրդեան ազգիս Հայոց։ Արդ սուրբ Աթոռս այս աստուածակերտ յառաջին ժամանակսն ի Լուսաւորչէն մերմէ ի յորդիսն և ի թոռունսն և ի մերձաւորսն նոցունց էր լաւապէս շէն և պայծառ՝ հոգևորօք և մարմնաւորօք, և պերճ իշխանութեամբ։ Քանզի ձգիւր անխոնարհելի և հոգևոր իշխանութիւն սորին ի յամենայն Հայս, ի Վիրս, և յԱղուանս։ Եւ ի սմա նստէին Հայրապետքն Ազգիս մերոյ, և ի սմանէ ծաւալիւր յամենայն երկիր խորհուրդք եկեղեցւոյ և սրբալոյս Միւռոնն օծութեան։ Ապա ի տկարանալ իշխանութեանն մարմնաւորի Ազգիս մերոյ, և ի զօրանալ թշնամեաց, և է յաճախել պէսպէս յարուցմանց հինից, թագաւորք և իշխանք մեր ըստ ձեռնտուութեան ժամանակին՝ ուր տեսանէին պատեհաւոր և ձեռնտու ինքեանց և յապահովութիւն ի թշնամեաց՝ անդ ամրացեալ բնակութիւն առնէին՝ ընդ նոսին և Հայրապետքն։ Որպէս և ի ՃՀԷ թուականիս մերում, յանիշխանութեանն Ազգիս մերոյ (զի ի ՃԾԳ թուոջն մերում, պիղծն Արդլայ զամենայն իշխանսն ի յԵկեղեցին Նախիջևանու այրեաց) Դաւիթ Կաթուղիկոսն Արամունեցի ի Կուտէս գաւառէ վշտացեալ ի տաճկաց փոխեաց զԱթոռն Հայրապետական ի Դվին. ուր մնաց Հայրապետարանն մինչև ի



ՅԿ թուականն մեր. յորում Սմբատ Տիեզերակալն պարսպեաց զքաղաքն յԱնի, և շինեաց զկաթուղիկէ եկեղեցին. յորում ժամանակի և Գրիգոր կաթուղիկոսն (որ զկնի Մաշտոցի երրորդ Հայրապետ էր՝) փոխեաց զՀայրապետարանն ի Դվնայ ի քաղաքն յԱնի։ Յոր և տևեաց ի ժամանակս ինչ, մինչև ի ՇԴ թիւն մեր, յորում վերջացաւ թագաւորութիւնն Բագրատունեաց (․ որոյ վերջինն էր Գագիկ որդի Աշոտոյ)․ և եկն պիղծն Ալփասլանն և աւերեաց զքաղաքն յԱնի և զեկեղեցիսն ի ՇԺԹ թուոջն մերում ի Հայրապետութեանն Պետրոսի կաթուղիկոսին։ Յայս միջոցիս՝ ի միում ժամանակի՝ ի չորս տեղւոջ Հայրապետք նստան ներհակ իրերաց, Պետրոսն ի Յանի, Գրիգոր վկայասէրն ի Մսր, Թէոդորոսն ի Հոռ, և Պօղոսն ի Մարաշ։ Ապա ի թուին ՇԽԵ, յորում հաստատեցաւ թագաւորութիւնն Հայոց ի Կիլիկէ Ռուբենիւ, յետոյ Կոստանդ, յետ որոյ Թորոս. ի ԺԵ ամի թագաւորութեանն սորին, Գրիգոր Տղայն՝ եղբայր Ներսիսի՝ փոխէ զՀայրապետութեան Աթոռն ի Հռոմկլայն ի ՇԿԶ թուոջն մերում։ Յորմէ վասն տղայութեանն հասակին (զի էր ԺԵ ամաց), և վասն փոխելոյն զԱթոռն ի Սիս, Դաւիթ եպիսկոպոսն Ախթամարու ապստամբեցաւ և նստաւ Կաթուղիկոս յԱխթամար ի սոյն թուին, և տևեաց կաթուղիկոսութիւնն ի Հռոմկլայն՝ յամն ՃՁԷ մինչև ի Ստեփաննոս ըստ կարգին. զի ունէին զպատիւ Հայրապետական և զԱջ Լուսաւորչին. (թէպէտ և ոմանք հեստէին ի յաւելեալ կարգէն)։ Ապա ի չորրորդում ամի Հայրապետութեանն սորին, եկն Մսրայ Սուլթանն և գերեաց զԿլայն, զԿաթուղիկոսն և զԱջ Լուսաւորչին հանդերձ այլովք սրբութեամբք և եկեղեցական պաշտօնէիւք տարաւ ի Մսր, ի ՉԽԴ թուոջն մերում. ուր և մեռաւ Ստեփաննոս կաթուղիկոսն։ Ապա այնուհետև փոխեցին զԱթոռն ի Սիս, ուր և նըստաւ Գրիգոր Անաւարզեցին ի նոյն թուոջն։ Արդ զգերիլն Ստեփաննոսի և Աջոյն սրբոյ ի Մսր պատմեն ամենայն պատմագիրք. բայց զդարձ ինչ ոչ ինաւ։ Թէպէտ և այնուհետև բազմիցս գերի և աւարի տունն Կիլիկեցւոց ի Մսրացւոցն, բայց մեք ոչ եդաք աստ։ Ապա զկնի ՃԻԹ ամաց եւս գայ Սուլթանն Մսրայ ի ՊՀԲ թուոջն մերում՝ ի ժամանակս Լևոնի թագաւորութեանն, սպառ աւերէ զԿիլիկէ, և բոլորովին գերէ և աւերէ, և զԼևոն իւրայնովքն տանի ի Մսր, և բառնայ զթագաւորութիւնն Ռուբենեանց ըստ ամենից ճշմարիտ պատմագրաց, և եղծանէ զհայրապետութիւնն Կիլիկեանց։ Թէպէտ և այլք զկնի այնորիկ որպէս զաշտարակաշէն ամբարտաւանսն ընդ Աստուծոյ որպէս թէ մաքառիլ ի մտի ունէին։ Քանզի որպէս երբեմն բարձմամբ թագաւորութեանն Բագրատունեաց փոխեցաւ կաթուղիկոսարանն ի յԱնւոյ ի Կիլիկէ, նոյնպէս և ի բառնիլ թագաւորութեանն Ռուբենեանց՝ փոխեցաւ անտի ի յիւր սեփական յԱթոռ ի Վաղարշապատ տնօրինեց-

մանքն Աստուծոյ. Քանզի ի յաւերել տանն Կիլիկեանց և ի բառնիլ իշ-
խանութեանն Ռուբինեանց, յետ ԺԲ. ամի, ի ՊԴ. թուոջն մերում՝ ըստ
ամենից ճշմարտապատում պատմագրաց, յայտնեցաւ սուրբ Աջն Լուսաւոր-
չին ի յԷջմիածին, ուր և ժողովեցան բոլոր իշխանք, ժողովուրդք, և վանա-
կանք աշխարհիս Հայոց ի տուչութենէն Աստուծոյ, յորդորեցեալք ի բազ-
մապիսեաց հրաշից, հաստատեցին զսուրբ Էջմիածին վերստին Աթոռ Հայ-
րապետական Ազգիս Հայոց, և եդին կաթուղիկոս զտէր Կիրակոս. Իսկ առ-
տանօր թէպէտ աւելորդ է երկարել վասն վերադարձման սրբոյ Աջոյ Լու-
սաւորչին մերոյ ի սուրբ Էջմիածին, սակայն մինչ յամառեցեալքն ի յախտ
ինքնահաճութեան ոչ դադարին յաքացելոյ ընդդէմ խթանի ճշմարտու-
թեանն, առ նոսա ասասցուք զայսքանս ի կարճոյ.

Արդ, այնու ժամանակաւ պատմիչքն և եղեալ գործքն ամենքեան համա-
ձայն վկայեն՝ թէ ի յայս ժամանակս Աջ Լուսաւորչին վերադարձաւ ի սուրբ
Էջմիածին. Եթէ դու հակամարտիս, թէ որո՞վ և ո՞րպէս, ես ասացից՝ թէ
որո՞վ և ո՞րպէս կենսունակ սուրբ Նշանն Վարագայ և Գեղարդն Աստուա-
ծային եկաւորեցան ի մեզ միջնորդութեամբ հարազատից ոմանց ծառա-
յից Աստուծոյ, նմանապէս և սուրբ Աջ Լուսաւորչին ի յիւր սեփհական
յԱթոռ. Եթէ յայնս թերահաւատիս, և առ յայս չէ զարմանք. Դար-
ձեալ եթէ երկնաւոր և ամենակալ Թագաւորի ակնարկութեան ոչ հաւա-
տաս, առ բերից քեզ և զարարս երկրաւոր և աշխարհական Թագաւորաց,
որոց ոչինչ կարես բացասել մինչ ներկայական եղելութիւնքն վկայեն.

Արդ որպէս ի վերդ ասացաք, քանիցս անգամ Կաթուղիկոսարանն և բո-
լոր տունն Սսայ կողոպտեալ և աւերեալ եղեն ի Մսրայ Սուլթանացն, թէ
եկեղեցականք և թէ աշխարհականք, և մանաւանդ առ Ստեփաննոսիւ, յո-
րում յայտնապէս ընդ կաթուղիկոսին և սուրբ Աջն և այլք սրբութիւնք
տարեալ ասեն պատմիչք՝ և անտի առ ձեզ վերադառնալ յոչ ուրեք ու-
նէք զվկայութիւն հաւաստի, թէպէտ հուչակէք որպէս և կամիք. Բայց մեք
ունիմք զպատմիչսն ժամանակին վկայ, որք համաձայն ասեն թէ, ի ԶԺ
Թուոջն մերում մինչ Զաքարիա կաթուղիկոսն Աղթամարու գնաց ի Դաւ-
րէժ ի տեսութիւն Ջհանշահ Թագաւորին, յորժ սիրեցեալ ի նմանէ
ընկալաւ զկաթուղիկոսութիւնն Էջմիածնի՝ ընդ նմին պարգև և զԱջ սուրբ
Լուսաւորչին, զԽաչվանն և զՈւրարն, և գայ յԷջմիածին. Եւ յետ ժամա-
նակաց ի ԶԺԱ թուոջն առնու զսուրբ Աջն, զԽաչվանն և զՈւրարն, և գը-
նայ վերստին ի բնիկ տեղին իւր յԱղթամար. Եւ յետոյ նոյն սուրբ Աջն և
Խաչվանն և Ուրարն՝ ձեռամբ Վրդանէս վարդապետին՝ վերադառնայ ի սուրբ
Էջմիածին ի ԶԻԶ թուին ի հայրապետութեանն Սարգսի և Յովհաննիսի.
Իսկ Ջհան-շահն էր որդի Ղարա-Իւսուֆին, որ ի Լէնկթէմուրէն ի բան-



տի արգելեցեալ կայր ի Մսր ի բազում ժամանակս. ապա ի պակասել
Լէնկթէմուրին, ելեալ ի Մսրու բազում զօրօք գայ ի Դավրէժ, և անդ
թագաւորէ։ Ասա՛ ինձ, զի՞նչ ինչ փոյթ այլ ազգի և աշխարհական Թագա-
ւորի միոյ սուտ Աջ հնարել և կամ խաբել միոյ սեաւգլխոյ. Արդ մեք գի-
տեմք և հաւատամք, սակայն զայսքանս ասացաք՝ զի և դուք հաւատասջիք.

## ԳԼ. Բ.

Յորում ցուցանէն յետ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ Առաքելոց. Լուսաւորչին՝
և Հայրապետաց աթոռոյ մերոյ, հանդերձ իւրաքանչիւր նշանաւոր գործովքն իւրեանց.

Նախկին և հանրականապէս Փրկիչն ամենայն մարդկան և լուսաւորիչն
բոլորի աշխարհի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ընտրեաց իւր զերկոտասան
աշակերտս (զորս և առաքեալս, սիրելիս, բարեկամս, խորհրդականս և հա-
ղարապետս անուանեաց, զորս և կոչեաց լոյս և աղ աշխարհի. որոց և
ետ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ, փակելոյ և բանալոյ, զորս և
ելից և հրաշլեաց Հոգւոյն իւրով սրբով, և հրամայեաց երթալ յաշխարհ
ամենայն և քարոզել զԱւետարանն իւր սուրբ, և ածել զամենայն ազգս
և լեզուս ի խաւարէ կռապաշտութեան ի լոյս Աստուածգիտութեան, ըստ
ճշմարիտ և համաձայն վկայութեանց չորից սրբոց Աւետարանչացն և Նո-
ցունց սրբազանից առաքելոցն բանից). Որք են այսոքիկ. Սիմոն, որ և Կե-
փաս և Պետրոս անուանեցաւ. որոյ են երկոքին Թուղթքն Կաթուղիկեայց.
և Անդրէաս եղբայր սորին. Յակոբոս և Յովհաննէս՝ որդիքն Զեբեթեայ,
որք և որդիքն որոտման անուանեցան. Այս Յովհաննու են. չորրորդ աւետա-
րանն սուրբ, և երեքեան Թուղթքն կաթուղիկեայց. Փիլիպպոս, Բարթուղի-
մէոս և Թովմաս, որք միոյ միոյ անուանց հանդիպեցան. Մատթէոս մաքսա-
ւորն, որ և Ղևի կոչիւր. սորա է առաջին աւետարանն. Յակոբոս Ալփեայ
որ է Տեառնեղբայրն, որ և արդար կոչեցաւ. և սա նստաւ զկնի Տեառն
Պատրիարգ յԵրուսաղէմ և առաջին մատոյց զփրկական պատարագ, և սա
գրեաց զառաջին Թուղթն Կաթուղիկեայց, և առ յորդին Զեբեթեայ նկատ-
մամբ՝ փոքր Յակոբ կոչեցաւ. Շմաւօն Նախանձայոյզն, որ Սիմօն կոչե-
ցաւ՝ և ազգական Քրիստոսի անուանեցաւ. որ է եղբայր Յակոբայ Տեառն-
եղբօրն. Ղէբէոս, որ նոյն ինքն է Յուդա Յակոբեան և Թադէոս, և եղբայր
Յակոբայ և Շմաւօնի, վասն որոյ և Յուդա Յակոբեան ասի վասն եղբայրու-
թեան նորին, և վասն զատման ի Յուդայէ մատնչէն. սա գրեաց զԿաթու-
ղիկեայց յետին Թուղթն, որ Յուդայի ասի. Սոցա եղբայր մի ևս գոյ Յովսէ,
որ Յօսէս և Բարսաբայ ևս կոչի. սա յառաջադրեցաւ ընդ Մատաթիայի

ի տեղի մատնչին, բայց վիճակն Մատաթիայի անկաւ. վասն որոյ սա ընդ
եօթանասնիցն հաշուեցաւ. Յուդա մատնիչն, զորոյ զտեղին յաջորդեաց
Մատաթիա.

Արդ վասն վերոյ յիշեցելոց երից սրբոց առաքելոցդ, այս ինքն Յա-
կոբայ, Շմաւոնի և Թադէոսի հարազատ եղբայրութեան իւրեանց, առա-
քելութեանն Քրիստոսի, և ի միւս երկոտասանից գլխաւորացն հաշուելոյն,
թէպէտ ոչ ինչ դոյ կարծիք, զի է հաւաստի և ճշմարիտ, և ամենից գիտնոց
ընդունելի. սակայն՝ թէ՛ ո՞յր որդիք են, և որպէ՞ս ասին եղբարք Քրիստոսի՝
այդ առարկութիւն և տարաձայնութիւն ի մէջ մերոց վարդապետաց և այ-
լոց. Քանզի մերս Հայաստանեայց Եկեղեցւոյ վարդապետք ասեն թէ՝
սոքա էին որդիք Յովսեփայ աստուածահօրն ի յայլմէ կնոջէ, հետևելով
անտարակոյս և անստելի վկայութեանց սրբոց աւետարանչացն Մատթէոսի
և Մարկոսի, որք ի ԺԳ և ի Զ գլուխսն միապէս և համաձայն ասեն թէ՝
եկեալ Յիսուս ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա. և նոքա զարմացեալք
ընդ իմաստութիւն նորա՝ ասէին. ուստի՞ իցէ սմա այս իմաստութիւն. ո՞չ
սա է հիւսանն որդի. ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, և եղբարք սորա Յա-
կոբոս, Յովսէ, Սիմօն և Յուդաս. սոքա ամենեքեան առ մեզ են. ԵՒն՝
Իսկ այլոց վարդապետք ասեն՝ թէ ոչ էին որդիք Յովսեփայ, այլ Կղէո-
պայ, (զոր եղբայր ասեն Յովսեփայ) որ Ալփէ ևս կոչիւր. Քանզի աւետա-
րանիչքն մինչ զՅակոբոս՝ Յակոբ Ալփեան կոչեն, նոքա որդի Ալփէի իմա-
նալով՝ այսպէս ասեն, որ է թիւր իմացումն. Զի Յակոբոս՝ եթէ վասն
Յակոբ Ալփեան կոչելոյն՝ Ալփէի որդի լինիցէր, ապա զնոյնոյ Յակոբայ
եղբայր Ղեբէոսն՝ որդի Յակոբայ պարտին իմանալ վասն Յուդայ Յա-
կոբեան ասելոյն, որ է յայտնի սուտ. զի Յուդաս այս (որ է Ղէ-
բէոս և Թադէոսն որպէս ասացաւ,) եղբայր է Յակոբայ և ո՛չ որդի.
Եւ մանաւանդ սրբազան Աւետարանիչքն (և առաքեալքն ևս) յա-
մենայն ուրեք զեղբարս Քրիստոսի կոչեն զնոսա ի կողմանէն Յովսեփայ, և
ո՛չ ուրեք զորդիս հօրեղբօր. Ասելոց եմք զայսմանէ և ի Ժ գլուխն ի ճա-
ռս Գանձասարու Կաթուղիկոսութեանն. Ուրեմն կարճառօտելով զայսմա-
նէ, եկեսցո՛ւք ի մեր յառաջադրութիւն.

Արդ վերոյ գրեցեալ երկոտասան սրբազան, գլխաւոր, համակարգ, և միա-
շունչ առաքեալքս՝ յետ ընկալման Հոգւոյն սրբոյ ի վերնատանն, նոյ-
նոյ Հոգւոյն սրբոյ ազդմամբն բաժանեցին վիճակաւ զբոլոր ազգս և զլեզուս
ի յիւրեանս. առ յորս և գնացին ի քարոզել ըստ հրամանին Քրիստոսի
վարդապետին իւրեանց: Նոյնպէս և զեօթանասուն և զերկուս աշակերտս
բաժանեցին, առնլով ի նոցանէ իւրաքանչիւրքն զերկուս և զերիս. Ապա
ազգս և երկիրս Հայոց անկաւ ի վիճակ վերոյ յիշեցելոյ սրբոյն Թադէոսի



առաքելոյն, որ է մի յերկոտասանից գլխաւորաց առաքելոյն և եղբայր Յա-
կոբայ, Շմաւոնի և Յովսէի որդւոցն Յովսեփայ Աստուածահօրն, որ Ղեբէոս
և Յուդայ ևս կոչի ի սրբազան Աւետարանչացն, որպէս ցուցաւ. Իսկ սոյն
առաքեալս մեր Թադէոս առնու ընդ իւր ի յեօթանասնիցն զԵղիշէ և զԱ-
տաթէոս, և եկեալ յԵրուսաղեմէ ընդ ծովեզերօքն գայ ի Կիլիկիա, ուր և
քարոզելով զԱւետարանն Քրիստոսի՝ գայ մտանէ ի յառաջին Հայս ի Կեսա-
րիա, և լուսաւորեալ զերկիրն՝ արկանէ զհիմն Եկեղեցւոյն Քրիստոսի, և ձեռ-
նադրէ նոցա եպիսկոպոս զԹէոփիլոս. Եւ անտի եկեալ անցանելով ընդ գետն
Եփրատ, գայ ի յԵդեսիա, ուր և մկրտէ զԱբգար թագաւորն Հայոց, ընդ նմին
և զքաղաքն և զերկիրն ամենայն լուսաւորէ Քրիստոնէական հաւատովն.
Շինէ զեկեղեցիս, կարգէ զքահանայս, և ձեռնադրէ նոցա եպիսկոպոս
զԱդդէ կերպասագործն. Եւ անտի եկեալ գայ ի յԱրտազ գաւառ առ ար-
քայն Սանատրուկ. յորմէ և կատարի ի փառս Քրիստոսի, ի թուոջ Փրկ-
չին մերոյ ԽԾ՝ յետ Է ամի Համբարձմանն. Յորոյ վերայ յետոյ հրաշալի և
մեծափառ վանք կառուցանի, որ կայ այժմ և կոչի յանուն սրբոյն Թադէ-
ոսի առաքելոյն. Եւ յետ կատարման սորին, Ստաթէ աշակերտն սորին եղ-
եալ ընդ հիւսիսաւ գնայ ի Սիւնիս, և անդ կատարի բարի մահուամբ.
յորոյ վերայ ևս շինեն վանք հրաշալի, որ կայ մինչև ցայսօր, և կոչի
Տաթևու վանք. Իսկ միւս աշակերտն Եղիշէ՝ եկեալ գնայ յԵրուսաղէմ
առ սուրբ առաքեալն Յակոբոս, (որ էր եղբայր Թադէոսի և առաջին
Պատրիարգ յԵրուսաղէմ,) և պատմէ զկատարումն Թադէոսի. Վասն որոյ
և սուրբն Յակոբոս ձեռնադրէ զԵղիշէ եպիսկոպոս, և վերադարձուցանէ
զնա ի տեղի Թադէոսի ի վիճակ նորին. Որոյ եկեալ ի յԱղուանս, և անդ
կատարեցաւ. Յետ այսորիկ դառնայ ազգս մեր ըստ մեծի մասին վերստին ի
կռապաշտութիւն՝ թագաւորօք և իշխանօք մինչև սուրբն Գրիգոր Պալ-
հաւեան. Արդ ի Յայսմաւուրն մեր (որ սխալ է ըստ մեծի մասին և աղճա-
տեալ,) և յայլս ումանս պատմագիրս, յորս գրին թէ՝ Թադէոս առաքեալն
մեր էր ի թուոյ եօթանասնիցն, կամ ընդ Թովմայի առաքելոյն լեալ և ի
նմանէ առաքեցեալ ի Հայս, և կամ թէ այլ է Յուդայ Յակոբեան, և այլ
սոյն Թադէոս, բնաւքն սուտք են, և ի թիւրամտաց ներմուծեցեալք յան-
հոգութենէ և ի զանցառութենէ նախնեաց երանելեացն մերոց թղթարե-
ցեալք՝ և ի խաժամուժս հասարակեալք, և յապա եկելոցն՝ որպէս թէ ի
նախնեաց աւանդեցեալ, վասն որոյ իբրև զհաւաստի ընկալեալք. և կամ
թէ՝ ի համանունութենէ Ստաթէի աշակերտին առաքելոյս մեծի (որպէս
ասացաւ) խաբեցեալք. Քանզի առաքեալս մեր և մեծս Թադէոս էր ի
թուոյ երկոտասանիցն, եղբայր Յակոբայ և Շմաւոնի, գլխաւոր և մեծ Ա-
ռաքեալ և Լուսաւորիչ ազգիս Հայոց, որ և նոյն է Ղեբէոս և Յուդայ

Ցակոբեան. սմա պատահի սուրբ առաքեալն Բարդուղիմէոս ի յՕթեաց
վանք կոչեցեալ տեղւոջն, ուր երկոքեանն ևս քարոզեն զՔրիստոս ի Հայս՝
և կատարին յերկիրս Հայոց, և կոչին առաքեալք և նախկին Լուսաւորիչք
Հայոց. Եւ ի տեղւոջ կատարման սոյն Բարդուղիմէոսի սրբոյ առաքելոյս ևս
շինի վանք հռչակալի յանուն սորին. որ է, . . . այս ինքն ի յԱխբակ.
որ կայ մինչև ցայսօր. Եւ յետ կատարման սրբոց առաքելոցն մերոց՝ զկնի
մահուանն մեծին Արգարու՝ Անանէ որդի նորա ի յԵդեսիայ, և քեռորդի
նորին Սանատրուկ ի Հայս ի յԱրտաղ գաւառի գոլով Թագաւորեալք՝ ուրա-
ցեալք զՔրիստոս վերադարձան ի կռապաշտութիւն, ընդ նոսին և բոլոր ազ-
գըս Հայոց. Թէպէտ յուրեք յուրեք գտանէին ի ծածուկ քրիստոնեայք. Ապա
յետ ՄԿԴ ամաց, ի Թուոջն Փրկչին մերոյ ՅԴ, և ի ԺԵ ամի Թագաւորու-
Թեան Տրդատայ, այցելութեամբն Աստուծոյ ելանէ սուրբն Գրիգոր ի Վի-
րապէն և բժշկէ զհարուածեալն Տրդատ և զգլխաւորս ազգս Հայոց, և ա-
ծէ ի հաւատս Քրիստոսի. Եւ ի ՅԵ ամին Փրկչին մերոյ, ի ԺԶ ամին Տր-
դատայ գնայ ի Կեսարիա առ Ղևոնդիոս պատրիարգն, (որ ի Թադէոսի և ի
Թէոփիլոսի գաւազանէն էր յաջորդեալ զկարգն) առնու ի նմանէ զօծումն
քահանայութեան, ընդ նմին և զեպիսկոպոսութիւն ազգիս Հայոց, և զա/
Նստի Հայրապետ Հայոց ի ՅԶ Թուոջ Փրկչին մերոյ, ի ԺԷ ամի Թագա-
ւորութեան Տրդատայ, յամս Լ. Ի ՅԻԸ Թուոջ Փրկչին մերոյ, ի ԻԳ ամի
Հայրապետութեանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և ի ԻԳ ամի Թա-
գաւորութեանն Կոստանդիանոսի, և ի ԼԹ ամի Տրդատայ՝ լինի ժողովն
Նիկիոյ. Սուրբն Արիստակէս՝ որդի նորա, յամս Է. Սուրբն Վրթանէս՝ եղ-
բայր նորա, յամս ԺԵ. Սուրբն Յուսիկ՝ որդի նորա, յամս Զ. Փառներսեհ
յամս Ե. Սուրբն Ներսէս՝ Թոռն Յուսկան, յամս ԼԴ. Ի ՅՁԹ Թուոջն
Քրիստոսի, ի Դ ամին մեծին Թէոդոսի, ի ԻԲ ամին Արշակայ մերոյ Թագա-
ւորին, ի ԽԱ ամին մեծին Ներսէսի, լինի ժողովն Կոստանդնուպօլսոյ
Շահակ, Զաւէն, և Ասպուրակէս յամս ԺԳ. Սուրբն Սահակ պարթեւն
յամս ԾԱ. Ի ՆԾԷ Թուին Քրիստոսի, ի ԻԱ ամին փոքր Թէոդոսին, յետ
բարձման Թագաւորութեան մերոյ Է ամի, Ի ԽԲ ամին մեծին Սահակայ
լինի ժողովն Եփեսոսի. Ի ՆԿԱ Թուին Քրիստոսի, ի ԻԵ ամին նոյն Թէոդո-
սի, յանիշխանութեան մերոյ ԺԱ ամին, ի ԽԶ ամին Սահակայ, լինի
երկրորդ ժողովն Եփեսոսի. Սուրբն Յօսէփ՝ որ նահատակի ընդ Ղևոն-
դեանց, յամս Բ. Տէր Գիւտ՝ աշակերտ սրբոյն Սահակայ յամս ԺԵ.
Սա ի խնդրոյ սրբոյն Վարդանայ և յայլոց իշխանացն մերոց՝ փոխէ
զաթոռն ի Դվին. Ի ՆՀԱ ամին Քրիստոսի, ի յառաջին ամին Մար-
կիանոսի պղծոյն, ի Ը ամի իշխանութեանն Վարդանայ, ի Գ ամի Գիւտ.
Կաթուղիկոսին մերոյ, լինի ժողովն Քաղկեդոնի. Եւ յաւուրս սորա նա-



հատակին Վարդանանք. մնայ անիշխան ազգս Հայոց յամս Զ. Ապա
կարգէ Մարզպան Հայոց՝ Պերոզ արքայն պարսից՝ զՄագնոսոմն զկնի պըղ-
ծոյն Յազկերտի սատակելոյն. Տէր Յօհան Մանդակունի յամս ԺԲ. Սա
զարդարեաց ժամակարգութիւն Եկեղեցւոյս մերոյ. Տէր Բաբգէն յամս
Ե. Ի ժամանակս այսց երկուց Հայրապետացս և ի յորդորմանէ սոցին՝
բարեպաշտք Թագաւորքն Կոստանդնուպօլսոյ՝ Զենոն և Անաստաս բոլոր
Իտալիայիք, Յունօք, Ասորօք, Հայիւք, Աղուանօք, և Վրօք, երկիցս ան-
գամ ժողով արարեալ նզովեցին զժողովն Քաղկեդոնի. Տէր Սամուէլ ի
Բզնունեաց յամս Ե. Ի սորա յաւուրս կարգեցաւ Մարզպան Հայոց
Վահան Մամիկոնեան, որդի Հմայեկայ. Տէր Մուշէ ի Կուտէից, յամս Ը.
Տէր Սահակ ի Հարքայ յամս Ե. Տէր Քրիստափոր ի Բագրեւանդայ յամս
Ե. Տէր Ղևոնդ յամս Բ. Տէր Ներսէս ի յԱշտարակայ յամս Թ. Եւ
սա արար զժողով ի Դվին ընդ դէմ երկաբնակաց. Տէր Յովհաննէս ի Գա-
բեղենեանց յամս ԺԵ. Յաւուրս սորա յետ Վահանայ լինի Մարզպան
Հայոց Վարդ եղբայր նորա. Յետ Վարդայ Տաճիկք տիրեն Հայոց յամս
Դ. Ապա Մժեժ Գնունի յամս Լ, Ապա Տաճիկք յամս ԼԶ. Տէր Մովսէս
յԵղուարդայ յամս Լ. Ի սորա Գ ամին և ի Քրիստոսի ՇԾԲ Թուոջն կար-
գեցաւ Թիւն Հայոց, յորում ասացաւ մեկ. Եւ ի Ժ Թուոջն մերում կար-
գեցաւ հինգհարիւրեակ շրջանին. Տէր Աբրահամ յՌշտունեաց յամս ԻԳ.
Ի սորա ժամանակս փայլէր քաջն Սմբատ Բագրատունի, որ զհեծեալ ձին
իւր երկու ծնգամբն սղմեալ՝ և ինքն ի ծղոց անտառաց կախեալ բարձրա-
ցուցանէր յերկրէ. Ի Ը ամի Կաթուղիկոսութեանն Աբրահամու, և ի ԾԸ
Թուոջն մերում, լինի Մարզպան Հայոց Դաւիթ Սահառունին զկնի Տաճ-
կաց. Ի Հ Թուոջն մերում, և ի Ի ամին սորա, Մահմէտ Թագաւորէ, ու-
տի և սկսանի Թիւն Տաճկաց. Ի ԻԴ ամին սորա, և ի ՀԴ Թուոջն մերում
Վիրք բաժանին ի Հայոց. Տէր Յօհան ի Կոգովտայ, որ ընդ դէմ Աբրահա-
մու նստաւ ի Կարին, և մեռաւ յառաջ քան զԱբրահամն. Սա հետեւեցաւ
աղանդոյն Քաղկեդոնի. Տէր Կոմիտաս յԱրագածոտնէ յամս Ը. Տէր Քը-
րիստափոր յամս Բ. Տէր Եզր ի Նիգ գաւառէ յամս Թ. Սա գնաց ի Կարին
ի կոչ Հերակլ արքային Յունաց, և ընդունի զժողովն Քաղկեդոնի. որո/
գվարձ առնու յարքայէն զԿողբ գիւղն և զաղն. Ի սորա Բ ամին լինի Մարզ-
պան Հայոց Թէոդորոս Ռշտունին. Տէր Ներսէս շինողն ի Տայ+ գաւառէ
յամս Ի. Սա շինէ զսուրբն Գրիգոր խոչ Էջմիածնի, որ այժմ հանգուցեալ
է. Ի սորա ժամանակս լինի մարզպան Հայոց Համազասպ և յետոյ Գրի-
գոր Մամիկոնեան. Տէր Անաստաս յԱկոռւոյ՝ յամս Զ. Սա հարկեաց
զԱնանիայ Շիրակացին շինել զտօմարն անշարժապէս. Տէր Իսրայէլ յամս
Զ. Տէր Իսահակ ի Ձորափորոյ յամս ԻԳ. Սա գնաց ի Խառան ընդդէմ

Մահմետի՝ յորդորմամբ իշխանացն մերոց, և անդ մեռաւ։ Յաւուրս յայսոսիկ էին իշխանք Թէոդորոս, Գրիգոր, Ներսէհ, Աշոտ Բիւրատեան, Սմբատ Բագրատունի, և այլք՝ որք յԵկեղեցին Նախիջևանու այրեցան ի Տաճկաց ի սէրն Քրիստոսի։ Վասն որոյ յամս բազումս մնաց անիշխան Ազգս Հայոց։ Տէր Եղիա յԱրճիշոյ յամս ԺԴ։ Սա եղծ ի սուտ կարգէն ըզԲագուրներսէհն Աղուանից, և ձեռնադրեաց նոցա Կաթուղիկոս զտէր Սիմոն։ Տէր Յովհան Օձնեցին յամս ԺԱ։ Սա գնաց առ Սուլթանն Տաճկաց, և էառ հրաման, և վարեաց զազգն Յունաց ի յերկրէս Հայոց. և արար ժողով ի Մանազկերտ, սրբեաց զազգս մեր ի չար աղանդոյն Փաղկեդոնի, որ մնացեալ էր ի յԵզրայ Կաթուղիկոսէն։ Տէր Դաւիթ յԱրամոնեաց յամս ԺԴ։ Տէր Տրդատ յամս ԻԳ։ Միւս Տէր Տրդատ յամս Գ։ Տէր Սիոն ի Բագուանից յամս Ը։ Ի սոյն ժամանակս Մուշեղ Մամիկոնեան՝ այլովք ազատագունդ զօրօք կոտորեցան ի Տաճկաց։ Տէր Եսայի ի Նիգ գաւառէ յամս ԺԴ։ Ի սորա Զ ամին յառաջնոյ իշխանն Սմբատ։ Տէր Ստեփաննոս, Տէր Յովաբ, Տէր Սողոմոն, յամս Գ։ Տէր Գէորգ ի Բիւրականայ յամս Գ։ Տէր Յովսէփ յԱրագածոտնէ յամս ԺԱ։ Ի սորա Թ ամին լինի իշխան Հայոց Աշոտ որդին Սմբատայ։ Տէր Դաւիթ յամս ԻԵ։ Տէր Յովհաննէս ի Կոտէից յամս ԻԳ։ Իշխան Հայոց Սմբատ որդին Աշոտոյ։ Տէր Զաքարիա ի Կոտէից Ձագոյ Ախթամարայ յամս ԻԲ։ Իշխանաց իշխան Աշոտ որդի Սմբատայ։ Տէր Գէորգ Գառնեցի յամս ԻԲ։ Սա գերեցաւ ի Լափլիզաց. յետոյ ազատեցեալ ճմլեաց զկզակս Կաթուղիկոսացն Աղուանից։ Ի սորա Ժ ամին և ի թուականութեան Հայոց ՅԼԵ, վերջ գրեալ Աշոտն թագաւորէ Հայոց, եւ յետ Ե ամի վախճանի։ Թագաւորէ որդի սորին Սմբատ Տիեզերակալն, որ յետոյ յանօրէն Յուսփայ ի Դվին քաղաքին մարտիրոսանայ։ Մնայ անիշխան ազգս Հայոց յամս Ե։ Տէր Մաշտոց սուրբըն, Գառնեցի, յամս Ա։ Տէր Յովհաննէս պատմագիր և ազգական Մաշտոցայ և Գէորգայ յամս ԻԸ։ Ի սորա ԻԳ ամին թագաւորէ Աշոտ որդին Սմբատայ։ Տէր Ստեփաննոս յամս Ա։ Տէր Թէոդորոս յամս ԺԱ։ Ի սորա Բ ամին թագաւորէ Աբաս որդին Սմբատայ և եղբայր Աշոտոյ, որ էր խաղաղարար և վանաշէն. սա շինեաց զԿաթուղիկէն յԱնւոյ և զՀռոմոսի վանքն և զայլսն։ Տէր Եղիշէ յամս Է։ Տէր Անանիա Մոկացին յամս ԻԲ։ Սա ևս ոչ սակաւ աշխատի և հոգայ վասն Գանձասարու ոմանց Կաթուղիկոսաց ըմբոստութեանն և ապստամբութեանն, մինչև նուաճէ վերջապէս։ Ի սորա Ը ամին թագաւորէ Աշոտ որդին Աբասայ, որ Ողորմածն կոչիւր։ Յերկրորդ ամի թագաւորութեանն սորա, կին սորայ Խոսրովանոյշ թագուհին շինէ զվանքն Հաղպատու ի ՅԳ թուոջն մերոյ. և յետ Ժ ամի ինքն շինէ զՍանահնոյ վանքն։ Տէր Վահան Հերձուածօղ, (որ) ընկեցեալ եղև, յամս Ա։ Տէր Ստե-



փաննոս ազգական Մաշտոցին, յամս Բ։ Տէր Խաչիկ յամս ԻԱ։ Ի սորա Թ ամի թագաւորէ Հայոց Սմբատ Շահնշահ որդին Աշոտոյ Ողորմածին։ Սա պարըսպէ զքաղաքն յԱնի և ըստ արժանւոյ թագաւորութեան պայծառացուցանէ։ Եւ սկսանի շինել զսուրբն Գրիգոր զարմանալին, և ոչ կարաց կատարել. յետոյ կին Գագկայ թագաւորին կատարէ։ Ի սոյն ժամանակս և Վահրամ իշխանն իշխանաց շինէ զուխտն Մարմարաշէն։ Այս Սմբատ Շահնշահս, (որ և Տիեզերակալ կոչեցաւ) եղբայր իւր Գէորգին թագաւորեցուցանէ ի Վիրս ի ՅԼԵ թուոջն մերոյ, որ եղև սկիզբն Վրաց թագաւորութեան։ Տէր Սարգիս յամս ԻԵ։ Ի սոյն ամի և թագաւորէ Գագիկ՝ որդին Աշոտոյ՝ եղբայր Սմբատայ։ Տէր Պետրոս գետադարձն, յետ և յառաջ, յամս ԽԲ։ Ի սորա Զ ամին թագաւորէ Յովհաննէս որդին Գագկայ, որ և Սմբատն կոչիւր։ Ի ժամանակս յայս ի ՆՀ թուոջն մերոյ, Սենեքերիմ արքայն Վասպուրի, նեղեալ ի Տաճկաց՝ ետ զերկիրն իւր Յունաց Կայսերն Վասլի, և էառ ի նմանէ զՍեբաստիա, յոր և եկեալ բնակեցաւ, և անդ մեռաւ։ Սա շինեաց զվանքն սուրբ Նշանին անդ։ Ի ՆՁԶ թուոջ մերոյ անկաւ գժտութիւն ի մէջ Պետրոս Կաթուղիկոսին և Յովհաննէս թագաւորին. վասն որոյ գնաց Կաթողիկոսն ի Վասպուր, յոր եկաց ամս Դ. և թագաւորն բերեալ զԴէոսկորոսն ի Սանահնոյ՝ արար Կաթուղիկոս, և բերեալ զՊետրոսն եդ ի բանտի ԺԸ ամիս։ Եկեալ Կաթուղիկոսն Աղուանից՝ արար հաշտութիւն, զՏէր Պետրոսն եդին յաթոռ իւր, և զԴէոսկորոսն առաքեցին յիւր տեղին։ Ի ԻԶ ամի Տէր Պետրոսին թագաւորեցուցանեն յԱնի զԳագիկ որդին Աշոտոյ, որ ոչ կարաց վարել զթագաւորութիւնն։ Զսա տարան ի Կոստանդնուպօլիս Յոյնք ազատագունդ իշխանօք, և անդ արգելին, և ինքեանք տիրեցին Հայոց յամս ԻԳ։ Ապա ի թուոջն մերոյ ՇԺԳ եկն Ալփասլանն անիծեալ՝ էառ զԱնի, և ընդ ձեռամբ արար զՀայս։ Եւ բարձաւ աստանօր թագաւորութիւնն Բագրատունեաց իսպառ։ Յառաջ քան զայս, թագաւորն Յունաց Կոստանդին ընկալեալ զբարի համբաւս Պետրոս Կաթողիկոսին, հրաւիրէ ի գնալ առ յինքն. որ և ի ՇԳ թուոջն մերոյ օրհնէ զքեռորդին իւր զտէր Խաչիկն ի տեղի իւր Կաթուղիկոս, և ինքն գնայ ի Պօլիս. յուր և կեցեալ յամս Դ, դառնայ ի Սեբաստիա, և անդ վախճանի ի ՇԸ թուոջն մերոյ։ Տէր Խաչիկ՝ քեռորդին Տեառն Պետրոսի՝ յամս Ը։ Հայոց թագաւոր ոչ գոյ։ Վասն որոյ Տուկիծ պիղծ թագաւորն Յունաց տարեալ զսա ի Պօլիս վասն ի յիւրեանց աղանդըն դարձուցանելոյ և խափանելոյ զԿաթուղիկոսութիւնն Հայոց, և վասն ընչից Տեառն Պետրոսին, շատ նեղութիւնս հասուցեալ և ի հուր արկեալ, ոչինչ կարաց առնել. զի զերծեալ Աստուծով, դարձաւ ի Սեբաստիայ, և անդ վախճանեցաւ։ Տէր Գրիգոր Վկայասէրն, որ Վահրամ կոչիւր, որդի

Գրիգորիս Մագիստրոսի իշխանին Բջնեցւոյ։ Սա ո՛չ եկաց ի յաթոռն, այլ գնաց ի Պօլիս վասն թարգմանութեան գրոց, անտի ի յԵրուսաղէմ և յԵգիպտոս։ Վասն որոյ եղին յաթոռն յԱնի միացորդք Հայոց զտէր Բարսեղ ազգական նոյնոյ վկայասիրին։ Արդ ի սոյն ժամանակս նստան չորս Կաթուղիկոսք Հայոց, Տէր Բարսեղն յԱնի, Տէր Գրիգոր Վահրամն ի յԵգիպտոս, Տէր Պօղոսն ի Մարաշ, և Տէր Թորոսն ի Հոնի։ Վասն որոյ և թիւք սոցա անհաւաստի գոլով՝ ոչ ուղղապէս դնին ի պատմագիրս։ Այլ և ի սոյն ժամանակս զօրացեալ իշխանքն Հայոց ի Կիլիկէ, որք ի Բագրատունեաց և ի Սենեքերիմեանց, սկսան բռնանալ մինչև և թագաւորել ժամանակս ինչ։ Որոց առաջինն էր Ռուբէն, ի ՇԻԵ կամ աւելի և պակաս թուա-ջըն մերում։ Տէր Գրիգոր Տղայն, ազգական վերնոյն Վահրամայ և Բարսղի, եղբայր Ներսիսի շնորհալւոյն, որ ի թուին մերոյ ՇԿԶ նստի Կաթուղիկոս յԱնի յամս Ծ։ Սա էր հնգետասանամեայ (թէպէտ էր կատարեալ և շնորհալի)՝ մինչ նստաւ, և փոխեաց զաթոռն ի Հռոմկլայն առ թագաւորօքն մեր ի Կիլիկէ։ Վասն որոյ Ախթամարու Առաջնորդ Դաւիթ վարդապետն ապստամբեալ նստի կաթողիկոս յԱխթամար, որ մնայ մինչև ցայսօր։ Զկնի Ռուբէնի նստի որդի նորա Կոստանդին։ Զկնի սորա որդի սորա Թորոս, զկնի սորա Լևոն թագաւորք։ Տէր Ներսէս շնորհալին՝ եղբայր Գրիգորի՝ յամս Է։ Զկնի Լևոնի որդին Թորոս, յետ նորա եղբայր նորա Մլեհ, յետ նորա Ռուբէն, յետ նորա Լևոն, որ յերկուց թագաւորաց ընկալաւ զթագ, և եղև անուանի։ Տէր Գրիգոր տղայն՝ եղբօր որդի Ներսէսին՝ յամս Ի. որ և Քարավէժ ասի։ Տէր Գրիգոր Ապիրատն՝ եղբայր վերնոյն՝ յամս Ը։ Տէր Յովհաննէս մեծաբարոյն յամս Ը։ Ընկենուն զսա և դնեն զԴաւիթ յամս Բ. յետոյ զնոյն Յովհաննէս հաստատեն վերստին յամս Ժ։ Տէր Կոստանդին Բարձրաբերդցին յամս ԽԷ։ Յետ Լևոնի դնեն թագաւոր զՓիլիպ Փռանկ։ Յետոյ սպանեալ զսա դնեն թագաւոր զՀեթում։ Ի սոյն ժամանակի՝ ի ՈՀ թուին ել Թաթարն և աւերեաց զբոլոր աշխարհս։ Զորոյ որպիսութիւնն տես ի Կիրակոս պատմագիրն. և յայսմ միջոցի սկզբնաւորեցաւ Օսմանցւոց թագաւորութիւնն ի յՕսմանէն՝ ի ՈՂ թուին։ Զի ի Մահմէտէն մինչև ցայս վայր՝ Սուլթանք և Խալիֆայք կոչէին, այսուհետև թագաւորք անուանեցան՝ ի յՕսմանէն սկսեալ։ Տէր Յակոբ Տարսոնացին կեցեալ յամս ԺԹ, յետոյ աքսորեցին։ Ի ՉԺ թուին մերոյ Մսրցին գայ ի վերայ Սսայ, և շատ աւերս առնէ, զորդիս Հեթմոյ թագաւորին զԹորոս սպանանեն և զԼևոն գերեն։ Յետ Թ ամի ազատեցեալ գայ, և Հեթում զսա կարգէ թագաւոր, և ինքն հրաժարեալ կրօնաւորի։ Կրկին ի սորա ժամանակին գայ Մսրայ Սուլթանն ի Կիլիկէ, և աւերէ և գերէ զամենեսեան ի ՉԺԹ թուին։ Տէր Կոստանդին Ախթամարայ, որ Գ ամ, և ապա աքսորեցին։

892 - 2006



Թագաւորէ Հայոց զկնի Լևոնի Հեթում, յետոյ գայ յԵրուսաղէմ կրօնաւորի։ Տէր Ստեփաննոս յԵկեղեաց գաւառէն յամս Գ։ Ի ՉԽԲ թուին մերոյ՝ ի յերրորդ ամին սորա գայ վերստին Սուլթանն Մսրայ ի Կիլիկէ, աւարէ և գերէ սպառ, զԿաթուղիկոսն և զսուրբ Աջն Լուսաւորչին և զայլ սրբութիւնսն տանի ի Մսր։ Եւ բառնայ ի Կիլիկիոյ զԿաթուղիկոսարանն։ Յետ այսորիկ նստի ի Սիս Գրիգոր Անաւարզեցի յամս ԺԳ։ Թագաւորէ Հայոց Լևոն՝ որդի Թորոսի. յետ սորա թագաւորեն Թորոս, Սմբատ, Կոստանդին, և Լևոն, ի սակաւ ժամանակս։ Տէր Կոստանդին Հերձուածող յամս ԺԵ։ Ընդ սմին և թագաւորէ Օշին եղբայր Հեթմոյ. յետ սորա Լևոն որդին։ Այս հերձուածող Կաթուղիկոս և Օշին թագաւոր զհալածանս յարուցին ի վերայ ուղղափառաց, որպէս զթագաւորս այլազգեաց, յորմէ շատք մեռան։ Տէր Կոստանդին Լամբրոնացին յամս Ե։ Տէր Յակոբ Սսեցին՝ քեռորդի վերնոյդ Գրիգորի՝ յամս ԺԴ։ Զսա աքսորեցին՝ և եղին զՏէր Մխիթարն յամս ԺԴ։ Յետ Մխիթարայ դարձեալ նստաւ վերոյ Յակոբն յամս Դ։ Զկնի Լևոնի թագաւորէ Կոստանդին։ Յայս միջոցիս էր Յօհան Քռնեցին։ Տէր Մեսրոպ յամս ԻԶ, որ երարձ զջուրն ի սուրբ խորհրդոյն և հերքեաց զԱխթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերձուածողէն և յՕշին թագաւորէն։ Թագաւոր Հայոց Կոստանդին, յետոյ և միւս Կոստանդին, յետոյ և միւս Կոստանդին, և միւս չորրորդ Կոստանդին, յետոյ Լևոն որդի ընձին։ Ապա եկն Սուլթանն Մսրայ ի ՊՀԲ թուին մերում, և գերեաց զԼևոն և զկինն, և զամենայն Կիլիկիա տարաւ ի Մսր. ուր վերջացաւ թագաւորութիւնն Կիլիկեցւոց, ընդ նմին և Կաթուղիկոսութիւն. զի ի վախճանիլ Տեառն Մեսրոպայ, ի ՊԼԳ թուին մերոյ, նստան թէպէտ ի Սիս ԺԲ Կաթուղիկոսունք ևս, սակայն աննշանք և անհամբաւք, որք են՝ Կոստանդին, Պօղոս, Թէոդորոս, Կարապետ, Դաւիթ, Կարապետ, Յակոբ, Կոստանդին, Գրիգոր, Պօղոս, Կոստանդին և Յօսէփ մինչև ի ՊՂ թիւն մեր, յորում շնորհօքն Աստուծոյ վերանորոգեցաւ սուրբ Էջմիածին, յորում նստաւ Տէր Կիրակոս։

## ԳԼ. Գ.

Յաղագս թէ ո՞յք եղեն վերանորոգողք և բարեկարգք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. երկրորդապէս՝ որք ի սուրբ Աթոռոջս նստան, յորում և ցուցանէ Կաթողիկոսունս նոյնոյ միջոցի ի Կիրակոսէ մինչև ի Մովսէս Սիւնեցին։

Արդ յայնքան միջոցումն՝ յորս Կաթուղիկոսունքն ի Դվին և ի յԱնի նստան, երբեմն ի յԱթոռոջս Էջմիածնի գտանէին վանականք և կրօնաւորք

Հայաստ... գրադարան

թէ և կարի սակաւուք և գծուծք։ Իսկ ի միջոցին ի յամս ՅԽԴ՝ յորս Նըստան ի Սիս, խափառ մնաց ի յամայութեան մինչև ի ՊՂ թիւն մեր. յորում վերստին գթացաւ Տէր ի յիւրակերտ Աթոռն, և Նորոգեաց. յորում սկզբանն Նստաւ Կիրակոս Ճգնազգեաց Հայրապետն։ Ուրեմն նախ և յառաջ անհուն և անհամար է բարերարութիւն սրբոյ Լուսաւորչին մերոյ յորոյ ձեռն հրաշակերտեցաւ Նախապէս սուրբ Աթոռս Էջմիածին, և լուսաւորեցաւ ազգ մեր հաւատով Աստուածպաշտութեան, և Նորին որդւոց և թոռանցն, և Նմանեաց Նոցին, որովք սնաւ և զարգացաւ և պայծառացաւ պէս պէս շնորհօք և հոգևորական կարգօք, Նոյնպէս և բարեպաշտ և Քրիստոսասէր թագաւորացն մերոց և իշխանացն, որովք մնաց հաստատուն և պահեցաւ ապահով յամենից թշնամեաց և ապականչաց. քան զորս ոչ ունիմք բաց յԱստուծոյ բարերար ազգս Հայոց. երկրորդապէս ոչ սակաւք են բարերարութիւնք և այնց Հայրապետացն մերոց, որք զկնի ամայութեան սրբոյ Աթոռոյս՝ և անտիրանալոյ Ազգիս մերոյ, վերստին Նոր Նորոգեցին զսա՝ և պայծառացուցին քան զոր էին, և զԱզգս մեր ցրուեալ և անիշխանացեալ վերաժողովելով ընդ թևօք սորին պահպանեցին ի հոգևոր և ի մարմնաւոր թշնամեաց, որք որպէս Զօրաբարեալ եղեն մեզ յիւրաքանչիւր ժամանակս զկնի Սողոմոնի. Եւ մանաւանդ ի Դվին, յԱնի. և ի Սիս Նստող Հայրապետքն ի ժամանակս իշխանութեան մերայնոց թագաւորաց և իշխանացն էին, որովք Նստէին, և որոց օգնականութեամբն կառավարէին զգործս, և վարէին զՀայրապետական իշխանութիւնն, որք որպէս թէ՝ ի վարդէ և ի մանուշակէ կազմէին զդեղս առողջարարս։ Իսկ յետինքս՝ որք վերանորոգելով զսուրբ Աթոռս ի սմա եղեն զՀայրապետականն Աթոռ՝ ի ժամանակս իշխանութեան տաճկաց, և օտարաց, և բարբարոս թշնամեաց էին, որք որպէս թէ՝ ի մահացուցչաց առնուին զդեղս կենաց անձնամատն վշտակրութեամբ։ Վասն այսորիկ և առաջինքն որովհետև առ յինքեանս ունէին առ ձեռն պատրաստ զմարմնաւոր զհրամանատուսն և դիւրութեամբ առնուին զոր ինչ և կամէին, ոչինչ արարին զփոյթ զարձանագրութեանց վասն ապագայից, յորոց ոչինչ ունիմք առաջ յետինքս զգիր մի օգտակար և որպիսածանոյց (ո՞ գիտէ, թերևս լեալք ևս իցեն, անհետացեալք իցեն, որք թէ լինէին ևս, ոչինչ օգնէին այժմ, որովհետև այլայլեցաւ իշխանութիւնն). Իսկ յետինքս որովհետև դժուարաւ և բազմաւ Նեղութեամբ, և ի հազարից խնդրելեաց զմին հազիւ առ ձեռն բերէին ի հեռի, յօտար, և ի բարբարոս տերանց, բազմաւ հոգսունակութեամբ ի գիր արձանացուցին՝ և մեզ ապագայից թողին, որք առաջ որպէս թէ Նոցին արձանագիր աւանդութեամբքն վարեմք զժամանակս մեր որքան և իցէ. Որոց ամենից յիշա-



տակն օրհնութեամբ եղիցի։ Արդ որպէս ասացաք ի ՊՂ թուին մերոյ վերստին հաստատեցաւ սուրբ Աթոռս Էջմիածին ի յիշխանութեան Տաճկաց (Պարսից) Ջհան—շահ թագաւորին Դաւրիժու, յորում Կաթուղիկոս Նախ Կիրակոս, ապա Գրիգոր Մակուեցին ի ՊՂԲ թուոջն։ Արդ՝ մինչև ի յայս ժամանակ՝ ի սուրբ Աթոռոջս ամենևին ոչ էր մնացեալ յիշատակագիր մի, կամ արքունական, և կամ դատաւորական, կամ [illegible] 1) և այլոց այսպիսեաց, և կամ [illegible] 2) Հայերէն, և կամ Տաճկերէն. Այսուհետև սկսան Կաթուղիկոսունքն յիւրաքանչիւր ժամանակս Նորոգել զհին աւուրքն ունեցեալսն, և կամ Նորապէս ստանալով առաւելուլ զայգիս, զանդս, զմ՝քատու գեղօրայս, և զայլ այսպիսիս, արքունական և դատաւորական գրովք տաճկաց, զորս ունի առաջ սուրբ աթոռս. զորս յիւրաքանչիւր տեղւոջն արձանացուցաք գրելով յատուկ յատուկ՝ թըւովք, ժամանակօք, գիտաւորութեամբք և որո՛ց ձեռամբք և ժամանակօքըն։ Վասն այսորիկ աստ կարճառօտիւք խօսելով՝ դարձուցուք զբանս մեր ի յառաջակայ մնացեալ պատմութիւնս՝ կարգաւ ի մեզ հասուցանելով։

Նախապէս Գրիգոր Կաթուղիկոսն Մակուեցի, որոյ յաւուրս Նստիւր ի Դաւրէժ թագաւոր Ջհանշահն։ Եւ ի տասն ամի Հայրապետութեան սորին, ի ՋԲ թուոջն մերում էառ և զԿոստանդնուպօլիս Սուլթան Մահմէտն ի Յունաց։ Այնուհետև տիրեցին խափառ Տաճի՛ք Յունաց՝ Հայոց և Պարսից երկրաց միանգամայն, և բարձաւ իշխանութիւն քրիստոնէից։ Վասն որոյ այնուհետև ամենայն գործակալք և գործք քրիստոնէից, թէ հոգևորք և թէ մարմնաւորք, սկսան հրամանաւ և հրամանագրովք Տաճկաց կարգիլ և կատարիլ։ Արդ որպէս ասացաք, Գրիգոր Կաթուղիկոս այս ունի զաշխատանս ի սուրբ Աթոռոջս. քանզի նախապէս սա Նորոգեաց զշինուածս սրբոյ Աթոռոյս ի Ներքուստ և արտաքուստ, զմ՝քատու գեղօրայս առնելով հաստատուն [illegible] 3) և դատաւորական գրովք տաճկականօք, որք առաջ կան արդէն, զորս յիւրաքանչիւր տեղւոջն տեսցուք։ Իսկ զկնի սորին մինչև ի Մովսէս Կաթուղիկոսն Սիւնեցի Նստող Կաթուղիկոսունքն ի դառնաշունչ բերմանց ժամանակացն ո՛չ ոք ունի արարեալ զնշանաւոր բարերարութիւնս ինչ գրելի։ Եւ յա՛յսքան միջոցս գրեթէ սուրբ Աթոռս ի վատ անզր ընթանայր օր աւուր՝ և յանշքութիւն։ Ապա զկնի Տեառն Գրիգորի՝ Տէր Արիստակէս ի ՋԴ թուոջն։ Տէր Զաքարիա ի ՋԺ թուոջն։ Սա Նախ Կաթուղիկոս գոլով Աղթամարու, յետոյ ի գալն Ջհանշահ թագաւորին ի Դավրէժ, գնայ սա առ Նա ընծայիւք, յորմէ և առնու զԿաթուղիկոսութիւն Էջմիածնի, ընդ Նմին և զԱջ սուրբ Լուսաւորչին, ըզ-

1) կալուածագիր։ 2) Սեփհականագիր կամ ստացուածագիր։ 3) Դատարանական։

Խաչվառ 1) և զՍուրբն, և գայ յԷջմիածին նստի Կաթուղիկոս․ յետոյ ի ՋԺԱ թուոյն առեալ զսուրբ Աջն գնայ վերստին յԱխթամար։ Յետ Զաքարիայ՝ Տէր Սարգիս ի ՋԺԵ թուոյն։ Տէր Յովհաննէս ի ՋԻԴ թուոյն։ Ի ժամանակս սորա սուրբ Աջ Լուսաւորչին յԱխթամարու եկն ի սուրբ Էջմիածին՝ ձեռամբ Վրթանէս եպիսկոպոսին Շահպունեցւոյ ի ՋԻԶ թուոյն։ Տէր Սարգիս ի նոյն թուոյն ի ՋԻԵ։ Ի սորա ԺԶ ամին, ի ՋԽ թուոյն սկիզբն առնու թագաւորութիւն Պարսից ի Շխօճաղէն, որոյ առաջինն է Շահ-Իսմայէլն, որ թագաւորեաց յամս ԼԶ։ Սա էր որդի Շխ-Հէյտարին՝ որդւոյ Շխ-սէֆուն ի հօր կողմանէն, և ի մօր կողմանէ՝ քեռորդի Եաղուպ թագաւորին՝ թոռան Ջհանշահին Դաւրիժու։ Զկնի որոյ թագաւորեաց որդին սորա Շահ-Թահմազն, յամս ԾԱ։ Տէր Արիստակէս ի ՋԽԱ թըուոյն։ Տէր Թադէոս ի ՋԽԲ թուոյն։ Տէր Եղիսէ ի ՋԾԳ թուոյն։ Տէր Ներսէս ի ՋԾԵ թուոյն։ Տէր Զաքարիա ի ՋԿԴ թուոյն։ Տէր Սարգիս ի ՋԿԹ թուոյն։ Տէր Գրիգոր ի ՋՁԵ։ Տէր Ստեփաննոս ի ՋՂ թուոյն։ Տէր Միքայէլ ի ՌԶ թուոյն։ Այս Միքայէլս նախապէս ճմլեաց զկզակս Աղուանից և Ախթամարու Կաթուղիկոսացն, որք կամէին ոտնածել յԱթոռս սուրբ Էջմիածին։ Զի Աղուանիցն կամէին զՆախիջևան, զԳեղարքունի, զՂափան, զԱխստև, և զԼոռի. իսկ Ախթամարայն զԽոյ և զՍալմաստ, զՎան, զՅամիթ, զԱրճէշ, զԽլաթ, զՄուշ և զԲաղէշ յիւրեանս գրաւել ի վիճակ։ Որոց աղագաւ եհան զհաստատութիւն Ռաղամ 2) ի Շահ-Թահմազէն, զի այս յիշեցեալ վիճակքս՝ զԳէնճէ, զԲարդայ և զՋակամներն ևս յԷջմիածնի են, որոց մի՛ ոք իշխեսցէ ձեռնամխել։ Որ ահա՛ գոյ նոյն Ռաղամն ի սուրբ Աթոռոջս, որպէս տեսցես յիւրում տեղւոջն ի Ժ գլուխն։ Զկնի Տեառն Միքայէլի՝ Տէր Բարսեղ, Տէր Գրիգոր, և Տէր Ստեփաննոս ի ՌԺԶ թուոյն։ Տէր Թադէոս և Տէր Առաքել ի ՌԻԵ թուոյն։ Տէր Դաւիթ ի ՌԼԵ թուոյն։ Տէր Մելքիսէթ ի ՌԽԲ թուոյն։ Տէր Սրապիոն ի ՌԾԲ թուոյն։ Տէր Սահակ ի ՌՀԴ թուոյն։ Տէր Մօսէս Սիւնեցին ի ՌՀԸ թուոյն։ Արդ ի վերոգրելոցդ՝ և մանաւանդ զկնի եղելոցս Կաթուղիկոսացս՝ մինչև ի Յակոբ Ջուղայեցին, տե՛ս զանուանս որպիսութիւնս ի յԱռաքել պատմագիրն, և ի Յակոբայ մինչև ի յԱղէքսանդր Ջուղայեցին ի Զաքարիա Պատմագիրն։

1) Խաչվառ: 2) Հրամանագիր, կամ Թագաւորական հրովարտակ:



## ԳԼ. Դ.

Յորում ցուցանէ կարգ յաջորդել Կաթուղիկոսացն սրբոյ Աթոռոյս ի Մօսէսէ մինչև ցառ մեզ, և բարերարութիւնք նոցին յարձանագրեալս։

Ապա ի հասանել թուականիս մերոյ ի ՌՀԸ, յորում ժամանակի երկիրս արևելեան և սուրբ Աթոռս էր ընդ իշխանութեամբ արքային Պարսից Շահ-Աբասին մեծի, որոյ հրամանաւն և մանաւանդ Աստուծոյ նախասահմանութեամբն և Հոգւոյն սրբոյ տուչութեամբն առնու զլուսարարութիւն սրբոյ Աթոռոյս՝ ի ՌՀԶ թուին Մօսէս Սիւնեցին նախապէս։ Եւ ի մեռանել Շահ-Աբասին առաջնոյ, ի նստիլ թոռան նորին Շահ-Սէֆուն, առնու զԿաթուղիկոսութիւնն ևս ի ՌՀԸ թուոյն մերում, և ի թագաւորութեան Օսմանցւոց Սուլթան Մուրատին։ Սա էր այր հոգեընկալ, առաքինազարդ, և բնակարան շնորհաց Հոգւոյն սրբոյ, սիրեցեալ յԱստուծոյ և ի մարդկանէ, որ ի նստիլն յԱթոռս սուրբ, որպէս թէ նոր ի նորոյ ի հիմանէ նորոգեաց զսուրբ Աթոռս՝ և պայծառացոյց Հոգևորական կարգօք, և մարմնական պիտոյիւք։ Որ գրեթէ զկնի Լուսաւորչին մերոյ և թոռանց նորին և Թարգմանչացն մերոց, յայլոց Հայրապետացն ո՛չ ոքն եղև երախտաւոր և բարերար սրբոյ Աթոռոյս և Ազգիս մերոյ նման սորին, և զկնի սորին յաջորդող Հայրապետացն Փիլիպպոսի և Յակոբայ, զորոց ի տեղւոջն իւրեանց տեսցուք։

Արդ այս երանելիս Մօսէս նախապէս եբարձ յԱթոռոյս զհարկն Մուզտուրայն՝ 1) որ յառաջնոց իբր հարկ էր մնացեալ ի վերայ սրբոյ Աթոռոյս՝ յամի յամի տալ արքունեաց։ Զայս մի՛ թեթև և փոքր ինչ կարծիցես, զի ըստ անուանն թէպէտ հարիւր յիշիւր, սակայն ի տալն հազարիւք ոչ վճարիւր, և մանաւանդ նորն զհնովն անցեալ գոլով՝ դիզացեալ կայր ի վերայ սրբոյ Աթոռոյս։ Այլ և պատեաց զպարիսպն սրբոյ Աթոռոյս շուրջանակի ի հողոյ, և յօրինեաց ի հիւսիսակողմն սրբոյ Աթոռոյս ըզխուցսն միաբանից գեղեցիկ և թրծեալ աղիւսօք, և ի յարևմտեան կողմն զմեծամեծ թանապիսն քարեայ կամարով և զայլ շինուածսն։ Ի հարաւային կողմն զտնտեսատունն, զսեղանատունսն երկուս, բայց Ամանն՝ փայտեայ, զփուռսն և զայլ ամբարսն ցորենոյ և այլոց իրաց, և զխուցսն արևելեան ըստ մասին։ Կարգեաց և զդպրոցս մանկանց, յորմէ ելին բազում իմաստուն և շնորհալի վարդապետք։ Զարդարեաց և այլովք բազմօք եղանակօք զսուրբ Աթոռս՝ որպէս ասացաք։ Սա շինեաց և զեկեղեցին Անա-

1) Մուզտուրա. հարկ, վարձ. եւլն։

Նիստ Առաքելոյն որ յԵրեւան, և արար վանք միաբանակեցաց։ Նմանապէս և զամենայն ազգս մեր եկեղեցական և հոգեւորական կարգօք զարդարեաց։ Զորոյ զբարերարութիւնս տե՛ս երկարապէս ի յԱռաքել պատմագիրն։ Սոյնի զարքունական և զպատուորական և զայս գրեանս առեալ յիւրում ժամանակին ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ գրեսցուք։ Եւ ի ՌՁԱ թուոջն մերում վախճանի երանելիս յԵրեւան, և թաղի ի Կողեռ գերեզմանատանն՝ հուպ Կողեռ վարդապետին։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Վասն Փիլիպպոս կաթողիկոսին եւ որպիսութեան նորին:

Ի ժամ վախճանի իւրոյ երանելւոյն Մովսէս կտակ աւանդէ, զի զկնի իւր Նստցի Փիլիպպոս վարդապետն Հաղբակցի, որ էր աշակերտ իւր։ Որ և Նստաւ իսկ ի ՌՁԲ թուոջն մերում ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ-Սեֆուն և Օսմանցւոց Սուլթան-Մուրատին։ Որ ի Նստելն գտաւ որպէս զարեգակն ի մէջ աշխարհի, և մանաւանդ ազգիս Հայոց։ Զորոյ զգործութիւնն տե՛ս ի յԱռաքել պատմագիրն։

Արդ ի յԱթոռոջս որքան փայտեայ շինուածք գոյին՝ յառաջմանէ աւերեցեալք էին, զամենեսեան շինեաց սա և վերստին Նորոգեաց։ Զեկեղեցւոյ տանիսն՝ բաց ի գմբեթէն՝ զբոլորեակն Նորոգեաց։ Զարեւելեան խուցսն շինեաց քարիւ և աղիւսով գեղեցիկ յօրինուածովք։ Զամառան սեղանատունն քարեայ շինեաց վերստին։ Զշրջապատ ֆուռն 1) եկեղեցւոյ և առաջի խցացն սա շինեաց։ Ի հարաւակողմն զձիթահանսն շինեաց։ Զսուրբ Տաճարսն Հռիփսիմեայ և Գայիանեայ որպէս թէ Նոր ի հիմանէ շինեաց, և զմիաբանս բնակեցոյց, որք յառաջ անբնակք էին լեալք։ Որոց մաքուր Նշխարքն սովաւ գտեալ և վերստին ամփոփեցան ի տեղւոջն։ Եւ զդպրոցս մանկանց սրբոյ Աթոռոյս՝ որ յառաջ ի Յովհաննու վանքն էր, սա եբեր ի սուրբ Աթոռս՝ և հաստատեաց. յորմէ ելին բազում երեւելիք և գիտունք։ Գրեթէ զամենայն վանօրայս Հայաստանեայց սա հաստատեաց ըստ ամենայնի։ Եւ ի ՌՁԶ թուին գնաց յԱսպահան քաղաքն, և զսուրբ Աջ Լուսաւորչին մերոյ (զոր Շահ-Աբասն մեծ տարեալ էր ընդ երկոտասան քարանցն սրբոյ Աթոռոյս, զի անդ շինեսցէ զէջմիածին ի ՌԿԴ թուոջն մերում) դարձոյց մեծաւ ջանիւ ի սուրբ աթոռս վերստին ի ՌՁԷ թուին։ Այլ և ի ՌՃ թուին ելեալ գնաց յԵրուսաղէմ, և անդ զսուրբ Յակոբեայ Աւագ խորանըն բարձրացոյց, և զյատակ եկեղեցւոյն գոյնզգոյն քարիւ սալահարկ ա-

1) Քարայատակ:



րար, և անդ ընդ Ներսէս Կաթողիկոսին Սսոյ երեքտասան գլխով կանոնս հաստատեաց, զորս գրէ Առաքել պատմագիրն։ Եւ անտի դարձեալ եկն ի Պօլիս, և անդ ազատեաց զեկեղեցիս Նոցա ի պարտուց, զորս արկեալ էին Պատրիարգունքն ընդ միմեանս ելանելով: Առ սա եկն ի Պօլիս և չար Նիկօլ առաջնորդն Լեհաց կարգեալն՝ և եպիսկոպոս ձեռնադրեալն ի Մելքիսէդ Կաթողիկոսէն՝ և բանադրեալն ի Մովսէս Կաթողիկոսէն, և ընկալաւ զարձակումն՝ յանձն առնլով զկանոնս, զի հնազանդ կացցէ սրբոյ Էջմիածնի և ի սմա Նստող Կաթողիկոսացն, զորս յատուկ և երկար յիշէ Առաքել պատմագիրն։ Քանզի յառաջ Լուսաւորչադաւան Հայք էին Լեհու մերայինքն և ի սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ Նուիրակ գնայր անդր. որք դարձան այնուհետեւ ի Փռանկութիւն՝ պատճառաւ չար Նիկօլին։ Եւ ի ՌՃԲ թուին վերադարձաւ ի սուրբ Աթոռս՝ և սկիզբն արար մեծի զանգակատանն յարեւմտեան կուսի, զոր և հասոյց ի Ներքին կամարսն սիւնազլխաց, և ի ՌՃԴ թուին վախճանեցաւ՝ թողլով անկատար, զոր յետոյ Յակոբ Կաթողիկոսն աւարտեաց։ Զուր մի յորդահոս ի յԱրագած լեռնէ բղխեալ ի Շիրակ կոյս ընթանայր ըստ բնականի ընթացմանն. այս երանելիս բազմաւ աշխատութեամբ շրջեալ զայն ի գետն Օշականայ ածեալ ի յաւելումն մերոյս ջրոյ, զոր և ջուր 1) արարեալ Շահ-Աբասին փոքու, բերէ ռաղամ՝ զի յատուկ սրբոյ Աթոռոյս լիցի այն ջուրն՝ որ լինի Ժ ջրաղաց ի ջուր։ Այլ և սա յաւել զջուր ի Հովզդան (այս ինքն Զանկի գետոյն) ի Սեւանու ծովակէն, բանալով զյառաջն մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ։ Եւ զայլ արդիւնաւոր գործս երանելոյս տես ի յԱռաքել Պատմագիրն։ Սոյնի և զգրեանս հոգացեալ արքունական և դատաւորական ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, զորս յիւրում տեղւոջն գրեսցուք։ Թաղեալ կայ սա ի տաճարին սրբոյն Հռիփսիմեայ ի յաջակողմեան դասուն։

Վասն Յակոբայ կաթողիկոսին:

Զկնի Տեառն Փիլիպպոսի Նստի Տէր Յակոբ Ջուղայեցին (որ էր աշակերտ Նորին) ի Նոյն ՌՃԴ թուոջն, ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ-Աբասին փոքու՝ և Օսմանցւոց Սուլթան-Մահմետին։ Որ և սա էր այր հոգելից և առաքինի, իմաստուն և հանճարեղ, հեզ և երկայնամիտ. որ ի Նստելն իսկոյն կատարեաց զմնացորդ մեծի զանգակատանն սրբոյ տաճարիս, որ սկսեալն էր ի Փիլիպպոս Կաթողիկոսէն։ Եւ ոչ սակաւ զաշխատանս և զվիշտս կրեաց ի հակառակացն ճշմարտութեան, թէպէտ

1) Խնդիր աղբեր:

յաղթեաց ամենեցուն հաստատուն յուսովն և Աստուածահաճոյ վարուքն։ Եւ յետ աւարտման ղանդակատանն, Նորոգեաց և պայծառացոյց զվանօրայս և զեկեղեցիս. որ և զվանսն սրբոյն Ստեփաննոսի՝ որ ի Շամբուձորն՝ ի հիմանէ Նորոգեաց զեկեղեցին և զխուցսն ի վարդապետութեան իւրում։ Եւ ապա գնաց ի յԱսպահան առ փոքր Շահ-ապասն։ Ցորմէ և յոյժ սիրեցեալ՝ էառ զմեր գեղջ վեց դանկ մուլքն վերստին սաստիկ հրամանագրովք, և դարձաւ յԱթոռս։ Եւ յետ այսորիկ գնեաց և զմուլքս այլոց գեօղօրէից և յաւել զերս սրբոյ աթոռոյս հաստատուն Ղալալըշէ–+ և վախմնական գրովք. որք գոն ի սուրբ Աթոռոջս, և զայլս բազում այսպիսիս բարերարութիւնս, զորս յիւրաքանչիւր տեղւոջն տեսցես։ Այլ և նշան զջուրս երկուս (որ +ան+ան ասի) ի Ներքոյ երկրի, ի միջոյ արեւմտից և հիւսիսոյ ի գետոյն կուսէ, զմին հանեալ ի վայր կոյս գեղջ մերոյ, որով ոռոգին արտորայք բազումք, ուր և շինեաց զփոքր ծովակս, ընդ որով և կազմեաց զջրաղացս և զջինկս։ Իսկ զմիւսն նշան ի մէջ սրբոյ Աթոռոյս ի վայելչութիւն սորին։ Որ ելանէ ի հարաւակոյս ի Ներքոյ դրանէն, յորոյ վերայ շինեաց և զջրաղաց մի բազմօգուտ, որ ոչ երբէք խափանի։ Այլ և շինեաց զերիս ծովակս ևս, զմին ի վեր կոյս հանդէպ Մոլա-Տուրսուն գեղջն՝ մեծ և բազմախոր 1), զերկրորդն ի յարեւելակոյս Դոփ այգի կոչեցելոյ՝ փոքրագոյն. և զերրորդն՝ քան զսա մեծագոյն՝ ի վայր կոյս ի գլուխ Մանկասարի այգւոյն, որք ոչ սակաւ ունին զօգտութիւնս այգեաց և արտորէից։

Ապա ի ժամանակս սորին յառաջացաւ սեւագլուխ մի յերկրէն Երեւանու՝ Օնոփրիոս անուն, այր լիրբ և անագորոյն, որ որքա՛ն ընկալեալ ի Կաթողիկոսէն զսէր և զներողութիւն, այնքա՛ն կատաղիւր և յաւելոյր զչարութիւն բազմապատիկ։ Մինչ զի միանգամ և երկիցս և երիցս խրատական պատժօք ոչ զգաստացեալ, յետոյ ի պատիժս մեռաւ իրաւամբ։ Այս Օնոփրիոս եգիտ իւրեան համախոհ և զոմանս սեւագլուխս (որք վասն Նոյնապէս անկարգութեանց իւրեանց քանիցս յանդիմանեցեալք էին ի Կաթողիկոսէն,) որք գրեն առ Եղիազար վարդապետն Հռոմկլայեցին (որ Պատրիարգ էր Երուսաղէմի) թէ, եկ ի սուրբ Աթոռս, մեք զքեզ Կաթողիկոս Նստուցանեմք աստ, գրելով և զրպարտանս բազումս ի Յակոբայ Կաթողիկոսէ։ Եւ ինքն Օնոփրիոսն ևս զկնի թղթոյն ելեալ գնաց առ Եղիազարն։ Եւ Եղիազարն ևս յօժար գոլով՝ ժողովէ զոմանս սեւագլուխս աստի և անտի՝ ի Բերիա քաղաքն, և օծանի Կաթողիկոս. որք ընդ Օնոփրիոսին խոստանան տալ յարքունիս Օսմանցւոյն յամէ յամ ԲՃ ղուրուշ. և հրաման

1) խորն, ծախր։



հանեն՝ զի ի Պարսից կուսէ ամենեւին սեւագլուխ մի ոչ անցցէ ի հողն Օսմանցւոց։ Ապա զԿաֆայեցի Մարտիրոս վարդապետն՝ (որ էր Պատրիարգ Կոստանդնուպօլսոյ և ի Նոյնոյ Յակոբայ Կաթողիկոսէն լեալ Եպիսկոպոս, բարեկարգ առաջնորդք իշխանք, և ժողովուրդք երկրին, ի մի եկեալ առաքեցին ի յԷջմիածին՝ ի հրաւիրել զՅակոբ կաթողիկոսն ի Կոստանդնուպօլիս՝ առ հոգալ վասն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի։ Որ և առեալ ընդ իւր զթագաւորական հաթը չէրիֆ 1) Փիլիպպոս Կաթողիկոսին՝ (զի գնա ինքն չունէր) ելեալ գնաց ի մեծն Պօլիս և արզ արարեալ Սուլթան Մահմատ թագաւորին, Աստուծով ամօթալից արար զներհակսն իւր. զի թագաւորն ետ սմա զհրաման Կաթողիկոսութեան արքունական գրով, և զներհակսն պատժել հրամայեաց. առ յոր եկեալ Եղիազարն միջնորդօք՝ Մեղայ գոչեաց և հնազանդեցաւ։ Ապա եկեալ փառաւորապէս Յակոբ Կաթողիկոսն դարձաւ ի սուրբ Աթոռս։ Եւ յետ այնորիկ հարկեցեալ ի բազմաց պակասութեանց և մանաւանդ ի պարտատեարցն Օնոփրիոսի (զորս արարեալ էր Նենգութեամբ յանուն սրբոյ Աթոռոյս յաթոռակալութեան իւրում,) զզուեցեալ Կաթողիկոսին՝ ել և գնաց յերկիրն Յունաց, զի թերեւս զօգնութիւնս գտցէ. և հասեալ ի Կոստանդնուպօլիս քաղաքն, և անդ փոխի առ Քրիստոս ի ՌՃԽԹ թուին։ Որ և թաղեցաւ ի գերեզմանատանն Բէկ օղլի կոչեցեալ։ Ունի հոգացեալ և զգրեանս արքունականս և գաւառապետականս օգտակարս, զորս յետոյ ի տեղւոջն տեսցուք։

Վասն Եղիազար կաթողիկոսին

Տէր Եղիազար Հռոմկլայեցի (որ նախապէս օծեցեալ գոլով յանդգնեալ կայր) Նստի ի ՌՃԼԱ թուոյն ի սուրբ Էջմիածին, ի թագաւորութեանն Պարսից Շահ-Սուլէյմանի, և Օսմանցւոց Սուլթան-Ահմատին։ Սա էր այր ճարտարան և ճոռոմախօս, յաջողակ և աչալուրջ, յորմէ ամենեքեան երկնչէին թէ՛ մեծամեծք և թէ փոքունք։ Մինչ զի զբազում պարտս սրբոյ Աթոռոյս՝ որք մնացեալք էին յառաջնոց, սա զամենայնսն անհնար արար՝ տալով զմարզհակսն ի պարտատեարցն, և ազատեաց զսուրբ Աթոռս ի նոցանէ։ Սա շինեաց զբազում եկեղեցիս և արար զնորոգութիւնս բազմաց վանօրէից, Նոյնպէս արար և ի սուրբն Հռիփսիմէի. և Գայիանէի զպարիսպն պատեաց, զգաւիթսն շինեաց ի հիմանէ, և զխուցս բազումս ի բնակութիւն միաբանից տեղւոյն։ Ի սուրբ Աթոռոջս, զԿաթողիկէ ի վերայ սրբոյ Իջման տեղւոյն կանգնեաց չորեք սեամբք խաչ 2) քարինք, և հաստատեաց սեղան՝ զի

1) Հաթը — չէրիֆ, գիր, հրովարտակ թագաւորական։ 2) Անօթոյ, հատորակ. եւլն։

Պատարագ մատչիցի։ Զերկուս կողմանս ի միջոյ տաճարին հիւսիսոյ և հարաւոյ՝ բարձրացոյց յերկիրէ, (որք յառաջ հաւասարք էին յատակի տաճարին,) և արար սեղան ի պատարագ մատչել, որք են սրբոյն Ստեփաննոսի և սրբոյն Կարապետի խորանքն. կարգեաց զմէջ եկեղեցւոյս հաստատուն վիմաքարիւք, զի մի յառաջ մատչիցին խանձարանաւքն. ուր յիշատակք Միարանքն կանգնին այժմ։ Շինեաց և զերիս զանգակատունս ի տանիս տաճարին, յարևելս, ի հիւսիս, և ի հարաւ, գեղեցիկ յօրինուածովք. որովք եղեն հինգ կաթողիկէ ի տանիս տաճարին։ Եւ զայլ բազում բարութիւնս արար։ Եւ այսպէս խորին կենօք մնացեալ՝ փոխի ի Քրիստոս ի ՌՃԼԹ թուոջն մերում. և դնի ի յաջ կողմն գաւթի սուրբ Գայիանէին՝ զոր ինքն էր շինեալ։ Ունի և զգրեանս արքունական և դատաւորական հաստատեալ ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ յիւրում տեղւոջն գրեսցուք։

Վասն Նահապետ կաթողիկոսին:

Նստի ի սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Նահապետ Ուրհայեցին ի ՌՃԽ թուոջն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ-Սուլէյմանին և Շահ-Հիւսէինին, և Օսմանցւոց Սուլթան Ահմետին և Մուստաֆային։ Եւ սա էր նման Եղիազարու, (որոյ էր աշակերտ,) այր ճոխամախոս և փառասէր, իշխան և աջարկու, յորմէ կասկածէին ամենեքեան։ Սա շինեաց զՏաճարն Շողակաթ կոչեցեալ ի հիմանէ գեղեցկաշար վիմօք ընդ զանգակատանն և ընդ ամենայն շինուածոց նորին՝ արդեամբք Շոռոթեցի Աղամալ իշխանին։ Սա ի յԵրևան ի Ներքնակողմն բերդին հուպ Սարվանլար կոչեցեալ գիւղն՝ ծակեաց զլեառն ձորակին, ուր ընթանայ գետն Հրազդան, և ջաղխելով զվէմս, բանալով զխորափոր առու մեծաւ աշխատութեամբ և անհամար դրամածախութեամբ՝ եբեր զջուր ի գետոյն Հրազդանի ի գեղս մեր ի յօգուտ այգեստանացն։ Շինեաց և զգեղեցիկ և զմեծածախ կամուրջն Օշականայ գեղջ ի վերայ Քասախ գետոյն՝ խարտեալ քարիւ։ Շինեաց զՋորագեղջ անապատն, զեկեղեցին և զխուցսն. զնեաց և զշրջակայ տունսն, և զներքոյ ձորոյն անապատի վայրսն ամենայն, որք արդէն են սրբոյ աթոռոյս։ Շինեաց զԵրևանու երկու եկեղեցիսն, Քանաքեռու, զԿոտոյին, և զայլոց բազմաց գեղօրէից եկեղեցիս խարտեալ քարիւ ի հիմանէ։ Գրեթէ յերկիրս Երևանու որքա՛ն քարաշէն Եկեղեցիք կան՝ ըստ մեծի մասին ի սմանէ են շինեցեալք։ Արար և զայլ շինութիւնս և զօգտակար գործս յաթոռոջս և յերկրոջս։ Ունի հոգացեալ և զգրեանս արքունական և դատաւորական ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, զորս յիւրում տեղւոջն տեսցուք։



Արդ ի ՌՃԽԴ թուոջն ի չորրորդում ամի Կաթողիկոսութեան սորին՝ Ջուղայու Առաջնորդ Ստեփաննոս վարդապետն թագաւորական գրով եկեալ ի Ջուղայէ՝ գայ յէջմիածին և նստի Կաթողիկոս, և զՆահապետն ընկենու յԱթոռոյն։ Իսկ Նահապետն ևս գնացեալ նստի ի Դավրէժ քաղաքն, և անդուստ վերստին բերէ զհրամանագիր Կաթողիկոսութեան իւրոյ ի Շահէն և յՕսմանցւոց թագաւորէն, և գայ նստի յէջմիածին ի ՌՃԽԶ թուոջն, և զՍտեփաննոսն դնէ ի կալանս, ուր և վախճանի իսկ ի ՌՃԽԷ թուոջն, զոր տարեալ թաղեն ի Խորվիրապայ վանքն։ Վասն որոյ ոչ սակաւ լինի խռովութիւն ի մէջ Ջուղայի սևագլխացն և Կաթողիկոսին մինչև ի ՌՃԾԴ թիւն մեր, յորում վախճանի Նահապետն և թաղի յաջակողմն գաւթին սուրբ Շողակաթի, զոր ինքն էր շինեալ։ Եւ նստի Աղէքսանդր Ջուղայեցի ի ՌՃԾԵ թուոջն մերում։

Վասն Աղէքսանդր կաթողիկոսի:

Նստի Տէր Աղէքսանդր Ջուղայեցի Կաթողիկոս ի յԷջմիածին, ի ՌՃԾԶ թուոջն մերում, ի թագաւորութեան Պարսից Շահ-Հիւսէինին, և Օսմանցւոց Սուլթան-Ահմատին։ Սա էր այր վանական, և տեղեակ Աստուածաշունչ գրոց, համբերող և շինարար։ Որ զբազում հնացեալ շինուածս սրբոյ Աթոռոյս նորոգեաց. զձմռան Սեղանատունն վերանորոգեաց կամարով և խարտեալ քարամբ։ Զընդիկ այգին սրբոյ Աթոռոյս՝ որ է հանդէպ սրբոյն Հռիփսիմեայ՝ մեծացոյց ի կողմանցն և պարսպեաց։ Հաւաքեաց բազմագին եղանակօք զսուրբ Աթոռս եկեղեցական զարդուք և արտաքին կահիւք և անօթովք։ Յաւել ևս մուլքս և զգրեանս արքունական և դատաւորական գրովք ի սուրբ Աթոռս, զորս յետոյ գրեսցուք։ Եւ կեցեալ բարւոք քաղաքավարութեամբ՝ վախճանի ի ՌՃԿԴ թուոջն մերում։ Եւ թաղի ի սուրբ Աթոռս ի ներքոյ մեծի զանգակատանն, յաջակողմն դրան սրբոյ տաճարին։

Վասն Աստուածատուր կաթողիկոսին:

Նստի Տէր Աստուածատուր Համատանցի Կաթողիկոս ի յԷջմիածին ի ՌՃԿԴ թուոջն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ-Հիւսէինին, և Օսմանցւոց Սուլթան Ահմատին։ Սա էր այր հեզաբարոյ և հոգևոր, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և արտասուող. որ ի նստիլն՝ արար զբազում բարերարութիւնս սրբոյ Աթոռոյս և երկրիս. կրեաց և զբազում նեղութիւնս և զտառապանս։ Զի յաւուրս սորա վրդովեցաւ թագաւորու-

թիւնն Պարսից, և փախեաւ ի յՆգաւանս. Սա զարդարեաց զՄէջն մեծի տաճարին. զի շինեաց և զաւրբ Իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից մարմարեայ սեանց, և ծաղկեցոյց ոսկւով և պէս պէս երանգօք. և արար զարմանալիս տեսողաց. Նմանապէս և զձախատ մեծի սեղանոյն աբար մարմարիոնեայ. սալայատակեցոյց բաւամբ և ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ. Եւ զեկեղեցւոյ առաջնոյ Աւագ դրան մին սիւնն (և ըստ ոմանց զչորեսին սիւնսն ևս) ի հիմանէ նորոգեաց. Նորոգեաց սալիւ և զյատակս մեծի տաճարին. Շինեաց և զանտեսատունն քարիւ և կամարով, և եհան ջրհոր ի մէջն. Այլ և ըստ ոմանց՝ հիւսիսոյ կողման գեղջս մերոյ զվերին մեծ ծովակն ի Քարաքիթն կոչեցեալ, մերձ Մօլլայդուրսուն գեղջն, սա շինեալ է վասն սահման լինելոյ և «սինոր»1) անդաստանացն գեղջս մերոյ. Հաղացական առնի և օգտակար գետնոց արքունական և գաւառական, զորս յետոյ գրեսցուք. Եւ սա ի ՌՃՀԴ թուոջն մերում փախի առ Տէր, և թաղի ի գաւիթն սրբոյն Հռիփսիմէի ի յաջ կողմն կոյս դրանին, թէպէտ գրեցաք թէ վերին մեծ ծովակն նա է շինեցեալ, բայց յետոյ հաւատացաք. որ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն է շինեալ ընդ այլոց չորից ծովակացն, որպէս ասացաւ լիովին ի ԺԲ. գլուխն ի ճառս գրոցն.

Վասն Կարապետ Կաթողիկոսին:

Նստի Կաթողիկոս ի սուրբ Էջմիածին Տէր Կարապետ Ջէյթունցին ի ՌՃՀԵ թուոջն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Աղուան Մահմուտին, և Օսմանցւոց Սուլթան Ահմէտին. Սա էր այր ծեր և անձնեայ, մեծաշուք և առատաձեռն: Յորոյ ժամանակին Օսմանցիք տիրէին երկրիս մերում մինչև ի Սուլթանիայ, որք ի ՌՃՀԴ թուին առին ի Պարսից. մինչ Աղուանն էառ զԱսպահան ի ՌՃՀԱ թուին, և Ռուսսն էառ զԳիլան. Սա եա նկարել զպատկերս երկոտասան Առաքելոցն ի ճակատ Աւագ խորանին և եա ծաղկել ոսկեզօծ և գեղեցիկ գունօք. Առնի հոգացեալ և զգրեանս օգտակարս, զորս յետոյ գրեսցուք. Եւ մինչ ի ժամանակս սորա երկիրս մեր ընդ իշխանութեամբ Օսմանցւոց էր, ուստի և սա կարի յառաջադէմ և յաջողակ էր ի բանս և ի՛րս ի նոցանէ. զԵրևանու մելիք Յակոբճանն ի կախաղանէն իջուցեալ ապրեցոյց ի մահուանէն. Այլ և առն գովելոյ, շնորհաշատի և պերճախօսի, Տեառն Սիմէոն Առուածապանի վարդապետին Երևանցւոյ զմեծ և զարժանի արձանագրեցման

1) Սահման, եզր:



գործնոց է զանց առնելի. որ է ի ՌՃՀԴ թուոջն մինչ Օսմանցին ի մերս կոյս դիմեաց և էառ զերկիրս մեր. յիշեալ Սիմէոն վարդապետն ի Կոստանդնուպօլիս նուիրակ էր սրբոյ Աթոռոյս, մեծաւ հոգաբարձութեամբ զհրամանագիրս եհան ի թագաւորէն ի վերայ «Սէրասքէրին»1) իւրոյ. զի ի յաթոռս ամենևին ոչ մերձեսցին և մի՛ վնաս ինչ տայցեն, որպէս և եղև. Որ ահա նոյն «Հաթի շէրիֆն» գոյ ի սուրբ Աթոռս: Սա ի ՌՃՀԸ թուին փոխի Կարապետ Կաթողիկոսն առ Տէր, և դնի ի գաւիթ սրբոյն Հռիփսիմեայ ի ձախակողմն կոյս. Սա ի հրաւիրելն ի մեծ Պոլիս օծեցաւ Կաթողիկոս թելադրութեամբ և չար գիտաւորութեամբ Բաղիշեցի Յովհաննէս վարդապետին (որ յայնմ ժամանակի Պատրիարք էր նոյնոյ քաղաքին Պոլսոյ). Քանզի եա օծանել զսա ի Կաթողիկոս՝ որպէս ասացաք, և ինքն և իւրքն ձեռնադրեցան անդ Եպիսկոպոս. Եւ մինչ ետես զի ամենայն ըղձից իւրոց առ ժամանակ է լնանելման, (զի տեսանէր զԿարապետ Կաթողիկոսն միամիտ և անտեղեակ ուղղութեանց սրբոյ Աթոռոյս,) յաւել և զայս չարութիւնս. զի զարզա տալն Կաթողիկոսաց թագաւորացն Օսմանցւոց ընդ ձեռամբ իւրով արար. Յայնմ օրէ սովորութիւն եղև՝ զի զոր ինչ խնդիրս ունիցին Կաթողիկոսքն ի յՕսմանցւոց թագաւորէն, Պատրիարքն Պոլսոյ տայցէ զարզայն և ո՛չ այլ ոք. որպէս ասացաւ լիապէս ի ԻԲ գլուխն ի ճառս Օսմանցւոց գրեանցն.

Վասն Միջեցի Աբրահամ Կաթողիկոսին:

Նստի ի յԱթոռս Էջմիածին Կաթողիկոս Տէր Աբրահամ Միջեցին ի ՌՃՀԹ թուոջն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Շահ-Թահմազին, և Օսմանցւոց Սուլթան Մահմուտին. Քանզի ի ՌՃՀԸ թուին, Նատր անուն մի զօրացեալ, ելանէ ի Խորասանայ բազմօք զօրօք պարսկականօք գայ ի վերայ Աղուանից ի յԱսպահան, և յաղթեալ փախուցանէ զնոսա յերկրէն Պարսից, և զՇահ-Թահմազն՝ որ էր փախստական ի Խորասան, բերեալ նստուցանէ ի բնիկ աթոռն իւրեանց յԱսպահան. Որ և յետոյ զԱրարատեան և զայսկուսի երկրայս ևս ի ձեռաց Օսմանցւոցն էառ, և արար զնոսա փախստականս. Եւ զերկիրն Գիլանու իւրայնովքն ի յՌուսսաց էառ, և հաստատեաց վերստին զՊարսից թագաւորութիւնն. Այս Աբրահամ Կաթողիկոսիս ժամանակն երկիրս մեր և սուրբ Աթոռս դեռ ևս ընդ իշխանութեամբ Օսմանցւոց էր. Եւ սա էր այր առաքինի և ճգնազգեաց, հեզ և բարերարոյ, աղօթասէր և տօնակատար. Որ ի

1) Սէրասքէր. սպարապետ:

մէջ Մծբի Տաճարիս զառաջնոյ գասի երկուս սեղանսն կառոյց և անուանեաց սուրբ Յակոբ և սուրբ Լուսաւորիչ։ Զորս և զարդարեաց ծաղկօք և մարգարէական պատկերովք։ Եւ զամենայն պատկերսն՝ որք գոն ի յորմունսն և ի սիւնսն տաճարին՝ սա ետ նկարել։ Շինեաց և զխանութսն քարիւ տաշեցելովք. Նմանապէս և զերկուսին արտաքնոց տեղիսն միաբանից ի հիւսիսակողմ երկու անկիւնսն պարսպին սա շինեաց հաստատուն քարամբ։ Արար և զայլ բազում բարութիւնս։ Եւ ունի հօգացեալ գրեանս օգտակարս զորս յետոյ գրեսցուք։ Ապա ի ՌՃՁԳ թուին վախճանի, և դնի ի գաւիթ սրբոյն Գայիանեայ ի ձախակողմն կոյս։

Վասն Կրետացի Աբրահամ կաթողիկոսին.

Նստի ի սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Աբրահամ Կրետացին ի ՌՃՁԳ թուոյն մերում, ի ժամանակս թագաւորացն Պարսից Նատր շահին, և Օսմանցւոց սուլթան Մահմուտին. քանզի ի սոյն ամիս վերոյ յիշեալ Նատր խանն Խորասանցի եկն բազմօք զօրօք, և էառ զբոլոր երկիրս մեր ի յՕսմանցւոց և արար զնոսա փախստական յերկիրն իւրեանց։ Եւ յետոյ զՇահ-Թահմազն կալեալ եդ ի ղաֆէս 1) զոր և սպան. և զնորին որդի Շահ Աբաս մանուկն յօրօրոցի հռչակեաց զոլ շահ, և ի գալ ամին գնա ևս կորոյս, և ինք թագաւորեաց ի ՌՃՁԵ թուոյն մերում. որ եղև կարի աչալուր և անուանի ի վերայ ամենայն թագաւորաց, յորմէ ամենեքեան սարսէին զանունն միայն լսելով։ Եւ զԱբրահամ Կաթողիկոսն կարի սիրեաց և միշտ առ յինքն պահէր, զոր և հայր կոչէր։ Եւ Աբրահամ Կաթողիկոսն ևս էր աչալուր և չքեղատես, մեծանձն և խելօք, ճարտարալեզու և հանճարեղ։ Ուստի Նատր-շահն ի յինքն պահէր և շատ խորհուրդ և առնելիս իւր ընդ սմա տնօրինէր և սմա հարցանէր։ Եւ ինքն Աբրահամ Կաթողիկոսն էր թէպէտ ժիր և արիասիրտ յամենայն բանս և յաջողակ ի գործս, սակայն էր ծեր և լցեալ աւուրբք և ցաւագար իսկ. որ և թէպէտ շինուածս ինչ ոչ կարաց առնել յԱթոռոյս, (զի ժամանակ ևս ոչ ունեցաւ, միշտ ընդ Շահին լինէր) սակայն քան զամենեսեան առաւել արար զբարերարութիւնս և զօգուտս սրբոյ Աթոռոյս և ազգիս և բոլոր երկրիս մերոյ։ Քանզի Նատր-շահ կոչեցեալն այնքան էր ահեղ և զարհուրելի, մինչ քարինքն հալէին յահէն յանուանէն. սակայն ողորմածն Աստուած այնքան քաղցրացոյց յաչս նորա զսրբազան Հայրապետս մեր որպէս զՅովսէփ առ Փարաւոն, և զՆեեմիա առ Արտաշէս, որոյ բան և խնդիր մի ոչ անկանէր

1) գաֆէս, վանդակ, բանտ, նեղչն:



յերկիր առաջի այնպիսոյ բռնաւորին, վասն որոյ զբազումս ազատեաց ի մահուանէ. զշատս ի կալանաց ի կախաղանէ. զբազմաց աչսն և զականջսն և զայլ անդամսն ազատեաց ի հատանելոյ և ի բրելոյ։ Զանհամար գերիս ազատեաց ի գերչաց։ Եւ զբազումս զորս տաճկացուցեալ էին կամաւ և թէ բռնութեամբ, յետս դարձոյց և առ ի ձեռաց այլազգեաց։ Եւ զայլ անհամար բարերարութիւնս արար Տաճկաց, և Հայոց, Պարսից և Օսմանցւոց։ Բազում մեծամեծ խանք և աքքունի զրան մարդիք առ սա գային և միջնորդ արկանէին առ շահն, զի զհօգալիս իւրեանց հոգասցէ, զորս և հոգայր իսկ։ Ապա ի ՌՃՁԵ թուին հանգեաւ ի Տէր և սուգ մեծ էած ի վերայ բոլոր երկրիս արևելեան. և թաղեցաւ ի Շողակաթի ի ձախակողմն գաւթին. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Ունի և գրեանս օգտակարս արքունական և գաւառական հօգացեալ, զորս յետոյ գրեսցուք։ Սա թէ իւր և նոյն ժամանակի անցից պատմութիւնն ինքնին յատուկ ունի գրեալ։

Վասն Ղազար կաթողիկոսին

Նստի ի սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Ղազար Ջահկեցին ի ՌՃՁԷ թուին, յամս թագաւորացն Պարսից Նատր-շահին, և Օսմանցւոց Սուլթան Մահմուտին։ Սա էր այր գիտնական և ճարտարալեզու, հանճարեղ և փառապերճ։ Շինեաց ի սուրբ Աթոռոյս ի Հայրապետարանումն զգեղեցիկ դարպաս, երկերեսի հայեցուածովք, մինն ի մեծ տաճարն հայի, և միւս երեսն յարևմուտս ի ներս կոյս, որ կոչի Դևհարան։ Շինեաց և զայլ շինուածս ի Հայրապետարանումն գետնանիստս ի հարաւակողմ և ի հիւսիսակողմ։ Շինեաց և ի հարաւակողմն պարսպի Աթոռոյս յատուկ ներքնատուն և վերնատուն յաղագս հիւրոց, որ կոչի Ղազարապատ։ Այս Ղազարապատիս արտաքոյ կուսէ շինեաց զպարիսպն տաշեալ քարիւք և թրծեալ աղիւսովք, Ղազարապատի դրանէն ի յարևելս կոյս մինչև ի մեծ դուռն որ ի ջուր Քանքանին հայի։ Սակայն երկիցս անգամ ընկեցեալ եղև սա ի յԱթոռոյն, մին ի ՌՃՂԳ թուոյն ի Նատր-Շահէն, որ մնաց ընկեցեալ վեց ամիս, և յետոյ նստաւ վերստին։ Եւ երկրորդ՝ ի յՕսմանցւոց երկրի սեաւգլխաց և միաբանից սրբոյ Աթոռոյս։ Եւ նստաւ յաթոռն Տէր Պետրոս Քիւթիւր կոչեցեալն Համլայեցի յամիս տասն։ Ապա վերստին նստաւ Ղազարն ի ՌՃՂԷ թուոյն՝ և զՊետրոսն ի բանտի մեռոյց։ Որ և կեցեալ ևս յամս Գ, ի ՌՄ թուոյն վախճանի. և դնի ի սուրբ Գայիանէի ի յաջակողմն գաւթին։ Ունի սա և հօգացեալ գրեանս օգտակարս արքունական և գաւառական, զորս յետոյ գրեսցուք։ Ապա ի ՌՃՂԷ թուին և Նատր-Շահն սպանաւ, և մնացորդքն ընդ միմեանս անկան,

և բարձաւ խաղաղութիւնն Պարսից. և երկիրս մատնեցաւ ի ձեռս ինքնագլխի և անիրաւ բռնաւորաց. և անկաւ ի մեծ թշուառութիւնս և այսպէս է մինչև ցայսօր, որում Տէր այց արասցէ:

Վասն Մինաս կաթողիկոսին:

Նստի յԱթոռն սուրբ Էջմիածին Տէր Մինաս Ակնցի ի թուոջն մերում ՌՄ, ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մահմուտին, և յանիշխանութեան Պարսից: Եւ կեցեալ յամս երկուս մեռանի ի թուոջն ՌՄԲ, և թաղի ի վանքն սուրբ Գայիանեայ ի ձախակողմն գաւթին: Ունի և զգրեանս դատաւորականս հոգացեալ, զորս յետոյ տեսցուք:

Վասն Աղեքսանդր կաթողիկոսին:

Նստի յԱթոռն սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Աղեքսանդր Կոստանդնուպօլսեցին ի ՌՄԳ թուոջն մերում, և ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Օսմանին՝ որ էր այր հեզաբարոյ և պարզամիտ. և բազմաշխատ, որդի և ընէկ միայն սրբոյ Աթոռոյս: Եւ ունի զբարերարութիւնս բազումս ի սուրբ Աթոռս ի մանկութենէ: Որ և կեցեալ ամս Բ, մեռանի ի թուին ՌՄԳ, և թաղի ի ներքոյ զանգակատան մեծի, ի ձախակողմն դրան մեծի Տաճարիս: Ունի և զգրեանս հոգացեալ ի յօգուտ սրբոյ Աթոռոյս, զորս յետոյ գրեսցուք:

Ի ՌՄԵ թուոջն մերում, և ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային, ի Կոստանդնուպօլիս կոչի ի Հայրապետութիւն Սահակ վարդապետն Կեղեցի, որ Աճապին կոչիւր. և մնայ յամս Գ և կէս առանց օծման և ոչ գայ ի սուրբ Աթոռս. վասն որոյ հանեն զնա ի ՌՄԸ թուոջըն ի Հայրապետութենէն և մեռանի ի Կարին քաղաք:

Վասն Յակոբայ կաթողիկոսին Շամախեցւոյ:

Ապա Նստի ի սուրբ Էջմիածին Կաթողիկոս Տէր Յակոբ Շամախեցին ի ՌՄԸ թուոջն, ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային. Սա էր այր պիտանի և խորհրդական, խելօք և հանճարեղ յամենայն գործըս, և գիտուն և շնորհաշատ: Ի մանկութենէ ի սուրբ Աթոռս գոլով՝ ոչ է կեցեալ անգործ. զի առնէր զաս միաբանից զինչ և խնդրէին: Շարագրէր [illegible] 1) և տայր գրագրացն՝ զոր ինչ և գրէին. որոյ տետրակքն

1) Միւսավիէտէ. սեւագիր, օրինակագիր:



ցոն ի սուրբ Աթոռս, յորոց և Նարգեանս զրագիրքն առնուն զօրինակս գրելոց իւրեանց: Կաթողիկոսք ժամանակին զսա ունէին խորհրդակից և վստահու: Եւ էր տեղեակ աշխարհական և դատաւորական [illegible] 1): Եւ սա գրէր և հոգայր զգիրս աշխարհականաց և դատաւորականաց, և պահէր ի պատրաստի: Ունի և զանհամար բարերարութիւնս ի սուրբ Աթոռոյս և զգրեանս հոգացեալս, զորս յետոյ գրեսցուք: Շինեաց և ի յԵրեւան ի Զօրագեղ անապատոյն զտունս Հայրապետանիստս, և պատեաց բարձրաբերձ պարսպօք և բրգօք՝ որպէս այժմ նստին Հայրապետք ի գնալն իւրեանց յԵրեւան: Այսպէս բարւոք կառավարմամբ, ի Տէր փոխի ի ՌՄԺԲ թըւոջն, և դնի ի յաջակողմն գաւթի սրբոյն Գայիանեայ: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

Կաթողիկոսք Հայոց ազգիս սկսեալ ի սրբոյն Գրիգորէ ցաւր մեզ:

Ի սրբոյն Գրիգորէ մինչև ի Բարսեղ, որք նստան ի Վաղարշապատ, ի Դուին, և յԱնի, Կաթողիկոսք ԿԱ. և ամք նոցա ութ հարիւր տասն և երկու: Ի սրբոյն Գրիգորէ եղբօրէ Ներսիսի Շնորհալւոյն, մինչև ի Յովսէփ, որք նստան ի Հռոմկլայն և ի Սիս, Կաթողիկոսք ԻԷ աւելի և պակաս ընդ միմեանս նստեալ, և ամք նոցա երեք հարիւր քսան և հինգ: Ի Կիրակոսէ մինչև ի Յակոբ Շամախեցին, որք վերստին նստան ի սուրբ Աթոռս Էջմիածին (զորոց որպիսութիւնն ի Գ գլուխն տեսցես:) Կաթողիկոսք ԼԹ, և ամք նոցա երեք հարիւր քսան և երկու: Որք միանգամայն ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մինչև ի Յակոբ Շամախեցին, են հարիւր քըսան և եօթն. և ամք նոցա հազար չորս հարիւր յիսուն և ինն:

Վասն Սիմէոն կաթողիկոսին:

Նստի ի սուրբ Աթոռս Էջմիածին Կաթողիկոս Տէր Սիմէոն Երևանցին: Որ է Նախապետական հեղինակ գրքոյս, ի ՌՄԺԲ թուոջն մերում: Եւ ի թագաւորութեանն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆային: Սա էր այր շնորհընկալ, առատամիտ, գիտնաշատ, և լի իմաստութեամբ, լաւապէս տեղեակ հին և նոր կտակարանաց, և վարժ ներքին և արտաքին դպրոց, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց սրբոյ Աթոռոյս: Սա ի սարկաւագութենէ անտի որքան յԱթոռս գտանիւր՝ ոչ դադարէր ի դաս ասելոյ, մինչև ի Կաթողիկոսութեանն եւս: Անձանձիր և անտրտունջ, և մանաւանդ

1) Հարցմունք, օրէնք:

ցուցարդ և հրաւիրող ի յուսումնասիրութիւն։ Այլ և էր վարժ բանաստեղծութեան արհեստից, և հմտագոյն ի չափաբերութիւնս. որ և ի սարկաւագութեանն անուն սա տպր գրագրեաց սրբոյ Աթոռոյս գնացածատայս և կարգաւորէր զարհեստս նոցին որպէս յառաջագոյն հայր և մատակարար նոցին ի Կաթողիկոսութեանն Եւ։ Որ և ի տեսերս մատենատայից գոն բազում շարադրութիւնք շաղաղիք ի սմանէ գրեցեալք։ Այլ և արար սա ի վարդապետութեանն, լուծմունս բոլոր արտաքին գրոց գեղեցիկ և պարզ ոճով ի դիւրութիւն պատանեաց և դասատուաց, յորս գրեթէ ոչ ինչ է թողեալ զտարակուսելիս և զանհասկանալիս։ Արար և գիրս քարոզից ի յերկուս հատորս, զմին երկարաբան, ճառակերպ և նրբագեղեան ի վեցօրեայ արարչագործութեանն Աստուծոյ, ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր, և ի սուրբ Աթոռս Էջմիածին, և յայլս հարկաւոր նիւթս և ի խորհրդալի ընթացս։ Եւ զերկրորդ հատորն տարեկան քարոզ, ըստ աւուրց պատշաճաւորութեանն՝ կարճառօտ և զօրաւոր բանիւք։ Որք երկուք հատորքն են օգնիչք՝ ձեռնտուք և յարմարք են վարդապետաց և մանաւանդ նուիրակացն սրբոյ Աթոռոյս։ Արար նա և զկրկնապէս լուծմունս դժուարիմաց բանիցն Պրոկղի, որք եղեալք են զկնի լուծմանցն առաջնոյ լուծողի Սիմէոն վարդապետին խաչաձև նշանիւք։ Արար և զփոքրիկ գիրք մի աղօթից, որ կոչի Զբօսաբան հոգւոր, գեղեցիկ և պարզ ոճով։ Այլ և վերանորոգմամբ կանոնաւորեաց զՏօնացոյցս մեր երկրորդմիւք հատորօք ի վերայ Լ.Զ. գրոցն մերոց՝ անշարժ և մշտնջենաւոր ընթացմամբ։

Այլ և էր սա բարուքն հեզ, պարզամիտ և համբերող, ներող և անյիշաչար կակղասիրտ և գթաշատ, ողորմած և առատաձեռն առ յամենեսեանս, անընչասէր և աղքատասէր. առ յոր գրեթէ ամենայն ինչք աշխարհի որպէս կցկտուք էին համարեցեալք։ Վասն որոյ և Աստուած ըստ բարուցն յաջողէր և տայր առատապէս։ Յորում ժամանակի էր սուրբ Աթոռս շնորհօքն Աստուծոյ լի ամենայնիւք հոգեւորօք և մարմնաւորօք, ներքսականօք և արտաքսականօք, բնակչօք և լծկանօք, և կթելի անասնօք բազմապատիկ քան զառաջինն։ Միաբանքն շատ հանգիստ և ապահով յամենայնի։ Ի յաւուրս սորա ոչ պակասեցան կերպակերպ արհեստաւորք և շինարարք ի յաթոռոյս։

Քանզի ի կաթողիկոսանալն իւրում արար սա զբազում շինուածս և զբազմազգի բարեկարգութիւնս սրբոյ Աթոռոյս. Նախապէս՝ զի սուրբ Աթոռս ի յարտաքուստ կուսէ էր անպարիսպ, և գոմք և ամենայն անասնատունք և այլ համբարք հարկաւոր և արտաքին իրաց՝ էին հնացեալք, անվայելք և անյարմարք, մանունք և գծուծք, և մանաւանդ ցած և ցիրք, երկուղալիք և կասկածաւորք ի գողոց և յաւազակաց։ Բազում անգամ



զձիս և զայլ անասունս հերոց, և սրբոյ Աթոռոյս իսկ տանէին գողք։ Եւ ի յերկուղէ լափլիզաց և յայլոց սրիկայից՝ յամենայնում ամսեան Կաթողիկոսն հանդերձ միաբանիւք՝ որպէս թէ դատարկեալ զսուրբ Աթոռս՝ գնայր յԵրեւան, և անդ մնայր յամիսս քանիս. և այսպէս ի գնալն Կաթողիկոսին և միաբանից ի յԵրեւան, և ի դատարկելն զսուրբ Աթոռս տեսս զու զթշուառութիւնս նորա և զխղճութիւնսն, և զվնասն և ի վտանգաւորն սրբոյ Աթոռոյս՝ զոր կարծիմ ես։ Գրեթէ ի բառնիլ թագաւորութեանն Պարսից ի ՌՃՂԶ թուէն մինչև ի ՌՄԺԲ թիւս մեր պատահէր յամենայնում ամի սրբոյ Աթոռոյս և Աթոռայնոցս թշուառութիւնս այս։ Նա զսա արիաբար Հայրապետս այս սկիզբն արար ի նորին իւրում ի շինել զբոլոր պարիսպս սրբոյ Աթոռոյս շուրջանակի (որպէս տեսանես)՝ ամուր և հաստատուն բրգօք և գիտանցօք։ Նոյն և ի մէջ առեալ զամենայն անասնատունս և զայլն ամենայն պարագայիւքն իւրեանց. շինեաց նորապէս ի կողմն արեւելից նոր պարսպին համաժողով և մեծ իրբբաց, և արար յամենից կուսէ անահ և ապահով։ Շինեաց ընդ նմին և զանուն Սեղանատունն մերոյն տաշեալ քարիւ և կամարօք փայլուզարդ քան զառաջինն, որ մեծ էր ի փլանիլ։ Շինեաց զմոմատունն և զդպրատունն ձմեան և ամառան յատուկ յատուկ պարապօք ի հիւսիսակողմն, ընդ կողմ խցից միաբանիցն, յարմար ըստ տեղւոյն և ըստ շինուածոյն որպէս տեսանես։ Զի յառաջ դպրատունն նոր պարսպի միաբանիցն էր անյարմար ըստ տեղւոյն և ըստ կացութեան դպրացն, նեղ և նսեմ. Նոյնպէս և մոմատունն անկանոն՝ առ ի անոթ հեռի ի լուսարարի յօթայէն 1) և անվայել։ Շինեաց և ի ներս ի վեհարանոյն զգեղեցիկ դարպաս մի երկատմբք ի հարաւակողմն. զի բաց ի յամռան եղանակէն հովանոց լինելոյն, լինիցի նա և միջնորմն և արգելակ տաւութեանց տաճկաց և այլոց հիւրասիրաց, որք ի Դաղստանու նստեալ բազմաձև գինեկին և զնէին ի յերեւութիւնս Հայրապետարանին։ Այլ և նա հանել զՔանքանըս ի մէջ ներսի պարսպին, զոր շինագործեալ սրբոյ Եղիազարոյն, և զառաջք միաբանից խցիցն և այլոց շինուածոցն և տալեալ խառնեաց ի Քանքան Փիլիպպոս Կաթողիկոսին ի ՌՄԺԷ թուոյն մերում։ Որով եղեն երկուք օգտութիւնք գլխաւորապէս, մի՝ զի ջուր Քանքանին յաւելաւ. որ յամենայնի շահաւոր է, երկրորդ՝ զի յառաջ Եղիազարեան, և բոլոր շինուածք և միաբանից խուցքն զամբարեցան ի զիջութենէ։ Քանզի նախկին Փիլիպպոս Կաթողիկոսի հանեալ Քանքանի գլուխն՝ էր Աթոռոյս միջի գրան պոնդանի խցի յառաջն, զի անտի սկսեալ գնայր ընդ յատակա

1) Օդա, խուց, սենեակ։

արտաքին պարսպին և ի վայրն սրբոյ Գայիանէի վանիցն նստէր, և ոչ ինչ օգտէր միջոյ պարսպին գիջութեանն։ Այլ և Ջուղայեցի Յակովբ Կաթուղիկոսի հանեալ Քանքանն, որ ընդ մէջ գեղջս մերոյ և Աթոռոյս անցանէ, վերստին որպէս թէ նոր ի նորոյ նորոգեաց և ի լոյս էած՝ որպէս ասացեալ է ի գլուխն ի ճառս ջրոյն։ Վերանորոգեալ շինեաց նոր ի նորոյ նա և զբոլոր տանիսն սրբոյ և Աստուածակերտի Տաճարիս, գեղեցիկ և տաշեալ քարիւք։ Եւ բացեալ զառաստաղ երկուց խորանացն նոր ի նորոյ շինեցոյց երկտամբ ի պիտանաւորութիւնս յաւէնայնի, ի ՌՄԺԹ թուիցն մերում։ Շինեաց ի ներս Հայրապետարանիս ի յարեւմտակողմն ի վերայ, մեծ բրջոյն զդարպաս մի գեղեցիկ ի հովանոց ամառան, և ի վիմանց բոլոր ի դաշտիս։ Ի ներս Հայրապետարանիս ի հիւսիսոյ կուսէ ի չափարխանայէն 1) զվերջ զաղաչափ տեղիս էարկ ի ներս՝ և շինեաց զտան տունս ի լայնութիւն և յարձակութիւն ձմռատանցն և ի պիտանաւորութիւն պալոց իւրոց։ Եւ յետ կուսէ պարսպեալ ամրացոյց հաստատնագոյն պարսպաւ՝ որպէս տեսանես։ Նոյնպէս և զՔեարվանսարայն (որ յամենայնի փլեալ և աւերեալ է, և կարի անվայել և տգեղ,) շինեալ զամենայն յատակս վերանորոգեաց յամենայնի պարագայիւք գեղեցիկ և պատշաճաւոր ձեւով։ Շինեաց ի Դրան այգւոյն զհնձանն գեղեցիկ հանդերձ կից շինուածովք իւրովք։ Նոյնպէս և մինչ էառ զԴեռնկլենց կոչեցեալ բաժին այգին, և խառնեաց ի վերի այգին Աթոռոյս, ապա և զայգեշափ տեղի մի ևս ի յարեւմտեան կուսէ ի ներս էարկ, և պարսպեալ արար զմեծ այգի մի՝ որպէս զԴրան այգին նորապէս մեծ Դարվազայէ 2)։

Դարձեալ բարեմիտ և աշխատասէր Հայրապետս այս, որպէս էր յամենեցունց ի մերայնոց և յայլազգեաց սիրեցեալ և պատուեցեալ նոյնպէս և էր առ յամենեսեան աշխարհս և անուանի, յորմէ ամենեքեան երկնչէին և ակնածէին։ Յաւուրս սորա միաբանք սրբոյ Աթոռոյս էին որպէս յաւուրս Մօրկայ, յորս ոչ ոք ի տաճկաց կարող էր հըպել և կամ զբանս ինչ ծանունս խօսիլ, որպէս սովոր էին ի յառաջինսն ի մէջ Աթոռոյս հայհոյել և զանել, և տանել յԵրեւան բանտել և տուգանել։ Վասն որոյ և արար սա զբազում գործս արժանի զարմացման և արձանագրեցման վասն ապագայից։ Յորոց զհասարակ և զմանրունսն թողեալ, զմանս գլխաւորս և ընչանաւորսն գրեմք աստ։ Նախապէս ի շինելն զպարիսպ սրբոյ Աթոռոյս, զմերձ գեօղս մեր (որ կից և անմիջոց փայրօք և խառնիխուռն շինուածովք շրջափակեալ էր զսուրբ Աթոռովս) քակեալ հեռացոյց ի պարսպէս և յԱթոռոյս, և իւրով արդեամբքն վե-

1) Իջեւանք, օթեւան ջորեպանաց կամ կարաւանից։ 2) Դուռն։



բոլորին շինեաց զտունս և զեկեղեցին ի հիւսիսակողմն, միաժողով և բընակակից իւրեանց՝ որպէս տեսանես։ Դարձեալ զՕշական գեօղն (որ մուլք է սրբոյ Աթոռոյս) յամենայն ղաբզ 1) էին Մուղանլու կոչեցեալ ազգն Տաճկաց, զբնակիչ Հայսն աստ և անդ տարագիր արարեալ, իւրեանք էին նստեալ որպէս զբնիկ և զհայրենական մուլք համարելով ինքեանց, որոյ զայնքան այգիսն և զպարտէզսն և զշատ տունս անապատ արարեալ, և զցանեցելոցն իւրեանց զմուլք ևս ոչ տային Աթոռոյս, և զեռ ևս զվնասս բազում հասուցանէին, արիասիրտ Հայրապետս այս յատեն կացեալ ի յամս քանիս, այնքան ջանաց մինչև զնոսա արմատախիլ արարեալ ի բաց հալածեաց անտի, և զբնիկ գեօղական Հայսն և զայլս աստի և անտի բերեալ բնակեցոյց ի նմա, ի ՌՄԺԷ թուիցն մերում։

Դարձեալ զգեօղօրայսս զայսոսիկ, այսինքն է զՆշատարակ, զՆրդուարդ, և Աղունատուն, զորոց մուլք գոլ սրբոյ Աթոռոյս, ոչ ոք վճարէր երբէք. զի ի Գրիգոր Կաթուղիկոսէն մինչև ցայս վայր ՅԽԷ տարի էր անցեալ, զորս զաւթեալ էին Տաճիկք յայնքան միջոցի և իւրացուցեալ յազգէ յազգ հաստատուն ղաբալայիւք գնելով յիւրեաց։ Իսկ սրբազան Հայրապետս այս հանեալ զվախճանմայսն, և հաստատեալ գոլ սրբոյ Աթոռոյս, յետ էառ ի Տաճկաց, և արար մուլք սրբոյ Աթոռոյս, և հաստատուն գրով և կնքով Հիւսէյին-Ալի-խանին, Շէխուլամին և այլոց մեծամեծ Տաճկաց ի ՌՃՁԲ թուիցն տաճկաց գրեցեալ. զոր գտցես ցուցակաւն։ Նոյնպէս զՄուղնի գեօղն, և զՓռանկանոց գեօղն, զորս ի ժամանակս Յակոբ Կաթողիկոսին Շամախեցւոյ յափշտակեալ էին Տաճիկք և իւրացուցեալք, սոյն Հայրապետս յետ առեալ ի Տաճկաց, արար վերստին մուլք սրբոյ Աթոռոյս։ Բայց յետոյ զՓռանկանոց գեօղն Հիւսէյին-Ալի-խանն Երեւանու էառ, և զՔիւլթափայ կոչեցեալ գեղջ վեց դանկ մուլքն ետ սրբոյ Աթոռոյս, հաստատուն գրովք՝ զորոց զօրինակսն գտես ի ճառս սոյն գիւղօրէից։ Դարձեալ ի բառնիլ միահեծան տէրութեանն Պարսից, և ի մտել և ելանելն անիծեալ ազգին Լափլիզաց յերկիրս մեր ի գերել և յաւերել, ընդ նոսին և երկրածնակ Պարսիկքն իսկ եղեալ նուազեալք և սրիկայք, վասն որոյ բազում գեօղք և վանորայք իսկ ամայացան և աւեր դարձան որպէս և են մինչև ցայսօր։ Իսկ Բայաթ կոչեցեալ Տաճիկ ազգ մի եկեալ բնակեալ էին ի ներքոյ Խորվիրապայ սրբոյ վանիցն ի բաղչալըղ 2) նորին, և զվանքն և զեկեղեցին աւերեալ էին տեղիք անասնոց և ամբարք գարշելեաց իւրեանց։ Իսկ բարենախանձ Հայրապետս այս զԲայաթ կոչեցեալ Տաճիկսն ի սրբոյն Վիրապայ վանիցն ի բաց մերժեաց՝ և էհան զնոսա նո-

1) Գրաւել, տիրել։ 2) Պարտեզատեղ։

ցա ի վանից անտի։ Եւ եդ զԱռաջնորդս, և հոգացեալ զամենայն պակասութիւնն՝ արար վանք միաբանակեցաց՝ որպէս յառաջն։ Որ և է ի ներկայումս չէն և հաստատուն ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոց նորա, որպէս ասացեալ է ի ճառս սոյն վանից։ Դարձեալ ի հարաւակողմն գեղջս ի վայրն Քիւլթափայ անուն փոքր Բլուր գոյ, որ սահմանն է գեղջս մերում՝ ի հարաւակուսէ։ Այլովք կոչեցեալ ազգ մի տաճիկք եկեալ յայնկոյս յերկան սոյն բլրոյ կամեցան գեօղ շինել ի բնակութիւն իւրեանց։ Նոյնպէս և առ ի յարևելակողմն կից Դ.ոււուղ կոչեցեալ տեղւոյն աւեր գեօղատեղ մի գոյ, որ Խլնձի կոչի, (քանզի յառաջին ժամանակին [illegible]՝ 1) որք են գրաստապանքն՝ յանձան նդանակին ի յերկնան միայն՝ և ի ձմռան նդանակին եկեալ առ բնակէին վասն արօտից անասնոց. որք զ.քանի մի տունս շինեալ բնակէին ի նմա։ Վասն այնորիկ կոչեցաւ տեղին այն Խլնձի քիանտ)։ Եւ յայս գեօղս ևս եկեալ ազգ մի տաճկաց Քեօլանի կոչեցեալ՝ կամեցան բնակութիւն առնել իւրեանց՝ հրամանաւ Հիւսէյին-Ալի-խանին Երևանու։ Որք երկուքն ևս թէ վասն ջրոց և թէ անասնոց արօտատեղից, որ.քան նեղէին ցաւեցուցանելով զղթառայնան և զգեօղականսն մեր, փորձողացն է յայտնի։ Իսկ բազմերախտ Հայրապետս այս, ընդդէմ կացեալ երկոցունցն ևս, վարեաց զնոսա և ոչ եթող զետեղել անդ։

Դարձեալ՝ սոյն Հայրապետս բազմահանճար ի վերայ Առաջնորդին Կարսայ բարկացեալ վասն ումանց պատճառաց, բանիւ արար զնա, և ի Պօլսոյ յատուկ դեսպան բերել ետ ի թագաւորէն յիւր անուն (որ գոյ ի սուրբ Աթոռոջս,) և զԱռաջնորդն այն հանեալ անտի, եբեր ի սուրբ Աթոռս, և զԿարս քաղաքն հանդերձ իւրովք շրջակայիւքն գաւթեալ տէրունի վիճակ արար սրբոյ Աթոռոյս, և զվանքն Դ.օշավանից (որ քսան ամաւ յառաջ ամայի կայր,) ի շինութիւն բերեալ՝ զԱռաջնորդ կարգեաց և հաստատեաց միաբանիւք և ամենայնիւք պարագայիւքն, տալով և զհին պարտսն՝ որք զեղչացեալք կային ի վերայ վանքին ի յԱռաջնորդաց, որովք և ևս փառաւորեցաւ և հռչակեցաւ անուն սրբազան Հայրապետիս ի յայլազգիս և ի մերազնեայս։ Եւ հաստատեաց ի վանքն զյատուկ գումարն մի յանուն սրբոյ Աթոռոյս ամենիւք պարագայիւքն, յորմէ ոչ սակաւ արդասիք մտանէին ի սուրբ Աթոռս։ Եղև այս ի ՌՄԺԴ թուոջն մերում։

Դարձեալ ի Հաշտարխան, և ի բոլոր երկիրն Ռուսաց, բնակեալ Հայքըն Տէրունի դրով, ի սրբոյ Աթոռոյս գնայր նոցա Առաջնորդ և Ե-

---

1) Գրաստապանք խանին, կամ նահանգապետին Երևանայ.



պիսկոպոս, որ ընդ Առաջնորդութեանն, և զՆուիրակական գործն ևս կատարէր։ Արդ ի ժամանակս Ղազար Կաթուղիկոսին Ջահկեցւոյ, ի ՌՃԼԸ թուոյն մերում, ապստամբեցան յԱթոռոյս, և եդին իւրեանց յառաջ Առաջնորդ հրամանաւ թագաւորին Ռուսաց զՄատթէոս Եպիսկոպոս ամն ի վիճակէն Գանձասարու վասն դժնեայ բարուցն Բարսեղ Եպիսկոպոսին Փառակեցւոյ, որ յայնմ միջոցի առաջնորդ էր տեղւոյն ի Ղազար Կաթողիկոսէն կարգեալ։ Եւ յայնմ հետէ ի յԷջմիածնէ Եպիսկոպոս ոչ եմուտ յայն երկիրն, զի հրամանաւ թագաւորին արգելեցաւ, այլ մասնաւոր վարդապետ մի գնայր Նուիրակ անուամբ միայն, և ընդ բանիւ Առաջնորդին լինելով՝ որպէս զժողովարար մի՝ կամաւորապէս ժողովէր զնուիրակութիւնն ի բոլորէն զմասն հոգւոյ առնելով գայր յԱթոռս։ Յայլուստ Եպիսկոպոսք մտանէին յերկիրն անարգել, և յԱթոռոյս միայն ոչ կարէր մտանել։ Վասն որոյ և Գանձասարու Ներսէս Կաթողիկոսն ժամ գտեալ (և մանաւանդ զի տեղւոյ Առաջնորդն յիւր վիճակէն էր, և յիւրքենէ Եպիսկոպոս ձեռնադրեցեալ) և յերկիրն ևս գլխաւոր իշխանք ոմանք ի Շամախու և ի յայլ վիճակէ նորին էին. սկսաւ յառաջ տանել յայն յերկիրն, Եպիսկոպոս և Նուիրակ առաքել, և զգանձանակ հաստատել, և զանուն իւր յիշեցուցանել յեկեղեցւոյն, նոյնպէս և Նուիրակն նորին ևս խրոխտալ ի վերայ Նուիրակացն սրբոյ Աթոռոյս, և համարձակ վստահանել և զաս քարշել զԱթոռայինս, ասելով թէ մեր է այս վիճակ, դուք զի՞ մտանէք յայսր. և զայլս այսպիսիս։ Տևեաց այս դիպուած ի ժամանակս Ղազարու, Մինասայ, Աղէքսանդրի, և Յակոբայ Կաթողիկոսացն, մինչև ի Սիմէոն կաթուղիկոսս յայս յամս քանի։ Արդ ի ժամանակս սորին Հայրապետիս, մինչ մեռաւ Գանձասարու Ներսէս Կաթողիկոսն, և անկաւ երկճղի Կաթուղիկոսութիւն ի յԱղուանս, (որպէս ասացեալ է երկարապէս ի ճառս, և ի ծնչեղն սորա զլրութիւնս Իսրայէլին և Նորայնոցն, ևս սկսան չարանալ և ի տիրել երկրին այնմիկ և Գանձասարու վիճակ առնել զնա իսոզաւ, և զՆուիրակն սրբոյ Աթոռոյս (որ էր Քանաքեռցի Յովհաննէս վարդապետն ի սոյնոյ Հայրապետէս առաքեցեալ) ի յանարգանս և յանպատիւս ունել, և զայլս այսպիսիս։ Արդ բարենախանձ Հայրապետս այս գրեաց առ Եկատարինէ թագուհին Աղէքսիսեւնայ Ռուսաց երկարապէս զորպիսութենէ Աթոռոյս, և զՆաղանդութենէ յամենայն յիշխանութիւնս եղելոց Հայոց՝ Սմա, և զապստամբութենէ միայն յայն յերկրին եղեալ Հայոցն, և զայլս այսպիսիս (որոյ մասնաւորապէս գոյ ի սոյնոյ Հայրապետէն արարեցեալ,) ընդ գրոյն նա և զմասունս ի Նշխան Տապանէն, ի սրբոյն Յօհաննու Կարապետէն, ի սրբոյն Գէորգեայ, և ի սրբոց Հռիփսիմեանց նշխարացն, միով քառաչեայ

արծաթեայ ոսկեզօծեալ տփով կոփեցեալ ձեռամբ Թիֆլիզեցի Դաւիթ
վարդապետին առաքեաց ի ՌՄԺԵ թուոջն մերում։ Իսկ ողորմութեամբն
Աստուծոյ (որ ունի ի ձեռին զսիրտ թագաւորաց) սիրով ընկալեալ թա-
գաւորն զգիրն և զընծայն, և լուեալ և քան զխնդրեալն առաւել կատարէ
զխնդիրն։ Զի հրամայէ գրել զհրովարտակ առ յամենայն տէրութիւնս
իւր և առ յամենայն յազգս Հայոց, ծանուցանելով զմիտ գրոյն և զող-
որմութիւնս ընծայից սրբազան Հայրապետիս մերոյ, և զընդունումն իւր
մեծաւ սիրով և շնորհակալութեամբ, և տալն զկատարումն խնդրանա-
ցըն, և զվճիռ թէ՝ Թարգ հրամանի Հայրապետին Էջմիածնի՝ Եպիսկոպոս
և կարգաւոր ոք մի՛ մտցէ յերկիրս յայս, և զայլս սիրացոյց բանս։ Զորս
գրեցուցանէ ի վերայ մագաղաթի ոսկեայ գրով, և զնոյն հրամայէ թարգ-
մանել ի Հայ լեզուս, և նոյնպէս գրել ի վերա մագաղաթի։ Եւ ապա
զերկոսեանն այս ինքն զՌուսերէնն և զՀայերէնն ի մի յարկեցեալ, և կա-
պեալ թելիւ՝ ուր վերջանայ բանն, և ի վերայ կապին դնէ զմեծագոյն
կնիքն Կայսերական ի վերայ զմոյ՝ որպէս տեսանես, որ գոյ յԱթոռոջս
ի միում յատուկ արկղոջ ի ներքոյ փականաց։ Եւ ընդ սոյնոյ հրովար-
տակիս զԽոփ մի ոսկեհուռն դիպայ նորագործ և գեղեցիկ, և զերկուս թօ-
փրս ոսկեայ գործ հաշխայս (իւր յատկապէս ընծայ Հայրապետին) առաքէ
ձեռամբ նոյնոյ Դաւիթ վարդապետին ի սուրբ Աթոռս ի ՌՉԿԸ թուոջ
փրկչին, և ի մերում ՌՄԺԷ թուոջն։ Եւ այսպէս արար զբոլոր երկիրն
զայն հաստատապէս վիճակ Տէրունի սրբոյ Աթոռոյս՝ արքունական հրա-
մանագրով։ Ապա ի սոյն թուոջս՝ սոյն Հայրապետս զՄինաս Եպիսկոպոսն
Նուիրակ և Առաջնորդ կարգեալ առաքէ յերկիրն յայն փառաւորապէս
որպէս յիշեցաւ ի Զ. գլուխն ի ճառս սոյնոյ երկրիս։ Իսկ զվերոյիշեցեալ
զդիպայն՝ սոյն Հայրապետս կտրէ, և տայ կարել զՇուրջառ մի Հայրապե-
տավայել, (որոյ տափակն է կապտագոյն ֆէրէնի ծաղկեայ, և ֆեօդայն՝ կար-
միր ալլուղ) և զվարագոյր մի սրբոյ Իջման տեղւոյն՝ կարմիր ատլասով
կերպասեայ։ Իսկ զվերոյիշեալ ոսկեհուռն հաշխայն դնէ ի վերայ երկուցն
ևս Շուրջառին և վարագուրին, յերեսաց կուսէ ի քղանցսն շուրջանակի։
Որք երկուքն ևս են ազնիւք յատկացեալք և աննմանք այլոց, յորոց վե-
րայ գրեալք գոն և յիշատակարանքն՝ որպէս տեսանես։ Եւ յայնմ հետէ
եղև ընտանութիւն և մեծ սէր թագաւորին Ռուսաց և Նախարարաց նո-
րին՝ և Եպիսկոպոսացն, առ սուրբ Աթոռս, և առ յազգս մեր որպէս տե-
սանես զգրեանսն նոցին։

Դարձեալ ի Կարնոյ Կարմիր վանք կոչեցելումն սեաւգլուխ մի կայր Թօ-
խաթցի՝ Գէորգ անուն. այս չէ՛ք Գէորգ ո՛չ վարդապետս, միջնորդութեամբ
նոյնոյ վանից Առաջնորդ Մշեցի Յակոբ վարդապետին գայ յԱթոռս և



եպիսկոպոս ձեռնադրի ի Շամախեցի Յակոբ Կաթողիկոսէն ի միջնոր-
դութիւն նոյնոյ Կարմիր վանիցն, ի ՌՄԹ թուոջս մերում։ Եւ յետոյ ի
ՌՄԺԳ թուոջն մերում, ի ժամանակս սոյն Սիմէոն Կաթողիկոսիս՝
նոյն զԳէորգ Եպիսկոպոսն նոյնոյ Յակոբ վարդապետ Առաջնորդի հրա-
մանաւն գնայ յԱխլցխա քաղաքն սակս պտղի և խասանց նոյնոյ վանիցն
(զի յառաջ Ախլցխա վիճակ էր այն վանիցն)։ Ապա ի գնալն զԳէորգին
յայն քաղաքն, սկսանի յայտնել զչարութեան խմորն՝ զոր ունէր յառաջ-
մէ ծրարեալ ի յինքն, այս ինքն զաղանդն Ախթարմայութեան։ Քանզի
և Ախլցխա քաղաքն ևս յիսուն ամաւ յառաջ ապականեցեալ էր նոյն ա-
ղանդաւն ըստ մեծի մասին։ Ուստի և զԳէորգն այն ա՛յնքան համարձա-
կութիւն գտանէ անդ, մինչև զՀայոց ազգն և զեկեղեցին գոս քարշէ
յԱտեանն և վտարանէ, զանուն փախին յէջէ յեկեղեցին, և զայլս
պապախոս։ Որոյ լուրքն հասանի ի Կարին. և Կարնեցիքն ևս բազմակնիք
թղթով ծանուցանեն Սիմէոն Կաթողիկոսիս։ Ապա արիաբար Հայրա-
պետս այս (որ մանաւանդ նախանձախնդիր էր վասն ուղղափառ հաւա-
տոյս Հայաստանեայց) գրէ ի Պօլիս և զերկս ֆարմանս բերել տայ ի Սուլ-
թան Մուստաֆայէն ի ՌՃՀԹ և ի ՌՃՁԱ թուոջն տաճկաց, երկուքն
յատուկ ի վերայ Ախլցխայու, և մին ի վերայ ամենայն տեղեաց՝ սաստիկ
հրամանաւ. և պէսպէս սպառնալեօք։ Իբր (զի) ո՛ւր ուրեք Փռանկ փոխե-
րիք եղեն՝ վարեսցեն յերկիրն իւրեանց. և ուր ուրեք Հայ փռանկացեալ
իցէ՝ կրեսցեն մեծամեծ տուգանս, տանջանս, և այլ այսպիսիս. զի հը-
նազանդեսցին իւրեանց օրինաց՝ և մի՛ ևս ուսուսցեն զՓռանկութիւն։
Զայս պատուէրս փաշային՝ դատաւորաց՝ և այլոց մեծամեծաց իւրոց գրէ։
Իսկ յերկուս ֆարմանսն Ախլցխայու՝ յետ այսպէս սպառնական պատուիրա-
նացըն՝ գրէ թէ՝ Պօղոս, Ստեփան և Յովհաննէս սեաւգլուխքն (որք էին
Ախթարմայք բնակեալք յԱխլցխայ՝ հանեցուցիչք երկրին,) և Յակոբ
չերէցն, ի յԷջմիածին աքսորեսցին, և Գ. Եկեղեցիքն՝ Հայոց յանձնեսցին։
Եւ զի մինչ այս ֆարմանաց գալն՝ վերոյ յիշեալ Հայրապետս մեր զչէք
Գէորգն բանադրեաց, և նա լսելով մանաւանդ զֆարմանաց հանելն, փախեաւ
գաղտ յԱխլցխայ ի Պօլիս ի Բերնօղլին առ Փռանկսն, և անդ սատակեցաւ ի
նոյն ամին։ Իսկ ի գալ ֆարմանացն՝ Հայրապետս մեր զնին առաքէ յԱխլցխա
առ Նուման փաշայն, (որ փաշայ էր նոյնոյ երկրին,) և ինքն ևս գրէ փաշա-
յին զըրպարտութիւնս Ախթարմայիցն. ապա փաշայն ի տեսանելն զֆար-
ման թագաւորին իւրոյ, կատարէ զհրամանն, զի զեօթն փաթրիք Փռանկսն
(որք յորջացեալ էին անդ) աքսորէ յերկիրն իւրեանց, և զեկեղեցիսն
յանձնէ Հայոց ժողովրդեանն, զթիւրեալսն բազմաւ տանջանօք և տուգա-
նօք խոստանգէ, և զվերոյիշեալ չորեսին չկարգաւորսն՝ կապանօք ընդ

մէջ գլխաւոր մարդոյն իւրոյ առաքէ յԱթոռս ի ՌՄԾԸ թուոջն մերում. Որք մնացին յԱթոռս յամս երիս, կրեցին զշատ նեղութիւնս, ի բանտս, ի կապանս, ի գանս և յայլս պատիժս՝ մինչև երկիցս անգամ Հայերէն գիր եառն զաւանութեան մերոյ վճռապէս և նզովիւք, զի մի՛ ևս դարձցին ի նոյն աղանդն. Ցետոյ Էջմիածնեցիքն անկան առ մեծ Մուսթաֆայ փաշայն (որ յայնմ ժամանակի ի Կարս Սարասքեար նստիւր վասն պատերազմին ընդ Ռուսաց ազգին, որ յայնմ միջոցին գոյր սաստկապէս). և նա գրեաց առ Հայրապետս մեր, զի արձակեսցէ զկապեալսն. Եւ Հայրապետս մեր ևս գրեաց Սարասքեարին զորպէսն. և նորին ձեռամբն ի Կարս դատաւորօք և մեծամեծ իշխօղօքն Կարսայ վերստին էառ գիր ի բերանոյ հետեւոցն տաճկերէն, զի մի՛ ևս երևեսցուցեն ի յինքեանս զնշան աղթարմայութեան. Ապա գրեաց վերստին ի Պօլիս, և եհան բերել զարձակման ֆարմանն, և զարձոյց զնոսա յԷջմիածին ի ՌՄԻ թուոջն մերում. Սոյնպէս և զՂիս հասարակ ֆարմանն առաքեաց սոյն Հայրապետս մեր ի Բայազէտ և յԱլաշկերտ առ Ալիփ փաշայն Բայազէտու, և առ այլ իշխօղսն երկրին, գրելով և ինքն զորպիսութիւնէ հետեւոցն, (զի և ի յԱլաշկերտ ուրեք ուրեք գոյին), և խնդրեաց զպահպանութիւն նոցա. Իսկ փաշայն և այլ իշխօղք երկրին նոյնպէս առաքեցին կապանօք ըստ նմա ֆէրմանին, և ըստ խնդրոյ Հայրապետին մերոյ, յԱլաշկերտու յերկրէ զնոսին անձինս չարագլուխս, զհինգ քահանայս, և զմի չորրորդս՝ զոր Բրնձիք կոչէին. որ էր ի Գարման գեղջէն, և զմի աշխարհական Մաթոյ անուամբ ի . . . . գեղջէն, և քահանայքն՝ Տէր Պօղոսն ի Ղարասու գեղջէն, Տէր Գրիգորն ի Նաւկայ գեղջէն, Տէր Խաչատուրն ի Մոլլասուլէյման գեղջէն, Տէր Յարութիւնն ի Միրանիկ գեղջէն, և Տէր Ղազարն ևս ի Գարման գեղջէն. որք էին գլխաւորք հետեւոցն, զորս և Հայրապետս մեր նոյնպէս և զանազան կերպիւ խոշտանգեաց գանիւ բանտիւ, և բանիւք, վերջապէս ի բերանոյն էառ գիր Հայերէն՝ նզովիւք և հաստատուն ուխտիւք, և ի Բայազէտ ևս ի դատարանում Տաճկաց էառ գիր հաստատուն կնքով և վկայութեամբ բազմաց, զի մի՛ ևս երևեսցուցեն յինքեանս զնշան աղթարմայութեան, և զայլ ապականեալսն ևս յինքեանց՝ վերադարձուցեն ի մերս յԵկեղեցին. Այսպէս արարեալ և զնոսա առաքեաց ի տեղիս իւրեանց. Այդ Էջմիածնայու անուամբ ֆէրմանն երկու էր. մինն առ Նաման փաշայն մնաց, և միւսն յԱթոռս է. Նոյնպէս և միւս հասարակ ֆէրմանն իւրեանց քանեօք սուրէթն 1). Նոյնպէս և իթլաք 2) ֆէրմանն զոր վերստին եհ բերել վասն արձակման Ախալցխայեցւոցն. Այլ և հետեւոց տուեալ Հայերէն և Տաճկերէն ձեռա-

1) Պատճէն, օրինակ: — 2) Իթլաք. թուղթ ազատութեան, արձակուրդ:



գիրքն. փաշայից և այլոց մեծամեծաց գրեանքն. և այլ թուղթք վասն անցիցս այսոցիկ. բոլորքն համաժողով գոն յԱթոռս. Զորս գոցես յերեսն գրեցեալ ցուցակօքն, որք պահեսցեն ի պիտանաւորութիւն ըստ ժամանակին. Եւ այս ևս ոչ է զանց առնելի, զի Հերակլ արքայն Վրաց երկիցս անգամ բազմօք զօրօք եկն ի վերայ Երևանու, և Երևանցի Հիւսէին-Ալի-խանն ինքն իւրայնօքն՝ բերդափակ եղեալ ամրացաւ, և զերկրայինսն բոլոր քոչէցուցեալ 1) յԵրևան՝ եկից զխանդակ 2) բերդին. և ապա ինքն իւրովք մեծամեծօքն գրեալ ապաւինօք Հայրապետին մերոյ՝ զի միջնորդեսցէ ի խաղաղութիւն. Եւ Հայրապետս մեր գնացեալ առ Հերակլ արքայն, յորմէ և սիրով ընդունեցեալ մեծարի. և հրաւիրէ զնա յաթոռս ի յուխտ և ի պատիւ. և ապա հաշտեցեալ զնա ի սէր և ի խաղաղութիւն ընդ Երևանցւոցն, առանց յամենայնի վնասատուութեան ուղարկէ զնա խաղաղութեամբ յերկիրն իւր. Քանզի կարի սիրով էին ընդ միմեանս Հայրապետն մեր և Հերակլ արքայն. Եղեն այս եղելութիւնք ի ՌՄԾԴ և ի ՌՄԾԸ թուոջն մեր.

Դարձեալ՝ յառաջ քան զքանի ամս, մնեժարնակ ի մէնջ հեռացեալ յոթներակացքն՝ (որք կոչին Երրայեանք.) հնարեցին զտեսարան մի Օրօցոց անուն, զոր շինէին յամի յամի ի վերայ Տարեգրոյն, յորում դնէին ըզտարւոյ տօնսն, անդուորելով զշարժական միջոցեց տօնսն, ցուցանելով և զատուր ձայնն. զամսաթիւն. զլուսնաթիւն, և զայլս այսպիսիս. ընդ սոցին դնէին նա և զտօնս Յունաց և Լատինացւոց ըստ մերոյ խառնի. Եւ այսպէս յամենայն ամի տպեալ յաղագս մեր սփռէին, իբր մեծ երախտաւոր իմն ցուցանելով զինքեանս ազգիս մերոյ. Եւ ազգս մեր ևս առնոյր ամենայն ոք (մանաւանդ յերկիրն Օսմանցւոց) և կրէր ի ծոցի իւրում իբրև զհաւատալի և պիտանի գիրք մի. Եւ զայս տեսանելով բարեխնամ Հայրապետս մերոյ՝ ոչ սակաւ ցաւիւր և յոգւոց հանէր, իբր զի ազգն Հայոց այնքան իցէ տկարացեալ՝ մինչ զի այնպիսեաց լրթրանացն կարօտեսցի և նոքօք կարգաւորիցէ զտօնս Եկեղեցւոյ իւրոյ. Ուստի ի խափանել և ի ջնջել զթունալի օրացոյցն նոցին, վերանորոգեաց զտօնացոյցս մեր երկրքումբք հատորօք՝ (որպէս ի վերն ասացաւ.) որ քան զՕրացոյցն նոցին գեղեցիկ ոճով և մշտադէպ ճանապարհաւ ցուցանէ զամենայն վերագրեցեալսն որպէս տեսանես ի Տօնացոյցն. Եւ այսպէս ի կարգաւորելն ըզՏօնացոյցս մեր որպէս ասացաք, ապա ետես թէ գրչագրովք ոչ էր հնար տարածել յամենայն Եկեղեցիս, վասն որոյ գուն գործեաց խնդրելով զհնարզի և զտպագրատուն ևս հաստատիցէ յԱթոռոջս. Զոր և հաստատեաց

1) Կոչ. յու. տեղափոխութիւն: — 2) Խանդակ. փոս, խրամ. ակօս.

իսկ յաջորդմամբն Աստուծոյ ի ՌՄԺԹ թուոջն մերում. Ցորում և ես տպել նախապէս զՍաղմոսս, զեւրակերտ տաղարանս, և զգիրքն աղօթից Զքօսորան,, կոչեցեալն, ի փորձել զամենայն պարագայս գործոյն. ի ՌՄԻ և ի ՌՄԻԱ թիւսն. Եւ ապա ի ՌՄԻԳ թուոջն եւ տպել զեւրակերտ Տօնացոյցն. զոր և սփռեաց յամենայն ազգս մեր ըստ մեծի մասին ձրիաբար, գրելով և զպատուիրական կոնդակունս յամենայն երկիր, զի ըղթեռնացոյցն լռեցունող խոտիցեն և զեւր Տօնացոյցն ի գործ ածիցեն. ի ՌՄԻԴ թուոջն մերում, Եւ մինչ զտպագրատունն ես հաստատեաց Աստուծով, ապա եւս թէ ի հնոյ և բնաւին, և մանաւանդ մեծաւ ծախիւք բերելով զթուղթն՝ կարի դժուարաւ լինիւր և անձեռնտու առմ գործոյ. Վասն որոյ հնարեալ եւ լեալ պիտոյ, զի և զթղթաշինութեան արհեստն ևս մուծցէ յԱթոռս. զի յաջողակ լիցի գործն տպագրութեան. զոր և եմուծ իսկ և հաստատեաց յաջողմամբն Աստուծոյ.

ԳԼ. Ե.

Ցորում ցուցանին նուիրակական վիճակք Սրբոյ Աթոռոյս. յորոց առաջին է յերկուս նուիրակաց է յերկու ամս փոխեալ նուիրակական, դժուարութեան, ընդ ... պարագայից լինելոց, և զվերծեալքն յեղափոխիլ:

Արդ ըստ կանոնի ճշմարտութեան և ըստ պահանջման իրաւանց՝ բոլոր ազգս Հայոց՝ ուր և իցեն ցանեցեալք, թէպէտ էին և են ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, որոյ են շնորհածին և հոգևոր զաւակք ըստ հաւատոյ և հնազանդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ և նորին Յաջորդացն, որպէս ասացաւ լիովին ի Ը գլուխն, սակայն ի բառնալ թագաւորութեանս մերոյ, և յանկանիլ ազգիս մերոյ ընդ իշխանութեամբ այլազգեաց, և ի ցրուելն ընդ ծագս տիեզերաց, տկարացաւ և իշխանութիւն սորին:

Վասն որոյ զոմանս մասնաւոր վիճակս ի Սիս նստողքն զաւթեցին, և զոմանս յԵրուսաղէմ նստողքն՝ Տաճկական իշխանութեամբ. Իսկ որք և զոմանս յԱղթամար նստողքն՝ Տաճկական իշխանութեամբ. Իսկ որք մնացին սեփական վիճակք սրբոյ Աթոռոյս, և են այժմ ի նոյնութեան, զայնոսիկ յառկացուցից ի մի շատակ ապագայից յաւիտենականապէս. Որք են ներքոյ գրեցեալքդ.

Ի յերկիրն Արևմտեան, որք գոն ընդ իշխանութեամբ Օսմանցւոց:

Առաջին՝ մեծ մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս. Ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ.



Ղալաթա, Ղասմ գեօղ, Իւսկիւտէր, Սոլամսըղ, Բեկոզ, Ղանտիլլի, Հիսար Ենիքիւօյ, Ղուրուչէշմէ, Առնաւուտքեօյ, Օրթագիւղ, Պաշիկթաշ, Խաս-գիւղ, Էյուպ, Թօփղափու.

Երկրորդ՝ Ետրենէ քաղաքն, Գիւմիւրճինէ, Թէքիրտաղ քաղաքն, Մալղարա, Ուզունքէօփրու, Չօրլու, Կէլիպօլի, Պօղաղհիսար, Էյնէ, Սիլիվրի. այլ և Պրուսա քաղաքն, Ճառաճ գիւղ, Էնկիճէ գիւղ, Մուհալիճ, Էտինճիկ, Քիրմաստ, Պօղալլը, Պանտրմայ, Պալքեսար. այլ և Քեօթահիայ քաղաքն, Մուրատչայ, Գեօլտաղ, Աղճըղ, Մալղարայ, Թուրքմենլու, Տաւշանլու, Պիլաճուկ. այլ և Եալովա, որք են. Գիւոլէ, Գէօնլէք, Սէօլէօզ. Գէամիշ, Մառմառճուք, Չինիճիք, Ենիշաէհար, Քեարամաթ, Անարծաթ. Նորգիւղ, Քարծախ, Պնդիրլար, Շախշախ, Եալախովա, Մէրտիչեօզ, Իօնդեղ, Բաղճաճըղ, Օվաճըղ, Դըլիճ գիւղ, Ասլան-բէկ, Ղուլթալըանք, Օրթագիւղ, Ապարաղար, Արմաշ, Խասկալ, Ադմալու, Գէհրիզլու, Թամլա, Նոր գիւղ, Փնարլու, Սապանճայ և Իզնիմիտ քաղաքն:

Այս վերոյ գրեցեալ Երկրորդ Վիճակս Նուիրակութեան այս իւրքն Էտրենէ քաղաքն, և այլ հետևեալքն զկնի նորին մինչև ցայժմ էին ընդ Կոստանդնուպօլսոյ մի վիճակ Նուիրակութեան, Իսկ մեք ի Կոստանդնուպօլսոյ որոշեալ արարաք ուրոյն վիճակ Նուիրակութեան. և առաքեցաք ի յիւրաքանչիւրսն զեւրոյն ուրոյն Նուիրակունս. Զի մի Նուիրակն ի հինգ և ի վեց ամս հազիւ աւարտէր զիրկսսեանն. Ուստի մեք որոշեցաք. զի ի յերիս ամս աւարտեսցին երկուցն ևս Նուիրակունքն. Եւ այսպէս կանոնեցաք լինել այսուհետև.

Երրորդ, Ռուսումէլոյ երկիրն:

Կաֆա, Ղարասու, Բաղչասարայ, Ազմէչիթ, Գէօզլաւ, Օր, Սալանք, Թոփթի, Օրթալանք, Հին Ղրիմ, Կերչ, Ենիկալէ, Թաման, Թօփրաք, Ղափուլու, Օզու, Աղքիրման, Բանդար, Խանղըշլայ, Քիլի, Իսմայիլ, Սուլթանըշլայ, Դայագիղ, Սալճայ, Բապատաղ, Բուքրէշ, Ֆոքշան, Օրմանի, Բոթիշան, Սիչավ, Եաշ, Քիշնավ, Հօթին, Մեկլավ, Իպրայիլ, Սիլիստրա, Հաճիօղլի Բազարջըղ, Քէօստէնճէ, Վառնայ, Փրաւատի, Շումլա, Ռազղրատ, Ուրուշճուղ, Թրնովայ, Հիւլէաջ, Թաթար Բազարճըղ, Իսլիմիյա, Այտօսս, Պուրղազ.

Չորրորդ՝ Թօխաթ քաղաքն, ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ.

Սիվրիհիսար, Զիլայ, Հէյրակ, Ենիշահար, Պրծառի, Գեակսի, Դըբեքլիս.

Արապկիր քաղաքն, Կամխամատան, Հէքիմ, Ամիկան, Ճերմուկ Ձադ, Վաղշէն, Քուշնայ, Հացնի, Կռանի, Ծապլվար, Խորոզ, Էշնէ. Ծագ, Մաշ'երտ, Անգորիք, Ակնա քաղաքն, Ապուշիղ, Կամրկապ, Կարինլայ, Խուկայ, Զորակ, Ցազրագ, Լիճ, Նաւրէր, Բինկան, Սեբաստիա քաղաքն, Զառա, Տևոդայ, Արաքիլիսէ, Քարշատ, Թօղլիք, Ճանճին, Փասմինար, Շխալնի. Բրարիրդ, Զարքիւրդ. Ղուրթուլ օղլան, Պետրոսի, Կամիս, Ուչկունամ, Սարչած, Բաղձայ, Քօթնի, Ըստանոզ, Մինկիօլ, Էնկիճա, Կուլտին, Աղա, Կառուայ, Խանզար, Խորասնայ, Իչխանի, Թաղառլ. Դումաճ, Դուրա, Ղուռաղ, Բօքա, Փրկնին, Խոլխօոն, Խոշղատամ, Ղալտուր. Նիսարիա քաղաքն, Ախշաճար, Դուալու, Թամարղայ, Էրակիլ, Բօռն, Նիկսարայ, Քեօշնա գիւղ, Եօզղատ, Թոպալ, Վանք գիւղն, Թուլուսուն, Կեսարմիր, Պեղապոս, Եւքառայ, Նիղար, Տարսիղ, Ըսպառն, Կեսարի. Մունճուսուն, Մանճուսուն, Էրքիլատ, Ամասիա քաղաքն, Մարսվան, Քեօփրի. Համքեօյ, Էնկի գեղ, Վանքի գիւղն. Ճանիկնեբ, Փաշմայ, Ցանիայ, Թէքմայ, Զարշամբայ, Սամսօն, Բաւռայ, Սնամ, Կոլոսամին, Վոյլատ, Տաշքեօփրու, և Քերադայ.

Հինգերորդ՝ Էնկիւրիայ քաղաք. ընդ որով են ներքոյ գրեցեալքդ.

Ղալաջըք, Զանղրա, Թօսիայ, Ղոչհիսար, Զարքեաղ, Գէռադայ, Բօլիայ, Դօվլէկ, Էնկիւրան, Պաշմին, Էրէջլի, Ղոռնաւիայ, Ջափռանպօլի, Խառանոզ, Էաշ, Բէկբազար, Նալլըխան, Սիվրիհիսար, Էսկիշահար, Էնկիշար, Աֆիոնղարահիսար, Բօլավատին, Իղտուն, Ախշահար, Բեկշահար, Ղոնիայ, Ղարաման, Մուտին, Էրմենիկ, Ջիլիխկայ, Ալսիայ, Ադալիա, Սէյիտիշահար, Ալմալու, Մանթաշ, Ղաշ, Էգիրտիր, Միաադայ, Բուրդուր, Սպարթայ, Դեօլհիսար, Սանդխլու, Իշղըլ, Ուշաղ.

Վեցերորդ՝ Էրզրում քաղաք. ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքդ.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Եօթներորդ՝ Ղարս քաղաք. ընդ որով են և գրեցեալքդ ի ներքոյ.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Ութերորդ՝ Բայազիտ քաղաքն. ընդ որով են և ի ներքոյ գրեցեալքս.

Ջանիկագօռ, Սուրբ Յօհան, Դիւրճիւռալախ, Հալաճ, Մէլիքշէն, Կաշոտ, Բադլըխան, Կարմիրկոնա, Արծափ, Քօրուն, Մուսուն, Թաճօղի գեղ, Թութաղ. Դիւղուճէ, Խաչլու, Բարախանի գեղ, Սարուբեղ, Բաղրկանչայ, Տաճիկնավրուզ, Քեաստակ, Ինջայսու, Թափառխ, Ղարաքեանդ, Տիղայ, Խարբ, Ղամարջղ, Թութաք, Եաշմանղուլի, Ներքին Թութաք, Բէրէքեաթի գեղ, Ալլահղուլի գեղ, Քօթիս, Դիադին, Ատաքենտ, Պըրուժի գեղ, Տաշքէսէն, Ճանախղ, Գօրանի գեղ, Մոլլաղարայ, Հաճվէյէտ, Ուլուքեանդ, Միրզիքեանդ, Մայեայ, Սօրան, Թօխլուճայ, Բու-



տաղի գեղ, Ճումանց. Սեվօջի գեղ, Ղարարազար. Աղբադաղ, Շըրքրօյի գեղ. Դամուրղըղան, (Թավլայ Ալաշկերտու նահիան[1]) Նաւրուզի գեղ, Փօմի գիւղ, Ալիկոր, Լաշկոյի գիւղ, Ֆարոլկուր, Ղումըսպուճախ, Ղումրուձայ, Կումբէթ, Խլֆօյի գեղ, Քեալոշ, Մարտիկ, Գերգ, Խանուաշիկ, Կրիգեօլ, Պիկան, Սոֆիեան, Տիտան, Գիօլաւօր, Արտալաղի գիւղ, Միրզախան, Խօճի գիւղ, Մադինցիկ, Գեաղդեառ, Էգման, Ջիրդի գիւղ, Ղաղի գիւղ, Եօնձալու, Եզտօյի գիւղ, Ճմիկան, Քիւփղըան, Զամուրլու, Նաւիկ, Խորի գիւղ, Մանկասար, Վերին Քիւփղըան, Փոխանցիկ, Էլխեաղի գիւղ, Տօտիկան, Եաղըձուգեղ, Արապաղայի գիւղ, Ալիադայի գեղ, Տօտօյի գեղ, Մուրատխան, Ալէքսան, Վերին Դարափի, Ներքին Դարափի, Երանոս, Ղարաքիլիսայ, Ներքին Մուրատխան, Բօլուկբաշին, Տաշճին, Ատաղալէն, Աշխալէն, Համիասֆար, Վերանցիկ, Ամալթ, Թորգոմներ, Խաչլօյ, Մօլլասուլէյման, Թօփրախղալայ, Խոշեան, Շամբեան, Մորցիք, Խասաուր, Գեարասան, Դուցյի գեղ, Զլաչանի, Զուռուկի գեղ, Վերին Մարտօյի գեղ, Ներքին Ղազու գեղ, Քեօլու գեղ, Եաշնիթէփէն, Քարուձոր, Ղայեարէկ, Սևիրիցուգեղ. Ղարասու, Պօշէկ, Էկմալ, Դամուրջղան, Դաւօն, Ջատօն, Տամպատ, Շօրվէրան, Մալխասի գեղ, Ղազարի գեղ, Պուճումանսուր, Խամուր.

Իններորդ՝ Վան քաղաք ընդ որով են և գրեցեալքս ի ներքոյ

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Տասներորդ՝ Դիարպէքիր քաղաք. ընդ որով են և ներքոյ գրեցեալքդ.

Ի յերկիրս Արևելեան, որք գոն այժմ ընդ իշխանութեամբ Պարսից:

Առաջին մայրաքաղաքն Ասպահան որ է Նոր Ջուղայ, ընդ որով են և սոքա.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Երկրորդ՝ քաղաքն Դաւրէժ. ընդ որով են և սոքա.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Երրորդ՝ քաղաքն Նախիջևան. ընդ որով են և սոքա.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

Չորրորդ՝ քաղաքն Երևան. ընդ որով են և սոքա.

. . . . . . . . . . . . . . . . . . . . . . .

1) Նահիէ. նահանգ. գաւառ

## ԳԼ. Զ.

Յորում ցուցանին Նուիրակական և Առաջնորդական վիճակք աթոռոյ Ս.Էջմիածնի, որք և Տեղական անուանքն: Յորոց է յառանձինն գլխոյ ընկալեալ Նուիրակական աշխարհ աստ Ս.Էջմիածնի երից ամաց. առեալ նա և զԱռաջնորդական աշխարհն ի յետս Նուիրակաց, որոց Նուիրականին Առաջնորդք են նոյնն նոյա.

Ի յերկիրս Արեւմտեան եւ ընդ իշխանութեամբ Օսմանցւոց:

Ա. Զմիւռնիա քաղաք, ընդ որով են և սոքա. Գիւզէլ-Հիսար, Մանիսայ, Մանամէն, Գիրիգ, Ս. Սոնղըռ, Մխիթ..., Ակշէհիր, Քամար, Բէրգամայ, Ղընըխ, Սովմայ, Դրխաղած, Աղասար, Գէօրտաս, Առալիայ, Մատնիսայ, Ալաշեհր, Գուրդուլթ, Բայինտուր, Թիրայ, Օտամիշ, Ենկիւաղար, Նազըլը, Տենիզլը, Բիրգի, Հոնաս, Ռոտոսթ, Խոսխէրսի, Բօլլուով, Մուղլա, Մալոս, Մանդալիաթ, Ղուշատայ, Սղքա, Քիօշք, Մորտամ, Գենզելիայ, Սօլրուջայ, Բօզդողան։

Բ. Պալոտու և Բուրսա քաղաքք, ընդ որով է և երկիրն Հնդկաց. որք են սոքա. Ի յերկիրն Բանկալայու՝ Կալկաթայ քաղաքն, Զինջրայ, Սէյտապատ, Դաքայ. այլ և Մադրաս քաղաքն, և Մչլիբանդար։ Այլ և ի յերկրոջն Փէկուայ՝ Ռանկուն Ղասապան. այլ և Սուրաթ քաղաքն, և Պոմպայի։ Այլ և Շահջհանապատ, Գէյլապատ և Փաթան։ Այլ և ի յերկրոջն Չինու՝ Կանդուն Ղասապայն, (որ և Մաքաու. յորս գտանին վաճառականք Հայոց երբեմն. նա և ի Բթաւիայ և ի Մանիլայ ևս գտանին.)[1]

Ի յերկիրս Արեւելեան եւ ընդ Պարսից իշխանութեամբ:

Գ. Գիլանու երկիրն. որք են, Ռեշտ, Անզալու Քիամայ, Սալիան, Մազանտարան, Լանգարուտ։

Ի յերկիրն Վրաց:

Դ. Թիֆլիզ քաղաքն, ընդ որով են և սոքա. Ի Թիֆլիզ քաղաքն՝ եօթն Եկեղեցիքն, այս ինքն, Վանքի, Սուրբ Նշանի, Ջիկրաշինու, Սահակաշինու, և Քամոյանց երկու Եկեղեցիքն, և Քարափի Եկեղեցին՝ իւրեանց ժողովրդովքն, թող զայլ ևս մանր եկեղեցիսն, որք ընդ սոքօք են, և ընդ սոսին Տէրունիք սրբոյ Աթոռոյս։ Եւ մի Եկեղեցի ևս գոյ ի մէջ բերդին՝ որ առի Կաթուղիկէ, նա ևս է լեալ սրբոյ Աթոռոյս ի բնէ, սակայն ի ժամանակս Շահ-Աղասին՝ որ բերդն Թուրքարնակ լինի, զեկեղեցին այն ևս

---

1) Վերջին երիք քաղաքքն փոխադծեալք յետոյ գրեալ երեւին յայլոց:



տաճիկք զաւթեն։ Այնուհետև լինի ամայի, և ժողովուրդ և անուն Աթոռոյս ևս անհետանայ ի նմանէ մինչև ցայսօր։ Իսկ միւս երեք եկեղեցիքն՝ այս ինքն՝ Մուղնի, Բեթղեհէմ և Նորաշէն են Հաղբատու վանիցն վիճակք։ Իսկ և ի շրջակայս նորին այսքիկ գեօղօրայք, այս ինքն՝ Կումիս, Ծարապրիւր, Տարախ-մէլիք, Գուգելլիս, Սաղօրիս, Դօրան, Տամատեօղ, Դիղէսդէ, Կիկէթ, Ասուրէթ, Նախէպուռն. (Բաց ի վերնոցն ի Վանքի Կանդակն նշմարեցեալ գեղօրայքն են. Մխախանայն, Օրտաթալուէն, Դիմուցի գիւղն, Աստւ գիւղն, Մուխաթն, Բօլբալէն, Երգիան, Տադնագեղն, Դօղանն, Դիղէսդէն, Սաղօրիսն, Գուտալիսն, Վերի-Թէլէթն, Ծղնէթն, Ծուկասն։ Ի ձեռն Դուիթ կաթուղիկոսի օրինակի.) Յորոց ընդ Նուիրակութեանն զԱռաջնորդական արդիւնս ևս առնու Աթոռս։

Այլ և ընդ սովաւ Նուիրակականն միայն, որք են, Կախեթու և Քիսեղու երկրայքն. Գօրի և բոլոր Վրացտանու Երկիրն։ Այլ և Դաղախ, Բօրչալու, և Բամբակձորու Նահանգաւ բոլոր շրջակայիւքն իւրեանց։

Ի յերկիրն Ռուսաց:

Ե. Հաշտարխան քաղաքն, ընդ որով են և սոքա. Պետրբուրգ, Մոսկով, Ղզլար, Սառաթան, Բօռալան, Չէրկէզ, Մօզդոկ և նորոգ շինեալ Նոր Նախիջևան, և Գրիգորիոպօլ. և նորոգ ստացեալ ի յՕսմանցւոց՝ Ղրիմ կղզեացն իւրով ամենայն սահմանօքն, այս ինքն է՝ Քէֆէ, Էսկի-ղրիմ Ղարասու, Աքմէչիտ, Գէօզլով, Բաղչասարայ, և Օրբաղար։

Գիտեմ, զի Փառակեցի Բարսեղ վարդապետ ոմն մինչ Նուիրակ և Առաջնորդ էր սոյնց երկրիս ի ձեռնհեցի Ղազար Կաթուղիկոսէն կարգեցեալ ժողովուրդ անդէօրն զզուեցեալք ի գժնէական բարուց նորին, զոր զրպարտ առ Ղազար Կաթուղիկոսն, զի հանցէ զնա անտի։ Իսկ ի յանլուր լինելն Կաթուղիկոսին, ժողովուրդքն խոստեալ զԲարսեղն, հանեն ի յառաջնորդութենէն, և հրամանաւ Թագաւորին Ռուսաց՝ դնեն Առաջնորդ իւրեանց զՍտեփաննոս եպիսկոպոս ոմն ի վիճակէն Գանձասարու ի ՌՃԴԸ թուոջն մերում։ Եւ յայնմ հետէ հատաւ Առաջնորդական իշխանութիւն երկրին այնորիկ ի սրբոյ Աթոռոյս յամս քսան։ Եւ յայսքան միջոցումս եպիսկոպոսն ոչ եմուտ յերկիրն յայն ի սրբոյ Աթոռոյս, և ոչ մտանել իսկ կարէր. զի արգիլեցեալ էր արքունական հրամանաւ։ Իսկ Սիմէոն Կաթուղիկոսն Երևանցի գրեաց առ Թագաւորն Ռուսաց զայսոսմանէ ձեռնէ երկրին, և խնդրեաց զի վերադարձուսցէ ի հնազանդութիւն սրբոյ Աթոռոյս։ Եւ Թագաւորն ի խնդիր Հայրապետին խոնարհեալ կատարեաց իսկ արքունա-

կան կերպով և հաստատուն հրամանագրով։ Զոր զօրինակ դրոշմեալ ի վերայ մագաղաթի Ռուսերէն ոսկեգրեալ ընդ Հայերէն թարգմանութեամբն ի ՌՊԻԸ թուոջն Փրկչին. Այս ի նոյն թուոջն նոյն Հայրապետն Հ . . . Մինաս եպիսկոպոսն Նախիջ. և Առաջնորդ կարգեալ առաքէ ի յերկիրն յայն փառաւորապէս՝ ի ՌՄԺԷ թուոջն մերում։ Զորոյ գլխովն որպէս ի (            ) և ի (            ) գլուխն տեսցես։

---

Զ. Ի յերկրոջս Երևանու գիւղօրայք ոմանք, որք են սեպհական մեր Էջմիածնի գեօղ՝ որ է կից սորա Աշտարակ, Եղուարդ, Օշական, Ալիէկլու, Դողս, Փարաքար, Գեօկչամեխմ, Կաւակերտ, Արգաւ, Քեալաբր, յայնկոյս Երասխի մեծի գետոյն՝ Սուրմալի, Կողբ, Արխթլու։

Գլ. Է.

Ցուցումն գաւառացն այն քաղաքաց, որոց է յառաջագոյն հնազանդեալ աթոռոյն սրբոյ Էջմիածնի ըստ երկրի տեղեաց, առաջնորդաւ և է որոց վիճակն գաւառաց, գիւղից, վանորէից, եկեղեցեաց, և զայլս այսպիսիս տուեալս և վճարեալս։

Ա. Բայազիտ քաղաքն, Դիադին, Նախճուան, Ալաշկերտ Թօփրախ-ղալայն, Բաթնոց, Մանազկերտ՝ իւրեանց շրջակայ գիւղօրէիւքն։

Բ. Վան քաղաք, Բերկրի, Մուշկուտան, Արճէշ, Արծկէ, Հալբակ. Հաքարու երկիրն, իւրեանց շրջակայ Նահանգօք և գիւղօրէիւքն։

Գ. Կարսայ երկիրն, Կաղզուան իւրեանց գիւղօրէիւքն։

Դ. Գիւմրիքոնի, Ղարաքիլիսէ, Շիրակ, Ապարան, Ծաղկունեաց ձորն՝ իւրեանց շրջակայ գիւղօրէիւքն։ Յորոց առնուն զցորեան, զգարի, զոսպ, և զայլս այսպիսիս ի ժամանակս շնութեանն։

Ե. Լոռի, Ղազախ, և Բամբակաձորն՝ իւրեանց շրջակայ գիւղօրէիւքն. յորոց առնուն զփայտեղէն կիս, զկանաչս, զաւխտս, զերկաթեղէնս, և զայլս այսպիսիս։

Զ. Թիֆլիզ քաղաքն՝ իւրեան շրջակայիւքն. յորոց առնուն զմեղուս մամ և զայլս այսպիսիս՝ որպէս և ինքեանք արձանագրեալ են ի սուրբ Աթոռաջս ի ձեռնագրանն կոյս մեծի գրան սրբոյ Տաճարիս ի ՌՃԼԱ թուականոյն մերում։

Է. Նախիջևանու երկիրն, և տունն Գողթնեաց՝ իւրեանց Նահանգօքն. Յորոց առնուն զչոր ծիրանս, զնուշս, զջակլայս, զպանդակս, զընկոյզս, և զայլս այսպիսիս։



Ը. Դարբէժ քաղաքն իւրեան շրջակայիւքն. յորոց առնուն զչոր խաղողս, զնուշս, և զայլս այսպիսիս։

Թ. Գանձակայ քաղաքն, Շամախի, Շիրվան, Բագու, Դարբանդ, Նուխի, Ղարդաղ, Խաչէնու երկիրն, և բոլոր տունն Աղուանից։ Յորոց առնուն զկերակուրս, զերկաթեղէնս, զպղնձեղէնս, և զայլս այսպիսիս։ Յորս և Գանձանակ և ունի. Որք թէպէտ են Գանձասարու թեմի, սակայն են հնազանդք սրբոյ Աթոռոյս և Աթոռակալի սորին. Որոյ և զանունն յիշեն յեկեղեցիս իւրեանց նախ քան զանուն Կաթուղիկոսին իւրեանց. Որոց գլխովն որպիսութիւնն յայլում տեղւոջ գրեսցուք։

Գլ. Ը.

Ցուցումն ծանուցանելոյ ուղղափառութեան սրբոյ Աթոռոյս և սորին Կաթուղիկոսաց է ծանուցանել զխոստովանութիւն առ յազգս Հայոց. Եւ թէպէտ ... և որպէս ... Կաթուղիկոսաց, և պատրիարքաց, և առաջնորդաց, և եպիսկոպոսաց հանդերձ։

Արդ որպէս մի է միջնորդն Հօր Աստուծոյ և ամենայն մարդկան մարդն Յիսուս Քրիստոս (ըստ սրբոյն Պօղոսի) որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, նոյնպէս և երկրորդապէս յետ Քրիստոսի մի է միջնորդն Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և յատուկ ազգիս Հայոց մարդն Աստուծոյ սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն մեր, որ ետ զանձն փրկանս ընդ ամենայն ազգիս Հայոց, որ անօրինեցմամբն Աստուծոյ, և աղօթիւք սրբազանից Առաքելոցն մերոց Թադէոսի և Բարդուղիմէոսի. յորոց չարաչարեցն պարգևեցաւ մեզ Փրկիչ և Առաջնորդ որպէս Մովսէս հնոյն Իսրայէլի։ Որպէս որպէս Քրիստոս ըստ ամենատեսակ բարերարութեանն իշխանութիւն ունի ի վերայ համօրէն մարդկային բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Քրիստոսի սուրբն Գրիգոր ըստ բազմատեսակ բարերարութեանն իշխանութիւն ունի ի վերայ յատուկ ազգիս Հայոց. զորմէ բազմաօղն պարտի նախապէս զհայկազնեաութենէն և զՔրիստոնէական հաւատոյն իւրմէ բացայալ. Քանզի որ հայկածին է և հաւատացեալ Քրիստոսի, սմա և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն. Եւ կարծատապէս առանց ամենայն հակառակութեան և անընդդիմադառութեան, ըստ Հօրոյ և ըստ հաւատոյ, Փրկիչ, լուսաւորիչ, հայր, առաջնորդ, վերակացու և իշխան Հայրապետ և ծայրագոյն Պատրիարք բոլոր ազգիս Հայոց՝ յետ Քրիստոսի է սուրբն Գրիգորիոս. Քանզի ըստ նմանութեան՝ իւրաքանչիւր մի-

րայի մի է սկիզբն. ապա և մերումս աշխարհի ըստ հաւատոյ՝ է սուրբն Գրիգոր. որ ընծայեցաւ ի բուն սկզբէն և ի ճշմարիտ արմատոյն Քրիստոսէ, միջնորդութեամբ և յաջորդութեամբ սրբոյն Թադէոսի առաքելոյն՝ հարազատի և մերձաւորի Նորին. Իսկ և սորին առաջնորդարանն, Հայրապետարանն, պատրիարքարանն, Աթոռ և գահն իշխանութեան է սուրբ Էջմիածին. Որ խնդրուածովք և միջնորդութեամբ նորին սրբոյն Գրիգորի և իջմամբն Քրիստոսի Աստուծոյն մերոյ յօրինեցաւ լուսաձև և սքանչելակերտեցաւ Աստուածային փառօք յերկիրս Հայոց ի դաշտս Արարատեան, և ի Վաղարշապատ քաղաքոջ. Այս ուրեմն ձգի և տարածի հոգևոր իշխանութիւն սրբոյ Աթոռոյս ի յամենայն տեղիս և ընդ ամենայն ծագս երկրի՝ ուր կան և գտանին Հայկազնն և Լուսաւորչականս ժողովուրդք և հոգևոր ժողովարանս. Քանզի ուր և գտանին յազգէս Հայոց թէ եկեղեցիք և թէ եկեղեցականք, կարգաւորք և աշխարհականք, ի մէջ կողման և իցեն՝ բովանդակքն պարտաւորեալք և փակեալք են ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, և ի սմա նստող Հայրապետացն՝ որք են յաջորդք և փոխանորդք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայաստանեայց. Եւ ի սմա նստող Հայրապետին է յատուկ իշխանութիւն զբոլոր եկեղեցիս Հայոց հաստատել, բարեկարգել, և ի կանոնի պահել, զաւերեալսն բանալ և զթերին լցուցանել, զեպիսկոպոս ձեռնադրել, զառաջնորդս կարգել, զհետեւեալն ուղղել, զանարժանն և զանուղղելին հանել ի յեկեղեցւոյն և լուծանել ի կարգէն, անարգել և բացարձակ իշխանութեամբն հրամայել զհոգևորսն և զօգտակարսն, փակել և բանալ, կապել և արձակել. Եւ ըստ ժամանակին զՆուիրակունս առաքել առ յամենեսեան իբր փոխանորդ իւրեան, ի քննել և վերահասու լինել զորպիսարար կացութեանց եկեղեցեաց և եկեղեցականաց, զԻւղն Աստուածապարգև բաշխել ի յօծումն օծելոց և ի սրբագործել զորդեգործելեացս. Եւ միանգամայն որք վերաբերին ի յեկեղեցիս և ի հաւատս, ի սրբոյ Աթոռոյս և ի սմա նստող Հայրապետացն վերաբերին, տրին, և կարգին ի յազգս Հայոց որպէս ի միոյ մշտաբուղխ աղբերէն. Վասն որոյ և ազգս Հայոց փոխարէնարար ի ցուցանել զհնազանդութիւն շնորհակալութեամբ հանդերձ, յիշեն զանուն Հայրապետին յամենայնում յաւուր յեկեղեցիս իւրեանց և տան յօժարութեամբ զհասս Նուիրականս, զզանձանակս, զհոգեբաժինս, զխաչահանս, և զայլ արդիւնս ի ձեռս Նուիրակացն սորին ըստ պայմանի ժամանակին.

Եւ Նուիրակն սորին որքան ի յեկեղեցիս իւրեանց կացցէ, հնազանդութեամբ և անտրտունջ ընդունին հոգալով զպէտսն կերակրոց և ըմպելեաց. յիշեն և զանունն ի յեկեղեցին նախ քան զանուն Առաջնորդին



իւրեանց, նախադաս ունելով քան զնա տեղեաւ և պատուով. Արդ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ մինչև ի սուրբն Գրիգոր Տղայ կոչեցեալն Հայրապետ (որ էր եղբօր որդին Ներսիսի Շնորհալւոյն) յամս ՊԺԳ մինչև ի ՌԿԶ թուականն մեր. այսոքիկ կանոնիք վարեցաւ և մնաց անդրդուելի և անարատարար սուրբ Աթոռս. Քանզի յայնքան միջոցս ազգ մեր զօր անտարապի, անցանեցին և համաժողով յերկիրս Հայոց և Հայկական իշխանութեամբ վարէր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ (թէպէտ երբեմն պայծառ և երբեմն նուազ) և Կաթուղիկոսն ի յերկիրս իւր նստէր՝ և զազգն ընդ ձեռամբ ունէր. Եւ թէպէտ երբեմն արտաքոյ սրբոյ Աթոռոյս յայլուր նստէին Կաթուղիկոսքն, ի Դվին, յԱնի, և յայլուր, սակայն յանուն սրբոյ Աթոռոյս կոչէին և սովաւ փայլէին և իշխէին, զահակալ և փոխանորդ սրբոյն Գրիգորի անուանէին. որպէս զԽաղբակեան զլուխ բարի ազգիս Հայոց. Յորում էր ճշմարիտ մի հօտ և մի հովիւ. Ո՜հ, աւա՜ղ մեզ, որք յայնպիսւոյ երջանիկ ժամանակէն զրկեցաք. Եւ յայն ժամանակն թէպէտ գոյր և Աղուանից Կաթուղիկոսութիւնն ի ընէ անտի ի Լուսաւորչէն հետէ, սակայն չէր ինքնագլուխ և անհնազանդ սրբոյ Էջմիածնի և սորին Կաթուղիկոսացն. Քանզի գիտութեամբ և հրամանաւ սորին ընտրէին և նստէին, և ի սմանէ օծանէին. և էր հնազանդ յամենայնի. որոյ և զանունն յեկեղեցիս՝ նախ քան զանուն իւր յիշէր, որպէս և է մինչև ցարդ. յորոց թէ և ոմանք երբեմն ընդվզեալ ներհակէին և կամ հեռանէին ի յուղիղ պողոտայէն, ի յԷջմիածնի նստող Կաթուղիկոսէն զատեալ բանիւ լինէին և յԱթոռոյն և ս ընկեցեալ լինէին՝ որպէս և պատմեն պատմիչքն Աղուանից և Սիւնեաց. Սոյնպէս է և մինչև ցայս վայր ի ժամանակս մեր. որ զանթէ անուամբ և օծմամբ միայն էին Կաթուղիկոս. և ո՛չ բացարձակ և ինքնագլուխ իշխանութեամբ. Այլ ի ՌԿԶ թուոջն մերում՝ ի զօրանալ տաճկական իշխանութեանն, և ի տկարանալ զօրացն Հայոց, մինչ փոխեաց զԱթոռ Հայրապետութեանն ի Հռոմկլայն վերոյգրեցեալ Գրիգոր Կաթուղիկոսն, և անշքացոյց զԱթոռս Էջմիածնի, Դաւիթ վարդապետ ոմն (որ ի նոյն ժամանակն առաջնորդ էր կղզւոյն Աղթամարու,) ապստամբեցաւ ի Գրիգոր Կաթուղիկոսէն և նստաւ ինքնագլուխ Կաթուղիկոս ի նոյն կղզւոջն. որ և մնաց նոյն ապստամբութեան ընձիւղն մինչև ցայսօր. Յորմէ հետէ եղեն երկուք Կաթուղիկոսութիւնք Հայոց՝ ի Հռոմկլայն և ի յԱխթամար. յորս ոչ սէր գոյր և ո՛չ նախադասութիւն. Եւ ոչ միայն Կաթուղիկոսութիւնն բաժանեցաւ, այլ և զինթէ բոլոր ազգս Հայոց յերկուս բաժանեցան յայնմ հետէ. Զի ըստ վճռոյ իմաստասիրաց, որպէս բուռն է ժամանակն՝ որ հարկէ. հետևեցուցանէ ինքեան զընդ ին-

շնամի եղեալն. նոյնպէս և յայտնի է տեղին՝ որ հարկիւ փախեաւ դա ինքն յեցեալն. Քանզի ի փոխել Կաթուղիկոսութեանն ի յերկրէս Հայոց ի Հռոմկլայն, ընդ նմին և ազգս մեր զինեցին որ բառ օրէ յայն կոյս, կարգաւորք և աշխարհականք. մինչև ժամանակ ինչ թագաւորութեանն նոցա փոխեալ։ Բայց որովհետև երկիրն Յունաստան էր և յունումն ալ. և մեքն ևս ընդ նոսա յարեցեալք, սկսան և նոցայն սովորութեամբ փարել, բարուք. լեզուօք, հանդերձիւք ուտելեօք, և ըմպելեօք, և այլովք՝ որ ըստ աշխարհին, և այս ամենքան՝ մինչ գրէթէ Հայ անուամբ և լուսաւորչադաւան կրօնիւք (և այս ևս ոչ բոլորովին) միայն էին ի մէնջ, իսկ այլովք ամենիւք զատեալք և որոշեալք ի մնացորդաց յերկրացս Հայոց։ Վասն որոյ անկաւ յայնժամ հետէ այլայլութիւն և մեծ խառնութիւն ի մէջ Յունաստանաբնակաց և Հայաստանաբնակացս. թէ վանականաց և թէ աշխարհականաց, որ տևէ իսկ հաստատապէս մինչև ցայսօր։ Արդ տևեաց Կաթուղիկոսութիւնն ի տանն Կիլիկեցւոց յամս ՅԻԴ. որքան և տևեաց մանաւանդ իշխանութիւնն Ռուբինեանց ի նմին. յետ որոյ մինչ հասարակեաց բանութիւնն տաճկական և զրաւեաց զբոլոր երկիրս Յունաց. Հայոց. և Պարսից, և իսպառ վերջացաւ իշխանութիւնն Հայոց և Յունաց, և ամփոփեցաւ Կաթուղիկոսութիւնն Սիս, և գերեցաւ Կաթուղիկոսն իւրայնովքն ի Եգիպտոս, (որպէս ասացաւ ի վեր,) ապա ողորմութեամբն Աստուծոյ վերանորոգեցաւ նաև Աթոռս Հայոց սուրբ Էջմիածին և վերադարձաւ Կաթուղիկոսութիւնն ի Սսոյ ի ՊՂ. թուոջն մերում՝ հաւանութեամբ բոլոր երկրին Հայոց։ Բայց որք ի Յունաստան մնացին և ի տանն Սսոյ, որովհետև յարեալք էին ընդ Յոյնս և ուսեալք զկարգս նոցա, ոչ վերադարձան ի Հայս, և ոչ հնազանդեցան Կաթուղիկոսին Էջմիածնի, այլ ի նոյն յամառեալք նստուցին և նոքա ինքնագլուխ զԿաթուղիկոս ինքեանց. որով եղև երեք Կաթուղիկոսութիւնք Հայոց բաց ի յԱղթամարից Կաթուղիկոսութենէն. որք և չորեքեանքն ևս սկսան նստել հրամանաւ և զրով տաճկական տէրանց՝ որպէս և է մինչև ցայսօր։ Արդ եթէ ճշմարտութեան աշակերտք էին և իրաւանց հետևողք վարդապետաց Սսոյ և Աղթամարայ, ի վերանորոգել Աթոռոյս Հայոց Էջմիածնի, պարտէին բառնալ զանջինս զհնացեալս և զպառակտեալ Կաթուղիկոսութիւնս իւրեանց և հաւանել և հնազանդիլ արժանոյ, հնահաստատ և միակ Աթոռոյս իւրեանց և սմա նուաճել Կաթուղիկոսին. որպէս հաւանեցան Էջմիածնականքս նոցա՝ և լռեցին այնքան ժամանակս։ Եւ թէպէտ Կաթուղիկոսութիւնն Հայոց այսպէս ի բազումս բաժանեցաւ՝ որպէս ասացաք, սակայն Էջմիածնականն Կաթուղիկոսն յառաջ և յետոյ և մինչև ցարդ՝ շնորհօքն Աստուծոյ է նախապատիւ, գերագահ, հռչակաւոր և անուանի քան զայլսն ի յամե-



նայն ազգս և է սիրելի և ահարկու ի վերայ ամենեցուն. որ եթէ հարկն պահանջիցէ և զիրաւունս ունիցի. կարէ և բանիւ առնել զմիւս Կաթուղիկոսունսն և լուծանել ի կարգէն. նմանապէս և զեպիսկոպոսունսն և զայլս կարգաւորսն նոցին։ Բայց նոքա ոչ բնաւ և ո՛չ կարեն իսկ ձեռն ածել ի Կաթուղիկոսն Էջմիածնի. և ո՛չ ի կարգաւորս և յաշխարհականս նորին վիճակի. այս ոչ եթէ ըստ ինքն՝ սեպուհ և իսկականի նախագահական և հոգևորական իշխանութեանն միայն, այլ և ըստ վճռոց այլազգեաց և մերայնոց հաստատութեանց և ըստ հրամանատարութեանց մահմետական թագաւորաց և այլոց իշխանաց. որոց վճիռք և հրամանագիրք ահա կան ի սուրբ Աթոռս այդր։ Զորոց յետոյ ի տեղւոջն տեսցուք. Վասն զանազանեաց Կաթուղիկոսացն Հայոց այսքան։

Իսկ և վասն Պատրիարգացն և Առաջնորդացն ազգիս Հայոց այսպէս գիտեա՛. զի ի բաժանել Կաթուղիկոսացն իւրեանց մասնաւոր վիճակսն, մնաց մեծ մասն վիճակ սուրբ Էջմիածնի, զորս ցուցեալ եմ ի վերն ի գլուխս Նուիրակական և Առաջնորդական տեղեաց։ Արդ ի մէջ այնց վիճակացն ոմանս վաղօրօք, եկեղեցիք և նոցին առաջնորդք զատ իւրեանց վիճակօքն և ժողովրդովքն՝ կարգաւորօք և աշխարհականօք՝ էին և են հնազանդք սրբոյ Աթոռոյս Էջմիածնի. որոց և ամենից առաջնորդքն ի յԷջմիածնականաց Կաթուղիկոսացն լինէին կարգեցեալք և լուծեցեալք, որպէս ի վերն ասացաւ.

Եւ ի մէջ սոյն նախապատիւ և գերյարգելի զկնի Կաթուղիկոսին՝ էին և են որպէս Պատրիարգ, չորից սոցա և հռչակաւոր վանից Առաջնորդքն, այս ինքն այն որ ի Թադէոսի առաքելոյ վանիցն որ ի յԱրտազ գաւառի, սրբոյն Սամուէլի վանիցն որ ի Սիւնիս, սրբոյն Աստուածածնի վանիցն որ ի Բջնի, և Սրբոյն Նշանի վանիցն որ ի Հաղբատ. որք են իբր Աթոռակալք և տեղապահք Կաթուղիկոսին, որոյ և ի յընտրութեանն պարտին ներկայ գտանել և յօծմանն նախապէս զձեռն դնել ի գագաթն Կաթուղիկոսին։ Իսկ Երուսաղէմայն ո՛չ է պատրիարգ և ոչ Առաջնորդ, զի ոչ ունի ինքեան յատուկ Աթոռ, եկեղեցի և վիճակեցեալ ժողովուրդ, և ոչ ինքն իսկ Երուսաղէմ է երկիր և տեղիք Հայոց. զի նախապէս էր երկիր և քաղաք Յունաց՝ և երբեմն իսկ պատրիարգարան նոցա ի ժամանակս Քրիստոնեից թագաւորաց. իսկ յետոյ ի տիրելն յՕսմանցւոց ազգէն բարձաւ պատրիարգութիւնն Յունաց և իշխանութիւնն ամենայն Քրիստոնէից անտի։ Այնուհետև եղև հասարակ տեղի իմն ուխտից բոլոր Քրիստոնէից. յորում և ստացան իւրաքանչիւրքն զյատուկ տեղի իմն ինքեանց, զորս և արարին վանք և եկեղեցի, որոց և կացուցին իւրաքանչիւր ազգ զպաշտաւոր և հոգաբարձու իմն, զի նստելով անդ՝ զտեղիս իւրեանց

պաշտպանեսցէ և ուխտաւորացն իւրեանց առաջնորդական լինիցի. Նոյնպէս է և մերս, որ է միայն օգտաւոր և հաստատուն որոց տեղեացն՝ որք Հայոց ազգիս են բաժին։ Որոյ աղագաւ և առաքէ զհրովարտակս ի յազգս Հայոց՝ ուր և իցեն՝ ի հրաւիրել յուխտ և յերկրպագութիւն սրբոց տեղեացն անօրինականաց, և խնդրէ զկամաւոր օգնութիւնս ի պէտս իւրոյն և ի պայծառութիւն սրբոց տեղեացն։ Թէպէտ ի յետին ժամանակս ոմանք փառասէրք և ախտամոլք սեւագլուխք յանդգնութեան ազգիս զժամ գառնիլով՝ զինքեանս պատրիարգս անուանեցին, և զհրաւիրակս իւրեանց Նուիրակունս, զոր և զանէին հաստատութիւնն ազգիս մերոյ անընդունելի ստորութիւն արարեալ կոչեցին և կոչեն։ Այսպէս է և ի Կոստանդնուպոլիս, որ ո՛չ է երկիր և քաղաք Հայոց, այլ Յունաց. յորում Նստիւր Յունաց պատրիարգն՝ որպէս և այժմէն իսկ Նստի։ Իսկ ի յետին ժամանակս ի ցան և ցիր լինելն ազգիս, և ոմանց ևս անդր գնալով ի վաճառականութիւն, և ի բազմանալն օր ըստ օրէ, և ի տնաւորիլն իսկ, սկսան և զեկեղեցիս շինել յաւուրս Հայոց. վասն որոյ և հարկ եղև զի և առաջնորդ մի ևս ունիցին, զոր և ունեցան իսկ հրամանաւ Կաթողիկոսին։ Յետ այնորիկ ի զօրանալ թագաւորութեանն Օսմանցւոց, և ի յաճախել իշխանացն և ժողովրդոց մերոց անդ, սկսան ընդվզել և ամբարտաւանել յանպէտ Նստող Առաջնորդքն, և թողու զհոգևորն կանոն, և առ յառն հարկանել զպատիւն Հայրապետին, հրամանագրով այլազգի թագաւորին Նստել ինքնագլուխ՝ կանոնելով և զհարկս տալ յարքունիս յամէ յամ, յորոց և Փաթրիկ անուանել։ Ուստի և ի հասարակութենէ զըռանհկաց սովորութիւն եղև Պատրիարգ կոչել։ Արդ թէպէտ ի Պօլիս Նստողն այսպէս ամբարտաւանեցաւ, սակայն այլոց քաղաքաց և վիճակաց ժողովրդոցն մերոց՝ որք էին ի կողմանս յայնոսիկ, առաջնորդքն ըստ օրինի ի սրբոյ Էջմիածնէ և ի սմա Նստող Կաթողիկոսէն կարգէին. սակայն ի Պօլիս Նստող Փաթրիկ կոչեցեալքն գնալով ի յամբարտաւանութենէ յամբարտաւանութիւն, մինչ զի և զՆիւխողովայն արկին ի գործ, ի յան-կողմնս հօր իւրեանց ելանելով և զիշխանութիւնն Նորին ի յինքեանս գրաւելով, զոր և արարին իսկ։ Քանզի որովհետև ինքեանք հետեւեցան ի Ճանապարհէն Ճշմարտութեան, թողլով զՀայրապետականն պատիւ, հրամանաւ Օսմանցւոց տէրութեանն Նստան ի Պօլիս առաջնորդ, սկսան ապա և յայլ Առաջնորդական վիճակս (որք էին ընդ տէրութեամբն Օսմանցւոց) ձեռնամխել և հանել յիշխանութենէ Կաթողիկոսին։ Քանզի կարգեցին ի զրուցս յարքունի յամ յամէ զհարկս վասն Առաջնորդական վիճակացն (զոր մուխաթայ անուանեն), զորս և արկեալ ի ներքոյ հրամանագրի տաճկաց, սկսան ինքեանք կացուցանել զԱռաջնորդս Նոցա



թագաւորական նամակի 1)։ Որք և գրեթէ զբոլոր Առաջնորդական վիճակսն (որք ընդ տէրութեամբն Օսմանցւոց)՝ հանեալ յիշխանութենէ Կաթողիկոսին՝ արկին ի ներքոյ հրամանագրի Օսմանցւոց, բաց ի յոմանց տեղեաց, զորս յետոյ յատկացուցին։ Վասն այսորիկ և յաճախեցան ի կողմանսն յայնոսիկ թերահաւատութիւնք, ախթարմայութիւնք, և պէսպէս ապօրինաւորութիւնք, և յաճախեն ևս օր ըստ օրէ։ Զի Առաջնորդք Նոցին տաճկական հրամանաւ Նստին և ջանան միայն զհարկս արքունեացն տալ և զանձինս իւրեանց ճարակել։ Իսկ Կաթողիկոսն զոլով ընդ տէրութեամբն պարսից, ոչ այնքան կարէ իշխել ի վերայ Նոցա, ի հալածել, ի տուգանել, և այլովք մարմնաւորօք պատժել, միայն բանադրել կարէ, այն ևս ոչ ինչ օգտէ զի վտանգաւոր է իշխանութիւնն Օսմանցւոց, յորում փնառք յառաջանան քան թէ օգտութիւնք, և մանաւանդ ցեցն ի միջոյ է և ոչ յարտաքուստ. ՈՀ, ընտրեցի կարճառօտել զայսպիսեաց քան երկարել։ Արդ ո՛չ թողից անմեղադրելի և զայնս՝ որք մնացին ի կողմանս մեր ընդ տէրութեամբն Պարսից։ Քանզի ի բառնիլ իշխանութեանն Հայկական ըստ մարմնաւորի տէրութեան, զօրացաւ տէրութիւնն պարսկական իշխանութեանն, որոյ զրուցն և հրամանաւն Նստիւր Կաթողիկոսն, և անարգելօրէն վարէր զիշխանութիւնն իւր ի յազգս Հայոց, եթէ հոգևոր պատժօք ոչ գային յուղղութիւն հեստեցեալք ոմանք, մարմնաւոր պատժօք Նուաճէր։ Որում և տիւր բացարձակ իշխանութիւն յարքայից Պարսից, որոց հրամանագիրքն՝ զորս տուեալ են Կաթողիկոսացն, աճա՛ գոն ի սուրբ Աթոռոջս։ Իսկ ի բառնիլ և սոցին տէրութեանն խապառ, որ յԱսպահան Նստիւր և Շահ անուանիւր, ի ՌՃՂԷ թուոջն մերում, տես այսուհետև և զթշուառութիւնն ընդ տէրութեամբ սոցա եղելոցն։

Քանզի բարձաւ միապետական թագաւորութիւնն սոցա, և իւրաքանչիւր քաղաքի խանք եղեն ինքնագլուխք և աներկիւղք յումեքէ, որք ևս սկսան ի վերայ միմեանց յառնել և զերկիր իրերաց քակել և աւերել որք և գրեթէ ամայացուցին զբոլոր երկիրս Պարսից և Հայոց, մինչ զի ի միոյ երկրէ և ի Նահանգէ՝ որում իշխէր խան մի, յայլ երկիր և յայլ Նահանգ՝ որում այլ խան իշխէր, ոչ կարէ ոք գնալ, և կամ կարի դժուարաւ։ Ուստի իւրաքանչիւր խանից (ընդ) իշխանութեամբ եղեալքն ի խանս իւրեանց յեցեալք թէ՛ տաճիկք և թէ՛ Հայք ի միմեանց օտարացեալք և թշնամիք իսկ եղեն իրերաց ըստ ախորժակաց խանին իւրեանց։ Այսպէս և այլք գլխաւոր աղայք 2) տաճկաց սկսան զոմանս ի Հայոց ընդ ձեռամբ ածել, և ի գեղջ իւրեանց բնակեցուցանելով՝ իւրեանց

---

1) Հրովարտակ: — 2) Տէր, իշխան, պարոն: —

ծառայեցուցանել, և յանկարգանալն ոմանց Հայոց, ի վրէժխնդիր լինելըն Կաթուղիկոսին, տաճիկք տեարք նոցա տէր կանգնել և ոչ թողուլ: Արդ լա՛ց զգլուխ Կաթուղիկոսին, որ յայսպիսում ժամանակի պատահի՝ որպէս և ես որ գրեմս ամբոխեցեալ մտօք և թշուառական կենօք: Արդ վերջացուցանելով զայսպիսեաց, եկեսցո՛ւք և ի մեր յառաջին գիտումն՝ որ էր վասն Առաջնորդաց: Որք թէպէտ այսպէս և քան զայս առաւել ողորմելի եղև ազգս մեր, սակայն որք յերկիրս Պարսից և յայլ իշխանութիւնս (բաց յՕսմանցւոց երկրէն) Առաջնորդութիւնք գոն, ի յԷջմիածնէ նախիստ Կաթուղիկոսէն կարգին ըստ նախնոյ սովորութեանն մինչև ցայսօր:

## ԳԼ. Թ.

Յորում ցուցանի որպիսութիւն վախճանմանն Կաթողիկոսին սրբոյ Էջմիածնի՝ և վերստին ընտրութեան, և օծման: Եւ յետ օծեցմանն թղթատրութիւնքն նորին, և թէ ո՞ւր տեղի դնէ կնիքն ի թղթոցն, և այլ ո՞ւր տեղին կնիքան ի գրեն առ Կաթողիկոսն և թէ զո՞րս յարգէ Կաթողիկոսն և ո՛րպէս: Եւ այլ այսպիսի որպէ- [illegible] հանգամանս

Ի ժամանել անարգելելի և անստելի հրամանին Աստուծոյ առ Կաթուղիկոսն՝ ի կոչել զնա առ ինքն, պարտին ժողովել ամենայն միաբանքն ի վերայ նորա, և ըստ օրինին հանել ի տեղըջէն ի դուրս ի զպել, և ապա գլխաւոր միաբանք և գործակալքն սրբոյ Աթոռոյս երկու կամ երեք անձինք զամենայն զդրունսն Վեհարանին կնքել ներկայութեամբ և գիտութեամբ գլխաւոր սպասաւորի հանգուցելոյ վեհին, և ապա թաղել զնա մեծաւ հանդիսիւ որպէս օրէն է, և զսպասաւորսն նորին հանել ի Վեհարանէն՝ և ի կարգս միաբանիցն բնակեցուցանել, և զդրունսն Վեհարանին կնքեալ պահել զգուշութեամբ մինչև և ի վերանստիլ նորոյ Հայրապետին, և թէ զդրամ և կամ զ.քսուր ինչ հարկաւորիցին ի հանել ի Վեհարանէն, վերոյ երկու (կամ) երեք անձինքն ընդ գլխաւորի սպասաւորի Վեհապետին ի միասին բացեալ զդրունսն՝ հանցեն, և վերստին կնքեսցեն: Եւ այլ ոչինչ ունին հրաման քննութեան և հարցափորձութեան Վեհարանին, և կամ զսպասաւորսն հանգուցելոյն խոշտանգելոյ՝ բամբասելոյ և կամ վտարանելոյ: Քանզի այսպիսիք գործք վերանստող Հայրապետին է և ոչ այլում: Եւ մանաւանդ այնպիսիք վայրապար յաջ և յահեակ խօսողքն ո՛չ են օգտարարք և բարեկամք Աթոռոյն, այլ վնասատուք և առականաբացողք նորին, որպէս յայտնի է խոհեմագունից ան-



ձանց: Եւ յետ այսպէս կարգաւորապար թաղելոյն զհանգուցեալն, ապա գրեսցեն գործակալքն Աթոռոյն ի մօտաւոր քաղաքս և ի վանօրայս Առաջնորդաց երևելեաց, և գլխաւորաց իշխանաց, և հրաւիրեսցեն ի յաթոռն, և ժողովեսցին առաջի սրբոյ Իջման տեղւոյն ի յատեան Եկեղեցւոյն, թողեալ ի բաց զնախանձն, զակնառութիւնն, զանձնական օգուտն, զյատկական սիրելութիւնն և զայլս միտս ախտաւորական, նախապէս խոկասցեն զարժանաւորութիւնն և զկարողութիւն անձին և մանաւանդ ըստ ժամանակին, երկրորդապէս զօգուտն սրբոյ Աթոռոյն, և երրորդապէս զհասարակաց հաւանութիւնն և զանգայթակղելի գոլն (որք են նշանք և պարագայք կատարելութեան ընտրելոյն). և ի գտանելն միաբանութեամբ զայսպիսի արժանաւոր ոք՝ թէ յԱթոռոջս և թէ յարտաքոյ Աթոռոյն, ապա ասասցեն ընդհանրապէս. և ապա գրեալ զբազմակնիք թուղթ համահաւանութեամբ՝ առաքեսցեն հաւատարիմ արամբք ի Կոստանդնուպօլիս և ի յԱսպահան քաղաքսն և յայլս քաղաքս՝ ուր ձեռնհաս իցեն՝ ի յորդորել զնոսա ի համահաւանութիւն ընտրելոյն իւրեանց. որոց և ի համահաւանելն, կնքեն զհաւանութեան բազմակնիքն և ընկալցին իբրև զհայրապետ ինքեանց:

Ապա և ընտրեցեալն՝ եթէ յԱթոռոջս իցէ, օծի, և թէ յարտաքոյ իցէ՝ գայ ի յԱթոռս և օծանի Հայրապետ: Եւ յետ օծմանն, և ինքն զգրեանս գրէ յամենայն քաղաքս և ի վիճակս Օրհնութեան և շնորհակալութեան զի զինքն արժանացուցին այնմ պատուոյ. ընդ նմին և զպատուէրս ևս՝ եթէ ունիցի: Այսքան առ ընտրութիւն Հայրապետին: Իսկ և վասն կընքադրութեան և յարգման Կաթուղիկոսին առ յայլս, և յայլոց առ Կաթուղիկոսն, այս է կանոնն:

Հասարակապէս առ ամենայն Տաճիկ ազգս, թէ առ թագաւորս Օսմանցւոց, և թէ առ շահն Պարսից, նոյնպէս և առ փաշայս և առ խանս և առ յայլ մեծամեծս և գործակալս նոցին՝ որոց և հարկաւորիցի գիր գրել Կաթուղիկոսն, ըստ նոցին օրինի տաճկական բառիւ պարտի գրել և ըզկնիքն փոքրիկ յետկոյս թղթոյն՝ ուր վերջացեալ է բանն, անդ դնել միշտ, կարմրադեղով՝ ըստ կարգին: Բայց առ թագաւորն և առ մերձ գլխաւոր իշխօղսն արզայապէս պարտի գրել, իսկ առ յայլսն, որպէս առ սիրելիս և առ բարեկամս: Եւ ի գրելն թագաւորաց առ Կաթուղիկոսն, հրամայապէս գրեն և զկնիք և զնշանն իւրեանց ի ճակատ թղթոյն դնեն միշտ: Իսկ բաց ի թագաւորաց և ի թագաւորապիսեաց՝ ով.ք և իցեն տաճիկ, թէ փաշայ.ք և թէ խանք և այլ.ք, որպէս առ բարեկամս գրեն, և զկնիքս իւրեանց յետկոյս թղթոյն՝ ուր վերջացեալ է բանն, անդ դնեն: Իսկ ի յետին ժամանակս՝ մինչ բարձաւ թագաւորութիւն Պարսից, միայն խանն

մեր Երևանու սկսաւ հրամայապէս գրել՝ և զկնիքն թէպէտ ի վերջ բանին, սակայն յերես թղթոյն դնել, և Կաթուղիկոսն առ նա արզայապէս գրել։ Բայց և ի մերում ժամանակի ի ՌՄԺԴ թուոջն մերում՝ նմանապէս եբարձ և խանն մեր Հիւսէին-ալի զհրամայապէս գրելն իւր ի մէնջ, և զկնիքն իւր ևս յետկոյս թղթոյն դնել հաստատեաց։ Բայց մեք արզայապէս գրեաք առ նա։ Իսկ և ո՛րքան առ յարգումն սոցին զմիմեանս՝ այսպէս գիտեա։ Թագաւորք և թագաւորապէսք, թէ Օսմանցւոց և թէ Պարսից, որք ընդ բոլոր երկրին, նա և զերկիրս Արարատեան ընդ իշխանութեամբ ունիցին, ի խնդրելն զԿաթուղիկոսն, ի հարկէ պարտի գնալ և հնազանդել, և ուր հրամայիցեն՝ անդ նստիլ։ Նոյնպէս և ի գալն նոցա (եթէ պատահիցի) յերկիրն իւր, ընդառաջ ելանել և ծառայել։ Իսկ բաց ի յայսպիսեաց թագաւորապէս իշխողաց, և բաց ի յատուկ Երևանու իշխողէն, այլք փաշայք և խանք առանց հրամանի թագաւորին ոչ կարեն խնդրել զԿաթուղիկոսն առ յինքեանս, և ոչ գնայ իսկ։ Իսկ եթէ պատահիցի՝ զի Կաթուղիկոսն առ նոսա գնայցէ, յոտին կանգնեալ պատուեն զԿաթուղիկոսն և յանգիման ինքեանց հաւասարաբարձ նստուցանեն. և թէ նոցա պատահիցի գալ յԱթոռս, Կաթուղիկոսն ընդառաջ ելանէ ի վանիցն յարտաքս, և մեծաւ պատուով բերեալ նստուցանէ ի պատուաւոր տեղւոջ յանգիման ինքեան։ Այսու կանոնիւս վարի և առ Երևանու խանն. սակայն յորժամ և խնդրիցէ զԿաթուղիկոսն առ յինքն՝ պարտի գնալ. բայց ի գնալն առ նա, նմանապէս և յանգիման խանին նստի ի վեր քան զայլսն՝ ով և իցեն։ Եւ ի խօսելն ևս ընդ խանին ո՛չ ի գործ ածէ զխոնարհական գեղջուկ բանն զայն՝ (թէ մուրադդ ընէ՞ն, որպէս սովորութիւն է հասարակին, և կամ ծառայ եմ քեզ, այլ թէ՝ խանն ողջ լինի։ Իսկ բաց ի յայսպիսեաց փաշայից և խանից գլխաւորաց, այլք տաճիկք ով և իցեն, ի գալն առ Կաթուղիկոսն՝ եթէ մեծ և երևելի իշխան իցեն, Կաթուղիկոսն միայն ի տեղւոյն իւրմէ կանգնի առանց ընդառաջ ընթացման, և հրաւիրէ ի վերայ յատուկ սփռոցի նստել ի վայր քան զինքն, և որպէս ընդ հաւասարի վարել և խօսել ընդ նոսա։ Բայց նոքա ծառայապէս վարին և խօսին ընդ Կաթուղիկոսին. Նոյնպէս և թէ Կաթուղիկոսին պատահիցի գնալ առ նոսա, ընդ յառաջ ելեալ յոտին կանգնին և ի վեր քան զինքեանս նստուցանեն։ Իսկ այլք հասարակ տաճիկք ով և իցեն (առ յորս ո՛չ երթայ Կաթուղիկոսն), ի գալն նոցա առ Կաթուղիկոսն (թէ և հրամանաւ խանին իցեն եկեալ)՝ ոչինչ շարժի Կաթուղիկոսն ի տեղւոջէն, այլ հրաւիրէ հրամայաբար ի նստել ի վայր ի յետին տեղւոջ. և նոքա խօսին և վարին ընդ նմա ծառայաբար. որոց եթէ հարկն պահանջիցէ, կարէ Կաթուղիկոսն պատժել և անարգել, և մինչև գանել



ևս, թէպէտ ո՛չ ա՛յնքան՝ որքա՛ն զօրէին ի ժամանակս թագաւորացն նոցա։ Արդ զոր գրեցաք, ըստ բերմանցն գրեցաք, բայց ըստ ժամանակին, որովհետև և ժամանակաւորքն փոփոխին, զայն ի խոհեմութիւնս ապագայից թողաք։

Առ տաճիկ ազգս այսքան բաւեսցի։

Իսկ և առ յազգս քրիստոնէից՝ այսպէս գիտեա՛։

Զի եթէ պատահիցի, զի Փռանկաց և Մոսկովի թագաւորացն գիր գրել առ Կաթուղիկոսն Էջմիածնի, գրեն զանուն Կաթուղիկոսին ի ճակատ թղթոյն յարգանօք և պատուագրութեամբ, և ենթ զանուն իւրեանց, և ապա զկնի ծանուցումն, և զկնիքն իւրեանց ի վերջ բանին դնեն։ Նմանապէս և Կաթուղիկոսն ի գրելն առ նոսա՝ զանուն նոցին ի վեր անդր դնէ՝ պատուելով ըստ արժանւոյն, և ապա ըստ կարգին Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն։ Եւ զփոքրիկ կնիքն դնէ ի վերջ բանին։

Իսկ և Հռոմայու պապն՝ և Յունաց մեծ պատրիարքն՝ և այլք այսպիսիք ի գրելն զգիր առ Կաթուղիկոսն Էջմիածնի, զանուն Կաթուղիկոսին ի վեր անդր ի ճակատ թղթոյն դնեն եղբայրականաւ պատուագրութեամբ՝ և զկնիքն իւրեանց յետկոյս թղթոյն ի վերջ բանին։ Նոյնպէս և Կաթուղիկոսն ի գրելն առ նոսա, զայս կանոն պահեսցէ մեծապատիւ եղբայր գրելով։ Իսկ Վրաց և Ասորւոց Կաթուղիկոսքն ի գրելն զանուն Կաթուղիկոսին Էջմիածնի՝ նոյնպէս ի ճակատ թղթոյն դնեն մեծաւ յարգանօք եղբայրականաւ պատուագրութեամբ, և զկնիքս իւրեանց ի յետկոյս թղթոյն ի վերջ բանին դնելով։ Բայց Կաթուղիկոսն ի գրել առ նոսա, զերեսս թղթոյն ի յերկուս մէջս բաժանեսցէ, և յառաջին մէջն զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն. և յերկրորդ մէջն՝ հանդէպ իւրոյ անուան զանուն նոցին գրեսցէ. Տեառնդ (այս ինչ անուն) կաթողիկոսիդ եղբայրականաւ յարգանօք. բայց զկնիք իւր ի մէջ Յիսուսին դնիցէ. իսկ ի գրելն առ արքայն Վրաց, զանուն իւր ըստ կարգին գրեսցէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն. և զանուն արքային ի վերն դնիցէ ի ճակատին, և զկնիքն իւր ի մէջ Յիսուսին։ Բայց նա ի գրելն առ Կաթուղիկոս, զանուն Կաթուղիկոսին յարգական բառիւք ի վեր անդր ի ճակատն գրէ, և ի ստորոտ նորին զիւր անուն գրէ, և զկնիքն յետկոյս թղթոյն ի վերջ բանին դնէ։ Զսոյն կանոն պահեա և վասն այլոց այսպիսեաց արքայապիսեաց։

Իսկ առ յազգս Հայոց միայն Գանձասարու, Աղթամարու և Սսայ Կաթուղիկոսացն, և Երուսաղէմայ պատրիարգին Կաթողիկոսն Էջմիածնի ի գրելն զգիր, զանուն իւր ըստ կարգին դնէ Յիսուսի Քրիստոսի ծառայ և այլն. և զանունս նոցա ի ներքոյ ըստ կարգին, եղբայրականաւ յարգանօք։ Մի-

այն զառաջին գիր անուանց նոցա կարմրագեղով գրէ, և զկնիքն իւր ի մէջ ցեխոտակին դնէ։ Բայց և Կոստանդնու Պատրիարքն՝ նթէ ծերագոյն անուանի և արժանապատիւ իցէ, առ նա ևս զսոյն կանոնն պահեսցէ. և թէ ո՛չ՝ զկնիք իւր ի ճակատ թղթոյն դնիցէ։ Բայց նոքա ի գրելն առ Կաթուղիկոսն Էջմիածնի՝ զանուն նորին ի վեր անդր ի ճակատ թղթոյն գրեն մեծաւ եղբայրականաւ յարգանօք, և զկնիք իւրեանց յետկոյս ի ծայր թղթոյն դնեն։ Եւ բաց յայսցանեաց, այլք ամենքեան ի յազգս Հայոց՝ թէ Եպիսկոպոսք իցեն և թէ այլք կարգաւորք, թէ մեծամեծ իշխանք և մելիք, և թէ հասարակ աշխարհականք, ի գրելն իւրեանց զգիր առ Կաթողիկոսն, որդիականաւ խոնարհութեամբ և ծառայականաւ․ ոճիւ գրեսցեն մեծաւ յարգանօք, զանուն Կաթուղիկոսին ի վերն դնելով, և զկնիք իւրեանց յետկոյս ի ծայր թղթոյն դնիցեն։ Նոյնպէս և Կաթուղիկոսն առ նոսա հայրաբար սիրով և հրամայական ոճով գրեսցէ. բայց և առ յոմանս համահասակ և ծերունի և անուանի եպիսկոպոսունս ի գրելն, նթէ եղբայր գրեսցէ, չէ անտեղի։

Դարձեալ ի յելանելն Հայրապետին ի յԱթոռոյս՝ ունել պարտի ի պարանոցին զգօտի պատշաճագոյն գունով ազնիւ և վայելուչ ինքեան և տեսողաց՝ կախեալ երկոքումբք ուսովքն և լանջօքն զառ ի վայր։ Եւ զաւազանն ի ձեռին՝ զերիս կամ աւելի և պակաս յառաջընթաց հետևազաւազանն ի ձեռին՝ զերիս կամ աւելի և պակաս յառաջընթաց հետևա- կըս ունելով առաջի իւր։ Իսկ նթէ երիվարաւ իցէ ելանելն թէ առ թեմս և առ յայլս մեծամեծս և յայլ ուր և կամիցի, ունել պարտի նոյնպէս զայնս կանոնս զորս ասացաք։ Այլ և ընդ նոսին զերիվար մի թամբով կրեցեալ ի միոյ հեծելոյ՝ քան զամենայն յառաջագնաց, որ ասի Եդեկ։ Եւ զկնի Եդեկակրին զերկուս սևազգեստս նոյնպէս ձիաւորեալս՝ ի ձեռին միոյն ձողաբարձ խաչ արծաթեայ, և ի ձեռին միւսոյն զաւազան արծաթեայ, վառեալ ոսկեթել և ազնիւ քօղիւք։ Այլ և ի յելանելն և ի մտանելն ևս զմեծամեծ զանգակսն հարկանիցեն միաբանիւք ընդառաջ ելմամբ և հանդիսիւ։ Զի ի բնէ կանոն է սրբոյ Աթոռոյս Հայրապետացն այսպէս վարել համարձակ և անկասկած յումեքէ։ Այլ և այս է կանոն, զի յորժամ Հայրայապետն ի յընթրիս բազմել կամիցի ընդ միաբանից և ընդ ումեք, և իցէ, պարտի առաջի իւր ունել զյատուկ սեղան, և զկերպիս և զըմպելիս, և զսպասաւորս զատեալ ի հասարակութենէն։ Իսկ ի յառնուլն ի ձեռն զառաջին բաժակն, ամենքեանքն՝ որք գտանիցեն ի յընթրիսն, կարգաւորք և աշխարհականք, յոտին կանգնիցեն և ժամասացն յառաջ կացեալ եղանակեսցեն բարձր ձայնիւ ի լուր ամենեցուն, Հրամայեա՛ Տէ՛ր, օրհնութեամբ ամէն։ Եւ Հայրապետն օրհնեսցէ զամենեսեանսն ըստ պատշաճաւորութեան աւուրն և տեղւոյն, և նոյն երգիչքն նոյնպէս բարձր ձայնիւ երգեսցեն ամէն,



եղիցի՛ եղիցի. և մինչ նոքա զայս երգեն, ըմպեսցէ Հայրապետն զբաժակն, և ամենքեան գլխով խոնարհեցուցեալ Հայրապետին՝ բազմիցին ի ճաշել։

## Գլ. Ժ.

Ցուցում ծանուցանէն յաջորդութեանց կաթողիկոսաց Աղուանից՝ և երբեմնական աթոռակալութեանց նոցին է որբոց Լուսաւորչեանց կաթողիկոսաց, և երբեմնական ևս գիտէ և առաջնորդութեանց նոցին, թէ ո՞րպէս, յորում ամի, և ե՞րբ, և այլ այլազան պատմութեանց համառօտ: Ցուցում և շրջագ յորում Վրաց և յաջորդութեանց նոցին:

Յետ համբառնալոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ յերկինս, և առաքման Հոգւոյն սրբոյ ի յառաքեալսն ի Վերնատունն, ապա և ի յառաքելն երկոտասանից առաքելոցն վիճակաւ ի յամենայն աշխարհ, անկաւ վիճակ սրբոյն Թադէոսի Առաքելոյն երկիրս Հայոց, Վրաց և Աղուանից։ Նախապէս գիտելի է վասն առաքելոյս մերոյ Թադէոսի. քանզի չորք որդիք էին Յովսեփայ Աստուածահօրն. առաջինն Յակոբ Արդարն որ Տեառն եղբայր կոչեցաւ, և յետ Քրիստոսի նստաւ առաջին Պատրիարգ յԵրուսաղէմ, որ և Յակոբ Ալփեան ևս կոչեցաւ։ Սա գրեաց զԹուղթն Կաթուղիկեայց։ Երկրորդն Յովսէ՝ որ Յոստոս և Բարսաբայ ևս կոչեցաւ։ Սա յառաջադրեցաւ ընդ Մատաթիայի ի տեղի Յուդային մատնչին յառաքելոցն, բայց վիճակն ի Մատաթիայ անկաւ։ Երրորդն՝ Սիմոն Կանանացին՝ որ Շմաւոն և Նախանձայոյզ կոչեցաւ։ Չորրորդն Յուդայ, որ Ղեբէոս և Թադէոս ևս կոչեցաւ, և Յուդայ Յակոբեան ասացաւ վասն եղբայր գոլոյն Յակոբայ՝ և առ ի զատիլ ի մատնչէն։ Սա գրեաց զԿաթուղիկեայց յետին Թուղթն՝ որ Յուդայի անուանի։ Արդ այս չորեքկինքս գոլով եղբարք և որդիք Յովսեփայ՝ կոչին և եղբարք Քրիստոսի ի յԱւետարանն սուրբ՝ որպէս տեսանես։ Եւ յայսց չորեցս երեքն ի թիւս երկոտասանիցն են, այս ինքն Յակոբոս, Շմաւոն և Թադէոս. և Յովսէ ի թիւս եօթանասնիցն։ Արդ այս է առաքեալս մեր՝ որ Յուդայ և Թադէոս ասի՝ որպէս ցուցաւ, որ է գլխաւոր առաքեալ Քրիստոսի և մի ի յերկոտասանիցն, և ո՛չ թէ ի յեօթանասնիցն՝ որպէս սխալմամբ գրի ի Յայսմաւուրն և յայլս պատմագիրս յԱխթարմայից և ի տգիտաց յետոյ ներմուծեցեալ։ Ուրեմն ի գալն սորին յերկիրս Հայոց, առնլով ի յեօթանասնիցն և զերիս աշակերտս սպասաւոր և լծակից ինքեան՝ մտանէ ի յԵդեսիայ քաղաք, և մկրտէ զԹագաւորն Աբգար ըստ խոստմանն Քրիստոսի, ընդ նմին և զքաղաքն ամենայն, և զԱդդէ կերպասագործն ձեռնադրէ Եպիսկոպոս քաղաքին։

Եւ ապա շրջեալ ընդ Ասորիս, ի Մարս, գնայ ի յԱղուանս, և դարձուցանէ զբազումս ի Քրիստոս. շինէ և զեկեղեցիս, և կարգէ զքահանայս, և յետոյ գայ ի յԱրտաղ գաւառ, և մկրտէ զՈսկեանսն և զՍանդուխտ զդուստրն Սանատրկոյ արքային, որ նախապէս մկրտեցեալ ի Նոյնոյ Առաքելոյն, յետոյ սպանանէ զնա: Որոյ հրաշագործ մարմինն կայ անդէն ի նոյն տեղւոջն, ուր յետոյ հռչակաւոր վանք կառուցաւ, որ կայ մինչև ցայսօր շնորհօքն Քրիստոսի, և կոչի Վանք սրբոյն Թադէոսի առաքելոյն: Այս է նախապէս ճշմարիտ առաքեալ և Լուսաւորիչ յատկապէս Հայոց, Վրաց և Աղուանից, ընդ սմին և սուրբն Բարդուղիմէոս՝ որ եմուտ ի Հայս՝ և լուսաւորեաց զբազումս, և յետոյ նահատակեցաւ յանօրինաց ի գաւառըն . . .՝ ուր կայ հրաշագործ մարմինն, յորոյ վերայ և յետոյ կառուցաւ վանք հրաշալի, որ է մինչև ցայսօր շնորհօքն Քրիստոսի. վասն որոյ և սա կոչեցաւ առաքեալ Հայոց ընդ Թադէոսի: Եւ մինչ սոքա ո՛չ կարացին ըզբոլոր վիճակ իւրեանց կատարելապէս ածել ի հաւատս Քրիստոսի, վասն որոյ ի ժամ նահատակութեան խնդրեցին ի Քրիստոսէ, զի ի շառաւիղէ իւրեանց յարուսցէ զոք ի լնուլ զպակասութիւն վիճակի իւրեանց. որոց և աղօթիւքն յարոյց Քրիստոս յետ ժամանակաց ի սրբոյն Թադէոսի առաքելոյ շնորհաբուղխ գերեզմանէ զսուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն, որ վերստին նորոգեաց և փայլեցոյց զսերմանեալսն ի նոցանէ, և բոլորովին լուսաւորիչ եղև նոցին վիճակի, զորմէ յետոյ տեսցո՛ւք: Արդ յետ կատարման սրբոյ առաքելոյս մերոյ Թադէոսի՝ մի ումն յաշակերտաց սորին՝ որ Եղիշէ կոչիւր, դարձաւ յԵրուսաղէմ յառաքեալսն ի պատմել զկատարումն սորին: Իսկ եղբայր Թադէոսի առաքելոյն Յակոբոս՝ որ էր Պատրիարք նստիւր յԵրուսաղէմ, ձեռնադրեաց զԵղիշէ Եպիսկոպոս և վերադարձոյց ի Հայս ի վիճակ Թադէոսի, զի յաջորդեսցէ զտեղի նորին: Որոյ եկեալ և ո՛չ կարացեալ մտանել ի Հայս, գնաց յԱղուանս, և անդ քարոզեաց զՔրիստոս և աշակերտեաց զոմանս. և յետ ո՛չ բազում աւուրց՝ և զնա անդ նահատակեցին: Արդ ի սրբոյն Թադէոսէ և ի Բարդուղիմէոսէ առաքելոցն և ի սրբոյն Եղիշէէ թէպէտ քարոզեցաւ Քրիստոս ի Հայս և յԱղուանս և յայլ տեղիս, և հաւատացին բազումք և կարգեցան Եկեղեցիք, սակայն զկնի կատարման նոցին՝ որպէս թէ վերադարձան բոլորքըն ի կռապաշտութիւն թագաւորք և իշխանք, թէպէտ գտանիւր յուրեք յուրեք ի ծածուկ և ի թագստի հաւատացեալ և ծառայ Քրիստոսի: Ապա յետոյ յորժամ՝ նախախնամութեամբն Աստուծոյ բողբոջեցաւ շառաւիղն օրհնութեան ի կենդանի նշխարաց սրբոյն Թադէոսի առաքելոյն ըստ հայցուածոց նորին, սուրբն Գրիգոր՝ որ և յետ բազմազան տանջանակրութեան եած ի հաւատս և մկրտեաց զՏրդատ թագաւորն և լուսա-



ւորեաց զաշխարհս Հայոց, Վրաց, և այլոց շրջակայից. ապա և մկրտեաց զՈւռնայր արքայն Աղուանից, ի ձեռն նորին և զբոլոր ազգն Աղուանից լուսաւորեաց, և զԹոռն իւր զմանուկն Գրիգորիս առաքեաց նոցա Կաթուղիկոս ըստ խնդրոյ Ուռնայր արքային: Ապա յայնմ հետէ յայտնի և կատարելապէս փայլեցաւ հաւատն Քրիստոսի և աճեցաւ ի Հայս, ի յԱղուանս և ի Վիրս զարդարեալ Եկեղեցեօք և Եկեղեցականօք: Եւ վասն այսորիկ կարգեցաւ և կանոնադրեցաւ ի բնէ անտի յԱռաքելոց և ի Հայրապետաց և ի թագաւորաց՝ և մանաւանդ ի Սեղբեստրոսէ Հայրապետէն և ի Կոստանդիանոսէ թագաւորէն Հռոմայ, որք հայրապետական և թագաւորական հրամանագրով և հաստատուն դաշնագրութեամբ ի Սուրբն Լուսաւորիչ յանձնեն զինքնագլուխ և զծայրագոյն պատրիարգութիւն արևելականաց և հիւսիսականաց՝ այսինքն Հայոց, Վրաց, և Աղուանից, որոց զԵպիսկոպոսունսն և զԿաթողիկոսունսն ընդ իշխանութեամբ նորա զնեն, զի ի նմանէ և ի նորին փոխանորդացն առնուցուն զձեռնադրութիւն՝ որպէս պատմի յաճախօրէն ի յԱգաթանգեղոսէ. որպէս և զԹոռն իւր զսուրբն Գրիգորիս ձեռնադրեալ առաքեաց Կաթողիկոս Աղուանից. վասն այսորիկ հարկ եղև, զի Կաթողիկոսքն Աղուանից՝ Լուսաւորչի փոխանորդ Կաթուղիկոսաց որդի և թոռն կոչիցին՝ և ի նոցանէ առնուցուն զօծումն և զկարգ Կաթողիկոսութեան և ի հնազանդութեան նոցա մնասցեն, և զանուն նոցին ի յԱղուանս նախ քան զանուն իւրեանց յիշել տայցեն, և ի վիճակէն իւրեանց զզանձանակս և զայլ արդիւնս տայցեն նոցա, որպէս և է այսպէս ի յԱղուանս մինչև ցայսօր: Քանզի Առաքեալն նոցին Եղիշէ՝ զոր յատուկ իւրեանց հռչակեն, էր աշակերտ սրբոյն Թադէոսի առաքելոյն՝ որ ի Հայս կատարեցաւ, և Աթոռն նորին է ի Հայս. և նախկին Կաթուղիկոսն նոցին Գրիգորիս էր թոռն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ որ Հայոց էր Հայրապետ և Կաթողիկոս, և Աթոռն նորին է ի Հայս, և է Հայրապետարան և Կաթողիկոսարան Հայոց որ է սուրբ Էջմիածին: Այս է ճշմարիտ և նախնական կանոն և որպիսութիւն Աղուանից Կաթուղիկոսին: Իսկ ի Հայոց կարգաց և ի կանոնաց ոմանք երբեմնապէս եթէ հեռացեալք են՝ դառնեցեալք են ի յԷջմիածնանիստ Կաթողիկոսացն, և վերայուղղեցեալք ի նոցունց, տալով և զձեռագիրս կնքով, զի մի՛ ևս ի նոյնս սահիցին, որպէս ցուցանի յառաջակայդ: Վերոգրեցեալ կանոնաւոր վարեցան հնազանդութեամբ Կաթողիկոսունքն Աղուանից ի Լուսաւորչէն մերմէ և ի սրբոյն Գրիգորիսէն իւրեանց, (որ էր թոռն նորին,) ի ժամանակս ԻԲ Կաթողիկոսաց մերոց մինչև ցԱբրահամ Կաթողիկոս Ռըշտունեցի յամս երկու հարիւր եօթանասուն և հինգ, և ի ժամանակս Կաթուղիկոսացն իւրեանց, որոց յետինն էր վերոյ Կաթուղիկոսն՝ որ յԱբրահա-

մու ձեռնադրեցաւ՝ ԺԴ։ Արդ յառաջ քան զայս ի թուոջն Փրկչին մերոյ ի չորս հարիւր ութսուն և հնգոջն՝ ի ժամանակս Բաբգէն Կաթուղիկոսին մերոյ (որ չորեքտասաներորդ էր Աթոռակալ գլխի Լուսաւորչին), և Զենոնի և Անաստասայ թագաւորացն Յունաց և Հռովմայեցւոց, որոց և հրամանաւն իսկ մեծահանդէս և աշխարհախումբ ժողովով, Յոյնք, Իտալիա, Հայք, Աղուանք և Վիրք միաբանեալք նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զպիղծ տոմարն Լեւոնի։ Եւ մինչ ոչ դադարէին քաղկեդոնիկքն յայսր և անդր ի շրջելոյ և ի սերմանելոյ զչար աղանդն իւրեանց ի Հայս, ի Վիրս, և յԱղուանս, վասն որոյ ի հինգ հարիւր քսան և հինգ թուոջն Փրկչին, ի ժամանակս Յուստինիանոսի կայսեր, Ներսէս Կաթուղիկոսն մեր Աշտարակեցի, որ քսաներորդ էր գլխի Լուսաւորչին մերոյ, վերստին արար ժողով ի Դվին, ունելով ընքեան համաձայն զՎիրս և զԱղուանս, որք և նզովեալ հերքեցին զչար ժողովն Քաղկեդոնի և զհետեւողսն նորին ի կողմանց իւրեանց։ Սակայն յուզէր միշտ և խռովէր քաղցկեղն Քաղկեդոնական և վրդովէր զեկեղեցիս հանապազ։ Զի յետ սոյն Ներսեսի Նստի Յովհաննէս Կաթուղիկոս Հայոց յամս ԺԵ։ Եւ յետ նորա Մովսէս յԵղուարդայ ի թուոջ Փրկչին մերոյ ԵՃԾ, որ քսան երկուերորդ էր Լուսաւորչին, առ որով եղաւ թուականն Հայոց։ Յաւուրս սորա բարձրանայ և ծաւալի հուրն Քաղկեդոնի և հրդեհէ զբաղումս ի մերայնոց՝ և պատառէ զեկեղեցիս Հայոց. քանզի յաւուրս Մօրկայ թագաւորին Յունաց՝ որ խմորեցաւ յաղանդն Քաղկեդոնի, դարձան և Հայքն ի յայն՝ որք էին ի բաժնի Յունաց. վասն որոյ և ապստամբեալք ի Մովսիսէ, հրամանաւ նորին թագաւորին և սատարութեամբ Թէոդորոսի եպիսկոպոսին Կարնոյ՝ կացուցանեն այնմ կողմանց զՅօհան ոմն ի Կոգովտ գաւառէ՝ Կաթուղիկոս Հայոց և ընդունին զժողովն Քաղկեդոնի։ Որով և արկանեն զմեծ գայթակղութիւնս և զերկուութիւնս յազգս մեր։ Եւ յայսմանէ ախտէ մինչ Աղուանից ազգն մնայր ազատ և անխռով յայսրմ միջոցի, վասն որոյ զերեսս դարձուցին ի Հայոց Կաթողիկոսացն Սիւնեացն եպիսկոպոսքն՝ և յարեցան յԱղուանս, և ի նոցանէ առին ըզկարգ և զօծումն՝ որք ի Հայոց Կաթուղիկոսէն առնուին։ Տեւեաց այս երկպառակութիւնս որքան և տեւեցին երկոքին Կաթուղիկոսքն մեր Մովսէս և Յօհան։ Ապա ի վախճանել սոցին՝ Նստի Աբրահամ Կաթուղիկոսն ի գաւառէն Ռշտունեաց (որ ի վերդ յիշեցաւ) ի ԻԹ թուոջն մերում, աշխարհաժողով հանդիսիւ՝ համակամութեամբ երկուց կողմանց Յունաբնակաց և Հայաբնակաց՝ ի Դվին քաղաք, և ըստ օրինի միապետեալ ազգիս մերոյ լինի Կաթուղիկոս, յաւուրս Յուստինիանոսի Յունաց և Խոսրովու Պարսից արքայիցն, և յիշխանութեան Հայոց Սմբատայ



Բագրատունւոյ։ Բայց եղեն և յաւուրս սորա խռովութիւնք մեծամեծք, և պէսպէս յուզմունք ի Հոռոմոց, ի Վրաց, յԱղուանից, և ի Հայոց, երբեմն վասն պիղծ աղանդոյն քաղկեդոնի ի բռնոն թագաւորացն Յունաց Յուստինիանոսէ և ի Մօրկայ, յորոց հանապազ կրէր ազգս Հայոց զյարուցմունս, յորոց հրաւիրակք և դեսպանք ո՛չ դադարէին յերթեւեկութեանց, և բազմիցս հրաման հանէին ժողով լինելոյ, միանգամ ի Կոստանդնուպօլիս կոչեցին, և երիցս ի Թէոդուպօլիս. և ո՛րքան վիճմունս և զառարկութիւնս արկանէին ճարտարաբան ազգն Յունաց առ վարդապետսն Հայոց, շնորհօքն Աստուծոյ ընկալնուին զպատասխանիս անվեհերս։ Եւ մինչ այսու ոչինչ կարացին ընկճել զազգս Հայոց, փոխեցին ապա և պլովք մաքառել՝ ասելով թէ դուք ոչ ունիք զաթոռս պատրիարգական, վասն զի ի չորից Աւետարանչացն ո՛չ միոյն ունիք զաթոռ, և ոչ միոյն հնազանդեալ հետեւիք։ Վասն որոյ բազում ժողովք և վէճք, ուժեղ քննութիւնք և հարցափորձութիւնք լինէին ի միջոցին։ Ապա յետ բազմաց վիճմանց հազիւ գտանէր զհանդարտութիւն ազգս Հայոց ըստ այսմ մասին։ Քանզի միաբանեալք Հայոց, Վրաց և Աղուանից, նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զտօմարն Լեւոնի, և մաքրեցին զբոլոր աշխարհս ի մոլեկան աղանդոյն նոցին։ Եւ ապա կարգեցին կանօնաւ, զի փոխանորդն Լուսաւորչին (որ Նստի յԱթոռ Թադէոսի առաքելոյն՝) լինիցի պատրիարգ, Աղուանից Կաթողիկոսն լինիցի Արքեպիսկոպոս, և Վրաց եպիսկոպոսն Մետրապօլիտ, առ ի հատանել պլեզուս Յունաց և յաղթել ի զրպարտութեանց նոցին։ Քանզի ունէին թէպէտ ազգս Հայոց զայս կանօն և կարգ աւանդեալ ի սրբոյ Լուսաւորչէն, սակայն ի փոփոխիլ ժամանակաց և իշխանութեանց, անփոյթ էին արարեալ զայսպիսեաց անուանց և կոչմանց, զորս ահա՛ վերստին հաստատեցին վասն հակառակութեան Յունաց՝ որպէս ասացաք։ Եւ զի յառաջ քան զայս Սիւնիք յետս էին կացեալք և բաժանեալք ի յաթոռոյ Լուսաւորչին հրամանաւ սրբոյն Պետրոսի մեծի բաբունոյ Առաջնորդին իւրեանց վասն ներհականիստ Կաթուղիկոսացն (որպէս ասացաք) Մովսէսի և Յովհաննու, որոց և չորեքեին, այսինքն Գիգան, Վըրդանէս, Գրիգոր, և Քրիստափոր Առաջնորդքն ի յԱղուանիցն առին ըզձեռնադրութիւն և զմեռոն։ Աստանօր ի միապետելն Աբրահամու, վերադարձան ի սա և վերստին հնազանդեցան Աթոռոյ Լուսաւորչին, որպէս և էր յառաջն. և Դաւիթ Առաջնորդն նոցին՝ որ գլխի Քրիստափորի, էառ զձեռնադրութիւն ի յԱբրահամու Կաթուղիկոսէն։ Եւ մնացին այսու կանօնաւ հետեւողք և հնազանդք սրբոյ Լուսաւորչի Փոխանորդացն մինչեւ ցայսօր։ Արդ այսպէս առնելով թէպէտ թօթափեցին մեր-

քըն յինքեանց զմարտս և զվէճս Յունաց և Քաղկեդոնականացն որպէս ասացաք, սակայն յառաջացան այնուհետև ի նոր ինքեանց, այս ինքն ի Հայս, ի Վիրս, և յԱղուանս մեծ խռովութիւնք և չարաչար բաժանմունք։ Քանզի ի ժամանակին յայնմիկ էր առաջնորդ մի Վրաց՝ որ Կիւրիոն կոչիւր։ Սա նախապէս ի սարկաւագութեան գնացեալ էր ի Յոյնս ի քաղաքն Կոզոնիայ և կենակից լեալ Քաղկեդոնիկ չերիցու միոյ, յորմէ և դարձեալ էր ի նորին չար աղանդն. յետոյ եկեալ ի Վաղարշապատ յաւուրս Տեառն Մովսէսի Կաթուղիկոսին (որ ի վերդ յիշեցաւ) եղև Փակակալ սրբոյ Էջմիածնի։ Յաւուրսն յայնոսիկ վախճանեալ եպիսկոպոսին Վրաց Տեառն Պետրոսի (որ ի Մովսէսէ էր ձեռնադրեցեալ ըստ նախնոյ սովորութեան), խնդրեցին Վիրք ի Մովսէսէ առաջնորդ ինքեանց զխմորեալն Կիւրիոն, և Մովսէս ևս ձեռնադրեաց զպիղծ և զարմատն այն չարութեան Եպիսկոպոս, և առաքեաց նոցա առաջնորդ. որ և ունելով ի յինքն նախապէս զխմորն չարութեան զաղանդն Քաղկեդոնի, սկսաւ օր ըստ օրէ սերմանել և ի Վիրս սատար առեալ ինքեան և զպիղծ խուժիկ զքահանայն իւր, յորմէ ուսեալ էր ինքն։ Եւ երանելին Մովսէս թէպէտ բազմիցս խրատէր զԿիւրիոն դառնալ յաղանդոյն, սակայն նա չքմեղս դնէր զինքն և թաքուցանէր։ Ապա ի վախճանիլն Մովսէսի, և ի յաջորդելն Աբրահամու, և ի հաստատելն զԱղուանիցն Առաջնորդն Արքեպիսկոպոս, և Վրացն Մետրապօլիտ ի խոնարհ քան զնա, ախտացեալ ամբարտաւանութեամբ պիղծն Կիւրիոն՝ ոչ էառ յանձն զմետրապօլտութիւնն, այլ զարքեպիսկոպոսութիւնն խնդրէր առնուլ՝ կամելով նախաբարձ լինել ի վերայ Աղուանից։ Վասն որոյ և Աղուանիցն խռովեալք յետս կացին ապստամբութեամբ ի Հայոց՝ յառաջադրելով զնախկնութիւնն Առաքելոյն իւրեանց Եղիշէի (որ էր աշակերտ Թադէոսի Առաքելոյն)։ Ապա և անիծեալն Կիւրիոն զէն առեալ ինքեան զապստամբութիւնն Աղուանից և մանաւանդ խմորեալ գոլով յաղանդն Քաղկեդոնի՝ ժամ գտեալ իւրոյ չարութեանն, ի յոչ ընկալնուլն զԱրքեպիսկոպոսութիւնն, յայտնեաց ըզմթերեալ մաղձն իւր, և դարձաւ ի Հայոց, և յարեցաւ ի Յոյնս, ընդ ինքեան դարձոյց և զազգն Վրաց միանգամայն, և եղեն քաղկեդոնիկ յօրէ յայնմանէ մինչև ցայսօր։ Քանզի մինչև ի յայս պիղծս Կիւրիոն, Վիրք հնազանդք էին յամենայնի և հետևողք կանոնաց և աւանդութեանց Եկեղեցւոյ Հայոց. և եպիսկոպոսք նոցին ի սրբոյ Լուսաւորչի փոխանորդացն առնուին ըզձեռնադրութիւն. և հրամանաւ սոցին նստէին, և զսուրբ Մեռոնն ի սոցանէ առնուին։ Որոց բաժանմանն պատճառ եղև պիղծն Կիւրիոն։ Առ յորս թէպէտ բազմիցս գրեաց Աբրահամ Կաթուղիկոսն զգիրս խրատականս և յորդորականս, և զմարդ առաքեաց ի վերաուղղել, ոչինչ օգ-



տեցաւ։ Վասն որոյ և բանիւ արարեալ զԿիւրիոն, ընդ նմին և զազգն Վրաց, և գրեաց կանոնականս Հայոց, Աղուանից և Սիւնեաց. զի քարշեսցին ի Վրաց, և մի՛ ևս հաղորդեսցին ընդ նոսա ի հաւատս և ի յաւանդութիւնս Եկեղեցւոյ։ Ապա և զմետրապօլտութիւնն՝ յորմէ ստեցան Վիրք, ընկալաւ Եպիսկոպոսն Սիւնեաց. և այս կանոն մնաց մինչև ցայսօր։ Վասն այսորիկ Սիւնեաց Եպիսկոպոսն վերագոյն է ի Հայս ի վերայ այլոց եպիսկոպոսաց։ Իսկ և Աղուանիցն ապստամբութիւն տևեաց ի ժամանակս երկուց Կաթուղիկոսացն իւրեանց (որք զկնի վերոյ Կաթուղիկոսին նստան անձամբ առեալ զկաթուղիկոսութիւնն) մինչև ի Սրբազան Կաթուղիկոսն մեր Տէր Կոմիտաս, որ նստաւ ի ՀԲ թուոյն մերում. որով ընկալաւ իսկապէս միապետութիւն Կաթուղիկոսութեան ազգս Հայոց։ Քանզի ըստ ոմանց պատմագրաց, ի ժամանակս Աբրահամու դեռ ևս կենդանի էր Յօհան՝ որ նստեալ էր ի կողմն Յունաց հրամանաւ Մօրկայ թագաւորին. որ և ըստ ոմանց գերեցեալ յետոյ ի յԱշոտոյ զօրապետէն Պարսից և բերաւ ի Պարս ի Համատան՝ և անդ մեռաւ։ Ապա ի միապետելն Կոմիտասայ և ի վախճանելն ապստամբ Կաթուղիկոսացն Աղուանից, զզջացեալ իշխանացն Աղուանից ի յուսադրելոյ և ի խրատուցն Կոմիտասայ, առաքեն զՈւխտանէս վարդապետն իւրեանց առ Կոմիտաս, և խնդրեն տալ նմա զօծումն և զկարգ Կաթուղիկոսութեան։ Զոր և արարեալ իսկ ըստ խնդրոյ նոցին առաքէ մեծաւ փառօք յԱղուանս, և դնէ նոցա ուխտ և կանոն զի մի՛ ևս ապստամբեսցին ի յաթոռոյ Լուսաւորչին։ Որք և պահելով զկանոնս զայս՝ մնացին ի ժամանակս երկուց Կաթուղիկոսացն իւրեանց Ուխտանիսի և Եղիազարու, և ի ժամանակս եօթն Կաթուղիկոսացն մերոց մինչև ի յԵղիա Կաթուղիկոսն մեր Արճիշեցի, որ նստաւ ի թուոյն մերում ի ՃԾԲ։ Ապա ի ժամանակս սորա մեռանի Եղիազար Կաթուղիկոսն Աղուանից, (որ ի մերմէ Կաթուղիկոսացն էր ձեռնադրեցեալ) Ներսէս ոմն Եպիսկոպոս Գարդմանայ, որ Բակուր մակակոչիւր՝ գոլով խմորեցեալ յաղանդն քաղկեդոնի, ուխտ և դաշինս դնէ ի ծածուկ ընդ Տիկնոջն Վարազտրդատայ իշխանին Աղուանից, որ Սպրամ կոչիւր (որ և սա ունէր զախտն քաղկեդոնի), թէ՝ եթէ զիս Կաթուղիկոս արասցես, զամենայն Աղուանս դարձուցից յաղանդն Քաղկեդոնի։ Եւ չարախորհ կինն այն հաւանեալ կամաց նորին, ժողովէ զեպիսկոպոսունս և զիշխանս երկրին, և տայ ձեռնադրել զպիղծն Բակուր ի չԿաթուղիկոս Աղուանից, թարց հրամանի Կաթուղիկոսին Հայոց Տեառն Եղիայի։ Եւ ապա Բակուրն այն պիղծ սկսաւ յայտնել օր ըստ օրէ զմաղձն չարութեան՝ զոր ի վաղուց ունէր մթերեալ, զամենայն ուղղափառսն խոտելով և հալածելով, և

զթուլահաւատն ի յիւր յաղանդն դարձուցանելով։ Ապա ճարակտուր լեալ ուղղափառ եպիսկոպոսաց և բարեպաշտօն իշխանացն Աղուանից, հասուցին զբողոքն առ Կաթուղիկոսն Հայոց Տէր Եղիա։ Որոց գրոց պատճէն է այս։

Տեառնդ Եղիայի Հայոց կաթուղիկոսի ի միաբան ժողովոյս Աղուանից երկրպագութիւն։

Վասն զի ի մի ուղիղ հաւատ գոլով հարքն մեր ընդ հարսն ձեր, զմիմեանց հոգային զհոգւոց փրկութիւն։ Եւ ի ներկն Աստուծոյ զօրացեալ տիեզերակործան կրօնն Քաղկեդոնի եկից զտեղերս, և մեր կողմանքս մինչև ցայսօր ժամանակի անխառն էր մնացեալ յայնմ աղանդոյ։ Իսկ այժմ զոր կարծէաք գոլ մեզ հովիւ բարի զՆերսէս, սա գայլ եղեալ օձաւել սկսաւ զբանաւոր հօտս Քրիստոսի. վասն որոյ կամեցաք յուշ առնել ձերում Սրբութեան, այց ելանել որպէս ձերոց անդամոց և բժշկել զբեկումն մերս։ Ողջ լեր։

Ապա սրբազան Հայրապետն Եղիա շարժեալ ի Հոգւոյն սրբոյ, առեալ ընդ իւր զեպիսկոպոսունս Հայոց՝ գնայ ի յԱղուանս ի քաղաքն Պարտաւ (ուր նստէր Կաթուղիկոսն Նոցին), և անդ ժողովեալ զամենայն զեպիսկոպոսունս և զիշխանս Աղուանից, յառաջ ածեալ զԲակուր և զհամախոհն նորին զչար կինն Սպարամ, ձաղածանակ խայտառակութեամբ կապեալ ի վերայ իշոյ՝ հալածէր յերկրէն, և զաշխարհն մաքրեալ յաղանդոյ չարին, ձեռնադրէ նոցա զՍիմէօն սարկաւագապետն Եկեղեցւոյն Կաթուղիկոս Աղուանից. և դնէ կանոնս և առնու զձեռագիրս ի յԱղուանից, զի մի՛ ևս շեղեսցին ի կրօնից Լուսաւորչին, և մի՛ ևս դնել Կաթողիկոս ինքեանց ձեռնադրութեամբ եպիսկոպոսաց, այլ միայն ի յԱթոռակալէ սրբոյ Լուսաւորչին, և զօրինակ ձեռագրի նոցին զոր ետուն Եղիայ Կաթողիկոսին, (գլխովինն ի պատմագիրս Աղուանից և Սիւնեաց, և ի Կիրակոսինն տեսցես)։ Աստ կարճառօտեալ զգլխաւորն միայն եդաք, որ է այսպէս։

Քանզի բազում և ազգի ազգի չարութեամբ որպէս սովոր է յամենայն ժամ բարիատեացն սատանայ զպարզամիտսն ի մարդկանէ որսալ, և այլն, սակս որոյ այժմ ի միջի մերում երևեալ արմատն դառնութեան աղանդոյն Նեստորի ի ձեռն Ներսեսի ամբարշտացելոյ՝ որ ներգործութեամբ Հոգւոյն սրբոյ կարգեցաւ յառաջնորդութիւն տանս Աղուանից՝ և խորամանկութեամբն եղև հաւատակորոյս. և այլն. յորմէ Քրիստոսի սուրբ անդամք և որդիք սիօնի բովանդակք մոլորեցան խաբէութեամբ, և այլն. այլ սակայն օրհնութիւնն Աստուծոյ յայսմ վայրի, որ ոչ ետ թոյլ թշնամւոյն մարդկան իսպառ յառաջել, այլ զթացեալ ի տկարութիւնս մեր, ողորմեալ ժողովրդեանս իւրում՝ առաքեաց առ մեզ զպատուական հայրդ զԵղիա շնորհիւն Աստուծոյ Հայոց Կաթուղիկոս, զայր սուրբ և ճշմարիտ, զուգաթոռ սրբոյն Գրիգորի՝ ձերովք եպիսկոպոսօք.



որք եկիք ի մայրաքաղաքս մեր Պարտաւ, և ձերով քաղցրաւոյթ վարդապետութեամբն բարձիք զչարն ի միջոյ մերմէ, և յիշելով զառաջնոց հարցն մերոց աւանդութիւն, վերանորոգեցիք զԱթոռ հայրապետութեանս մերոյ. և այլն։ Վասն որոյ և մեք շնորհակալութեամբ ընկալաք առաքելական զհաւատն մեր, որ նախ ի սրբոյն Եղիշէէ հիմնադրեալ, և ապա ի սրբոյն Գրիգորիսէ հաստատեալ, որ ցայժմ ոչ էր ստերիւրեալ։ Ի հասանել փորձութեանցս՝ հասոյց Աստուած զօգնութիւն իւր ի ձեռն Փոխանորդիդ սրբոյն Գրիգորի, որոյ ուղղափառութեանն էաք աշակերտ և եղիցուք Տեառնդ Եղիայի Հայոց Կաթուղիկոսի, որ եղև վրէժխնդիր թշնամւոյն արդարութեան։ Եւ արդ մեք ամենեքեան նզովեմք զամենայն հերձուածողսն, ընդ որս և զեղկելին մեր Ներսէս, որ հաւանեալ եղև երկաբնակ աղանդոյն Քաղկեդոնի։ Զայս կանոնս առաջի Աստուծոյ և ձերոյ սրբութեանդ պայմանեցաք։ Ցայսմ հետէ եթէ ոք յանդգնեալ զնորաձևութիւն ինչ կամիցի առնել ի մէնջ, ով ոք և իցէ, նզովեալ եղիցի յԱստուծոյ և ի մէնջ. ևն։

Նոյնպէս և վասն ձեռնադրութեան Կաթուղիկոսաց Աղուանից այսպէս կանոնեցաք։ Քանզի որովհետև ի սուղ ինչ միջոցի Կաթուղիկոսք մեր զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց մերոց առին, անխոյթ առնելով զառաջնոցն կանոնաց, վասն որոյ անփորձ և անընտրող գործով եղեալ հերձուածեցաւ աշխարհս մեր. վասն այսորիկ պայմանեցաք առաջի Աստուծոյ և ձերոյ հայրութեանդ, զի ձեռնադրութիւն Հայրապետութեանս Աղուանից ի սրբոյն Գրիգորի Աթոռոյն և ի նորին փոխանորդացն եղիցի միաբանութեամբ աշխարհիս մերոյ, որպէս և էրն ի սկզբանէ անտի ի սրբոյն Գրիգորէ։ Զի անդ իսկ ընկալաք զլուսաւորութիւն, և ճշմարտութեամբ զխնդմք՝ թէ զոր դուք ընտրէք և կամիք, հաճոյ Աստուծոյ և օգուտ մեզ։ Եւ թէ ոք երկիւղին Աստուծոյ այսմ պայմանադրութեանս կատարողք լինին, օրհնեալք եղիցին ի սրբոյ Երրորդութենէն։ Եւ թէ ընդդիմացեալք թիւրեսցին ի ճշմարտութենէ, դատապարտեալք լիցին յԱստուծոյ, և ձեռնադրութիւնն այն լիցի ունայն և անվաւեր, և մի՛ համարեսցի ընդունելի, և այլն։ Վերջ ձեռնագրին։

Առեալ Տեառն Եղիայի զայս ձեռագիրս յԱղուանից, դառնայր մեծաւ փառօք յԱթոռն իւր։ Արդ եկաց և տևեաց այս կանոն և ուխտադրութիւն ի ժամանակս ԺԶ Կաթուղիկոսացն Աղուանից, և ի ԺԵ Կաթուղիկոսացն մերոց՝ մինչև ի Գէորգ Կաթուղիկոսն մեր Գառնեցի, որ նստաւ յաթոռ ի ԳՃԻԶ թուոջն մերում։ (Եւ զի ոմանք ԺԴ Կաթողիկոս դնեն մեզ յայսմ միջոցի, ոչ դնելով ի կարգի զԶաքարիա Կաթուղիկոսն ի Ձագայ գեղջէն. զի սա ըստ ոմանց ասի թէ՝

ի վեց ամի Հայրապետութեան իւրոյ՝ ժողով արարեալ ի Շիրակ-
վան, ընկալաւ զժողովն Քաղկեդոնի. որոյ զկնի նստաւ Գէորգ և խոս-
տեաց զընկալեալ տօմարն և զաւանդն նորին, և մաքրեաց զեկեղեցիս
վերստին։) Ապա ի ժամանակս Գէորգայ Կաթուղիկոսին մերոյ, մեռանի
Յովէփ Կաթուղիկոսն Աղուանից, որ ի մերոց Կաթուղիկոսացն էր առեալ
զձեռնադրութիւն ըստ կարգին։ Եւ յաւուրսն յայնոսիկ Հայոց թագաւորն
Աշոտ, և իշխանքն Աղուանից՝ ԺԳ ամ էր՝ ոյք ի պատերազմի կային ի
դուռն Ալանաց ի Պարտաւ, ընդ Մահմետի զօրավարի ումեք՝ որ Եփչիկ
կոչիւր. վասն որոյ ոչ լինէին ձեռնհաս ի նորոգել զԿաթուղիկոսութիւն
Աղուանից. վասն որոյ յերկար միջոցի մնային անկաթուղիկոս։ Եւ Սա-
մուէլ եպիսկոպոսն Մեծկոնէից անզգամեալ ինքնին անձամբ առնու ըռ-
պատիւ առնլով զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց յԱղուանս և լինի
Կաթուղիկոս անկատար ձեռնադրութեամբ, առանց հրամանի Կաթուղի-
կոսին Հայոց Գէորգայ և իշխանաց երկրին։ Քանզի Աղուանից Կաթու-
ղիկոսն յորժամ ի սրբոյն Գրիգորի փոխանորդ Կաթուղիկոսաց ո՛չ առ-
նոյր զկարգն, այլ յիւր յեպիսկոպոսացն առնոյր՝ անկատար ձեռնադ-
րութիւն կոչիւր ի բնէ անտի։ Վասն այսորիկ զայնպիսին վերստին
ձեռնադրէին փոխանորդքն Լուսաւորչին, որպէս և արար Գէորգ Կաթու-
ղիկոսն մեր։ Ուստի յորժամ լուրս այս հասանի ի բանակն, լինի խռովու-
թիւն մեծ. ապա իշխանքն Աղուանից գրեն առ մեծ Կաթուղիկոսն Հայոց
Գէորգ՝ որ նստէր ի Դվին, և Կաթուղիկոսն գրէ նոցա և Աշոտ թագա-
ւորին, զի խաղաղութեամբ վճարեսցեն զեղելութիւնն զայն՝ և բառնայցեն
զխռովութիւնն։ Ապա Աշոտ թագաւորն Հայոց՝ ըստ հրամանի Կաթուղիկո-
սին՝ համոզել կամեցաւ զիշխանսն Աղուանից, զի ընդունիցին զեղեալն. իսկ
իշխանքն Աղուանից ոչ կամին, ասելով թէ նզովք կան ի մեզ և ուխտ ի
ի նախնեաց հետէ, զի զյեպիսկոպոսաց ձեռնադրեցեալ և թարց հրամանի
փոխանորդացն Լուսաւորչի զԿաթուղիկոս ոչ դնիցեմք ի մեզ, և ոչ ըն-
դունիցիմք։ Եւ թագաւորն Աշոտ խնդրեալ զգիրս ուխտիցն և վերահա-
սու լեալ, ապա բերեալ զՍամուէլ առ յինքեանս, յետ բազմաց յանդի-
մանութեանց, առաքեն զնա ի Դվին առ Գէորգ Կաթուղիկոսն Հայոց. որ
և կրկին ձեռնադրեալ զՍամուէլ, և առեալ զձեռագիր վերստին՝ ոչ ևս
ապստամբել յԱթոռոյ Լուսաւորչին, առաքէ յԱղուանս։ Մինչև ցաստ
հասուցանէ զպատմութիւնս իւր պատմիչն Աղուանից Մովսէս Կաղանկա-
տուին, և վերջացուցանէ։

Ապա յետ քանեաց ամաց ի զօրանալ տաճկաց և գերել յեր-
կիրս Հայոց՝ և ընդ ձեռամբ ածել ընդ բազում գերեաց՝ և Կա-
թուղիկոսն Գէորգ գերեցաւ ի տաճկաց և ածաւ ի Պարտաւ։ Իսկ Հա-



մամ թագաւորն Աղուանից գնէ զԳէորգ Կաթուղիկոսն գանձիւք ի գեր-
չացն, և ածաւ փառօք առաքէ վերստին ի յԱթոռն իւր։ Սակայն ունէր
սա զրան եպիսկոպոս մի Յոհան անուն, և մինչ ինքն ի գերութեան էր,
մեռանի Սամուէլ Կաթուղիկոսն Աղուանից, և Յոհանս այս գայ յԱղուա-
նս և անդրէն ժամ գտեալ ձեռնադրի Կաթուղիկոս Աղուանից թարց
կամաց Տեառն Գէորգայ։ Եւ յորժամ ազատի Գէորգ ի գերութենէն և
տեսանէ զՅոհան, լուծանէ զնա ի պատուոյն և ի կարգէն։ Յետոյ ի միջ-
նորդելն Համամայ թագաւորին Աղուանից, վասն երախտեաց նորին կրկին
ձեռնադրէ զՅոհան և կարգէ զնա Կաթուղիկոս նոցա, առնլով զդաշնա-
գիրս ի նմանէ և յիշխանաց երկրին, զի մի՛ ևս ընկալցին զձեռնադրեալ
յեպիսկոպոսաց Կաթուղիկոս ոք և մի՛ ապստամբիցին յԱթոռոյ Լուսաւոր-
չին։ Եւ ինքն դառնայ ի Հայս յԱթոռն իւր։ Ապա յետ վախճանին Տեառն
Գէորգայ՝ փութով անդրէն տեղի ետ այս կարգ և սովորութիւն, և յա-
ջորդեաց անկարգութիւն։ Քանզի յայնմ հետէ Կաթուղիկոսքն մեր տե-
ղափոխեալք ի հանապազորդական յարձակմանց և ի հինահարութեանց
Իսմայէլական ազգին, այսր և անդր շրջէին, երբեմն ի գաւառն Վասպու-
րական, մերթ ի Շիրակվան, և երբեմն յայլուր, վասն որոյ ոչ ձեռնհաս
լինէին ի փոյթ ունել զայսպիսեաց, (որպէս և է իսկ ի մերումս ժամանա-
կի. աւաղ և ինձ՝ որ գրեմս)։ Ուստի և Աղուանից Կաթուղիկոսքն ևս
(որոց և ախորժէին իսկ՝ էր այսպիսի դիպուածք) թողին և մոռացան
զուխտն և զկանոնն առաջին։ Ոյք և սկսան այնուհետև անձամբ առնուլ
զպատիւ առանց հրամանաց Փոխանորդացն Լուսաւորչին հինգ Կաթուղի-
կոսքն, այս ինքն՝ Սիմէոն, Դաւիթ, Սահակ (ընդ որով և ապստամբեցաւ
Յակոբ եպիսկոպոսն Սիւնեաց, որ յետոյ հնազանդեցաւ յաւուրս Տեառն
Անանիայի), Գագիկ և Դաւիթ, որք յեպիսկոպոսաց առին զանկատար
ձեռնադրութիւն, և յաւուրս հինգ Կաթուղիկոսացն մերոց՝ Մաշտոցի,
Յովհաննիսի, Ստեփաննոսի, Եղիշէի, և Թէոդորոսի։ Ապա ի նստելն
Տեառն Անանիայի Հայոց Կաթուղիկոսի ի ԳՃՂ թուոջն մերում,
(ընդ որով և Աղուանիցն Սահակ վախճանի, դնեն և ի տեղին
նոյնպէս անկատար ձեռնադրութեամբ զԳագիկ,) գրէ Անանիա առ
իշխանս Աղուանից, և հրամայէ՝ մի՛ ընդունիլ զԳագիկ։ Որոց և
լուեալ հնազանդեցան և ի բաց կացին ի Գագկայ. և ապա միա-
բանեալ իսկ առաքեն զՅոհան եպիսկոպոս ոմն առ Անանիա, զի
ձեռնադրեսցէ նոցա Կաթուղիկոս. զոր և արարն իսկ։ Սակայն ի դրդ-
մանէ նախանձոտաց բարդեցաւ պէսպէս բարուրանս և բամբասանս ի վե-
րայ Յոհանու, և եղև մեծ խռովութիւն ի յԱղուանս վասն Գագկայ և
Յոհանու, որք և երկուքն ևս խոտեցեալք լինէին։ Ապա հարկ լինի այնու-

Հետև Տեառն Անանիայի գնալ յԱղուանս առ ի գտանել զՇնարն նոցին խաղաղութեան. որ և գնացեալ եղոյծ զերկոսեանն եւս ի պատուոյն, և դեռ եւս ոչ հաստատեալ զնորն՝ խնդրեն զնա Թագաւորն և իշխանքն Հայոց փութով դառնալ անտի վասն հարկաւոր ինչ պատահման։ Որոյ և պայմանեալ (ընդ) Աղուանիցն՝ զի զկնի նորա առաքեսցեն զոմն արժանաւոր, զի ձեռնադրեսցէ նոցա Կաթուղիկոս, և նորա հաւատացեալ դարձաւ յԱղուանիցն, և եկեալ ի Սիւնիս ի հնազանդել զապստամբն Յակոբ. յորմէ խոյս տուեալ Յակոբայ՝ մնանէ առ Զուանշիր իշխանն իւրեանց՝ և ոչ գայ առ Կաթուղիկոսն։ Վասն որոյ և բարկացեալ Անանիայի, քակէ զԱթոռն Սիւնեաց, բանադրէ զՅակոբն և զիշխանն, և ինքն դառնայ ի Հայս հօգոց հանելով և տրտմութեամբ։ Եւ զկնի դարձման Հայրապետին՝ վերստին ապստամբի Գագիկն և Յակոբն, և մնայ նոյնպէս։ Ապա ի վերին խնամոցն, ի հասանել թուին մերոյ ի ՆԷ, վախճանին երկոքին եւ՝ Գագիկն և Յակոբն Սիւնեաց։ Զոր լուեալ Տեառն Անանիայի՝ գոհանայ զԱստուծոյ, որ երարձ զպատճառս խռովութեան։ Վասն որոյ ելեալ գնայ ի Սիւնիս, որոյ և ընդ յառաջ ելեալ իշխանքն ամենայն և մեծաւ զղջմամբ Մեղայ գոչելով խնդրեն զթողութիւն։ Որոյ և ներելով նոցա, վերստին շինէ և հաստատէ զաթոռն նոցա, և արձակեալ զԶուանշիր, զորդի նորին զՎահան ձեռնադրէ նոցա Եպիսկոպոս, և առնու ի Սիւնեաց զչարաչար նզովից ձեռնարկ, զի մի՛ եւս ապստամբիցեն յԱթոռոյ Լուսաւորչին, որպէս և են հնազանդ մինչև ցայսօր։ Զորս ճառէ երկարապէս Ստեփաննոս պատմիչն Սիւնեաց։ Եւ յետ այսր ամենայնի՝ մինչ կամ էր գնալ նորա յԱղուանս և զնոսա հնազանդել և խաղաղացուցանել, անդրէն եւս վերստին գրեալ իշխանքն և Թագաւորն Հայոց դարձուցանեն փութով ի Հայս վասն հարկաւոր ինչ պատահման։ Իսկ ի լսելն Աղուանից իշխանացն զգալն Տեառն Անանիայի ի Սիւնիս և զգործսն որք անդ, և ի դառնալն, ապա մեծաւ զղջմամբ առաքեն առ նա զգիրս մեղայական՝ ընդ նմին և զԴաւիթ կրօնաւոր ոմն ի Խոտակերաց վանից, զի ձեռնադրեսցէ նոցա Կաթուղիկոս։ Որ և կատարեալ զխնդիրս նոցա, առաքէ մեծաւ փառօք զԴաւիթ Կաթուղիկոս Աղուանից՝ առնլով վերստին և ի նոցանէ զձեռնարկս նզովից, զի մի՛ եւս շեղիցին և ապստամբիցին յաթոռոյ Լուսաւորչին, և յեպիսկոպոսաց ձեռնադրեալ Կաթուղիկոս մի՛ ընդունիցին։ Արդ մինչև ցայս վայր զորս գրեցաք, ի ճշմարտապատում պատմագրացն՝ յԱգաթանգեղոսէ, ի Սիւնեաց, յԱղուանից, ի Ստեփաննոսի Տարօնացւոյն, ի Կիրակոսէ, և ի թղթոցն Անանիայ Կաթուղիկոսին ընկալաք։ Զորս տեսցես զլիովինն եթէ կամիս։ Ուրեմն յայսքանեաց հաւաստապատում վկայութեանց մինչև ցայս վայր ուսաք՝ թէ Կաթուղիկոսքն Աղուանից հնազանդք են լեալք Լուսաւորչի



փոխանորդ Կաթուղիկոսացն ի բնէ անտի, և ի նոցանէ են առեալ զօծումն՝ զպատիւ Կաթուղիկոսական, և քանիցս ձեռագիր են տուեալ Կաթուղիկոսք, եպիսկոպոսք, և իշխանք, զի մի՛ եւս հեստիցին, և զյեպիսկոպոսաց ձեռնադրեալ Կաթուղիկոսն մի՛ ընդունիցին՝ եթէ ո՛չ իցէ հրամանաւ Լուսաւորչի փոխանորդացն։ Յորոց և ի հեստիլն ոմանց՝ լուծեցեալք են ի նոցունց որպէս ցուցաւ։ Բայց ի պատմագիրս Աղուանից ի տեղիս յոմանս որպէս յառաջին հատորն ի Թ գլուխն, ի յերրորդ հատորն ի Ը գլուխն, յորս զԱղուանսն երիցագոյն դնէ քան զՀայս, և կամ թէ և Հայոց Կաթուղիկոսն եւս ի յԱղուանից Կաթուղիկոսէն պարտի ձեռնադրիլ, և կամ թէ ի շարս Կաթուղիկոսացն՝ որք նախ քան զԳրիգորիս՝ եօթն Կաթուղիկոս դնէ իւրեանց, և այլք այսպիսիք, սուտք են և յետոյ ներմուծեալք ի սևագլխաց Աղուանից։ Որք և թուի թէ՝ Անանիա Կաթուղիկոսն մեր՝ յորժամ գնաց յԱղուանս և խնդրեալ զպատմութիւնս Կաթուղիկոսաց նոցա և ի ճշմարտելն զձեռնադրելն Կաթուղիկոսաց նոցին ի սրբոյն Գրիգորի փոխանորդացն ի բնէ անտի ի սրբոյն Գրիգորէ և յՈւռնայր արքայէն իւրեանց, (որպէս յայտնապէս պատմեն Մովսէսն Աղուանից, Ստեփաննոսն Սիւնեաց, և մեր Անանիա Կաթուղիկոսն, և Կիրակոս պատմիչն,) և ի յանդիմանելն զնոսա և ամօթ ի բերան առնելն, ըստ իւրեանց պատմագրին, յայնմ հետէ այլայլեցին և ներմուծին ըստ ախորժակաց իւրեանց որպէս և կամեցան. զի գիտելով զընդարձս բարս իւրեանց ի յապստամբութեանն կոյս, և ի ձնշելն ի մերոց Կաթուղիկոսաց, զայսպիսիս առաջադրեցին, որպէս և եղեն իսկ ի մերում ժամանակի։ Իսկ և զՇուփհաղիշայ Կաթուղիկոսն իւրեանց զոր յետ Եղիշէի դնեն վեց Կաթուղիկոսք յառաջ քան զԳրիգորիս, յանդիմանի ստութիւն նոցա ի պատմչէն իւրեանց, որ զսոյն Շուփհաղիշայ ընդ տասներորդ Թագաւորին իւրեանց բարեպաշտի Վաչականայ դնէ, որ ընդ նմա ի խնդիր եղանեն նշխարաց սրբոյն Գրիգորիսի, և զկանոնս սահմանեն, զոր տեսցես ի նոյն պատմագիրն յառաջին հատորն և ի ԻԶ գլուխն։ Զի ի շարս Կաթուղիկոսաց նոցա այլ Շուփհաղիշայ անուամբ Կաթուղիկոս ո՛չ գոյ բաց ի միոյն։ Ապա յետ այսորիկ որպէս ասացաք յառաջ, ի զօրանալ տէրութեան տաճկաց և ի յանտիրանալն ազգիս Հայոց, ո՛չ կարէին Կաթուղիկոսքն Հայոց ի միում տեղւոջ դադարել, այլ այսր և անդր տարագիր և անհանգիստ շրջէին ըստ ձեռնտուութեան ժամանակին և տեղւոյն, մինչ զի և յանգլխութենէ ազգիս և ի դառնութենէ ժամանակին ի բազում բաժանեցաւ Կաթուղիկոսութիւնն Հայոց, որպէս ի Յանի, ի յԵգիպտոս, ի Սեբաստիայ, յՈւրհայ, ի Վասպ, և յայլուր, որպէս տեսանես ի պատմագիրս Կիրակոսի և Մատթէոսի։ Բայց որք ըստ կարգի և արժանավայել Կաթուղիկոսքն էին յայսմ միջոցի, զկնի Տեառն

Անանիայի՝ Տէր Ստեփաննոս, Տէր Խաչիկ, Տէր Սարգիս, Տէր Պետրոս, Տէր Խաչիկ. Տէր Վահրամ՝ որ և Գրիգորիս կոչեցաւ, Տէր Բարսեղ, և Տէր Գրիգոր Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյն, ընդ որով փոխեցաւ Կաթուղիկոսարանն Հայոց ի Կիլիկէ, և բարձաւ իսպառ ի տանէս Հայոց յԱրարատեան գաւառէս ի ՇԿԵ թուոջն մերում։ Որ լինի ի փախճանէն Տեառն Անանիայի մինչև ցայս վայր՝ ՃԾ ամ, սակաւ ինչ աւելի և պակաս։ Եւ յայսքան միջոցումն ի յԱղուանս նստան Կաթուղիկոսք այսոքիկ. զկնի Տեառն Դաւթի (որ յԱնանիայէ ձեռնադրեցաւ,) Տէր Պետրոս, Տէր Մովսէս, Տէր Մարկոս, Տէր Յովսէփ, Տէր Մարկոս, Տէր Ստեփաննոս, Տէր Յովանէս, Տէր Ստեփաննոս միւս, և Տէր Գակիկ՝ որ Գրիգորիս կոչեցաւ։ Արդ վասն վերոյիշեցելոց Կաթուղիկոսացս Աղուանից թէպէտ յուստեքէ ո՛չ ունիմք հաւաստի գծիւ՝ թէ ի մերոց վերոյիշեցելոց Կաթուղիկոսացն իցեն ձեռնադրեցեալք բաց ի վերնոյն Դաւթէ, որ յԱնանիայէ ձեռնադրեցաւ՝ որպէս ասացաք, սակայն է ճշմարիտ և հաւաստի, զի հրամանաւ և եպիսկոպոսօք նոցին իցեն ընկալեալք զձեռնադրութիւն, որպէս աշա ի ՇԾԲ թուոջն մերում, ի յաւուրս վերոյիշեալ Տեառն Բարսղի Կաթուղիկոսին մերոյ, ի փախճանիլ վերոյիշեցելոց երկրորդի Տեառն Ստեփաննոսի Կաթուղիկոսին Աղուանից, Բարսեղ Կաթուղիկոսն մեր զեպիսկոպոսս առաքեաց ի յԱղուանսն, և գնացեալ անդ ըստ հրամանի նորին զժողովս արարեալ՝ ձեռնադրեցին Կաթուղիկոս Աղուանից զեղբայր Տեառն Ստեփաննոսի։ Որոյ և յետոյ անարժան երևեալ կոչմանն, լուծանի ի կարգէն և ընդ բանիւք լինի ի նոյնոյ Բարսղէ Կաթուղիկոսէն Հայոց, որպէս պատմէ Մատթէոս պատմիչն։ Ապա ի խառնակմանց ժամանակին մնան անկաթուղիկոս ազգն Աղուանից յամս Լ կամ աւելի և պակաս, մինչև փախճանի Կաթուղիկոսն մեր Բարսեղ, և յաջորդէ զաթոռն նորին Տէր Գրիգոր Տղայ կոչեցեալն՝ եղբայր սրբոյն Ներսիսի Շնորհալւոյն՝ ի ՇԿԵ թուոջն մերում։ Որ և ի նեղութենէ ժամանակին և յանկարգ գնացից տաճկաց հարկեցեալ փոխեաց զԿաթուղիկոսարանս Հայոց ի Հռոմկլայն։ Եւ ի ԻԳ յամի Կաթուղիկոսութեանն սորին (որ էր թուականն մեր ՇՁԸ,) ապա պատահի մի էր յԱղուանս, որոյ անունն էր Գակիկ յազգէ Կաթուղիկոսացն, որոյ ի չափ հասանիլն. գրեն երկիրն Աղուանից ղթուղթս մաղթանաց ի Հռոմկլայն առ մեծ Կաթուղիկոսն Հայոց Տէր Գրիգոր, և ընդ թղթոյն առաքեն զաբեղայ մի, զի ձեռնադրեսցէ զնա Եպիսկոպոս, և ընդ նմա զայլս ևս եպիսկոպոսս եդեալ առաքեսցէ յԱղուանս, զի եկեալ ձեռնադրեսցեն զԳակիկն Կաթուղիկոս Աղուանից, զի մի՛ մնասցէ երկիրն իւրեանց թափուր Կաթուղիկոսի։ Որոց աղաչանացն լուեալ մեծին Գրիգորի, ձեռնադրէ զառաքեալն նոցա Եպիսկոպոս, և հրամայէ Կարնոյ Սահակ եպիսկո-



պոսին, ընդ որում եկեալ զան յԱղուանս ի Գանձակ, և անդ ժողովեալ և զայլս եպիսկոպոսունս ձեռնադրեն զԳակիկն Կաթուղիկոս ըստ հրամանի Տեառն Գրիգորի. որք և զԳակիկն կոչեն Գրիգորիս ըստ անուան Գրիգորիսի թոռանն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ըստ պատմութեանն Կիրակոսի վարդապետին։ Արդ՝ մինչև ցայս վայր ցուցաւ հաւաստապէս, զի յորքան ժամանակս Կաթուղիկոսքն Հայոց նստէին յերկիրս Հայոց ի բնիկ և ի սեպհական յաթոռն Լուսաւորչին, Կաթուղիկոսքն Աղուանից միշտ ընդ ձեռամբ սոցին են լեալք, և հրամանաւ սոցին են ձեռնադրեցեալք։ Իսկ ի փոխիլն ի Հռոմկլայն և ի Սիս Կաթուղիկոսութիւն Հայոց, ոչ է զարմանք, եթէ ապստամբեալք ի նոցունց ինքնագլուխ նստան այնուհետև Կաթուղիկոսքն Աղուանից։ Քանզի և ի Հայս ևս շատք և գլխաւորք վարդապետք ո՛չ այնքան հնազանդ էին ի Սիս նստող Կաթուղիկոսացն որպէս յայտնի երևի ի պատմագրաց, որպէս և ներհակ նոցին յԱղթամար ևս զԿաթուղիկոս նստուցին։ Զի ի շարժիլ հիմանն, ի հարկէ շարժին և շինուածքն՝ որք ի վերայ նորա։ Այս եղև ի ՇԿԵ թուոջն մերում, յորմէ մինչև ի ՊՂ թիւն մեր Կաթուղիկոսքն Հայոց ի Հռոմկլայն և ի Սիս նստան, յորում միջոցի սուրբ Էջմիածին կայր անշքացեալ և ամայի։ Ի Գրիգորէ (որ փոխեաց զաթոռն ի Սիս) մինչև ի Կիրակոս, են ամք 325, և Կաթուղիկոսք մեր որք նստան ի Սիս՝ 29։ Եւ Աղուանիցն՝ զկնի Գակկայ՝ Տէր Բժկէն, Տէր Ստեփաննոս, Տէր Յովանէս, Տէր Ներսէս, Տէր Ստեփաննոս, Տէր Սուքիաս, Տէր Պետրոս, Տէր Կարապետ, Տէր Մատթէոս, Տէր Աթանաս, և Տէր Յովհաննէս, որք յաւուրս ԻԹ Կաթուղիկոսացն մերոց նստան ի յԱղուանըս։ Ապա ի յաւուրս սորա և ի ՊՂ թուոջն մերում ողորմութեամբն Աստուծոյ վերանորոգեցաւ սուրբ Էջմիածին, և աշխարհախումբ հանդիսիւ նստաւ Կաթուղիկոս ի յԷջմիածին Կիրակոս ճգնազգեաց վարդապետն Վիրապեցի։ Աստի ևս մինչև ի ՌՀԸ թիւն մեր՝ յորում նստաւ ի սուրբ Էջմիածին Մովսէս Կաթուղիկոսն Սիւնեցի, թէպէտ նստան ի սուրբ Էջմիածին Կաթողիկոսք յոլովք, սակայն ո՛չ ինչ ունիմք հաւաստի ասելոյ զեղելոցն ընդ նոցին ժամանակօքն վասն Կաթուղիկոսացն Աղուանից։ Քանզի կարի՛ մրրկալիք, աղմկաշատք և ձախորդաբերք էին ժամանակք նոցին յամենայն կողմանէ։ Զի իշխանութիւն և տէրութիւն ազգիս մերոյ իսպառ անհետացեալ էր, և այլազգական տէրութիւնն ևս անկանոն և փոփոխական. զի ո՛չ գոյր հաստատուն և բնիկ թագաւորութիւնն, և իշխօղքն ո՛չ էին թագաւորազունք. այլ աստի և անտի յարուցեալք և զօրացեալք ըմբոստանս հալածէին, և ուժեղն անուժին յաղթեալ՝ յինքն գրաւէր զիշխանութիւնն, որպէս պատմեն Կիրակոս և Թովմա, և այլք պատմիչք։ Նոյնպէս և Կաթուղիկոսքն մեր ևս թէ՛ ի տկարութենէ, թէ՛ ի պահանջ-

մանէ հարկին, և թէ՛ յախտէ իմիքէ յաղթեցեալք ընդ միմեամբք եղանէին, մինչ զհինգ և վեց և այլ աւելի և պակաս Կաթուղիկոսք ի միում ժամանակի նստէին։ Վասն որոյ չէ՛ զարմանք՝ եթէ յայնպիսի ժամանակսն ո՛չ լինիցի խուզումն և վերահասումն այսպիսեաց կանոնաց և կարգաց։ Արդ եթէ մերն այսպէս, ապա զԱղուանիցն դու մտածեա՛ թէ ո՛րպէս իցեն լեալք, որք յայսքան միջոցի նստան, որք են՝ զկնի Տեառն Յովանիսի՝ Տէր Մատթէոս, Տէր Արիստակէս, Տէր Ներսէս, Տէր Շմաւօն, Տէր Թովմա, Տէր Առաքել, Տէր Արիստակէս, Տէր Սարգիս, Տէր Գրիգոր՝ որ ուրանայ զՔրիստոս, Տէր Դաւիթ՝ որ խեղդեցաւ, Տէր Փիլիպպոս, Տէր Յովհաննէս, Տէր Շմաւօն, Տէր Արիստակէս, Տէր Մելքիսեթ, Տէր Սիմէօն, և Տէր Յովանէս։ Իսկ մեր Կաթուղիկոսն յայսմ միջոցիս տե՛ս ի վերդ։ Ի նոցունց միայն Միքայէլ Կաթուղիկոսն մեր որ ի ՌԶ թուոջն մերում նստաւ, եհան զլաւ ռաղամ մի ի Շահ-թահմազէն վասն Կէնճէյու, Պարտայու, և Ախստեւու, Լօռու, Ջակամներու, այլ և Նախիջևանու, Գեղարքունւոյ, Ղարանու, Խոյայ, և Սալմաստու, զի Էջմիածնի լիցին վիճակք, որպէս գրեցաւ ի Բ գլուխն։ Զռաղամն գտցես ցուցակաւն և (        ) նշանաւ։ Ապա ի ՌՀԸ թուոջն մերում՝ յորժամ ի Հոգւոյն սրբոյ յառաջադրի երանելի և հրաշագործն Մովսէս Սիւնեցին և նստի Կաթուղիկոս ի սուրբ Աթոռս Էջմիածին, յորժամ և երկիրս մեր ևս կարգաւորեցեալ էր հաստատուն թագաւորութեամբ Պարսից, յորում թագաւոր իւր աշխարհաշէն և խաղաղասէրն Շահ-Աբաս երկրորդն կոչեցեալ, յորում ժամանակի որպէս թէ ի հիմանէ և նոր ի նորոյ հաստատեցաւ Աթոռս Հայոց սուրբ Էջմիածին, և սկսաւ օր ըստ օրէ գտանել զառաջին կարգն և առաւելապէս պայծառանալ, որպէս ցուցաւ յիւրումն տեղւոջ։ Բայց որովհետև ի չորս ամս հազիւ տևեաց երանելիս ի Հայրապետութեանն, վասն որոյ ըզսուրբ Աթոռս և զազգս և զեկեղեցիս մեր հազիւ կարաց կարգաւորել, որք որպէս թէ բոլորովին և յամենայն կողմանէ զրկեցեալք էին ի բարեկարգութենէ։ Ապա ի վախճանելն երանելւոյս ի ՌՁԲ թուոջն մերում և ի յաջորդելն զԱթոռս սուրբ հարազատի նորին փառաւորելոյն յԱստուծոյ և ի մարդկանէ երջանկին Փիլիպպոսի Աղբակեցւոյ, որոյ և ի լցուցանելն յամենայնի զթերութիւն և զպակասութիւն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի և ազգիս Հայոց, և յամենայնի բարեզարդելն, ձեռն էարկ ապա և զվաղնջուց կանոնն և զկարգադրութիւնն (որք լեալք են ի Հայս և յԱղուանս, որք ի յոլով ժամանակս որպէս թէ անհետացեալք և ի մոռացօնս էին անկեալք) վերանորոգել և հաստատել յորդորմամբ սիրոյ և Աստուածահաճոյ խրատուք։ Քանզի՝ յետ վախճանման Տեառն Մովսիսի, յորժամ ընտրեցաւ երանելիս այս յԱստուծոյ և յազգէս Հայոց ի Հայրապետութիւն,



գրէ զգիրս սիրոյ առ յԱղուանս, ընդ նմին և ծանուցանէ նոցա զմահ Տեառն Մովսիսի, և զընտրելն իւր, և հրաւիրէ զնոսա ի յաթոռս սուրբ ի վայելումն շնորհաբաշխութեան սրբազոյս Միռոնին՝ զոր հանդերձեալ էր օրհնել, և ի տեսութիւն իւրեան։ Յայնմ միջոցի պատահի և մահ նոցին Կաթուղիկոսի Տեառն Յովհաննիսի։ Վասն որոյ ի յոյժ դալն նոցա և ո՛չ զպատասխանի գրելն, վերստին գրէ զգիրս առ նոսա սիրախառն ոճով զմեղադրանս, և զմխիթարանս վասն մահուան Կաթուղիկոսին իւրեանց, ընդ նմին և զկանոնական խրատս տասն գլխով վասն ընտրութեան Կաթուղիկոսացուին՝ թէ ո՛րպէս պարտի գալ, յորում և վերջապէս գրէ՝ զի զայնպիսի արժանաւոր ոք գտեալ՝ առեալ վարդապետօք և իշխանօք եկեսցեն ի սուրբ Աթոռս, զի աստ առեալ զօծումն Կաթուղիկոսութեան, գնասցէ փառօք ի վիճակն իւր ըստ կանոնի և ըստ սովորութեան նախնեացն. զորս և յորդորէ խոյն կանոնի կալ և մնալ անխառոր, և զԿաթուղիկոսունս Էջմիածնի իբրև զպապ և զհայր գիտել, և զԿաթուղիկոսունս իւրեանց իբրև թոռն և զորդի նորին։ Զայս գիրս գրէ երանելին Փիլիպպոս առ յԱղուանս ի ՌՁԳ թուոջն մերում։ (Որոյ օրինակն ահա կայ ի սուրբ Աթոռս, և իսկն առ Յովհաննէս Կաթուղիկոսն ։) Ուստի և Աղուանք ի նոյն ՌՁԳ թուին ըստ հրամանի Տեառն Փիլիպպոսի դնեն Կաթուղիկոս յաթոռն Գանձասար զՏէր Գրիգոր, և յայսմ ամի և ժողովուրդքն Խաչենու և բոլոր վիճակքն Աղուանից արզ գրեն Շահ Սէֆուն, թէ ի բնէ մեք Էջմիածնի եմք վիճակք, և այժմ կամիմք լինել, Գանձասարու Կաթուղիկոսն ի վերայ (մեր) մի՛ իշխեսցէ։ Եւ Շահն հրաման հանէ՝ զի Էջմիածնի լիցին հնազանդք, և նմա տայցեն զնուիրակութիւնս։ Գոյ ահա ի սուրբ Աթոռս այս ռաղամն, զոր գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն, և (        ) համարով՝ գրեցեալ ի թուին տաճկաց ՌԽԴ։ Սոյնպէս և յետ ԺԶ ամի, բոլոր ժողովուրդքն Շիրվանու և Շամախու երկրին արզ առնեն երկրորդ Շահ-Աբասին թէ մեք ի բնէ Էջմիածնի եմք եղեալք վիճակ, և զմեր նուիրակութիւնն նմա եմք տուեալ, նոյնպէս և այժմ կամիմք, և Գանձասարու Կաթուղիկոսն ի վերայ մեր մի՛ իշխեսցէ։ Եւ Շահն զռաղամ գրէ, զի այսպէս լիցի. ի տաճկաց թուին ՌԿ, ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին։ Գի՛տ զայս ռաղամն յերեսն գրեցեալ ցուցակաւն, (        ) համար նշանաւն։ Ապա և սոյն Գրիգորս ի ՌՃԲ թուոջն վախճանի, և հրամանաւն նոյնոյ Տեառն Փիլիպպոսի նստի յաթոռն Աղուանից Տէր Պետրոս ի նոյն թուոջն։ Եւ ի ՌՃԴ թուոջն մերում վախճանի Տէր Փիլիպպոս, և նստի յԱթոռս Հայոց Տէր Յակոբ Ջուղայեցին. և յաւուրս սորա ի ՌՃ-

ԽԴ թուին՝ մինչ սա ի Ղազվին քաղաքն էր 1) . . . . . . . . . . . . ի Ջուղայ, վախճանի Տէր Պետրոս Կաթուղիկոսն Աղուանից, և նստի յԱղուանս Սիմէոն ինքնընծայ և անձնահաճ լրբութեամբ. Թարց հրամանի Տեառն Յակովբայ, և մանաւանդ թողլով զԱթոռն Գանձասար, ժողովեալ զինչս և զարդիւնս աթոռոյն ի գիւղն իւր՝ և անդ նստի յենլով ի յայլազգ իշխող գեղջն իւրոյ. Վասն որոյ և Յակոբ Կաթուղիկոսն բանադրէ զսա, և կոչեալ զԱբեղայ մի յԱղուանից Երեմիա անուն, որում և ի միում նուագի տայ զեպիսկոպոսութիւն և ձեռնադրէ զնա Կաթուղիկոս և առաքէ ի յԱղուանս ի Գանձասար յաթոռն նոցա. Զոր թէպէտ ընդունին բոլոր վիճակքն, սակայն ո՛չ լռէ բանադրեցեալն Սիմէոն, վասն որոյ ո՛չ սակաւ լինի կռիւ և խռովութիւն ի մէջ Երեմիայի և Սիմէոնի, և աղմուկ ի յերկիրն. Եւ Յակոբ Կաթուղիկոսն ևս ո՛չ սակաւ ջանայ և համոզէ ի խաղաղութիւն, մինչ զերկուսն ևս բերէ ի սուրբ Աթոռս Էջմիածին. և յետ բազմիցս խրատելոյն, առնու զձեռագիր ի Սիմէոնէն նզովիւք հանդերձ, զի լռեսցի ի Կաթուղիկոսական գործոց, այս ինքն՝ յեպիսկոպոս ձեռնադրելոյ, և ի Մեռոն օրհնելոյ, այլ և յազգականաց իւրոց մի՛ ևս լինիցի ոք Կաթուղիկոս. Քանզի այս թիւր և անկանոն սովորութիւնս յառաջնմէ և նախնեանս ևս գոյ յԱղուանս և ի Սիս ևս, զի ազգականք Կաթուղիկոսացն յառաջագոյն զինքեանս ի Կաթուղիկոսութիւն որպէս ըղհայրենի ժառանգութիւն համարելով իւրեանց, յորմէ ո՛չ սակաւ ծնանին կռիւք ի յազգականսն, և երկճղութիւն և խռովութիւն ի ժողովուրդսըն. Զայսպիսի գիր մի գրէ Սիմէոնն և կնքէ, և կնքեցուցանէ ևս քանեաց իւրայնոց եպիսկոպոսաց՝ և տայ Յակոբայ Կաթուղիկոսին ի ՌՃԻԶ թուաջըն մերում (որ ահա նոյն գիրն կայ ի սուրբ Աթոռոջս). Եւ թէպէտ այսպէս առնէ Կաթուղիկոսն Յակոբ, սակայն և այսու ո՛չ վերջանայ վէճ և կռիւն նոցա, մինչ մեռանի Յակոբ Կաթուղիկոսն, և յաջորդէ զտեղին Եղիազարն Հռոմկլայեցի ի ՌՃԼ թուոջն մերում. Ապա հասանի բողոքն Սիմէոնին և Երեմիային յականջն Եղիազար Կաթուղիկոսին, և սկսանին զսա զգուեցուցանել և բազմիցս ցաւեցուցանել. Վասն որոյ և սա գրէ քանիցս և յանդիմանէ զՍիմէոնն և հրամայէ լռել. և յոչ լռելն նորա, բերէ զերկոսեանն ևս յԱթոռս Էջմիածին, և առաջի սրբոյ Իջման տեղւոյն բազմաժողով սինհոդոսիւ և սոսկալի երդմամբ հաշտեցուցանէ զերկուսն ընդ միմեանս, և կանոնադրէ զի ի միասին նստիցին ի յաթոռն Գանձասար, զՄեռոն և զեպիսկոպոս ի միասին ձեռնադրեսցեն. և Թարց միմեանց և արտաքոյ աթոռոյն ոչ ձեռնադրութիւն առնիցեն և ո՛չ Մեռոն

1) Ի բնագրին բաց էր թողեալ զայս միջոց, յոր կետադրեցաք:



օրհնիցեն, և զարդիւնս աթոռոյն ի միասին առեալ ի պէտս Աթոռոյն արկցեն ի գործ, և վասն անձնական ախտից և յազգականս իւրեանց մի՛ վատնեսցեն. Եւ զայս այսպիսի կանոնս ի վերայ եդեալ՝ առաքէ զնոսա յԱղուանս. Գրէ և առ ժողովուրդսն, զի եթէ այսոքիւկ կանոնիւքս մնայցեն, ընդունիցեն զնոսա, և թէ մին ի նոցանէ շեղիցի, մի՛ ընդունիցին զնա. Սակայն ևս չեղի և յամառի Սիմէոնն, յորմէ գրեն քանիցս զգիրս գանգատանաց առ Եղիազարն. Վասն որոյ և Եղիազարն գրէ՝ մի՛ ընդունիլ զՍիմէոնն, այլ զԵրեմիայն միայն. (Որք ահա նոյնոց թղթոց օրինակքն Եղիազարու կան յԱթոռոջս.) Նոյնպէս և բոլոր երկիրն Աղուանից ժողով արարեալ կարգաւորք և աշխարհականօք խոտեն և ընկենուն զՍիմէոնն ըստ գրեցելոյն Եղիազարու՝ և ընդունին զԵրեմիայն. Որոց բազմակնիք թուղթն առ Յովհաննէս Կաթուղիկոսն է, և օրինակն ահա գոյ յԱթոռոջըս.

Մեռանի ի ՌՃԽ թուոջն, և յաջորդէ զտեղին Նահապետ Ուրհայեցի ի նոյն թուոջն. Իսկ Սիմէոնն և Երեմիայն մնան հակառակք միմեանց և աղմկեալ երկրօքն, մինչև ի ՌՃԽԹ թուոջն Երեմիայն մեռանի, և ի ՌՃԾ թուոջն Սիմէոնն մեռանի յաւուրս Նահապետ Կաթուղիկոսին մերոյ. Ապա յետ վախճանի երկուցն, հազիւ թէ ըսկսեալ էր զխաղաղութիւն գտանել երկիրն նոցա, Եսայի ոմն անդէն ինքնընծայ լինի և նստի Կաթուղիկոս յԱղուանս ի ՌՃԾԱ թուոջն, Թարց գիտութեան և հրամանի Նահապետ Կաթուղիկոսին մերոյ. Առ յորս գրէ զթուղթս մեղադրանաց Նահապետ Կաթուղիկոսն, և հարկէ գալ ի սուրբ Աթոռս Եսայի Կաթուղիկոս կոչեցելոյն. Եւ նորա թէ՛ ի յանցաւոր գոլոյն, թէ՛ ի յաղքատութեանց և ի պարտուց և ի պակասութեանց իւրեան և Աթոռոյն, և թէ՛ վասն ինքնագլուխ նստելոյն յանընդունակ լինելն՝ ևս ի բազմաց հարկեցեալ խոնարհի և գայ ի սուրբ Էջմիածին ի յոտս Նահապետին, և զինքն ենթադրէ իշխանութեան նորա. Եւ Նահապետն ևս սիրով ընկալեալ վերստին Կաթուղիկոս հաստատէ և առաքէ յԱղուանս, գրելով և զկոնդակս յանձնարարականս և պատուիրականս առ երկիրն, զի ամենեքեան հնազանդութեամբ ընդունիցին զԵսային ի Կաթուղիկոս իւրեանց, և զամենայն արդիւնս Աթոռոյն ի նա հասուսցեն, օգնելով և պարտուցն, ի ՌՃԾԲ թուոջն մերում, (որ ահա նոյն Կոնդակի օրինակն կայ ի սուրբ Աթոռոջս). Բայց որպէս ո՛չ կարէ երկիր աղտաղտին զջուր քաղցր ունիլ, նոյնպէս և երկիրն Աղուանից և Սևագլուխք նոցին զխաղաղութիւն և զմիութիւն պահել. Քանզի ի մեռանելն Նահապետ Կաթուղիկոսին մերոյ ի ՌՃԾԴ թուոջն, մինչ անկաթուղիկոս մնաց սուրբ Աթոռս ԺԶ ամսոց չափ, ի հինգերրորդ ամի Կաթուղիկոսութեան Եսայեայ, Ներսէս

անուն ոմն սեաւգլուխ՝ յազգէ վերոյիշեցեալ բանադրեցեալ Սիմոն կաթուղիկոսին, ի յԱղուանս կաշառօք և խաբէութեամբ օծանի կաթուղիկոս՝ խոշ և սատան Եսայեայ ի ՌՃԾԵ թուոյն մերում։ Սա եհաս յաւուրս մեր, որ և զգլուխս մեր թէ ո՛րքան ցաւեցուցման եղև պատճառ՝ ի տեղւոջն ասասցո՛ւք. և սա իսկ եղև պատճառ ա՛յսքան երկարացուցման ճառիս Աղուանից, որպէս տեսանելոց ես այսուհետև մինչև ի կատարածն զորպիսութիւն սորին։ Տե՛ս դու արդ զքանեօք եղանակօք անհամութիւն և ապօրինաւորութիւն Ներսէսիս այսմիկ. նախ զի ի կենդանութեան Եսայեայ օծանի, երկրորդ թարց հաւանութեան երկրին և հրամանի Էջմիածնի Կաթուղիկոսացն ինքնագլուխ. երրորդ զի ի ներքոյ նզովից և դատապարտութեան գոլով. քանզի նախնին սորա Սիմոն ձեռագիր էր տուեալ Յակոբ Կաթուղիկոսին (որպէս ի վերդ յիշեցաւ), զի յազգէն իւրմէ կաթուղիկոս մի՛ նստիցի վասն ազգականութեան։ Ապա ի գալ առաջիկայ ամին, յորում թիւն մեր եղև ՌՃԾԶ, ընտրեցաւ Կաթուղիկոս Հայոց Աղէքսանդր Ջուղայեցի, և եկեալ նստաւ յԱթոռս Էջմիածին. և իմացաւ զլրբութիւն Ներսիսի ապօրինաւորին, և երկիրն Աղուանից ևս դանդաղական բազմակնիք թղթովք ծանուցանեն սմա։ Վասն որոյ և սա հրամայէ հարկիւ՝ զի երկուքն ևս գայցեն ի յԱթոռս ի յատեան։ Որք և եկին և մեծահանդէս ժողով արարեալ Աղէքսանդրի առաջի սրբոյ Իջման տեղւոյն՝ և ի քննութիւն մտեալ, գտանէ զՆերսէսն ամենայնիւ պարտաւոր և դատապարտելի։ Վասն որոյ և ի հանդիսին հանդերձ բազմօք եպիսկոպոսօք չարաչար բանադրէ զնա և լուծանէ ի կարգէն։ Որ և գրէ ի նոյն ՌՃԾԶ թուոյն զԿոնդակսն կանոնականս. որով և հաստատելով զնախնական ի Լուսաւորչէ անտի զկանոնն (որ ի սրբոյն Գրիգորի փոխանորդացն առնուլին զձեռնադրութիւն Կաթուղիկոսքն Աղուանից) և մեղադրելով զնոսա ի նոյնս վերահաստատէ, և զԵսային նորոգ կաթուղիկոս հաստատէ, և առաքէ առ նոսա գրելով թէ զերկրորդ Բակուր-Ներսէսն բանադրեցաք, և զԵսային կարգեցաք, այսուհետև դմա հնազանդիլ պարտիք և ի Ներսիսէն ի բա՛ց կալ։ Գրէ և յատուկ զթուղթս բանադրանաց (բաց ի յայս կոնդակէս զոր յիշեցաք.) զոր ինքն կնքեալ, կնքեն և գլխաւոր եպիսկոպոսքն Աթոռոյս և երկրիս, և առաքէ յԱղուանս. զոր և Աղուանից եպիսկոպոսքըն կնքեն։ Իսկ ի յոչ դադարիլն Ներսիսին ի չարութենէ, վերստին ի ՌՃԾԷ թուոյն գրէ կոնդակ մի ևս սոյն Աղէքսանդր Կաթուղիկոսն ի յԱղուանս, յորում վերստին բանադրէ զՆերսէսն Նեռն կոչելով, և զընդունողսն նորա, և զձեռնադրեցեալսն ի նմանէ՝ Նեռնականս, և մեղադրէ զառաջնորդս և զիշխանս երկրին՝ որք սիրեն զնա և զկողմն նորա պահեն։ Եւ վերահաստատէ զԵսային մեծաւ պատուիրմամբ։ Յիշէ և զկանոնն նախ-



կին՝ որ ի սրբոյն Գրիգորէ անտի Կաթուղիկոսքն Աղուանից ի յԷջմիածնանիստ Կաթուղիկոսացն առնուլին զկարգն ըստ օրինակի սրբոյն Գրիգորիսի թոռինն Լուսաւորչի։ Այլ և ի սոյն թուոջս սոյն Աղէքսանդր Կաթուղիկոս գրէ զկոնդակ մի ևս յատկապէս ի վերայ Շամախու, Շիրվանու, և շրջակայից թէ՝ թէպէտ դուք բնական սրբոյ Էջմիածնի էք վիճակ և Տէրունի, սակայն առաջին Կաթուղիկոսքն մեր Գանձասարու Աթոռոյն են շնորհեալ վասն աղքատութեան նորին։ Վասն որոյ ի սէր եղբօր մերոյ Եսայի Կաթուղիկոսին, և վասն աղքատութեան և պարտուց Գանձասարու Աթոռոյն զՁեզ և ես շնորհեցի, զի զՁեր արդիւնսն նուիրական Եսայի Կաթուղիկոսին տայցէք, իբր մեզ համարելով հասեալ։ (Եւ այս վերոյիշեցեալ չորեքկին թուղթս առ Յովհաննէս կաթուղիկոսն են, և օրինակքն ահա գոն ի սուրբ Աթոռոջս)։ Այլ և ի ժամանակս յայսմիկ նոյնպէս արզառնեն Հաջ-սուլթան-հիւսէյնին բոլոր Շիրվանու և Շամախու ժողովուրդքն թէ՝ մեք ի բնէ Էջմիածնի եմք լեալք թէմ, և զնուիրակութիւնս մեր նորին Կաթուղիկոսացն եմք տուեալ, Գանձասարու կաթուղիկոսն ի վերայ մեր մի՛ իշխեսցէ։ Եւ Շահն ևս Ռաղամ գրէ սաստիկ հրամանաւ զի այսպէս լիցի, ի ՌՃԻԴ թուին տաճկաց. զոր դոցես յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ՄԿԳ համար նշանաւն։ Ապա ի ՌՃԿԳ թուոյն մերում վախճանի Աղէքսանդր Կաթուղիկոսն և յաջորդէ զԱթոռս սուրբ Տէր Աստուածատուրն Համատանցի։ Եւ Ներսէսն մնայ բանադրեցեալ և անզեղջ։ Իսկ և Եսային թէ ի խառնակմանց ժամանակին, և թէ՛ ի բարձրավզութենէ, ո՛չ գայ երկար միջոցաւ առ Աստուածատուր Կաթուղիկոսն մեր ի տեսութիւն (որպէս և սովորութիւն էր. զի ի նոր նստիլ Կաթուղիկոսին Էջմիածնի, Աղուանից կաթուղիկոսն գայր ի շնորհաւորել և ի տեսութիւն. և մանաւանդ սմա շատ հարկաւոր էր և պարտ գալ, մտածելով զերախտիսն Աղէքսանդր Կաթուղիկոսին, և մանաւանդ ներհակն իւր Ներսէսն կայր իսկ հակառակ ինքեան։ Վասն որոյ և Աստուածատուր Կաթուղիկոսն մեր ևս բարկացեալ ի չգալն նորա, վերստին Տէրունի առնէ զՇամախի, զՇիրվան, զՇաքի, և զշրջակայսն սոցա, և յինքն գրաւէ որպէս յառաջն լեալ էր. և Աղէքսանդր Կաթուղիկոսն Գանձասարու էր շնորհեալ որպէս ի վերդ յիշեցաւ։ Զորս և Աստուածատուրս վերստին զաւթէ, և ինքն առաքէ առ նոսա նուիրակ և առաջնորդ հանդերձ սրբով Մեռոնաւ։ Որպէս ի մերում ժամանակի ի ՌՄԺԴ թուոջս ի Շամախեցւոց քանեայց հնագոյնից փրանց լուաք, որք այնու ժամանակաւն լեալ՝ տեսեալ իսկ էին զնուիրակն և զառաջնորդն Շամախու ի սրբոյ Էջմիածնայ գնացեալ հանդերձ մեռոնիւ։ Եւ Տէր Զաքարիայ Աւագ քահանայն Շամախու ինքնին իւրով բերանովն պատմեաց մեզ թէ՝ ես զերկու աստի-

ճանն իմ ի Էջմիածնի Նուիրակէն առի՝ որ Առաջնորդ էր մեզ)։ Ապա ի ՌՃԿԸ Թուոջն մերում՝ Եսայի Կաթուղիկոսն խոնարհեալ և մանաւանդ հարկեցեալ իսկ յաղքատութենէ՝ գայ ի սուրբ աթոռս ի յոտս Աստուածատուր Կաթուղիկոսին, և խոստովանելով զյանցանս՝ պատմէ զաղէտս աղքատութեան և զ'ի ներքոյ բազմաց պարտուց անկանիլն. գըթացեալ ի նա Աստուածատուր Կաթուղիկոսին, զկոնդակ մի շնորհէ նմա ի վերայ Շամախու և շրջակայիցն, զի ընկալցին զԵսայի Կաթուղիկոսն, և զնուիրակական արդիւնսն ի նա յանձնեսցեն՝ որպէս Նուիրակի ի սուրբ Էջմիածնէ գնացելոյ։ Սակայն և այսու ո՛չ լինի ընկալեցեալ ի նոցունց Եսային, զի պատասխանեն երկիրն թէ՝ մեք Էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու ո՛չ ունիմք զպարտս։ Ուստի Եսային վերստին հարկեցեալ գայ ի սուրբ Էջմիածին առ Աստուածատուրն խնդրել զօգնութիւն, ի ՌՃՀ Թուոջն մերում։ Ապա և Աստուածատուր Կաթուղիկոսն կրկին գրէ զկոնդակ ի վերայ Շամախու, Շաքու, Ղարալու, և այլոց շրջակայիցն, ծանուցանելով նոցա զկանոնս ի սրբոյն Գրիգորէ անտի, թէ՝ Աղուանից Կաթուղիկոսքն որպէս թոռն և որդի հնազանդ են լեալ Լուսաւորչի փոխանորդացն, և նոքա ևս զնոսա որպէս զորդի ի խնամս են պահեալ՝ և օգնական են լեալ յամենայնի. իսկ երբեմն եթէ ոմանք ապստամբք են գտանեցեալք ի դոցանէ զմէնջ, մեք ևս զխնամս մեր եմք բարձեալ ի դոցանէ։ Որպէս և առ ժամանակս մեր մինչև ցայժմ Եսայի Կաթուղիկոսն հեռացեալ էր ի յորդիութենէ, մեք ևս զհայրական խնամս մեր բառնալով՝ զձեզ Տէրունի արարաք. այժմ որովհետև վերադարձաւ առ մեզ ի հնազանդութիւն, վասն որոյ և մեք վերանորոգեցաք զվաղեմի հայրական սէրս մեր, և զձեզ վերստին շնորհեցաք եղբօր մերոյ Եսայի Կաթուղիկոսիդ. թէպէտ մեր էիք բնական՝ և մեր էք, սակայն մեք մերով կամաւ և յօժարութեամբ դմա շնորհեցաք ի սէր դորին և վասն աղքատութեան Գանձասարու աթոռոյն։ Այսուհետև պարտիք հնազանդիլ և ընդունիլ զԵսայի Կաթուղիկոսդ ձեր. որում ներհակքն՝ մեզ են ներհակք, և այլ այսպիսիք։ Զկոնդակ մի ևս գրէ ի վերայ Կենջայու եկամուտ ժողովրդոց և վաճառականացն (որք պատճառելով թէ՝ ի սուրբ Էջմիածնի թեմէն եմք, զարդիւնս ինչ ո՛չ տային Եսայի Կաթուղիկոսին.) թէ՝ որովհետև ի վիճակս Գանձասարու էք գտանեցեալք ի ներկայումս, զկտակ, զհոգեբաժին, և զայլս այսպիսիս հասս տուք Եսայի Կաթուղիկոսիդ. զի ի դա հասեալն որպէս թէ մեզ է հասեալ։ Զկոնդակ մի ևս ժողովարարութեան ի վերայ Նախիջևանու, Գողթնեաց, Ղափանու, և Թիֆլիզու տայ Եսայի Կաթուղիկոսին, զի ըղկամաւոր ողորմութիւնս տալով օգնեսցեն պարտուց նորին։ Եւ այս վերոյ գրեցեալ չորեքկին կոնդակաց զմիոյ օրինակն միայն առաք, իսկ երիցն ոչ.



որք այժմ առ Յովհաննէս Կաթուղիկոսն են։ Ապա ի ՌՃՀԴ Թուոջն մերում վախճանի Աստուածատուր Կաթուղիկոսն մեր, և Եսայի Կաթուղիկոսն Աղուանից այսպէս ի հնազանդութեան կացեալ, և սա վախճանի ի գալ ամին ի ՌՃՀԵ Թուոջն։ Իսկ բանադրեցեալն Ներսէս, մինչև ցայս վայր մնայր ի ներքոյ կապից և տարագիր աստ և անդ։ Իսկ ի յայսոսիկ ժամանակս կարի վրդովեցաւ երկիրս Արևելեան. զի զօրքն Լեկզեաց եկին առին զՇամախի և զշրջակայ երկիրն, և զԳանձասարու Աթոռն կողոպտեցին։ Ի Ղանդահարու ազգն Աղուանից զերկիրն Խորասանու և զթագաւորանիստ քաղաքն Պարսից առին և աւերեցին։ Ուսուքն 1) զԳիլանու երկիրն առին։ Օսմանցիքն զերկիրս Արարատեան, զՆախիջևան, զԴաւրէժ, մինչև ի Համատան, զԹիֆլիզ, զԿենճէ, և զայլս կողմունսն զայնոսիկ առին։ Եւ այլովք այսպիսիօք յարուցմամբք կայր վրդովեցեալ կողմունքս այսոքիկ։ Եւ ի ՌՃՀԵ Թուոջն մինչ մեռաւ Եսայի Կաթուղիկոսն Աղուանից և երկիրն ևս անկաթուղիկոս մնաց, Ներսէսն այն բանադրեցեալ սկսանի գալ յառաջ և վարել զԿաթուղիկոսութիւն երկրին ո՛չ ինչ խղճահարեցեալ ի բանադրեցեալ գոլոյն, և անհաստատ և վայրենաբարոյ երկիրն Աղուանից ևս ընդունէին ոչ ինչ առնելով զփոյթ։ Իսկ ի սոյն ՌՃՀԵ Թուոջս Նստի և յԱթոռս Էջմիածին Տէր Կարապետն Զէյթունցի, որոյ գոլով ծեր և կարճակեաց, և ժամանակն ևս անձեռնտու, ոչինչ արարեալ զփոյթ ըղՆերսէսն, վախճանի ի ՌՃՀԸ Թուոջն մերում։ Զկնի Կարապետին յաջորդէ զտեղին Տէր Աբրահամ Մշեցին ի ՌՃՀԹ Թուոջն մերում։ Ի ժամանակս սորին Ներսէսն այն գայ ի սուրբ Աթոռս կեղծաւորեալ և չքմեղս համարելով զինքն՝ ոչինչ յայտնէ զյանցիցն իւրոց և ոչ խնդրէ զարձակումն։ Եւ Աբրահամն այս ևս գոլով աղաւնամիտ, հեզահոգի և խղճաբարոյ՝ (թէ և գիտաց ևս զորպիսութենէ նորին) որպէս թէ յանգէտս գնելով զինքն՝ սիրով ընդունի զնա և յետս դարձուցանէ։ Վախճանի և Աբրահամ Կաթուղիկոսն մեր ի ՌՃՁԳ Թուոջն մերում, և յաջորդէ զտեղին Տէր Աբրահամ Կրետացին ի նոյն Թուոջն։ Առ սովաւ ևս գայ նոյն Ներսէսն ի սուրբ Աթոռս նոյնով կերպիւ որպէս յառաջն. և այս Աբրահամն թէպէտ էր խելացի և ահարկու և յամենայնի հանճարեղ, սակայն գտանեցաւ յաւուրս Նատր-շահին (որոյ զպատմութիւն յայլ ուրեք գրեցաք) ընդ որով միշտ զբաղեցեալ գոլով, և թէ չգիտաց ևս զորպիսութիւն Ներսիսին (զի ի Յունաստանէ նոր էր եկեալ և անտեղեակ կողմանցս մերոց), և թէ գիտաց ևս, զանց արար. ի՛նչ և իցէ։ Եւ սա սիրով ընկալեալ զՆերսէսն և վերադարձոյց յերկիրն իւր։ Վախճանի և այս Աբրահամ Կաթուղիկոս ի

1) Գուցէ Ուռուսք կամ Ռուսք։

ՌՃՁԵ Թուոյն, և յաջորդէ զտեղին Տէր Ղազար Ճահկեցին ի ՌՃՁԶ Թուոյն։ Որ էր այր ճոռոմաբան, խեղացի և վրէժխնդիր յանցաւորաց։ Եւ յերկրորդ ամի հայրապետութեան ի ՌՃՁԸ Թուոյն ևս եկն նոյն Ներսէսն նոյնով կեղծաւորեալ կերպիւ ի սուրբ Աթոռս, կարծելով թէ և ըղձա խաբէ և զերծանի։ Սակայն Ղազարս այս հնարագիտութեամբն իւրով և մանաւանդ միջնորդութեամբ Շամախեցի Յակոբ վարդապետին (որ յետոյ եղև Կաթուղիկոս) որսացեալ զՆերսէսն՝ եա խոստովանիլ ինքնին զյանցանս իւր. որ և ակամայ կամօք յայտնեաց զբանադրեցեալ գոլն իւր և զայնքան ժամանակ անփոյթ առնլով պաշտելն զկարգն, և ապա խնդրել զարձակումն։ Վասն որոյ և Ղազար Կաթուղիկոսն ևս յետ սիրով մեղադրելոյն և յուսադրելոյն, արձակէ զնա ի կապիցն. և առնու ի նմանէ զձեռագիր նզովիւք և հաստատուն ուխտիւք, զի մի՛ ևս ապստամբեսցի յԱթոռոյս Էջմիածնի, և երկրին իւրոյ պատուիրեսցէ և ինքն ևս կտակ աւանդեսցէ, զի զկնի իւր Թարց հրամանի Էջմիածնի Կաթուղիկոսացն և մանաւանդ վասն ազգականութեան իւրոյ զոք Կաթուղիկոս մի՛ դնիցեն յԱղուանս։ Եւ այսու ոճով զկոնդակ մի ևս գրէ երկրին Աղուանից, կնքէ ինքն, և կնքեցուցանէ գլխաւոր եպիսկոպոսաց սրբոյ Աթոռոյս, կնքեցուցանէ և նոյնոյ Ներսիսին և ընդ նմա եղելոց եպիսկոպոսաց, և առաքէ ընդ Ներսիսին ի յԱղուանս, գրելով և հարկելով, զի և յերկրոջն եղեալ եպիսկոպոսունքն և իշխանքն ևս կնքեսցեն, և հաստատուն պահեսցեն զայն ուխտ և կանոն։ (Այժմ Ներսիսի տուեալ ձեռագիրն ահա գոյ ի սուրբ Աթոռոյս։) Իսկ զԿոնդակն զոր տարաւ ի յերկիրն, ոչ գիտացաք թէ ունի՞ն՝ եթէ անյայտ արարին։ Ապա յօրէն յայնմանէ որպէս թէ եղև օրինաւոր կաթուղիկոս Ներսէսս այս և մնաց ի հնազանդութեան սրբոյ Աթոռոյս, և տևեաց ևս ի ժամանակս Ղազարու, Մինասայ, Աղէքսանդրի, և Յակոբայ Շամախեցւոյն (որ ի վերն յիշեցաւ՝) մինչև ի ՌՄԺԲ Թիւս մեր, յորում վախճանի հազիւ թէ։ Արդ յայսմ Թուոյս և մինչ կենդանի էր յԱթոռոյս Շամախեցի Յակոբ Կաթուղիկոսն, յորժամ հասանի մահուան հիւանդութիւն Ներսիսիս այսմիկ, յեղբօրորդոց սորին մանկագոյն աբեղայ մի Իսրայէլ անուն (զոր ի տղայութեան էր եպիսկոպոս արարեալ Ներսէսն այսու մտօք) օծանի կաթուղիկոս Աղուանից ի Կէնճէ (յենլով և յուսալով ի Շահ-վէրտի կոչեցեալ խանն տեղւոյն և յոմանս անձնահաճ և կամակոր մելիք կոչեցեալս, որք ընդ իւրեան տարագրեցեալք էին յերկրէն իւրեանց ի Կէնճէ), Թարց գիտութեան Յակոբայ Կաթուղիկոսին, և առանց համակամութեան և գիտութեան երկրին Աղուանից։ Արդ զի՞նչ կարծես դու զմանէ և զևղճմտանաց սորին՝ այս ինքն զԻսրայէլս, զի նախապէս ազգականն իւր Սիմէոն Կաթուղիկոսն (որ ի վերն յիշեցաւ) տու-



եալ ձեռագիր նզովիւք և Ներսէսն զնոյն երկրորդեալ վասն ազգականաց չլինիլ կաթուղիկոս, և Թարց հրամանի մերոց Կաթուղիկոսաց ոչ առնել։ Եւ այս Իսրայէլս զայս ամենեցուն անփոյթ արարեալ առնէ զայս անկարգութիւն։ Արդ յորժամ ձեռնադրի այս Իսրայէլս Կաթուղիկոս, և Ներսէսն մեռանի ի նոյն յաւուրսն. գրեն ապա զԹուղթս աղերսանաց առ Յակոբ Կաթուղիկոսն՝ ինքն Իսրայէլն և իւր համախոհ մելիքքն, զի ընկալցի զԻսրայէլն, և զյանձնարարական և զպատուիրանական կոնդակս գրեսցէ յերկիրն Աղուանից ի յընդունիլ զնա։ Իսկ և Յակոբ Կաթուղիկոսն մինչ և ինքն իսկ էր միջնորդ լեալ Ներսիսի արձակմանն և ձեռագիր տալոյն առ Ղազար Կաթուղիկոսին (որպէս ի վերն յիշեցաք)՝ գրէ առ նոսա զԹուղթս մեղադրականս և յանդիմանականս, յիշեցուցանելով նոցա զՆերսիսի ուխտն և զձեռագիրն, և զազգական Կաթուղիկոս չառնելն, և զայլս ըստ իմաստնաշատ մտաց իւրոց, և ցուցանէ զԿաթուղիկոս անուանեալն և զընդունողսն յանցաւորս և պարտաւորս։ (Որոյ գրեալ կոնդակին օրինակն ահա գոյ ի սուրբ Աթոռոյս։) Եւ ինքն Յակոբ Կաթուղիկոսն յետ գրելոյն առ նոսա զգիրս զայս, ի նոյն ՌՄԺԲ Թուոյն վախճանի։ Զկնի որոյ յաջորդէ մերս նուաստութիւն ի նոյն Թուոյն։ Սոյնպէս և առ մեզ գրեցին անյապաղ նոյն Իսրայէլ կոչեցեալն և իւր ընտրողքն ի Կէնճէյու, իբր զի ընդունիցիմք զնա, և գրեցեմք ևս ի վերայ բոլոր վիճակին ի յընդունիլ։ Եւ մեք ևս գրեցաք ըստ գրեցելոյ Յակոբայ Կաթուղիկոսին զմեղադրանս յիշեցուցանելով նոցա զնախնեաւանդ կանոնն և զյանցաւորութիւնն նոցա, և հարկեցաք՝ զի զԻսրայէլն առաքեսցեն առ մեզ, զի եթէ բոլոր վիճակն կամի զնա ըստ նախնեացն կարգի, Կաթուղիկոս արարեալ առաքեսցուք զնա։ Բայց գրեցին նոքա ևս քանիցս առ մեզ ըստ նոյնոյ մտացն՝ ժամադրութեամբ խաբելով զմեզ թէ՝ յայս ինչ ժամանակ առաքելոց եմք, և ինքն ևս թէ՝ գալոց եմ, դու գրեա ի վիճակս մեր ի յընդունիլ. սոյնպէս և Շահվէրտի կոչեցեալ խանն Կէնճէյու գրէր մեզ վասն Իսրայէլին, նոյնպէս և մեք գրեցաք նոցա ըստ նոյնոյ մտաց մերոց ի գալ և ապա առնուլ ըղխնդրելին. սակայն ոչ նա եկն, և ո՛չ մեք տուաք։ Ապա ի սոյն ՌՄԺԲ Թուոյս, մինչ այսպէս Թղթոց երթևեկութիւնք լինէր ի մէջ մեր և Կէնճէցւոցն, ի Գանձասարու կուսէն, Մելիքք ոմանք և այլք մարդիկք աշխարհականք և վարդապետք մինչև Ծ հոգիք, հանդերձ բազմակնիք Թղթով և գրեամբք բազմօք առ մեզ և Հիւսէյն-ալի կոչեցեալ խանն մեր որ նստիւր յԵրևան, նա և զրով և մարդով Փանահ խան կոչեցելոյն երկրին Խամսայու, առեալ զոմն վարդապետ Յովհաննէս անուամբ եկին ի սուրբ Աթոռս առ մեզ, իբր զի զնոյն Յովհաննէս վարդապետն ձեռնադրեսցեմք կաթուղիկոս Աղուանից, ասելով թէ՝ Իսրայէլն ինքնագլուխ և Թարց մե-

րոյ գիտութեան եղև Կաթուղիկոս, և ի յաթոռն Գանձասար եւ ո՛չ
գայ, վասն որոյ մեք զնա ո՛չ կամիմք։ Որք և երկրաւ վարդապետօք և ժո-
ղովրդօք բազմակնիք թուղթ եւ ունէին գրեցեալ հաստատուն ուխտիւ
թէ՝ ով որ զԻսրայէլն ընդունի, նզովեալ եղիցի։ Մեք զՅովհաննէսն կա-
միմք և ընդունիմք։ Որք թէ ո՛րքան ցաւեցուցին զմեզ տաճկօք և Հայովք
յաւուրս քանիցս, ո՛չ եւ երկարեմք. միայն թէ՝ խնկլրանէ մինչև ի վերջն
մեր պատասխանին այս եղև նոցա թէ՝ ահա Իսրայէլն օծեալ Կաթուղիկոս
նախ քան զգա նստի ի Կէնճէ, մի՛ առնէք զայդ անկարգութիւն, և մի՛
արկանէք զայդ երկճղութիւն ի յերկիրդ ձեր, և զայլս այսպիսիս։ Ահա՛ ի
Կէնճէյու եւ այսպէս գրեն մեզ՝ թէ մեք զԻսրայէլն կամիմք և ո՛չ զայլ ոք.
ցուցաք եւ գրեանս նոցա, և թէ ահա գրեն մեզ եւ թէ՝ զԻսրայէլն ա-
ռաքեսջիք եմք առ քեզ ։ Ուրեմն համբերեցէ՛ք և դուք յաւուրս քանիս,
մեք եւ գրեսցուք ի Կէնճէ, զի գայցէ Իսրայէլն, և հաշտեցուսցուք զձեզ,
և զնա Կաթուղիկոս հաստատել տացուք ձեզ , զի միաբանութեամբ հո-
վուեսցէ զձեզ . և զայլս այսպիսիս յորդորականս համոզիչ բանս թէպէտ
ասացաք նոցա, բայց ո՛չինչ եղև օգուտ, և ո՛չ լինաւ լուան. այլ ասացին
թէ՝ եթէ դու ո՛չ ձեռնադրեցես զՅովհաննէս վարդապետս մեր Կաթուղի-
կոս մեզ , մեք տարեալ ի Գանձասար ձեռնադրեսցուք զսա մերովք եպիսկո-
պոսօք։ Որոց թէպէտ և մեք ասացաք բազմիցս թէ՝ մի՛ առնիցէք զայդ, զի
յետոյ մեծ խռովութեան պատճառ լինիք. և թէ աստ ո՛չ մնայք, գոնէ
գնացեալ անդ համբերեցէ՛ք մինչև Իսրայէլն եկեսցէ առ մեզ , մեք
զբանն ի խաղաղութիւն վերջացուսցուք։ Նոյնպէս և Յովհաննիսին ընտ-
րեցելոյն նոցա պատուիրեցաք հարկիւ թէ՝ մի՛ դուցէ ձեռնադրիցիս, որ
յետոյ զմեծ գզչումն կրիցես ես։ Սակայն ո՛չ եղև նոցա լսելի պատուէրն
մեր, այլ ի գնալն ի մէնջ ի Գանձասար, ձեռնադրեն և զՅովհաննէսն Կա-
թուղիկոս ի սոյն թուոջս։ Ապա այնուհետև անկաւ մեծ կռիւ և երկփե-
ռեկտումն ի յերկիրն Աղուանից. Զի ի Կէնճէյու Հայքն և իւրեանց
Շահվերտի կոչեցեալ խանն ի մի կողմն, և Խամսայու և Գանձասարու
Հայքն և Փանահի տղայ Իպրահիմ-խալիլ կոչեցեալ խանն իւրեանց ի մի
կողմն, տես դու այսուհետև և զմեր ցաւն թէ՝ զի՛նչ և զորքանս կրեմք
ի յերկաքանչիւր կողմանցն. զի յերկուց կողմանցն եւ անդադար մարդ
առաքեն և գիրս գրեն մեզ , խանքն և Հայքն ի Կէնճէյու գրեն թէ՝ զմեր
կաթուղիկոսն ընկա՛լ, և վասն սորա գրեա՛ ի վիճակս Աղուանից, զի ըն-
դունիցին զսա, և մի՛ զՅովհաննէսն։ Զի եթէ զմերս խոտեցեր, և զՅովհան-
նէսն ընկալար, գիտեա՛, զի բազմաց արեանց հեղման պատճառ լինիս։
Սոյնպէս և ի Խամսայու և ի Գանձասարու գրեն, թէ զՅովհաննէս կա-
թուղիկոս մեր ընկալ և վասն սորա գրեա. Նոյնպէս և առ Հիւսէին-ալի



կոչեցեալ Խանն մեր գրեն թէ՝ հարկեսցես քում Խալիֆային 1), զի զմերն ըն-
կալցի։ Իսկ միջասահման տեղեաց ժողովուրդքն նոցին, այս ինքն Համա-
խու, Շիրվանու, Դարբանդու և այլոց տեղեաց ժողովուրդքն գրէին մեզ աղա-
չանօք թէ, զորն կամիս՝ հաստատեա՛, միայն թէ՝ զմիաբանութեան հնարս
գիտ, զի գիտասցուք թէ՝ որում հնազանդիլ և հետևիլ պարտ է։ (Որոց
իւրաքանչիւրոց գրեցեալ գրեանքն կան ի սուրբ Աթոռս։) Արդ զգլխացա-
ւութիւնս զորս կրեցաք մեք յիւրաքանչիւրոց կողմանցն՝ ոչ կարեմք ի
գիր արկանել ։ Եւ մեք այսպէս պատասխանեցաք միշտ իւրաքանչիւր կող-
մանցն՝ տաճկացն գրելով թէ՝ այս ոչ է ձեր գործ, դուք մի՛ ձեռնամուխ ի
յայս, և Հայոցն գրելով՝ թէ երկուք ընտրեցեալքն եւ ապօրինաւորք են
և անընդունակք։ Եթէ կամիք զխաղաղութիւնն ձեր, զերկուսն եւ առա-
քեցէ՛ք առ մեզ , զի և մեք զորն կամի Աստուած՝ զնա հաստատեալ՝ ի
ձեզ դարձուսցուք։ Տևեաց այս կենամաշ խռովութիւնս յամն երիս։ Ապա
ի ՌՄԺԴ թուոջն, Խամսայու Իպրահիմ-խալիլ խանն և բոլոր ժողովուրդ-
քըն բազմակնիք թղթով և գրեամբք՝ և քանեօք եպիսկոպոսօք և իշխա-
նօք վերստին զՅովհաննէս կաթուղիկոս կոչեցեալն իւրեանց առաքեցին
առ մեզ , գրելով՝ թէ կամիս զՅովհաննէսդ հաստատեա՛, կամիս զԻսրայէլն,
և զայլ ոք զոր և կամիցիս, մեզ ընդունելի է, միայն թէ՝ խնդրեմք մեք ի
քէն, զի ով որ և իցէ՝ ի յաթոռս մեր Գանձասար նստիցի և զսա հաս-
տատուն պահեսցէ. զի յայլ տեղիս նստող Կաթուղիկոսն ո՛չ է մեզ ըն-
դունելի։ Եւ մինչ այս այսպէս եղև, և մեք ասացաք նոցա թէ՝ որովհետև
մարտն ձեր վասն աթոռոյն է և ո՛չ կաթուղիկոսի, ի բաց կացէք դուք
ի Յովհաննիսէդ, մեք զԿաթուղիկոս մի յաթոռդ ձեր հաստատեսցուք։ Որք
և յանձն առին՝ թէ երկրին և թէ Յովհաննէսն։ Ապա և մեք հրաժարե-
ցուցաք զՅովհաննէսն ի կոչմանէն, և պահեցաք առ մեզ ։ Եւ գրեցաք ի
Կէնճէ առ Շահվերտի խանն և առ Հայսն, թէ՝ ահա մեք զՅովհաննէսն
հրաժարեցուցաք և առ մեզ ունիմք, դուք զԻսրայէլն եթէ կամիք՝ զի
հաստատեսցի, առաքեցէ՛ք առ մեզ . և մեք ըստ օրինի և ըստ նախնական
աւանդութեան Կաթուղիկոս հաստատեալ առաքեսցուք կոնդակաւ ի
Գանձասար. եթէ կամի՝ զՅովհաննէսն եւ ընդ ինքեան տանիցէ ի ծառա-
յութիւն իւրեան, և թէ ոչ՝ առ մեզ պահեմք զՅովհաննէսն։ Քանզի երկի-
րըն զԿաթուղիկոսն ի յաթոռն նստիլ կամին։ Զսոյն ոճ գրեցաք և ի
Թիֆլիզ Հերակլ Արքային, զի ստիպեսցէ Շահվերտի խանին՝ ի յառաքել
զԻսրայէլն. և հարկեցաք եւ Թիֆլիզու առաջնորդ Զաքարիա վարդապե-
տին ի գնալ ի Կէնճէ, և ի ծանուցանել զմիտս մեր խանին, Հայոց և Իս-

1) Խալիֆա, ըստ մահմ. յաջորդ (Մահմէտի), 2, ինքնակալ։

րայէլին, և ի բերել զնա։ Որ և ըստ գրեցելոյ մերոյ գնացեալ Զաքարիայ վարդապետին հանդերձ մարդով և գրով Հերակլ արքային ի Կէնճէ, և շատ ջանացեալ, և յետ բազմաց բանակռուութեանց և խօսից, ոչ եկն Իսրայէլն յաթոռս, այլ մանաւանդ գլրութիւնն ի ծայր հասուցեալ՝ գրեցոյց Կէնճեցւոցն և խանին իւրոյ առ մեզ, թէ Կաթուղիկոս մի դու ես՝ Կաթուղիկոս մի սա, ընդէ՞ր պարտի սա ի յոտս քոյ գալ և թէ զՅովհաննէսըն մեք բանիւ նմք արարեալ, կործ զգա, միթէ՞ կաթուղիկոս էր դա, զոր հրաժարեցուցանել գրես մեզ. այլ մի՛ ևս երկարացուցաներ և գրեր մեզ։ Ահա գրեցաք քեզ։ Եւ զայս այսպիսի ամբարտաւանական գրոյս գրեալ էին մեզ թէ խանն և թէ Իսրայէլեանքն։ Ցայս յերկս ամս Ներելոյն մերոյ անզգամութեան նոցին, զայսպիսի պտուղս կթեցաք ի նոցանէ։ Եւ Զաքարիայ վարդապետն դատարկ դարձաւ առ մեզ պատմելով զկրութիւն և զխստասրտութիւն Իսրայէլին։ Ապա և մեք ի պահանջմանէ հարկին, և ըստ իրաւանցն Աստուծոյ, ի սուրբ և յԱստուածակիրտ յԱթոռոջս բազմաժողով հանդիսիւ, և բազմօք Արքեպիսկոպոսօք զԻսրայէլն լուծաք ի կարգէն, և նզովեցաք ըստ արժանեացն։ Եւ հրաւիրեցաք զՅովհաննէսն ի Պատարագ մատուցանել, և յեկեղեցին ի յաւանդատանէն եպիսկոպոսական զգեստիւք՝ բերեալ առաջի Աւագ խորանին ի ծունկս չոքեցուցաք բացագլուխ, առեալ զնափորտ ի վերայ մեր՝ ընթերցաք ի Մատթէոսեան Աւետարանէն ի ԻԱ գլխոյն, ի ԻԲ համարէն (զառակն Քրիստոսի որ ասէ թէ՝ Բայց զիա՞րդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք. մատուցեալ առ յառաջինն, ասէ. երթ այսօր գործեա յայգւոջ.) մինչև ցայն տեղին թէ (յոր վերայ անկցի, հոսեսցէ զնա)։ Ապա արկեալ զնշանն սուրբ ի պարանոցն, կախեալ զԿոնդակն ի գօտւոյն յաջ կուսէ, և եդաք զգաւազանն ի ձեռն, և ասացաք զԴժողովնեայն, տալով վերստին զիշխանութիւն և զպատիւ Կաթուղիկոսական ի լուր ամենեցուն։ Եւ ապա մատոյց զՊատարագն սուրբ Հայրապետական պատուով։ Ցիշեցուցաք և զանունն ի պատարագօղն զենի անուան մերոյ, որքան առ մեզ եկաց։ Որովհետև նախապէս օծեալ էր, վասն որոյ խորշեցեալ ի կրկնելոյ, այսպէս արարաք։ Զի յորմէ առաք և զձեռագիր հաստատուն կնքով իւրով, և վկայութեամբ բազմաց, զի մի՛ ևս ապստամբեսցի ի յԷջմիածնական Կաթուղիկոսացն, յորում գրեցուցաք և զայս կանոնական բանս. որ ահա գոյ առ մեզ ի սուրբ Աթոռոջս։ Զոր երկուս գրեցուցեալ, զմին եդաք Զաքարիայ վարդապետին (զոր ընդ նմա յղեցաք), զի և իւրեանց վիճակաց եպիսկոպոսացն և երիցու արանց կնքեցուսցեն և առ մեզ առաքեսցեն։ Ապա և գրեցաք զկոնդակ ի վերայ բոլոր երկրին Աղուանից վիճակին Գանձասարու, յորում և ծանուցանելով զնախնական կանոնն ի սրբոյն



Թադէոսէ առաքելոյն, և ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ մինչև ցառ մեզ հաստատեալ բազմօք պատմագրօք և վկայութեամբ, զի Կաթուղիկոսքն Աղուանից ընդ ձեռամբ և հրամանաւ Լուսաւորչի փոխանորդ կաթուղիկոսացն են լեալ։ Գրեցաք, զի և ինքեանց գիտասցեն՝ այսու կանոնաւ մնասցեն այսուհետև, և պատուէր ետ, զի և զՅովհաննէսն գիտասցեն իւրեանց Կաթուղիկոս այսուհետև, և զԻսրայէլն ամենեքին խոտեսցեն, և մի՛ ընդունեսցին։ Զի լուծաք զնա ի Կաթուղիկոսական կոչմանէն և ի պատւոյն, մնայելով ի յեպիսկոպոսական կարգն միայն՝ զոր ոչ առաք. (որ ահա սոյնոյ կոնդակիս օրինակն գոյ ի սուրբ Աթոռոջս)։ Ընդ սմին գրեցաք և զայս թուղթս ոմանս յանձնարարականս և պատուիրականս ի յերկիրն Աղուանից։ Եւ այսպէս մեծաւ փառօք և հանդիսաւորութեամբ և ըստ արժանեացն խիլայիւք, առաքեցաք յաթոռն իւր ի Գանձասար, դնելով ընդ նմա և զվերոյ գրեցեալ Զաքարիա վարդապետն, զի ի յաթոռն հասուցեալ նստուսցէ, և զպատուէրս և զկանոնադրութիւնս մեր և զուխտադրութիւսըն Յովհաննէս կաթուղիկոսին իւրեանց ծանուսցէ բերանով ժողովրդեանն երկրին. և զմիւս ձեռագիրն՝ զոր տարան ընդ ինքեանս՝ կնքեցուցեալ բերցէ առ մեզ։ Եղև այս գործս ի ՌՄԺԴ թուոջն մերում, և ի Դեկտեմբերի քսան և հինգն։

## Գլ. ԺԱ.

Վասն Աղուանից կաթուղիկոսութեանն, և նորին սրբութեանն։

Զայսմանէ ճառեցաք ի վերդ ի Ժ գլուխն, թէ ո՛րպէս սկսաւ և յո՛ւր պատճառէ և զգլխաւորութենէ նորին. անդ տեսցես։ Իսկ աստանօր ոչ ևս վերակրկնելով զնոյնն, այլ զմնացեալսն շուրջ զայնու նիւթովն ի լոյս բերելով՝ ի մերս ժամանակ հասուցից։

Արդ մինչ խափանեցաւ Հայրապետութիւն Հայոց ի սրբոյ Աթոռոյս Էջմիածնէ ի հինգ հարիւր վաթսուն և վեց թուականութեանս մերում ի յաւուրս Գրիգոր Կաթուղիկոսին, և փոխեցաւ ի Հռոմկլայն (որպէս ի վերն ասացաք ի Ժ գլուխն ամենայնիւք պարագայիւքն). ապա և առ նովաւ հաստատեցաւ Կաթուղիկոսութիւնն Աղթամարու, կղզոյն ձեռամբ և հեղինակութեամբ Դաւիթ անուն վարդապետի ումեմն։ Անկեալ այնուհետև ընդ միմեանս երկոքին Կաթուղիկոսութիւնքըն, Հռոմկլայոյն և Աղթամարայն. նա զնորին ընդունողսն, զհետևողսն, և զձեռնադրեցեալսն բանիւ առնէր և խոտէր, նա զնորինն, մինչ զմիմեանս ևս բանիւ արարին քանիցս անգամ։ Տե՛ս դու յայսմ միջոցի զորպէսն

Առաջնորդաց, վարդապետաց, քահանայից, և խղճալւոյ հասարակ ժողովրդոցն մերոց, թէ ո՛րպիսաբար կեան լիրքն և անկարգքն որպէս թէ բացարձակ գտեալ զճանապարհ աներկիւղ և անկասկած, զինչ և կամին առնեն։ Ամօթխածքն և երկիւղածքն հեղձամղձուկ լեալ՝ յոգւոց հանելով մաշին և ի լռութեան նստին։ Եւ շատք ևս ի գլխաւորաց և երևելի վարդապետաց ո՛չ զմինն ի նոցանէ ընդունէին և հետևէին, որպէս Գոշ Մխիթարն, Վանականն, Տաթևացւոյ դպրատունն, և այլք շատք։ Յաւուրսն յայնոսիկ որովհետև և ազգն մեր ըստ մեծի մասին փոխեցան ի Հռոմկլայն և ի Կիլիկէ, և ի յիշխանութիւնս Յունաց, շատքն ի նոցանէ պղալեցին զդաւանութիւնս և զկրօնս Հայաստանեայցս Եկեղեցւոյ, հետևելով Քաղկեդոնիկ աղանդոյն Յունաց. Նոյնպէս և շատք ի Կաթուղիկոսացն անդ նըստողաց յԱղթարմայութիւն մոլորեցան։ Զանազան և պէսպէս հերձուածք և թիւրութիւնք ծնանէին յազգի մերում ի դաւանութիւնս և յարարողութիւնս եկեղեցւոյ, ի պսակս, ի ձեռնադրութիւնս եկեղեցականաց, և այլ այսպիսիք անկարգութիւնք յոլովք, որպէս պատմէ Կիրակոս պատմագիրն։ Վասն որոյ և Կոստանդին Կաթուղիկոսն գրէ զԹուղթս կանոնականս քանեօք գլխօք և առաքէ յամենայն երկիրս Հայոց ի ՈՂԶ թուականիս մերում։

Արդ Կաթուղիկոսքն Սսայ այսպէս տկարացեալ և կարճալեզու յազգս և յերկիրս Հայոց, իսկ Աղթամարու կաթուղիկոսքն ամենևին օտար, խոտեցեալ և անընդունակք յազգէս մերմէ։ Եւ այսպէս մնացեալ երբեմն լաւ, երբեմն միջակ, և երբեմն ի վատ անդր, մինչև ի յութն հարիւր իննսուն թիւն մեր, յորում վերանորոգի Հայրապետութիւն Հայոց ի սուրբ Էջմիածին ի բնիկ Հայրապետարանն, և նստի Հայրապետ Հայոց Տէր Կիրակոս Ճգնաւորն ի յութն հարիւր իննսուն թըւոջն մերում, որպէս ասացաք յայլուր երկարապէս։ Եւ մնան նոքա, այս ինքն ի Սիս և յԱղթամար նստող կոչեցեալ կաթուղիկոսքն ի յապստամբութեան իւրեանց և բանադրեցեալք յիւրաց։ Ապա ի նստիլ Տեառն Կիրակոսի ի սուրբ Էջմիածին՝ բառնայ զամենայն անէծսն և արձակէ զնոսա ի բանադրանացն, և առհասարակ օրհնութեան արժանացուցանէ զերկուս կողմանսն ևս ըստ Թովմայի պատմագրին։ Իսկ ի Կիրակոս Կաթուղիկոսէն մերմէ մինչև ի Միքայէլ Կաթուղիկոսն մեր զոչ ինչ հարկաւոր գրելիս գտաք զհաւաստիս վասն Աղթամարու կաթուղիկոսացն՝ թէ որպէս և յինչ կացութեան են լեալք։ Բայց ի խառնակմանց երկրիս և ի տարագրութենէ Կաթուղիկոսացն մերոց՝ համարձակութիւն գըտեալ նոցա երբեմն երբեմն ոտն ածէին ի վիճակս սրբոյ Աթոռոյս որպէս ասացաւ ի Բ և ի Ժ գլուխս։ Քանզի Գրիգոր Կաթուղիկոսն նոցին ի ՌԻԳ թը-



ւոջն մերում փարման բերէ ի յՕսմանցւոց թագաւորէն վասն Վանայ, Համդայ, Արճիշու, Խլաթու, Մշու, և Բաղէշու, և այլոց մերձակայից, թէ՝ այսոքիկ ի բնէ մեր են վիճակք. այլ սևագլուխք զաւթեալ են և ես մընամ ի ներքոյ ձէէէ 1)։ Այսպէս արարեալ, փարման բերէ ի Տաճկաց ՋՁԳ թուին։ Յետոյ մեր Կաթուղիկոսքն գիտացեալք՝ արզ առնեն թագաւորին, և զԳրիգոր Կաթուղիկոսն Աղթամարու յետս ընկրկեն, և զփարման նորին առնուն ի ձեռացն։ Որ աճա՛ գոյ ի սուրբ Աթոռս. զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ՄԻԹ) համարովն։ Նոյնպէս և զկնի ժամանակաց ի ՌՃԴ թուոջն մերում մինչ մեռանի Փիլիպպոս Կաթուղիկոսն մեր և նստի Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի, յայսմ միջոցի մինչ սաստիկ պատերազմ ևս գոյր ի մէջ Պարսից և Օսմանցւոց թագաւորացն, Մարտիրոս կաթուղիկոսն Աղթամարու ժամանակ գտեալ ի ձեռըն իւրոցն ծածուկ արզայ հասուցանէ առ Օսմանցւոց Սուլթան Մահմուտ թագաւորն թէ՝ Վան, Բերկրի, Արճէշ, Խլաթ, Բաղէշ, Մուշ, Հօշապ, և մինչև ի Համիթ, ընդ տէրութեամբ քով են, սակայն ի յերկիրն Պարսից նստող Խալիֆայն զայսոսիկ զաւթեալ է, և զարդիւնս սոցա ժողովեալ տանի յերկիրն Պարսից, հրամայեսցես՝ զի մեզ լիցին վիճակք. որովհետև ի յիշխանութիւնս քո նստիմք մեք։ Զոր ի լսելն Սուլթան Մահմուտին, տայ նմա զփարման՝ զի նա տիրեսցէ այնց վիճակացն։ Զայս իբրև լսէ Յակոբ Կաթուղիկոսն, և սա գրէ արզայ առ նոյն Սուլթան Մահմուտն հաւաստելով ի բնէ անտի Էջմիածնի գոլ վիճակք վերոյիշեալ նահանգքն. և Սուլթան Մահմուտն ևս ի վերահասու լինելն ճշմարտութեանն՝ վերստին հաստատուն փէրման գրէ թէ՝ այն վիճակքն որովհետև ի բնէ Էջմիածնի են լեալք՝ մեք ևս Էջմիածնի շնորհեցաք, և մի՛ ևս ձեռնամխիցեն Աղթամարու կաթուղիկոսն և կամ այլք (. և նոյն փարմանն ևս աճա ի սուրբ Աթոռս գոյ). որ գրի ի տաճկաց թիւն ի ՌՀԲ. զորս գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և (ՄԼԱ) համար նշանաւն։

Իբրև այս այսպէս լինի, ապա Մարտիրոս կաթուղիկոսն Աղթամարու անկանի ի Վանայ մօլլեան և ի մեծամեծսն կաշառելով, ասէ թէ՝ ես զայսքան դրամ եմ խարճեալ, փարման եմ հանեալ, այժմ ի վիճակացս ես զըրկիմ. և շատ զրոյց առարկէ ի մէջ այլազգեաց և մերայնոցն ի դատարանի նոցին. վերջապէս Յակոբ Կաթուղիկոսի գիտութեամբն և խորհրդակցութեամբն տեղւոյ իշխանացն՝ տեղւոյ Առաջնորդ Պօղոս վարդապետն վէքիլ լինի Էջմիածնի կողմանէ ՌՊԽԸ ղ——ղ 2) տայ Մարտիրոս կաթուղիկոսին և ի բերանոյն գգիր առնու թէ՝ ես Մարտիրոս կաթուղիկոս Աղթամարու,

---

1) Արքունական սուրբ: — 2) Դահեկան, որ արժէ իբր 6· կոպէկ:

յառաջ քան զայս վասն Վանայ, Բաղիշու, Մշոյ, և այլոց շրջակայից յաղագս, որոց զնուիրակութիւնն Էջմիածին առնոյր, ֆարման հանի յարքայէն թէ՝ Էջմիածին ի յիշխանութիւնս Պարսից է, և այս երկրաց զարդիւնսն ժողովեալ տանի յերկիրն Պարսից. հրաման լիցի զի Ախթամար կիրիցէ, որովհետև ի յիշխանութիւնս Օսմանցւոց է։ Ապա յետոյ Վանայ առաջնորդ Պօղոս վարդապետն ընդ յիս դատ յարոյց և վկայս եբեր ի դատարանի թէ՝ այդ վիճակքդ [illegible] են և ո՛չ Ախթամարու։ Եւ յետ խօսակցութեանց, ապա ի Պօղոս վարդապետէն ես Մարտիրոս կաթուղիկոս առի ՌՊԽԲ ղրշ. և զայս գիրս ետու։ Որ այսուհետև եթէ ես ձեռնամխել կամիցիմ այսց վիճակացս, [illegible] 1) լինիմ և յանցաւոր։ Եւ զայս գիրս գիտ ի յերեսն գրեցեալ ցուցակուն, և (ՄԼԲ) համար նշանաւ։ Որ գրի ի թուին տաճկաց ի ՌՀԲ։ Իբրև այս այսպէս լինի, ապա ի միւս ամին, Մուստաֆայ փաշայի որդի Ապտուլլայ-չէլէպի ոմն կոչեցեալ՝ որ լինի իշխող Աղթամարու կղզւոյն, դաւ յարուցեալ ընդ Պօղոս վարդապետին և ընդ իշխանսն Վանայ, ասէ թէ՝ Աղթամարու կաթուղիկոսին յաղագս ես զայսքան դրամ խարճեցի և ֆարման բերել ետու, զի նա տիրեսցէ այսց վիճակացս, և ի տարւոջն տացէ Վանայ բէրթին ԳՌ բուտակ, և ԺՌ ստակ ևս ինձ տացէ ի տարւոջն։ Այժմ որովհետև դուք ի ձեր կողմն արկեալ դուք տիրեցիք, ուրեմն Եսայի-քիլիսէի Առաջնորդ Պօղոս վարդապետն տացէ զնոյն ԳՌ ստակն Վանայ բէրթին, ԺՌ ըստակ ինձ առ յամէ. և Ճ ղրշ. ևս զոր խարճեցի վասն ֆարմանի Մարտիրոս կաթուղիկոսին, ապա թէ ձեզ լիցին այդ վիճակքդ։ Եւ Պօղոս վարդապետն և իշխանքն ևս յանձն առեալ զայս ասացեալ դրամքս ի տալ, և ի նոյն Ապտուլլայէն ևս գիր մի առնուն թէ՝ այսուհետև թէ ես, և թէ Ախթամարու կաթուղիկոսն դատ արասցուք, և կամ ձեռնամխել կամիցիմք յայս վիճակս, թալլիս և խաբեբայ եղիցուք։ Որ է գրեցեալ ի ՌՀԳ թուին տաճկաց. զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակուն, և (ՄԼԳ) համարիւն։ Բայց ֆարման թագաւորին թէպէտ յանուն սրբոյ Աթոռոյս է գրեցեալ, զոր ի վերդ գրեցաք, թէ վիճակքն այնոքիկ սրբոյ Էջմիածնի են, Ախթամարու կաթուղիկոսքն և այլք չունին հրաման ձեռնամխել յայնս, սակայն այս երկու [illegible] զորս յիշեցաք, յանուն Վարագայ սրբոյ Նշանի վանիցն գրեն, իբր թէ՝ վիճակքն այնոքիկ այն վանքին են և Ախթամարու կաթուղիկոսն ո՛չ ինչ ունի մասն ի նոցանէ, իբր թէ՝ Պօղոս վարդապետն որ ի նոյն ժամանակն Վարագայ վանիցն Առաջնորդ է լեալ, նա տայ զայն վերյիշեալ դրամքն և զոտս Մարտիրոս կաթուղիկոսին հա-

1) Թէշվիշ, նենգ, խաբեբայ եւն:



նէ ի վիճակէն Էջմիածնի։ Վասն որոյ ի մէջ այն երկուց հուճէթիցն ոչ Էջմիածնի անուն կայ և ոչ Էջմիածնական Կաթուղիկոսի, այլ Պօղոս վարդապետի և Եսայի-Քիլիսայի, այս ինքն Եօթն Եկեղեցւոյ, որ է Վանայ Վարագայ սրբոյ Նշանի վանքն։ Քանզի որպէս ասացաք ի վերն, զի որովհետև մեծ պատերազմ և թշնամութիւն կայր ի մէջ Պարսից և Օսմանցւոց, և սուրբ Աթոռս էր ընդ իշխանութեամբ Պարսից, և Վանայ կողմունքն ընդ իշխանութեամբ Օսմանցւոց (որպէս և են այժմ). վասն այնորիկ այսպէս առնել ետ Յակոբ Կաթուղիկոսն, զի հատցի թունալի լեզուք նոցին՝ որք զմեծ զէն առեալ էին իւրեանց՝ որպէս թէ արծարծէին աստ և անդ ի յականջս Օսմանցւոց, թէ ի յերկրէս Օսմանցւոց զարդիւնսն ժողովեալ տանին ի յերկիրն Պարսից, որպէս և մինչև ցայժմ ունին զայս սովորութիւն Օսմանցւոց կողմանց սեւագլուխքն. որք ի խոշտանգիլն ի յԷջմիածնական Կաթուղիկոսացն և ի Նուիրակաց նոցին վասն անկարգութեանց իւրեանց, զայս յառաջ բերեն որպէս թէ յանտանիկ ամրոց իմն ապաւինեալք։

Դիպեցեալ զկնի այնորիկ ի ՌՃԴԲ թուոյն մերում ի ժամանակս Ղազարու Կաթուղիկոսին մերոյ Ճահկեցւոյ, Ախթամարու բոլոր վիճակքն զզուեցեալ ի . . . . . Կաթուղիկոսէն իւրեանց վասն անյարմար կացութեանն, և մանաւանդ զի զաթոռն իւրեանց խոպան անշքացոյց և ի ներքոյ յղփից պարտուց էարկ, և զեկեղեցական միաբանսն ցրուեաց, և զկնաւոր աշխարհական բնակիչսն ի վանքն. վասն որոյ ընկեցին զնա յաթոռոյն, և զՆիկողայոս վարդապետ ոմն ընտրեալ արարին իւրեանց կաթուղիկոս։ Ապա Նիկողայոս այս խորհրդակցեալ ընդ ոմանց սեւագլխոց իւրոց անկատարից և ընդ ումեմն Աղէքսանդր արեղայի՝ իբր թէ նոր է տեղիս մեր, ըստ զրոյցն, առաքէ զնոյն Աղէքսանդրն ի Կոստանդնուպօլիս. որ գնացեալ անդ ի ձեռն ոմանց ծածուկ գիր մի հանէ ի դրանէ թագաւորին, (որ ասի [illegible]) իբր թէ՝ նահանգս այսոքիկ, այս ինքն Վան, Բաղէշ, Մուշ և շրջակայք նոցին Ախթամարու են վիճակք։ Եւ զայս հրաման առեալ գայ ի Վան. գայ և Նիկողայոսն ի Վան և ցուցանէ զհրամանագիրն զայն տեղւոյ մոլլահին, յորմէ և զգենու զխիլայ, և որպէս թէ տիրեալ վերյիշեալ նահանգացն՝ զյիշեալ Աղէքսանդր արեղայն նուիրակ կարգէ նոցա, և զՅովհաննէս վարդապետն (որ յայնժամ միջոցի Նուիրակ էր ի սրբոյ Աթոռոյս կողմանցն այնոցիկ) կալեալ՝ զժողովեալ արդիւնսն առնուն ի ձեռացն, և զինքն ի բաց վարեն. և զայլս այսպիսիս։ Եւ յորժամ զայս ամենայն լսէ Ղազար Կաթուղիկոսն մեր, և սա գրէ ի Պօլիս, և գնորոգ ֆերման բերել տայ ի նոյն թագաւորէն սաստիկ և հաստատուն վճռով թէ՝ վիճակքդ այդոքիկ Էջմիածնի են, ոչ ոք ունի իշխանութիւն ձեռնամխել ի դոսա։ (Եւ ֆարմանս այս՝ մինչ ի վերայ Վանայ Օճախլու կոչեցելոյն

էր գրեալ, առ Նոսա գոյ մինչև ցայսօր, և Պատրիարգ Յակոբ վարդապետի գիրն գոյ վասն այսորիկ թէ զՓէրմանն հանեալ յղեցի, ի ՌՃՂԵ թուոջն մերում. Եւ այսու զվերոյիշեալ վիճակսն Ղազար Կաթուղիկոսն վերստին յինքն վերադարձուցանէ, և զարգիւնս Նուիրակին մերոյ՝ զոր առեալ էր Նիկողայոսն, ճշտիւ յետս առնու, և զՆիկողայոսն ևս բանադրէ. Եւ յետ այսց անցից ապա Նիկողայոսն այն եւս՝ թէ ի յունկոցն ևս զրկեցաւ, և մանաւանդ կորագլուխ և ամօթալից լեալ ի վիճակէն իւրմէ և Նուաճեցեալ խսկ ի բազմակոյտ պարտուց և յաղքատութեանց, վասն որոյ անճարացեալ բոլոր վիճակօք՝ վանականօք և աշխարհականօք՝ զբազմակնիք թուղթս հնազանդութեան և աղերսանաց գրեն առ Ղազար Կաթուղիկոսն մեր, ընդ թղթոյն և զՆիկողայոսն առաքեն յաթոռս խնդրելով մեծաւ աղաչանօք ի Ղազար Կաթուղիկոսէն, զի զՆիկողայոսն արձակեսցէ ի կապից և կաթուղիկոս հաստատեսցէ ինքեանց, և աղքատութեանց և պարտուց աթոռոյն իւրեանց ևս օգնութիւնս արասցէ, խոստանալով ևս այնուհետև կաթուղիկոսօք և վիճակօք՝ ի հնազանդութեան սրբոյ Էջմիածնի և սորին Կաթուղիկոսացն մնասցեն. (Եւ նոյն թուղթն գոյ ի սուրբ Աթոռոջս) Վասն որոյ և Ղազար Կաթուղիկոսն մեր սիրով ընկալաւ զՆիկողայոսն, և ի յատենի արձակէ զնա ի բանադրանաց, որպէս թէ յաթոռոջս վերստին հաստատէ զնա Կաթուղիկոս Աղթամարու բոլոր վիճակին. Եւ ապա հաւանութեամբ և ըստ խնդրոյ բոլոր վիճակին և Նիկողայոս կաթուղիկոսին իսկ, ի ներկայութեան բազմաց եպիսկոպոսաց զկանօնական կոնդակ իմն գրէ քանիօք գլխօք, այս ինքն զՆիկողայոսն ընկալցին իւրեանց Կաթուղիկոս այսուհետև, և մինչև ի մահն զայլ ոք մի՛ գնիցեն՝ որպէս առնէին յառաջ. Եւ յետ մահու նորին զայլ ոք ինքնագլուխ մի՛ նստուսցեն, այլ զարժանաւորն բազմակնիք թղթով բոլոր վիճակին ի սուրբ Աթոռս առաքեսցեն. զի աստ օծցի. Եւ զայլս այսպիսիս գրէ, և կնքէ ինքն Ղազար Կաթուղիկոսն, կնքէ և ինքն Նիկողայոս կաթուղիկոսն, և այլք եպիսկոպոսք՝ որք գտանէին. Եւ վերջապէս վճռեն ի նոյն թղթոջն թէ այսուհետև ով ոք հեստիցի յայս կանոնացս՝ նզովեալ լիցի յամենասուրբ Երրորդութենէն, յամենայն սրբոց նորին և ի մէնջ. (Որոյ ահա օրինակն գոյ ի սուրբ Աթոռոջս) Զայս գիր առեալ Նիկողայոս Կաթուղիկոսն, մեծաւ փառաւորութեամբ և խնդալիւք գնայ ի վիճակն իւր. Եւ յետ ամաց ինչ՝ մեռանի Նիկողայոս Կաթուղիկոսն Աղթամարու, և նստի ի տեղին Գրիգոր վարդապետ ոմն, նոյնպէս ինքնագլուխ և թարց հրամանի սրբոյ աթոռոյս Կաթուղիկոսացն Մինասայ և Աղէքսանդրի (որք զկնի Ղազարու նստան յաթոռոջս). Զի որպէս Աղթամարցիք զայնքան նզովիւքն և ուխտիւքն իւրեանց անփոյթ արարին, նոյնպէս և մերս Կաթուղիկոսունքն



պաշարեցեալք ի խառնակմանց ժամանակին և յանձեռնհասութենէ՝ զանց արարին. Ապա ի ՌՄԺ թուոջն մերում մեռանի և Գրիգոր կաթուղիկոսն Աղթամարու, նոյնպէս և նստի ի տեղին Թովմայ վարդապետ ոմն կաթուղիկոս. յորում ժամանակի էր Կաթուղիկոս յԱթոռոջս Էջմիածնի Համախեցի կոչեցեալ Յակովբ գիտնականն. Ի սոյն ժամանակի վերոյիշեալ Թոմաս կաթուղիկոսն Աղթամարու թէ ի խղճէ հարեցեալ, եթէ ի բազմակոյտ պարտուց և ի պակասութեանցն բռնադատեցեալ, եկեալ գայ ի սուրբ Աթոռս ի յետս Յակոբ Կաթուղիկոսին մերոյ ի հնազանդութիւն և ի վերանորոգումն առաջնոց հայրապետացն կանօնաց, և յայտնապէս յանձն առնու և խոստովանի զգոլն իւրեանց ընդ նզովիւք Ղազարու Կաթուղիկոսին. Եւ յաւուր Կիւրակէի, ի ներկայութեան բոլոր միաբանից սրբոյ Աթոռոյս և բազմախուռն ժողովրդեան ի ժամ սրբոյ Պատարագին, ի մէջ սրբոյ Եկեղեցւոյն անկեալ ի ծունկս բացաւ գլխով՝ և ըստ [illegible] ասելով խնդրէ զարձակումն. Զոր և ընդունի սիրով Յակոբ կաթուղիկոսն մեր, և ընթեռնու զաւետարանն Անառակին, և տայ զարձակումն ի մէջ հանդիսին, և որպէս թէ վերստին հաստատէ զնա կաթուղիկոս Աղթամարու վիճակին. Գրէ և կոնդակ ի վերայ վիճակին, զի զԹովմաս ընկալցին այնուհետև կաթուղիկոս ինքեանց. վերոյիշելով հաստատէ ի սոյն Կոնդակոջս և զկանօնս Ղազարու և Նիկողայոս Կաթուղիկոսացն ուխտագրութեանցն և նզովափակ կանօնացն, զորմէ ի վերդ յիշեցաք. Եւ հարկադրէ ևս, զի ի նոյն կանօնի և յուխտի մնալ այնուհետև, վերահաստատելով զնոյն ուխտն հանդերձ նզովիւք, մի՛ ևս զիցեն ինքնագլուխ զկաթուղիկոս ինքեանց, և զեղեալն առանց հրամանի Կաթուղիկոսացն Էջմիածնի մի՛ ընդունիցին. Եւ զայլս այսպիսիս պատուէրս և կանօնս. Զայս կոնդակս գրէ Յակոբ կաթուղիկոսն հաւանութեամբ Թովմայ կաթուղիկոսին, ներկայութեամբ և վկայութեամբ Լմայ և Կոտացու անապատից հարանցըն Կարապետ և Յակոբ վարդապետացն, և այլոց բազմաց եպիսկոպոսաց և տայ Թովմայ կաթուղիկոսին. զոր և պատուով և խնդալիւք առաքէ ի յԱթոռն իւր յԱղթամար ի վերոյիշեալ թուոջն. Եւ նոյն Կոնդակի օրինակն ահա գոյ ի սուրբ Աթոռոջս. Եւ այս Թովմաս Կաթուղիկոս ողջա՛ն նստեալ է յաթոռն իւր թէ՛ ի յաւուրս Յակոբայ կաթուղիկոսին և թէ ի մեր ժամանակս, զսուրբ Մեռոնն ի սրբոյ Աթոռոյս և ի մէնջ առեալ բաշխէ վիճակին իւրոյ. Թէպէտ ինքն զնիւթն խնդրէր՝ զի ինքն օրհնիցէ, սակայն մեք զօրհնեալ սուրբ Մեռոնն տայաք. Որ և է այսպէս մինչև ցայսօր.

## Գլ. ԺԲ.

Վասն Սսոյ և Կիլիկեցւոց դառն խռովութեանն, և նորին որպիսութեանն։

Զայսմանէ ես ճառեցաւ լիապէս ի վերդ ի գլուխն Ժ և ի ԺԱ, թէ ե՞րբ սկսաւ, և յի՞նչ պատճառէ։ Ապա յետոյ մինչ վերանորոգեցաւ սուրբ Աթոռս Էջմիածին ի ՊԳ. թուոջն մերում, և նստաւ Կիրակոս Կաթուղիկոս ի սմա, այնուհետև զոչինչ ունիմք ասել զնոցանէ հաւաստեաւ՝ թէ ո՞յք, ո՞րպէս և յի՞նչ կացութեան մնային։ Միայն թէ ի ՌՃ թուոջն մերում՝ յորում երջանիկ և սրբազան Կաթուղիկոսն մեր Տէր Փիլիպպոս գնայ ի սուրբ Երուսաղէմ յուխտ և ի յակնածումն Ազգիս Հայոց՝ որք ի Ցունաստան, յայնմ ժամանակի պատահի Ներսէս կաթուղիկոսին Սսոյ ի յԵրուսաղէմ գտանել. որոյ ի տեսանելն զմաքուր վարս և զառաքելաշաւիղ վարդապետութիւնս Տեառն Փիլիպպոսի Կաթուղիկոսին՝ հարկեցեալ ի ճշմարտութենէ՝ հնազանդեալ խոստանայ և հետևել ամենայնի պատուիրանաց նորա։ Վասն որոյ և երջանիկն Փիլիպպոս վկայութեամբ Երուսաղեմի պատրիարգ Աստուածատուր վարդապետին և այլոց բազմաց Եպիսկոպոսաց ընդ Ներսիսի կաթուղիկոսին գ.քանի գլխաւոր կանոնս հաստատէ (զորս տեսցես լիովին ի յԱռաքել պատմագիրն). որոց բազմաց զխտաւորութիւնն է թէ՝ ի՛ւրաքանչիւր վիճակի Կաթուղիկոս, և Եպիսկոպոս, զիւր վիճակի եղեալն և զարժանաւորսն ձեռնադրեսցէ հաւանութեամբ վիճակին՝ յորոյ վերայ ձեռնադրէ։ Եւ յայս վիճակս մի՛ ձեռնամխեսցի։ Եւ զայլս այսպիսի կանոնս հաստատեն և կնքեն երկոքին կաթուղիկոսքն և ներկայ գտանեցեալ եպիսկոպոսքն, վճռելով թէ՝ հետողն յայսց կանոնացս լուծցի ի կարգէն, տուօղն և առօղն։ Տե՛ս զու այժմ զՍսեցւոց կանոնապահութիւնն, որոց կաթուղիկոսունքն զեպիսկոպոսունս ձեռնադրեն որոց չև է ժամանակ սարկաւագութեան. որոց ո՛չ զո՛ւստին գիտեն և ո՛չ զորպէսն, և մանաւանդ բազմիցս մին զմինն ընկենու և զտեղին յաջորդէ, և երկուքն ևս զեպիսկոպոսունս ձեռնադրեն։ Որպէս ի մերում ժամանակս Ղուկասն ընկեցեալ ի Հաճին գեօղն նստէր, և Միքայէլն ի Սիս. Ղուկասն գշատս ձեռնադրէր քան զՄիքայէլն՝ միոյ հօխայ ղահֆէէ 1)։ և այլովք այսպիսեօք։ Իգնատիոս աբեղայի միոյ գէշն առեալ ձեռնադրեաց զնքն եպիսկոպոս. ի միւս օրն ձեռնադրեցեալն զէշն իւր առեալ փախեաւ։ Նմանապէս և եպիսկոպոսունքն յածեալ ի վիճակս որո՛յ և իցէ՝ շրջեալ ի տանէ ի տուն, ի ծակէ ի ծակ, ձեռնադրեն զ.քահանայս և զայլս աստիճանաւորս չգիտելով

1) Գահվէ, սուրճ։



զի՛նչ լինելն։ Եւ վարդապետքն՝ որք չև են ժամանեալ ի Ի ամն, ընդ Աբեղայութեանն առնուն և զԾայրագոյն Գաւազան, յորս զրէ թէ ո՛չ գտանի Աբեղայ և կամ Մասնաւոր Վարդապետ, այլ որք ենն՝ են ի Ծայրագոյն աստիճանի։ Թողցո՛ւք զայսպիսիս։ Ապա յետոյ ի ՌՃԻԸ թուոջն մերում յաւուրս Ղազարու Կաթուղիկոսին մերոյ ճահկեցւոյ, մինչ ի հարկեցմանէ վրդովմանց ժամանակին և վասն ոմանց պատճառաց (զորոց ասացաւ յիւրումն տեղւոջ,) անկաւ խռովութիւն ի մէջ Ղազար Կաթուղիկոսին և միաբանիցն սրբոյ Էջմիածնի, ընդ որս և համաձայնեցան Ցունաստանաբնակ սեւագլուխքն մեր և մանաւանդ Յակոբ վարդապետն՝ որ յայնմ ժամանակի պատրիարգ էր ի Կոստանդնուպօլիս, թէ և ի ծածուկ ազդմանէ սորին Միքայէլ կաթուղիկոսն Սսոյ եկն ի Կոստանդնուպօլիս, և անկաւ առ յոմանս յիշխանս ի տանէն Սսոյ, և կամէր ոտն ածել ի վերայ Էջմիածնի խնդրելով ի վիճակաց սորին զոմանս նահանգս զսահմանակիցս վիճակին իւրոյ։ Իսկ յԱստուծոյ օրհնեալ իշխանքն մեր և բարերարոյ վարդապետք ոմանք հրեւելիք գտանելով անդ՝ առ յորս և մեք իսկ գտանեցաք ի պատահմանէ ինքէ, խափանելով զչար խորհուրդս նորա՝ ափ ի բերան արարին զնա, և ի գիշերայն հալածեցին ի քաղաքէն և ի սրբոյ Էջմիածնի վիճակէն իսկ։

Դարձեալ ի ժամանակս նոյնոյ Ղազարու կաթուղիկոսին, ի ՌՄ թուոջըն մերում, յորում Մինաս վարդապետն Ակնցի էր պատրիարգ Կոստանդնուպօլսի, ևս եկն նոյն Միքայէլ կաթուղիկոսն ի Կոստանդնուպօլիս ի սադրելոյ ոմանց ինքնանմանից սեւագլխաց առարկելով զնոյն վէճըն, և մանաւանդ ասելով թէ՝ ինձ վայել է ունել զայս երկիր որ ընդ իշխանութեամբ Օսմանցւոց է, առ որով և ես և Աթոռս իմ կամք։ Նոյնպէս և յառաջն արարին օրհնեալ իշխանքն մեր, որք ձայնակցեալ արքունական հրովարտակաւ հանին զնա ի քաղաքէն և ի վիճակէն Էջմիածնի, այնպէս որ մի՛ ևս կոխեսցէ զվիճակս սրբոյ Էջմիածնի կաթուղիկոսն Սսոյ։ Եւ է այսպէս մինչև ցայսօր։

## Գլ. ԺԳ.

Յորում ցուցանէ յառաջ յառաջ և յանուանէ մետասան գեօղօրայք սրբոյ Աթոռոյս, յորոց է յայտնեաց և է աներեւութեաց տանես զմոլիս, այսինքն զատուանորդս, թէ ո՞յք են, յորո՞ւմ ժամանակի և ո՞ր յետոյ, և որպէ՞ս առնեցաւ և ստացաւ զնոսա։

Յաղագս գեղջս մերոյ Վաղարշապատու։

Նախ՝ այս գեօղ՝ որ է կից սրբոյ Աթոռոյս, որ նախապէս կոչիւր Վարդգէս, և յետոյ կոչեցաւ Վաղարշապատ, է բոլորովիմբ սրբոյ Աթոռոյս, հա-

ղով, ջրով, և իւրովք պարագայիւքն, հաստատեցեալ ի ընէ անտի ի սըրբոյ Լուսաւորչէն և ի Տրդատայ Թագաւորէն, նախ ըստ հոգևորական հասիցն և նաև ըստ մարմնաւորական հարկին։ Այսպէս եկաց ի ժամանակս իշխանութեան Թագաւորացն մերոց. յոր ոչ կարէին ձեռնամխել կերպիւ իւիք մարմնաւոր իշխօղք։ Այլ ի բառնիլ իշխանութեանս Հայոց և ի փոխելն Հայրապետարանին ի Սիս, և ի յամայանալն սրբոյ Աթոռոյս, խափանեցաւ ամենայն կարգ և իշխանութիւն սորին, և ինքն մերկացաւ յամենայնէ և զրկեցաւ յամենից ունեցելոցն իւրոց։ Եւ ձախորդութիւնս այս տևեաց յամս ՑԻԴ։ Իսկ ի թուոջն մերում ի ՊՂ, յորում ողորմութեամբն Աստուծոյ վերանորոգեցաւ սուրբ Աթոռս ի յիշխանութեան տաճկաց Ջհան-շահ Թագաւորին (որ նստիւր ի Դավրէժ) և ունէր ընդ ձեռամբ զբոլոր երկիրս Պարսից և Հայոց, յորում ժամանակի նստաւ Կաթուղիկոս Տէր Կիրակոսն, և զկնի նորա Գրիգոր Մակուեցին, որպէս ասացաւ յայլուր, սկսաւ վերստին օր ըստ օրէ ստանալ զառաջին կարգն և զիշխանութիւնն, և տիրել իւրոցն սեփհականաց հրամանաւ այլազգի Թագաւորաց, գրովք և ղաբալայիւք նոցին դատաւորաց, զհինսն նորոգելով և զնորսն վերայաւելլով։ Արդ այս Գրիգոր կաթուղիկոս որ նստաւ հրամանագրով Ջհան-շահ Թագաւորին Դավրիժու ի ՊՂԲ թուոջն մերում ի սուրբ Աթոռս Էջմիածին, գնէ զշիշդանկ մուլքն գեղջս այսմիկ (որ է տասանորդն) այսպէս. Զի յայնմ ժամանակին գեօղս այս անկեալ լինի ընդ ձեռամբ ումեմն տաճկի Սէյիտ-պէկ կոչեցելոյ մեծազգոյ և մանկահասակի. և այս Սէյիտ պէկս վէքիլ առնէ ինքեան զՍարու-մելիք կոչեցեալ ումն իշխան տաճիկ՝ որդի Ալի-խան-բեկի, ի ներկայութեան և վկայութեամբ ումեմն տաճկի երևելւոյ իշխանի Շեխ-բօրհան կոչեցելոյ, և վաճառէ զգեօղս զայս ամենայն սահմանօք և սինօրիւք, և ամենայն պարագայիւքն իւրովք Գրիգոր կաթուղիկոսին, ԸՌԽ դինարի, որոյ ութներորդ մասն է մէկ հազար հինգ դինար, որոյ և ղաբալայն գրէ ղաղին Երևանու Զամանատին կոչեցեալն, և կնքէ հաստատուն վճռօք և բազմաց մեծամեծ տաճկաց վկայութեամբ և կնքով յԵրևան ի (                ) թուին տաճկաց։ Դարձեալ ի սոյն թուոջս Մէլիք Խաթուն անուն ումն կին տաճիկ դուստր Փիր-հիւսէին ումեմն տաճկի, զոլով յազգականաց վերոյիշեալ Սէյիտ պէկին՝ յարուցեալ ասելով թէ՝ իմ է այս գեօղ, և կամի ի յինքն դարձուցանել, որ և վէքիլ առաքէ ինքեան զՇէխ Մահմետ անուն տաճիկ ումն որդի Դախա կոչեցելոյ՝ ի յառաջ տանիլ զայս դաւ։ Վասն որոյ և նոյն Գրիգոր կաթուղիկոսըն ևս վէքիլ առնէ ինքեան զՂևոնդ ումն հայ՝ որդի Սէթի և թոռն Բապիճանի, որով և վերստին նոյնպէս ամենայն պարագայիւքն գնէ զգեօղս զայս ի Մէլիք Խաթուն կոչեցեալ կնոջէն ձեռամբ Շէխ Մահմետ վէքիլի նո-



րին, ԺԵ հազար դինարի, որոյ վեցերորդ մասն է ԲՌՆՃ դինար։ Զորոյ և զղապալայն ևս գրէ նոյն վերոյիշեալ Զամանատին կոչեցեալ ղաղին հաստատուն վկայութեամբ բազմաց մեծամեծ տաճկաց, և կնքէ ինքն և կնքեցուցանէ։

Դարձեալ՝ յետ այսր ամենայնի՝ ի սոյն թուոջս յարուցեալք ատի և անտի ի յազգականաց և ի մերձակայից վերոյիշեցեալ Սէյիդ բէկին և Մէլիք Խաթունին մինչև ԺԴ անձինք, որք ոչ տան հանգիստ Գրիգոր կաթուղիկոսին վասն գեղջս այսմիկ, ասելով թէ՝ մեք ևս ունիմք բաժին ի գեօղս յայս։ Որք վէքիլ կացուցանեն ինքեանց զումն գլխաւոր տաճիկ Ղալանդար-օղլի Մահմետ-Ղուլի կոչեցեալն, վասն որոյ և նոյն Գրիգոր կաթուղիկոսն երրորդապէս գնէ զգեօղս զայս՝ նոյնպէս ամենայն սահմանօքն ի ԺԴ վէրասէ[1]) կոչեցելոցն ձեռամբ և միջնորդութեամբ վերոյիշեցեալ Մահմետ-ղուլի կոչեցեալ վէքիլի նոցին՝ ԺԵ հազար դինարի, որոյ վեցերորդ մասն է ԲՌՆՃ դինար։ Եւ նոյն վերոյիշեցեալ Զամանաղին ղաղին երրորդապէս գրէ զղապալայն, և կնքէ վկայութեամբ բազմաց մեծամեծ տաճկաց, գրելով և ըստ օրինի իւրեանց զաստիկ և զմեծ նզովս և զանէծս յետ այսորիկ դաւի առնողաց և վերստին խօսողաց վասն գեղջս այսմիկ։ Եւ այս Զամանաղին ղաղիս բերեալ ապա զայսոսիկ վերոյիշեցեալ զերեսին ղապալայքս ընդ միմեանս կցէ, և շինէ զմի մեծ կոնդակաձև ղապալայ, և ինքն կնքելով զկիցսն իւրաքանչիւր տեղեացն, կնքեցուցանէ և ոմանց մեծամեծ տաճկաց ևս, և տայ Գրիգոր կաթուղիկոսին։ Եւ Գրիգոր Կաթուղիկոս այս (որ է որդի Մակուեցի պարոն Ջալալ Բէկին) գրեցուցանէ ի յերիս ղապալայօջսն ևս թէ՝ Գրիգոր խալիֆայն առնու զգեօղս զայս, և վաքֆ տայ Էջմիածնի Աթոռոյն։ Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վաքֆն ո՛չ վաճառի և ոչ յետս դառնայ, վասն այսորիկ այսպէս գրեցուցանէ, զի մի՛ ոք իշխեսցէ յետոյ վաճառել և գնել։ Այլ և ի մէջ երից ղապալայիցս այսոցիկ՝ գրի գեօղս այս և յատկացուցանէ ամենայն սահմանօք և կապարօքն իւրովք, և վճռի թէ ի մէջ այսց կապարացս՝ այգի, պարտէզ, անդք, արօտք անասնոց, ջրաղացք, դինկք, և այլ ամենայն արդիւնատեղիք, և ջուրք, և հողք և քարինք ևս մինչև բոլորովին գնեաց Գրիգոր խալիֆայն և վաքֆ ետ սրբոյ Էջմիածնի։ Զայս ղապալայս և վախմանմայս առնու Գրիգոր կաթուղիկոսն ի ԸՃԼԲ թուին տաճկաց, և դնէ յԱթոռոջս ի յարձան յաւիտենական։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն։ Որ և դոյ արդէն ի սուրբ Աթոռոջս։ Զոր և զոյսն ի յերեսն գրեցեալ ցուցակումն և (            ) նշան համարով։ Արդ եթէ ի

---

1) ժառանգ։

յայս ղարալայօղս, և թէ ի միւս մեծ ղարալայօղն (զոր զկնի սորա գրելոց եմք,) գեղջս մերոյ սահմանք և կողմունքն այսպէս գրին. Ի հիւսիսակողմն եզր դաշտիս մերոյ՝ օվան 1), որ է ի Մոլադուրսունէն և ի Քարաքթէն մինչև ի փոքր ծովակն (որ է սահման և կապար գեղջս մերոյ և Փարաքարու, որ և սոյն ծովակս ևս է սրբոյ Աթոռոյս). Ի յարևելակողմն՝ չայըր-չիմէն 2) հանդէպ Շօրլու գեօղի, որ [illegible] 3) և ղամըշլըղ 4) գրի. Ի հարաւակողմն՝ Քիւլթափայ կոչեցեալ փոքր բլուրն. Ի յարևմտակողմն՝ մեր գետն՝ որոյ կից է մեր Թեղուտներ կոչեցեալ հողն ի մեր կողմն՝ հանդէպ Ալիպէքլու գեղջն, որ Բաղրկեան եօլի գրի, թէ ասա թէ ի ռաղամն.

Դարձեալ՝ ըստ վճռոց գրոց սրբոց՝ որպէս ո՛չ կարէ տեղի աղտաղտին զջուր քաղցր բերել, նոյնպէս և ժամանակն վրդովեցեալ ոչ կարէ յառաջացուցանել զհաստատուն և զյարամնաց գործս. Զի յետ երից ամաց ի փոփոխմանէ տէրողաց երկրիս, յառաջանայ այր ոմն տաճիկ յերկրոջս՝ Ռուստամ անուն, և բռնացեալ (ո՛չ է յայտ թէ որո՛վ կերպիւ) տիրէ քանեաց գեղօրէից, յորոց մին լինի և այս մեր կից գեօղս Վաղարշապատ. և այս Ռուստամ տաճիկս լինի որդի՝ Ամիրշաքեանի, և թոռն Ամիր Սիւքալթայ, և ուստի լինելն անյայտ. Ապա նոյն Գրիգոր կաթուղիկոսն ի յայս տաճկէս վերստին գնէ զգեօղս զայս իննսուն հազար դինարի և վախմ առնէ սրբոյ Աթոռոյս. Եւ ընդ գեղջս այսմիկ գնէ ևս ի նոյն տաճկէն զայսոսիկ գեղօրայսս, այս ինքն՝ զԱշտարակ, զՔաթարինչ, զՆորագաւիթ, զԱղունատուն, զՔիրաշլու, զՄուղնի, (որոց զորպէսն ի յիւրաքանչիւր տեղւոջն ասասցո՛ւք). Եւ եօթնից գեղօրէիցս գրելոցս այսոցիկ զղարալայ մի մեծ և կոնդակաձև գրէ նոյն վերոյիշեցեալ Զամանատին ղազին Երևանու, և կնքէ, կնքեն և վկայեն ևս՝ Երևանու շեխ-իսլամ-մօլայ Ռաշիմ կոչեցեալն, և Նախջևանու ղազին Ահմէտ կոչեցեալն՝ որդի Մահմետի. Ցորում վճռեն հաստատուն վկայութեամբ և սաստիկ երդմամբ նզովիւք ըստ օրինացն իւրեանց թէ՝ այսոցիկ եօթեանց գեղօրէիցս զշեշդանկ մուլքն գնեաց Գրիգոր Խալիֆայն և վախմ արար սրբոյ Էջմիածնի. Որ գրի ի տաճկական թուոջն ի ( ), զոր գտցես ցուցակաւն և ( ) համար նշանաւն. Եւ այս մեծ ղարալայիս սուրաթ 5) մի ևս գոյ գրեցեալ յետոյ ի միոյ շեխուլամէ և կնքեցեալ. Զոր ևս գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ( ) նշան համարով. Յետ Գրիգոր կաթուղիկոսիս այսմիկ՝ մինչև ի ՌԽԲ թիւն մեր, յորում նստի կաթուղիկոս ի սուրբ Էջմիածին Մելքիսէթ, և յետ նորա Սահակ, և յետ նորա մեծն Մօսէս ի ՌՀԲ թուոջն մերում, Աթոռս Էջ-

1) Դըր, դաշտ: — 2) Խոտաւէտ: — 3) ճիմճիմէ, ճահիճ: — 4) Դամբըլը, չամբր, եղեգնապուրակ: 5) Պատճէն, նմն:



միածնի գրէ թէ՝ թէպէտ ոչ խաղաղ ամայի, սակայն ո՛չ այնքան հեռի մնայ ի յամայութենէ, զի որպէս թէ յառաջին նուաստութիւնն էր հասեալ. Քանզի ի փոփոխմանէ այլ և այլ բռնակալ իշխողաց երկրիս, և ի յարուցմանց պէս պէս ելուզակաց և ապստամբաց, և յարշաւանաց ի վերայ միմեանց մեծազօր թագաւորաց Պարսից և Օսմանցւոց, և ի տարագրութենէ բոլորից երկրականաց ի Շահապաղէն և յայլոց այսպիսեաց, (զորս յիշէ Առաքել պատմագիրն), և մանաւանդ յայնքան միջոցսն՝ կաթուղիկոսըն Աթոռոյս՝ ոչ մի և երկու, այլ մինչև ի չորս և հինգ, և այնք ևս ո՛չ կարէին և ոչ նստէին յԱթոռս, այլ աստ և անդ տարագիրք և փախստականք ի բռնաւորաց և ի պարտուց. Մտածեա՛ թէ՝ Աթոռս ի յորպիսի՛ կացութեան իցէ լեալ, զի ո՛չ միայն ի մլքատու գեղօրէիցն էր զրկեցեալ (զորս տաճիկք զաւթեալ էին), այլ և ի շինութենէ, ի միաբանից, և յայլ ամենից հոգևոր եւմարմնաւոր զարդուց և ի հարկաւորացն էր մերկացեալ. Վասն որոյ վերոյիշեցեալ գեօղքըն՝ զորս եառ Գրիգոր Կաթուղիկոսն, տիրեցեալք եղեն ի տաճկաց ի բազում ժամանակս. Ապա յետ ժամանակաց, ի տիրելն երկրիս մերոյ թագաւորին Պարսից մեծին Շահապազայ, ի ՌՃԳ թուոջն մերում, և ի կարգելն զԱմիրկիւնէ կոչեցեալ ոմն խան երկրիս, զժամանակ ինչ և այս Ամիրկիւնէ խանս զաւթեալ ուտէ զգեօղս մեր, որոյ վասն է բանս մեր. Ապա խանս այս մինչ էր բարեբարոյ՝ շինարար և քրիստոնէասէր, ի ժամանակս սորա ոմանք ի սևագլխաց աստի և անտի ժողովեալք ի յԱթոռս՝ գնացեալ արք առնեն Ամիրկիւնէ խանին, և զԳրիգոր կաթուղիկոսի մեծ [illegible] ղարալայն (զոր ի վերն յիշեցաք) ևս ցուցանեն, ասելով թէ՝ այս գեղջ վեց դանկ մուլքն սրբոյ Էջմիածնի է ի բնէ անտի. Եւ Ամիրկիւնէ խանն ևս վերահասու լեալ իւրին ստուգութեան, վերադարձուցանէ ըզվեց դանկ մուլքն գեղջս այսմիկ Աթոռոյս, և հաստատուն գիր ևս տայ կնքով թէ՝ այսուհետև ո՛վ ոք յաղգէ իմմէ և յայլոց իշխեսցէ ըզմուլք գեղջս այսմիկ հանել ի յԷջմիածնայ, նզովեալ լիցի. Եւ նոյն Թ . . . . . և երկու [illegible]քն նորին Շխսլամի կնքով գոն աստ ի սուրբ Աթոռոջս, որ գրի ի ՌԻԹ թիւն տաճկաց. Զոր գտցես յերեսսն գրեցեալ ցուցակօքն և ( ) և ( ) և ( ) նշան համարովքն. Եւ թէպէտ այս այսպէս լինի, սակայն այս կանոն այնքան տևէ որքա՛ն Ամիրկիւնէ խանն կենդանի էր և յիշխանութեան. իսկ յետ սահուան նորին՝ մինչ առնու զխանութիւն երկրիս որդի նորին Թահմազ-ղուլին, և նա զաւթէ ի կեանս իւր զմուլք գեղջս և ուտէ իւր [illegible] 1) տեղն ժամանակ

1) Վարժ:

ինչ։ Եւ յետ նորա դարձեալ զաւթեցին առաջին տիրողք տաճիկքն, որք խրացուցեալք ունէին յորդւոց յորդիս, և վաճառէին և բաշխէին ում և կամէին, զի իբրև զսեպհական ստացուած էին արարեալ իւրեանց։ Իսկ ի նստիլ Մովսէսի երջանիկ կաթուղիկոսին՝ թէպէտ և նա ջանաց, և էառ իսկ ձեռամբ տիրողաց երկրիս, սակայն ոչ մնաց հաստատուն, զի երանելին երեք և կէս տարի հազիւ ապրեցաւ, և միանգամ գնաց ի յԱսպահան առ Շահն Սէֆի, զորքան զրամս վատնեաց և զվիշտս կրեաց, զհարիւր թուման մուխաթայն հազիւ եբարձ յաթոռոյս, որ մեծ բեռն էր լեալ և տոկոսեօք բազմացեալ ի Մելքիսեթ կաթուղիկոսէ անտի։ Եւ մանաւանդ ի նորոգութիւն և ի շինութիւն Աթոռոյս պարապեալ, զորմէ լուեալ պատմէ Առաքել պատմիչն։ Զի յամենայնի յանչքութիւն էր հասեալ աթոռս։ Իսկ զկնի նորա յորժամ նստի նոյն անըման երջանիկ Փիլիպպոս կաթուղիկոսըն՝ արդ առնէ երկրորդ Ապաս-շահին թէ՝ այս գեօղիս մուլքն ի բնէ անտի սրբոյ Աթոռոյս է լեալ. այժմ խանն և այս և այն զաւթեալ ունին, և աթոռոյս ոչ գոյ ապրուստ։ Յիշէ և յարգայումն թէ զայսքան զրամ խարճեալ յԱպարանու ջուր բերի ի յօգուտ երկրիս. և այլ այսպիսիք։ Յայնմ ժամանակի նստիւր յԵրևան խան Խոսրով անուն ոմն, որ էր բաբերարդ և բարեկամ Փիլիպպոս կաթուղիկոսին, սա ևս արդ առնէ Շահին թէ՝ գեղջս մուլքն յիրաւի Էջմիածնի է լեալ ի բնէ անտի, վկայէ և լաւութեանն Փիլիպպոս կաթուղիկոսին, և զջուր բերելոյն, և զայլոց լաւութեանցըն։ Վասն որոյ և Շահն ռաղամ գրէ թէ՝ եսու զվեց դանկ մուլք գեղջէ Էջմիածնի Աթոռոյն. այսուհետև մի՛ ոք իշխեսցէ ձեռնամխել։ Ահա գոյ նոյն ռաղամն ի յաթոռս՝ գրեցեալ ի ՌԿ թուին տաճկաց։ Զոր դոցեա ի յերեսն գրեցեալ ցուցականն և (    ) նշան համարոյն։ Եւ յայս ռաղամումն յիշի թէ՝ գեղջս այսմիկ հասուլ[1] և ծառւտն հարիւր յիննսուն խալվար և Ե լիտր և կէս ևս աւելի է լեալ, զոր տուեալ է Աթոռոյս։

Յետ այսորիկ ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, յաւուրս Շահ-Սուլէյմանին Պարսից, ի դրանէն արքունի իշխան տաճիկ յորդւոց Ամիրկիւնէ խանին, որոյ անունն Ապաս-ղուլի, գայ յերկիրս յայս ի գործ արքունի. և որովհետև հայր սորին Ամիրկիւնէ խանն ժամանակ ինչ կերեալ է զմուլք գեղջս այսորիկ, և սա սկսանի դաւի յարուցանել ընդ Յակոբ կաթուղիկոսին թէ՝ մուլք գեղջս այսորիկ իմ է, դու զիա՞րդ ունես։ Ապա Յակոբ կաթուղիկոսն զգիր Ամիրկիւնէ խանին՝ և զհին փախուպնամայն՝ զորս ի վերդ յիշեցաք, ցուցանէ նմա։ Եւ նա վերահասուեալ, գիր մի ևս ինքն տայ շարէ[2] կնքով թէ՝ և ես գիտացի հաւաստեաւ՝

1) Բերք։ — 2) Դատաստան, դատաւոր։



որ վեց դանկ մուլք գեղջս այսորիկ Էջմիածնի է, ի ՌՀԲ թուին տաճկաց։ Գիրն ցուցականն։ Եւ յետ այսպէս լինելոյն, ապա սոյն Յակոբ կաթուղիկոս զայսոսիկ յիշեցեալ զրեանս առեալ գնայ ի յԱսպահան՝ ի դիւանատունն նոցա, և ցուցանէ, և հաստատէ զգեօղս զայս դոլ ի բնէ անտի սրբոյ Աթոռոյս։ Ապա ի տեսանել շեխուլամին և այլոց մեծամեծաց՝ գրեն զհաստատուն գիր մի և վկայեն թէ՝ մեք վերահասու եղաք ստուգութեամբ, որ այս գիւղիս վեց դանկ մուլքն, մուղաթէքն, ջաղբէն, և այլ հասքն, բոլորովին սրբոյ Էջմիածնի են լեալք ի բնէ անտի։ Այլ և վկայեն ի սոյնում գրի թէ՝ տեսաք զհնոց փախուպնամայն, զԱմիրկիւնէ խանի գիրն, և զայս գրեանս։ Այլ և յիշեն թէ յառաջ քան զայս՝ յաւուրս Սահակ և Մովսէս կաթուղիկոսացն ևս են արարեալ ոմանք վէճ վասն այսորիկ, և սուտ են եղեալք։ Արդ մեք ամենեքեան վերահասու եղաք և վկայեմք, որ այս գեօղիս հասլ, մուտախիլ, և բահրէն, բոլորովին սրբոյ Էջմիածնի է լեալ ի բնէ անտի. ով ոք այսուհետև ձեռնամխ լիցի, և կամ դաւի արասցէ, սուտ է և յանցաւոր, և բան նորին անընդունելի։

Այսպէս գրէ շեխուլամն, և այլք մեծամեծք, և կնքեն և տան Յակոբ կաթուղիկոսին։ Եւ Յակոբ Կաթուղիկոսն արդ առնէ Շահ-Սուլէյմանին՝ ցուցանելով զայն գիրն։ Եւ Շահն ևս ի միւս երեսն նոյն թղթոյն ռաղամ գրէ թէ՝ զոր ինչ գրեալ և վկայեալ են ի միւս երեսն թղթոյս դատաւորքն, յիրաւի է. և ես հրամայեցի զի այդպէս լիցի։ Գրելով և զպատուէրս Երևանու իշխողաց, զի մի՛ ոք ընդդէմ գրեցելոցս շարժիցի։ Այսպէս հաստատուն թուղթ ի դատաւորաց և ի Շահ Սուլէյմանէն երկիցս անգամ առնու Յակոբ կաթուղիկոսն, մին՝ ի ՌՋԲ թուին, և միւսն ի ՌՋԶ. տաճկաց։ Որք ահա գոն ի սուրբ Աթոռոջս երկուքն ևս։ Զորս դոցեա յերեսսն գրեցեալ ցուցակօքն և (    ) և (    ) համար նշանիւքն։ Եւ երկու սաւաթք ևս գոն սոցա շեխուլամի կնքով, զորս դոցեա ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն և (    ) և (    ) նշան համարովքն։ Որք երկուքն ևս հարկաւորք և շատ պիտանիք, և լաւ պահելիք են։ Այսոքիւք ափ ի բերան արարեալ պապանձեցուցաք մեք ի ժամանակս մեր զպիղծ միրզայ-Շէֆին, որ դոլով երկրիս դիւանագիր՝ կամէր խափանել զմուլքութիւն սրբոյ Աթոռոյս ի ՌՄԺԳ թուոջն մերում։ Արդ լուսահոգի Յակոբ կաթուղիկոսն թէպէտ այսպէս գրովք և վկայութեամբ ի յաթոռս դարձուցանէ զվեց դանկ մուլք գեղջս մերոյ՝ որպէս գրեցաք, սակայն յետոյ ի ժամանակս ժամանակս տաճիկքն այնոքիկ՝ որք յանտէրութենէ Աթոռոյս և ի խառնակմանց ժամանակին երբեմնապէս զաւթեալ էին զգեօղս զայս և խրացուցեալ, (զորս յիշեցաք ի վերդ), դան երբեմն առ Յակոբ կաթուղիկոսն և դաւի առնեն ասելով թէ՝ մեր է մուլք գեղջս այս-

միկ, ոմանք լինքնին, և ոմանց ազգականքն, և ո՛չ տան հանգիստ։ Ոմանք միոյ գանկին գաւի առնելով, ոմանք երկուց և ոմանք կիսոյն, և այլն այսպէս։ Ապա Յակոբ կաթուղիկոսն ոմանց զգինն տալով վերստին գնէ և զհին ունեցեալ գրեանսն (որք են ղապալայքն) առնու ի ձեռաց նոցա, և զոմանըս ի դատաստան տանելով սուտ հանէ, և ոմանց զսակաւ ինչ դրամ տալով՝ ի բերանոցն գիր առնու։ Այսպէս առնելով հատանէ զձայնս դատախազեցն իսպառ յԱթոռոյս, և իսկապէս դարձուցանէ զվեց գանկ մուլքն գեղջս ի յաթոռս։ Եւ առեալ գրեանքն ի դատախազեցն են ի յաթոռս. Զհինգ հատ հին ղապալայս առնու ի տաճկաց, որոց մինն է ի ՌՃԿԳ գրեցեալ, մին ի ՌԻԱ, մին ի ՌԻԴ, մին ի ՌԻԷ, մին ի ՌԻԼ ի թիւն տաճկաց. Եւ զերիս գիրս ևս ի գեւանի ի բերանոյ դատախազեցն առնու, մին ի ՌՀԱ, մին ի ՌՀԴ, և միւսն ի ՌՀԷ թիւն տաճկաց գրեցեալք. որք ամենքեան գոն ի սուրբ Աթոռոջս։ Զորս գտցես ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն, և ի ( ) համար նշանէն մինչև ի ( ) համար նշանաւն։

Դարձեալ զկնի ժամանակաց Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի վեց կերպ խնդրոց աղագաւ արզ առնէ Շահ-սուլթան Հիւսէյինին։ Որոց երրորդ խնդիրն այս է թէ՝ սրբոյ Էջմիածնի մուլք տեղեաց և մաղաֆութեան ոմանք երբեմն ձեռնամուխ լինին, և ոչ թողուն զմեզ հանգիստ։ Եւ վասն այսոցիկ վեցից խնդրոցս յառաջնոց թագաւորացն ևս գոն ռաղամք ի սուրբ Աթոռս արդէն (զորս յիւրաքանչիւր տեղւոջն ասասցո՛ւք). զայնոսիկ ռաղամն ևս տարեալ ցուցանէ Շահին։ Վասն որոյ և Շահ-Հիւսէյինն տեսեալ զռաղամն, գրէ և ինքն ռաղամ մի, և զայնոսիկ վեց ռաղամն ևս յիշէ ինմա հանդերձ խնդրեօքն և թուովքն. և հրաման գրէ թէ որպէս մեր նախնի թագաւորքն հրաման են տուեալ վասն այսոցիկ գրեցելոցս, և ես եսու հրաման՝ զի այսպէս լիցի։ Եւ պատուէր Երևանու իշխողացն, զի մի՛ թողցեն զոք ձեռնամուխ լինել ի մլքատու տեղիսն Էջմիածնի։ Եւ այս ռաղամն գոյ ի սուրբ Աթոռս՝ որպէս ցուցանի ի յերեսսն գրեալ ցուցակաւն, որ է գրեցեալ ի ՌՃԻԴ թուին տաճկաց և ( ) նշան համարով։

Դարձեալ ի թուոջս մերում ՌՃՀԳ, և ի տաճկաց թուին ՌՃԼԷ, Օսմանցիքն առին զերկիրս մեր ի Պարսից, (որք և տիրեցին յամս ԺԳ), նստի յԵրևան Ռաճապ անուն փաշայ, որում և ծանուցանէ Աստուածատուր Կաթուղիկոսն զորպիսութիւնս Աթոռոյս, և զգիր խնդրէ վասն մլքատու գեօղօրէիցն, և մաղաֆութեանն Աթոռոյս։ Վասն որոյ և փաշայն գրէ զգրքաձև դէֆթէր 1) մի, որոյ զգլուխն ինքն կնքէ, և զվերջն ղազին.

1) Տետրակ:



Յորում գրեցեալ սրբոյ Աթոռոյս մլքատու գեօղօրայքն են այսոքիկ. Այս մեր գեօղս, Մաստարայ, Յօշական, Փռանկանոց, և Քիրաշլու։ Այլ և մաղաֆ եղեալ մուլքն Աթոռոյս խոմս գրեցեալ են այսոքիկ։ Ի մեր գեօղս վեց չէն ջրաղաց, երկու աւեր։ Մէկ չէն ձինկ, երկու ձիթահանք, քսան և հինն արտ ցանելի. երեք [illegible] 1), երեք այգի. երկու այգի ևս Յօշական, մէկ ևս աւեր։ Ի Փարաքար երկու այգի, յԵրևան երկու այգի, երկու ջրաղաց։ Ի Քեալարայ երկու ջրաղաց՝ մէկ ձինկ։ Երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի գետոյն՝ որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, (որ [illegible] ասի, որոյ ակն է մերձ Սարուանլար կոչեցեալ գեղջն՝ որ յԵրևան ի ներքոյ բերդին), և վեց հարիւր ոչխար։ Եւ սեւագլուխք և միաբանքն մաղաֆ, և մի՛ տայցեն [illegible] 2). և այսքան վանօրայք ևս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղաֆ լիցին. սուրբ Հոփփսիմէն, Շողակաթն, Գայիանէն, Երևանու սուրբ Անանեայ Առաքելոյ և Զորագեղու անապատքն։ Բայց միայն Խալիֆայն ի տարւոջն զվեց հազար ութ հարիւր ստակ տայցէ յարքունիս, և ոչ այլ ինչ։ Գի՛տ զայս գիրս ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Թիւն տաճկաց ՌՃԼԷ։ Այսպիսի օրինակաւ գիր . . . հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք՝ զորս գտցես ցուցակօքն։

Իսկ յետ այսորիկ ի ՌՃԽ թուոջն տաճկաց, և ի ՌՃՀԶ թուոջն մերում՝ յաւուրս Կարապետ կաթուղիկոսին ձեռամբ փաշային Երևանու արզ առնեն Սուլթան-Ահմէտ թագաւորին Օսմանցւոց, և գրեն զդեվթէր մի տաճկերէն, յորում յանուանէ և ուրոյն ուրոյն յատկացուցանեն զքանի տուն լինելն գեօղիս, զքանի այգիս, զջրաղացս, զպարտէզս, զսերմանելի տեղիսն և զայլս այսպիսիս. այլ և գրեն ի նմա յատկապէս զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս թէ ունի զայգիս, զջաղացս, զձինկս, [illegible] 3), [illegible] 4), և զայլ ամենայն մուլքսն առանց յատկացեալ թուոյ։ Այլ և երկու գուլթանս, հազար հինգ հարիւր սոմար սերմանելիս, զվեց հարիւր ոչխարս։ Եւ զԱթոռս, զերիս վանսն, իւրեանց միաբանիւքն։ Զորս զամենեսեանսն մաղաֆ առնեն ի բնաւից հարկաց։ Յորում գրի վերջապէս թէ Կաթուղիկոսն յամէ յամ թագաւորին ԳՃՌ [illegible] տայ միայն, և յայլ յամենից կողմանց մաղաֆ լիցին, ոչ խարաչ ոչ [illegible] 5), և ոչ այլ ինչ խարճ։ Այլ և գրեն, թէ Էջմիածնի գեօղս, Յօշական և Մաստարայ՝ մուլք են սրբոյ Աթոռոյս, որք յամենայնէ զտասանորդս պարտին տալ։ Զայս ամենայն գրէ չխիալամի և կնքէ զվերջ բանին, և մատուցանեն թագաւորին։ Եւ թագաւորն ևս ի գլուխ դեվթէրին գնէ [illegible] 6) իւր, այս ինքն [illegible]։ Զսոյնանման թուղթ մի ևս ի ժամանակս Աբրահամ կաթուղի-

1) Արօտատեղի: — 2) Գլխահարկ: — 3) Բաղանիք: — 4) Իշխան: — 5) Սփիւռ. թեթեւ նարկ: — 6) Արմա, կամ թուղրա, թուղղրա, դրոշմ արքունի:

կոսին Մշեցւոյ չինեն յետ երից ամաց, նոյնպէս և գրեցուցանեն որ ինչ ի վերնումն գրեցաւ. նոյնպէս և Սուլթան-Մահմուտ թագաւորն Օսմանցւոց գնէ զթուրէն ի ղուլս գեղջերին, նոյնպէս և հրամայէ, զի Աթոռոյս տացեն զմուլքն անխափան վերոյ գրեալ գիւղքն։ Եւ կնքէ չխսլամն զկիցս թղթոցն, և ի վերջն, ի ՌՃԽԳ թուոջն տաճկաց։ Որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք, և են երկար գրքանք, մին՝ չորս թուղթք, և միւսն հինգ թուղթք։ Որք երկուքն ևս կան ի սուրբ Աթոռս, ունելով ըղծաղկեայ պահարան, յատուկ յատուկ, և են ի միում ծղոտանաձև [1]) թղթեայ պահարանում ։ Եւ յերեսսն գրեցեալ ցուցակքն ևս ցուցանեն։

Դարձեալ ի ՌՃԽԸ թուին տաճկաց մինչ Նատր-շահն առնու զերկիրս մեր ի յՕսմանցւոց, ի Հայրապետութեան Աբրահամու Թրակացւոյ, զխանագիրք Նատր-շահին և նորին հրամանաւն ի գիր արկանելն զերկիրս, զգեօղօրայսն և զրերսն նոցին, զգիր մի տան սրբոյ Աթոռոյս՝ հաստատուն վճռով, և կնքեալ վկայեն՝ թէ Էջմիածնի գեօղս, Օշական, Փառնկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու, և Քէշիշքենդ գեօղօրէիցս վեց դանկ մուլքն սրբոյ Էջմիածնի՝ են ստուգիւ։ Յորս ոչ ոք ունի հրաման ձեռնամխել։ Զորս գտցես ցուցակաւն, և ( ) համար նշանաւն։

Յաղագս Յօշական կոչեցեալ գեղջն, որոց վեց դանկ մուլքն այս ինքն տասանորդն և սրբոյ Աթոռոյս, թէ որպէս, եւ երբ, ժանուցանի:

Բ. Այս գեօղ ի ժամանակս իշխանութեանն Հայոց էր ընդ իշխանութեամբ իշխանաց Հայոց. յետոյ ի տիրելն Հայաստան երկրիս այլազգի տաճկաց, անկաւ ընդ իշխանութեամբ տաճկաց, որպէս և ամենայն գեօղք։ Յետոյ ի թուին մերում ի ՌՉԲ, և ի տաճկաց թուին ի ՌԽԲ. յորժամ նստաւ Կաթուղիկոս յԱթոռս Էջմիածնի երանելին Փիլիպպոս, սկսաւ ի յԱթոռս դարձուցանել զվեց դանկ մուլքն սորին։ Նախապէս առնու զկէս դանկ մուլքն գեղջս այսմիկ Փիլիպպոս կաթուղիկոսն ի Սհաթլուեցի Սուլթան բէկ կոչեցեալ տաճկէ միոյ հինգ թումանի։ Զորոյ զղապալայն տաճկերէն գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն, և ի (Բ) համար նշանաւն և ի թուին տաճկաց մէկ հազար և յիսուն։ Սմին համաձայն ի միւս ամին, ի տաճկաց թուին ի ՌԾԱ, ի նոյն տաճկէն վերստին առնու զնոյն կէս դանկ մուլքն ևս հինգ թումանի։ Զոր գտցես ի յերեսն գրեալ ցուցակաւն, և ի (Ա) համար նշանաւն։ Սոցունց սավատ մի ևս գոյ ի ( ) համար նշանիւ։

Երկրորդ նոյն երանելին՝ տաճկաց ի ՌԾԱ թուին առնու ի Բարայ Բանդալու և Բէկում կոչեցեալ տաճկաց զմէկ դանկ մուլք գեղջս՝ եօթն

1) Դրապանակ, տետր:



թումանի։ Որոյ տաճկերէն ղապալայն գոյ (Գ) նշան համարով։ Երրորդ. նոյն երանելին ի սոյն ՌԾԱ թուոջս տաճկաց առնու զկէս դանկ մուլքն գեղջս ի Հասան և Հիւսէյին տաճկաց վեց թումանի։ Զորոյ զղապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ի (Դ) համար նշանաւն։ Չորրորդ՝ առնու նոյն երանելին զկէս դանկ մուլք գեղջս ի Սուլթան բէկի թոռն Իսմայէլ բէկէ և ի Մէջլում-ղուլի-բէկ կոչեցեալ տաճկաց՝ հինգ թումանով՝ ի թուին տաճկաց մէկ հազար յիսուն և երկու։ Զորոյ զտաճկերէն ղապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ի (Ե) համար նշանաւն։ Որոյ սավատ մի ևս գոյ ի ( ) համար նշանաւ։

Հինգերորդ, սոյն երանելիս առնու զկէս դանկ մուլք ևս գեղջս ի Սէֆի-ղուլի-բէկ և ի Մէջլում-բէկ կոչեցեալ տաճկացն՝ վեց թումանով՝ ի տաճկաց թուին ՌԾԳ։ Զորոյ ղապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն՝ և ի ( ) համար նշանաւն։

Վեցերրորդ՝ նոյն երանելին գնէ զկէս դանկ մուլք ևս գեղջս ի Շահզէյնապ կոչեցեալ տաճկէ՝ չորս թումանով, ի տաճկաց թուին ի ՌԾԴ։ Զորոյ զտաճկերէն ղապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ի ( ) համար նշանաւն։

Եօթներրորդ նոյն երանելին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Թահմազբէկի որդի Մէջլում բէկ կոչեցեալ տաճկէ՝ վեց թուման և չորս հազարդինանով՝ ի ՌԾԵ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գտցես ի ( ) համար նշանաւն։

Ութերորդ՝ նոյն երանելին գնէ զկէս դանկ մուլք ևս գեղջս այսմիկ ի յԱմիրասլան բէկի որդի Հիւսէյին պէկէն՝ հինգ թումանով, ի ՌԾԵ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ի ( ) համար նշանաւն։ Սորա երկու սավատք ևս կան ի ( ) և համար նշանով՝ որպէս և ցուցակքն յայտ առնեն։

Դարձեալ յետ Փիլիպպոս Կաթուղիկոսին նստի Յակոբ երանելի Կաթուղիկոսն, և նա սկսանի գնել զմնացորդսն սոյնոյ գեղջ ի կողմանէ մլքին, և իսպառ յԱթոռս դարձուցանել զվեց դանկն բոլորովին։ Նախ գնէ ի Սահաթլուեցի Հիւսէյին բէկի որդի Խանադանղուլի և Քալպալի կոչեցեալ տաճկէ զկէս դանկ մուլքն՝ հինգ թումանով՝ ի ՌԿԶ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գտցես ի յերեսն գրեալ ցուցական և ( ) նշան համարով։ Երկրորդ, նոյն երանելին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Բաղաղ դարկեահ տաճկէ Է թումանով՝ ի ՌՀԷ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գտցես ցուցակաւն, և ( ) համար նշանաւն։ Երրորդ, սոյն երանելիս գնէ ձեռամբ իւր Աթոռակալ Մի-

քայէլ վարդապետին Ցօշականայ մոհալլայն 1) Մանկանոց կոչեցեալ · վեց դանկ մուլքն ի յԵրևանցի Այյասլու [illegible] 2) Հարիպէկ կոչեցեալ տաճկէ ԺԱ հազար դիանով՝ ի ՌՀԸ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն և ( ) նշանաւ. որոյ հին ղապալայն ևս գոյ ( ) համար նշանաւ։

Չորրորդ գնէ սոյն երանելիս զկէս դանկ մուլք գեղջս Ցօշականայ ի Սէֆի-ղուլի տաճկէն Սհաթցւոյ՝ Է թումանով ի ՌԾԳ թուին տաճկաց։ Զորոյ ղապալայն գիտ ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Ե. րորդ, սոյն երանելիս ձեռամբ իւր Աթոռակալ Ոնոփրիոս վարդապետին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Սէֆի-ղուլի տաճկէ՝ վեց թումանով՝ ի ՌՂԱ թուին տաճկաց։ Զորոյ ղապալայն գի՛տ ցուցակաւն և ( ) նշանաւ։ Սորին ազգաւ հօճէթ մի ևս գոյ ի շխխլամէ տուեալ վեց թումանով ի ՌՁԳ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւ և ( ) նշանաւ։ Վեցերորդ, սոյն երանելիս ձեռամբ իւր Աթոռակալ Ստեփաննոս վարդապետին գնէ զկէս դանկ մուլք գեղջս ի Թահմազի որդի Մուշուտ տաճկէ վեց թումանով, զորոյ ղապալայն գտցես ցուցակաւն և ( ) նշանաւ՝ ի տաճկաց ՌՂԱ թուին։ Եօթներորդ, սոյն երանելիս գնէ ձեռամբ Աթոռակալ Մինաս վարդապետին զկէս դանկ մուլք գեղջս ի Հայ Գասպարէն՝ տասն թումանով. զորոյ զղապալայն և զվախպլամայն գտցես ցուցակաւ և ( ) նշանաւ ի տաճկաց թուլին ՌՂԲ։

Ցետ այսր ամենայնի՝ մինչ զբոլոր վեց դանկ մուլքն գեղջս գնեն այս երանելիքս՝ որպէս ասացաք, Սհաթլուեցի Բաբուռ աղայի աղջիկ Թուքազբան կոչեցեալ ոմն գաւի առնէ ընդ Ցակոբ Կաթուղիկոսին վասն կէս դանկ մլքին՝ ասելով իմ է. Վասն որոյ և Ցակոբ Կաթուղիկոսն տայ նմա ԺԲ հազար դիան դրամ և գիր առնու ի նմանէ։ Զոր գտցես ցուցակաւն և ( ) նշանաւն գրեալ ի ՌՁԷ թւին տաճկաց։ Դարձեալ Դանիէլ անուն ոմն գաւի արարեալ ի Ղլիճ-Ասլանի դուստր Հիւրի խանմէն և ի Հալաջ-ղուլու դուստր Թիլլի խանէն թէ այս գեղջ կէս դանկ մուլքն իմ է, զոր դուք ծախեալ էք Էջմիածնի։ Վասն որոյ և Ցակոբ կաթուղիկոսն երեք թուման և հինգ հազար դիան է տուեալ նմա, և գիր առեալ ի նմանէ՝ ի ՌՂ թուին տաճկաց։ Զոր գտցես ( ) և և գիր առեալ ի նմանէ՝ ցուցակաւ և նշանաւ։ Դարձեալ բաղչայ 3) ուստայ 4) Ալի տաճիկ ոմն գաւի է արարեալ կէս դանկ մլքին գեղջս, և Մինաս վարդապետն չորս թուման է տուեալ և գիր առեալ նմանէ ի ՌՂԳ թւին տաճկաց. զոր գտցես ( ) նշանաւ և ցուցակաւն։

1) Թաղ: — 2) Պահակ: — 2) Փեզզազ, բեհեզագործ, կերպասավաճառ: — 3) Վարպետ:



Դարձեալ Ամիր-ասլան-պէկի թոռն աղջիկ Փէրի տաճիկ ոմն Սհաթլուեցի, և իւր վէքիլ Քուրտլար-ղուլըպան-Ալին գաւի առնեն Աթոռոյս թէ՝ Ցօշականայ մէկ դանկ մլքի երեք բաժինն մեր է։ Աթոռակալ Մելքայէլ վարդապետն տասն սօմար ցորեան տայ նոցա և գիր առնու ի նոցանէ ի ՌՂԶ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն և ( ) նշանաւ։

Արդ այս երկոքին լուսահոգիքս մինչ քանիցս այսպէս կրկնելով գնեալ են այս Ցօշական գեղջս Զ դանկ մուլքն, և տաճիկք ոմանք, որք երբեմն ունեցեալք են զհին ղապալայ և զթուղթ ինչ վասն սորին, և եկեալք երբեմնապէս գաւի են արարեալ զմանէ՝ չտալով հանգիստ, վասն որոյ և սոքա որոնեալ և տեղեկացեալ թէ՝ յուրեք գտանեցեալ է վասն այս գեղիս թուղթ ինչ, զայնս ևս առեալ են որով կերպիւ և իցէ։ Քանզի երկիրս այս յորժամ ի ձեռաց Քրիստոնէից ի յիշխանութիւնս տաճկաց անկանի, գեօղս այս նախապէս զաւթէ տաճիկ ոմն Ամիրքամալ-ապետին-պէկ անուն, որդի հաճի Նաւռուզի, և թոռն հաճի Հէյդարի։ Եւ այս տաճիկ յետոյ ծախէ զվեց դանկ մուլք գեղջս այսորիկ խօճայ Սատիվախկազ տաճկի ումեմն, որդւոյ Սէյդ-Ալւոյ և թոռին Քեամալ-Հիւսէյնի, ութն հազար դինարի, ի թուին տաճկաց ԸՃՂԴ։ Զորոյ ղապալայն գրէ շխխլամ տաճիկ ոմն Իւսուֆ անուն՝ որդի Խալիլի։ Որ է հնագոյն և մեծ կոնդակաձև, յորում գրի յՕշական չորից կողմանց կոպարօքն և սահմանօքն, մի կողմն Հաճիլար կոչեցեալ գեղջ մօտ Ղարաքիլիսէն, մի կողմն՝ Շաղվերթի ջուրն, մի կողմն՝ Թաքեայ կոչեցեալ գեօղն։ Եւ միւս կողմն՝ Կարփւոյ ճանապարհն և առապարն։ Այս է բուն և մայր ղապալայն սոյն գեղջս վեց դանկ մլքին։ Զորոյ գտցես յերեսն գրեալ ցուցակաւն, և ( ) նշանաւ։ Զի մինչ յիշեալ լուսահոգիքն գնեալ են զվեց դանկ մուլք գեղջս այսորիկ կատարելապէս, զայս ղաբալայս ևս առեալ են ի նախկին տէրանցն։ Որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Այլ և ընդ սմին զԺԱ հատ հին ղապալայս ևս են առեալ ի տաճկաց, որք ոմանք զկէս և ոմանք զմի դանկն ունեցեալ գոլով ծախեալ են սրբոյ Աթոռոյս։ Զի ի գնելն լուսահոգւոց ի տաճկաց զմուլքն գեղջս, միով և կիսով դանկիւ հաստատուն ղապալայիւք, զհին ղապալայս նոցին ևս են առեալ ի նոցանէ։ Զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն, և ի ( ) նշանէն մինչև ի ( ) նշան համարն։

Դարձեալ յետ այսորիկ ի յաւուրս Աստուածատուր Կաթուղիկոսին, ի ՌՃՀԱ թուին մերոյ, յՕշականայ գեղջ բոլոր Հայքն ի պատահմանէ իմեքէ, և կամ ի հարկապահանջութենէ այլազգեաց, ի նեղ անկեալ կարի անկարանան, և եկեալ առ Աստուածատուր Կաթուղիկոսն՝ խնդրեն զհարիւր յիսուն թուման դրամ, այսու պայմանաւ թէ՝ մեր գեղջ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյդ է՝ որ է տասանորդ։ Արդ այժմ այսքա՛ն դրամ տո՛ւր

մեզ, և մեք այսուհետև երկու մուլք տացուք քեզ, որ լինի ի հնգէն մէկ, և ի տասնէն երկու մուլք։ Այսու պայմանաւ առեալ զհարիւր քսուն թուման դրամն, և բոլոր գիւղականքն ընդ Աթոռակալին գնացեալ յԵրևան առ շխիլամն-Մօլա-Մահմատ-Հիւսէյին կոչեցեալ (որ անուանի և յառկացեալ ոմն է լեալ ի տաճիկսն երկրիս)՝ ծանուցանեն նմա, և ամենեքեան համաձայն յանձն առնուն զայս կանոն, և գրեցուցանեն զհաստատուն ղապալայ մի, և բազմաց տաճկաց ևս կնքեցուցանեն, և միմեանց ևս երաշխաւոր լինին, իբր թէ՝ մեք մեր կամաւ այսքան դրամ առաք ի Կաթուղիկոսէն, և գեղջս մերոյ ամենից հասից և սերմանց մուլքն) (յորոց և տասնէն մէկն տայաք յառաջ) ի հնգէն մէկն տացուք այսուհետև։ Եւ ո՛վ ոք ի մէնջ ընդդիմանայ՝ մեք վրէժխնդիր լիցուք։ Այս լինի և գրի ի Տաճկաց հազար հարիւր երեսուն և չորս թուին։ Զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն, և ( ) համար նշանաւն։ Սմին համաձայն սոյն գեօղականքս յետ չորից ամաց յաւուրս իշխանութեան Օսմանցւոց, ի Տաճկաց թուին հազար հարիւր երեսուն և եօթն, զղաբալայ մի ևս տան Կարապետ Կաթուղիկոսին ձեռամբ Աթոռակալ Սիմէօն վարդապետին, զոր գտցես յերեսն գրեալ ցուցակաւն և ( ) նշանաւ։ Արդ զգեօղս զայս Եօշական՝ Մուղանլու կոչեցեալ ազգ մի տաճկաց զաւթեալ և խրացուցեալ էին որպէս զբնիկ և զսեփական գեօղ և բնակարան ինքեանց, և բնակեալ էին ի սմա յամս քսան։ Զայնքան այգիսն անապատացուցեալ զաւերորդ տունսն քակեալ, և զցանեցելոցն մուլք ևս ո՛չ տային սրբոյ Աթոռոյս, և բնիկ գեօղական Հայքն աստ և անդ կային տատանեալք։ Մեք Աստուծով հանեալ վարեցաք զՄուղանլու տաճիկսն աստի, և զգեօղական Հայսն բնակեցուցաք ի ՌՄԺԻ թուոջն մերում։

վասն Փառնկանց գեղջն, որ է յերեւանու երկրոջս, ի կարբի նահիէն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է, թէ որպէս եւ յորում ժամանակի, ծանուցանէ:

Գ. Զի որպէս ասացաք յանցեալումն՝ թէ ի տիրելն այլազգեաց երկրիս Հայոց՝ անկան և ամենայն գեօղք ընդ հարկաւ նոցին, նոյնպէս և այս գեօղ։ Եւ այսպէս մնացեալ ի ձեռս Տաճկաց՝ յետոյ ի ժամանակս Շահ-Սէֆի թագաւորին Պարսից և Մովսէսի Կաթուղիկոսին մերոյ՝ տէր գոլով վեց դանկ մլքին գեղջս այսմիկ Երևանցի Ամիրբէգի որդի Ահլուլլայ կոչեցեալ տաճիկ ոմն ծախէ Հաճի Խըլըի որդի հաճի Իբրահիմ և Սուլէյման կոչեցելոց տաճկաց՝ ինն թումանի, որոյ ղապալայն գրի ի Տաճկաց ՌԽԲ թուին։ Եւ յետոյ յայլմէ յայլ անցանելով՝ անկանի ի ձեռս Արալղցի Ալի աղայի Տաճկի ումեմն։ Ապա ի մեռանել այս Ալի աղայիս, սորին որդիք Իպրահիմն, Նաղուլն, Մուհամատն, և քոյր նոցին Հիւրի խանըն, և կին



մեռեալ եղբօրն իւրեանց Թամուր խանի՝ Հիւսէյին խանի դուստր Բէկում խանըն, ծախեն զվեց դանկ մուլք գեղջս այսմիկ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին մերոյ՝ ինն թուման ինն հազար դիան և տասն շահեայ՝ ի Տաճկաց թուին ՌԿԶ, զորոյ զղապալայն գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Եւ ի յառնուլն Յակոբ Կաթուղիկոսին զայս ղապալայս, առնու ի նոցանէ և զվերոյիշեցեալ հին ղապալայն, զոր գտցես յերեսն ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Եւ յետ այսորիկ ի յաւուրս Աբրահամ Կաթուղիկոսին մերոյ Մշեցւոյ և ի յիշխանութեան Օսմանցւոց՝ սոյն գեօղականքս ի պատահմանէ իմեքէ և կամ ի յաւելի պահանջմանց հարկաց այլազգեաց ի նեղ անկեալ՝ գան յԱթոռս առ Աբրահամ Կաթուղիկոսն՝ և խնդրեն զվեց հարիւր ղուռուշ Օսմանցւոց դրամ, որ է ըստ հաշուի երկրիս քառասուն թուման, այսու պայմանաւ՝ զի բաց ի տասնէն մէկ մլքէն (որ պարտին տալ սրբոյ Աթոռոյս), զմուլք մի ևս տայցեն, որ լիցի ի հնգէն մէկ։ Եւ Աբրահամ Կաթուղիկոսն ևս տայ նոցա զվեց հարիւր ղուռուշ դրամ, և առնու ի նոցանէ զղապալայ մի ի դատարանում Օսմանցւոց ի ՌՃԽԴ թուին Տաճկաց։ Զոր գտցես յերեսըն գրեցեալ ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Եւ ի նոյնում ժամանակին Մուստաֆա բէգ կոչեցեալ տաճիկ ոմն (, որ նոյնոյ գեղջն աղա է լեալ), ի նմանէ ևս գիր մի առնուն գեղականքն և տան մեզ՝ իբր թէ ինքն և որդին իւր Մահմէտն ևս կամեցան, և ոչ ևս խօսիցին յառաջ և յետոյ վասն սոյնոյ պայմանիս։ Զայն գիր ևս գտցես ի յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ( ) համար նշանաւն։ Արդ գեօղս այս ի բառնիլ թագաւորութեանն Պարսից և ի վրդովիլն երկրիս Երևանու, ամայացաւ ի բնակչաց իւրաց՝ որպէս և այլք բազումք։ Ապա ի ՌՄԹ թուոջն մերում ի ժամանակս Շամախեցի Յակոբայ կաթուղիկոսին՝ Հիւսէին-Ալի խանն Երևանու պայմանէ ընդ Յակոբայ կաթուղիկոսին՝ թէ ես աստի և անտի զՀայս բերեալ բնակեցուցից ի սա և շէն արարից, զկէս մլքին ես առից և զկէսն դու։

Յետ բազմից ստիպելոյ խանին՝ խօսք տայ և Յակոբ Կաթուղիկոսն ակամայ. և խանն յետ շինեցուցանելոյն զբոլոր վեց դանկ մուլք գեղջս զաւթեալ ինքն առնու և Աթոռոյս ոչինչ տայ յամս ութ մինչև ի ժամանակս մեր։ Ապա մեք խնդրեցաք ի նոյնոյ խանէն զմուլք գեղջս այսորիկ (ընդ այլոց ոմանց գիւղօրէից մլքիցն սրբոյ Աթոռոյս, զորս ինքն և այլք Տաճիկք զաւթեալք խրացուցեալք էին, զորս յիւրաքանչիւր տեղւոջն ասասցո՛ւք)։ Եւ խանն պատճառէր՝ թէ Յակոբ կաթուղիկոսն ինձ է բաշխեալ։ Եւ յետ բազմաց առարկութեանց հազիւ կարացաք զերեք դանկ մուլք գեղջս այսորիկ ի յԱթոռս դարձուցանել ի ՌՄԺԻ թուոջս մերում։

Զմնացեալ երեք դանկն ևս Տէր յաջողեսցէ։ Գիտ գլխոյ գիրն՝ որ զերեք դանկ մուլքն մեզ տայ՝ գրեցեալ ի ՌՃՁԲ թուին Տաճկաց։

Զկնի անցից այսոցիկ ի դաւ Նաւռուզին և ի մտանելն մեր ի ՌՄԺԸ թիւն մեր, սոյն Հիւսէին-Ալի խանս մեր մինչ զաւթեալ էր զխմամարս կոչեցեալ գեօղօրայսն և զՔիւլթափայն և զվայրսն ամենայն (որպէս ասացաք ի ԺԸ գլուխն)՝ սկսաւ զրպարտ դուլթանս բերել և յետ կոյսն Քիւլթափայն զվայրսն ամենայն վարել և բամբակ ցանել, զորս ջրով մերով էր ոռոգանելոց։ Ինչ և իցէ։ Յետ բազմաց գլխացաւութեանց և խռովութեանց, վերստին ետուք իւրն զնոր առեալ Գ դանկ մուլքն Փռանկանոց գեղջս այսորիկ, և առաք ի նմանէ զբոլոր վեց դանկ մուլք Քիւլթափայ կոչեցեալ գեղջն հետևելով ըստ ժամանակին կամաց նորին. որովհետև ինքնագլուխ տիրէր երկրիս։ Վասն որոյ ետուք մեք խանին զնոր ղապալայ մի վասն Գ դանկ մ.քին սոյն գեղջս։ Այլ և ընդ մերոյ ղապալային ետուք զվերոյիշեցեալ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսի ղապալայն ի ՌԿԶ թիւն տաճկաց գրեցեալ։ Այլ և զբազմակնիք վկայական գիրն վերոյիշեցեալ, և զսոյն խանիս տուեալ մեզ թուղթ վասն Գ դանկին սոյն գեղջս՝ որպէս ասացաք։ Իսկ խանն ետ մեզ ընդ վեց դանկ մ.քին Քիւլթափայ գեղջն՝ մէկ Նոր ղապալայ յիւր կողմանէն, և երկու հին ղապալայ.ք վասն սոյն գեղջս վեց դանկ մ.քին, զորս ինքն առեալ էր ի նախկին տէրանց իւրեանց, զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն։

Արդ վեց դանկ մուլքն Փռանկանոցին է ի ձեռս խանին, (որպէս թէ զերեք ի Համախեցւոյ Յակոբ կաթուղիկոսէն առեալ, և զերեքն ի մէնջ)։ Իսկ Քիւլթափայ կոչեցեալ գեղջն վեց դանկ մուլքն է ի ձեռս մեր։ Ի ժամանակս այս խանիս և մեր այսպէս եղև. յետոյ եթէ զաւաճան յարիցէ՝ կարէ յանթոս նստոյն ասել թէ մեր Փռանկանոցն մեզ տո՛ւք, ձեր Քիւլթափայն ձեզ լիցի։ Ըստ այսմ ոճի է և Ղօռուխն ի ձեռս մեր՝ փոխանակ մեր Խաթունարխին՝ որպէս ասացաւ յիւրումն տեղւոջ

Վասն Մասաարայ կոչեցեալ գեղջն, որ է յերևանեան յերկրոջս ի կարբի եանեն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյն է, բէ որպէս եւ երբ, ծանուցանի:

Դ. Զի որպէս ասացաք յանցեալսն, նոյնպէս և այս գեօղ անկանի ի ձեռս տաճկաց, և փոփոխի յայլմէ յայլ, ոմանց ըստ բոլորին, ոմանց ըստ կիսոյն, և այլոց ըստ մասին։ Ապա յետ ժամանակաց ի միոյ տաճկէ Մուզտաման-բատրխանի որդի Մուհամմատ աղա կոչեցելոյ զսոյն գեղջս երկու և կէս դանկ մուլքն առնու սոյն գեօղացի Ոսկանի որդի Թարխան (կոչեցեալ Հայ ոմն տասն և երկու հազար դինարի։ Որոյ և ղապալայն տաճկերէն գրի ի Տաճկաց ՌԿԶ թուին։ Եւ յետ միոյ ամի՝ նոյն Թարխանն զնոյն երկու և կէս դանկ մուլքն ձեռամբ Յակոբ Կաթուղիկոսին վախմ տայ սրբոյ Աթոռոյս. և ի գլուխ նոյնոյ ղապալային գրեցուցեալ զվախմական հաւաճէթն Հախսալամին՝ և կնքեցուցեալ ի ՌԿԷ թուին տաճկաց, տայ մեզ։ Եւ զայս ղապալայս և վախմամայս գտցես յերեսն գրեցեալ ցուցական և ( ) համար նշանաւն։ Իսկ յետ ութն ամի Ալփաւուտ կոչեցեալ Իպրահիմ խալիֆայի որդի Ոզայ-զուլի ոմն տաճիկ դաւ յարուցանէ ընդ սրբոյ Աթոռոյս ասելով՝ թէ ես զՆեատուր գեղի շէջտանկ մուլքն ծախեցի ձեզ երկու թումանով.... դուք զՄաստարայու երկու և կէս դանկ մուլքն յաւմէ՞ առեալ տիրէք։ Գնացեալ ընդ նմա ի դիւան տաճկաց, յետ բազմաց վիճմանց՝ տան նմա երեք թուման, և հաւաճէթ մի առնուն ի նմանէ, զի մի ևս խօսիցի։ Այս գրի ի թուին ՌՀԵ տաճկաց, զոր գտցես յերեսն գրեալ ցուցական և ( ) համար նշանաւն։



Դարձեալ ի ՌՃԻԱ թուին տաճկաց և ի ՌՃԾԸ թուոջն մերում Երևանցի Սարգսի որդի Մ՛հէր անուն Հայ մի, զերեք ունթուպ (որ է մէկ դանկի երեք բաժինն) մուլքն գեղջս այսմիկ ծախէ Աղէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տասն և մէկ թումանով։ Որոյ զղապալայն գտցես տաճկերէն գրեալ յերեսն ցուցական, և ( ) համար նշանովն։ Իսկ յետ հնգից ամաց ի ՌՃԿԳ թուին մերոյ, նոյն Մ՛հէրի թոռունք և Մուզաֆարի որդիք Բեկլարն և Մկրտիչն զկէս դանկ մուլքն ևս սոյնոյ գեղջ ծախեն սրբոյ Աթոռոյս՝ չորս թումանի՝ գրաւ գնելոյ անուամբ։ Որոյ զղապալայն գտցես յերեսն գրեալ ցուցական և ( ) համար նշանաւն։ Այլ և յետ հնգից ամաց սոյն Բէկլարս և Մկրտիչս ձեռամբ Երևանցի Խօճա Յակոբճանին զմէկ դանկ մուլք գեղջս ևս ծախեն Աստուածատուր կաթուղիկոսին մերոյ՝ եօթն թուման և հինգ հազար դինարի ի թուին տաճկաց ՌՃԼԲ, և ի մերում թուոջ ՌՃԿԸ։ Զորոյ զղապալայն գիտ ցուցական և ( ) համար նշանաւն։ Եւ յետ այսր ամենայնի յետ առնլոյն զբոլոր վեց դանկ մուլք գեղջս այսմիկ, ապա առեալ են և ի հին տէրանց զհին և զբուն ղապալայն, յորում գրի գեօղս այս սահմանօքն, որոյ մի կողմն Ղարախաչ կոչեցեալ տեղին, միւն կողմն՝ ուխարաց փարախն, միւն կողմն՝ Ապարանու ճանապարհն, և միւս կողմն Դլլօրան։ Զոր Միրաշահի որդիք Դաստ աղայն և Ջանփիտէն ծախեն Ղօւչի Ահմատ աղային և Սէյիտի Մուհամմատ աղային ի տաճկաց թիւն ԼԽԵ։ Զոր գտցես յերեսն գրեալ ցուցական, և ( ) համար նշանաւն։

Սոյն Մաստարայ գեօղացի [illegible] 1) Մահմատ խանն գիր մի գրէ մեզ թէ

1) Դուցէ էքինճի, երկրագործ, կամ ցանող:

գեօղս այս ձեր մուլքն է, արի՛ք ղտրա առուն հանեցէ՛ք։ Զոր գի՛տ ցուցակաւն՝ որ վկայութիւն է թէ՝ մուլք գեղջս այսմիկ մեր է։

Վասն Քիրաշլու կոչեցեալ գեղջն, որ է յԱպարանոյ նահանգն, որոյ վեց դանգ մուլքն սրբոյ Աթոռոյս է, թէ որպէս եւ ոյր ձեռօք, ծանուցանի։

Ե. Այս գեղջ վեց դանգ մուլքն՝ նախապէս լեալ սրբոյ Աթոռոյս ի ձեռըն Գրիգոր Կաթուղիկոսին, որ առնու ի յԱմիր-ռուստամէն մէկ հազար վաթսուն դինարի, և վաճառ առնէ սրբոյ Աթոռոյս, որպէս ցուցաւ ի ճառն գեղջս մերոյ Էջմիածնի։ Որոյ մեծ վախուպնամայն զոյ ի սուրբ Աթոռոջս, և զօրպխութիւնն անդ տեսցես։ Որ է մայր ղապալայ վասն այսր գեղջ և վասն այլոց վեցից գեօղօրէից՝ որք անդ գրին։ Դարձեալ յետ ժամանակաց յաւուրս Փիլիպպոս կաթուղիկոսին վասն այս Քիրաշլու գեօղիս, (որ Փիրի-ղամրիշ ևս կոչի), վեց դանկ մ.քին յաղագաւ Գիւլու տղայ Խան-Մահմատ տաճիկ ոմն խրովք ընտանեօքն եկեալ դաւի առնէ թէ՝ այս գեղջ մուլքն մեր է։ Ապա Փիլիպպոս կաթուղիկոսն տարեալ զնոսա յԵրևան առ Շէխիսլամն, և սուտ հանէ զնոսա, և հաստատէ սրբոյ Աթոռոյս զօղն վեց դանկ մուլքն այսր գեղջ։ Եւ չորս թուման ևս տայ շուքին և այլոց, և զնոր ղապալայի պէս հուճջէթ մի առնու տաճկերէն, զոր կնքեն շէխիսլամն, և այլք գլխաւորք իշխանք, և տաճկերէն և հայերէն վկայեն սրբոյ Աթոռոյս վաճառ զօղ ի բնէ մուլք գեղջս այսմիկ։ Եւ զայս ղապալայս զիտ յերեսն գրեալ ցուցակաւն և (   ) համար նշանաւ, որ գրի ի տաճկաց թուին ՌԿԴ և ի մերում թուոջ ՌՃԲ։

Դարձեալ ի ժամանակս Յակոբ կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տաճիկ ոմն Ղասում անուն դաւի առնէ ընդ սրբոյ Աթոռոյս՝ թէ գեղջս այս մուլքն իմ է։ Եւ ընդ սմա ևս երթան յԵրևան առ խանն և Շէխիսլամն։ Եւ խանըն բարկացեալ ի վերայ տաճկին՝ ասէ, թէ մեք ամենեքեան գիտեմք՝ որ մուլք գեղջդ այդմիկ Էջմիածնի է։ Ուստի և Շէխիսլամն զհուճջէթ մի գրեալ տայ սրբոյ Աթոռոյս՝ վկայելով թէ՝ վեց դանկ մուլք Քիրաշլուին Էջմիածնի է՝ ի ՌՉԲ թուին տաճկաց, և ի մերում թուոջս ՌՃԻ. զոր գտցես ցուցակաւն և (   ) համար նշանաւն։ Դարձեալ մինչ Յակոբ կաթուղիկոսն Ջուղայեցւոյ գնայ ի Ստամբօլ, յորում և վախճանի իսկ, Հաճի-բէկլու-Չահկեալտու որդի Ղաճար-Ալլահ-վէրտի բէկ կոչեցեալ տաճիկ ոմն զմուլք Քիրաշլու գեղջս այսմիկ, (նա և Դիպակլու և Քէշիշքենտ կոչեցելոց գեօղօրէիցն, որք ևս սրբոյ Աթոռոյս են, զորոց յետոյ ասասցո՛ւք։) զաւթէ և առնու զամ մի զմուլքս սոցին։ Վասն որոյ և սրբոյ Աթոռոյս Ղուկասարար Ստեփաննոս վարդապետն այլովք միաբանիւքն արդ առնեն յԵրևան խանին, և զկերեալ մուլքն յետս պահանջեն ի տաճկէն՝ հաստատելով



սրբոյ Աթոռոյս զօղ մուլքն սոցա։ Եւ տաճիկն այն զմիջնորդս արկեալ զերիս խալւար միայն տայ, և զմի գիր տայ շէխիսլամին ձեռօքն թէ՝ ոչ ևս այսուհետև ձեռնամուխ եղեց ի գեօղօրայսն յիշեցեալ՝ և ոչ ևս դաւի առարից, զի Էջմիածնի են, ի ՌՂԴ թուին տաճկաց և ի մերում թուոջ ՌՃԼԱ, զոր տեսցես ցուցակաւն, և (   ) համար նշանաւն։ Դարձեալ ի ժամանակս Նահապետ կաթուղիկոսին, Երևանցի Էմինի որդիք Ալիզուլի և Զէյնալապտի կոչեցեալ ոմանք տաճիկք եկեալ դաւի առնեն ընդ սրբոյ Աթոռոյս ասելով՝ Քիրաշլուի մուլքն մեր է, և զղապալայ մի ևս ունելով ի կողմանէ մօրն իւրեանց, և շարն երդումն հրաւիրէ զՆահապետ կաթուղիկոսն։ Իսկ Կաթուղիկոսն ի ձեռն մեծամեծաց զերկու թուման և Ե հազար դիան տայ նոցա, և զհուճջէթ մի առնու ի նոցանէ շէխիսլամին ձեռօքն, զի մի՛ ևս դաւի արասցեն վասն գեղջս այսմիկ, զի Էջմիածնի է, ի ՌՃԾԳ թուին տաճկաց, և ի մերս թուոջ ՌՃԾ։ Զոր գտցես ցուցակաւն և (   ) համար նշանաւն։

Դարձեալ ի յիշխանութեանս Նատրշահին ի ՌՃԽԸ թուին տաճկաց, և ի ՌՃՁԴ թուին մերոյ ի ժամանակս Աբրահամ Կաթուղիկոսին Թաքրտաղեցւոյ, դիւանագիրք Նատր-շահին և նորին հրամանաւն ի գիր արկանելն զերկրիս գեօղօրայսն և զբերս նոցին, զգիր մի տան սրբոյ Աթոռոյս հաստատուն վճռով, և կնքեալ վկայեն թէ՝ Էջմիածնի գեօղս, Օշական, Փռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու, և Քէշիշքենդ գեօղօրէիցս վեց դանկ մուլքն սրբոյ Էջմիածնի են սուրգիւ. յորս ոչ ոք ունի հրաման ձեռնամխել. զոր գտցես ցուցակաւն, և (   ) համար նշանաւն։

Եւ գիտեա՛, զի յորժամ ի լոյս բերաք զՄակուեցի Գրիգոր կաթուղիկոսի մեծ վախուպնամայն վասն եօթնից գեօղօրէիցն (որք ի նմա գրեցեալք են զօղ մուլք սրբոյ Աթոռոյս, յորոց մին և այս գեօղս է,) ի ՌՄԺԷ թուոջն մերում, և ցուցաք Հիւսէյին-ալի խանին Երևանու, զգիր մի ևս ի նմանէ առաք հաստատութեան վասն այլոց գեօղօրէիցս, իբր մուլք զօղ սրբոյ Աթոռոյս, յորում յանուանէ գրին գեօղօրայքն ի ՌՃՁԲ թուին տաճկաց։ Տե՛ս ի ճառս Աշտարակու։

Յաղագս Մուղնի գեղջն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է, որ է յերկրոջս Երևանոյ ի կարբի նահանգն, թէ որպէս եւ երբ, տես ի ներքոյ։

Զ. Գեօղս այս Մուղնի է ի յեօթանց գեօղօրէից մին, զորոյ զվեց դանկ մուլքն Ամիր-Ռուստամն ծախէ Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսին մերոյ՝ հազար յիսուն և հինգ դինարի, որոյ մեծ ղապալայն և վախուպնամայն զոյ յԱթոռոջս, զորմէ ասացաւ ի վերդ։ Որ անտի հետէ սրբոյ Աթոռոյս է

մուլք գեղջս։ Ապա յետ ժամանակաց յաւուրս Տեառն Փիլիպպոսի Կաթուղիկոսին, մինչ նորոգին բազում վանօրայք և եկեղեցիք, և շատք ևս ի հիմանէ նոր շինին, (որպէս պատմէ Առաքել պատմիչն,) նորոգի և հաստատի սրբոյն Գէորգայ յանուն կառուցեալ վանքն՝ որ է ի գեօղս այս Մուղնի՝ հոգաբարձութեամբ և արդեամբք նորին գեղացի և նորին վանից Առաջնորդ Մարտիրոս վարդապետին։ Վասն որոյ և Փիլիպպոս Կաթուղիկոսն ի պատիւ սրբոյն Գէորգայ, և ի յօգնութիւն ծախուց Մարտիրոս վարդապետին՝ զմուլքն Մուղնի գեղջս այսմիկ շնորհէ ձրիապէս նորին սրբոյ Գէորգայ վանիցն։ Որ և է այսպէս մինչև ցայսօր։

Եւ յաւուրս Յակոբայ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի յԱռաջնորդութեան նորին վանից Դաւիթ վարդապետին, Երևանցի տաճիկ մի Ալի-տօստի որդի Ապտլ-բաղի կոչեցեալ՝ գնացեալ արքունի երկրորդ Շահ-ապասին թէ՝ Մուղնի գեղջ վեց դանկ մուլքն իմ է ի բնէ, այժմ Էջմիածնի Խալիֆայն զաւթեալ ունէ։ Այս լինի ի Տաճկաց թուին հազար եօթանասուն և մէկ։ Եւ Շահն հրաման գրէ յԵրևանու Նաջաֆ-ղուլի խանին թէ՝ վերահասու լե՛ր իրին այդմիկ, թէ յիրաւի է, ի սա դարձո՛ զմուլք գեղջն այնմիկ։ Եւ յայսմ միջոցի սատակի յիշեցեալ Ապտլ-բաղին այն, և խորհուրդն մնայ անկատար։ Ապա յետ տասն և հինգ ամաց, կին Ապտլ-բաղուն, (որ Շահրիպան կոչիւր), վէքիլ առնէ ինքեան զՅուսուֆ եղբայրն իւր, որ եկեալ դաւի առնէ ընդ նորին վանից Առաջնորդ Դաւիթ վարդապետին։ Որք և գնան յԵրևան ի դատաւորն, և դատաւորն՝ (այս ինքն շէխիսլամն) զվկայս խնդրէ ի յՅուսուֆ տաճկէն, և Յուսուֆն ոչ գտանէ զվկայս։ Ապա ի Դաւիթ վարդապետէն զհաւաստութիւն խնդրէ ի յերդումն հրաւիրելով։ Իսկ Դաւիթ վարդապետն երդմամբ և մեծ զապալային Գրիգոր կաթուղիկոսին հաստատէ Էջմիածնի գոլ ի բնէ մուլք գեղջս այսմիկ։ Վասն որոյ և շէխիսլամն ի բաց վանէ զՅուսուֆն և զկինն Շահրիպան, և գիր գրեալ տայ Դաւիթ վարդապետին, հաստատելով թէ՝ վեց դանկ մուլք Մօղնի գեղջն ի բնէ Էջմիածնի է։ Այս լինի ի հազար ութսուն և վեց թուին Տաճկաց. գտցես զայս գիր յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն։

Արդ ի ՌՄԹ թուոջն մերում՝ սորին վանից Առաջնորդ կոչեցեալ վատաշուէր Աղէքսանդր վարդապետն ի Յակոբայ Կաթուղիկոսէն Շամախեցւոյ ծածուկ զմուլք գեղջս լիովին առեալ էր իբր կաշառ Երևանու Հիւսէին-ալի խանի նաչէբ 1) Իպրահիմ աղային, զի իւր-

1) Ոստիկան, տեսուչ, եւլն։



եան տիրութիւն արասցէ։ Որ և կերեալ էր մինչև ի ՌՄԺԷ թիւս մեր։ Ցորմէ մեք յետս առեալ զաւթեցաք՝ հաւաստելով մերն գոլ մուլք գեղջս մեծ վախուպնամային Գրիգոր կաթուղիկոսին Մակուեցւոյ։ Տե՛ս ի ճառըս Աշտարակու։ Եւ այս է գիտելի, զի սորին գեղջս գեօղական Հայքն ի վրդովմանց ժամանակին թողեալ զգեօղս զայս ամայի, եկեալ բնակեալ էին ի մէջ պարսպի վանիցն սրբոյն Գէորգայ՝ քսան ամաւ աւելի, որք և լցեալ էին զվանքն և զսուրբ եկեղեցին գարշութեամբ։ Զորս մեք յաջողմամբ Աստուծոյ հանաք ի վանից, և վերադարձուցաք ի բնիկ գեօղն իւրեանց Մուղնի՝ տալով զխարճս և զփայտս իւրեանց ծախուցն և տնաշինութեան։ Եւ զվանքն մաքրեալ արարաք նոր ի նորոյ վանք միաբանակեցաց ի փառս Աստուծոյ և ի պատիւ սրբոյն Գէորգայ ի ՌՄԺԼ թուոջս մերում։

Յաղագս Դիրակլու կոչեցեալ գեղջն, որ է յերեւան յԱպարանու նահիէն, որ Հայերէն Սանտ կոչի, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է, տես ի ներքոյ։

Ը. Դարձեալ ի ՌՃԼԱ թուոջն մերում՝ և ի ՌՂԴ թուին տաճկաց մինչ Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի գնայ ի յԸստամբոլ, յորում և վախճանի իսկ, Հաճի-Պէկլու Շահկեալտու որդի Ալլահվէրտի մի զօրաւոր տաճիկ զմուլքն գեղջս այսմիկ նա և Քիրաշլու և Քեշիշքենդ կոչեցեալ գեօղօրէիցն, (որպէս ասացաւ ի յորպէսն Քիրաշլուին) զաւթեալ ունէ ամ մի։ Եւ սրբոյ Աթոռոյս Լուսարար Ստեփաննոս վարդապետն ընդ այլոց միաբանիցն, արզ առնեն յԵրևան խանին, և ի նոյն յիշեցեալ տաճկէն յետս դարձուցանեն ի սուրբ Աթոռս՝ առնլով զհաստատուն հուճէթ մի և ձեռամբ շէխիսլամին ի նոյն Ալլահվէրտի տաճկէն, զի մի՛ ևս ձեռնամխեսցի ի մուլք այսց գեօղօրէիցս։ Եւ զայս գիրս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) համար նշանաւն։ Եւ յետ գնելոյ սրբոյ Աթոռոյս զվեց դանկ մուլքն գեղջս այսմիկ Դիրակլու կոչեցելոյ, ապա առնուն և զհին զապալայն սորին, յորում Ղուլու-հասալու Վալի աղայի որդիք Մահմատ և Ահմատ աղայքն ծախեն Ալփաուտ խալիֆայ Խալիլի որդի Իպրահիմ խալիֆայ կոչեցելոյն եօթն թումանի ի ՋՂԳ թուին տաճկաց։ Յորում և գրի սահմանք գեղջս, Արմուտ-աղաճին, Իլանլուն, Ղուզուլու-դարայն և Ղարա-տաշն՝ ի յԱպարան նահիէն։ Զոր գի՛տ յերեսն գրեցեալ ցուցակաւն, և ( ) համար նշանաւն։ Դարձեալ սորին գեղջս վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս լինելոյն յաղագս գիր մի ևս հաստատուն ի Նատր-շահի զխանագրույն ունիմք կնքով՝ թէ Էջմիածնի գեօղն, Յօշականու, Փառնկանոցի, Մաստարայու, Քիրաշլուի, և Դիրակլուի և Քեշիշքենդի գեօղօրէից վեց դանկ մուլքն սրբոյ Էջմիածնի են. զորոյ զօրպէսն ի յԷջմիածնի և ի Քիրաշլուի յորպիսութիւնն տեսցես։

Յաղագս Քէչիչքեանց կոչեցեալ գեղջն, որ է ի Դրխբուլախ նահիէն եւ կից Ապարանու նահիային, որ Այտին-դաւրիչ եւ Հալապիքեանց եւս կոչի, որոյ վեց դանգն մուլքն սրբոյ Աթոռոյս է, տես զորպէսն ի ստորեւ:

Ը. Գեօղս այս լեալ է ուրումն Ղուլ-Փահրատ աղա կոչեցեալ տաճկի միոյ, որոյ որդի է լեալ Ղուլ-Իսմայէլ աղա ոմն, յորմէ գնէ Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի զվեց դանգ մուլքն գեղջս երկու թումանի ի ՌՃԲ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայ գտցես ցուցակաւն, և յերեսն ( ) նշան համարովն։

Դարձեալ ի ՌՃԽԸ թուոջն տաճկաց վերոյիշեալ Թրակացի Աբրահամ կաթուղիկոսն արզ առնէ Նատր-շահ կոչեցեալ բռնաւորին թէ՝ սուրբ Աթոռս ունի ի բնէ անտի զեօթն գեօղս մլքատու, որք են, Էջմիածնի գեօղս, Յօշական, Փռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպաքլու, և Զալալքեանտ՝ որ է Քէչիչքեանտ, ռաղամ մի շնորհեա՛ մեզ, որ մեր գեօղօրէից և մեր մլքին մարդ ձեռնամուխ չլինի։ Եւ նոյն Նատր-շահն ի գըլուխ արզային հրաման գրէ։ Զոր գտցես ցուցակաւն։

Դարձեալ ի ՌՃԾԱ թուին տաճկաց Զիլքէյդէ 1) Նատր-շահն զգեօղս զայս Զալալքեանդ գրեն, որոյ բոլոր խարճն լինի տասն և վեց հազար դիան և չորս ապասի, և ինքեանք լեալ են ութ տուն։ Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Յետ ինչ ամաց՝ մինչ Յակոբ Կաթուղիկոսն ոչ լինի յԱթոռոջս, նոյն Ղուլ-Իսմայէլ աղայն յԵրեւան Սեֆի խանին արզ առնէ թէ՝ Էջմիածնի խալիֆայն զՔէչիչքեանոյ մուլքն՝ որ իմն է՝ զաւթեալ ինքն առնու։ Եւ խանն եւ նոյնոյ արզայի ի լուսանցն գրէ և կնքէ ի վերայ Աթոռակալին թէ՝ ե՛կ մուրաֆայ 2) լե՛ր ընդ դատախազիդ։ Եւ Աթոռակալն գնացեալ ի շարն, զրան ինչ տայ նոյն Իսմայիլին՝ և զայն արզայի գիրն (որ ի լուսանցըն եւս խանին գիրն և կնիքն գոյ,) առնու ի նմանէ։ Զոր գտցես ցուցակաւն, և ( ) նշան համարովն։

Ապա յետ գնելոյ զմուլքն գեղջս այսորիկ առեալ են երանելիքն մեր ի ծախողացն զհին ղապալայն եւս, յորում զմուլքն վեց դանգ գեղջս այսմիկ Փարխատին անուամբ հայ ոմն ծախէ Եաղուպ աղայի որդի խալիֆայ-Իբրահիմ պէկ կոչեցելոյ տաճկի ուրումն՝ վեց թումանի, ի ինն հարիւր ութսուն թուին տաճկաց։ Յորում կողմանք գեղջս գրի Արմուտ-աղաճին, Իլանլուն, Ղուզուլու-գարայն, և Ղարա-տաշն։ Զոր գտցես ցուցակաւն, և ( ) նշան համարով։ Զայլ որպէսն գեղջս՝ տես ի յորպիսութիւն Դիպակլու գեղջն։

---

1) գուցէ մէհմեկիգ, ընկից: — 2) Հանդէպ ճարցափորձի, դատ:



Յաղագս Նորագեղ կոչեցեալ գեղջն, որ է յԵրեւանու երկրոյս ի Դրխբուլախ նահիէն, որոյ վեց դանգն մուլքն սրբոյ Աթոռոյս է, թէ որպէս, եւ երբ, տես ի ստորեւ:

Թ. Նորագեօղ գեղջս այս վեց դանգ մուլքն ունեցեալ է նախապէս Երեւանցի խօճա Սէթ ոմն։ Այս Սէթս ունեցեալ է յերկրիս զվեց դանգ մուլքս Նորագեղու գեղջն, Նորք գեղջն, զչորս դանգ և կէս Եղուարդ գեղջն, զվեց դանգ մուլքն Եայճի գեղջն, որ է ի Ծաղկունեաց-ձորն, զվեց դանգ Գեօլքեանդ գեղջն, և զչորս դանգ և կէս մուլք Ամիրի գեղջն, որ է ի Գեօղարքունի։ Եւ զայլս այսպիսիս շատ, այգիս, ջրաղացս, տինկս, տունս, և զայլ մուլքս։ Զորոց զշատն Աթոռս առեալ է ի յորդւոց և ի թոռանց սորին, զորն գնով և զորն ի յիշատակ. զորս ասելոց եմք յիւրաքանչիւր տեղւոջն։ Արդ այս Սէթիս որդիք են եղեալք խօճա Յակոբճանն և Գրիգորըն։ Յակոբճանին որդի է լեալ Սարգիս (որ տաճկական անուամբ Մանսուր և Սարուխան կոչեցաւ), և Գրիգորին որդի է լեալ Քեալանթար Սահակն։ Եւ զայսմիկ վասն այն յիշեցաք, զի և սոքա են ծախեալ Յակոբ Կաթուղիկոսին զմուլքս, զորս յետոյ ասասցուք։ Այս Սէթի որդի Յակոբճանս՝ որ լեալ է բարեպաշտ և հոգեսէր, և աստուածատուր պարգեօք հարուստ յամենայնի, վախմ առնէ սրբոյ Աթոռոյս և յիշատակ տայ զվեց դանգ մուլքն Նորագեղ կոչեցեալ գեղջս այսորիկ՝ ձեռամբ Յակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ ի տաճկաց թուին հազար վաթսուն և ինն և ի մերումս թուոջ հազար հարիւր և ինն։ Այլ և ընդ սմին վախմ և յիշատակ տայ սրբոյ Աթոռոյս զչորս դանգ և կէս մուլքն Եղուարդ գեղջըն. այլ և զմէկ այգի եւս յԵրեւան քաղաքոջն, զոր Մըրխանենց այգի կոչեն. որոյ սահմանքն՝ ճանապարհն, սրբոյ Աթոռոյս վախմ այգին, սարն, և Ամիրբէկի այգին։ Այլ և զայգի մի ի Զորագեղ, զոր Թորոսենց այգի կոչեն, որոյ սահմանքն են, առուն՝ որ ելանէ ի Զանկի գետոյն, և Զորագեղցւոց այգիքն։ Այլ և զՋրաղաց մի ի Զորագեղ՝ զոր Գառնուկենց ջրաղաց ասեն, որոյ կողմանք են՝ ջրաղացաց առուն, Ղազարի ջրաղացն, և ճանապարհն։ Զայս ամենայն զորս գրեցաք՝ վախմ և յիշատակ տայ նոյն Յակոբճանն սրբոյ Աթոռոյս, և հաստատուն ղապալայս գրեցուցանէ զերկուս հատս տաճկերէն, բազմաց մեծամեծ Տաճկաց և Հայոց կնքեցուցանէ, և իւրոց որդւոց և ազգականացն եւս, այս ինքն նոյն Սարուխան կոչեցեալ Սարգսին, և այլոցն, և ինքն եւս կնքէ՝ և գրէ իւրով ձեռամբն թէ զայսմիկ վախմ նուէր սրբոյ Էջմիածնի ձեռամբ Յակոբ Կաթուղիկոսին իմով կամաւս, այսու պայմանաւ, որ ի շաբաթ և ի Կիւրակէ աւուրսն ի սուրբ Պատարագօջն յիշեսցեն յաւիտեան, զիս և զիմսն։ Ո՛վ ոք ի յաջորդականաց իմոց զաւի արասցէ, և յետս կամիցի առնուլ, ԳՃ Հայրապետացն նզովեալ լիցի։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Գի՛տ զայս ղա-

բոլայ.քս (որք նիկուքն են ըստ գրեցելոցն մի են, սակայն (    ) համար Նշանաւն, առաւել բազմակնիք է և լաւ զարդարեցեալ և հաստատուն քան զ (    ) համար Նշանաւն,) որպէս տեսանես յերեսն գրեցեալ ցուցակօքն։

Ցաղագս Նորք հոլեցեաւ գեղջն, որ է յԵրեւան երկրոջս, ի Դրխբուլաղ ճանինն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է, թէ որպես, եւ յորում ժամանակի, ծանուցանի:

Ժ. Գեօղս այս Նորք եղեալ է նախապէս Երևանցի Պարոն Սէթին, զոր ի վերոյ յիշեցաք. որոյ որդի է լեալ բարեպաշտն Ցակորճան և Ցակովբճանի որդի է լեալ Սարգիսն, որ յետոյ տաճկացեալ է և կոչեցեալ է Սաբուխան. գեղջս այս վեց դանկ մուլքն ի Խօճայ Սէթէն և Ցակովբէն մնայ այս Սարուխան կոչեցեալ Սարգսին։ Եւ Սարուխանս այս ծախէ զվեց դանկ մուլքն գեղջս այս Ջուղայեցի Ցակովբ Կաթուղիկոսին ԾԵ թումանի, ի տաճկաց թուին մէկ հազար ութսուն և հնգին, և ի մերում թուոջս մէկ հազար և հարիւր քսան և երեքն։ Որոյ կողմանքն են՝ Դղլթափէն, Երևանու առուն՝ որ ի Դրխբուլաղու գետէն ելանէ, խօճայ Գրիգորի ջրաղացներն և Դրխբուլախու գետն։ Գի՛տ զղաբալայն սորա յերեսն գրեցեալ ցուցական և (    ) համար Նշանաւն։

Իսկ և յառաջ քան զայս՝ զվեց դանկ մուլքն այս գիւղիս Թարվիզեցի Ահմատ բէկի որդի Ալիդօստն, և Երևանցի Մուսլումի որդի Մուհամատատղն, և Մահմատ-մաղսուտն են ծախեալ Ամիրկեօնայ խանի որդի Միրզայ-Նազր-կեօնին՝ Թ թուման և երկու հազար դիանի՝ ի Տաճկաց թուին ՌԻԷ։ Զորոյ զղաբալայն գտցես ցուցական և (    ) համար Նշանաւն։ Զի ի յանունըն Ցակովբ Կաթուղիկոսին զմուլք գեղջն՝ առեալ է և զայս հին ղաբալայս։

Ցաղագս Եղուարդ գեօղին, որ է յերկրոջս Երեւանոյ ի Դրխբուլաղ ճանինն: Որոյ չորս դանկ եւ կէս մուլքն սրբոյ Աթոռոյս է: Թէ որպես եւ երբ, տեսցես ի ստորեւդ:

ԺԱ. Գեօղս այս Եղուարդ՝ որոյ չորս դանկ և կէս մուլքն այսպէս է սրբոյ Աթոռոյս, որպէս ի վերդ ասացաք ի յորպիսութիւնս Նորագեօղոյ։ Քանզի բարեպաշտն այն Ցակորճան, որդի Պարոն Սէթին, ընդ վեց դանկ մ.քին Նորագեղու՝ զչորս և կէս դանկ մուլք գեղջս այս ես տայ սրբոյ Աթոռոյս վախմ՝ և յիշատակ։ Որոց ղաբալայն և վախմնամայն մի էր, և երկու հատ գրեցեալ ի Տաճկաց թուին հազար վաթսուն և ինն։ Զորս գտցես ի յերեսն գրեալ ցուցակօքն, և . . . . . . . համար Նշանիւքն։



Իսկ և յառաջ քան զայս յերկրոջս Երևանու՝ Մուրատ բէկ ումն տաճիկ վէքիլ լինի ի զրանէ արքունեաց, և այս Եղուարդ գեղջս չորս և կէս դանկ մուլքն՝ որ խօճայ Ցակովբին է լեալ, զմէկ և զկէս դանկ մուլքն ես այս Մուրատ բէկիս է լեալ, և այս Մուրատ բէկս բռնութեամբ զչորս և կէս դանկ մուլքն ես ի Ցակովբճանէն յափշտակեալ է, ասելով՝ թէ՝ գեղջս այս վեց դանկ մուլքն իմ՝ է լրապէս։ Վասն որոյ խօճա Ցակովբճանն եղեալ գնայ ի յԱսպահան, և արզ առնէ երկրորդ Շահ-Աբասին ցուցանելով զհաստատուն ղաբալայսն իւր և զայլս վկայական գրեանս։ Եւ շահն ես ռաղամ գրէ ի վերայ խանին Երևանու, զի զմուլքն Ցակովբին առեալ ի Մուրատ բէկէն տայցէ իւրեան. և մինչև ի գալն Ցակովբին, Երևանու խանն ձգի ի խանութենէ։ Վասն որոյ և վերստին դառնայ Ցակովբն ի յԱսպահան, և վերստին առնու ռաղամ ի նոյն շահէն ի վերայ նոր խանին։ Որով և գայ յԵրևան, հրամանաւ շահին և գրով շեխսլամին զաւթէ զմուլքն իւր, և շեխսլամն տայ Ցակովբին զհաստատուն հուճէդ մի իւր և խանի կնքովն՝ վկայելով թէ Ցակովբճանին է չորս և կէս դանկ մուլքն Եղուարդայ՝ ի տաճկաց թուին ՌԿԴ։ Զոր գտցես յերեսն գրեալ ցուցական և (    ) համար Նշանաւն։ Քանզի ուրվհետև Ցակովբճանս այս յետ հնգից ամաց սրբոյ Աթոռոյս վախմ տայ զայս չորս և կէս դանկ մուլքս՝ որպէս ասացաւ ի վերդ, վասն որոյ և զայս հուճէթս ես ընդ իւրոյ վախուպնամային տայ սրբոյ Աթոռոյս։ Արդ զգեօղս զայս Եղուարդ յառաջ քան զՕսմանցւոց տիրելն երկրիս, յաւուրս Պարսկական իշխանութեան՝ Պարսիկ խանք հանեալ էին յԱթոռոյս և իւրացուցեալ խալիսա 1) անուանելով։ Եւ յանփոյթութենէ Կաթուղիկոսացն մերոց և յանյաջողութեանց ժամանակին մնացեալ էր այնպէս ի ձեռս նոցա յամս յիսուն աւելի և կամ պակաս։ Մինչ զի զրէ թէ անհետ էր լեալ մուլք դոլն գեղջս Աթոռոյս։ Զոր ո՛չ ոք գիտէր ոչ ի յաթոռայնոցս և ոչ ի յերկրականացս։ Եւ գեօղս այս ես ի բաւնիլն թագաւորութեան Պարսից՝ ամայի և անմարդաբնակ էր լեալ յամս քանիս։ Ապա ի ՌՄԺԷ թուոջս մերում Երևանու Խան Հիւսէյին-Ալի կոչեցեալն մինչ կամեցաւ ի շինութիւն արկանել, մեք ցուցաք զվախուպնամայն Ցակորճանին, և հաստատեցաք զոլ սրբոյ Աթոռոյս մուլք գեղջս այսօրիկ. զոր և յաջողմամբն Աստուծոյ զաւթեցաք իսկ ընդ այլոց ամանց գեօղօրէից, որ և է այժմ սրբոյ Աթոռոյս չորս դանկ և կէս մուլք գեղջս այսօրիկ։ Տե՛ս ի ճառս Աշտարակ գեղջն։

1) Նշանակէ բուն կամ ճարտար:

Ցաղագս Նայձի եւ Ամիրի գեօղ կոչեցեալ գեօղօրէիցն: Զի Նայձի գեօղն որ է յերկրոջս Երեւանոյ ի նահիէն Դաղկոլենաց-ձորոյ, որոյ վեց դանկ մուլքն է սրբոյ Աթոռոյս, եւ Ամիրի գեօղն որ է ի Գեօղարքունեաց նահիէն, որոյ չորս եւ կէս դանկ մուլքն է սրբոյ Աթոռոյս, թէ որպէս եւ երբ, տես ի յատորեւս:

ԺԲ. Երկոքին գեօղ.քս այսոքիկ եղեալ են Երեւանցի խօճայ Սէթին, զորմէ ի վերդ յիշեցաք: Ի նմանէ մնացեալ.ք են ի միւս յորդին իւր Գրիգորն, եւ ի Գրիգորէն ի յորդին իւր Սահակ քեալանթարն: Եւ այս քեալանթար Սահակս զմուլ.ք երկուց գեօղօրէիցս այսոցիկ՝ այս ինքն՝ զվեց դանկ մուլ.ք Նայձի գեօղին. եւ զչորս դանկ եւ կէս մուլ.ք Ամիրի գեօղին, ընդ յոյս եւ ջրաղաց մի ի Զորագեօղն, որոյ կողմանքն են Զանկու գետն, ջրաղացի առուն, Յովհաննիսի ջրաղացն եւ Գրիգորի ջրաղացն: Այլ եւ մէկ ձեռ.ք տուն ի Նորագեօղ՝ քառասուն կարասով հանդերձ ծախէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին՝ երեսուն թումանի՝ ի տաճկաց ՌՀԱ թվին եւ ի Հայոց թուին . . . : Զորոյ զղապալայն գտցես յերեսն գրեցեալ ցուցական եւ . . . . . համար նշանաւն:

Իսկ յառաջ քան զայս ի ժամանակին՝ յորում Օսմանցիքն առնուն զԵրեւան եւ զԱմիրկունա խանի որդի Թահմազ-ղուլի խանն՝ որ խան էր Երեւանու, առաքեն ի յՍտամբոլ, եւ յետ միոյ ամի գայ եւ Շահ-Սէֆին եւ առնու զԵրեւան ի յՕսմանցւոց՝ եւ դառնայ ի յԱսպահան. եւ ապա զՓօլատ բէկ անուն ոմն առաքէ յԵրեւան ի գլխ արկանել զմուլ.քս եւ զայլ ինչս Թահմազ-ղուլի խանին. եւ այս Փօլատ բէկս ի սադրելոյ ոմանց նախանձոտ տաճկաց ի գլխ արկանէ եւ զայս երեք գեօղս՝ այս ինքն՝ զՆորագեօղ, զՆայձի եւ զԳեօլ.քեանդ՝ իբր թէ եւ սոքա են Թահմազ-ղուլի խանին մուլ.ք (որք խօճայ Սէթին են՝ որպէս ի վերդ ասացաք): Ապա նստի յԵրեւան խան յայնժմ միջոցի Մահմատ-ղուլի ոմն, եւ նա զաւթեալ ունէ զմուլ.ք երից գեօղօրէիցս յամս քանիս ի կողմանէ արքունեաց: Յետոյ ի ժամանակս երկրորդ Շահ-Աբասի խօջա Սէթի որդի Յակոբճանն գնայ ի յԱսպահան՝ ցուցանելով զգրեանս հաստատունս եւ զղապալայս՝ արզ առնէ Շահին՝ թէ այս երեք գեօղօրէիցս մուլ.քն մեր է, այժմ Մահմատ-ղուլի խանն զաւթեալ ունէ՝ ծանուցանելով զքանիօնութիւն ամացըն եւ զորքանութիւնս հասից գեօղօրէիցն: Եւ Շահն գրէ առ Երեւանու մեծամեծսն եւ դատաւորսն, զի ո՛վ ոք ի նախանձու ի դաւթար է արկանել տուեալ զայն գեօղօրայսն՝ ի նմանէ այնքան ամաց զհասսն այնց գեօղօրէիցն առեալ ի յարքունիս տայցեն, եւ այնք գեօղօրայ.քն եթէ յիրաւի խօճայ Յակոբճանին են՝ զստոյգն արզ արասցեն իւրեան: Եւ ի գալ հրամանիս ի յԵրեւան, ստուգեն դատաւորքն եւ մեծամեծքն յիրաւի զօղ Յակոբին, եւ արզ առնեն Շահին՝ վկայելով թէ՝ այս երեք գեղջս մուլ.քն



Յակոբինն է: Վասն որոյ եւ Շահն ըռաղամ տայ խօճայ Յակոբին՝ զի զաւթեսցէ զմուլ.քս իւր: Ապա յետոյ յորժամ խօճայ Յակոբն զՆորագեօղ գեօղն վաճառ տայ սրբոյ Աթոռոյս եւ եղբօրորդին իւր Սահակ քեալանթարն զՆայձի գեօղի մուլ.քն եւ զԱմիրի գեօղի մուլ.քն ծախէ Յակոբ Կաթուղիկոսին՝ որպէս ասացաք. վասն որոյ եւ Յակոբ Կաթուղիկոսն ի յառնուլն զգեօղօրայս զայս՝ խնդրէ ի նոցանէ եւ զայս յիշեալ ռաղամն ի հաստատութիւն բանին՝ իբրեւ զհին ղապալայ. բայց ի ռաղամուսն՝ որովհետեւ Գեօլ-քեանդն եւս է գրեցեալ՝ որ ո՛չ էր Աթոռոյս, այս Գեօլ-քեանդէ գեղիս յաղագս Յակոբի որդի Սարուխանն (որ ի վերդ յիշեցաւ,) ո՛չ տայ զայս ռաղամն Յակոբ Կաթուղիկոսին, այլ զսուրաթն նորին գրեցուցեալ Շխուլամին եւ կնքեցուցեալ՝ տայ Յակոբ Կաթուղիկոսին, եւ զայս ռաղամն առ յինքեանս պահեն: Գտցես զայս ռաղամիս սուրաթն գրեցեալ ի տաճկաց թվին ՌԾԸ, որպէս ցուցանէ յերեսն գրեցեալ ցուցական եւ ( ) համար նշանաւն:

Վասն Մէհիքի գեօղ կոչեցելոյն որ է յԱպարանոյ նահիուէն. որոյ վեց դանկ մուլքն է սրբոյ Աթոռոյս, թէ որպէս եւ ոյր ձեռօք, ծանուցանի:

ԺԳ. Գեօղս այս՝ որ է յԱպարան նահիուն, որոյ շէշ դանկ մուլ.քն Ակխաւուտ-Իպրահիմ-խալիֆի որդի Ողաղուլի տաճիկ ոմն ծախէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին մերոյ՝ երկու թումանի՝ ի տաճկաց թուին ՌՀԵ: Որոյ կողմանքն են, Բաշ-Ապարանն, Վրացտանու ճանապարհն, Տաշ-պուլինն եւ Զանճիկու գետն: Զորոյ զղապալայն գի՛տ յերեսն գրեցեալ ցուցական եւ համար ( ) նշանաւն:

Ցաղագս Բարաինճ կոչեցեալ գեղջն, որ է յԵրեւանն յերկրոջս ի Կարբւոյ նահիէն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է:

ԺԴ. Գեօղիս այսորիկ զվեց դանկ մուլ.քն առնու նախապէս Գրիգոր Կաթուղիկոսն Մակուեցի ի յԱմիր Ռուստամէն հազար հարիւր վաթսուն դինարի՝ ի թուին տաճկաց ութն հարիւր երեսուն եւ հինգ, որոյ զմեծ ղապալայն գի՛տ յերեսն գրեցալ ցուցական եւ համար նշանաւն. զոր յիշեցաք ի յորպիսութեանն գեղջս Էջմիածնի. յորում եօթն գեօղօրէից մին է եւ այս Բաթինճ գեօղս: Սակայն զկնի ժամանակաց ի խառնակմանց երկրիս տաճիկ.ք զաւթեցին զմուլ.ք գեղջս այսմիկ՝ որպէս եւ այլոց գեօղօրէիցն որպէս ասացաւ ի վերդ: Ապա ի թուին տաճկաց ՌԿԶ՝ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն առնու զմէկ դանկ մուլ.քն սորին վերստին ի Նեճկու-Շխ-ահմատի որդի Բայրամ պեկէ ԺԶ հազար դիանի: Զորոյ զղաբալայն

գի՛տ յերեսն գրեցեալ ցուցական և (      ) համար նշանաւ։ Զսորին հին ղապալայն ևս գտցես ցուցական և (      ) նշան համարովն։ Զոր էլ-էլշ 1) Իպրահիմի որդի Ոզա-ղուլի աղայն ծախէ սոյնց յիշեցելոց Բայրամ բէկիս ի թուին տաճկաց ՌԿԴ։ Այլ և քան զայս հին ղապալայ մի ևս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցական և (   ) նշան համարով, յորում զերեք դանկ մուլք գեղջս Հիւսէին պէկի որդի Ալիճան բէկն ծախէ Եաղուպ պէկի որդի Իպրահիմ պէկին՝ չորս թումանի՝ ի ՋՁԵ թուին տաճկաց։ Այլ և բաց ի մլքէն գեօղիս ունեցեալ է սուրբ Աթոռս ի գեօղս այս գետահողքս և զարօտատեղիս անասնոց. և գեօղս այս լեալ է Կաթուղիկոսացն մերոց հովանոց և զբօսարան յաւուրս ամարայնոյ տօթոյն։ Վասն որոյ երբեմն քէօշքէշ 2) տաճիկք՝ որք աստի և անտի եկեալք ի յարօտ գեղջս իշխանեցեալք են և զխոտ և զարմտիս սորին ուտեցուցեալք են անասնոց իւրեանց, Յակոբ Կաթուղիկոսն ժողովեալ գշրջակայ գեօղօրայսն, ընդ նոսին արզ է արարեալ երկիցս անգամ երկրորդ Շահ-աբասին և ռաղամ է բերեալ, և զայսպիսի վնասատու տաճիկսն վարեալ է անտի։ Գի՛տ զայսոսիկ ռաղամքըս, մին (   ) նշան համարով և միւսն (   ) համար նշանաւ։ Եւ ցուցակք երեսացն ևս ցուցանեն, որք գրին ի տաճկաց թուին ի ՌԿ և ի ՌԿԱ։ Նոյնպէս և ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ Քիւրաքանլու քեօչարի տաճիկք եկեալ իշխանին ի գեօղս յայս, զբերս և զխոտս սորին ճարակ տան անասնոց։ Եւ Աղէքսանդր Կաթուղիկոսն ընդ շրջակայից գեօղականացն արզ գրէ Շահ-սուլթան-Հիւսէյինին, և ռաղամ բերեալ վարէ զնոսա։ Զայս ռաղամն ևս գի՛տ ցուցական և (   ) նշան համարաւն. գրի ի տաճկաց թուին ՌՃԻԴ։

Վասն Բոխենիս կոչեցեալ գեղջն, (որ տաճկերէն Չաչուռլու կոչի) հանդէպ Ամբերդ կոչեցեալ ամրոցին որ է յերկրոջս Երեւանու ի Կարբու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է, թէ որպէս եւ երբ, տես ի ստորեւ:

ԺԵ. Գեօղս այս ի բնէ անտի ի գիւղականաց իւրոց վախմ է տուեցեալ սրբոյ Աթոռոյս կամաւ և յօժարութեամբ իւրեանց, զի զվեց դանկ մուլքս իւրեանց տայցեն սրբոյ Աթոռոյս։ Սակայն ի խառնակմանց ժամանակին և յանշքութենէ Աթոռոյս՝ երբեմն նոյն գեօղականքն թէ և ի պակասութենէ իւրեանց արգելեալ են և ո՛չ են տուեալ, իսկ յետոյ ի ժամանակս Յակոբայ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի յորդորմանէ նորին՝ սոյն գեօղականքս ի մի ժողովեալ՝ վերստին հաստատելով զնախնեաց իւրեանց ուխտն՝ անդրէն դարձուցանեն զվեց դանկ մուլք գեղջն իւրեանց ի սուրբ

1) Հարկիրատեսու: — 2) Գաղթական, Թափառական նըլն:



Աթոռս։ Վասն որոյ և տաճկերէն զհաստատուն ղապալայանման հաւճէթ և վախմնամայ գրեն, և տան սրբոյ Աթոռոյս՝ գեղովն վկայելով ի նմա թէ՝ մեք ի նախնեաց մերոց լուեալ և տեսեալ եմք, որ մեր գեօղս վախմ են տուեալ սրբոյ Էջմիածնի։ Վասն որոյ և մեք տուաք՝ այսուհետև թէ ի մէնջ և թէ զկնի մեր՝ եթէ խօսօղ և արգելօղ լինիցի՝ սուտ և անընդունելի լիցի։ Գրի այս գիր ի տաճկաց ՌՀԱ թուին և ի մերում թուոջ . . . ։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցական, և (   ) համար նշանաւ։

Յաղագս Երոպանիս գեղջն, որ է յերկրոջն Երեւանու ի Կարբու նահիէն, որոյ մուլքն է սրբոյ Աթոռոյս, թէ որպէս, տես ի ստորեւ:

ԺԶ. Դարձեալ ի ժամանակս Եղիազար Կաթուղիկոսին ի ՌՃԼԶ թուոջն մերում՝ Հաճի-բէկլու Իւսուֆ աղայ տաճիկ ոմն դաւ առնէ ընդ սրբոյ Աթոռոյս վասն մլքին գեղջս այս՝ թէ իմ է։ Ապա սրբոյ Աթոռոյս Աթոռակալ Պետրոս վարդապետն գնացեալ ընդ նմա ի դատարանն տաճկաց, սուտ հանէ զնա. բայց տայ նմա ՂԼԵ սօմար ցորեան և գարի, և ի բերանոյն գգիր առնու Շէխիւլամին ձեռօք թէ՝ այսուհետև մուլք գեղջըս Ծօպանիս կոչեցեալ Էջմիածնի է, ինձ ոչինչ ունիմ զիրաւունս։ Զոր գտցես ցուցական և (   ) նշան համարովն, գրեցեալ ի ՌՂԹ տաճկաց։ Այլ և ի տաճկաց թուին ՋՀԲ՝ զմէկ և կէս դանկ մուլք գեղջս այսմիկ Բարի որդի Եսկեար ոմն ծախէ Համատանցի Մոլլայ Իւսուֆի որդի Մոլլայ Աման-ալահին՝ ութ հազար դիանի, զորոյ զղաբալայն գի՛տ ցուցական, և (   ) համար նշանաւն, յորում սահմանք գեղջս ևս գրեցեալք են, մի կողմն Ագարակ գիւղն, մի կողմն Անբերթ-գետոյ ձորն, մին կողմն Բիւրականու այգիքն, և միւս կողմն Նորին ջրաղացաց առուքն։ Ի յառնուլն մեր զ . . . դանկ մուլքն գեղջս այսորիկ՝ առեալ եմք և զայս հին ղաբալայս։

Յաղագս Ղարաղոյունլու կոչեցեալ գեղջն, որ եօլքնասան եւս կոչի, որ է ի Գառնու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է:

ԺԷ. Գեօղս լեալ է ումեմն խօճայ Սուքիաս կոչեցելոյ Հայ ազգաւ, և Սուքիասս ի պատահմանց ինչ երթեալ ի Շամախի՝ մնայ անդ։ Եւ սրբոյ Աթոռոյս միաբան Ջուղայեցի Թաթալու որդի Յակոբ վարդապետն՝ որ յետոյ եղև Կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս՝ պատահի և ի Շամախի Սուքիաս կոչեցելոյն՝ ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին, և անդ սոյն Յակոբ վարդապետս գնէ զվեց դանկ մուլքն գեղջս այսորիկ ի նոյն Սուքիասէն քսան և երկու թումանով. որոյ տաճկերէն ղաբալայն գրի ի Շամախի ի ՌԿԱ

թուին տաճկաց. զոր գի՛տ ցուցակաւն և (      ) նշան համարովն։ Սահմանք սոյնս գեղջս են՝ Երասխ գետն, Դուլուհասար գեօղն, Ակերաբաթ գեօղն և Իմամշարլու գեօղն։

Յաղագս Աշտարակ գեղջն որ ի Կարբու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է։

ԺԸ. Գեօղս այս մին է ի յեօթանց գեօղօրէիցն՝ զորս Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսն առնու ի յԱմիր-ռուստամէն և վախմ գրեցուցանէ սրբոյ Աթոռոյս՝ որպէս ասացաւ ի ճառս միաբանութեան մեր Էջմիածնի գեղջս։ Գիտեա՛ ստանօր, զի Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսն թէպէտ կուռն ջանիւ և մեծաւ խոհեմութեամբ առնու հաստատուն վախմնամայիւ զայսոսիկ եօթանեսին գեօղօրայսս, (այս ինքն զգեօղս Էջմիածնի, զԱշտարակ, զԲաթրինջ, զՆորագաւիթ, զԱղունատուն, զԲիրաշլու, և զՄուղնի) որպէս ասացաք, սակայն ի Գրիգոր Կաթուղիկոսէս յայսմանէ մինչև ի Մովսէս և ի Փիլիպպոս Կաթուղիկոսն՝ բերմունք ժամանակին, զեարդ գոլ երկրիս և ո՛րպիսաբար կացութիւն սրբոյ Աթոռոյս ասացան բազմիցս, և ի յԱռաքել պատմագրէն ևս իմանալ կարես։ Քանզի յայնքան միջոցին սուրբ Աթոռս բոլորովին ո՛րպէս թէ ի հոգևարութեան է լեալ, զի՞նչ զարմանք՝ եթէ և մուլքն զաւթիցեն և տիրիցեն յօտարաց։ Արդ կամիմ ասել՝ թէ յայնմ միջոցին և այսք գիւղօրայքս յափշտակեալք եղեն ի տաճկաց և հանեցեալք ի յԱթոռոյս։ Ապա Փիլիպպոս և Յակոբ բազմերախտք Կաթուղիկոսքն՝ ի ժամանակս իւրեանց ի յեօթեանց գիւղօրէիցս այսոցիկ հազիւ ի ձեռն բերին մեծաւ տաժանմամբ զայսոսիկ զերեսին գեօղօրայսս միայն, այս ինքն զԷջմիածին գեօղս, զՄուղնի և զԲիրաշլու, քանիցս անգամ վերստին զգինն տալով, ի Շահից զաղամս բերելով, և զայլս աշխատանս կրելով, որպէս ասացաւ ի յիւրաքանչիւր տեղիսն։ Իսկ Աշտարակ, Նորագաւիթ, Բաթրինջ, և Աղունատուն մնացին յայնմհետէ ի ձեռս տաճկաց, և անուանք նոցին ամենևին անհետք եղեն ի յԱթոռոյս մինչև ցայսօր։ Եւ այս այնքան անհետացեալ և հնացեալ՝ մինչ զի թէ Աթոռայինքս և թէ բոլոր երկրականքս իբր հաւաստապէս և անկարծելի կարէին երդնուլ թէ՝ գեօղօրայքս այսոքիկ ո՛չ երբէք են լեալք մուլք սրբոյ Աթոռոյս, և մեծ վախմնամայն ևս ո՛րպէս թէ խափան և անպէտ կայր անկեալ ի յանկիւնս անյայտ և անհետ։ Սոցա նման իմա՛ և զգեօղն Եղուարդ և զվախմնամայն նորա, զորմէ սակաւ ինչ ասացաք ի ճառս իւր։ Իսկ ի յետին ժամանակս զՄուղնի գիւղն ևս զաւթեալ էին Տաճիկք, (որպէս ասացաւ ի ճառս իւր,) և Բիրաշլուն ևս էր աւերակ և անմարդ, որ և է այնպէս մինչև ցայսօր։ Որ ի Ներկայումս յորում Նու-



սատուէրին մեր յաջորդիմն զԱթոռս՝ մնացեալ էր սրբոյ Աթոռոյս մուլք միայն մեր Էջմիածնի գեօղս։ Ապա յաւուր միում կոչեցաք զԽուճէին-ալի խանն Երևանու ի յԱթոռս ի պատիւ որպէս թէ. և ի գալն՝ առանձին արարեալ ցուցաք նմա զմեծ վախմնամայն Գրիգոր Կաթուղիկոսի և զվախմնամայն Եղուարդայ, ծանուցանելով նմա զպարագայսն։ Իսկ ողորմութեամբն Աստուծոյ (յորոյ ձեռին են սիրտ իշխողաց) կակղացեալ խանին, զայնս գեօղօրայսն՝ որք ի ձեռս իւր էին, որոց զմուլքսն ինքն առնոյր, ետ մեզ հաստատուն գրով, որք են գեօղս այս Աշտարակ, Եղուարդ, Մուղնի և Բիրաշլու, (որ թէպէտ ի ձեռս մեր էր, սակայն մինչ էր աւերակ, զի մի՛ յետոյ և սա անհետացի, գրեցուցաք.) զորս յանուանէ գրէ ի գիրս իւր՝ վկայելով թէ՝ տեսի զվախմնամայն և գիտացի հաւաստեաւ՝ որ ի բնէ անտի վախմ են սոքա Էջմիածնի։ Այսպէս գրելով կնքէ ինքն, կնքեցուցանէ և Շէխիսլամին և այլոց մեծամեծաց, և տայ մեզ ընդ յիշեցեալ գեօղօրէիցն՝ ի ՌՃՁԲ թուոջն Տաճկաց և ի ՌՄԺԷ թուոջն մերում։ Զոր զոյգս ցուցակաւն, և ամուր պահեա՛, զի կարի պիտանի է և լաւ պահելի։

Յաղագս Աղունատուն գեղջն որ է ի Կարբու նահիէն, որոյ վեց դանկ մուլքն է սրբոյ Աթոռոյս։

ԺԹ. Գեօղս այս մի էր ի յեօթանց գեօղօրէիցն զորս առնու Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսն՝ և վախմ գրեցուցանէ սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի ճառս միաբանութեան գեղջս մերոյ Էջմիածնի. որ և սա էր անհետացեալ և ի բաց հանեցեալ յԱթոռոյս ընդ այլոց գեօղօրէիցն։ Ապա ի ՌՄԺԷ թուոջն մերում յետս առաք մեք ի յԵրևանցի Ղաջար-Սուլէյման բէկէն՝ և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս արարաք՝ առնելով և զգիր մի ի նոյն Սուլէյման բէկէն բազմաւ կնքաւ, թէ տեսեալ զվախմնամայն՝ գիտացի Էջմիածնի գոլ գեօղս այս, և ես ետու Էջմիածնի վերստին։ Գի՛տ զայս գիրս յիւրեան գրեցեալ ցուցակաւն և (      ) նշան համարովն։ Յիշեցաւ ի ճառս Աշտարակու։

Յաղագս Նորագաւիթ գեղջն, որ է Ղռխբուլաղու նահիէն։

Ի. . . . . . . . . . . . . . . . . . . . .

Յաղագս Բիրաշլուն գեղջն, որ է ի Կարբու նահիէն։

ԻԱ . . . . . . . . . . . . . . . . . . . .

Յաղագս Համիլար գեղջն որ է ի Կարբու նահիէն։

ԻԲ. . . . . . . . . . . . . . . . . . . . .

## ԳԼ. ԺԴ.

Յաղագս հրաշագործութեան այս Սուրբ աւետարանիս, որոյ զօրութեամբ ջուրն տեղայ ի յերկնից:

Ի բնէ անտի ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ, ի ժամանակս իշխանութեան Հայոց, սրբոյ Աթոռոյս ազատ լինելն յամենից հարկաց է անտարակոյս։ Յետոյ ի բառնալ իշխանութեան Հայոց, և ի փոխելն Հայրապետութեան ի Սիս, զայնքանեաց միջոցացն (յորս յամայութեան գոյր սուրբ Աթոռս) զոչինչ ունիմք ասել. Իսկ ի Նորոգելն վերստին (որպէս ասացաւ ի վերն) սկսաւ սոյա յաջողմամբն Աստուծոյ վերստին ստանալ զառաջին կարգն իւր և կեալ ազատ յամենից հարկաց, այս ինքն Հայրապետն և միաբանքն ոչ տային զկրկնակ իւր հարկս մարմնաւոր տէրանց՝ որպէս տան աշխարհականք։ Անդ.քս, այգիք, և կալ.ք սորին ոչ չափէին, անասունք և գրաստ.քըն ո՛չ ի թիւ արկցին, ջրաղացք և այլ.ք այսպիսիք ո՛չ գրեցին. մաւսաք և նոյ.ք սորին ոչ տային զմաքս, և ո՛չ տալ զգլխահարկս, զՆորոգս, զտասանորդս, զանախարձս, զանասնախարձս և զմ.քախարձս, և զայլս այսպիսիս՝ որպէս սովորութիւն է աշխարհի, այլ յամենայնի ազատ լինել իւրայնովքն՝ որպէս և է այսպէս մինչև ցայսօր։ Եւ թէ ո՛րպէս, ծանիր. զի նախապէս ի ժամանակս Մելքիսէդ Կաթուղիկոսին, որ մեծ Շահ-Աբաս թագաւորն Պարսից զհարկս թումանս մուխաթթայն՝ զոր հարկ էր եդեալ ի վերայ սրբոյ Աթոռոյս ի տալ ամի ամի, զայն եհարձ երանելին Մովսէս Կաթողիկոսն ի ժամանակս Շահ-Սեֆի թագաւորին Պարսից, և ամենեին հանեալ ի ջամբէն՝ անհետ արար հաստատուն հրամանաւ նոյնոյ թագաւորին՝ (որպէս ասացաւ ի վերդ ի պատմութեան գեղջս մերոյ՝) ի թուին Տաճկաց ՌԼԸ. բայց ռաղամ այս ո՛չ տեսաք մեք՝ այլ զսուրէթն . . . . . . . . զոր պատճէն ցուցակաւն և . . . . . Նշանագրով։ Ապա երանելին այս որպէս թէ յանշնչութենէ ի շնչաւորութիւն հազիւ բերեալ զսուրբ Աթոռս, վերանորոգութեան և շինութեան միայն պարապելով՝ փոխի առ Տէր, չունելով ժամանակ և զայլոց հարկաւորացն հոգալոյ։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։ Իսկ զկնի երանելւոյս այսորիկ մինչ յաջորդէ համանմանն իւր յոգներախտն՝ և բազմաշխատն՝ և Նոր ի Նորոյ Նորոգողն յամենայնի ազգիս մերոյ և սրբոյ Աթոռոյս՝ Տէր Փիլիպպոս Կաթուղիկոսն սկսանի յամենայնի ի կատարելութիւն ածել կուռն ջանիւ հոգալով զհարկաւորացն սրբոյ Աթոռոյս, զնորքսականաց շինելով և գալով զպատաքսականացն արքունական և դատաւորական հաստատուն գը-



րովք։ Քանզի ի բազմացուցանելն զխաչանիս սրբոյ Աթոռոյս, զանդըս և զարտորայս և վասն սերմանելոյ՝ որպէս ասացաք յառաջ, սկսաւ և զյատուկ գումարն մի ի կէր արկանել (որ չգոյր յառաջ)։ Իսկ յորժամ Մահմատ-Ղուլի որ խան էր երկրիս Երևանու, կամեցաւ հնգորդ առնուլ (այս ինքն զպահըա) ի ցանելոց հասիցն սրբոյ Աթոռոյս։ Վասն որոյ և նոյն երանելին արք առնէ երկրորդ Շահ-Աբասին՝ թէ սուրբ Աթոռս ի բնէ անտի մաղափ է լեալ, այս ինքն ազատ յամենայնէ, այժմ ի յաղքատութենէ՝ մէկ գումարն վարելոյ չափ տեղ հազիւ կարեմք զսերմն արկանել. յերկիր Մահմատ-Ղուլի խանն կամի ի նմանէ ևս զպահըա առնուլ։ Եւ Շահն ռաղամ տայ սատտիկ (խստագրով 1)՝ զի մի ձեռնամխեցին թէ Մահմատ-Ղուլի խանն և թէ այլք ի խնդրել զպահըա ի սրբոյ Աթոռոյս սերմանցն։ Գիտ զայս ռաղամն յերեսն գրեցեալ ցուցակաւն և ( ) Նշան համարովն, որ գրի ի տաճկաց թուոյն ՌԾԵ։ Բայց զայս խմա. զի որովհետև յարքայութեան մէկ գումար միայն գոյր, վասն որոյ և շահն ևս ի ռաղամումն զմէկ գումարն միայն մաղափ առնէ, ուստի ո՛չ պարտիս զայս ռաղամ ցուցանել՝ յորժամ գումարք ազատաւ զրոյց լինիցին և դու ամեն ունիցիս զգումարն։ Բայց յառաջ քան զայս՝ ի ՌԽԸ. թուին Տաճկաց՝ սոյն երանելիս՝ Սեֆի Շահին ևս արք արարեալ, զմէկ գումարն մաղափութեան ռաղամ առնու։ Որոյ զսուրէթն գիտ ցուցակաւն։

Դարձեալ սոյն երանելիս յետ հնգից ամաց վերստին արք առնէ նոյնոյ Շահ-Աբասին, թէ մեք յամենայն ժամ օրհնող եմք քեզ։ Մուրթուզայ փաշայն կամէր զերկիրս զայս աւերել, եւ ԲԺ թումանս եառ, հազիւ յետըս դարձուցի։ Եւ զԳօզալ-դարայի ջուրն բերի յայս դաշտ մինչև ութն ջրաղացի ջուր և զայլս այսպիսիս։ Ապա գրէ թէ այս Աթոռոյս այգիքն, ջրաղացքն, վարելահողքն, աշխարքն, և զայլս այսպիսիս՝ զորս ունի սուրբ Աթոռս, Խոսրով խան բէկլար-բէկին 2) երկրիս գնեալ զմաղափութիւն ինքըն ևս մաղափ պահէ. խնդրեմ ի քէն, զի և դու մաղափ արասցես. զի մեք վայելեալ աղօթեսցուք վասն կենաց քոց։

Եւ Շահն ռաղամ առնէ ի գլուխ նոյնոյ արզային, զի մաղափ լիցին վերոյ յիշեցեալքդ։ Քանզի երանելիս այս նախապէս ի ՌԾԴ թուոյն տաճկաց Շխխալամին կնքով և վկայութեամբ արք առնէ սոյնոյ Շահ-աբասին յանկացուցանելով յանուանէ զվարելահողսն սրբոյ Աթոռոյս. որոց ազատ և առնէ ռաղամ գրեցեալ ի միւս երեսն ի նոյն թղթոյն, որով և հաստատէ զայնոսիկ յիշեցեալ հողսն զոլ սրբոյ Աթոռոյս՝ որպէս ի . . . գլուխն ասացաւ՝ զոր գտցես ցուցակաւն՝ և ( ) Նշան հա-

1) Թէհէպի, պատուէր։ — 2) Պէյլէր պէյի. նախարարապետ, շահապետ։

մարով։ Որոյ համաձայն ուղամ մի ևս գոյ ի մեծէ Շահ-Աբասէն՝ ի ՌԻԲ թուոյն տաճկաց գրեցեալ, որպէս անդ ցուցանի։ Սոյնպէս և յետ մեց ամի կրկին արզ առնէ նոյնոյ Շահին՝ վկայութեամբ խանին, և յաւելացուցանէ յանուանէ զայգիս և զջրաղացս և զայլս այսպիսիս, և զոլքանութենէ և զո՛ւր զոյն նոցին։ Եւ առնէ զուղամ հաստատուն և սաստիկ թամբիհով, զի մի՛ ոք ի յայնս ձեռնամխեսցի։ Արով և զայնս հաստատէ զոլ սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաք ի (      ) գլուխն, զոր գտցես ցուցակաւն և նշան համարով, որ գրի ի տաճկաց թուին ՌԿ։ Այլ և երրորդապէս զայս արզս գրէ անորոշապէս և թարց յաւելացուցման տեղեաց և ունեցեալոյն՝ գրով միայն թէ՝ ունի սուրբ Աթոռս զայգիս, զհողս, զջրաղացս, զանասունս, և զայլս այսպիսիս, զորս մաղաֆ արասցես. և յայսու արզայիւ և ուղամիւս զայնս ամենայն վերոյիշեցեալսն ի մէջ երկուց ուղամիցն մաղաֆ առնել տայ այսպիսի խոհեմութեամբ։

Դարձեալ ի սոյն թղթոջ երկրորդ արզ առնէ թէ, այս Աթոռոյս ի Քրիստոսէ․․․ մինչև ցայժմ զոհ վախուֆ տեղիք և մուլք. այժմ ոմանք ձեռնամուխ լինին և զաւթեն։ Նոյն շահն ևս կրկին ուղամ արարեալ ի կից նորին, կնքէ երկրորդապէս և հրամայէ (զի) մի՛ ոք ձեռնամուխ լինի ի վախուֆ տեղիսն Աթոռոյս։

Դարձեալ ի սոյն թղթոջ երրորդապէս արզ առնէ թէ՝ ես յԵրուսաղէմ պարտիմ գնալ, հրաման տուր՝ զի զոմն վէքիլ եդից ի տեղի իմ, և մի՛ ոք նեղացուսցէ զնա։ Եւ շահն երրորդապէս ուղամ արարեալ ի կից նորին կնքէ, և հրամայէ առնել այնպէս։ Զայս եռամիտ արզայիս և ուղամիս թուղթն գի՛տ ցուցակաւն և նշան համարովն, որ գրի ի տաճկաց թուին ՌԿ, որ է շատ պիտանի զօրեղամիտ վասն մաղաֆութեան և վասն մուլքերն սրբոյ Աթոռոյս. քանզի յառաջ քան զայս ի Խօսրով խանէն (որ յԵրևան նստէր) երկիցս գնուցեալ առնու և մաղաֆ առնէ զմուլքսն սրբոյ Աթոռոյս ի ՌԾԴ և ի ՌԾԹ թուոյն տաճկաց. յորս գրեն ինն այգի և ինն ջրաղաց, և հազար ութ հարիւր յետուն ոչխար մաղաֆ, զորոց զգիրսն գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն։

Յետ այսորիկ և Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի արզ առնէ առ նոյն երկրորդ Շահ Աբասն վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս, և թէ մէկ զութանի տեղ հողի կարեմք սերմանել, ի նմանէ ևս կամին զհարկս առնուլ։ Վասն որոյ և շահն ուղամ գրէ սաստիկ թամբեհով առ իշխօղն երկրիս Նաճաֆ-խանն, զի մի՛ ոք ձեռնամխեսցի յԱթոռս, զի մաղաֆ է. սակայն և այս ուղամ յայնժամ լինի օգուտ ի ցուցանելն՝ յորժամ զմի զութան միայն ի կեր արկանիցէ Աթոռս, որպէս և ի վերդ ասացաւ։



Գի՛տ զայս ուղամս յերեսն գրեցեալ ցուցակաւն, և (      ) նշան համարովն, որ գրի ի տաճկաց թուին ՌԿԹ։

Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ զերկուս զութանս սկսանի ի կեր արկանել սուրբ Աթոռս, բայց որովհետև ի մէջ երկուց ուղամից Շահ-Աբասին ևս մի զութան յիշի մաղաֆ եղեալ արզայով Փիլիպպոս և Յակոբ Կաթուղիկոսացն, որպէս ասացաք ի վերդ, և հաշակի թէ Աթոռոյս մէկ զութանն է մաղաֆ, վասն որոյ և իշխօղք երկրիս կամին զմիոյ զութանի բահրայն առնուլ յԱթոռոյս, ասելով թէ՝ միոյ զութանի ունիք մաղաֆութիւն։ Սոյնպէս և վասն ոչխարաց առնեն վէճ, ասելով թէ շատ պահէք։ Այլ և Աղէքսանդր Կաթուղիկոսն արզ առնէ Շահ-Հիւսէյինին, և զուղամ առնու՝ զերկուս զութանս և զեճ ոչխարս մաղաֆ առնելով։ Գի՛տ զայս ուղամս ցուցակաւն և (      ) նշան համարովն, որ գրի ի ՌՃԻԴ թուին տաճկաց։ Արդ և զայս ուղամ յայնժամ պարտիս ցուցանել՝ յորժամ քան զերկուս զութանս, և քան զեճ ոչխարս ո՛չ ունիցիս աւելի, որպէս ի վերդ ևս ասացաւ։

Դարձեալ սոյն Աղէքսանդր Կաթուղիկոսս՝ յառաջին թագաւորացն զմեց հատ զալ և այլ մուլք ուղամս ցուցանէ նոյն Շահ-Հիւսէյինին և խնդրէ, զի և ինքն տայցէ զուղամ մի ի վերահաստատութիւն նոցա։ Եւ Շահն ևս վերայիշեալ յատուկ յատուկ զեղեալ խնդիրսն ի մէջ ուղամիցն այնոցիկ՝ ի մէջ իւրոյ ուղամին գրէ և ինքն թէ, որովհետև նախնիքըն մեր այսպէս ուղամ են տուեալ, և ես տամ։ Զմին խնդիրսն ի վերաքանչիւր տեղւոջն ասասցուք։ Յորոց երրորդն է, թէ էջմիածնի Աթոռոյ մուլքն և մաղաֆութեան մի՛ ոք ձեռնամուխ լիցի։ Զայսմանէ ի պատմութիւնս գեղջս մերոյ ևս յիշեցաք, որ գրի ի Տաճկաց ՌՃԻԴ թուին։ Զոր գտցես ցուցակաւն և (      ) նշան համարովն։

Դարձեալ Աստուածատուր Կաթուղիկոսն Համադանցի առնէ արզ Շահ-Թահմազին թէ, քան զիս յառաջ եղեալ խալիֆայքն զո՛րքան զկարս և զցանքս արարեալ են՝ ո՛չ երբէք են տուեալ ումեք զբահրայ և զալհարկս, զի Աթոռս այս ի բնէ մաղաֆ է լեալ, այժմ տիրողք երկրիս և այլ ոմանք նեղացուցանեն զմեզ և զպէս պէս չինիախ[1] առնեն՝ չտալով մեզ զհանգիստ։ Եւ Շահն գրէ ուղամ սաստիկ թամբեհով, զի մի՛ ոք ձեռնամուխ լիցի ի մաղաֆութիւն Աթոռոյս։ Որ գրի ի թուին տաճկաց ՌՃԼԶ. զոր գտցես ցուցակաւն և (      ) նշան համարովն։

Դարձեալ ի ՌՃԼԷ թուին տաճկաց՝ մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի յԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝

1) Ծիրտաք, զրպարտութիւն, նենգ։

ծանուցանէ նմա Աստուածատուր Կաթուղիկոսն զմաաֆութենէ սրբոյ Աթոռոյս։ Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գըրքաձև գէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ և զվերջն Շէխ-իսլամն։ Ցորում գրեցուցանէ զմիլքատու գիւղօրայսն սրբոյ Աթոռոյս, որք են այսոքիկ։ Այս մեր գիւղս, Մաստարայ, Օշական, Փառնկանոց, և Քիրաշլու։ Այլ և մաաֆ նեղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ։ Ի մեր գիւղս վեց չէն ջրաղաց, երկու աւեր՝ մէկ չէն ղինկ, երկու ձիթահանք, քսան և ինն արտ, ցանելի երեք հոնջալուղ. երեք այգի. ի Ցօշական երկու այգի, մի եւս աւեր. ի Փարաքար երկու այգի. յԵրեւան երկու այգի, երկու ջրաղաց. ի Քեալարայ երկու ջրաղաց. մէկ ղինկ. երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի գետոյն՝ որ է Նահապետ Կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, որ Դալմա ասի. որոյ ակն է մերձ Սարվանդար կոչեցեալ գեղջն որ յԵրեւան՝ ի ներքոյ բերդին. և վեց հարիւր ոչխար. և սևագլուխք և միաբանքն մաաֆ և մի՛ տայցեն զխարաճ. և այքան վանօրայք եւս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաաֆ լիցին. սուրբ Հռիփսիմէն, Շողակաթն, Գայիանէն, Երեւանու սուրբ Անանիա առաքելոյ և Զօրավարայ անապատքն։ Բայց միայն խալիֆայն ի տարւոջն զվեց հազար ութն հարիւր ստակ տայցէ յարքունիս, և ոչ այլ ինչ։ Գի՛տ զայս գիրս ցուցական և ( ) նըշան համարումն։ Թուին տաճկաց ՌճԼԷ։ Այսպիսի օրինակաւ գիր Թ հատ եւս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն։

Իսկ յետ այսորիկ ի ՌճԽ թուոջն տաճկաց և ի ՌճՀԶ թուոջն մերում՝ յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին ձեռամբ փաշային Երեւանու՝ արզ առնեն Սուլթան-Ահմէտ Թագաւորին Օսմանցւոց, և գրեն ըղգէֆտէր մի տաճկերէն, յորում յանուանէ և ուրոյն ուրոյն յատկացուցանեն զքանի տուն լինելն գիւղիս, զքանի այգիս, զջրաղացս, զպարտէզս, զսերմանելի տեղիսն, և զայլս այսպիսիս։ Այլ և գրեն ի նմա յատկապէս զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս թէ ունի զայգիս, զջրաղացս, զղինկս, զհամամս, զքարվանսարայս, և զայլ ամենայն մուլքսն առանց յատկացեալ թուոյ։ Այլ և երկու զութան, հազար հինգ հարիւր սոմար սերմանելիս, զվեց հարիւր ոչխարս։ Եւ զաթոռս, զերիս վանսն՝ իւրեանց միաբանիւքն՝ զորս զամենեսեան մաաֆ առնէ ի բնաւից հարկաց։ Ցորում գրի վերջապէս թէ Կաթողիկոսն յամէ յամ Թագաւորին զԳՃԾ ղուռուշ տայ միայն, և յայլ յամենից կողմանց մաաֆ լիցին, ոչ խարաճ, ո՛չ խալանջ և ո՛չ այլ ինչ խարճ. այլ և գըրեն թէ Էջմիածնի գիւղս, Օշական, և Մաստարայ՝ մուլք են սրբոյ Աթոռոյս, որք յամենայնէ զտասանորդս պարտին տալ։ Զայս ամենայն գրէ Շըխիսլամն, և կնքէ զվերջ բանին, և մատուցանեն Թագաւորին։ Եւ Թագա-



ւորն եւս ի գլուխ դէֆտէրին զնէ զուրճ իւր, այսինքն զԹուրէն։ Զսոյնանման թուղթ մի եւս ի ժամանակս Աբրահամ Կաթուղիկոսին Մշեցւոյ շինեն՝ յետ երից ամաց, նոյնպէս և գրեցուցանեն որ ինչ ի վերնումն գրեցաւ. նմանապէս Սուլթան-Մահմուտ Թագաւորն Օսմանցւոց զնէ զԹուրէն ի գլուխ դէֆթէրին, նոյնպէս և հրամայէ՝ զի Աթոռոյս տայցեն զմուլքն անխափան վերագրեալ գիւղքն, և Աթոռս մաաֆ լիցի յամենից հարկաց, և կնքէ Շէխիսլամն զկէսս թղթոյն, և ի վերջն, ի ՌճԽԳ թուոջն տաճկաց։ Որք երկուքն եւս շատ հարկաւորք են և պահելիք, և են երկար գըրքաձևք. մին չորս թուղթք, և միւսն հինգ թուղթք որք երկոքեան եւս գոն ի սուրբ Աթոռս, ունելով զծաղկեայ պահարան յատուկ յատուկ, և են ի միում ջըտանաձև թղթեայ պահարանում, և յերեսն գրեցեալ ցուցակքն եւս ցուցանեն։

Դարձեալ յաւուրս Թէքիրտաղցի Աբրահամ Կաթուղիկոսին մերոյ՝ յորում այլայլեցաւ իշխանութիւն երկրիս Պարսից՝ և զօրացաւ Նատր կոչեցեալ բռնաւորն, և էառ զերկիրս մեր ի յՕսմանցւոց, և ինքն տիրեալ Թագաւորեաց. իսկ յետոյ առ սա արզ գրէ վերոյիշեցեալ Կաթուղիկոսն թէ. Աթոռս այս այսպէս յայտնի և հռչակաւոր օճաք 1) իմն է, յորում հինգ հարիւր մարդ աւելի հաց ուտեն, և ի Պարսից և յՕսմանցւոց թագաւորաց եւս գիր ունիմք, որք մաաֆ են արարեալ զԱթոռս ի հասարակ հարկաց, որոյ կալն ո՛չ չափի, և մահսուլն 2) ոչ գրի, վասն որոյ և ի քէն խնդրեմ զայսպիսի գիր մի, որ խանք և զիւանագիրք ի յԱթոռս ոչ ձեռնամխեսցին, և զկալս սորին մի՛ չափեսցեն։ Եւ Նատր-Շահ կոչեցեալն եւս ի գլուխ արզային ռաղամ գրէ սաստիկ Թամբէհով իւրոց գործակալացն, զի ի կալս և ի մասիս Աթոռոյս մի՛ մերձեսցին, և մի՛ ի չափս և ի համարս արկցեն։ Ի լուսանցն սոյնոյ ռաղամիս կրկին գրէ և կնքէ սաստիկ Թէմպէհով, ի ՌճԽԸ թուին տաճկաց, և ի մեր թուոջն ՌճՁԳ, զոր գըտցես ցուցական և . . . . . նշան համարով։

Ի սոյն թուոջս երկու անգամ եւս արզ առնէ սոյն Աբրահամ Կաթուղիկոսս այս Նատր-Շահիս վասն մաաֆութեան սրբոյ Աթոռոյս և այլոց վանօրէից երկրիս, թէ և ի բնէ յամենայն հարկաց ազատք են եղեալք թէ վանք, թէ սևագլուխք, թէ եկեղեցիք և թէ եկեղեցականք երկրիս մերոյ, և ամենեքեան ընդ իշխանութեամբ Էջմիածնի են, խնդրեմ զի և դու մաաֆ արասցես։ Եւ Նատր շահն եւս՝ ի գլուխ արզային եւս ռաղամ գրէ մաաֆութեան և սաստիկ Թամպէհ իւրոց գործակալացն, զի մի՛ երբէք

1) Օճաք. ծխան, ցեղ, ուխտ կրօնաւորաց, դունդ, եւլն։ — 2) Գուցէ մաճառել, բերք, օգուտ, եւլն։

շարժեցին ընդ ձեռն հրամանին իւրոյ։ Բայց զտոցին սուրէթն տեսաք մեք կնքեցեալ ի Շախղամէ, և զասլն 1) ոչ գտաք. զորս գտցես ցուցակօքն և ( ) նշանօք։

Նոյնպէս և յետ Նատր-Շահին, մինչ թագաւորեաց եղբօրորդի նորին Իպրահիմ-Շահն, և սա ռաղամ տայ ըստ խնդրոյ Ղազար Կաթողիկոսին Ճահկեցւոյ, յորում և գրէ թէ՝ որովհետև ի բնէ անտի Էջմիածին և նորին մուլքն և ամլէքն 2) մաղաֆ են լեալ, և թագաւորքն, և մանաւանդ իմ հօրեղբայրն ես մաղաֆութեան ռաղամ են տուեալ, և ես ևս տու ռաղամ՝, զի այգիք, ջրաղացք, զինկք, քրքրայք, ձիթահանք, հոմահ-ցանքն, և թէ ի Նաղտից 3), թէ ի ճնսից 4). ի Քադուփէ 5). ի Մալըսճնտելից 6), և յայլ ամենից հարկաց ազատ և մաղաֆ լիցին, և սաստիկ թամբէհ իւրոց գործակալացն, զի մի՛ մերձեսցին ընաւին յԱթոռս։ Գի՛ր զայս ռաղամս ցուցակաւն և ( ) նշան համարովն։ Որ գրի ի տաճկաց թւին ՌՃԿԱ։

Յետ Իպրահիմ շահին՝ մինչ վերջացաւ թագաւորութիւն Պարսից, և Աղուան Ազատ խանն տիրեաց յամս քանիս երկրիս, և սա տայ ռաղամս հինգ ըստ խնդրոյ Մինաս և Աղէքսանդր Կաթողիկոսացն, վերոյ գրեցեալ ռաղամի աձևին գրելով զամենայն մուլքսն Աթոռոյս, և մաղաֆ առնէ յամենայնէ. զորս գտցես ցուցակօքն և . . . . . . . . . նշան համարօքն։ Որ գրին ի ՌՃԿԴ, ի ՌՃԿԵ, ի ՌՃԿԶ, ի ՌՃԿԷ, և ի ՌՃԿԸ թւին տաճկաց։ Յորոց ի միումն և զերկրիս վանօրէից հարկսն ևս բաշխէ, որ էր ԺԼ թուման, որք յամի յամի տային յարքունիս։ Յետոյ մինչ աւերեցան վանօրայքն, յԱթոռոյս առնուին զայն հարկն։ Զօր Ազատ խանն բաշխեաց ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթողիկոսին։ Ըստ սմին օրինակի և Խալիլ խան Օզբէկն՝ որ հրամանաւ Ազատ խանին իշխօղ էր երկրիս, երկիցս անգամ՝ և սա գիր տայ սրբոյ Աթոռոյս՝ վկայութեամբ իւրոց գործակալացն՝ վասն մաղաֆութեան, և ինքն մաղաֆ առնէ յամենից հարկաց։ Որք գրին ի թւին տաճկաց ՌՃԿԵ։ Զօր գտցես ցուցակօքն։

Դարձեալ ի սոյն ՌՃԿԸ թուոջս տաճկաց, և ի մեր թուոջն ՌՄԴ, մինչ յԵրևան նստէր խան Ղաճար-Հասան-ալի խանն, Պօլսեցի Աղէքսանդր Կաթողիկոսն արզ առնէ վերոյիշեալ խանին թէ՝ դու գիտես որ՝ սուրբ Աթոռս ի բնէ անտի մաղաֆ է յամենից հարկաց, այլ և վանօրայքն մեր մինչ աւերեցան, նոցին հարկն բաշխեաց Ազատ խանն։ Վասն որոյ դու ևս յիշխանութեան քում՝ գիր մի տո՛ւր մեզ ի յիշատակ քեզ։

1) Բուն, հարազատ, իսկական։ — 2) Անշարժ, գործառնաւոր, եւլն։ — 3) Նաղտ, առձեռն պատրաստ։ — 4) Տնկս, ցեղ, տեսակ։ — 5) Ակցիզարկ։ — 6) Ոչ գիտացաք նշանակութիւնն։



Եւ խանն նոյն արզոյի գլուխն գրէ, թէ Էջմիածին մաղաֆ է յամենից հարկաց ի բնէ անտի, և մինչ վանօրայքն աւեր են, ո՛չ ոք պարտի ի կողմանէ նոցա զիր ինչ պահանջել յԷջմիածնէ։ Այսպէս գրեալ խանն կնքէ ինքն ի վերջ իւրոյ բանին, և յետ կոյս սոյնոյ թղթոյս բոլոր երկրիս դիւանագիրք, Շախղամ և գլխաւոր [illegible] տաճկաց կնքեն և վկայեն սոյն եղելութեանս։ Որ է կարի հարկաւոր և շատ պիտանի, զի բոլոր երկրիս վըկայութիւնն է վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս։ Ունի ևս [illegible] մի զոր գտցես ցուցակօքն և . . . . նշանաւ։

Դարձեալ ի ՌՃՀԲ թւին տաճկաց, և ի մերս ՌՄԸ, Յակոբ Կաթողիկոսն Շամախեցի՝ զոմանս հարկաւոր խնդիրս ԺԴ գլխով, զորս ի ռաղամից հնոց, և զորս յինքենէ ժողովէ ի մի վայր, և գրէ ի միում թղթի, և արզ առնէ Հիւսէին-ալի խանին Երևանու (որ էր եղբայր վերոյիշեալ Հասան-ալի խանին,) թէ՝ զայսպիսի խնդիրս ի թագաւորացն արարեալ են յառաջին Կաթողիկոսքն, և թագաւորքն ռաղամ են տուեալ իւրաքանչիւրոցն յատուկ յատուկ. արդ դու ևս ձեռնագրեա՛ զթուղթս զայս ի վերահաստատութիւն հրամանաց թագաւորացն, և ի յիշատակ քեզ։ Եւ խանն ևս ի գլուխ նոյնոյ թղթոյն գրելով կնքէ և հրամայէ թէ՝ որպէս առաջին թագաւորքն մեր ռաղամ են տուեալ վասն այս խնդրոյս, և ես գրեալ հրամայեցի՝ զի այսպէս լիցի։ Եւ թէ զի՞նչ են այսոքիկ ԺԴ խնդիրքս, և կամ թագաւորաց հրամանքն, յիւրում տեղւոջն տեսցես ի յօրինակութեան իւրաքանչիւրոց ռաղամից և հրամանագրացն։ Բայց աստանօր զայս միայն գիտեա՛, զի ի տասն և չորեցն գլխոց առաջին և վերջինն են յատկապէս վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս և Աթոռայնոցս։ Յորս գրի թէ, որպէս յառաջնոց թագաւորաց հաստատեցեալ է ռաղամօք, զի ի բնէ անտի Էջմիածնի խալիֆայն, վարդապետքն, միաբանքն, և ամենայն ամլէքն յամենայնի մաղաֆ լիցին, և ո՛չ ոք իշխեսցէ պահանջել զգինար մի ի նոցանէ, և արտօրայք և բովանդակ մահսուլք և մուլք նոցին ոչ չափեսցին, և ոչ ի գիր արկցին, զի ազատք են յամենայնի, նոյնպէս և ես հրամայեցի զի այսպէս լիցի։ Զայս թուղթ առնու Յակոբ կաթողիկոսն ի Հիւսէին-Ալի խանէն՝ զոր գտցես ցուցակաւն և . . . . նշանաւ։

Եւ յետ Յակոբ Կաթողիկոսին ի յաջորդել մերս նուաստութեան, և մեք խնդրեցաք զայսպիսի թուղթ ի նմանէ Հիւսէին-ալի խանէն, զոր և առաք իսկ նոյնոյ օրինակաւն՝ ի ՌՄԺԲ թուոջն մերում և ի տաճկաց ՌՃՀԶ։ Զորս գտցես ցուցակաւն և նշանաւ։

Եւ ի սոյն թուոջս՝ մինչ բռնացաւ վէքիլ կոչեցեալ Քեարիմ խանն, և որպէս թէ տիրեաց բոլոր երկրիս Պարսից, և հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխօղսն Արաղստանու և Հաստրպէճանու, զմարդ առաքեցաք առ

նա ի Դաւրէժ ընծայիւք, և առաքեցաք ևս զվերոյիշեցեալ ԺԴ գլուխ Թղթոյ սուրէթն՝ խնդրելով ի նմանէ, զի որպէս նախնի Թագաւորքն տուեալ են սրբոյ Աթոռոյս զայսպիսի ռաղամ, ինքն ևս տացէ։ Որ և ընկալեալ սիրով զընծայն մեր, տուեալ էր զռաղամ մի Կաթուղիկոսութեանս մերոյ։ Այլ և նոյն Թղթոյ օրինակաւն գրեցուցեալ ինքն իւրոց դիւանագրացն զԹուղթ մի, կնքէ ինքն, կնքեցուցանէ ևս նոցա, և ենթ ԺԴ ից գլխոցն ևս յատուկ յատուկ սաստիկ պատուէր և Թամղէհ դրէ ի վերայ երկրիս խանին, և այլոց գործակալացն, զի մի՛ ոք իշխեսցէ ընդդէմ գրեցելոցն շարժել, գրելով Թէ՝ որպէս նախնի Թագաւորքն մեր տուեալ են զայսպիսի ռաղամ, և ես նոյն։ Եւ մանաւանդ նոյնպէս ի յառաջին և ի վերջին գըլուխն վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս, զի մի՛ ոք իշխեսցէ ձեռնամխել ի մուլքս, ի մահսուլս, ի միւլքանս, և յայլ յամենայն ինչս սրբոյ Աթոռոյս։ Զի որպէս մաղաֆ են ի բնէ անտի ռաղամօք Թագաւորաց, նոյնպէս և ես մաղաֆ արարի։ Արդ այս երեքկին վերոյիշեցեալ Թուղթքս այս ինքն՝ երկուքն ի Հիւսէին-Ալի խանէն, և միւսն ի Քեարիմ խանէն տուեցեալք, են շատ պիտանի և լաւ և հարկաւորք, և շատ զգուշութեամբ պահելիք։ Զի որքան ռաղամք զոն յԱթոռոջս ի Թագաւորաց և յայլոց տէրողաց, ի միջի նոցին եղեալքն լիապէս և աւելորդովք ևս զոն ի մէջ այս Թղթոցս, և վերահաստատող վկայութիւնք ևս են նախնեաց ռաղամիցն։ Զորս դտցես ցուցակօքն, և . . . . նշանօքն։

Արդ մինչև ցայս վայր ճառեցաք անորոշապէս զմաղաֆութենէ, այս ինքն զազատութենէ սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի մինչև ցառ մեզ, այժմ ասասցուք բացապէս և որոշակօրէն, Թէ որո՛վ կերպիւ և որքանեօք է մաղաֆ, և ըստ որո՛ւմ մասին ո՛չ է մաղաֆ, և տայ զհարկս։

Արդ երկու գութանի և հինգ հարիւր ոչխարի մաղաֆութիւնն սորին է յայտնի և բացորոշեալ, որոց յաղագս յատուկ ռաղամք զոն, զի նախապէս զմիոյ գութանի մաղաֆութեան ռաղամն Փիլիպպոս Կաթուղիկոսն առնու ի յերկրորդ Շահ-Աբասէն, և Յակոբ Կաթուղիկոսն ևս կրկին առնու զնոյնպէս ռաղամ մի ի նոյնոյ Շահ-Աբասէն։ Իսկ երկրորդ գութանին և հինգ հարիւր ոչխարի մաղաֆութեան ռաղամն Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն առնու ի Շահ-Հիւսէինէն։ Իսկ ի տէրութեան Օսմանցւոց Սուլթան-Ահմէտն գրելով զֆէրմանն մաղաֆութեան Աթոռոյս, զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սօմար ցանելիս, և զվեց հարիւր ոչխարս միայն յատկացուցանէ Թուով։ Նոյնպէս և զկնի սուլթան Մահմուտն տայ ֆէրման՝ այսու ոճով։ Իսկ զայլսն ո՛չ յատկացուցանեն. այլ գրեն Թէ՝ Էջմիածին երիւք վանիւքն մաղաֆ է ի բնաւից հարկաց. որ ո՛չ ինչ ունի տուրք, բայց միայն ի տարին ԳՃԾ ղուրուշ դրամ, որպէս ա-



սացաք ի վերդ։ Քանզի այգեաց, ջրաղացաց, դնկից, և այլոց այսպիսեաց յաղագս ո՛չ է յատկացուցեալ ռաղամօք Թէ՝ որքան այգի կամ ջրաղաց, և այլքն են մաղաֆք։ Արդ այսպիսեաց մաղաֆութիւնն այնպէս է լեալ՝ որպէս ասացաք ի վերդ։ Զի Փիլիպպոս Կաթուղիկոսն անգամ մի արզ առնէ երկրորդ Շահ-Աբասին Թէ՝ այս Աթոռս զայսքան վարելահողս ունի (գրելով յանուանէ յատուկ յատուկ), ռաղամ մի տուր՝ զի ոչ ոք ձեռնամխիցի ի նոսա։ Որոյ յաղագս առնու ռաղամ՝ ի ՌԾԴ Թուոջն տաճկաց։ Եւ երկրորդ անգամ արզ առնէ նոյնոյ Շահին Թէ՝ Աթոռս այս զայսքան այգիս և ջրաղացս և զայլս այսպիսիս վախուփ մուլքս ունի, ոմանք երբեմն ձեռն ածեալ ի նոսա կամին հանել ինքեանց. ռաղամ մի տուր զի ոչ ոք ձեռնամխեսցի ի մուլքսն աթոռոյս։ Որոյ աղագս և շահն ռաղամ տայ ի ՌԿ Թուոջն տաճկաց։ Յորում ինն այգի և ինն ջրաղաց գրի, որպէս ի վերդ ցուցաք։ Սոյնպէս և յայլս ռաղամս յիշեն միով, երկուքումիք, և այլովք որքանութեամբք, աւելի և պակաս այգի, ջրաղացք, և այլք այսպիսիք, զորս տեսցես ի յօրինակութիւնս ռաղամաց։ Արդ այս երանելիս յորժամ այսպիսեօք արզայիւք և ռաղամօք հաստատէ այսքան մուլք զօն Աթոռոյս, ապա և արզայ մի ևս գրէ նոյնոյ Շահ-Աբասին Թէ՝ այս Աթոռս ունի զայգիս, զջրաղացս, զվարելահողս, զոչխարս, և զայլս այսպիսիս (որպէս ի վերդ ասացաք), զայսոսիկ մաղաֆ արա, զի կերեալ աղօթեսցուք վասն քո։ Եւ շահն ռաղամ գրէ ի վերայ նոյնոյ Թղթոյն՝ և մաղաֆ առնէ անորոշապէս զամենայն մուլքսն Աթոռոյս ի ՌԿ Թուին տաճկաց։ Եւ մինչ երանելիս այս՝ այսու կերպիւ մաղաֆութեան ռաղամ առնու ի Շահ-Աբասէն, ապա այնուհետև զկնի եկեալ Կաթուղիկոսքն յիւրաքանչիւր ժամանակս արզ առնեն տէրողաց երկրիս Թէ՝ Աթոռս մաղաֆ է իւրայնովքն, դու ևս մաղաֆ արա, որպէս ասացաք ի վերդ։ Ապա և ի դալ դիւանագրաց ի Թագաւորաց յերկիրս յայս ի գիր արկանել զմուլքսն և զբերսն երկրիս, և ի կամիլն ի գրել զմուլքսն աթոռոյս՝ և ի ցուցանելն Կաթուղիկոսաց զմաղաֆութեան ռաղամն ասելով Թէ Աթոռս մաղաֆ է, վասն որոյ և դիւանադիրքն զամենայն մուլքսն Աթոռոյս ի գիր արկեալ յատուկ յատուկ և յանուանէ գրէին և կնքէին Թէ՝ այսքան այգի, այսքան ջրաղաց, այսքան դինկ, այսքան ձիթահանք, (և այլք այսպիսիք, զորքանս ունեցեալ լինէր Աթոռս ըստ ժամանակին,) Էջմիածնի էին. որք մաղաֆ գոլով հրամանաւ Թագաւորաց, և մեք մաղաֆ գրեցաք։ Այսու ոճով շուրջ-նամա 1) մի գրեալ և կնքեալ տային Աթոռոյս և զերեսն ի յայքունի Զամիրն դրէին, զի ի հաշուատրութեան ցուցցեն Թագաւորին։

1) Պայմանագիր։

Եւ ոչ միայն ըստ սրբոյ Աթոռոյս մուլքն, այլ և բոլոր վանօրէից երկրիս մուլքն այսպէս մաղաֆ գրէին ընդ սրբոյ Աթոռոյս։ Որպէս ի ՌԴԸ թուին տաճկաց, ի ժամանակս Շահ-Սուլէյմանին և Եղիազար Կաթուղիկոսին մերոյ, եկեալ դիւանագիրք արքունուստ յերկիրս յայս, գրեն գթուղթ մի և կնքեն, թէ այսքան մուլք Էջմիածնի և վանօրէից նորին մաղաֆք են։ Յորում գրի սրբոյ Աթոռոյս ԺԲ այգի, երեքն յայս մեր գեօղս, երեքն յՕշական, երեքն ի Փարաքար, և երեքն յԵրևան. ջրաղաց ութն, երեքն յայս գեօղս, երեքն յԵրևան, մի ի Փարաքար, և մին ի Դոխս. ձինկ հինգ, երկուքն յայս գեօղս, մին ի Քեալարայ, մին ի Փոանկանոց, և մին ի Փարաքար. երիք ևս քրքրայ, մին ի Քեալարայ, մին ի Փոանկանոց և մին ի Փարաքար։ Այլ և Մողնու վանիցն Բ այգի, մին ի յիւր գեօղն, և մին ի Փարաքար, և երկու ջրաղաց։ Կօշավանքին՝ մի այգի և Ա. ջրաղաց. Սաղմոսավանքին Ա. այգի յԱշտարակ, և երկու ջրաղաց յիւր մօտն. Գեղարդին՝ չորս այգի, մին ի Նորք, երկու յԵրևան, և մին ի Նորագաւիթ, և մի ջրաղաց յիւր մօտն։ Գետարգելին՝ Գ. այգի, երկուքն յԵրևան, և մին յԱռինջ, և Բ. ջրաղաց. Բջնու վանքին՝ մի այգի յԵրևան, և Ե. ջրաղաց. Սևանի՝ մի այգի յԵրևան, և մի ջրաղաց յիւր մերձ։ Տեղեր՝ մի այգի ի Բիրական և մի ի Նորագեղ։ Յովհաննավանքին երկու այգի ի Կարբի, և մի ջրաղաց. սուրբ Սարգսի՝ մի այգի Յօշական, և երեք ջրաղաց ի Յուշի։ Վիրապի՝ չորս, այգի մին ի Նորք, մին յԵրևան, մին ի Փարաքար, մին յԵղուարդ, և երեք ջրաղաց։ Դզվանք որ է Ամենափրկչին՝ Ա. այգի յԵրևան, և Ա. ջրաղաց ի Գառնի։ Աղջոց վանքին՝ Ա. այգի ի Շնգաւիթ, և մի ջրաղաց յիւր մերձ։ Դփչաղ՝ Ա. ջրաղաց ի Կարբնիս, Ա. այգի Յօշական, և Բ. ջրաղաց։ Զայս ամենայն վերոգրեցեալքս գրեն յանուանէ մաղաֆ՝ և տան մեզ՝ ի թուին Տաճկաց ՌԼԲ։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Սոյնանման թուղթ մի և ի ժամանակս Շահ-Հիւսէյին թագաւորին և Աստուածատուր Կաթուղիկոսին մերոյ տան մեզ դիւանագիրք արքունի։ Յորում երեսուն և չորս այգի գրեն մաղաֆ, տասն և մէկն սրբոյ Աթոռոյս՝ և քսան և երեքն վանօրէից. երեսուն և ինն ջրաղաց գրեն մաղաֆ, տասն և երկուսն Աթոռոյս և քսան և եօթն վանօրէից։ Քսան ձիթահանք գրեն մաղաֆ, երկուքն Աթոռոյս և տասն և ութն՝ վանօրէից. ինն ձինկ գրեն մաղաֆ, հինգն Աթոռոյս, և չորսն՝ վանօրէից։ Գի՛տ զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ գրի ի ՌՃԼԱ թուին տաճկաց։

Սոյնանման թուղթ մի և ի ժամանակս . . թագաւորին և . . Կաթուղիկոսին մերոյ տան մեզ դիւանագիրք արքունի։ Յորում գրեն մաղաֆ ԿԱ այգի, երեսուն և մէկն Աթոռոյս, և երեսունն վանօրէից. քառասուն



և ինն ջրաղաց, տասն և չորսն Աթոռոյս, և երեսուն և հինգն վանօրէից. տասներկու ձինկ, չորսն Աթոռոյս, և ութն վանօրէից. ԺԷ ձիթահանք, վեցն Աթոռոյս, տասն և մէկն վանօրէից. զոր գտցես ցուցակաւն, որ գրի ի թւին Տաճկաց . . . ։ Վերոյգրեցեալ չարթնամայ թուղթն որ ի ժամանակս Շահ-սուլթան Հիւսէյինին և Աստուածատուր Կաթուղիկոսին տան դիւանագիրքն, Աթոռակալ Վրթանէս վարդապետն առնու ի ՌՃԼԱ թուին Տաճկաց և ի ՌՃԿԶ թուոյն մերում։ Այս թուղթս երկու է և միապէս, որպէս ցուցակքն ցուցանեն։ Արդ ի սոսում գրեցեալ մուլքն այսպէս գրեն. երեսուն և չորս այգեաց տասն և մէկն՝ որք սրբոյ Աթոռոյս են, այսոքիկ են, չորս այգին է ի մեր գեօղս, երեքն ի Յօշական, երկու ի Փարաքար, և երկու ի Նորագեօղ. ԼԹ ջրաղաց, ԺԲ՝ որք սրբոյ Աթոռոյս են՝ այսոքիկ են. ութն ի մեր գեօղս, երկու ի Քեալարայ, և Բ ի Զորագեօղ. երկու ձիթահանք ի մեր գեօղս. երկու ձինկ և քրքրայի մեր գեօղս և Գ. ձինկ ի Քալարայ։ Իսկ միւս մնացեալքն են վանօրէիցն. զորոց որպէսն տե՛ս. Բջնու վանիցն՝ մին այգի ի Շնգաւիթ, և մէկ ի Կեղրօն։ Չորս ջրաղաց և մէկ ձիթահանք ի ԲՃՆի գեօղն։ Կարէնիսու վանիցն՝ երեք ջրաղաց ի նոյն Կարենիս գեօղն, մէկ այգի և մէկ ձիթահանք ի Յօշական։ Գետարգելու վանիցն՝ Բ. այգի յԵրևան, Ա. ձիթահանք և Բ. ջրաղաց ի յիւր գեօղն. Մողնույ վանիցն՝ Ա. այգի ի Փարաքար, Ա այգի և Բ. ջրաղաց ի յիւր գեօղն, և Ա. ձիթահանք ի Կարփի։ Սրբոյն Գեղարդայ վանիցն՝ Ա. այգի յԵրևան, Ա. այգի ի Նորագաւիթ, Ա. ջրաղաց յիւր մօտն, Ա. ձիթահանք ի Ծար, և Ա. ձիթահանք ի Շահապ։ Սրբոյ Ամենափրկչի վանիցն՝ Ա. այգի ի Շնգաւիթ, և մէկ այգի ի Նորագեօղ, և Ա. այգի ի Պղտիկ գեօղն, և Ա. ջրաղաց ի Գառնի։ Աղջոց վանիցն՝ մէկ այգի ի Շնգաւիթ, Ա. ձիթահանք ի Ճաթղուան, և Ա ձիթահանք յիւր մօտն։ Խորվիրապայ վանիցն՝ չորս այգի ի Նորք, ի յԵրևան, ի Նորագաւիթ, և ի Քեօզ-գումբէթ. Ա. ջրաղաց ի Վէթի, և մէկ ի . . . . . . , և մէկ ջրաղաց և մէկ ձիթահանք ի . . . . ։ Սաղմոսավանիցն՝ մէկ այգի յԱշտարակ, մէկ ձիթահանք ի Սերկէվիլ, և երկու ջրաղաց յիւր մօտն։ Սրբոյն Սարգսի վանիցն՝ մէկ այգի յՕշական, Ա. ձինկ և Ա. քրքրայ ի Դզլթամիր, Ա, ջրաղաց ի Լագրվան, Բ. ջրաղաց և մէկ ձիթահանք ի Յուշի։ Տեղերու վանիցն՝ մէկ այգի և մէկ ձիթահանք ի յԱգարակ, մէկ ջրաղաց և Ա. ձիթահանք ի յԱղց։ Յովհաննայ վանիցն՝ Բ. ջրաղաց և Ա. ձիթահանք ի յիւր գեօղն, Բ. ձինկ և Ա. քրքրայ ի Փարպի, և մէկ ձիթահանք ի Կարփի. Կօշավանիցն՝ մէկ այգի և Ա. ձիթահանք ի Կօշ. Դփչաղու վանիցն՝ մէկ ձիթահանք յիւր մօտն։ Սևանու Անապատին՝ Ա. ջրաղաց ի Վարսէր և Ա. ձիթահանգ ի Ղարադալու։ Անանիա Առաքելոյ անապատին, Բ. այգի յԵրևան։

Այսու ոճով մնայ մաղաֆութիւն Աթոռոյս և հռչակի յամենեսեան թէ Աթոռս այս մաղաֆ է յամենից հարկաց։ Արդ տես այս կանոն՝ ի մեր ՌՂԸ թուոյն և ի Տաճկաց ՌԿ թուոյն, մինչև ի մեր ՌՃՀԳ, և ի տաճկաց ՌՃԼԷ թիւն, յորում վերջացաւ թագաւորութիւնն Պարսից Շիխ-Օճաղին, և տիրեաց երկրիս մերոյ ազգն Օսմանցւոց, և Նստի յԵրևան Ռաջաի կոչեցեալ փաշայն. ծանուցանէ նմա Աստուածատուր Կաթուղիկոսն զօրավորութենէ սրբոյ Աթոռոյս, զմաղաֆութենէն և զորքան մուլքսն ունիցին։ Ապա փաշայն գրեցուցանէ զերկար գրքանձև դէֆտէր մի, որոյ գլուխն ինքն կնքէ և զվերջն ղաղին, յորում այս մեր գեօղս, Ցօշական, Մաստարայ, Փռանկանոց, և Քիրաշլու գեօղքն՝ մուլք գրին Աթոռոյս։ Ապա և զմաղաֆութիւնն կանոնաւորեալ գրէ թէ տասն այգի, յորոց երկքն ի մեր գեօղս, երկքն յՕշական, երկու ի Փարաքար, երկու յԵրևան, տասն և երկու ջրաղաց, յորոց ութն ի մեր գեօղս, երկու յԵրևան, երկու ևս ի Քաղարայ. երկու զինկ, Ա. ի մեր գեօղս, և միւսն ի Քաղարայ։ Երկու ձիթահանք ի մեր գեօղս կից Աթոռոյս. քսան և հինգ սերմանելի արտ, երեք եօնճալուղ. մէկ Քեարվանսարայ, մէկ համամ, և վեց հարիւր ոչխար։ Այսքանեաց կանոնէ զսուրբ Աթոռս մաղաֆ, որ եթէ քան զայսոսիկ աւելի ինչ ունիցի, զհարկսն տայցէ։ Այլ և գրէ թէ սրբոյ Աթոռոյս միաբանքն, ընդ սմին և Հռիփսիմէի, Գայիանէի, Շողակաթի վանքն, այլ և Երևանու Անանիա առաքելոյ և Զորավորոյ անապատքն, իւրեանց միաբանիւքն լիցին մաղաֆ ի խարաջից և յայլոց հարկաց։ Սոյնանման գիր և այլք փաշայք տան մեզ, որպէս ասացաւ ի վերդ, յաւուրս իշխանութեան Օսմանցւոց՝ այսու կերպիւ կառավարեցաւ սուրբ Աթոռս։ Քանզի ի ժամանակս Ռաջաի փաշայիս այսմիկ՝ մեր գեօղականքս կամին՝ զի զԱթոռոյս մին գութանն խափանեսցեն. վասն որոյ և Աստուածատուր Կաթուղիկոսն արզ առնէ սոյն փաշայիս։ Եւ սոյն փաշայս ի գլուխ արզային գրէ և կնքէ թէ՝ որպէս ի բնէ անտի ունեցեալ է Աթոռդ զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սօմար սերմն, և զհինգ հարիւր ոչխարս, և ես հրամայեցի զի այսպէս լիցի։ Սոյնպէս և ղաղին տայ զֆէթվայ[1] մի։ Զորս գտցես յերեան գրեցեալ ցուցակօքն. որք գրին ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Զսոյնանման զգիրս երկուս ևս տայ սոյն փաշայս վասն մաղաֆութեան վանօրէից Երևանու. զորս ամենեւին մաղաֆ առնէ յամենայն հարկաց. այլ միայն ի տարին զեօթն հարիւր ղուռուշն տան յարքունիս, և այլ ոչինչ։ Զորս գտցես ցուցակօքն. որք գրին ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Ըստ վերոյիշեցեալ գրոյն՝ զգիր մի ևս տայ սոյն փաշայս

1) Ֆէթվա, վճիռ։



սրբոյ Աթոռոյս ամենևին մաղաֆ առնելով։ Այլ միայն զերեք հարիւր յիսուն ղուռուշ տայցէ ի տարին։ Զոր ևս գտցես ցուցակաւն։ Որ գրի ի թուին տաճկաց ՌՃԼԹ։ Ըստ վերոյ գրեալ Ռաջաի փաշայի տուեալ գրքանձև մեծ թղթոյն, զթուղթ մի ևս Ահմէտ փաշայն տայ ամենևին նոյնանման. որ գրի ի ՌՃ թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն։ Դարձեալ զերկուս թուղթս Մուստաֆայ փաշայն տայ, մին ի ՌՃԽԱ, և զմիւսն ի ՌՃԽԴ թուոջն։ Զթուղթ մի ևս Հիւսէին փաշայն տայ ի ՌՃԽԷ թուականին տաճկաց։ Որք միապէս զսուրբ Աթոռս և զամենայն վանորայսն երկրիս մաղաֆ գրեն յամենայնից հարկաց. Միայն թէ սուրբ Աթոռս ի տարին երեք հարիւր յիսուն և հինգ ղուռուշ, և ամենայն վանորայքն եօթն հարիւր ղուռուշ տան յարքունիսն, և յայլ ամենից հարկաց ազատք լիցին։ Զսոյնամիտ թուղթ մի ևս Շէխ-իսլամն տայ. զոր գտցես ցուցակօքն։

Ապա յետ ԺԱ ամաց, ի մերում թուոջն ՌՃՁԳ, և ի թուին տաճկաց ՌՃԽԸ, մինչ բռնանայ Նատր կոչեցեալ բռնաւորն, յազգէն Պարսից, որ և թագաւորէ իսկ, ի Հայրապետութեանն Տեառն Աբրահամու Թրակացւոյ, զգործակալս այս ինքն զՎէքիլս հանէ յամենայն երկիր, գրել զիւրաքանչիւր գաւառի, քաղաքի, և գիւղօրէից զհասսն և զհարկսն արքունականս։ Ցորմէ և կարգեցաւ յերկրիս Երևանու Միրզայ-Քեազըմ անուն ոմն գլխաւոր տաճիկ վէքիլ և միրմէիզ վերագրեալ գործոյս։ Արդ ի սոյն թուոջս վերոյիշեալ Աբրահամ Կաթուղիկոսն յառաջագոյն արզ արարեալ ծանուցանէ անորոշապէս Նատր-շահին զմաղաֆութենէ սրբոյ Աթոռոյս, և զՌագամ խնդրէ ի նմանէ։ Եւ Նատր-Շահն ի գլուխ արզային գրէ հրաման անորոշակի ի վերայ գործակալացն իւրոց թէ՝ ի կալս և ի մուլս Աթոռոյն մի՛ մերձենայք, որպէս յիշեցաք ի վերդ։ Ապա վերոյիշեալ Միրզա-Քեազըմ ի գիր արկանելն զհասսն երկրիս, սկսանի և զԱթոռոյս հասսն և զմուլքսն գրել. ի ցուցանելն Աբրահամ Կաթուղիկոսին զռագամ Նատր-շահին թէ Աթոռս մաղաֆ է, և Նատր-շահն ևս ահա մաղաֆ է արարեալ. պատասխանէ Միրզա-Քեազըմն թէ Նատր-շահն միայն զցանքս և զկալս քո է արարեալ մաղաֆ. արդ մեք զայգիս, զջրաղացս, և զայլս այսպիսիս՝ զորս ունիս, ի գիր արկանեմք։ Ապա վերստին արզ առնէ Կաթուղիկոսն Նատր-Շահին՝ թէ թէպէտ դու ողորմութիւն արարեր, և մաղաֆութեան ռագամ ետուր մեզ, որ քո գործակալքն ի Աթոռս ամենևին զիր ինչ ոչ պահանջիցեն, ահա Միրզա-Քեազըմն միայն զկալս մեր ո՛չ չափեաց և ի ցանքս մերմէ ոչ պահանջեաց զհարկս, իսկ զայլոցն՝ այս ինքն յայգեաց, ի ջրաղացից, և յայլոց այսպիսեաց կամի առնուլ զհարկս, որ ո՛չ եմք տուեալ բնաւին։ Քանզի այս Աթոռս յամենայնէ մաղաֆ է ի բնէ անտի՝ որ ոչ ինչ կերպիւ է տուեալ զհարկս

պլ և Երևանու երկրիս վանորայքն, այս ինքն Խորվիրապ, Աղցվանք, Ամենափրկիչ, Գեղարդ, Սևան, Հայրավանք, Կեչառիս, Դդիչաղ, Գետարգել, Բջնի, Կարենիս, Սաղմոսավանք, Օհանավանք, Մուղնի, Յուշի, Տեղեր, Կօշ, Սաղմոսավանից և Օհանավանից անապատքն, այս ԺԹ վանքերս ի նախնեաց հետէ՝ թէ՛ ջուղայէ և թէ այլ խարջի կողմանէ մին խալամ 1) ի տարին մի անգամ Կաթուղիկոսի ձեռօքն ԺԷ թուման և հինգ հազար դիան մալաջհաք 2) անուամբ տուեալ են յարքունի։ Իսկ զսերմանցն՝ ոյքան սերմանեն, ի հնգէն զմին տան բահրայ անուամբ, նոյնպէս այգեաց, ջրաղացից և այլոց այսպիսեաց, զորս ունին, ըստ կարգին տուեալ են զհարկսըն։ Այժմ ի յառաւել հարկապահանջութեանց շատքն ամայի են եղեալ, զի երկրիս գործակալքն քան զկարգն առաւել պահանջեն. վասն որոյ խնդրեմ ի մեծութենէդ, զի զռաղամ մի շնորհեսցես մեզ, որ այս Աթոռս որպէս ի բնէ անտի յամենայն կողմանէ մաղաֆ է եղեալ, որոց ցանքն, ցորեն, գարի, և այլ ամենայն սերմանելիք, այգիք, ջրաղացք, գինիք, ձիթհանք, ոչխարք և այլ անասունք, քեարվանսարայ, դուքան 3). համայն և այլք այսպիսիք, ամենեքեան մաղաֆ լիցին՝ որպէս յառաջն։ Նոյնպէս և միւս վանորայքն զԺԷ թուման և զհինգ հազար դիանն որպէս տուեալ են ի բնէ՝ նոյնպէս և այժմ զնոյնն տայցեն իմով ձեռամբ։ Եւ զցանքիցն ո՛րքան ցանիցեն, ի հնգէն զմինն տայցեն բահրայ. իսկ այգեաց, ջրաղացից, և այլոց այսպիսեաց, զորքան ունին, ըստ կարգին որպէս տուեալ են յառաջնմէ, նոյնպէս և այժմ զնոյնն տայցեն, և մի՛ առաւել պահանջիցեն ի նոցանէ զեր ինչ. յորոց շատ աղօթք վասն քո կու եղանէ առ Աստուած, և քո երախտիքն ոչ կորնչի։ Արդ այսու ոճով գրէ զարզա մի վերոյգրեալ Աբրահամ Կաթուղիկոսն, և տայ Նատր-շահին։ Իսկ Նատր-շահն զայս արզայս առաքէ առ վերոյիշեալ միրզա Քեազում գործակալն իւր, և գրէ առ նա թէ՝ այդ արզային լաւ վերահասու լինիս, և ամենայն կողմանէ տեղեկասցիս, թէ Էջմիածին և թէ միւս գրեցեալ վանորայքդ ի բնէ անտի ո՞րպէս են եղեալ, յարքունիս զի՞նչ հարկ են տուեալ, և ո՞րպիսի է մաղաֆութիւնն դոցա. լաւապէս գիտասցես, և զիւրաքանչիւրոց որպիսութիւնն յատուկ յատուկ ինձ գրեսցես։ Ըստ այսմ հրամանի վերոյիշեալ Միրզա-Քեազումն և այլ գործակիցք նորին եկեալ յԱթոռս ընդ Աբրահամ Կաթուղիկոսին յետ բազմաց վիճմանց և խօսակցութեանց, գրեն առ Շահըն թէ, քո ծառայք միրզա-Քեազումն և միւս միրզա-Քեազումն վերահասու եղաք Էջմիածնի, Օհանավանից և միւս վանօրէից, և նոցին սեա-

1) Գալէմ, գրիչ. (միանուագ, կամ ի մի գիր եւս նշանակէ):— 2) Ընչացին: — 3) Տիւքեան, խանութ:



գլխոց մաղաֆութեան, որ ահա արզ առնեմք մեծութեանդ. Էջմիածնի՝ սեագլխաց՝ և նորին մարդկանց մաղաֆութիւնն ի նախնեաց հետէ այսպէս է ճշմարիտն՝ որ գրեմք. Ամենայն տեսակ սերմանելեաց հատից զոր ցանեն, որ ջինս ասի, մաղաֆութիւն է վաթսուն և վեց խալուարի, որ է վեց հազար և վեց հարիւր լիտր Երևանու . . . . . . և նոցա մաղաֆութիւն է այսքան. տասն այգի, երեքն յայս Էջմիածնի ի գեօղս, երեքն յՕշական, երեքն յԵրևան, և մին ի Փարաքար. որք ընդ ամենն լինին մէկ հարիւր լիտուն . . . . . . և . . . . . մէկ հարիւր դիանով լինի մէկ թուման և հինգ հազար դիան։ Տասն ջրաղաց, հօթն ի յայս գեօղս, Գն յԵրևան. Գ. ձիթահանք, Բն յԱթոռս և մէկն յՕշական. Բ. դինկ և Բ. քրքրայ ի Քալարումն, և մէկ դինկ և Ա. քրքրայ ի Կաւակերտ. որք ընդ ամենն՝ ջրաղաց, ձիթահանք, դինկ և քրքրայ լինին տասն և ինն հատ. որոց մինն՝ հազար վեց հարիւր յիսուն դիանով, լինին ընդ ամենն երեք թուման Ա հազար Զ.Ճ դիան։ Ութսուն և ինն հատ դուքեան ի քարուանսարայս մեր, որք մէկ մէկ ապասիով՝ լինի ընդ ամենն Ա. թուման ԷՌԲ.Ճ դիան. Ա. համամ՝ երեք թուման։ Ոչխար հինգ հարիւր, որոց մինն կէս շահիով՝ լինի ընդ ամենն մէկ թուման, ԲՌԵՃ դիան։ Արդ վերոգրելոց այգեաց, ձիթհանքից, ջրաղացից, դնկից, և քրքրայից, դուքանից, ոչխարաց և համամի խարճից ջամ 1), որ է մեր նաղտից մաղաֆութիւն, է ընդ ամենն՝ տասն թուման վեց հազար վեց հարիւր յիսուն դիան։ (Արդ յաւուրս Նատր-շահին ևս այսպէս կանոնեցաւ սորոյ Աթոռոյս մաղաֆութիւն, այս ինքն, ջինսն վաթսուն և վեց խալուար, և նաղտըն տասն թուման, ՁՌՁՃԾ. դիան՝ որպէս ասացաւ։ Որ եթէ քան զայս գրեցեալս աւելի ունիցի զմուլքս, և կամ աւելի սերմանիցէ, զհարկըն տալոց է ըստ կարգին՝ որպէս տայ երկիրն։) Եւ յետ գրելոյ զորպէսն սորոյ Աթոռոյս ըստ հրամանի Նատր-Շահին գործակալքն նորին՝ որպէս ասացաք, ապա գրեն և զորպէսն միւս վանօրէից։ Արդ վերոյ ասացեալ ԺԹ վանօրէից աղագաւ գրեն թէ՝ այս վանորայքս և իւրեանց միաբանքն ի ջազիայից և յայլոց հարկաց մաղաֆք են, բայց սովորութիւն ունին որ ի նախնեաց հետէ ի տարին միանգամայն տասն և հօթն թուման և հինգ հարիւր դիան Խալիֆայի ձեռօքն տան յարքունիս։ Իսկ ցանքն՝ զորքան ցանեն, և ջրաղաց, այգի, և այլք այսպիսիք՝ զորքան ունիցին, զհարկս նոցա տան ըստ կարգին։ Մայն թէ՝ Յովհաննավանքին մէկ թուման ԳՃԼ դիանի մաղաֆութիւն ունի նաղտից կողմանէ, որ է չորս այգի, երեք ջըրաղաց, մէկ ձիթահանք և մէկ դինկ։ Զայս ամենայն՝ զորս գրեցաք, գրէ

1) Ճէմ, ղումար:

միրզա Քեաղումն և այլ գործակալքն, և առաքեն առ Նատր-շահն՝ գրելով թէ՝ ահա այս է որպէսն Էջմիածնի և այլոց վանօրէից՝ զոր գրեցաք ակրութեանդ. որպէս հրաման ակրութեանդ է՝ այնպէս եղիցի։ Այսու օրինակաւ և Աբրահամ Կաթուղիկոսն գրէ արզայ առ Նատր-շահն, և ընդ նոցին գրոյն առաքէ։ Ապա և Նատր-շահն ի տեսանելն զգրեցեալսն, ռաղամ գրէ յԵրևան ի վերայ խանին և իւրոց գործակալացն թէ՝ որպէս իմ գործակալքն գրեալ էին և յառաջացուցեալ զմաղափութիւն Էջմիածնի և այլոց վանօրէից, վերահաստատ եղէ և հաւանեցայ, և մանաւանդ թէ ես եկի յԵրևան քաղաքս զօրօք, խալիֆայն իւր մարգկանն ընդ առաջ եկն ֆէշքէշալով 1), և ինձ և զօրացս լաւ ծառայութիւն արար և ածէր եա։ Վասն որոյ և ես զամենայն հարկսն նոցա թաշխեցի, և զի՛նչ որ ունէին՝ մաղափ արարի, որ միշտ մաղափ մնան։ Ուրեմն ո՛վ գործակալք իմ՝ այսուհետև այսպէս գիտացեալ, Էջմիածնի մէքին և միաբանին մի՛ ձեռնամուխ լինիք, և զայս կանոնս գրեցէք ի յարքունական դէֆթէրաջըն, զի միշտ մնասցէ։ Նմանապէս և խանին գրէ պատուէր, զի յամենայնի պատուով պահիցէ զԿաթուղիկոսն իւրայնովքն։ Այս ամենայն լինի ի ՌՃԽԸ թուոյն տառնկաց, և ի մեր ՌՃՁԳ թուոյն։ Այս ռաղամքս՝ զորս յիշեցաք, սոցա այն ի ձեռն գործակալացն Նատր-Շահին մնան, և նոցա երեսն Հայերէն թարգմանեալ առ մեզ ունիմք։ Սակայն և զայն ես ձեռն բերաք յետոյ, որ է եաանկլինի թուղթ մի, երկու արզայ և Բ. հօքմ 2)։ Երկու կնիք միրզայից և ի ծայրն Աբրահամ Կաթուղիկոսին Գետ ցուցակաւն։ Ապա յետ երկուց ամաց փոխի առ Տէր լուսահոգի Աբրահամ Կաթուղիկոսն, (որ շատ սիրեցեալ էր ի յիշեալ Նատր-Շահէն), և յաջորդէ զաթոռս Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի. և յաւուրս սորա ես եկեալ նոյն գործակալքն Նատր-Շահին գրեն զունեցեալ մուլքսն և զցանքն արբոյ Աթոռոյս։ (Զի այս ղաղանաբարոյ և խորոտ Նատր-շահս ի տարին միանգամ ի գլխ արկանէր զբոլոր երկրի զամենայն հասոյն և զբերսրն։) Նոյնպէս գրեն անպական զորս յիշեցաք ի վերդ, զտասն այգի, ըղտասն և ինն ջրաղաց, ձիթահանք և գինի, զութսուն և հինգ գութան ի Քեարվանսարայոջս մերում, զմէկ համամ, զհինգ հարիւր ոչխար, և զվաթսուն և վեց խաշնար ցանկլխն։ Արդ թէպէտ զնոյն վերոգրեցեալսն գրեն նոյն թուով՝ որքան ի վերդ գրեցան, սակայն զխարճն ո՛չ նոյնպէս, այլ աւելորդով գրեն։ Քանզի նոյն տասն այգեաց խարճն՝ որ ի վերդ մէկ թուման հինգ հազար դիան գրեցաւ, սոքա ինն թուման ութն հազար մէկ հարիւր դիան գրեն։ ԺԹ ջրաղացից, գինեաց, և ձիթահանքից խարճն՝ որ ի

1) Փէշքէշ. ընծայ։— 2) Հուքմ. դատ, վճիռ։



վերդ երեք թուման մէկ հազար և ՉՃ դիան գրեցաւ, մինն մէկ հազար վեց հարիւր յիսուն դիանով՝ սոքա վեց թուման գրեն, մին երեք հազար մէկ հարիւր յիսուն դիանով, և հինգ հարիւր ոչխարն ի վերն, մինն ԻԵ դիանով, մէկ թուման ԲՌԵՃ դիան գրեցին. սոքա զմինն վաթսուն դիանով. երկու թուման վեց հազար դիան գրեն։ Նոյնպէս և քեարվանսարայի ութսուն և հինգ գութանն՝ նոքա զմինն ԲՃ դիանով, ընդ ամենն Ա թուման ԷՌԸՃ դիան գրեցին, Իսկ սոքա զմինն չորս հարիւր յիսուն դիանով՝ չորս թուման ԲՌ դիան գրեն։ Որոց գրեցելոց նաղտից ջամն ընդ ամենն եղև քան երեք թուման ԲՌԱՃ դիան։ Արդ ըստ առաջնոց գրելոցն՝ մաղափութիւն մեր էր տասն թուման վեց հազար վեց հարիւր յիսուն դիան՝ որպէս ասացաւ, և զայսքանս հանին ի վերայ գրեցեալ ջամէն իւր մեր մաղափութիւն, և զմնացեալ աւելորդն՝ որ է տասն երկու թուման հինգ հազար չորս հարիւր յիսուն դիանն՝ խնդրեցին ի մէնջ։ Տե՛ս դու զկարամնկութիւն օձարարոյից Պարսիցն։ Զի մի և նոյն իրքն՝ որք երկու ամսայառաջ մաղափ գրեցին, զմաղափութիւնն ի վերայ նոյն իրացն ոչ կապեցին, այլ զխարճն թեթևագնով հաշուեալ ի վերայ այնքանեաց խարճիցն կապեցին զմաղափութիւնն, որ է տասն թուման վեց հազար վեց հարիւր յիսուն դիան։ Ցետոյ զխարճն նոյնց իրացն աւելացուցանելով, ասացին թէ՝ ձեր մաղափութիւնն այսքան է, ուրեմն զայսքանս՝ որ յաւելաւ, պարտիք տալ։ Ապա յետ բազմաց վիճմանց և խոստկացութեանց, ի ջրաղացիցն երկուքն աւեր էր, մին աստ, և մին յԵրևան. նոյնպէս և քեարվանսարայի խանութիցն ոմանք անմարդաբնակ էին յայնմ միջոցին. զխարճն նոցին ի բաց հանեալ ի վերոյիշեալ տասներկու թուման հինգ հազար չորս հարիւր յիսուն դիանէն, տասն և մէկ թուման եօթն հազար ինն հարիւր յիսուն դիան առնուն ի յԱթոռոյս նոյն միրզա Քեաղումն և ընկերքն իւր, և տան զհիւծէթ մի եաւկնիք յաւուրս Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ ի ՌՃԾ թուոյն տառնկաց, և մեր թուին ՌՃՁԵ։ Զոր գտցես ցուցակաւն յիրեսն գրեցեալ։

Եւ որպէս զԱթոռոյս միքից խարճն յաւելացուցին սոքա, նոյնպէս և բոլոր երկրիս միքիցն յաւելացուցին, նոյնպէս և Ցովհաննավանքին աւելորդով գրեն ի նոյն հուճէթումն։ Բայց զտասնեօթն թուման և զհինգ հազար դիանն՝ զոր յանուն վանօրէիցն ի մէնջ առնուին (որպէս ի վերդ ասացաք), զնոյնն թարց յաւելման առին ի մէնջ։ Արդ այս կանոն տևեաց մինչև ի վերջանալն Նատր-Շահին, և ի բռնանալն Աղւան Ազատ խանին, որ յամէ յամ տասն և մէկ թուման եօթն հազար ինն հարիւր յիսուն դիան վասն աւելորդացն մերոց առնուին ի յԱթոռոյս, և տասն և եօթն թուման հինգ հազար դիան վասն վանօրէից առնուին՝ որպէս ասացաք։

Այս յետ անցման Նատր-շահին, մեծաց փորձութեանց և աւերածութեանց պատահեցաւ երկիրս այս, և շատ աւերումն եղև երկրիս՝ գիւղօրէից, վանօրէից, և սրբոյ Աթոռոյս, և նուազումն մ.քից և այլոց իրաց։ Եւ ի հազար երկու հարիւր երկու թուոջն մերում, և ի ՌՃԿԷ տաճկաց թուին, ի յիշխանութեան Ազատ խանին, և ի Հայրապետութեան Մինասայ Ակնեցւոյն, դարձեալ միրվէյիզ.ք եղանեն յերկիրս ի գրել զհասն և զհարկսն երկրիս, Միրզայ-ռապի կոչեցեալ ոմն և այլ.ք ընդ նմա։ Որք և գան յԱթոռս և զսորինն ի գրել, որպէս ի վերն ասացաւ, նոյն վաթսուն և վեց խալուար սերմանելիսն անպակաս. իսկ զայլ մուլքսն՝ զորս չէն գրեալ գրեն՝ են այսքիկ. երկու այգի ի մեր գեօղս՝ հինգ թուման. (զի Մանկասարենց այգին աւեր էր). երեք այգի չէն յՕշական՝ երկու թուման. երեք ջրաղաց աստ և մէկ ի Զօրագեղ՝ մէկ թուման վեց հարիւր եօթանասուն և հինգ դիան. և մէկ դինկ և մէկ քրքրայ աստ և մէկ դինկ և մէկ քրքրայ ի Քալարումն՝ մէկ թուման երեք հազար ութն հարիւր դիան. մէկ ձիթահանք՝ երեք հազար չորս հարիւր յիսուն դիան. համամն՝ վեց հազար դիան. քարւանսարայի քրէհի երկու տասանորդն՝ այս ինքն հնգորդն երեսուն դուքանի՝ ինն հազար դիան, ի նոսա նստող դուքեանդարլէց 1) մալ-ջհալին՝ չորս թուման ութ հազար երեք հարիւր դիան. կով, էշ, և մատակ ձի, ընդ ամենն կովն և էշն՝ երկու հարիւր դիանով, և մատակ ձին հինգ հարիւր դիանով, մէկ թուման ԱՌԴՃ դիան. ԴՃԺ ոչխար՝ մէկն վաթսուն դիանով՝ մէկ թուման ԸՌՌ դիան. վերագրեցելոց ջամն է ընդ ամենն տասն և ինն թուման եօթն հազար երկու հարիւր քսան և հինգ դիան։ Ի սմանէ մեր մաղափութիւն՝ որ է տասն թուման ԷՌ դիան հանին, մնաց ինն թուման երկու հարիւր քսան և հինգ դիան, զոր առնուն ի սրբոյ Աթոռոյս, և տան զհուճէթ մի երիւք կնքով ի ՌՃԿԷ թուին տաճկաց՝ զոր գտցես ցուցակաւն։ Նոյնպէս և զտասն և եօթն թուման և հինգ հազար դիան՝ որ վասն վանօրէիցն՝ (թէպէտ վանօրայ.քն ամայացեալ.ք էին)՝ առնուն անպակաս յԱթոռոյս։

Ապա զկնի Մինաս Կաթուղիկոսին մինչ նստի Պօլսեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն, յերկրոջս հուչակեցեալ տաճիկ ոմն Ալի-ղուլի անուն, որ վէքիլ էր արքունական հարկաց վերայ, եկեալ յԱթոռս, և սա գրէ զմուլքսն Աթոռոյս։ Որ գրէ զփոքրիկ հուճէթ մի, գրելով թէ՝ Էջմիածնի ունեցելոց միքից հարկն է տասն և ինն թուման հինգ հազար չորս հարիւր քսան և հինգ դիան, և զմաղափութիւն՝ որ է տասն թուման և եօթըն հազար հանաք. իսկ զաւելորդն որ էր ութ թուման ԸՌԴՃԻԵ

1) Խանութպան։



դիան առաք։ Զայս հուճէթս (որ շարթնամայեա ասի.) հինգ գործակալք կնքեալ տան մեզ։ Զոր գտցես ցուցակաւն։

Բայց զկնի Աղէքսանդր Կաթուղիկոսին մինչ կոչեցաւ Սահակ վարդապետն Կեղեցի ի Հայրապետութիւն, ի ՌՄԵ թուոջն մերում, և ոչ եկն յԱթոռ՝ որպէս ասացաք յայլուր, նստի և յԵրևան Հիւսէին-ալի խանըն, զոր ի վերդ յիշեցաք, յանտէրութենէ Աթոռոյս և երկրիս, համարձակեալ խանին և այլոց գործակալաց՝ զպէսպէս խնդիրս առնեն, և զնորապէս խարջս յաւելացուցանեն՝ և առնուն յԱթոռոյս։ Զի զաւելորդն մաղափութեան մերոյ՝ շինեն տասն և մէկ թուման եօթն հազար հինգ հարիւր դիան, զոր մինչև ցայսօր առնուն անպակաս. և տան զհիւճէթ, այսինքն, զղա—ն կամ շարթնամայ, զորս տեսցես ըստ ցուցակայն և ըստ թուացըն։ Նոյնպէս և զվանօրէից տասն և եօթն թուման և զհինգ հազար դիանն վերստին հաստատեն յառնուլ յԱթոռոյս, զոր Աղէքսանդր Կաթուղիկոսն Պօլսեցի արզ արարեալ Ազատ խանին զվանօրէից ամայութենէ, բարձեալ էր ռաղամօք. նմանապէս և ի Հասան-ալի խանէն և ի յերկրիս մեծամեծաց զրազմանկնիք թուղթս էր առեալ, զի մի՛ ևս խնդրեսցեն ըզխարջսն վանօրէից յԱթոռոյս, որպէս ի վերդ ասացաք։ Եւ ի վերայ եկեղեցեաց երկրիս զհարկս կանոնեն, զոր մինչև ցայսօր առնուն ընդամենն քսան և չորս թուման յեկեղեցեաց յամի յամի։ Բայց ի յաջորդելն մեր զԱթոռս ի ՌՄԺԲ թուոջն մերում և ի տաճկաց ՌՃՀԷ, ի Քարիմ խանէն միրվէյիզ, այս ինքն դիւանագիր եկն յերկիրս, որ և ի սուրբ Աթոռս ևս եկն և զսորինն ի գիր արկանել, որոյ անունն էր Փաղըլըլա, որոյ և ի ծանուցանելն մեր զմաղափութենէ սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի ռաղամօք թագաւորաց, և սա զփոքրիկ շարթնամայ կամ զհուճէթ մի տայ մեզ թէ՝ և ես վերահասու եղէ, որ Էջմիածնի մաղափութիւն է տասն և երեք թուման և վեց հազար երեք հարիւր դիան նաղտն, որ է այգեաց, ջրաղացից, ձիթահանքից, համամի, ոչխարաց, դուքեանից, և այլոց այսպիսեաց խարճն, և եօթանասուն և հինգ խալուար և քսան և հինգ լիտր ջինսն, որք են սերմանելիքն։ Որ եթէ ապագայ եկեալ դրողքն ևս ըստ այսմ գրեսցեն, մեծ օգտութիւն լինի սրբոյ Աթոռոյս։ Քանզի զերկու թուման ինն հազար և ԳՃ դիան ի նաղտն յաւելացուցաք, և ինն խալուար և քսան և հինգ լիտր ի ջինսն, զմաղափութիւն Աթոռոյս։ Զայս հուճէթս գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Դարձեալ ի ՌՄԺԴ թուոջն մերում՝ և ի ՌՃՁԸ թուին տաճկաց, երկրիս վէքիլ և դիւանագիրն (որ էր պիղծ Միրզա-Շէֆին) խնդրեաց ի մէնջ ծածկաբար զԱՃ թուման, պատճառաւ ի Հաճ գնալոյն իւրոյ։ Եւ ի չտալն մեր, սկսաւ մախալ և չարիս խորհիլ զմէնջ ասելով թէ, ուստի՞ է

այդ ձեր ազատութիւնն, և որո՞վ ժամանակաւ և ուղամբ: Արդ եկեալ կամ զազատութիւն Ձեր հաստատեցէք, կամ զայսքան ամեայ հարկն տո՛ւք: Յետ բազմաց վիճմանց և խօսակցութեանց, ապա զրաղամ ինչ ոչ պատշաճ տեսաք հանել ի յԱթոռոյս, (զի չարք և նենգաւորք Պարսիկք են, և անհաւատք:) այլ զսուրհէթն Շահ-սուլթան Սուլէյմանին, որ ի ՌՁԳ թուոջն տաճկաց է գրեցեալ, և զսուրհէթն Հասան-ալի խանի տուեալ թղթոյն (զոր ինքն և բոլոր երկրիս մեծամեծ տաճիկքն կընքեալ և վկայեալ են ազատութեան սրբոյ Աթոռոյս, որ ի ՌՃԿԸ տաճկաց թուին է գրեցեալ զորոց ճառեցաք ի վերոյ) առեալ, զորս մի ևս մեք գրեցաք Հուսէյին-ալի խանին, թէ՝ գիտո՞ւք թէ մեք նոր եկեալ ղուրէբ 1) և Աթոռս որպիսութեանցն անտեղեակ՝ ոչինչ գիտեմք, դու ո՞չ գիտես՝ որ ի բնէ անտի ազատ է այս Աթոռս Թագաւորաց ուղամբք, այս վասն է՞ր է, որ ի ժամանակս քո և իմ նորապէս քննութիւն և թէֆթիշ լինի վասն ազատութեան սորա, և կամ խալղքն զի՞նչ ասեն քեզ և ինձ: Մեր ազատութեան աւելորդն վեց և եօթն թուման է լեալ յառաջ, դուք այժմ ի տասն և մէկ թուման և եօթն հազար դիան էք հասուցեալ մեք տամք և ոչ ընդդիմանամք, տասն և եօթն թուման ևս ի զուր եդեալ ի վերայ մեր առնուք՝ խարաջ և ջաղիա անուամբ, զոր մինչև ի Ձեր ժամանակս ոչ իմք տուեալ երբէք: Մեք կամէաք զայն տասն և եօթն թումանն արզ առնել քեզ, և բառնալ, այժմ միրզա Շէֆին այնու ոչ բաւականանայ, կամի զԱթոռս յամենայնի հարկատու առնել, որ չէ եղեալ և ո՛չ ևս լինելոց է: Ահա զմիմայն ուղամբ զսուրհէթ մի, և զսուրհէթն քո եղբօր տուեալ թղթոյն առաքեցաք առ քեզ, զի տեսցես և զիրաւունս առաքեսցես, և զայս տասն և եօթ թումանն ևս բարձցես յԱթոռոյս: Վասն որոյ և խանն ի գլուխ արզային մերոյ կնքեալ՝ հրաման գրէ թէ՝ որպէս առաջին Թագաւորքն և իմ եղբայրս գիտելով զազատութիւն Էջմիածնի զայսպիսի գիր են տուեալ, և ես հրամայեցի՝ զի ազատ լիցի, և ո՛չ ոք ունի հրաման ի յԱթոռոյն զդինար մի պահանջել: Եւ մեք այսու ոչ բաւականացեալ՝ այլ զյատուկ թալղա մի ևս խնդրեալ առաք վասն տասն և եօթն թումանին: Յորում գրէ թէ՝ յաւուրս Նատր-շահին զտասն և եօթն թումանն՝ զոր ի զուր և անիրաւապէս ի վերայ Էջմիածնի եդեալ առնուին մինչև ցայսօր, մեք բարձաք զայն՝ գիտելով զազատութիւն Էջմիածնի: Այսուհետև չունի ոք հրաման վերստին յիշել և առնուլ: Գիտ· զայս երկու թուղթս յերեսուն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի մեր ՌՄԺԴ, և ի տաճկաց ՌՃՀԸ թուոջն: Յորմէ հետէ մինչև ցայսօր, որ

1) Օտարական:



եմք ի ՌՄԺԶ թուոջն մերում, ոչ եմք տուեալ զայն տասն և եօթն թումանն, զոր ջաղիա անուամբ առնուին յԱթոռոյս: Արդ ի ներկայումս՝ յորում գրեմք զայս յիշատակագիրս, այսպէս է կացութիւնն և տուրքն սրբոյ Աթոռոյս: Զի տարին միանգամ տամք զտասն և մէկ թուման զեօթն հազար և զհինգ հարիւր դիանն, որ է աւելորդն ազատութեան Աթոռոյս: Եւ զայլ տուրքս ոչ ունիմք հարկ անուամբ, ոչ նաղտ և ոչ ջինս: Իսկ ընծայ ի պատահման ժամանակին և ի Նաւրուզին՝ (որ է տարեմուտ և Բայրամ նոցա ըստ արժանւոյն՝ խանին և այլոց մեծամեծաց և գրան մարդկանց տամք ի նաղտէ և յայլոց իրաց ընդ ամենն ի Նաւրուզին թէ խանին և թէ այլոց նաղտ և ջինս մինչև ի քսան թումանն հասանի, որոց զէֆթէրքն ևս գոն: Այս է մեր մեծ և հարկաւոր տալոյ օրն, յորում գնամք ի տեսութիւն և ի շնորհաւորել զԲայրամն նոցա: (թէպէտ ի ժամանակս թագաւորաց ոչ Կաթուղիկոսն գնայր և ո՛չ զայսքան տայր, այլ ի ձեռն միոյ սևագլխոյ սակաւ ինչ քաղցրեղէնօք և զառամբ շնորհաւորէր: բայց և խանն տայ մեզ զմէկ [illegible] [illegible] 1) և զմէկ զարբաֆ կապայ, որ միշտն է, և երբեմն ևս զձի ռախտ 2), զմեր կիրարկանելի շալ պարանոցի և զարծաթեայ զաւազան ևս, և եօթն կարած մահուտ չուխայ ևս եօթն եպիսկոպոսաց մերոց տայ): Իսկ յայս ժամանակս թէ խանն և թէ այլքն՝ երբեմն մուրհակաւ զպարտս խնդրեն, երբեմն ողոքանօք և աղաչանօք խնդրեն թէ զնաղտ և զայլ իրս, մեք ևս երբեմն տամք ըստ կիսոյն, մերթ ըստ բոլորին, և երբեմն իսպառ բացասեմք, ի ժամանակն, ի խնդիրն, և ի խնդրողն նկատելով միանգամայն որպէս նաւավար ըստ հողմոյն վարեմք ըստ բերմանց միջոցին: Բայց և զամենահարստահարութիւնս ևս կամէին կանոնել ըստ խորամանկ բարուցն իւրեանց, զորս և արարեալ էին յամս քանիս, մեք խափանեցաք Աստուծով: Մին այս, զի ի Հոկտեմբեր ամսոյն խանն զամենայն մեծամեծսն առեալ գայր յԱթոռս (որոյ անունն Ուչքիլիսէ էշնազի էին եդեալ), յետ բազմաց խարճից և նեղութեանց, մեծ ընծայ մի խանն առնոյր, և դէֆթէր մի ևս գրեալ առաքէր թէ՝ այս ինչ աղայի այս ինչ տո՛ւր և այս ինչ աղայի այս, ամենեցունց ըստ արժանւոյն, որոց մինչև ի յիսուն թումանն հասանէր գինն տուեցելոցն: Միւս ևս, ի Բայրամին խանն գայր ի տեսութիւն մեզ, և մէկ ամանով ոսկի խնդրէր ի դնել առաջի իւր, և ապա առեալ բաժանէր բազմականացն: որ ընդամենն լինէր յիսուն կամ վաթսուն ոսկի: զորս թէպէտ յառաջնումն ամին մերոյ և մեզ տալ ետուն, սակայն շնորհօքն Աստուծոյ ի գալ ամին ոչ ետու. որք խափանեցան իսպառ այնուհետև: Գրեմք ի

1) Զառնաւուխտ - կերպաս :— 2) Ռախտ. միազարդ, ասպազէն:

զգուշութիւն առաջադրելի։ Այլ և ի Ներկայումս որքա՛ն սերմանեմք, և զօրքա՛ն մուրքս և զանատանա ունիցիմք, ոչ գոյ քննութիւն և ոչ ի Հաշիւ արկանել։ Զի՛նչ և բերեմք ի յարտաքուստ, և տանիմք ի Ներքուստ, ոչ գոյ մաքս և ոչ այլ ինչ խարճ։ Այսպէս է կացութիւն մեր և Աթոռոյս ի Ներկայումս, յապայն Աստուած յանձին։ Այսքիկ զորս գրեցաք, թէպէտ Հասարակին ոչ այնքան ախորժելի, սակայն զնի մեր յաջորդաց Կաթուղիկոս եղբարցն կարի փափագելի դրկելի լինելոց է։ Ցորոց յուսամ յիշել երանելապէս միով Աղօթիւք ի յառելն ի յայս փորձարան։

## ԳԼ. ԺԵ.

Յորում ցուցանէն յաղագս յատակ և յանուանս տեղեաց և հողոց վարելեաց, որոց տնօրինէ սրբոյ Աթոռոյս, Նէ՛ մօր, և ո՛րպէս, և ե՛րբ, և ո՞ր ժամու՞ տնօրինեցանի։

Անդք և վարելի Հողք՝ զորս ունի Սուրբ Աթոռս ի կից գեօղս մեր, են այսոքիկ, յորոց զոմանս ի բնէ անտի ունի և զոմանս յետոյ ստացեալ։

Ցարևելեան կողմն սրբոյ Աթոռոյս և կից կալին մերոյ մեծ Եօնջալուղ կոչեցեալ տեղին իւրովք սահմանօքն՝ որ է Հարիւր քսան սօմարի տեղ։ Ի վերկոյս սոյնոյ Եօնջալուղիս՝ ուր ջրաղաց մի կայ, (զոր Ջանի բէկին ասեն), սոյնոյ ջրաղացիս մերձ՝ դէպ ի յարևելս կոյս, Քեօնդալան կոչեցեալ Հողն՝ որ է վաթսուն սօմարի տեղ։ Ի Ներքոյ սոյնոյ ջրաղացիս և կից մեր Եօնջալուղին արմոյն արևելեան կողմն՝ յիսուն սօմարի տեղ։ Սոյնոյ տեղոյս արևելակողմն Հողն՝ (որոյ երկուց մէջն մէկ առու գոյ) յիսուն և Հինգ սօմարի տեղ։ և սոյնոյ տեղւոյ Ներքին ծայրի կողմն մէկ ՔեօտալաՀան Հող ևս գոյ, որ է տասն և Հինգ սօմարի տեղ։ Մեր Մանկասարենց այգւոյ տակի ի Հարաւակոյս Հողն, որ է եօթանասուն սօմարի տեղ։ Դարձեալ աստի ի վայր յարևմտակոյս Հակեալ, ուր զումբէթ գոյ, խարտեալ քարակերտ, յայն զումբէթէն մինչև ի փոքր բլուրներն (որ դէպ ի յԱթոռս Հային,) և այն բլուրներիցն մինչև ի ճանապարՀն որ ի Քալարու կողմն երթայ, որք են երեսուն սօմար տեղ։ Աստի դէպ ի Հարաւակոյս ի վայր քան զճանապարՀն Քալարու տեղիք գոն, որք Չօրաքեաթ ասին, մինչև ի Բ փոքր բլուրներն (որք Խօշաթափայ ասին, որք են սահմանք ի մէջ մեր գիւղիս և Չօրլու գեղջն), որք են մինչև երկու Հարիւր յիսուն սօմարի տեղ, որք ի մէջ ռազամիցն ևս Չօրաքեաթ գրին։ Դարձեալ աստի փոքր ինչ ի վայր ի Հարաւակոյսն՝ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն զծովակ մի է շինեալ և պարսպով պատեալ, զի ջուրք Քանքանիս մերոյ (զոր և Նոյն Յակոբ Կաթուղիկոսն է Հանեալ) և այլ



աստի և անտի գնացեալ ի յայն ծովակն լնանին, և անտի զառ ի վայր արտորայսն ջրեն։ Այս ծովակս յառաջ զարդարուն է լեալ ծառօք և այլովք վայելչութեամբք, զորմէ յիշում՝ տեղւոյն ասասցա՛ք։ Այժմ ցամաք է և աւեր, ի տեղիս տեղիս ունելով զորմունս, և Ներքի ջեօլ ասի։ Այս ծովակիս մէջն՝ և կտոր մի ևս մօտն՝ ի Հարաւակոյս, կտոր մի ևս ի գլուխն յարևմտեան կողմն, և մեծ Հող մի ևս ի յառն (որ Հին-Եօնջալուղ ասի) յարևելակողմն, որք են Հարիւր ութսուն սօմարի տեղ։ Որ ի մէջ ռազամիցն քսան խալուարի տեղ գրին։ Դարձեալ աստի դէպ ի յարևմտակողմն՝ Ղօշերի-յուս կոչեցեալ Հող, որ է ութսուն սօմարի տեղ։ Դարձեալ աստի դէպի ի Հարաւակոյսն՝ Հայրենիք-փոս կոչեցեալ տեղին, և մեր աւեր գնկի լրի մօտ կտոր Հողն, և Նոյն գնկի տակի մեծ Հողն, և այս Հողիս դէպ ի գետակողմն Հողն, որոց մէջն առու մի գոյ, ճանապարՀն Խաթունարխին մինչև ի Քիւլթափայ կոչեցեալ բլուրն, և ի բլրէն մինչև ի յԱղսախլու կոչեցեալ տեղիսն, և յԱղսախլու կոչեցեալ տեղեացն մինչև ի վերոյիշեցեալ Ղօշերի-յուս կոչեցեալ տեղեաց բլուրներն, և միանգամայն Խաթունարխ կոչեցեալ ճանապարՀի երկու կողմունքն ևս սրբոյ Աթոռոյս են, որք են երեք Հարիւր յիսուն սօմարի տեղ, որք ի մէջ ռազամիցն միանգամայն մինչև ցՔիւլթափէն՝ Հերանանք գրին։ Դարձեալ ի յայս կուսէ դէպ յարևմուտս Հակեալ, Հանդէպ Ալի-բէկլու գեղջն՝ Թեղուտներ կոչեցեալ տեղն, որ ի մէջ ռազամիցն Բաղրեան-եազի գրի, որ է իննսուն սօմարի տեղ։ Դարձեալ անտի դէպի Հիւսիսակոյսն փշատի-ծառ կոչեցեալ տեղին՝ որ ի մէջ ռազամիցն Հաճիլարի տեղ ասի, որ է Հարիւր քսան սօմարէն տեղ։ Սատախլու կոչեցեալ տեղն, Հարիւր սօմարէն տեղ։ Աստի դէպի վեր Հիւսիսակոյս ի տեղւոջն Իլանլու կոչեցեալ, յորում Հող մի, որ է . . . . . սօմարի տեղ։ Գինօսենց ջրաղացի մերձ Հողն դէպ ի յարևմուտն, յորոյ գլուխն բաժանի Շահ-առխի կոչեցեալ մեծ առուն, որոյ կէսն ի Խանդակ առուն երթայ, և կէսն ի Սատախլու, որ է յիսուն սօմարի տեղ, որ ի մէջ ռազամիցն Շահ-առխի գրի։ Մեր միջի ջրաղացին տակն, և մօտն դէպ ի յարևմուտ՝ երկու առուամէջն, դէպի Հաճիլար գեօղն, ինսուն սօմարի տեղ։ Մեր վերի ջրաղացն (որ Իւզբաշոնց ջրաղաց կոչի), Նորա տակն և գլխոյն Քեօնդալանն, Հարիւր տասն սօմարէն տեղ։ Դարձեալ գիւղիս մերոյ յայգւոց առուէն մինչև ի վերին գեօղն մեր, իգեօլէն դէպ ի յարևմուտ ծայր Մօլլադուրսունի սահմանն, և միւս ծայրն մինչև ի Քարաքիլթ կոչեցեալ տեղին՝ եօթանասուն սօմարի տեղ. որք ի մէջ ռազամիցն միանգամայն Քարաքիլթ գրին։ Եւ Նոյնոյ Քարաքիլթի տակի մեծ Հողն, և գլխոյն Քեօնդալանն, Հարիւր յիսուն սօմարի տեղ։ Աստի դէպ ի Հարաւակողմն Հակեալ Ճըտա կոչեցեալ տեղիս Հարիւր և եօթանասուն

սոմարի տեղ ։ Դարձեալ Ղողակաթի վանից հիւսիսակողմն Խանլը այգի կոչեցեալ տեղին՝ հարիւր քառասուն սոմարի տեղ ։ Դարձեալ ի սուրբ Հռիփսիմէի վանիցն դէպ ի սուրբ Աթոռս մինչև ի վայրն Ղողակաթին՝ Ղարիբանոց գերեզման կոչեցեալ տեղին, և անտի ի հարաւակողմն հակեալ մինչև ի յԵրևանու ճանապարհն, որ ի մէջ ռաղամիցն Հռիփսիմէի տեղ գրի, իննսուն սոմարի տեղ ։ Դարձեալ սուրբ Հռիփսիմէի ի հարաւակողմն, յԵրևանու հին ճանապարհէն ի վայր մինչև ի Մանկասարենց այգին մեր, այն միջոցն, որք Մխիթարենց այգիք կոչին, են . . . . . . . սոմարի տեղ ։

Արդ այսոքիկ անդք և հողք որք գրեցան՝ են ի յանդաստանի գեղջս մերոյ, յորոց շատքն ի բնէ անտի սեփհական սրբոյ Աթոռոյս են լեալք։ Որոց աղագաւ և զերկուս ռաղամս ևս ունի սուրբ Աթոռս, մին ի մեծէ և յառաջնոյ Շահ-աբասէն, որ գրի ի տաճկաց ՌԻԲ թուին, ի ժամանակս Մելքիսէթ Կաթուղիկոսին։ Եւ միւսն յերկրորդ Շահ-աբասէն ի տաճկաց ՌԾԴ թուին, ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին։ Որոց թէպէտ մին քան զմիւսն ԼԲ ամաւ յետոյ է, սակայն մի և նոյն են գրեցեալքն ի մէջ երկուցն, և միապէս։ Քանզի յերկուսն ևս նախապէս Շխիսլամք երկրիս՝ գրեն յանուանէ և յատուկ յատուկ զհողս, և զանդս վերոյիշեցեալս. և կնքեն և վկայեն թէ այսոքիկ անդքս ստուգիւ Էջմիածնի են լեալք ի բնէ անտի. և ապա թագաւորքն ի վերոյ այսոցիկ թղթոցս՝ մին ի նոյն երեսն, և միւսն ի միւս երեսն՝ ռաղամ գրեն և հրամայեն թէ մեք ևս հրամայեցաք, զի հողքդ այդոքիկ Էջմիածնի Աթոռոյն լիցին միշտ, և ոչ ոք ունի իշխանութիւն ձեռնամխել իդոսա։ Զորս գտցես ցուցակզքն, և զառաջինն . . . նշան համարով, և զերկրորդն . . . նշան համարով։ Իսկ ի տիրելն Օսմանցւոց երկրիս մերոյ, նոյլին երկու թագաւորքն և փաշայքն տան գիր սրբոյ Աթոռոյս գրելով զերկուս գութանս, զհազար հինգ հարիւր սոմար սերմն, և զ.քսան և ինն արտ սերմանելիս, և զերիս Եօնջալուղս ընդ այլոց մ.քից՝ մաղաֆ, որպէս ի վերդ ասացաք։

Արդ վերոյ գրեցեալ տեղիքդ՝ զորս յիշեցաք յանուանէ և յատուկ յատուկ, ի դոցանէ ի մէջ վերոյիշեցեալ ռաղամից գրեցեալքն այսոքիկ են, որք ի բնէ սրբոյ Աթոռոյս են լեալք. զորս ի վերդ ևս յիշեցաք։ Նախապէս Ղորաքեաթ կոչեցեալ տեղիքն միանգամայն, որք են ի ներքոյ Քալարայու ճանապարհին, և ի մէջ մեր գեօղիս և Ղոլըու կոչեցեալ գեղն, որք են երկու հարիւր յիսուն սոմարի տեղ ։ Երկրորդ Յակոբ Կաթուղիկոսի ծովակն ի վայր Ղորաքեաթի տեղւոյն, որոյ մէջն, հարաւակողմն, արևմտակողմն, և արևելակողմն ծովակին, որք միանգամայն քսան խալվար սերման տեղ գրին։ Երրորդ աստի դէպ ի հարաւակողմն Հերանանկ կոչեցեալ տեղիքն, որք են մին-



չև ց՚Քիւլթափայ կոչեցեալ բլուրն, և Խաթունարխի ճանապարհի երկու կողմունքն, և այլ շրջակայքն, որք ի վերդ յատկացեալք յիշեցան, որք են երեք հարիւր յիսուն սոմար սերման տեղիք։ Չորրորդ աստի դէպ ի յարևմուտս հակեալ հանդէպ Ալիպէկլու գեղջն, Թեղուտներ կոչեցեալ տեղիքն, որք Բայրկեան եօլի գրին, որք են իննսուն սոմարի տեղիք։ Հինգերրորդ Սատախլու կոչեցեալ տեղին, որ է հարիւր սոմարի տեղ ։ Վեցերրորդ աստի դէպ ի հիւսիսակողմն՝ Իլանլու կոչեցեալ տեղին, որ է . . . սոմարի տեղ ։ Եօթներրորդ Գինոսենց ջրաղացի մերձ հողն, որ Շահ-արխի գրի, որ է յիսուն սոմարի տեղ ։ Ութներրորդ Փշատի ծառ կոչեցեալ տեղին, որ Հաճիլարի տեղ գրի, որ է հարիւր քսան սոմարի տեղ ։ Իններրորդ՝ գեղիս մերոյ այգւոց առուէն մինչև ի վերին ջեօլն մեր, անտի ի Մօլլադուրսունի սահմանն, միւս ծայրն մինչև ի Քարակիլթ կոչեցեալ տեղին, որք միանգամայն Քարակիլթ գրին հանդերձ տակի մեծ հողովն, և գլխոյ Քեօնդալանովն. որք են երկու հարիւր քսան սոմար սերման տեղիք։ Տասներրորդ՝ ի սուրբ Հռիփսիմէէն ի վայր ի Ղողակաթն, և Ղարիպանոց գերեզման կոչեցեալ տեղին, որք Հռիփսիմէի տեղ գրին, իննսուն սոմարի տեղ ։ Արդ վերոյիշեցեալ տեղիքդ՝ ի բնէ անտի և թագաւորաց հրամանագրով, սեփհական սրբոյ Աթոռոյս են սերմանելի տեղիք, և ոչ այլ ումեք։ Իսկ մնացեալ տեղիքն, որք ի վերդ գրեցան, և ի մէջ ռաղամիցդ ոչ գոն, այսպէս են սրբոյ Աթոռոյս։ Մեր կալի մօտ Եօնջալուղն, և սորին արևելակողման և հարաւակողման տեղիքն (որք ի վերդ գրեցան)։

Մեր Մանկասարենց այգւոյ հարաւակողմն հողն։

Աւեր գումբէթի կողմունքն, մինչև ի Քեալարայու ճանապարհն։

Ղօչերի-յուս կոչեցեալ տեղիքն։

Մեր միջի ջրաղացի կողմունքն։

Մեր վերի Իւզբաշոնց կոչեցեալ ջրաղացի վերն և վայրն։

Ճլուտ կոչեցեալ տեղին։

Ղողակաթի մօտ Խանլը-այգի կոչեցեալ տեղին։ Քանզի մեծն Շահ-Աբաս յորժամ էառ զերկիրս մեր ի յՕսմանցւոց և տիրեաց, և զԱմիրկիւնէ խանն տէր կարգեաց երկրիս մերոյ ի ՌԾԲ թուին մերում, և ի Տաճկաց ՌԺԲ թուին՝ որպէս ասացաք ի վերդ, այս Ամիրկիւնէ խանն պարսպեաց զայս տեղիս և տնկեաց ծառս և որթս, և արար զայգի ի զբօսարան ինքեան, զոր և վայելեաց ինքն և որդին իւր Թահմազ-ղուլի-խանն։ Զկնի սորա՝ Օսմանցիքն որք առին զերկիրս մեր յաւուրս Սուլթան Մուրատին և կերին յամս յերիս։ Քանզի մեծն Շահ-աբաս էառ նախ զերկիրս մեր յՕսմանցւոց ի ՌԾԲ թուին մերում, և Օսմանցիքն կրկին առին ի Պարսից ի ՌՁԳ թուին մերոյ, որք ևս Թահմազ-ղուլի-խանն ա-

ոսքեցին ի յՍտամպօլ, որ և մնաց խոկ իծանապարհին Իզնիմիտու ի յետ դառնալն ի դաւաճանութենէ Ռուստամ խանին ի յՕսմանցւոց։ Ապա Շահ-Սեֆին եկն ի ՌՉԺ թուին, և վերստին էառ զերկիրս յՕսմանցւոց, և կարգեաց յԵրևան խան զՔեալպալի կոչեցեալն։ Յետ սորա եղև խան Քեօթուք-Ահմատն։ Յետ սորա եղև խան Խոսրովն։ Յետ սորա Մահմատ խանն։ Զկնի սորա Նաճաֆ կոչեցեալն։ Եւ զկնի սորա Ապասն կոչեցեալ, որ էր այր բարեբարոյ և քրիստոնէասէր, և կարի բարեկամ Յակոբ Կաթուղիկոսին. և էր որդի Ամիրկունէ խանին վերոյ յիշեցելոյ։ Արդ ի յԱմիրկունէ խանէն մինչև այս Ապաս խանս՝ այգիս այս վերոյիշեցեալ՝ Խանլըղ էր և արքունիս, և եկօղ խանքն ունէին և վայելէին. յորմէ շատ վնաս և նեղութիւն ևս հասանէր Աթոռոյս և կողմանցս վասն երթևեկութեանց նոցին, և մանաւանդ կողմնացւոյս տայլին տանել և մշակել։ Ապա այս Ապաս խանս յառաւել սիրոյն՝ զոր ունէր առ Յակոբ Կաթուղիկոսն՝ բաշխեաց զայգիս զայս Յակոբ Կաթուղիկոսին և Աթոռոյս ձրիապէս. և մնաց ժամանակ ինչ Աթոռոյս։ Ապա յետ այս Ապաս խանիս եկն Լալլի Սէֆի խանն յԵրևան. որ շատ չարութիւն արար ընդ Յակոբ Կաթուղիկոսին և ընդ Աթոռոյս։ Քանզի երկիցս անգամ խնդրեաց ի Յակոբ Կաթուղիկոսէն զծովակն, զոր ի վայրի կողմն Աթոռոյս յարևելակողմն շինեալ էր Յակոբ Կաթուղիկոսն. էր շինեալ և զարդարեալ ծառօք և պէսպէս վայելչութեամբք, զոր ի վերդ յիշեցաք։ Եւ ի յոչ տալն Յակոբ Կաթուղիկոսին, ոխակալեցաւ ընդ նմա այս խանս և բազում չարիս գործեաց՝ որպէս պատմէ Զաքարիա պատմիչն։ Վերջապէս ինքն պատժեցաւ չարաչար ի շահէն, և փոխանակ նորին եկն միւս Սեֆի խանն յԵրևան, որ է ազգաւ Վրացի։ Այս Սէֆի խանս և իւր կինն հանեին զջուրն ի Մամարիս և Խաթունարխ կոչեցելոցն ի Սև ջրոյն և խէյր-ի 1) արարին, զորմէ ի տեղւոջն ասասցուք։ Զկնի այս Սէֆի խանիս եկն յԵրևան Զալ խանն, որ էր զաւակ Քրիստոնէի և բարեբարոյ։ Յետ սորա Մուրթուզա-ղուլի խանն։ Յետ նորա Մահմատ խանն։ Յետ նորա Փարղալի խանն, որ էր ի թոռանց Ամիրկունէ խանին, որ էր այր չար, ագահ, երկրաւեր, յաւուրս Շահ Հիւսէյինին, և մերոյ Նահապետ Կաթուղիկոսին։ Արդ ի յԱպաս խանէն՝ որ զայս այգիս բաշխեաց Աթոռոյս՝ մինչև յայս Փարղալի խանս՝ ամենայն խանք երբեմն արծարծէին վասն այգւոյս թէ Խանլըղ այգի է, և Կաթուղիկոսն գաւթեալ է, վասն որոյ և զբանս պահանջէին յԱթոռոյս և կամ զայգին յետ առնուլ կամէին։ Ապա յաւուրս Եղիազար և Նահապետ Կաթուղիկոսացն մերոց զբան ինչ ֆէթվայ 2) կալեալ ի վերայ Աթո-

1) Բարի գործք, շինուածք բարեպաշտական յօգուտ հասարակաց. — 2) Վճիռ



ոյս, զի զայգին Աթոռս ուտիցէ, և ամ ըստ ամէ Խանլըղ այսքան դրամ տացէ։ Եւ Կաթուղիկոսքն մեր ևս ակամայ յանձն առին այնու միօք՝ զի ոչք տաճկացն հատցին ի սմանէ։ Ապա յետոյ Նահապետ Կաթուղիկոսն տեսեալ թէ՝ և այսու ևս լինի վնաս, զի զկապեալ իծարայն առնուին, և յերթևեկութեանց ոչ պակասէին, վասն որոյ գրէ վերոյիշեցեալ Փարղալի խանին թէ՝ ես ոչ ևս կարեմ պահել զայգիս զայս վասն սղութեան ջրոյ և նեղութեան երկրիս, դու գնեսն զ.քո այգին, ում կամիս տուր։ Եւ նոյն արզայի վերայ հրաման գրէ Փարղալի խանն ի վերայ մէջլիզին իւրոյ թէ՝ հան ի դաւթարէդ զանուն այգւոյդ մերոյ ի յԱթոռոյն։ Եւ որպէս հրամայեցեմք քեզ՝ յետոյ այնպէս արասցես։ Գտցես զայս գիրս ցուցակաւն, և (      ) համար նշանաւն։ Եւ Կաթուղիկոսն մինչ այսու հնարիւք ձգէ յինքենէ զայգիս զայս և զերծանի, ապա խանն կոչեցեալ ըզՎարխու նահիային զմէլիք Ներսէսն զգլխաւոր իշխանսն և զայլ տեարսն խօսից, և նոցա վերայ ձգէ ասելով, դուք երկրիս տուք զիծարայն այգւոյն մերոյ, և մշակեալ չէն պահեցէք։ Եւ սոքա ևս թէպէտ ակամայ կամօք յանձն առնուն տալ զիծարայն ամի ամի, բայց այսու պայմանաւ թէ դուք միայն զձեր այգւոյ իծարայն առէք ի մէնջ, մեք գիտեմք զայգին։ Այսու հնարիւք առնուն զայգին, և գիտելով անհաս թողուն և ոչ տածեն, և վերջապէս յօրէ յօր քանդեալ զորթսն և զծառսն՝ զսերմանելի արտ շինեն, և զսերմն ևս ոչ ումեք թողուն սերմանել։ Բայց զտակարկեալ իծարայն տան յամն քանիս երկրաւլի յԵրևան նստօղ խանին։ Եւ այսպէս առնելով մինչև հնանայ անցքն և բառնի անունն այգւոյն, նոյն երկրականքըն՝ մէլիք, իշխանք, և քահանայք զգիր մի շինեալ կնքեն ամենեքեան թէ՝ մեք որ զԽանլըղ այգին (որ ի գեօղն Էջմիածնի էր) ի խանէն առեալ խափանեցաք, և մինչև ցայժմ մեք տայաք զիծարայն, և ոչ ումեք թողուաք զնա սերմանել, ահա ևս մեք զնոյն այգւոյ տեղն ետուք Աթոռոյն Էջմիածնի, զի նա միայն սերմանեսցէ զնա և ոչ այլ ոք, և մեք երկրովս զնորին իծարայն տամք ի դուռն խանին։ Բայց ի տալն մեր զնուիրակութիւն սրբոյ Աթոռոյն, զայն իծարայն ի հաշիւ անկցի։ Եւ թէ պատահեսցի զի բաց յԱթոռոյն այլ ոք ցանեսցէ զայն տեղին, ցանօղն տացէ զիծարայն և մեք ազատ լիցուք։ Գրի այս գիր ի ՌՃԾԵ թուոջն մերում հայերէն, զոր գտցես ցուցակաւն։ Այսու հնարիւ լինի տեղիս այս Խանլըղ այգի կոչեցեալ՝ սրբոյ Աթոռոյս տեղի սերմանելոյ։ Եւ երկրացիքն տային զիծարայն որքան տևէր թագաւորութիւն Պարսից. և ի յամբոխելն թագաւորութեան, և յաւերելն երկրիս, անհետ եղեն այս զրոյցք և իծարայն, և բարձաւ անունն խանիցն ի տեղւոյս յայսմանէ, և ընդ ձեռամբ Աթոռոյս մնաց մինչև ցայսօր։

Իսկ ի սուրբ Հախխմէէն դէպ ի հարաւակոյս մինչև ի Մանկասարենց այգին մեր՝ որք Մխիթարենց այգիք գրեցան ի վերդ, այգիք են լեալք գիւղացւոց մերոց։

Արդ այսպիսի տեղիքս որք գրեցան ի վերդ, են յատուկ սրբոյ Աթոռոյս, յորս ոչ կարեն գեօղականքն մեր սերմանել ինչ առանց հրամանի մերոյ. բայց ի յայլ արտօրայս գեղջս մերոյ՝ որք են գեօղականացն, մեք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին եթէ կամիցիմք։ Քանզի որպէս գրեցաւ ի վերդ ըստ զաքարայի Գրիգոր Կաթուղիկոսին, սրբոյ Աթոռոյս է գեօղս այս բոլոր սահմանօքն իւրովք։ Դարձեալ և այսու ոչ է զանց առնելի. զի գեղջս մերոյ յարևելակողմն սահմանն՝ որ է Ղօռուղն, որպէս ի վերդ ասացաւ, այս Ղօռուղիս յեզրն դէպ ի գեօղս մեր՝ գոն աւեր տեղիք տանց, որ ըստ երևմանն՝ որպէս թէ գեօղատեղ է լեալ յառաջնմէ։ Եւ զգեօղատեղս այս Տաճկերէն Իլխըճի կոչեն։ Քանզի ի յառաջին ժամանակսն անասնապահ.ք և Նախարարածք Երևանու խանին (որք յամռան եղանակին զանասունս խանին ի լերինսն արածեն) ի ձմեռան եղանակին ի յայս Ղօռուղ տեղիս արածէին։ Վասն որոյ և իւրաքանչիւրքն զմի մի խուղս և զծածկարանս շինեն վասն իւրեանց կամ թէ անասնոց և զարմանից նոցին։ Վասն այսորիկ կոչի տեղիս այս՝ Իլխըճիլար. կամ Իլխըճի-քեանդի։ Այժմ է աւեր ամենևին։ Այս տեղւոյս յարևելակողմն Ղօռուղն է, և միւս կողմանսն մեր գեօղիս հողն, որք մեր ջրովն միայն կարեն ոռոգանիլ։ Ապա ի ՌՄԺԶ թուոջս՝ ի մերումս ժամանակի՝ Երևանու Հիւսէյին-ալի խանն կամեցաւ զազգ մի տաճկաց (որք Քեօլանի ասին.) բերել և յայս Իլխըճի տեղիս բնակեցուցանել, որպէս զի զհողսն մեր (որք զտեղեաւն այնու շուրջ կան.) ցանիցեն և ջրովն մերով ոռոգանիցեն, խաբելով զմեզ թէ՝ զաւելորդ ջուրս ձեր ի կեր արկանեն սոքա՝ և ձեզ ոչ ինչ տան զվնաս։ Եւ յետ բազմաց վիճմանց և ընդդիմարանութեանց, խափանեցաք զչար դիտումն նորին՝ և ոչ թողաք, հաւաստելով զի հողքն այնպիսիկ մեր գեղջս են և մեր ջրովն ոռոգանին, և մեք կարեմք ցանել զնոսա և ոչ այլ ոք։ Ուստի և խանն բռնադատեցեալ ի ճշմարտութենէ՝ գիր տայ մեզ թէ՝ յիրաւի անկարգ էր դիտումն մեր, վասն որոյ և խափանեցաք։ Գիր զայս գիրս ցուցական և պինդ պահեա վասն ապագայից զգուշութեան։ Այսպէս վարեցաք զՔեօլանիսն ի տեղւոյն, և զտեղիսն սերմանելոյ մեզ արարաք։

Դարձեալ ի ՌՃԾԳ թուոջն մերում և ի ՌՃԺԶ թւին Տաճկաց, Կաւակերտ կոչեցեալ գեօղի բոլոր գեօղականքն ի նոյն գեօղն սրբոյ Աթոռոյս վախմ տան . . . հող ցանելոյ, որ լինի . . . սօմարի տեղ, ի ժամանակս Նահապետ Կաթուղիկոսին. զորոյ զՏաճկերէն Վախուֆնամէն գիր ցուցական։



Վասն Սէֆիապատ եւ Խաթունարխ կոչեցեալ տեղւոյն, թէ որպէս է սրբոյ Աթոռոյս:

Դարձեալ արտաքոյ գեղջս մերոյ ունի սուրբ Աթոռս զմեծ հող մի ի վայրն ի հարաւակոյս ի վերայ Մեծամօր կոչեցեալ Սև ջրոյն, (որ Տաճկերէն Ղարասու կոչի)։ Քանզի Մեծամօրի կոչեցեալ գետս այս ելանէ ի դաշտի մերում յարևմտակոյսն յականց բազմաց ի յոտից Արագած կոչեցեալ լերանէս մերմէ, որ և ժողովեալ աստի և անտի՝ լինի գետ մեծ, խորագոյն, զարհուրատես, տղմուտ և պրտուապատ, և ընթանայ դէպ ի հարաւակոյս փոստեցեալ և վայրանիստ ճանապարհաւ, ուստի դաշտիս մերոյ ոչ ինչ օգնէ բնաւին։ Իսկ ի վայրակոյսն դաշտիս մերոյ ի հարաւակողմն, են փոս և նիստ տեղիք՝ ընդ որովք անցանէ Սև ջուրս այս, և գնացեալ խառնի ի մեծ գետն Երասխ կոչեցեալ. և փոս տեղիքն այնպիսիկ լեալք են անշէն, աներև, ուրեք ուրեք աղտաղտին և ուրեք ուրեք չոր։ Ապա ի ժամանակս Յակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ երկրորդ Սէֆի խանն որ ի վերդ յիշեցաւ, որ էր ազգաւ Վրացի, որ նստէր յԵրևան խան՝ հրամանաւ Շահ-Սուլէյմանին, այս Սէֆի խանս ի Մեծամօրի կոչեցեալ գետոյս յայսմանէ զմեծ առու մի հանեալ՝ և զջուր բերեալ արկանէ ի յառաջեալ յանշէն տեղիսն, և ի վերայ առուին իւրոյ զքանի գիւղօրայս շինէ։ Եւ մինչ խանս այս առնէ զայս գործ, և կին սորին նախանձեալ՝ և սա հանէ ի մեծ առուէն առն իւրոյ զառու մի յատուկ՝ և տանի յայլ կողմն նոյն վայրացն, և շինէ զոմանս գեօղօրայս ի վերայ առուին իւրոյ։ Եւ գեօղօրայքն այնպիսիկ՝ թէ ի խանէն շինեցեալքն և թէ ի կնոջէն՝ միանգամայն և այնու ջրով ոռոգեցեալ տեղիքն՝ կոչին անուամբ առուիցն հանիցելոց՝ Սէֆիապատ և Խաթուն-արխ մինչև ցայսօր։ Այլ և խանս այս և կին սորին մինչ հանին զայս երկուս առուս և զջուր բերեն յայսոսիկ տեղիսս՝ զորս ասացաք, ապա ուխտեն և կանոնադրեն յերկրոջս առաջի ամենեցուն թէ՝ զայսոսիկ ջուրս զորս մեք բերաք, վախմ և խէյրաթ արարաք մեզ և մերայնոցն՝ յաւիտեան. զի ո՛վ ոք և իցէ՝ թէ յայսց գեօղօրէիցս և թէ յայլ ուստեքէ, թէ ի Տաճկաց և թէ ի Հայոց, զոր ինչ սերմանեն ընդ բերեալք ջրովք մերովք, զմուլք՝ այս ինքն զտասանորդ մի տացեն ումեք յայնց սերմանացելոցն. զի մեք խէյրաթ արարաք զայս ջուրս. որ և է այսպէս մինչև ցայսօր։ Զի որպէս է սովորութիւն երկրիս, որք ի յամենայն գեօղօրայս զոր ինչ սերմանեն՝ ի հնգէն մէկ՝ զհնգորդ տան յարքունիս, որ ծահբրայ ասի, և ի տասնէն մէկ զտասանորդ տան միքատեառն՝ որ մուլք ասի, և յայս ասացեալ ջրոցս իւրոց սերմանացելոցն միայն զհնգէն զմին տան, և զմուլք ինչ ո՛չ տան ումեք ո՛վ ո.ք իցէ, և զինչ և սերմանեսցէ։

Արդ զմեծ առուն իւր զոր հանէ Սէֆի խանս այս ի Մեծամօր գետոյս յայսմանէ, Ալիպէկլու կոչեցեալ գեօղի հողովն անցուցեալ բերէ ի յառա-

ցեալ տեղւոյն, զի զմասն մի ի հողոյ գեղջն այնմիկ հատեալ առուն այն արկանէ ի ներքոյ ինքեան, և ինքն ընդ գլխովն տեղւոյն այնորիկ անցանէ. և հատեալ տեղին այն՝ յայն յառուէն միայն ոռոգանի և ոչ յայլուստ։ Եւ տեղիս այս լինի ծոցամէջ, շրջապատեալ որպէս զկղզի մի ի չորից կողմանց. քանզի ի յարեւմտեան կուսէ զՄեծամօրի գետն ունի պարիսպ, ի հիւսիսոյ կուսէ՝ զխանի հատեալ մեծ առուն ունի, ի յարեւելեան կուսէն՝ զանցս նոյնոյ առուին՝ որ զՔարսալու գետն մեր ընդ մէջ հատեալ անցանէ, և ի հարաւակուսէ՝ զնոյն Քարսալու գետն և զՄեծամօրի գետն ընդ իրեարս խառնեցեալսն։ Արդ նոցա մէջ և կղզիացեալ տեղիս այս՝ է լաւ ջրաւէտ, բերրի, և խոտաւէտ տեղի իմն, որ . . . բայց չելթիք 1) և բօսթան 2) միայն սերմանեն և ոչ այլ ինչ։ Արդ տեղիս այս ըստ հողոյն՝ է Ալիբէկլու գեղջն, և ըստ ջրոյն է Սեֆիապատ։ Ապա ի թուին մերոյ ՌՃԿԷ, և ի Տաճկաց թուին ՌՃԼԱ, Աստուածատուր Կաթուղիկոսն մեր գնէ զայս տեղիս իւրովք սահմանօքն ի յԱլիբէկլու գեօղականացն՝ քսան և հինգ թումանի՝ ի լինել խոտատու և արօտատեղի անասնոց սրբոյ Աթոռոյս միաբանութեան. զորոյ զՏաճկերէն ղաբալայն գտցես ցուցակաւն։ Եւ նոյն գիւղականքն ի վաճառելն զտեղիս զայս, զիրկուս գլխաւորս ի գեղջէն իւրեանց՝ Տաճկերէն գրով և կնքով վէքիլ 3) առնեն, զի ծախեսցեն նոքա զտեղիս զայս կաթուղիկոսին. և նոյն գիրն ևս գտա ցուցակաւն։ Եւ յետ այսպէս վաճառելոյն սոցա զտեղիս զայս Աստուածատուր Կաթուղիկոսին, յետ երկուց ամաց զղջացեալ նոյն գեօղականքն՝ զան յետս պահանջեն զտեղիս զայս ի Կաթուղիկոսէն. և Կաթուղիկոսն ևս ասէ բարի է, քսան և հինգ թուման ձեզ տուր, և տասն և հինգ հազար դիան ևս ի դուան խարջեցի, տուք ինձ զքսան և վեց թուման և կէս դրամն իմ, և առէք զձեր հողն։ Եւ գեղականացն ոչ ունելով զդրամ, այլ և անզի անկանին, և միջնորդս արկանեն առ Կաթուղիկոսն, զի զողորմութիւն արարեալ բաշխեսցէ ի դրամէն. վերջապէս տասն և չորս թումանն բաշխէ Կաթուղիկոսն նոցա, և տասն և երկու թումանին գիր առնու ի բերանոց գեօղականացն Տաճկերէն՝ վկայութեամբ Շըխ-Իսլամին՝ երկու մօք թէ այսքան օր մուհլէթ 4) ձեզ, տասն և երկու թումանն բերէք և զձեր հողն առէք ձեզ. և թէ ոչ բերիք, հողն Աթոռոյն է։ Մինչ ևս թէ յինէն ի յառնուլն ձեր զհողս զայս, այլոց մի ծախիցէք, այլ ի կամելն ձեր ի ծախել, ինձ պարտիք ծախել և ոչ այլ ումեք։ Եւ նոյն գեօղականքն ոչ կարացեալ ի տալ զտասն և երկու թումանն, մնացեալ է անդէն նոյն գիրն ի սուրբ Աթոռս, զոր

(1) Բրինձ: — (2) Ձմերուկ, կամ անդաստան: — (3) Փոխանորդ: — (4) Վաւեր, պայմանաժամ, միջոց:



գտցես ցուցակաւն։ Եւ յետ այսր ամենայնի, յետ տասն և վեց ամի, յաւուրս Թէքիրտաղցի Աբրահամ Կաթուղիկոսին մերոյ՝ նոյն գեղականքն ճնշեցեալ ի պակասութեանց զան առ Աբրահամ կաթուղիկոսն և ասեն թէ վասն տասն և երկու թումանի՝ հողն մեր մնաց առ ձեզ, որոյ գինն այսքան է. այժմ կամ ողորմութիւն արա մեզ և բան մի ևս տուր, և կամ զհողն մեր դարձո առ մեզ։ Եւ յասելն Կաթուղիկոսին թէ բարւոք է, բերէք զտասն և երկու թումանն, և առէք զհողն ձեր. և նոքա ոչ ունէին ի տալ։ Վասն որոյ ի բազմաց ստիպմանց և ի թախանձանաց նոցին բերեալ Կաթուղիկոսն զտասն և երկու թուման ևս տայ վերստին նոցա, և կրկին գնէ զտեղիս զայս ի նոցանէ՝ զորոյ զՏաճկերէն ղաբալայն գտցես ցուցակաւն։ Որ գրի ի թիւն Տաճկաց ՌՃԽԸ, և ի Հայոց ՌՃՁԵ։ Ապա յետ ժամանակաց՝ յորժամ խափան բառնի թագաւորութիւնն Պարսից, և ինքնագլուխ Տաճիկք տիրեն երկրիս, և հնարիւք և կերպիւ կերպիւ զաւթեն զգեօղօրայս երկրիս Տաճիկք, մլքատէր լինին, գեղջս այսմիկ Ալիբէկլու կոչեցեալ՝ տիրեն երկու Տաճիկք, Ղօչի խան և Աբկեար կոչեցեալ։ Ապա այս ասացեալ տաճիկքս գան յարուցանեն ընդ Ցակոբ Կաթուղիկոսին Շամախեցւոյ թէ Խաթունարխն զոր ինչ ցանէք՝ մեզ մուլք պարտիք տալ, զի Ալիպէկլուի հող է, և Ալիպէկլուն մեր է։ Եւ Ցակոբ Կաթուղիկոսն զաթոռակալն իւր զԴունկիանոս Վարդապետն առաքէ ի շարըն, և վկայիւք հաստատէ թէ՝ տեղիս այս Աթոռոյս է, և զմուլք երբէք ոչ ենք տուեալ ումեք։ Եւ Շէխ-Իսլամն գրէ ըստ վկայութեան վկայիցն զհօճճէթ մի, և խանն Հիւսէյին-Ալի գրէ իգլուխ հուճճէթին, և կնքէ, որք վճռեն թէ՝ տեղիդ այդ Աթոռոյն է, և այլոց չկայ զբան ինչ պահանջելոյ վասն տեղւոյդ այդմիկ։ Եւ յառաջ քան զայս յանցելումն ամի՝ զհուճճէթ մի ևս առնուն ի նոյն Շէխ-Իսլամէն, որ վկայէ թէ տեղին այն Էջմիածնի է և մուլք չունի։ Զայսոսիկ հուճճէթքս գտցես ցուցակօքն, որք գրին ի մեր թիւն ՌՄԺԱ, և ի ՌՄԺԲ. և ի Տաճկաց ՌՃՀԵ. և ի ՌՃՀԶ։

Ի սոյն ամի վախճանի Ցակոբ Կաթուղիկոսն, և մեր նուաստութիւնն յաջորդէ։ Նոյնպէս և ի մերս ժամանակ նոյնք Տաճիկքն արծարծեն զնոյն չարութիւնն, և մեք արդ արարաք նոյնոյ խանին, և ֆէրման 1) առաք, որ գրէ ի գլուխ արզային մերոյ՝ այնց տաճկացն թէ ընդունայն է ձեր դաւին, և մուլք չկայ տեղւոյն այնորիկ. որ գրի ի Տաճկաց թիւն ՌՃՀԶ. և ի մերս ՌՄԺԲ։ Նոյնպէս և հուճճէթ մի ի բերանոյ նոյն Ղօչի խանին առաք Շէխ-Իսլամին ձեռօքն թէ իմ դաւիս ընդունայն է։ Ի նոյն թուղթն։ Զորս գտցես ցուցակօքն։ Այնուհետև և զքանիս գրեանս ունիմք ի նոյն Ղօչի

(1) Հրաման, մակագրութիւն:

խանէն և Արկարէն գրեցեալ.ք առ մեզ աղաչանօք, որք ի տեղւոջն պնմիկ ղտեղիս խնդրեն ցանկլոյ․ Զորս գտցես ցուցակօքն․ Զտեղիս զայս երբեմն խոտհարք արարեալ զխոտն հնձեին, և զանասունս արածեին, երբեմն ևս զչալթուք և զբօստան ևս ցանեին․

Իսկ ի մերումս ժամանակի Երևանու Հիւսէյին֊ալի կոչեցեալ խանն զգեօղօրայքն՝ որք յիշեցան ի վերդ, որք ի վերայ այս ջրոցս շինեցան, էառ ինքն և զաւթեաց զմուլքսն և զգեօղսն, ընդ որս զաւթեաց և զայս տեղս՝ որ մեր էր․ Իսկ ի շատ ներհակելն մեր և ի յընդդիմանալն, ասելով թէ մեր է, ոչ անսաց. ապա և մեք ասացաք թէ՝ որովհետև և զմեր անասնոց արօտն առեր, առ և զանասունս մեր․ Եւ այլ այսպիսիք զրոյց.ք շատք․ Վերջապէս՝ յեզր գեղջս մերոյ ի մէջ արևելեան և հարաւոյ, մեծ խոտհարք գոյ՝ որ Խանլղ֊ղօլուխ ասի, փոխանակ մեր՝ այս տեղւոյս՝ ետ մեզ զմեծ բաժինն այն ղօլուխ տեղւոյն. որ ահա սրբոյ Աթոռոյս է, և սորա խոտն քան զմեր տեղւոյն խոտն լաւ է և մերձաւորագոյն մեզ․ Գիտ զայս գիրս զոր խանն մեզ գրէ վասն այս ղօլուխիս Տաճկերէն․ Այժմ այս ղօլուխ տեղիս ի ձեռս մեր է, և մեր Իմամարխ կոչեցեալ տեղին ի ձեռս խանին․ Ցետոյ Աստուած գիտէ որպէս լինելն. գրեցաք զի գիտասջիք․

Դարձեալ և այս է հարկաւոր գիտելի, զի ի սոյն ղօլուխ կոչեցեալ տեղւոյս եզրն (որ ի կողմն գեղջս մերոյ) քանի մի աւեր տանց տեղիք գոն. զի յառաջին ժամանակսն՝ Խանլղ որձ և էգ ձիանքն ի բերելն աստ ի յարօտս, ձիապանքն շինեալ են զ.քանի մի ծածկարանս վասն ինքեանց, և ձիանց, և խոտից, վասն որոյ անուն տեղւոյն կոչեցեալ է Իլխճի֊քեանդի, այս ինքն ձիապանաց գեօղ. որ այժմ է աւեր, և նշանք որմոցն միայն երևին ի տեղիս տեղիս․ Ապա ի մերումս ժամանակի Քեօլանի անուն ազգ մի Տաճիկ հրամանաւ Երևանու Հիւսէյին֊ալի խանին կամեցան աստ զգեօղ շինել ինքեանց և բնակել. որք և զգութանս իւրեանց արկեալ ի մէջ ղօլուխին և ի մէջ գեղջս մերոյ եղեալ հողսն վարէին սաէպ սաէպ՝ որք գեղջս մերոյ են, և վասն հեռի գոլոյն ի ջրոյ՝ անգործ մնային․ Քանզի բաց ի ջրոյն մերմէ յայլ տեղեաց ոչ ունէին ջուր․ Ուստի Տաճիկ.քն այնք եթէ տեղակալեալ էին անդ, ի ջրոյս մերոյ տարեալ զցանքս իւրեանց ջրելոց էին․ Ապա զորքան գլխացաւութիւնս կրեալ հազիւ քակեալ զբունս նոցա՝ վարեցաք անտի և անհետ արարաք զրով վերոյիշեալ խանին․ Զորոյ գիրն գտցես ցուցակաւն և պահեսցես. զի հարկաւոր է․ Եղև այս ի ՌՄԺԷ թուոջն մերում․

Այլ և ունի սուրբ Աթոռս ի Բաթալինջ գեօղն զխոտհարքս և զարօտատեղիս, զորոյ զօրպէսն տես ի պատմութիւնս սոյնոյ գեօղիս Բաթալինջ կոչեցելոյ․



Դարձեալ Քիւլթափայ կոչեցեալ գեօղացիքն (որ է ի հարաւակողմն գեղջս ի վայրն յետկոյս փոքրիկ բլրին) միշտ վէճ են ունեցեալ ընդ գեղջս մերոյ և Աթոռոյս վասն ջրոյ և վասն հողոյ և վասն արօտատեղեաց անասնոց․ Զի որովհետև ոչ ունէին զջուր և ոչ զառու յատուկ, վասն որոյ երբեմն ի կամիլն նոցա զսերմն սերմանել ի կողմունս յայնոսիկ, Աթոռայինքս և գեօղականքս մեր ոչ են թողեալ, գիտելով զի ի սերմանելն՝ ի հարկէ ի ջրոյն մերմէ տարեալ ոռոգանեն զսերմանեալսն, որպէս ասացաւ ի գլուխն ի ճառս ջրոցն․ Ապա ի ժամանակս Նահապետ Կաթուղիկոսին մերոյ և յիշխանութեանն . . . . խանին Երևանու, գնացեալ այս գեօղացիքս առ առնեն խանին թէ՝ մեք ութսուն տարի է որ՝ յայս գեօղս կամք, և միշտ սերմանեալ եմք զսերմն, այժմ Էջմիածնեցիք ոչ թողուն սերմանելոյ․ Եւ խանն զէշիկ֊աղասի կոչեցեալ Նաջաֆղուլի֊բէկ ումն կարգէ ի գալ և վերահասու լինել տեղւոյ որպիսութեանն․ Որ եկեալ տեսանէ, և սահմանք նոցին տեղեացն և մեր գեղջս յատկացուցանելոյ այսպէս կանոն դնէ․ Արևելակողմն Քիւլթափային առու մի գոյ, ընդ որով աւելորդ ջուրք գեղջս մերոյ երթեալ դիմէ ի հարաւակողմն ի Թուրապի֊հասար կոչեցեալ տեղեաւն, և անտի ի միւս Նիւր֊Մուհամմատի֊հասար կոչեցեալ տեղն՝ անցեալ գնայ․ Այս առուիս արևելեան կողմն հանդերձ Շահրիպանլու կոչեցեալ տեղեաւն, արևմտեան կողմն, ի վերոյ յիշեցեալ Թուրապի֊հասարի ներքի անկիւնէն մինչև ի Նիւր֊Մուհամմատ կոչեցեալ հասարէ (1) ներքի անկիւնն, և հարաւակողմն ի վայր մինչև ի . . . . կեօլ կոչեցեալն, (որ է խորացեալ և ծովակացեալ տեղի մի ի մէջ գետոյս մերոյ) այսքան տեղիքս տան Էջմիածնեցւոց ի լինել արօտատեղի անասնոց սոցա․ Իսկ արևմտակողմն վերոյիշեցեալ առուին, որ է նոյն Քիւլթափայի տեղն իւր կողմամբքն, և այնց վերոյիշեցեալ երկուց հասարաց մնացեալ տեղիքն մինչև վերոյիշեցեալ ծովակացեալ կեօլն՝ տան Քիւլթափայեցւոց ի լինել միայն արօտատեղիք նոցին անասնոց, և ոչ վարելոյ և սերմանելոյ․ Այլ և ի վերոյ կողմանէ Թուրապի֊հասարին քսան գազաչափ լայնութեամբ ճանապարհ տայցեն Քիւլթափայեցիքն Էջմիածնեցւոց, զի անասունք նոցին ընդ այն գնացեալ.ք ի Ցակրի֊գեօլն ջուր արբցեն և դարձցին․ Այսու պայմանաւ զթուղթ մի շինեն՝ և զայս ամենայն գրեն ի նմա, և կնքեն բազում Տաճիկ.ք. և տարեալ առ Շէխ֊Իսլամն և նա ևս որպէս զհուճէթ գրէ և կնքէ, վճռելով թէ ով որ այս պայմանիս վերայ ոչ մնասցէ, յիտուն

(1) Հիսար, պարիսպ:

թուման գինանի պարտական լեցի. Լինի այս ի ՌՃԺԶ թուոջն Տաճկաց. գի՛ռ յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Քիւլթափայ գեօղս այս առաք մեք խրովք սահմանօքն, ի ՌՄԺԸ թուոջն մերում. Զորոյ զղաբալայսն գի՛ռ ցուցակօքն. Զորպէսն տես ի Ճառս Փաանկանոցի։

ԳԼ. ԺԶ.

[illegible]

Նախապէս ի կից գեօղս մեր ունի զայգի մի մեծ, որ կոչի Դաի-այգի, որ է հանդէպ սրբոյն Հռիփսիմէի վանիցն ի հիւսիսակողմ, լայնարձակ և հոչակեցեալ, պատեցեալ պարսպով. Այգիս այս ըստ սկզբանն և ըստ մեծի մասին ի բնէ անտի սրբոյ Աթոռոյս է լեալ, որքան առ միջասահման տեղիքն. Ցետոյ Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի ի սահմանակից տեղեացն առեալ մեծացուցանէ և պարսպէ. Զի զորն զրամով գնէ, և զորն տեսալքն յիշատակ տան սրբոյ Աթոռոյս. Արդ ի վերի կողմն դէպ յարեւմտակողմ, մէջ Տէր Նահապետի այգւոյն և մեր բնիկ այգւոյն, յու-րում բարադ(1) հնձան ևս գոյ, զայն բաժինն Ռուստամի որդի խօճայ Ցոլանեանս կոչեցեալ ումն յիշատակ տուեալ է սրբոյ Աթոռոյս ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ. Եւ ինքն նոյն խօճայ Ցոլանեանն զայն այգւոյ երեք տախտակն յայս գիւղացի Աստուածատուրի որդի Սահակէն է առեալ հինգ հազար դիանի, ի Տաճկաց թուին ՌՂԲ. և զմնացեալ բաժինն ի Մահմատ-զամանն և ի Ջուան-մարտ-ղուլի կոչեցեալ Տաճկացն երեք թումանի, ի Տաճկաց թուին ՌՂԷ. Որ և ի տայն զբոլորն սրբոյ Աթոռոյս, զայս երկուս ղաբալայս ևս մեզ տայ. որք գոն առ ի սուրբ Աթոռոջս. Զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն, որք են Տաճկերէն. յորս գրեն սահմանք երկուց բաժնեաց ասացելոցս. Իսկ ի վայրկոյս սմին դէպ ի սուրբ Հռիփսիմէն, որ զրան ի ներքին կողմն անկանի, Գորքենց այգի կոչի. Քանզի Իւզբաշի կոչեցեալ . . . . մէկ այգի է ունեցեալ՝ որ կոչի Նորք, մօտ Ղարամենց այգւոյն. ի մեռանել այս Իւզբաշուս, (որովհետև և ինքն Նահապետ Կաթուղիկոսի նէրքն 2) է լեալ) Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի տասն թուման իւր ողորմութիւն տուեալ նորա որդւոցն՝ և առեալ է զայն վերի ջրաղացն՝ որ Իւզբաշոնց ասի. (զորմէ յիւրում տեղւոջն ասասցուք), և զնոյն այգիս ի

(1) Աւերակ: — (2) Աշակերտ: —



նոցանէ. Ցետոյ զնոյն Նորք կոչեցեալ այգիս տայ Գորքենց Միրզաջանին և Գօրումին, և ի նոցանէ առնու զայդ վերոյիշեցեալ այգիդ, և խառնէ ի Դաի-այգին մեր՝ վասն կից լինելոյն այգւոյս մերոյ, որ կոչի Գորքենց ֆայ 3). Այլ և յայս գիւղացի Գոտակակարենց Աւետիքի որդիք, Տիրատուրն՝ Եղիազարն և Միքայէլն մէկ կտոր այգի ծախեն սրբոյ Աթոռոյս հինգ հազար դիանի՝ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսի Ջուղայեցւոյ՝ ի ՌՃԿԱ թուոջն մերում. Զորոյ զղաբալայն Հայերէն գի՛ռ. Եւ զայս կտոր ևս խառնեն ի Դաի-այգին մեր։

Դարձեալ ի հիւսիսակողմն Դաի-այգւոյն, ի վերի կողմն, որ Տէր Նահապետի այգի կոչի. Այս Տէր Նահապետս գոլով այս գեօղացի և որդի Աբէլի, ունեցեալ է զայգիս զայս. Ապա ի ՌՃՁԷ թուոջն մերում, և ի ՌՃԾԱ թուին Տաճկաց, զկէս այգւոյս այսմիկ ծախէ սոյն գեղացի տանուտէր Սողոմոնին՝ ութ թումանի. Ցետոյ Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի ի Տէր Նահապետէն առնու և զմնացեալ կէս այգւոյն՝ ութ թումանի, ի ՌՃԴ թուին մերոյ և Տաճկաց ՌՃԾԴ թուին. Ապա և ի սոյն թուոջս, առնու ի յիշեալ Սողոմոնէն զկէսն ևս ութ թումանի. Ընդ նմին և զՏէր Նահապետին տուեալ ղաբալայն առնու. Այսպէս առեալ զբոլորն այսր այգւոյս՝ խառնէ ընդ բնիկ Դաի-այգւոյն մերոյ. Գի՛ռ զայս երիս ղաբալայս՝ յերեսն գրեցեալ ցուցակօքն. Զերկու ղաբալայսն Տէր Նահապետն տայ մեզ՝ մէկն Հայերէն և միւսն Տաճկերէն, և զմին Տաճկերէնն ի Սողոմոնէն առնումք։

Բ. Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի յայս գեօղս երկուս զայգիս մեծամեծ ևս կից իրերաց, ի հարաւակողմն Դաի-այգւոյն, նոյնպէս պարսպապատեցեալք, զորս աստի և անտի առեալ լուսահոգի Կաթուղիկոսացն, զորն դրամով և զորն յիշատակ, յետոյ ի մի խառնեալ, զերկուս այգիս շինեն. որք հասարակապէս կոչին Մանկասարենց այգի. Քանզի ի գեօղս յայս Մանկասար անուն մարդ մի է լեալ, որոյ ազգ և ընտանիքն յանուն սորին մականուանեցեալք Մանկասարենց կոչին. Որոյ մեծ այգի մի է լեալ, որ է այս՝ զորմէ ճառեմս, և սորին որդիք և ազգն զայս այգիս ի յինքեանս բաժանեն յետոյ. Ապա նախապէս այս Մանկասարի որդի Մէհրումն գոլով ինքն անորդի, ի ժամ վախճանին իւրոյ զիւր բաժին չորս տախտակ այգին, (զոր մանաւանդ ինքն աշխատութեամբ ստացեալ,) տայ յիշատակ սրբոյ Աթոռոյս՝ ի ժամանակս Եղիազար Կաթուղիկոսին ի ՌՃԼ թուոջն մերում. Ցետոյ յետ տասն Որոյ յիշատակագիրն գոյ յաթոռոջս Հայերէն գրեցեալ.

(1) Բաժին:

և մէկ ամաց՝ յաղթականաց նոյնոյ Մանկասարին Միրիջանի որդի Յարութիւնն զիւր բաժին յայգւոյն մէկ տախտակ և կէսն ծախէ Նահապետ Կաթուղիկոսին հինգ հազար գիանի՝ ի ՌՃԽԱ թուոջն մերում, և ի ՌՃԽԴ թուին Տաճկաց, որոյ զղաբալայն գի՛տ ցուցականւ Եւ յառաջ քան զայս ի ՌՂԲ թուին Տաճկաց, սոյն Միրիջանի որդի Յարութիւնն և իւր մայր Մարիամն յայգւոյս յայսմանէ զկէս տախտակ ևս ծախեալ են Տաճկի ումեմն՝ որ Հաճրիմանլու - բայաթ ղունճալի կոչի, երկու թումանի։ Իսկ Նահապետ Կաթուղիկոսն ի յանուն զվերոյիշեալ տախտակ և կէսն, առնու և ի Տաճկէս յայսմանէ զայս վեց տախտակս . . . և ի նորին Տաճկերէն ղաբալայի գլխոջն կրկին ղաբալայ գրել տայ ի ՌՃԴ թուին Տաճկաց և ի ՌՃԽԱ թուոջն մերում։ Զոր զոցես յերեսն գրեցեալ ցուցականւ։

Դարձեալ ի սոյն թուոջս՝ սրբոյ Աթոռոյս Աթոռակալ Աստապատցի Մինաս վարդապետն ի սոյն տեղւոջս առնու զայգի մի իւր հնձանովն ի Բէկօւմի որդի Մուրատէն, Անտոնի զաւատ Մարգարտէն, և նոյն յիշեալ Միրիջանի որդի Սահակէն երեք թումանի և երկու հազար գիանի, և տայ յիշատակ սրբոյ Աթոռոյս։ Զորոյ զՏաճկերէն ղաբալայն զոցես ցուցականւ։ Զայս վերոյիշեալ չորս բաժին այգիս ի մի խառնեալ միաւորեն, և զերկու այգի շինեն յատկացեալ պարսպօք, որք կոչին Մանկասարենց։

Գ. Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի յայս մեր գեօղս զմեծ այգի մի ևս ի հիւսիսակոյս ի գլուխ այգեաց գեօղիս, նոյնպէս պարսպաւ պատեցեալ, որ կոչի Վերի - այգի և Հաճի - ղլի - այգի. նոյնպէս և զսա ասոյ և անտի առեալ լուսահոգի Կաթուղիկոսքն՝ ի մի խառնեալ միաւորեն։ Քանզի այգւոյս այսմիկ ի միջի մեծ միջնակէն ի վայր ի հարաւակողմն լեալ է ումեմն Տաճկի Մէհրապ անուն կոչեցելոյ. և Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի ի մտաւորելն յանուն զայս այգիս ի Տաճկէն յայնմանէ, խորհուրդ դնէ ընդ երկուց Տաճկաց՝ զի իւրեանք յանուն իւրեանց գնեսցեն ի Մէհրապէն, յետոյ իւրեան վաճառեսցեն։ Եւ այս երկուս Տաճկաց անուանքն են Մուհամմատ և Ապտալ, որք են լեալք յերկրոջս ի թագաւորական գործս և թագաւորական ծառայք ի մեծ պատիւ և յիշխանութիւնս, և Աղէքսանդր Կաթուղիկոսին բարեկամք և սիրելիք։ Ապա ըստ խնդրոյ և ըստ կամաց սորին՝ յիշեալ թագաւորական ծառայք Մուհամմատ և Ապտալն գնեն զայս այգիս ի Մէհրապ տաճկէն տասն և հինգ թումանի, և իւրեանց անուամբ գրեցուցանեն զտաճկերէն ղաբալայն։ Յետոյ ի գլուխն նոյնոյ ղաբալային գրեն կրկին ղաբալայ և կնքեն թէ՝ զայս այգիս՝ որ Աղէքսանդր Կաթուղիկոսի բանիւն մեք գնեցաք, զոր ինչ որ



տուեալ և խարճեալ էաք, մի թամամ 1) յիշեալ Կաթուղիկոսի վէքիլ Մովսէս վարդապետի ձեռօքն առաք՝ և զայգին տուաք Կաթուղիկոսին։ Այսուհետև այգին խալիֆային է, մեզ ալաքայ 2) չկայ։ Այս այգւոյս սահմանք զրին, Միրանի այգին, և Եսայու Խոճալըն Ղևոնդի այգին, և Սահակի և Մկրտումի Խոճալըղն էշիկճի 3) Եաղուբի այգին, քէօռ 4) Վարդանի և Դօյղամխանի այգիքն։ Այս ամենայն լինի ի ՌՃԻԴ թուոջն Տաճկաց և ի մեր ՌՃԿ թուոջն։ Զայս ղաբալայս գի՛տ յերեսն գրեցեալ ցուցականւ։ Եւ վասն այսորիկ կոչիւր յառաջ այգիս այս Հաճի - ղլի - այգի. յետոյ ի վանդաւորութենէ անուանն՝ կոչեցաւ Վերի - այգի։ Ապա ի յանունն յիշեալ Կաթուղիկոսին զայս բաժին այգիս ի յիշեալ Տաճկացն, առնու նա և ի յէշակճի Եաղուբէն, ի քեօռ Վարդանէն և ի Միրանէն, (որ ըստ ոմանց Մանուչար կոչիւր), զայգիսն նոցա, և խառնեալ ի մի, շինէ զմի այգի պատեցեալ պարսպաւ։ Եւ յետոյ ի ժամանակս Օսմանցւոց ի կողմն զլին՝ այգւոյ տեղ մի կայր անշէն, որ էր Տէր Մկրտչի որդի Սահակին, զայն տեղին ևս էառ սուրբ Աթոռս ձեռամբ վէքիլ Աղէքսանին յիսուն ղուռուշի։ Եւ Մեսրովբ վարդապետն (որ էր գործակալ և վէքիլ ի վերայ այսպիսեաց գործոց,) նա ետ տնկել որթ՝ և այգի շինել, և խառնել ի սոյն այգիս ի ՌՃՀԸ թուին մերոյ և Տաճկաց ի ՌՃԽԱ թուին։ Որոյ երկու ղաբալայ գոն, մինն Հայերէն և մինն Տաճկերէն։ Զոր զոցես ցուցակօքն։ Իսկ արտաքոյ պարսպին սոյն այգւոյ ի հարաւակոյսն և կէս ամին, չորս տախտակ այգին էր Յովսէփենցն, և կէս Յովսէփենց այգւոյ չորս տախտակ այգին ևս Հաւշանենց Մկրտումին էր. յորոց ի փախճանելն, Ղազար Կաթուղիկոսն ճահկեցի էառ ի տեղի հոգեբաժնի՝ և տրայ սրբոյ Աթոռոյս, որպէս է մինչև ցայսօր։ Եւ կէս սոնոյ Հաւշանենց չորս տախտակ այգւոյ՝ ի հարաւակոյսն՝ էր Ղևոնդենց այգին, որ է եօթն տախտակ և երկու քաջ և տասն և երկու չուան։ Որոյ սահմանքն, հիւսիսակողմն՝ մեր Հաւշանենց այգին, արևելակողմն՝ Լօռենց Ներսիսի այգին, հարաւակողմն է զարբին Մկրտումի այգին, և արևմտակողմն՝ ճանապարհն և վարելահող։ Զայս այգիս յետոյ ի մեր ՌՄԺԵ թուոջն, և Տաճկի ՌՃՀԹ թուոջն մեք առաք ի Ղևոնդենց Գէւոնդի որդիք Ներսէսէն և Յակոբէն յանուն սրբոյ Աթոռոյս։ Եւ փոխանակն ետուք մեր ձիթապան մահտեսի Գալուստի կտոր այգին, Ասի - բէկի փայ այգին. (որոյ զփոխն ևս ետուք Ասի - բէկին՝ լուսարար Եղիազար վարդապետի այգին). այլ և ընդ Գալուստի և Ասի - բէկի այգեացն, ետուք նա և նոյն Ներսէսին քսան թուման դրամ, ՃԾ մշակ, Բ օր զուլթան, և

(1) Ամբողջութեամբ: — (2) Յարաբերութիւն: — (3) Իշխան: — (4) Կոյր:

Գ խալաթ։ Զայս այնու մտօք առաք, զի խառնեսցուք ընդ այլոց երկուց բաժնիցն ի Վերի այգին մեր։ Որոյ երկու ղաբալայ գոյ, մին Հայերէն ի ՌՄԺԵ Թուոյն գրեցեալ, և միւսն Տաճկերէն ի ՌՃՀԹ Թուոյն նոյին գրեցեալ։ Զորս գտցես ցուցակօքն։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի յայս գեօղս մեր՝ զայգի մի մէջ Դոռի-այգւոյն և Վերի-այգւոյն մերոյ ի մէջ այգեաց գեղջս. որ էր այս գեղացի Իսրայէլի որդի բէրպէր 1) Խան-պապինն. որոյ սահմանքն են՝ մի կողմն Թարխանի այգին, մի կողմն քարտաշ Տէր Յարութիւնի այգին, և մի կողմն . . . . . . . . . . . . . . Այս Խան-պապիս յաղգէն ղաղջիկ մի յառաջմէ տաճկացուցանեն յԵրևան, և անուն զնա ի կին։ Յետոյ տաճկացեալ կինն այն գիր մի տայ իւրոյ ազգի ընտանեացն տաճկերէն թէ՝ իմ բաժին այգիս ես բաղխեցի իմ ընտանեացն։ Որովհետև ի մէջ Պարսից վատ սովորութիւն մի գոյ, որ տաճկացեալն ընչից դառնանէ ընդ ազգականաց իւրոց։ Վասն որոյ այս կինս խնայելով յազգականս իւր՝ զայս գիրս տայ իւրոց ազգականացն, զի մի՛ յետոյ յիւրայնոցն դաւ յարուցանիցեն։ Ապա յետ բազմաց ամաց՝ Թոռն մի ի տաճկացեալ կնոջէն և Տաճիկ Սայիտ անուն դաւ յարոյց ընդ Խան-պապին յիշեցելոյ (որ ունէր զայգիս զայս), ոչ միայն վասն այգւոյս այսորիկ, այլ և տան և այլոց իրաց. որ և արդ արարեալ խանին, և խանն ի դատաւորն իւրեանց գնալ հրամայեաց։ Վերջապէս թիւր չարի նոցին հասոյց զայգիս այս Սայիտ կոչեցեալ Տաճկին։ Եւ Սայիտն այն էառ զայգին, նա և զայն գիրն ևս՝ զոր տաճկացեալ հանիկն իւր տուեալ էր ազգականաց իւրոց։ Այլ և յիշեցեալ Խան-պապն իւն տարով առաջ յայգւոյս յայսմանէ զկտոր մի ծախեալ էր Անանիայի որդի Մատթէոսին՝ երկու Թումանի՝ Տաճկերէն ղաբալայիւ. որ գրի ի Տաճկաց Թուին ՌՃՀԱ. և Սայիտ Տաճիկն այն և զայն կտորն ևս յինքն գրաւեաց և էառ զայս ղաբալայս ի Մատթէոսէն։ Որ և լեալ տէր բոլոր այգւոյն, եկեր զամ մի։ Եղև այս ի մեր ժամանակս։ Ապա և մեք չկամելով՝ զի օտք Տաճկի մի՛ մտցէ ի գեօղս մեր, առաք զայս այգիս ի յայս Սէյիտ կոչեցեալ Տաճկէս՝ քառասուն Թումանի՝ Տաճկերէն և հաստատուն ղաբալայով։ Որ ընդամենն գնաց խարճ յիսուն Թուման։ Եւ յանուն մեր զբոլոր այգին, առաք նա և զՄատթէոսի ղաբալայն ի Տաճկէն։ Առաք նա և զայն հուճէթի երեսն՝ զոր Շէխ-Իսլամն զայգին Տաճկին հաստուցանելով՝ տուեալ էր նմա Տաճկերէն։ Առաք նա և ի Տաճկէն գլուխ մի Տաճկերէն թէ՝ քառասուն Թումանն անպակաս առի՝ և զայգին ծախեցի Խալիֆային։ Որ աճա ունի սուրբ Աթոռս զայս այգիս.

(1) Սափրիչ։



և զղաբալայսն թէ մեր առեալն ի Տաճկէն և թէ զՄատթէոսի ղաբալայն, նա և զղավզի գիրն և զհէպալամայէ սուրէթին 1), զորս յիշեցաք, գտցես յերեսն իւրեանց գրեցեալ ցուցակօքն։ Այս եղև ի մեր Թուոյն ՌՄԺԵ. և Տաճկաց ՌՃՁ։

Այս ևս գրելի է ի յօրինակ ապագայից. ի մեր գեօղս Կակոս անուն մարդ մի զայգին իւր ծախեալ էր գեօղիս պառառալու 2) և խանի նօքէր 3) Սարու-Մահմատ կոչեցեալ տաճկին՝ Տաճկերէն հաստատուն ղաբալայիւ՝ ի մէնջ ծածուկ. յետոյ ի գիտելն մեր, ճնշելով զծախողն և զառնողն ևս, յետս առաք զայգին ի տաճկէն՝ և դարձուցաք ի Կակոսն. և զտաճիկն ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք. ի ՌՄԺԶ Թուոյն մերում։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի յայս գեօղս զայգի մի, զոր սուրբ Հռիփսիմէ վանքն ունէ, որ է կից մեր Դոռի այգւոյն յարևելակողմն։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս զայգի մի յայս գեօղս՝ զոր սուրբ Շողակաթի վանքն ունէ, զոր մեք տուաք։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս զայգի մի յայս գեօղս, զոր սուրբ Գայիանեայ վանքն ունէ, որ է կից նոյնոյ վանքին։

Դարձեալ այս գեղացի Տէր Եսային և Պօղտաղենց Գալուստի որդի Մարտիրոսն ի Զաման-միրզայ-այի և յՈւղուր-խան կոչեցելոյ Տաճկաց զայգի մի առնուն ի գեօղս յայս՝ ութ Թումանի. յետոյ Մարտիրոսն զիւր բաժին չորս տախտակն ծախէ սրբոյ Աթոռոյս միաբան Ներսէս վարդապետին երեք Թումանի, և Ներսէս վարդապետն ևս վախմ տայ սրբոյն Գայիանեայ վանքին՝ Հայերէն գրով ի ՌՃՂԸ Թուոյն մերում։ Որոյ կողմանքն են, Գինօսենց և Փնճայոնց այգիքն, Տէր Եսայու փայն, և ճանապարհն։ Որոյ յաղագս չորս Թուղթ գոյ, զորս գտցես ցուցակօքն։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս յայս գեօղս մերձ իւրեան զերկուս ծառուտ պարտէզս՝ կից գերեզմանատան մերոյ. մին ի յարևելակողմն, զորս մեք շինեցաք, և միւսն յարևմտակողմն։

Դարձեալ ունեցեալ է սուրբ Աթոռս ի յայս գեօղս զքանիս այգի ևս, որք այժմ են սերմանելի տեղիք և արտք, որք են ի մէջ սրբոյն Հռիփսիմէի և Մանկասարենց այգւոյն մերոյ, որք են այսոքիկ.

Ըլխպէկի որդի Յարութիւն իւրայնովքն զայգին իւրեանց տայ յիշատակ սրբոյն Գայիանեայ վասն մեծ եղբօրն իւրոյ հանգուցելոյ հոգւոյն, ի ՌՃԼԸ

(1) Փուշէ Ճիւխճամն, պարգևագիր։ — (2) Դժուարացաք գիտել զբուն նշանակութիւնն։ — (3) Ծառայ։

թուին մերոյ. Որոյ սահմանքն գրին, արեւելեան կողմն Տէր Ստեփաննոսի այգին, արեւմտեան կողմն՝ մելիք Յովհաննիսի վարելահողն, հարաւակողմն՝ նոյն Յարութիւնի և Մուրատենց Գալուստի խոնջատեղն, և հիւսիսակողմն՝ սուրբ Հռիփսիմէն և Երեւանու ճանապարհն. Գիր զայս վախուալամայ՝ որ Հայերէն է.

Դարձեալ Նահապետ Կաթուղիկոսն առնու զայգին վերոյիշեալ Տէր Ստեփաննոսի յիւր որդւոց Յովհաննիսէն և Զաքարիայէն՝ ութն թումանով. Որոյ սահմանքն են, վերոյիշեալ Սարգսի այգին, խօճայ Ներսեսի այգին, Խօ . . Մխիթարի այգին, և Երեւանու ճանապարհն. ի թուին տաճկաց ՌՃԷ. Զորոյ զղաբալայն գիր ցուցականն.

Դարձեալ Նահապետ Կաթուղիկոսն առնու զվերոյիշեալ Մխիթարի այգին (որ է Կիրակոսի որդի)՝ ինն թումանի. Որոյ սահմանքն են, ի յերեք կողմանսն վերոյիշեցելոց Յարութիւնի, Ներսեսի, և Զաքարիայի այգիքն, և մէկ կողմն խոնջատեղ. ի թուին Տաճկաց ի ՌՃԴ. Գիր ղաբալայն ցուցականն.

Դարձեալ Նահապետ Կաթուղիկոսն առնու զայգի մի ի Պօղոսաղենց Տէր Սարգսի որդի Տէր Խաչատուրէն՝ հինգ թումանով. Որոյ սահմանքն են վերոյիշեալ Սարգսի այգին, Մատթէոսի այգին, Խաչիկի այգին, և Երեւանու ճանապարհն. ի Տաճկաց թուին ՌՃԵ. Գիր զղաբալայն ցուցականն.

Դարձեալ վերոյիշեալ Մատթէոսի այգին իւր կին Ոսկեհատն վախմ առնէ սրբոյ Աթոռոյս վասն հոգւոյ առն իւրոյ. ի ՌՃԿԲ թուին մերոյ. զորոյ զվախմնամայն գիր, Հայերէն է.

Դարձեալ Կիրակոսի որդի Դաւիթն զայգի մի վախմ տայ սրբոյ Աթոռոյս. որոյ սահմանքն են, վերոյիշեալ մեր այգիքն, որք են Պօղոսաղենցն, Մխիթարինն, Մատթէոսինն. Եւ մի կողմն Գինոսի այգին. ի տաճկաց թուին ՌՃԻԴ. Գիր զվախմնամայն ցուցականն.

Դարձեալ Դաւթի որդի Յարութիւնն զայգի մի առնու ի Նալբանդ 1) Մարտիրոսի որդի Միրզա-խանէն՝ երկու թուման և երկու հազար դիանի, և վախմ տայ սրբոյ Աթոռոյս. Որոյ սահմանքն են վերոյիշեալ Պօղոսաղենց, Գինոսի, և Յարութիւնի այգիքն մեր. ցուցական գիր զվախմնամայն տաճկերէն.

Դարձեալ Սահրատի որդի Խաչատուրն և իւր որդիք Նաւասարդն և Գորգէն զեւրեանց զայգի մի վախմ տան սրբոյ Աթոռոյս. որոյ սահմանքն են մեր վերոյիշեալ այգիքն, որք են Մխիթարի, Դաւթի, Գինոսի, և Մա-

(1) Պայտար:





կասարենց այգիքն. Գիր զվախմնամայն Հայերէն, որ գրի ի ՌՃԿԹ թուոջն մերում.

Վերոյիշեցեալ այգեստեղիքդ ամենայն են մեր Մանկասարենց այգւոյ, և Երեւանու ճանապարհի և սուրբ Հռիփսիմէի միջոցքն, զորս արտ արարեալ ցանեմք. որք հասարակօրէն Մխիթարենց այգիք կոչին, զորմէ իԺԵ գլուխն (որ վասն արտօրէից սրբոյ Աթոռոյս) ասացաւ.

Դարձեալ Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն յայս գեօղս զայգի մի առնու կէս հնձանովն՝ քսան և երեք հազար դիանի ի յայս գեղացի Անանի որդի Մկրտումէն. Որոյ սահմանքն են, մէկ կողմն քուչէն 1) . . ., մէկ կողմն դուզն 2), մի կողմն Գալուստի այգին, և մէկ կողմն գերեզմանատունն. ի Տաճկաց թուին ՌՃԻԵ. Զտաճկերէն գիր զղաբալայն ցուցականն.

Դարձեալ ի յայս գիւղումս մելիք Յովհաննէս ոմն ծախէ սրբոյ Աթոռոյս զմէկ պարտէզ մի ձեռամբ սրբոյ Աթոռոյս վէքիլ Սարգսին՝ հինգ հազար դիանի, որոյ սահմանքն են, մեր վախմ բաղչայն 3), Մխիթարի բաղճայն, և Գէորգի բաղճայն. ի ՌՀԹ թուին տաճկաց. Գիր զտաճկերէն ղաբալայն ցուցականն.

Դարձեալ սուրբ Աթոռս ունի ի գեօղն յՕշական զայգի մի մեծ չէն՝ որ կոչի մեծ և նիրքի այգի. Որոյ զբուն և զառաջին մասն Մելքիսեթեկ Կաթուղիկոսն է առեալ ութսուն ղուռուշով ի Համի-զարացի Ալի-ղուլի տաճկէ միոյ, որոյ սահմանքն գրի, մէկ կողմն Քրիստոստուրի այգին, Գեօգալի այգին, Փանոսի այգին, և Տրիգալու այգին. ի Տաճկաց թուին ՌԽ. Գիր զղաբալայն ցուցականն. Ապա յետոյ Փիլիպպոս Կաթուղիկոսն առնու զայգի մի եւս կից սոյնոյ այգւոյս՝ ի յՕշականցի Մելիտոնի որդի Ազիզէն. որոյ սահմանքն գրի, Գրիգորի այգին, Մելքոնի խարաբայ տեղն, և մեծ առուն. Եւ զայս այգիս եւս խառնէ ընդ վերոյիշեալ այգւոյն՝ և միաւորէ. և այս այգւոյս թէպէտ յատուկ ղաբալայ ոչ գոյր, սակայն մէկ մեծ սահմանի գիր գոյ, որ գրի ի թուոջն Տաճկաց ՌԾԶ. Քանզի յառաջ քան զառնուլն Փիլիպպոս Կաթուղիկոսին զայգիս զայս՝ յերկրոջս լեալ է մեծ տաճիկ ոմն Միրզա-Մուհամատ-Մէհտի կոչեցեալ, որ լեալ է վէզիր 4) և գլխաւոր դիւանագիր արքունական. այս վիզիրս բռնութեամբ յափշտակէ զայս այգիս ի վերոյիշեալ Ազիզէն, և պարսպեալ զարդարէ և ուտէ ի ժամանակս ինչ. Ապա ի գալ Սուլթան Մուրատին յերկիրս յայս և ի տիրելն այս կողմանցս, զորդի Ամիրկունէ խանին Թահմազ-ղուլի խանն և զայլս մեծամեծսն Պարսից աքսորէ ի յըՍտամպօլ (որպէս ի տեղւոջն ա-

(1) Փողոց:— (2) Տիւզն, ուղիղն կամ ուղղայատակն: (3) Պարտեզ:— (4) Նախարար:

սացաւ), զայս Մէհտի կոչեցեալ վէզիրս եւ ընդ նոսա առաքէ ի Պօլիս։ Իւ մինչ այսպէս անհետացեալ կորնչի տաճիկս այս, վերոյիշեալ Ազիզն զաւթէ զայգիս իւր շարով, և ծախէ Փիլիպպոս Կաթուղիկոսին։ Եւ յետ ինչ ամաց՝ Հաֆըզքամիան տաճիկ ոմն ի յընտանեաց յիշեալ վէզրին վէքիլ կարգեցեալ՝ գայ դաւ առնէ ընդ Փիլիպպոս Կաթուղիկոսին վասն այգւոյս այսորիկ թէ՝ վազրին է լեալ մեզ պարտի հատանել։ Եւ Փիլիպպոս Կաթուղիկոսն կոչեալ զԱզիզն և զալ Օշականցիսն, և զեւր վէքիլ Թումասն ընդ վերոյիշեալ տաճկին առաքէ ի դատարանն նոցին։ Ուր գըտնացեալ հաստատեն զայգին Ազիզին գոլ, և վէզիրն բռնութեամբ զաւթեալ։ Ապա թէ ազգականաց վազրին, թէ նոցին վէքիլ տաճկին՝ ութ թումանն երկու հազար դիան տան և մեկ սոհըլամայ1) գիր մի առնուն Տաճկերէն, որ գրի ի թուին Տաճկաց ՌԾԶ։ Զոր գտցես ցուցակաւն։

Ապա յետոյ ի Տաճկաց թուին ՌՃԽԸ, և ի մեր ՌՃՁԴ, Թրակացի Աբրահամ Կաթուղիկոսն կից սոյն այգւոյս առնու զայգի մի ի Կարբեցի Անտօնի որդի Դաւութէն, Խեչումէն և Ցովսեփէն՝ ութ թումանի. և խառնէ ընդ այս այգիս. որոյ սահմանքն գրին, մէկ կողմն քուչէն, մէկ կողմն սրբոյ Աթոռոյս այգին, մէկ կողմն Վարդանի այգին, և մէկ կողմն ձորն։ Այսպէս յետ և յառաջ ի շրջակայից՝ զորն դրամով և զորն յիշատակ առեալ են երանելիքն մեր և միացուցեալ, զորս և պարսպեալ իսկ, որ կոչի Մեծ-այգի, որոյ սահմանքն են այժմ . . . . . .

Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի գեօղս յայս յՕշական զմեծ այգի մի եւ ի հիւսիսակողմն գեղջն՝ յետ կոյս Դիտի-բլուր կոչեցելոյն ի յեզր ձորոյն, յորում անցանէ գետն Քարձաղ, որ կոչի արեգունի, և վերի այգի՝ Այգիս այս ըստ մասին նախապէս վախմ և յիշատակ տան Ցօշականցիք սրբոյ Աթոռոյս։ Ցետոյ ի ՌՂԷ թուին Տաճկաց, նոյն գիւղացի Մուրատի որդի Բապամն կից սոյնոյ այգւոյս զայգի մի ծախէ սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ գործակալ Վարդան վարդապետին՝ երեք թումանի, որոյ սահմանքըն գրին, մէկ կողմն գեօղն, մէկ կողմն Գրիգորի այգին, մէկ կողմն մեր յիշեալ այգին, և մէկ կողմն Տաճկաց ֆեօրեբ 2)։ Որոյ զղաբալայն գիտ ցուցակաւն։ Զոր և խառնեն ընդ վերոյգրեալ Արեգունի այգւոյն։ Ա.յլ և ի ՌՃ թուոջն մերում, . . . Կաթուղիկոսն եւ զայգի մի կից սմին այգւոյս էառ ի յԱլեար կոչեցեալ տաճկէն՝ և խառնեաց ի սոյն այգիս։ Այսպէս յետ և յառաջ առեալ ի շրջագայիցն խառնեն ընդ յայս այգիս և պարսպեն իսկ՝ որպէս ասացաք։ Որոյ սահմանքն են այժմ . . .

(1) Դուցէ սուլհնամէ, հաշտագիր, դաշնագիր. — (2) Գերեզմանք, իշխանք



որք ի Ներկայումս եւ չէն են և ընդ ձեռամբ մերով վերոյիշեցեալ երկու մեծ այգիքդ՝ որք ի Ցօշական։

Դարձեալ կից սոյնոյ այգւոյս ի հիւսիսակողմն զայգի մի սուրբ Սարգսի վանքն ունի, որ է այժմ՝ չէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս։ Զի սուրբ Սարգսի վանքն ամայի է ընդ այլոցն։

Ի ներքոյ գրեցեալքդ առեր են ընդ փեղիս այգեացն միաեգամայն:

Դարձեալ ի սոյն գեօղս զայգի մի եւ ունի սուրբ Աթոռս, զոր Մաղնեցի հայրապետի որդի վարպետ Ալէքսանն է տուեալ վախմ սրբոյ Աթոռոյս, որոյ կողմունքն են, Աւետսի այգին, Սահակի այգին, Խաչատուրի այգին . . . . . ։ Այս Ալէքսանս Զուղայեցի Ցակովբ Կաթուղիկոսին գրագիր է լեալ. առ ի լինել երախտահատոյց՝ տուեալ է զայս այգիս Աթոռոյս։ Որոյ աղագաւ երկու վախմնամայք գոն, մին Հայերէն, (որ գրի ի մեր թուին ՌՃԽ, և ի Հայրապետութեանն Եղիազար Կաթուղիկոսին), և մին Տաճկերէն՝ ի նոյն ժամանակին ի Տաճկաց թուին ՌՃԲ։ Եւ յետ երկուց ամաց ի Հայրապետութեանն Նահապետ Կաթուղիկոսին՝ ազգականք Ալէքսանին ի գլուխ սոյնոյ վախմնամայիս կրկին տան գրել Տաճկերէն թէ՝ որպէս Ալէքսանն տուեալ է զայս այգիս Աթոռոյն, նոյնպէս և մեք տուաք։ Որ գրի ի Տաճկաց թւին ՌՃԴ. տան և զհին ղաբալայն եւ սոյն այգւոյս՝ մեզ, զորս ինքեանք առեալ են ի Ցօշականցի Աւիքջանի որդի Սաթումէն՝ ինն թումանի, և յԱզիզի որդի Կիրակոսէն՝ չորս թումանի։ Զչորեսին ղաբալայսս զայսոսիկ գտցես յերեսն գրեցեալ ցուցակըքն։

Դարձեալ սրբոյ Աթոռոյս Աթոռակալ Մինաս վարդապետն ի Ցօշական զայգի մի առնու ի գեղականացն, այս ինքն ի Բաղու որդի Թումանէն՝ և Սաֆարի որդի Մուրատէն՝ և յամենից գեղացւոցն՝ քսան թումանի՝ յանուն սրբոյ Աթոռոյս՝ յաւուրս Եղիազար Կաթուղիկոսին, ի թուին Տաճկաց ՌՃԲ։ Որոյ կողմունքն են, ճանապարհն, Ուլուբէկի այգին, Պետրոսի և Պօղոսի այգիքն, որ Բուռմենց այգի ասի։ Գիտ զղաբալայն ցուցակաւն։

Դարձեալ սոյն Մինաս վարդապետս զայգի մի եւ է ունեցեալ ի Ցօշական, որոյ կողմունքն են, Թումանի այգին, Ղազարի այգին, Աբրահամի այգին, և սրբոյ Աթոռոյս այգին։ Զայս այգիս և վեց թուման եւ դրամ տայ և գնէ ի յԾավրի որդի Այվազէն, Բաղու որդի Թումանէն վէքիլութեամբ Ցովհաննիսին, Պետրոսին, և սորա կին Մարիամին (որ է դուստր Փիլիպպոսին,) զմէկ այգի մի՝ հրամանաւ Նահապետ Կաթուղիկոսին, որոյ կողմունքն են, առուն, Սահակի այգին, քուչայն, և Ցովհաննիսի այգին. ի Տաճկաց թուին ՌՃԴ. Զորոյ ղաբալայն գիտ ցուցակաւն։

Դարձեալ Նահապետ Կաթուղիկոսն ի սոյն գեօղս առնու զայգի մի ի Թորոսի որդի Մարուք վարդապետէն՝ հինգ թումանի, որոյ կողմունքն են, Իրիցու այգին, Տուղն, Խաչէլիազի այգին, և չօմարի այգին. ի Տաճկաց թուին ՌՃԳ. Գիր զղաբալայն ցուցակաւն։

Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսի Ջուղայեցւոյ, գեօղս այս Ցօշական հարեալ ի կարկտէ և յայլոց ձախորդական պատահմանց, կարի չքաւորին և ի նեղ անկանին բոլոր գեօղացիքն. Վասն որոյ ի Սհամթլուեցի Միրզայ-Մուհամմատ բէկէն (որ վէզիր և մեծ դիւանագիր է լեալ յերկրիս) և ի Քեալանթար Հաճի-Մուհամմատ-Հիւսէյինէն առնուն զհարիւր և ութսուն թուման դրամ, և քսան այգի և հինգ ջրաղացս գրաւ դնեն եօթն ամիս ժամանակաւ նախապէս. Եւ դարձեալ ի յԵրևանցի խօճայ Փանոսի որդի խօճայ Մովսիսէն դրամ փոխ առնուն գեղըլի մէկ հարիւր յիսուն թուման, Ը այգի և ԺԲ ջրաղացս գրաւ դնեն ինն ամիս ժամանակով, ի թուին Տաճկաց ՌՃԻԶ. Եւ երկոցունցն ևս ղաբալայի պէս գրաւնամայ տան. թէ եթէ ի լրանալ ժամային ոչ տայցեմք զդրամն ձեր, այդ այգիքդ և ջրաղացքդ ձեզ լիցին. Եւ ի մէջ երկուց ղաբալայիցն ևս սահմանք այգեաց և ջրաղացիցն գրեցեալք են յատուկ յատուկ և յանուանէ. Ապա երկոցունց ժամայն ևս լրանայ, և ոչ կարողանան հատուցանել Ցօշականցիքն զդրամն. Վասն որոյ և զաւթեն զայնքան այգիսն և զջրաղացսն խօճայ Մովսէսն և յիշեցեալ տաճիկքն. Բայց ի յայգեաց և ի ջրաղացիցն՝ զորս տան խօճայ Մովսէսին, երեք այգին և Գ ջրաղացն ի մէջ ղաբալայի յիշեցեալ տաճկացն ևս լինին գրեցեալք, Ուստի տաճիկքն այնորիկ տարեալ զՑօշականցին և զխօճայ Մովսէսն ի շարի հաւաստեն գոլ խաբեանց, և յետոյ առնուն ի Մովսէսէն զԳ այգիսն և զԳ ջրաղացսն. Իսկ և ի խնդրելն Մովսիսի ի Ցօշականցւոցն զփոխարէնն, տան նմա Ցօշականցիքն զայլ երիս ջրաղացս և զչորս այգիս, որ լինի խօճայ Մովսիսի առեալն ինն այգի և տասն երկու ջրաղացք. Զայս ամենայն զորս ասացաք, ի մէջ երկուց ղաբալայիցն ևս լիովին գրեցեալք են հանդերձ որպիսութեամբքն և սահմանօքն, եթէ այգիքն և եթէ ջրաղացքն. Ի ՌՃԻԶ թուին Տաճկաց և յաւուրս Աղէքսանդր-Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, Ցօշականցիքն տան զայնքան այգիսն և զջրաղացսն յիշեալ Տաճկացն և խօճայ Մովսիսին, և ի ՌՃԼ թուին այս վէճս լինի յաւուրս Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ. Ապա իբրև տեսանէ Աստուածատուր Կաթուղիկոսն զնեղձութիւն գեղջս այսորիկ, (որ մուլք է սրբոյ Աթոռոյս), զորոյ զայնքան այգիս և զջրաղացսն այլք առեալ տիրեն, ոչ հանդուրժէ. Վասն որոյ յետոյ առնու նախապէս ի խօճայ Մովսիսէն զինն այգիսն և զտասն և երկու ջրաղացսն՝ եօթանասուն թումանով և հաստատուն ղաբալայով՝



ի տաճկաց ՌՃԼԱ թուոջն. զորոյ զղաբալայն գտցես ցուցակաւն. Առնու նա և ի խօճա Մովսիսէն զհին ղաբալայն, զոր ի յՕշականցւոցն առեալ էր. Զոր ևս գտցես ցուցակաւն.

Բայց զքառասուն թումանն տայ Նաղդ դրամ խօճա Մովսիսին. և ի տեղի երեսուն թումանին զմէկ այգի և զմէկ ձեռք տուն տայ ի Նորագեօղ գեղջն. Սոյնպէս և ի վերոյիշեցեալ տաճկացն առնու յետոյ զքսան այգիս և զհինգ ջրաղացսն՝ յիսուն և հինգ թումանով՝ ի ՌՃԼԴ թուոջն տաճկաց. Եւ ի յետկոյս ղաբալային՝ զոր առեալ ի յՕշականցւոցն՝ վերստին ղաբալայ գրեալ վերոյիշեցեալ Հաճի-Մահմատ-Հիւսէյին Քեալանթարն և Ալի-ղուլի բէկ եղբայրն վեզիրին տան Աստուածատուր Կաթուղիկոսին, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն, զգինս նոցա վասն այսորիկ պակաս տայ Աստուածատուր Կաթուղիկոսն, զի յայնքան յամս կերեալք էին նոքա զայնքան մուլքսն.

Դարձեալ սուրբ Հոփիսիմէի Առաջնորդ Ագուլեցի Անտօն վարդապետն ի սոյն գեօղս զայգի մի առնու յանուն սրբոյն Հոփիսիմէի վանիցն Բըռումենց Առաքելի որդի Էվումէն, և Պետրոսի Ցովհաննիսէն՝ հինգ թումանի. Որոյ կողմունքն են, Սահակի և Ցովսէփի այգիքն, առուն և քուչէն. ի Տաճկաց թուին ՌՃԽԲ. Գիր զղաբալայն ցուցակաւն.

Դարձեալ սրբոյն Շողակաթի Առաջնորդ Մարտիրոս վարդապետն առնու ի սոյն գեօղս զայգի մի յանուն Շողակաթին և ի Ցովսէփի որդի Մատթէոսէն՝ եօթն թուման հինգ հազար դիանի. Որոյ կողմունքն են, Էվումի այգին, քուչէն, Ցովսէփի այգին, Դաւուտ-աղա և Մարուք վարդապետի այգիքն, ի ՌՃԽԲ թուին Տաճկաց. Գիր զղաբալայն ցուցականն.

Դարձեալ վերոյիշեալ Անտօն և Մարտիրոս վարդապետքն յանուն երկուց վանիցն Հոփիսիմէի և Շողակաթի՝ զայգի մի ևս առնուն ի սոյն գեօղս ի Բռումենց Առաքելի որդի Էվումէն՝ երկու թուման հինգ հազար դիանի. Որոյ սահմանքն են, քուչէն, առուն, Խաչի-խուպանն, և Ցովսէփի այգին. ի ՌՃՁԵ թուոջն մերում. Գիր զղաբալայն Հայերէն գրեցեալ.

Դարձեալ Աստուածատուր Կաթուղիկոսն զքսան այգիքն՝ զորս առնու ի վազիրէն (որպէս ի վերդ ասացաք), յորոց մին է Ցօշականցի Փիլիպպոսի որդի Առաքելինն, զոր նոյն Կաթուղիկոսն ծախէ Էջմիածնեցի Ադաբէկի որդի Մկրտումին. Եւ յետ մեռանելոյ Մկրտումին, վերստին վախմ էին տուեալ սրբոյ Աթոռոյս. Ապա ի ՌՃՂԷ թուին մերոյ՝ Քիւթուր Պետրոս Կաթուղիկոս ասացեալն ծախէ զայն այգիս սրբոյն Գայիանէի Առաջնորդ Եղիազար վարդապետին՝ երեք թումանի. Որոյ կողմունքն

են, Սաթումի, Էմնի, Մատթէոսի, և Միքայէլի այգիքն. Գիր զՀայերէն ղարալայն։

Դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ի սոյն գեօղս Այվազի որդի Եավրին մէկ հնձան տայ սրբոյ Աթոռոյս Հոգեբաժին կնոջ իւրոյ, ի ՌՃԿԱ թուոջն մերում. Գիր ղվախմնամայն Հայերէն գրեցեալ։

Ի սոյն ժամանակս զհնձան մի ևս Ղազարենց Աբրահամն ծախէ սրբոյ Աթոռոյս՝ վեց հազար դիանի, ի ՌՃԾԸ թուոջն մերում. Գիր զՀայերէն ղաբալայն։ Ի սոյն գեօղս զհնձան մի ևս Աստուածատուրի որդի Խաչատուրն վախմ տայ սրբոյ Աթոռոյս ի Տաճկաց թուին ՌՀԸ. Որոյ կողմունքն են, գեղն, առուն, Միրաղի պաղճայն և Ղօչաղի հնձանն. Գիր զղաբալայն ցուցականն։

Դարձեալ ի սոյն գեօղ, զերկուս մարագս ևս ունի սուրբ Աթոռս, յորոց զմին Կիրակոսի որդիքն ծախեն մէկ թումանի ի ՌՃՀԱ թուոջն մերում. և զմին Տէր Մարուքն և իւր եղբարքն ծախեն տասն և ութ հազար դիանի՝ ի ՌՃՁԷ թուին մերոյ. Զորոյ զղաբալայսն գի՛ր Հայերէն գրեցեալք։

Դարձեալ սոյն գեօղացի Դևոնցենց Խեչումի որդի Գրիգորն ծախէ սրբոյն Գայիանէի Առաջնորդ Եղիազար վարդապետին երկու չէբախանայ 1) տասն տուճ, երկու թաղման, և մի աքաշ թաղման՝ հինգ հազար տասն շահու. ի ՌՄ թուին մերոյ. Գի՛ր զՀայերէն ղաբալայն։

Դարձեալ ի ՌՃՂԴ թուին մերոյ ի ժամանակս Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ՝ Նորին սպասաւոր Գառնեցի Նիկողայոս վարդապետն տասն և չորս հազար դիան տայ Օշականցի Թումանի որդի Յարութիւնին վատայով, և երկու տանտուկ այգի և մէկ շիռախանայ կարասօքն գրաւ առնու՝ այսու պայմանաւ թէ՝ եթէ վատային չկարիցեմ վճարել զգրամն, իւրն լինի իմ այգին և իմ շիրախանէն. Ի չվճարելն, մնայ այգին և շիրախանէն Նիկողայոս վարդապետին. Երկու գիր գոյ Հայերէն, գի՛ր և տե՛ս.

Աշտարակ այգիք։

Նախապէս ի գեօղս Աշտարակ Մովսէս Կաթուղիկոսն առնու զայգի մի յԵրևանցի Մուրատի դուստր Հատիճէն՝ հինգ թումանի. Որոյ սահմանքն են, Օշականայ ճանապարհն, Գասպարի և Հահնազարի այգիքն, և բաղչին 2). ի թուին Տաճկաց ՌԴ. Զորոյ զղաբալայն գի՛ր ցուցականն։

(1) Հնձան։— (2) Դարիվեր։



Դարձեալ ի գեօղս յայս Սաղմոսավանքին մէկ այգի է լեալ վախուփ. որոյ կողմունքն են, . . . Գէորգի և Շմաւօնի այգիքն, և քուչէն. Զայս այգիս Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի առնու ի . . . կոչեցեալ Տաճկէ՝ տասն և չորս թումանի, և տայ Սաղմոսավանիցն յիշատակ ի յԱռաջնորդութեան նորին վանից Գաբրիէլ վարդապետին, ի թուին Տաճկաց . . . : Զորոյ զղաբալայն և զվախմնամայն գի՛ր ցուցականն, յորոց վերայ չորից Կաթուղիկոսաց կնիք գոյ. Զոր յետոյ վերստին և սուրբ Աթոռս զաւթէ ի յամայանալն վանօրէից.

Դարձեալ ի Ղազախու երկրէն տղայ մի Գրիգոր անուն եկեալ յՈշտարակ, կին առնու և քահանայ լինի. Կինն ի հայրենեաց իւրոց և ինքն ևս ստանալով՝ զերիս կտոր այգիս են ունեցեալ։ Յետոյ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Պօլսեցւոյ՝ մեռանին Երէցն և կինն անզաւակ. վասն որոյ սուրբ Աթոռս զաւթէ զերիս կտոր այգիսն ևս. Որոց մինն է ի ձորոջն յեզր գետոյն, որ Յռահորիկ ասի, որոյ կողմունքն են, արևելեան կողմն՝ ղըրն, արևմտեան կողմն՝ Տէր Խաչատուրի այգին, հիւսիսային կողմն քարափն, և հարաւային կողմն՝ գետն. Իսկ միւս այգին ևս ի սոյն Յռահորիկ ձորոջս է, որոյ կողմունքն են, հարաւային կողմն՝ գետն, հիւսիսային կողմն՝ քարափն, արևմտեան կողմն՝ այգին և արևելեան կողմն . . . .

Իսկ միւս կտորն գոյ մօտ գեղջն, որոյ կողմունքն են, արևելեան և հարաւային կողմունքն՝ Տէր Յարութիւնի այգիքն, արևմտեան կողմն՝ Մահմատ-ղուլի տաճկի այգին, իսկ հիւսիսային կողմն՝ ղըրն և ճանապարհն։ Որք են չէն և ընդ ձեռամբ մերով։

Այգիք ի Փարաքար։

Արդ ունի սուրբ Աթոռս ի գեօղս յայս Փարաքար զայգի մեծ . . . պարսպաւ պատեցեալ, որոյ կողմունքն են այժմ . . . . :

Քանզի ասոր և անոր առեալ լուսահոգեացն՝ խառնեալ են ի մի և մեծացուցեալ, որպէս վասն այլոցն ասացաւ. Զորոյ զորպէսն այսպէս իմա։ Նախապէս Աբրահամ վարդապետ մի է լեալ Փարաքարցի, որոյ այգի է մի լեալ ընդ ամենն վեց թումանի. որոյ ի վախճանիլն, կամեցեալ է Փիլիպպոս Կաթուղիկոսն զաւթել զայգին. սակայն Աբրահամ վարդապետին քեռորդի է մի լեալ տաճկացեալ, անունն Մուհամատ, զայգին կամեցեալ է և նա զաւթել. յետոյ որպէս և իցէ, զերից բաժնէն մէկ բաժինն Կաթուղիկոսն է զաւթեալ, և զերկուս բաժինն յիշեցեալ տաճիկն։ Եւ մինչ այսպէս լինի, ապա Փիլիպպոս Կաթուղիկոսն տայ և զչորս թուման սոյն տաճկիս, առնու և զերկու բաժինսն ևս, որոյ լման այգին լինի սրբոյ Աթոռոյս. Զորոյ զՏաճկերէն ղաբալայն գի՛ր ցուցականն՝ գրեցեալ ի Տաճ-

կաց Թուին ՌԽԶ. Եւ յետ միոյ ամի, զսոյնամիտ գիր մի եւ առնու Փիլիպպոս Կաթուղիկոսն ի սոյն Մուհամմատ տաճկէս՝ գրեցուցանելով զայանցս՝ զորս գրեցաք, ի ՌԽԷ Թուին Տաճկաց։ Դարձեալ յետ ԺԷ ամի սոյն տաճիկս եւ եկեալ դատ. յարուցանէ ընդ Աթոռոյս. յետոյ որպէս և իցէ՝ տասնևերկու հազար դիան եւ տան սմա, և ի գլուխ սոյնոյ երկրորդի Թղթոյս կրկին բաթիլնամայ 1) գրեցուցեալ շարին ի ՌԿԴ Թուին Տաճկաց, և զերծանին։ Գիտ և զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակսն։ Կողմունքըն այգւոյս են, Սաֆարի այգին, Փարաքարու մեծ առուն՝ որ ի Զանկի գետոյն եկեալ անցանէ զգլխով գեղջս, Մելիք-Եաղուպի այգին, և Այվազի եօնճալըղն։ Զայսուիկ յիշեցեալ կողմունքս եւ առեալ յետոյ խառնեալ եմք ի մի, որպէս տեսանես ի ստորեւ։ Յետոյ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն առնու զերկուս այգիս՝ կից սոյն այգւոյս, զմին ի վերոյիշեալ Սաֆարի որդի Մլքայէլէն՝ հինգ Թումանի, որոյ կողմունքն են, մեր վերոյիշեալ այգին, Անտօնի, Սահակի, և Մկրտչի այգիքն։ Եւ զմիւսն յԻսկանդարի որդի Մկրտչէն (որ է ի վերոյիշեցեալ տեղւոյ) երկու Թումանի։ Որոյ կողմունքն են, Խաչկի այգին, վերոյիշեցեալք Սաֆարի այգին, Այվազի եօնճալուղն, և մեծ առուն։ Լինի այս ի ՌՀԶ Թուին Տաճկաց։ Զորոյ զղաբալայն գիտ ցուցակսն։ Յետոյ վերոյիշեցեալ Սահակի որդի Վարդանն զիւր այգին (որ ի վերդ սահման գրեցաւ մեր ի Սաֆարէն առեալ այգւոյն,) ծախէ ի նոյն գեօղն Թադէոսին և Նորին որդի Սիմէօնին՝ ութ Թումանի։ Եւ այս Թադէոս զայս այգիս յետոյ վախմ տայ սրբոյ Աթոռոյս գրեցուցանելով ի գլուխ նոյնոյ ղաբալային զվախֆնամայն ի ՌՃԺԴ Թուին Տաճկաց։ Որոյ կողմունքն են, նոյն գեօղի գերեզմանքն, Երևանու ճանապարհն, Տէր Փիլիպպոսի այգին, և սրբոյ Աթոռոյս վերոյիշեցեալ այգիքն։ Գիտ զայս ղաբալայս և վախֆնամայս ցուցակսն։

Դարձեալ վերոյիշեցեալ Մկրտչի որդիք Գրիգորն և Պետրոսն զայգի մի եւ ունելով՝ կից այգւոյն՝ զոր Աթոռոյս ծախեաց Մկրտիչ հայրն իւրեանց (որպէս ասացաք ի վերդ), ծախեն զսոյն այգիս ի նոյն գեօղն Սարգսի որդի Տէր Ղուկասին՝ եօթն Թումանի, ի ՌՃԶ Թուին Տաճկաց։ Որոյ կողմունքն են, գիւղի քէհէն, Նազարի եօնճալըղն, սրբոյ Աթոռոյս վերոյիշեցեալ այգիքն, և սոյն Տէր Ղուկասիս այգին։ Եւ յետոյ զսոյն այգիս նոյն Տէր Ղուկասի որդի Մանասէն և իւր եղբօրորդի Իսրայէլն տան սրբոյ Աթոռոյս, և առնուն չորս Թուման և հինգ հազար դիան դրամ, երեք սօմար ցորեան և մէկ այգի, (զորմէ յետոյ ասելոց եմք)՝ ի ժամանակս Աբրահամ Կաթուղիկոսին Թրակեցւոյ ի ՌՃՁԵ Թուոջն մերում՝ Հայերէն ղապա-

(1) Պատրալնամէ, գիր ոչնչացուցիչ կամ սրբելահրաման։



լայիւ, տան և զհին ղապալայն իւրեանց՝ Տաճկերէն՝ զոր ի Մկրտչէ յորդւոցն առեալ էին, զոր գտցես ցուցակօքն։ Դարձեալ զվերոյիշեցեալ Այվազի եօնճալուղն ի ՌՃՀԸ Թուոջն մերում՝ սոյն Այվազէ որդի Թադէոսն ծախէ սրբոյ Աթոռոյս՝ երեք Թումանի՝ ի ժամանակս Կարապետ Կաթուղիկոսին Զէյթունցւոյ, որ գոյր ի մէջ մեր յիշեցեալ այգւոյն։ Զորոյ զղապալայն գիտ Հայերէն գրեցեալ։

Զայս ամենայն այգիքս՝ զորս ասացաք, զամենայն խառնեալ ի մի միաւորեն, և պարսպով պատեն նախնի երանելիքն մեր, զոր ունիմք այժմ ի ձեռս մեր, բայց աւեր հանդերձ գեօղի ամենայն այգեստանեօքն։ Բայց զայս վերոյգրեցեալ մեծ այգիս, (մինչ յաւուրս Նատր-շահին աւերեցեալ խոպանացաւ, որպէս և այլք շատ այգիք) Երևանու Ղաճար-Հիւսէին-ալիխանն զաւթեալ էր ժամանակս ինչ, և եօնճայ և պոստան ցանէր ինքն։ Ապա ի ՌՄԺԳ Թուոջն մերում՝ մեք յետս առաք ի խանէն, և այժմ մեք ունիմք որպէս յառաջն։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս ի գեօղս յայս զայգի մի՝ զոր նոյն գեղացի Պետրոսի որդի Ղարագեօզն ինքն և իւր ընտանիքն հաստատուն Տաճկերէն վախմնամայիւ տան սրբոյ Աթոռոյս յիշատակ՝ յաւուրս Յակոբայ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ ի Տաճկաց Թուին ՌՁԱ։ Որոյ կողմունքն են, Երիցու, Գասպարի, Եաղուպի, և Էնեաթի այգիքն։ Գիտ զվախմնամայն ցուցակսն։ Դարձեալ ի սոյն գեօղս՝ Մարկոսի դուստր Եղսումն զայգի մի յիշատակ տայ սրբոյ Աթոռոյս, որ է երեք տախտակ, որոյ կողմունքըն են, Մողնու վանից, Տէր Ստեփաննոսի, Մինասի և Սարգսի այգիքն, ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ի Տաճկաց Թուին ՌՃԻԶ։ Զայս այգիս տայ Աբրահամ Կաթուղիկոսն Տէր Ղուկասի որդւոցն, զոր ի վերդ յիշեցաք։ Դարձեալ ի ՌՃՂԹ Թուոջն մերում, ի ժամանակս Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ, սոյն գեօղացի Առաքելի որդի Յովհաննէսն գոլով ինքն ի յՈւռումէլի՝ զիւր հայրենական այգին վախմ տայ սրբոյ Աթոռոյս՝ ձեռամբ սրբոյ Աթոռոյս Նուիրակ Մովսէս վարդապետին։ Գիտ զղապալայն Հայերէն գրեցեալ։

Դարձեալ սուրբ Հռիփսիմէի Առաջնորդ Անանիա վարդապետն Ստամպօլցի ի սոյն գեօղս առնու ի Մանուկի որդի Տիրանէն զայգի մի՝ եօթն Թումանի՝ ի մեր Թուոջն ՌՃՂԴ, և ի Տաճկաց ՌՃԾԸ։ Որոյ կողմունքն են, Բարդուղիմէոսի, Էլիկենց Չաթաղի, Պետրոսի այգիքն, և քէհէն։ Գիտ զղապալայն Հայերէն գրեցեալ։

Դարձեալ սոյն Անանիա վարդապետս ի սոյն գեօղս ի սոյն Թուոջս առնու ի Յովսէփի որդի Տիրացու Նիկողայոսէն զայգետեղ մի, որոյ կողմուն-

քըն են, Անտօնի, Յովհաննիսի այգիքն, և քիւչէն։ Եւ զկանանչ արտ մի ի Նէրքոյ Կեօք - քիւմբէթի ջրոյն, զորոյ զղապալայս գիտ ցուցակօքն։

ԱՅԳԻՔ ՅԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ:

Նախապէս ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին՝ Քանաքեռցի Ղազարի որդի Միքայէլ վարդապետն ի յԵրևան առնու զայգի մի ի Դօլվաթկեաւրի կոչեցեալ տաճկէ միջէ ԼԵ թումանի՝ ի Տաճկաց թուին ՌԿԲ։ Որոյ կողմունքն են Քալանթար մէլիք Մօհսունի այգին, Մաղսուտ բէգի այգին, Նուրճու - օղլի Մըսր - խանի այգին, և Քեօթթյի որդի Յովաննէսի այգին։

Զայս այգիս նախապէս սոյն Միքայէլ վարդապետս ծախէ սոյնոյ տաճկիս ի ՌԽԱ թուին Տաճկաց ԼԵ թումանի։ Յետոյ ի նոյն տաճկէն վերըստին յետս առնու նոյն գնովն ի վերոյգրեալ թուօջն։ Վասն որոյ և զիւր տուեալ հին ղապալայն ևս առնու ընդ այգւոյս։ Գտցես զայս հին ղապալայս ի յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Այլ և ընդ սոյն այգւոյս առնու սոյն Միքայէլ վարդապետս ի նոյն տաճկէն զայգի մի ևս ԻԷ թումանի, կից նոյնոյ այգւոյն. որոյ կողմունքն են, նոյն մէլիք Մօհսունի այգին, Մըսր - խանի այգին, Մահմատ աղայի այգին, և Ղաճարտոնտար բէկի այգին. այս երկուց այգեաց մի է ղապալայն, որ գրի ի ՌԿԲ թուին Տաճկաց, զորս գտցես ցուցակաւն։ Զօրս ի յառնուլն՝ յիշատակ տայ սրբոյ Աթոռոյս։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս յԵրևան զայգի մի, զոր Մըսրխանենց այգի կոչեն, որ ի վերդ յիշեցաւ։ Որոյ սահմանքն են, սրբոյ Աթոռոյս վախըմ Միքայէլ վարդապետի այգին, սարն, ճանապարհն, և Ամիրբէկի այգին։ Զայգիս զայս խօճայ Սէթի որդի Յակոբն է տուեալ վախըմ սրբոյ Աթոռոյս ընդ Նորագեղու և Եղուարդայ մլքիցն ի ՌԿԹ թուին Տաճկաց յաւուրս Յակովբայ Կաթուղիկոսին, որպէս ասացաւ ի . . գլուխն։ Այլ և ընդ սոցին տուեալ է նոյն Յակոբն զայգի մի ևս ի Զօրագեղ, զոր Թօրոսենց այգի ասեն. որոյ սահմանքն են, առուն որ ի Հրազդան գետոյն ելանէ, և նոյն գեղացւոց այգիքն։

Այլ և ի սոյն գեօղս զջրաղաց մի ևս է տուեալ սրբոյ Աթոռոյս նոյն Յակոբն, զոր յիւրում տեղւոջն ասասցուք։ Սոցա վախըմնամայն երկուք են, և մեծ, և մի և նոյն, զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն . . . . և (        ) նշանօք։

Դարձեալ այս յիշեցեալ Սեթիս թոռն Քալանթար Սահակն առնու յԵրևան զայգի մի ի խօճայ Գրիգորի դուստր Զամանէն ԿԵ թումանի՝ ի ՌԿ թուին Տաճկաց, որ կոչի Ղարաղաշենց այգի։ Յետոյ սոյն Սահակի որդի խօճայ Աբրահամն զսոյն այգիս վախըմ տայ սրբոյ Աթոռոյս ի ՌՉՂ



թուին Տաճկաց յաւուրս Յակովբայ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ հաստատուն տաճկական գրով։ Իսկ այս Աբրահամիս ազգական Սարգիսն (որ տաճկացեալ Սարու - խան կոչեցաւ, զորմէ յիշեցաք ի . . գլուխն,) եթէ վասն ազգական գոլոյն Աբրահամին, և եթէ որով կերպիւ և իցէ դաւ յարուցանէ ընդ Յակովբայ Կաթուղիկոսին վասն այգւոյս այսորիկ. վասն որոյ և Յակոբ Կաթուղիկոսն Լ թուման տուեալ այս Սարու - խանիս, կրկին ղապալայ առնու ի նմանէ ի նոյն թուօջն ՌՉԶ տաճկաց։ Գիտ զայս ղապալայս և զԱբրահամի տուեալ վախըմնամայն, նա և զհին ղապալայն՝ զոր Քեալանթար Սահակն ի Զամանէն առեալ է, յերեսն գրեցեալ ցուցակօքն։ Կողմունք այգւոյս գրին, Նամաթի այգին, Հայրապետի այգին, Եկեղեցին և ի նմին գերեզմանքն, և ճանապարհն, որ է Երևանու վերի եկեղեցւոյ ի վեր կոյս կից այգին, որ այժմ չէն է և տնաւոր։

Եւ յետ եօթն ամի ի ՌՂԳ թուօջն Տաճկաց՝ մինչ Յակոբ Կաթուղիկոսն գնացեալ ի Պօլիս վախճանի անդ, տաճիկ ոմն Երևանցի Միրզա - Մահմատ - Թաղի կոչեցեալ դաւ յարուցանէ ընդ Աթոռոյս վասն այգւոյս այսորիկ։ Վասն որոյ և սրբոյ Աթոռոյս լուսարար և փերակացու Ստեփաննոս վարդապետն ելանէ ընդ նմա ի դատարանն յԵրևան, և հաստատեն զայգին գոլ սրբոյ Աթոռոյս, և զհինգ թուման տան յիշեալ տաճկին, և ի բերանոյն հուճէթ մի առնուն։ Զոր գտցես ցուցակաւն, գրեցեալ ի թուին Տաճկաց ՌՂԳ։

Դարձեալ ունի սուրբ Աթոռս յԵրևան զայգի մի, զոր Աստուածատուր Կաթուղիկոսն է առեալ ձեռամբ Երևանցի Սիմէօն վարդապետին՝ երկու ձեռք աւեր տամըք, մէկ հնձանաւ, և մէկ սառնատամբ, տասն թումանի, ի Ջիմշիտ անուն տաճկէ, որ և Ջիմշիտենց այգի կոչի, ի ՌՃԼԹ թուին Տաճկաց. որոյ սահմանքն են, երկու կողմանքն քուչէ, և երկու կողմանքն վարելահողք, որ է կից Անանիայ առաքելոյ անապատին, և է այժմ աւեր։ Գիտ զղապալայն ցուցակաւն։

Դարձեալ Աստուածատուր Կաթուղիկոսն Համատանցի յԵրևան զերիս հնձանս գնէ երեք թումանի ի Հաճի - իմամ - ղուլի որդի Հաճի - Մահմատքեարիմէն՝ ի Տաճկաց թւին ՌՃԼ։ Զորոյ զղապալայն գտցես ցուցակաւն։ Դարձեալ Երևանցի Աւետիքի որդիք խօճա Թորոսն և խօճա Մանուկն գոլով իւրեանք ի յԱսպահան՝ զմէկ այգին իւրեանց ի յԵրևան տան վախըմ Փիլիպպոս Կաթուղիկոսին, և Փիլիպպոս Կաթուղիկոսն ևս տայ վախըմ սրբոյն Անանիայ առաքելոյ անապատին ի ՌՃԴ թուին Տաճկաց։ Որոյ սահմանքն են, խօճա Թադէոսի և խօճա Մատթէոսի այգին. (զոր ևս էառ Փիլիպպոս Կաթուղիկոսն գրամով, և սոյն անապատիս ետ)։ Սոյն ա-

Նապատի պարիսպն, Հաճիղարի այգին և Կողբան բլուրն. Գիտ զղապալայն ցուցակաւն։

Դարձեալ սոյն Աւետիքի որդիք խօճա Մատթէոսն և խօճա Թաթէոսն զսոյն յիշեալ այգւոյս կից կէս այգի ես ծախեն նոյն Փիլիպպոս Կաթուղիկոսին՝ տասն և հինգ թումանի՝ ի սոյն թուոջս Տաճկաց ՌԾԴ։ Եւ նոյն Կաթուղիկոսն զայս այգիս ևս վախմ տայ նոյն Անանիայ առաքելոյ անապատին։ Որոյ կողմունքն են վերոյիշեալ այգին, Հաճիղարի այգին, և Կողբան բլուրն։ Գիտ զղապալայն ցուցակաւն։

Ապա յետ ԻԶ. ամաց ի ժամանակս Ցակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ տաճիկ ոմն Շահ-ղուլի կոչեցեալ և Ղուչչի խանն դաւ յարուցանէ վասն սոյն այգւոյս թէ իմ է, տեղս ջրաղաց ևս ունէաք մեք, և նախնիքն իմ զՄամոի կոչեցեալ առուն ևս որ (ի Զանգի գետոյն ելանէ, որոյ մէկ կողմն սարի ճանապարհն է և մէկ կողմն սոյն այգիս,) վասն այս այգւոյս և ջրաղացին են հանեալ, զղապալայն ևս ունելով ի ձեռին։ Ապա Ցակոբ Կաթուղիկոսն ձեռամբ վէքիլին իւրոյ ի շարն տարեալ՝ տայ նմա զերկուս թուման դրամս և զմէկ քուրթուկցու չուխայ, և զմէկ գիր առնու ի նմանէ։ Այս լինի ի ՌՁ թուին Տաճկաց։ Գիտ զայս գիրս ցուցակաւն։

Այգի ի Նորագեօղ։

Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի ի Նորագեօղ զայգի մի առնու (որ է երկու տախտակ իւր հնձանովն և մէկ չարտախով,) ի Դամուր-բուլաղցի Քեարիմ-ալի որդի Հասան աղայէն տասն թումանով, ի թուին Տաճկաց ՌՃԻԶ։ Որոյ կողմունքն են, Սահակի այգին, քուչէն, և նոյն Հասանի այգին։ Գիտ զղապալայն ցուցակաւն։ Սորա հին ղապալայն ևս գիտ ցուցակաւն, որ նոյն Հասանն առեալ է ի Քեալբալայ-Փիրուզն ի ՌՃԻԱ թուին Տաճկաց։

Ձորագեղացի Արիստակէսի դուստր Սիրի-խան անուն կին ոմն այրի՝ ի հայրենեաց մնացեալ զայգի մի ի Նորագեօղ (որոյ կողմունքն են, Ձորագեղացի Հաճի Մուհամատ-վէքիլ այգին, Ձորագեղցի Կարապետի այգին, Նորագեղցի Դաւթի այգին, և Երևանցի Խօրայէլի այգին)։ Այլ և զտուն մի բաղչայով ի յԵրևան քաղաքն, որոյ կողմունքն են, քարտաշ Պետրոսի տունն, Զալալենց տունն, Խուպոնց տունն, և ուստա Աղապապի տունն, վախմ տայ սրբոյ Աթոռոյս ի ՌՃԻԴ թուին Տաճկաց, և ի մեր թուոջն ՌՃԿ ի ժամանակս Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսին։ Երկուց վախուպնամայն մի է, զոր դոցես յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Որոյ



բաղչայումն եղեալ տունքն են այսոքիկ. մէկ դիվան1), մէկ բալախանէ2), մէկ [illegible]3), երկու զիրզամբէ4), մէկ աշխանայ5), մէկ մառան, մէկ [illegible]6) և մէկ մարաք։ Այսպէս գրի իվախուպնամայոջն թէ զայսոսիկ վերոյիշեցեալ տունքս հանդերձ ի միջի իւրեանց կահիւքն և ամենայն ընչիւքն՝ զամենայն վախմ եստու սրբոյ Էջմիածնի։ Եւ յետ միոյ ամի ի ՌՃԻԵ թուին տաճկաց, ի յայս Սիրի-խանի ազգէն կին ոմն անուն Համազ, դուստր Ցակոբայ Ձորագեղցւոյ, վախմ տայ զայգի մի ևս սրբոյ Աթոռոյս ի նոյն գեօղն Նորագիւղ, որոյ կողմունքն են, Դամուր-բուլաղցի Հասան աղայի այգին, քուչէն, Երևանցի Խօրայէլի և Նորագեղցի Ցօհանի այգիքն։

Ապա ի յայս Սիրի-խանի և Համազի ազգէն կին ոմն տաճկացեալ անունն Ֆաթմայ, դաւ յարուցեալ ընդ սրբոյ Աթոռոյս, խանին արզ առնէ թէ իմ հայրենի այգիքն Էջմիածնի խալիֆայն զաւթեալ ուտէ, պարտիս առնուլ և տալ ինձ։ Եւ խանն ի շարն հրաւիրէ, և շարն ի մէնջ զվկայս և զհաստատութիւնս խնդրէ. և Աղէքսանդր Կաթուղիկոսն զերկուս վախուպնամայս հանեալ ցուցանէ, մին ի ՌՃԻԴ թուին Տաճկաց գրեցեալ վասն միոյ այգւոյ և միոյ տան, զոր Սիրի-խանն տայ վախմ սրբոյ Աթոռոյս, զոր ի վերդ ասացաք. և միւսն ի ՌՃԻԵ թուին Տաճկաց գրեցեալ վասն միոյ այգւոյ՝ զոր Համազն տայ վախմ սրբոյ Աթոռոյս, զոր ևս ի վերդ ասացաք։ Ապա ի տեսանելն շարին զայսոսիկ հաստատուն վախումնամայս, ի Ֆաթմայէն զվկայս խնդրէ, և նա ոչ գտանէ զվկայս, այլ սուտ ելանէ. վասն որոյ և շարն զհիւճէթ մի գրեալ տայ սրբոյ Աթոռոյս, և զՖաթմայն ի բաց վանէ։ Լինի այս ի ՌՃԻԶ թուին Տաճկաց։ Եւ յետ երկուց ամաց ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ նոյն Ֆաթման ևս դաւ յարուցանէ վասն վերոյիշեալ այգեացն. և Աստուածատուր Կաթուղիկոսն ի հատանել զձայն նորին՝ ի ձեռն Աթոռակալ Վ.րթանէս վարդապետին գիտութեամբ շարին՝ ԺԵ սօմար ցորեան տան Ֆաթմային, և ի գլուխ նոյնոյ վերոյիշեալ հուճէթին կրկին հուճէթ գրէ շարն և տայ Աթոռոյս ի ՌՃԻԸ թուին Տաճկաց։ Գիտ զայս կրկնաբար հուճէթս յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Դարձեալ յառաջ քան զվերոյիշեալ Համազին վախմ տալն սրբոյ Աթոռոյս զայդ այգիդ՝ որ ի վերդ ասացաւ, սոյն Ֆաթմայ կինս ընդ Համազին դաւ յարուցանէ վասն երկուց այգեաց. (որոց մին այդ է զոր սրբոյ Աթոռոյս տայ Համազն)։ Որ և խանին արզ արարեալ [illegible]7) հանէ և զՀամազն ի շարն հրաւիրէ։ Եւ շարն ի Ֆաթմայէն զվկայս խնդրէ, և նա թէպէտ բերէ զքանի վկայս, բայց սուտ ելա-

1) Դահլիճ, հովանոց:— 2) Վերնասենեակ:— 3) Արկղախուց կամ նախասենեակ:— 4) Ներքնախուց կամ սառնատուն:— 5) Խոհանոց:— 6) ճախանոց, ծիսատան: — 7) Կատարելաթուղթ կամ հրաման:

նեն։ Վասն որոյ և շարն զՓաթմային ի բաց վարէ, և զհուճէթ մի գրեալ տայ Համազին, ի ՌՃԻԳ թուին Տաճկաց։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Քանզի ի վախմ տալն Համազին զայդ այգին սրբոյ Աթոռոյս, տայ և զայս հուճէթս ընդ նմին։

Դարձեալ ի ՌՃԼԱ թուին տաճկաց, վասն սոյն Համազի տուեալ այգւոյս ումն Հաճի-բէկլու Մահմատ Ղասում-բէկ անուն տաճիկ՝ (թէ ազգական է լեալ նոյն Փաթմային, և թէ ո՞րպէս, չեղև յայտնի մեզ,) դատ յարուցանէ ընդ Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ, ասելով թէ՝ մեր է այդ այգիդ։ Ապա Աստուածատուր Կաթուղիկոսն ի ձեռն Աթոռակալ Վրդանէս վարդապետին յիսուն ոսկի տայ գնութեամբ շարին նորին Մահմատ Ղասում բէկին, և ի բերանոյ նորին զհաստատուն հուճէթ մի առնու ի շարէն։ Գիտ զայս հուճէթս յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Ցորում անուն այգւոյս այսորիկ քեօշքէ-հավուզ-բաղ գրի։ Դարձեալ ի յերկիրն Վրացտանու, ի գեօղն Շուշաւէր, Ջհանշիրի որդիք տանուտէր Թահմազն և Բայրամն՝ և Թահմազի որդիք Ռէյմազն, Բայինդուրն և Զալն, ի նոյն գեօղն զմի մեծ այգի տան յիշատակ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին, շէն և պտղաւէտ ծառօք և այլովք լի, ի ՌՃԻԷ թուոջն մերում։ Գիտ զվախմնամայն Վրացերէն գրեցեալ, յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Այգի ի Զորագեօղ:

Ի գեօղս այս զայգի մի տայ սրբոյ Աթոռոյս յիշատակ խօճայ Սէթի որդի խօճայ Յակոբըն (զոր ի վերդ բազմիցս յիշեալ եմ,) ընդ Եղւարդայ և ընդ Նորագեղու մէջքիցն։ Որպէս ի վերդ ասացաք ի ճառս Երևանու այգեացն. այգին կոչի Թորոսենց այգի, և . . . որոյ կողմունքն են, առուն որ ի Զանկի գետոյն ելանէ, և ի նոյն գիւղի այգիքն։ Սորա վախմնամայն մի է ընդ վերոյիշեալ գեօղօրէից մէջքիցն, և երկու հատ։ Զորս գտցես ցուցակօքն։

Դարձեալ ի Դաւրէժ քաղաքն այգի մի զոյր սրբոյ Աթոռոյս, որ ի վաղուց հետէ ամայի և անշէն անկեալ զոյր. զոր այս և այն արտատեղ աբարեալ սերմն ցանէին, և մեզ անօգուտ. ի պղտորմանէ ժամանակին ձեռք մեր ոչ հասանէին կամ ի նորոգել և կամ ի տիրել։ Ապա ի ժամանակս մեր Միրզա-շէֆի ումն անուն մեծ իշխան տաճիկ ի Դաւրէժ՝ կից նոյն այգւոյն մերոյ զայգի ունելով՝ կամեցաւ զի պարսպաւ պատիցէ զայգին իւր, բայց ճանապարհք և անցք նորին էր մեր այգետեղն, ուստի գրեաց մեզ թէ՝ որովհետև դուք տիրութիւն ոչ առնէք այգւոյն ձերոյ, կամ ծախեցէք ինձ, և կամ իճարով տուք, զի ընդ այգւոյն իմոյ պարսպեալ նորոգեցից. և մեր



ոչ կամելով ծախել՝ ետուք իճարայ, որ ի տարին հարիւր լիտր Թարվիզու ցորեան տայցէ Սրբոյ Աթոռոյս, և զայգին նորոգեալ ընդ այգւոյն իւրոյ շէն պահեսցէ։ Բայց ի միջոցիս՝ յորում նա մեզ գրէր և մեք նմա, Միրզա-շէֆին անկեալ մեռաւ։ Վասն որոյ նորին որդի Միրզա-Ռաֆին հուճէթ մի գրեալ և կնքեալ ինքն՝ և տեղւոյ Շէխ-իսլամին ևս կնքեցուցեալ առաքէ առ մեզ, և հուճէթ մի ևս մեք գրեալ առաքեցաք առ նա այսու պայմանաւ թէ՝ ի տարին սրբոյ Աթոռոյս Ճ լիտր ցորեան տայցէ, և զայգին մեր ի շինութեան պահելով վայելեսցէ՝ մինչև ի ՂԹ տարին։ Գիտ զայս հուճէթս, և Միրզա-շէֆու և Միրզա-Ռաֆու բարեւագրեանքն յերեսն գրեցեալ ցուցակօքն, որք գրին ի Տաճկաց թուին ՌՃՁ, և ի մեր ՌՄԺԵ թուոջն, և երկու գիր ևս Հայերէն ի պարոն Սաֆարէն Թիֆլիզեցւոյ գրեցեալք վասն այնորիկ, որոյ միջնորդութեամբն եղև այս գործ։

Դարձեալ զմեծ այգի մի ևս ի Դուխուրղան գեօղն ունի սուրբ Աթոռս, որ է ի կողմն Դաւրիժու։ Զորոյ զորպէսն այսպէս գիտեա՛։ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն նախապէս առնու սոյն այգւոյս զբաժին մի ի Նաւրուզի որդի Մահմատ-ալիէն իւր վէքիլ Գեօլասարի ձեռօքն՝ չորս թումանի։ Որոյ սահմանքն գրին, ճանապարհն և Միրզա Մուհամմատի այգին։ Ցետոյ զեօթն հազար տասն շահի ևս տայ, որ լինի չորս թուման եօթն հազար տասն շահի։ Զորոյ զղաբալայն գիտ ցուցակաւն, որ գրի ի ՌԿԵ թուին Տաճկաց։

Դարձեալ առնու զբաժին այգի մի ևս կից սոյն այգւոյս յԱհմատի որդի Մահմատէն՝ եօթն թուման մէկ հազար հինգ շահու, անուամբ վերոյիշեալ Գեօլասարին։ Որոյ կողմունքն գրին, նմանապէս Միրզա-մահմատի այգին և ճանապարհն, ի Տաճկաց թուին ՌԿԷ, զորոյ զղապալայն ևս գիտ ցուցակաւն։

Եւ դարձեալ ի սոյն թուոջս նոյն Յակոբ Կաթուղիկոսն առնու ի սոյն տեղւոջս զմեծ բաժին այգի մի ևս ի Թարվիզեցի Ահմատի որդի Մահմատէն տասն և չորս թուման երկու հազար և տասն շահու, որոյ կողմունքն ևս գրին Միրզա Մահմատի այգին և ճանապարհն։ Զորոյ զղապալայն ևս գիտ ցուցակաւն յերեսն գրեցեալ։ Եւ ապա զերեսինս զայսոսիկ միացուցեալ՝ շինէ զմեծ այգի մի, որ կայ այժմ շէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս։

Դարձեալ ի մերում ժամանակի, ի ՌՄԺԶ թուոջն մերում Թիֆլիզեցի Լօյինենց Բէժանի հանգուցեալ Սիմէօնի կողակից Խանումն գոլով ինքն այրի և անզաւակ՝ զիւր մէկ այգետեղն՝ որ ի Թիֆլիզ ի Տափիթաղ կոչեցեալ մահլէն՝ ետ յիշատակ սրբոյ Աթոռոյս՝ միջնորդութեամբ նորին քաղաքացի Տէր Պետրոսին (զոր բանադրեալ բերեալ էաք ի սուրբ

Աժդոս)։ Գի՛ս սորին զերկուս վախուղնամայսն Վրացերէն գրեալ, և յետեան Հայերէն գրեցեալք։

## ԳԼ. ԺԻ.

### Ցուցումն գոյութեան ջրաղացի, գինետան, և հիւրատանց, թէ ո՞ր և ո՛րպէս, և յո՞րում ժամանակի։

Ջրաղացք ի մեր գեօղս։

Ի գիւղս մեր ունեցեալ է սուրբ Աժդոս ի վաղուց հետէ զերկուս ջրաղացս՝ մին միջի ջրաղացն (որ է ի վերի Իւղբաշոնց և Սատախլու կոչեցեալ ջրաղացաց մէջն), յորոյ վերայ զսուրբս շինեցուցաք, որ է մէկ տուն և ի մէջն երկու ջրաղաց։ Եւ սոյն Սատախլու կոչեցեալ ջրաղացս քարաշէն՝ որ է հուպ գեօղիս մերոյ ի հիւսիսակողմն, որ է մէկ տուն և իմէջն մէկ ջրաղաց, Բ արարաք ի ՌՄՃԲ Թուոջս։

Երրորդ ջրաղացն՝ որ է ի հարաւակողմն՝ ի հուպ Աժդոյս ի վերայ Քանքանիս, զոր Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն է շինեալ, (ի բերելն զջուր Քանքանիս՝ որ ընդ մէջ գիւղիս և Աժդոյս անցանէ), որ է մէկ տուն, և ի մէջն մէկ ջրաղաց։

Չորրորդ վերի ջրաղացս՝ որ Իւղբաշոնց կոչի։ Իւղբաշիս այս, (որոյ անունն է...) Նահապետ Կաթուղիկոսին չրաղն, և որպէս թէ վէքիլ և գործակալն է լեալ ի դրունս Տաճկաց գնացող աշխարհական մարդ և մնացեալ, որ և ի խնամոց նոյնոյ Կաթուղիկոսին զօրացեալ շինէ զտունս ի գեօղումս (որ ևս է սրբոյ Աժդոյս այժմ, զորմէ յետոյ ճառեսցուք)։ Այլ և շինեալ է զայս ջրաղացս, որ է ի մէջ միում տան երեք ջրաղաց, ի վերին ծայր գեղջս ի հիւսիսակողմն, ի ներքոյ Մոլլատուրսուն կոչեցեալ գեօղին։ Յետոյ ի մեռանել Իւղբաշին՝ զսւթէ սուրբ Աժդոս իբր զհոգեբաժին նորա։ Յետոյ ի ներհակել Ջուղայեցւոց ընդ Նահապետ Կաթուղիկոսին, և ի գալն Սեփաննոս վարդապետին Կաթուղիկոսական անուամբ ի վերայ Նահապետ Կաթուղիկոսին, և ի յայսպիսութեան միջոցիս, վերստին ի յինքեանս գրաւեն որդիք և ազգականք Իւղբաշու զայս ջրաղացս։ Ապա ի գալ Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ և ի խաղաղանալ միջոցին, վերստին զտասն թուման որպէս թէ ողորմութիւն տայ Աղէքսանդր Կաթուղիկոսն Իւղբաշու որդւոցն և ազգականացն՝ և առնու զայս ջրաղացս։ Որ և յայնմ՝ օրէ լինի սրբոյ Աժդոյս մինչև ցայսօր։ Գի՛ս զՀայերէն ղապալայն, որ գրի ի մեր ՌՃԿԲ Թուոջն, (յորում Նորք մի ևս գրի գոլ սրբոյ Աժդոյս, որ է կտոր մի այգի, որ է այժմ՝ ի ձեռս վէքիլ Այ-



վազին և Ղազարին։ Քանզի ի յայնմ ժամանակի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի պարսպելն զմեծ Ղուի այգին մեր, զայս Նորք կոչեցեալ այգիս տուեալ է Գորքենց, և ի նոցանէ առեալ է զայս կտոր այգին, որ է այժմ ի մէջ Ղուի այգւոյն մերոյ և կոչի Գորքենց փայ. և այս ջրաղացս ի յոլով ժամանակս ամայի և անշէն էր մնացեալ, յետոյ ի ՌՄԺԵ Թուոջս մերում մեք վերստին շինեցաք, որ է մէկ տուն, յորում միջի երկու ջրաղաց)։

Հինգերրորդ, մօտ գեօղիս մերոյ ի յարևմտակողմն, կից մերոյ գնգին ջաղացն, որ է մէկ տուն, և ի մէջն մէկ ջրաղաց, զոր Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի շինեաց ձեռամբ իւր. Գործակալ Յօշականցի Յակոբ վարդապետին, ի շինելն զգինգն՝ ի Թուին մերոյ ի ՌՃՂԷ։

Որք եղեն ի գեղջս մերում տունքն հինգ. և յորս միջի եղեալ ջրաղացքն եօթն, որք են շէնք և ընդ իշխանութեամբ սրբոյ Աժդոյս։

Իսկ զջրաղաց մի ևս ի սոյն գեօղս ի Տէր Մկրտչի որդւոց Մեսրոպէն, ի Սահակէն, ի Տէր Փիլիպպոսէն, և ի Սարգսէն առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի ՌՃԾԹ Թուոջն մերում, որ կոչի Մեսրոպենց ջրաղաց, որ է ի վայր գիւղիս յարևմտակողմն հանդէպ Ալերէկլու գիւղին, որ է անշէն և ամայի ի վաղուց հետէ վասն հեռաւորութեանն ի ջրոյ։ Գի՛ս զղապալայն Հայերէն գրեցեալ։

Ջրաղացք ի Յօշական։

Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի ի Յօշական գեօղս Իփրումենց Առաքելի որդւոց Պետրոսէն և Հէմինէն առնու զվեց ջրաղացս չորս թուման և կէսոյ, ի ՌՃԳ Թուին Տաճկաց։ Ջրաղացքն ի Գետառումն են։ Գի՛ս զղապալայն յերեան գրեցեալ ցուցակաւն։

Դարձեալ Աստուածատուր Կաթուղիկոսն Համատանցի ի ՌՃԼԱ և ի ՌՃԼԴ Թիւս Տաճկաց՝ ի գեօղս յայս յԵրևանցի խօճա Փանոսենց խօճա Մոլխիսէն առնու զլնն այգիս և զտասն երկու ջրաղացս՝ եօթանասուն թումանով. և ի Սհաթլուեցի հաճի Մահմատ Հիւսէին Քեալանթարէն և ի Վէզիրի եղբայր Ալի-ղուլի բէգէն առնու զքսան այգիս և զհինգ ջրաղացըս՝ յիսուն և հինգ թումանով։ Զորոց զղապալայսն գտցես ցուցակօքն։ Զսոցա որպէսն տեսցես ի ճառս Յօշականու այգեացն։

Դարձեալ ի ժամանակս Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ՝ ի գեօղս յայս կին մի այրի՝ որ կոչիւր Գիւլի՝ զջրաղաց մի ունէր ի մէջ ձորոյն մերձ կամրջին ի կողմն, որոյ ի մեռանելն՝ եսուն զջրաղացն զայն սրբոյ Աժդոյս իբր հոգեբաժին, որ կոչի Գիւլենց ջրաղաց։

Մէկ ջրաղացի տեղ և մէկ այգւոյ տեղ Տէր Հայրապետի դուստր Կեօքլուն ի Ցօշական ծախէ սրբոյ Աթոռոյս ձեռամբ վէքիլ Դաւթին՝ վեց հազար դեանի՝ ի ՌԺԳ թուին Տաճկաց։ Գիր զղապալըյն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Ջրաղաց ի Կաւակերտ եւ ի Գեօկգումբեթ:

Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի յայս գեօղս զերկուս ջրաղացս առնու ձեռամբ տեղապահին իւրոյ Միքայէլ վարդապետին՝ Գ թումանով՝ ի Կաւակերտցի Ցօհանի որդի Աւագէն ի ՌՃԾԳ թուին Տաճկաց. որոյ կողմունքն են Զանկու գետն, Աւլեայի ճանապարհն և ջրաղացն, և սրբոյ Աթոռոյ գինեն։ Գիր զղապալայն ցուցակաւն։

Ջրաղաց ի յԵրեւան եւ ի Զորագեղ սրբոյ Աթոռոյ:

Դարձեալ յԵրևանցի խօճայ Սէթի որդի Ցակոբջանն բարեպաշտ (զոր բազմիցս յիշեալ եմք ի ճառս Նորագեղու միաբանութեանն ի ԺԳ. գլուխն, և ի ճառս յԵրևանու այգեացն ի ԺԶ գլուխն, և յայլս տեղիս Նորագեղու և ընդ Եղուարդայ մ․քիցն,) ջրաղաց մի ևս տայ սրբոյ Աթոռոյս ի յիշատակ ի Զորագեօղ, որ Գառնուկենց ջրաղաց ասի։ Որոյ կողմունքն են ջրաղացաց առուն, Ղազարի ջրաղացն, և ճանապարհն։ Զորոյ զղաբալայն գիր, որք են երկուք՝ ի ՌԿԹ թուին Տաճկաց գրեցեալք, և յերեսն գրեցեալք ցուցակօքն։

Դարձեալ սոյն յիշեցեալ Սէթի թոռն Սահակ Քալանթարն՝ ընդ Եայճի և ընդ Ամիրի գեօղօրէից մ․քիցն (որպէս ցուցաւ ի ճառս Նոյն գեօղօրէիցն ի ԺԳ գլուխն) ջրաղաց մի ևս ծախէ ի սոյն գեօղս Ջուղայեցի Ցակոբ Կաթուղիկոսին ի ՌՀԱ թուին Տաճկաց. որոյ կողմունքն են Զանկի գետն, ջրաղացի առուն, և Ցօհանիսի և Գրիգորի ջրաղացքն։ Գիր զմեծ ղաբալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Երևանցի խօճայ Գրիգորի դստերք Մարգարիտ և Ցօղիտայն ի Զորագեղ Դ դանկն ջրաղացի միոյ (որ լեալ է իւրեանց բաժին) վախմ տան Անանիայ առաքելոյ անապատին որ յԵրևան՝ ձեռամբ Տեառն Փիլիպպոս Կաթուղիկոսին ի ՌԾԴ թուին Տաճկաց։ Գիր զվախմնամայն յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Սորա մէկ մեծ սաւատ ևս զոյ Շըխ-Իսլամի կնքով, զոր ևս գիր ցուցակաւն։ Որոյ կողմունքն են Ալիբէկի և խօճայ Եադուլի ջրաղացքն, ճանապարհն և Բ դանկն սոյնոյ ջրաղացիս։ Զոր ևս առնու սոյն Փիլիպպոս Կաթուղիկոս ի Շահզաման դստերէ սոյն յիշեալ Գրիգորիս ի սոյն թուոջս գրամով, և տայ Նոյնոյ Անանիայ առաքելոյ անապատին վախմն, որով լրանայ վեց դանկ ջրաղացին։ Գիր զղապալայն՝ զոր



վասն Բ դանկին ի Շահզամանէն առնու Փիլիպպոս Կաթուղիկոսն և ըզվախմնամայն՝ որով վախմ տայ Նոյնոյ անապատին, (գիր) յերեսն գրեցեալ ցուցակօքն։ Այլ և սոյն երանելիս զջրաղաց մի ևս տայ յիշատակ սոյնոյ անապատիս ի Զորագեօղ ի Ներքոյ բերդին, որոյ կողմունքն են, Զանգի գետն, Նորագաւթայ առուն, ճանապարհն և բերդն, ի Նոյն ՌԾԴ թուոջն Տաճկաց։ Այս ջրաղացիս և այն երկու դանկին՝ որ ի վերդ յիշեցաւ, զորս յիշատակ տայ Փիլիպպոս Կաթուղիկոսն Անանիայ առաքելոյն, մի է վախմնամայն, որպէս ցուցանէ քեզ յերեսն գրեցեալ ցուցակն։ . .

Դինգ սրբոյ Աթոռոյ ի մեր գեօղս:

Ղազար Կաթուղիկոսն Ջահկեցի ի յայս գեօղ ի Բարի որդի Բուդաղէն զերկու ջրաղացս (որք լինին ի միում տան) առնու՝ հինգ թումանով, և քակէ զայնս, և շինէ դինկ և գրգրայ, որ կայ այժմ չէն և ընդ ձեռամբ Աթոռոյս։ Որոյ կողմունքն գրին Խաչատրի և Մալխասի տներն, առուն, և մեր Սատախլուի ջրաղացն, ի Տաճկաց թուին ՌՃԿԳ։ Գիր զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն, որ է մեր գեօղիս կից դինկն ի յարևմտակոյս։ Որոյ կիցն զջրաղաց մի ևս ունիմք։

Դարձեալ Ջուղայեցի Ցակոբ Կաթուղիկոսն յորժամ հանէ զմեր Ներքին քանքանն՝ որ է ի վայր փոսն ի վերայ Նորա զդինգ մի շինէ, որ այժմ աւեր է դինգն և Քանքանն։ Այս դնգիս քարինքն Երևանու Համիֆ Ահմատ խան կոչեցեալ տաճիկն քարշեալ տանի, և իւրեան դինգ շինէ յաւուրս Շամախեցի Ցակովբ Կաթուղիկոսին։

Դինգ սրբոյ Աթոռոյ ի Քաղարայ գեօղն:

Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի սոյն գեօղս առնու զերկուս ջրաղացատեղս կից իրերաց ի Նոյն գեօղացի Առաքելի որդի Սարգսէն և ի Պետրոսի որդի Ցովհաննիսէն ի ձեռն վէքիլ Մատթէոսին՝ երեք թումանով. որոյ կողմունքն են Նոյն Ցովհաննիսի վարելահողն, Ազարիայի հողն և առուն. զորոյ զղապալայն գիր ցուցակաւն, որ գրի ի թիւն Տաճկաց ի ՌՃԺԹ։ Եւ յետոյ զնոյնս դինգ շինէ երկու մլաւոր։ Բայց այժմ աւեր է ի վաղուց հետէ։

Դարձեալ ի սոյն գեօղս Դալուլար-Իմանի բէգի որդի Ղաճար-Մահմատ բէգն առնու զերկուս ջրաղացս կից իրերաց ի սոյն գեօղացի Զաքարիայի որդի Տէր Սարգսէն՝ ութն թումանով, ի Տաճկաց ՌՃԻԶ թիւն։ Եւ ի սոյն թուոջս Նոյն Տաճիկն ծախէ զնոյն ջրաղացն Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսին՝ տասն թումանի։ Եւ ի գլուխ իւրոյ ղապալային վերստին ղապալայ գրեցուցեալ և կնքեալ տայ մեզ. Զայս ղապալայս գիր յերեսն

գրեցեալ ցուցակաւն։ Որոյ կողմունքն են [illegible] 1), Հաֆաղաթի ջրաղացն, ջրաղացի առուն և ճանապարհն։ Զայսոսիկ երկուս ջրաղացս ես քակեալ գլխոց շինել տայ նոյն Աղէքսանդր Կաթուղիկոսն՝ երկու մլաւոր, որ կայ այժմ շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս։

Իսկ ի մերումս ժամանակի ի ՌՄԺԳ թուոջն՝ պիղծ Խաչափարաղցի Տաճիկ ոմն՝ որ Շարաւ-ալի կոչիւր՝ գնացեալ արզ արարեալ մեր Հիւնքեարին-ալի խանին թէ՝ Քալարու Տէր Սարգսի ջրաղացներն մեր է, և մեք եմք առեալ զնոսա, այժմ Խալիֆայն զաւթեալ գլխոց է շինեալ։ Եւ խանն ես ի գլուխ նոյնոյ արզային թալըայ արարեալ ի շարն հրաւիրեաց զմեզ։ Եւ մեք վերոյգրեցեալ ղապալայիւդ խոտեցաք զնոսա և սուտ հանաք։ Վասն որոյ և շարն վերստին հուճէթ՝ և խանն վերստին թալըայ տան մեզ թէ՝ յիրաւի գլխոցն այն Խալիֆայինն է։ Եւ զարզայն ես զոր տուեալ էին խանին, գնա ես առաք ի ձեռաց Նոցա. զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն։

Դինք սրբոյ Աթոռոյս ի Կաւակերտ կամ ի Գեօկգումբէթ։

Ի Կաւակերտ երկու եղբարք Տաճիկք Ղաճար-ղալուլար Մահմատալի բէկ և Մահմատ-զուլի բէկ անուն՝ աղա զոլով նոյնոյ գիւղին՝ զկէս գլխոց են ունեցեալ ի նոյն գեօղն, որոյ կէսն ես Գեօկգումբէթցի Մկրտչին է լեալ, և այս Մկրտչի որդիք Տէր Առիստակէսն, Յովհաննէսն և Արզում բէկն զկէս գնզին իւրեանց ծախեն Դալուլար Մահմատ աղայ բէկի որդի Ղաճար Բայրամին հինգ թումանի ի ՌՃԳ թուին Տաճկաց։ Գիտ զղապալայն ցուցակաւն։

Յետոյ ի տիրելն Օսմանցւոց երկրիս մերում՝ առնուն ի Տաճկացս այտեղիկ զայս գլխոցս երկու բաժինն ես Օսմանցիքն և ձրի 2) առնեն։ Յետոյ մելիք Սահակն Երևանու առնու ի յՕսմանցւոց միրիէն ղրամով. ժամանակ ինչ ինքն ուտէ և յետոյ տայ սրբոյ Աթոռոյս յիշատակ ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին։ Որոյ սահմանքն են Զանգու գետն, առուն և հանտն. այս է մեր գլխոցն՝ որ է ի Կաւակերտ, զոր ես ունիմք այժմ։ Վասն սորա հին ղապալայ մի գոյ առ մեզ, ի ՌՃԳ թուոջն Տաճկաց գրեցեալ, որպէս ի վերդ յիշեցաւ։ Գիտ ցուցակաւն։

Ջիրաճանք սրբոյ Աթոռոյս ի մեր գեօղս։

Ի յայս մեր գեօղս և կից սրբոյ Աթոռոյս, (որ այժմ ի շինել պարսպին անկաւ ի ներս,) շինէ զերկուս ձիթահանքս թրծեալ աղիւսով կից երեւ-

1) Տափարակն։ — 2) Յարքունիս գրաւել։



րաց՝ Փիլիպպոս Կաթուղիկոսն. որոց մինն փլաւ ի մեր ժամանակս, վերստին ի փայտից շինեցաք ի ՌՄԺԶ թուոջն մերում. որք կան այժմ շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս։

Դոյշն-խանոյ մի ես (որ է քունձթի ձիթահանք) ունի սուրբ Աթոռս ի գեօղս մեր՝ կից սրբոյ Աթոռոյս՝ ի մէջ բարտանոցային մերոյ. որ և է շէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս։

Դարձեալ ի հարաւակողմն սրբոյ Աթոռոյս և կից ի վերայ Քանքանիս մերոյ ջրաղացին շինեաց տեղապահն մեր Մկրտիչ վարդապետն նորապէս զչըրխատուն մի (այս ինքն բամբակահան), որ է մի տուն, և ի միջին երկու չըրեխ, որք ջրով քանքանին մերոյ հանեն զբամբակս, ի ՌՄԺԶ թուոջն մերում, որ է շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս։

## ԳԼ. ԺԸ.

Յորում ցուցանէն սրբոյ Աթոռոյս ջուրքն, առուքն, և ծովակն, և որոյ սեփականութիւնքն, ընդ յորմէ հետէ, ուր և որպէս, և այլք այսպիսիք։

Ջուրք սրբոյ Աթոռոյս որք ի յայս գեօղս մեր։

Ի բազում ուրեք ասացաւ յառաջ թէ՝ ի յանկանելն երկրիս մերոյ ընդ իշխանութեամբ այլազգեաց, և ի փոփոխել Հայրապետութեան Աթոռոյս ի Սիս, անհետացան ամենայն բարեկարգութիւնք և վայելչութիւնք Աթոռոյս, և ինքն ի յամայութեան եկաց ի բազում ժամանակս։ Ապա ի վերանորոգիլն վերստին ողորմութեամբն Աստուծոյ՝ Նստելն Հայրապետին ի սմա, ի ժամանակս Գրիգորին Մակուեցւոյ, ես առաւել ի յաջորդելն Մովսէսի և Փիլիպպոսի երջանիկ Կաթուղիկոսացն՝ ի ձեռն որոց սկսաւ (թէպէտ ոչ որպէս ի ժամանակս մերոց թագաւորաց) ստանալ զառաջինն կարգ։

Արդ որպէս վասն այլոց ունեցեալոցն ասացաւ, նոյնպէս և վասն ջրոցն իմա։ Քանզի յառաջնումն թէ որպիսաբար է լեալ, ոչ է յայտնի. իսկ ի յաջորդելն Տեառն Փիլիպպոսի երջանկին զՀայրապետութիւն սրբոյ Աթոռոյս, յետ բազմաց բարերարութեանցն՝ առնէ սոյն երանելիս և զայս մեծ և գովութեանց արժանի գործս։ Քանզի ի ծոցոյն լեռնէս մերմէ Աբարանու յայն կուսէ երեսէն ջուր մի ելեալ (մինչև ութն ջրաղացի բարգածու) գնացեալ լինիւր ի Շիրակայ վայրն, և անտի հոսիւր ի գետն Ախուրեան, որ Տաճկերէն ասիւր Գեօզալ-դալայի ջուր։ Այս երանելիս մեծաւ աշխատութեամբ և դրամածախութեամբ բերեալ զայն ջուրն արկանէ յայսկոյս լերինն՝ և խառնէ ի գետս մեր Քարձաղ. որով ոռոգանի դաշտս մեր։ Եւ յետ այսպէս առնելոյն, ապա արզայ գրէ առ Շահապաղն

երկրորդ, թէ երկիրս այս ի ջրոյ զպակասութիւնս ունէր, եւ յայս ինչ լեառնէ զայսքան ջուր (որ յօտար թագաւորութիւն գնայր) բերեալ խառնեցի ի ջուրն դաշտիս. որով մեծ օգտութիւն եղև երկրիս սերմանցն և արքունական հասից. սակայն մեզ ոչինչ օգուտ. զի երկրացիքս զաւթեալ ըզջուր գետոյն տանին ի հողս իւրեանց աւելորդաբար, և մեզ ոչ տան ըստ բաւականին։ Եւ զայս այսպիսիս գրէ հանդերձ այլովք բարերարութեանցքըն իւրովք։ Գրէ և խանն երկրիս, որ Խոսրով կոչիւր, վկայելով զբարերարութեանց երանելոյն և գրեցելոցն նորին։ Ապա և Շահն գրէ յատկապէս զՌաղամ մի ի վերայ երկրիս օաստիկ հրամանաւ՝ թէ ջուր Քարձաղ գետոյդ որքան և իցէ՝ յերկուս բաժանեսցի հաւասարապէս, մին բաժինն միւս գեղօրէիցն դաշտիդ, և միւս բաժինն Էջմիածնի Աթոռոյն և իւր գեղջն լիցի։ Մի՛ ոք իշխեսցէ այսուհետև եղանել յայսմանէ կանոնէ։ Եւ ի գալ հրամանիս այսորիկ, երկրիս խանն յայնմ ժամանակին (որ Խոսրով կոչիւր) և այլք մեծամեծք Տաճիկք և Հայք հանդերձ Փիլիպպոս Կաթուղիկոսիւն եկեալ գնան ի բանտն գետոյս (ուր բաժանին ջուրք դաշտիս, որ է յաւարտն Ցօշականու ձորոյն և մուտն նոյնոյ գետոյն ի լայնանիստ դաշտն Վաղարշապատու, ի վեր կոյս Հաճի-ղարայ կոչեցեալ գեղջն, որ և այժմ ասի Բանտ) և անդ մեծամեծ արձանաքարիւ կալեալ զառաջս գետոյն, զբոլոր ջուր նորին յերկուս բաժանեն, զմի բաժինն տան մեր դաշտիս եղելոց Կարբու նահիայ կոչեցելոց գեօղօրէիցն, որ ի յարևմտս հակեալ ընդ հասարակ գետադնաց շաւիղն ընթանայ, և զմիւս բաժինն որ է ի յարևելակոյս իվեր հակեալ յատուկ ճանապարհաւ գայ սրբոյ Աթոռոյս և սորին կից գեղջս տան։ Այս կանոն յայնմ՝ օրէ տարածեալ հռչակի յերկրոջս Երևանու, և արձանանայ յամենեսին ի Հայս և ի Տաճիկս, և է այսպէս մինչև ցայսօր, մինչ զի՝ եթէ կանանց և մանկանց երկրիս եւ հարցանիցես զորպիսութենէ ջրոյս այսմիկ, պատասխանեն թէ՝ կէսն Էջմիածնի է և կէսն երկրիս։ (Բայց շահաւոր և օգտակար ռաղամս այս՝ զոր գրէ Շահապասն, որպէս ասացաք, ոչ գտեմ առ խա՞նն մնայ և ոչ տան Աթոռոյս, և այնպէս անհետանայ, թէ յԱթոռո՞ջս կորնչի։ Զի մեք ոչ տեսաք, թէպէտ շատ որոնեցաք և խնդրեցաք։ Ո՞հ, Ո՞հ, արդելաւ գրիչս, և հարկեաց կարճել աստանօր։ Ռաղամն այս գրի ի ՌԿ թուին Տաճկաց)։ Ոըք թէպէտ երբեմն երբեմն տեարք և բնակիչք Տաճիկքն միւս գեօղօրէիցն մաքառեալ ընդ մեզ դաւ յարուցանեն՝ կամելով աւելորդով տանել զջուր ի կողմն իւրեանց, սակայն ի հաստատութենէ ասացելոյ կանոնիս ոչ կարեն այնքան համարձակել և յայտնապէս մաքառել։ Որպէս ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԽԱ թուոջն Տաճկաց, ի միւս գեղօրէիցն ոմանք կամելով աւելորդով տանել զջուրն,



մեր Էջմիածնի գեօղացիքս ընդ վէքիլն Աթոռոյս արզ գրեն և տան Մեհրալի խանին, (որ յայնժամ նստիւր յԵրևան խան,) թէ մենք ի բնէ ռաղամ ունիմք, և ամենեքեան գիտեն՝ որ այս գետոյս կէսն մեր է, և կէսն միւս գիւղօրէիցն, այժմ միւս գեօղացիքն կամին աւելի տանել զջուրն։ Եւ յետկոյս արզային եւս հինգ երևելի տաճիկք Միրզա-Սեֆի ղուլի, Մուհամատ, Սատղ, Հասան և Մելիք-Աֆթանդիլ գրեն զվկայութիւն, և կնքեն թէ՝ մեք գիտեմք և վկայեմք՝ որ յիրաւի կէս գետոյն գեօղօրէիցն է և կէսն Էջմիածնի։ Ապա խանն ի գլուխ արզային գրէ հրաման և կնքէ, թէ ոչ ոք ունի հրաման ի ջուր Էջմիածնի ձեռնամխել։

Սոյնպէս և ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ ի ՌՃԼԴ թուին Տաճկաց առնեն այսպէս լրբութիւն միւս գեօղօրայքն, և նոյնպէս մեր գեօղացիքս ընդ վէքիլն սրբոյ Աթոռոյս արզա գրեալ տան Ալահ-ղուլի խանին (որ յայնժամ խան լինի յԵրևան) ըստ առաջնոյ արզային։ Նոյնպէս և յետկոյս արզային Հաճի-Հիւսէին անուն ոմն երևելի տաճիկ գրէ վկայութիւն և կնքէ՝ թէ ես եօթն տարի միրապութիւն 1) եմ արարեալ, այն ջուրն գիտեմ որ ի բնէ կէսն Էջմիածնի և կէսն միւս գեօղօրէից է։ Նմանապէս և խանն ի գլուխ արզային գրէ հրաման և կնքէ ըստ առաջնոյն։

Եւ դարձեալ ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Պօլսեցւոյ ի ՌՄԴ թուոջն մերում, և ի ՌՃԿԸ թուին տաճկաց յարուցին զայս վէճ նոյն գեօղացիքն։ Վասն որոյ և յիշեալ Կաթուղիկոսն արզ գրէ Ազատ խանին (որ յայնմ ժամանակին թագաւորապէս իշխէր յարևելեան երկրիս զօրմէ և ի ԾԴ գլուխն եւս խօսեցաք), և նոյն Ազատ խանն յատկապէս ռաղամ գրէ ի վերայ երկրիս խանին՝ թէ որպէս որ ի բնէ կանոն է առաջին թագաւորաց հրամանաւն, որոց ռաղամքն եւ գոն յԷջմիածին, որք հրամայեալ են՝ զի կէս գետոյդ Էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղօրէիցն, նոյնպէս և դու պահեա զայն կանոն, և մի՛ թողուր ումեք ձեռնամուխ լինել ի ջուրս Էջմիածնի։ Արդ զայսոսիկ երիս թուղթս՝ զորս գըրեցաք (յորս ի մէջ երիցն եւս գրեն և վկայեն թէ՝ կէս ջրոյն Էջմիածնի է և ի թագաւորաց ռաղամ եւս ունին)։ Գտի ի մի կցեալ և միացուցեալ յերեսն գրեցեալ ցուցակաւն, և զգուշութեամբ պահեա։ Զի շատ պիտանի է վասն ջրոյդ։

Դարձեալ ի յաւուրս Օսմանցւոց զերկիրս մեր ի ՌՃԼԷ թուին տաճկաց (որպէս ասացաք ի բաղում տեղիս), ի նստիլ Ռաճապ փաշային յԵրևան, դարձեալ հակառակին միւս գեօղօրայքն ընդ Աթոռոյս վասն ջրոյ գետոյ

1) Ջրբաժանութիւն։

մերոյ. վասն որոյ և արդ առնեն Աստուածատուր Կաթուղիկոսն և գեօղացիքս մեր Ռաճապ փաշային. Փաշայն ևս զայր ոմն յիւրայնոցն վերակացու կարգեալ հրամայէ գրով բաժանել զջուրն գետոյն ի յերկուս ըստ առաջնոյ կանոնի, զկէսն Էջմիածնի տան, և զկէսն միւս քսան գեօղորէիցն. Այս լինի ի ՌՃԼԸ Թուին Տաճկաց.

Դարձեալ յետ երից ամաց ի ՌՃԽԱ Թուին Տաճկաց ի ժամանակս Իպրահիմ փաշային և Կարապետ Կաթուղիկոսին լինի այս վէճս, նմանապէս և այս փաշայս տայ զգիր մի՝ թէ որպէս Ռաճապ փաշայն հրամայեալ է, նոյնպէս և ես հրամայեցի, զի կէս ջրոյդ Էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղորէիցն.

Այսպէս և ի ժամանակս Ալի փաշային և Մչեցի Աբրահամ Կաթուղիկոսին լինի այս վէճ. և արդ առնեն այս Փաշային, և սա գիր տայ և հրամայէ՝ թէ որպէս Ռաճապ և Իպրահիմ Փաշայքն հրամայեալ են, նոյնպէս և ես հրամայեմ՝՝ զի կէս ջրոյդ Էջմիածնի լիցի և կէսն միւս գեօղորէիցն ի ՌՃԽԷ Թուին Տաճկաց. զոցես զայսոսիկ երիս գրեանս ի յերեսսն գրեցեալ ցուցակօքն.

Դարձեալ և ի ժամանակս Աղուան-Խալիլ խանին, (որ Նստիւր յԽբեան հրամանաւ Ազատ խանին) և Աղէքսանդր Կաթուղիկոսին Պօլսեցւոյ՝ սոյն Խալիլ խանս գիր մի տայ սրբոյ Աթոռոյս, թէ կէս գետոյդ Էջմիածնի է և կէսն միւս գեօղորէիցն. որ գրի ի մեր թւին ՌՄԳ. Գիտ ցուցական.

Դարձեալ Օշականու գեօղացիքն զվարելահողս ունէին ի վերին ծայր դաշտիս մերոյ ի հիւսիսակոյսն ի գլուխ Մողադուրսուն գեղջն. Եւ այս հողոյս աղագաւ ևս յատուկ ջուր ունէին յասացեալ գետոյս ի պանտէն մերմէ բաժանեալ. ապա ի ՌՃԼԴ Թուոջն Տաճկաց՝ զայս ջուրս երից բաժանեաց, զմի բաժինն ծախեն Աստուածատուր Կաթուղիկոսին ինն Թումանի և հինգ հազար դիանի. Գիտ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցական.

Դարձեալ վերջինեցեալ Մողադուրսուն գեօղդ այդ՝ որ է ի գլուխ գեղջս մերոյ ի հիւսիսակոյս, է յետնաշէն, և բնակիչքն աստի և անտի եկամուտ. վասն որոյ ոչ ունի յատուկ ի բնէ ջրոյ առու և ոչ այնքան վարելահող և ոչ այգի. Բայց ի կայ առնուլն բնակչացն՝ ստացեալ են յետոյ զսակաւ ինչ ջուր յատուկ առուիւ, որով և զփոքր ինչ տեղիս սերմանեն և կենցաղավարին, որպէս և է մինչև ցայսօր. Իսկ ի ՌՃՁԸ Թուոջն մերում ի յաւուրս Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ՝ ի գեօղէս յայսմանէ տաճիկ ոմն բռնացեալ Աղաբէկ անուն՝ ի գլուխ գեղջն նոյնոյ ի հիւսիսակոյս ի ներքոյ հողին Օշականայ, (որ ի վերդ յիշեցաւ,) զայգի մի տնկէ և պարսպէ, և ի ջրոյս մերմէ առեալ ոռոգանէ զնա. Ապա և Ղազար Կաթուղիկոսն և գործակալքն, և գեօղացիքս մեր քանիցս անգամ ասեն ցնա՝ ի բաց կալ ի յամառութենէ. նա ոչ անսայ երբէք. Վասն որոյ և Ղազար Կաթուղիկոսն յերկրորդս եղեալ ի Հայոց և ի Տաճկաց զվկայութիւնս խնդրեալ զերկուս գիրս շինէ և կնքեցուցանէ, որք վկայեն՝ թէ գեօղն այն այգի ոչ է ունեցեալ երբէք. և յատուկ ջուր ունի սակաւ ինչ, որով զցանքս իւրեանց հազիւ ջրեն. Իսկ ի յԷջմիածնայ առուէն ոչ ունի ջուր, և այգւոյն տեղն Օշականայ հող է. Զորս և ցուցեալ խանին և արդ արարեալ, յորմէ և առեալ հրաման զայգին քակէ ի հիմանէ, և ի բերանոյ նոյնոյ Աղաբէկին ևս զգիր առնու ի շարունն, որ այլ ոչ ևս շինեսցէ զայգին և Էջմիածնի ջրոյն մի՛ լիցի ձեռնամուխ. Գիտ զայս երիս գրեանս, երկուքն վկայականք՝ և մինն շարթնամայ Աղաբէկին յերեսն գրեցեալ ցուցակօքն. որք գրին ի ՌՃԾԱ և ի ՌՃԾԲ թւսն Տաճկաց. այլ և զգիր մի ևս ի յիշեալ Աղաբէկէն առնու իբր շարթնամա, թէ մեր ջրոյն և առուին ամենևին չմօտի, այլ նաև եղեալ ի վերայ առուին մերոյ, և նովաւ զջուրն իւրեանց անցուցանել տանել ի հողս իւրեանց. Գիտ և զայս գիրս ցուցական. որ ևս գրի ի ՌՃԾԲ Թուին Տաճկաց.



Այլ և սոյն գեօղիս մերձ Հաջիղարայ կոչեցեալ գեօղացիքն ի վերայ մեր ջրոյն գոլով՝ երբեմն ի մեր առուէն զջուրն գողացեալ ի գեօղս իւրեանց տանէին. Իսկ Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի արդ առնէ Երևանու խանին, և ի բերանոյ Հաճիղարացւոցն գիր առնու Տաճկերէն, թէ եթէ անգամ մի ևս ձեռնամուխ լինիմք ի յԷջմիածնի ջուրն, տասն և երկու հազար դիան դիւանի տալոյ լինիմք. Գիտ զայս գիրս ցուցական, որ գրի ի ՌՃԾԷ Թուին Տաճկաց.

Ի ներքոյ գեղջս մերոյ ի հարաւակոյսն ի փոսորակս փոքրիկ բլուր մի գոյ ի հողոյ, (որ է մէկ սահմանն մերոյ գեօղիս,) որ կոչի Քիւլթափայ. Այս բլուրիս յայն կողմն քանի մի խարապայ [illegible] [1] և տանց տեղիք գոն դէպ ի հարաւակոյսն, յորս երբեմն Այրըմլու Քեօչարի Տաճիկք բնակեալք են յաւուրս ձմռան, և երբեմն ևս յամռանն, զցանք ևս են արարեալ ի յոմանս տեղիս, և անուն գեղջն ևս ըստ անուան բլրին կոչէր Քիւլթափայ.

Բայց մինչ զյատուկ ջուր և զառու ոչ ունի, (զի բնական գեօղատեղ չէ լեալ,) ի յաւելորդաց ջրոյն մերոյ և ի գետոյն ի յորդ ժամանակն են առեալ. Վասն որոյ առ սոսա ևս է բազմիցս վէճ լեալ Աթոռոյս վասն ջրոյ. Քանզի որ յառաջնումն իբր զմուրացիկ զողորմութիւնս խնդրելով են կենցաղավարեալ, յետոյ որպէս զսեփհական տէր ջրոյ են ձևացուցեալ

---

1) Գուցէ մոխրանոցք:

զԻնքեանս որպէս զՄոլագուրասունցիքն։ Քանզի ի յԱյրումն տաճկացն յայնցանէ ումն՝ որ Իւզբաշի Թաղի կոչի, ի ՌՃԾԵ թուոջն Տաճկաց՝ յաւուրս Ղազար Կաթողիկոսին Ճահկեցւոյ՝ գնացեալ արդ առնէ Երեւանու խանին՝ թէ մեք ի բնէ անտի ի յԷջմիածնի ջրոյն զչափաջուր եմք ունեցեալ, որով զցանքս մեր ջրեալ եմք. այժմ Էջմիածնցիք ոչ տան մեզ զջուր, եւ արտք մեր ահա չորանան։ Եւ խանն զմարդ կարգէ վերահասու լինել որպիսութեանն։ Ապա եւ Էջմիածնցիքս զաագուն վկայս բերելով ըղմահսար մի շինեն եւ կնքեցուցանեն, թէ մեք ի բնէ գիտեմք եւ վկայեմք, որ Քիւլթափեցիք ոչ ունէին ջուր ի յԷջմիածնի ջրոյն, այլ թէ գետն ունեցեալ է զաւելորդ ջուրս, այնու են կառավարեցեալք։

Եւ գնացեալ ի շարն, եւ շարն եւս տեսեալ բազմաց վկայութիւնն, ինքն եւս կնքէ զնոյն մահսարն, եւ որպէս զհաւանէլթ շինէ՝ ոչ ինչ առնելով ըղբանս նոցա։ Գտցես զայս գիրս բազմակնիք՝ յերեան գրեցեալ ցուցակսն։ Եւ ի սոյն թուոջս խանին եւս արդ առնէ նոյն Ղազար Կաթողիկոսն, եւ խանն ի գլուխ արզային գրէ Նամլեհ, թէ Քիւլթափեցիք որովհետեւ ոչ ունէին ջուր ի բնէ, յԷջմիածնի ջուրն մի ձեռնամխեսցին։ Գիտ եւ զայս գիրս ցուցակսն։ Ապա ի տեսանելն այնց տաճկաց՝ թէ դաւելով ոչինչ կարասցին առնել, այլ մանաւանդ սուտ ելին, գան առ Ղազար Կաթողիկոսն, եւ աղաչելով խնդրեն յայնմ ամի զջուր, զի վաստակք իւրեանց մի՛ չորասցին, եւ խոստանան ուխտիւ, զի այլ մի՛ եւս դաւեսցեն վասն ջրոյ։ Վասն որոյ եւ Ղազար Կաթողիկոսն զհաւանէլթ մի առնու ի նոցանէ ձեռամբ շարին՝ թէ եթէ պատահեսցէ եւս ջուր խնդրեսցուք ի յԷջմիածնէն, եւ կամ դաւ արասցուք, յիսուն թուման դիւանի պարտական լինիցիմք։ Գտցես եւ զայս հաւանէլթս յերեան գրեցեալ ցուցակսն, որ ի տաճկաց ՌՃԾԵ թուին։ Յետ միջոցաց ինչ անհետացեալ էին բնակիչք տեղւոյն, եւ տեղին այն կայր ամայի եւ անշէն։

Իսկ այժմ ի մերս ժամանակի, ի ՌՄԺԵ թուոջն մերում, եկեալ տաճիկք ոմանք ի նոցանէ՝ կամեցան վերստին զտունս շինել անդ եւ շէնս արկանել, որք լինելոցք էին մեծ գլխացաւութիւնք։ Գնացեալ մեր տեսաք՝ թէ յիրաւի զի շինէին զտունս ստէպ ստէպ, որք եւ զմուլք իւրեանց գեղջն եւս խոստացեալ էին Հասան-ալի խանի տղայ Հաճի Միրզային։ Իսկ ապա ի տեսանելն մեր զայս, գնացաք առ Հիւսէին ալի խանն մեր, եւ ասացաք նմա զորպէսն։ Իսկոյն հրաման արարեալ ի քակել զշինեցեալսն, եւ զինքեանս վարել անտի։ Որք եւ անհետ եղեալ կորեան ի միջոյ։ Քիւլթափայ գեղջս այսօրիկ զվեց դանկ մուլքն առաք մեք ի Հիւսէին-ալի խանէն մերմէ, զորոյ զորպէսն տես ի ԺԳ գլուխն ի ճառս Քուանկանոցին։



Դարձեալ երանելին Փիլիպպոս Կաթողիկոսն հանեալ է զջուր մի ի յատակէ սրբոյ Աթոռոյս, որ կոչի Քանքան. որ ի յատակէ սրբոյ տաճարին եւ ընդ յատակաւ պարսպին ի ներքուստ է ելեալ, գնայ դէպ ի սրբոյն Գայիանէի վանքն, եւ անտի ի վայր արեւելակոյս թեքեալ ելանէ յերեսս հողոյն, եւ գնացեալ յայն կողմունս ոռոգանէ զտեղեաց արտորայսն մինչեւ ցայսօր։ Որ է ջուր չափ միոյ ջրաղացի ջրոյ, եւ է յատկապէս սրբոյ Աթոռոյս։ Բայց այս Քանքանիս գլուխն էր սրբոյ Աթոռոյս միջի դրան դռնապանի օթոյի 1) առաջն, զի անտի սկսեալ գնայր ընդ արտաքին պարսպաւն դէպ ի սրբոյն Գայիանէի վանքն։ Վասն որոյ ոչ ինչ օգնէր միջնոյ պարսպիս յատակի եկեղեցւոյն եւ շրջակայ օտայից զխոնաւութեանն։ Վասն որոյ եւ մեք վերստին եռուք հանել զՔանքանս ի միջոյ ներսի պարսպիս զշրջակայիւք սրբոյ եկեղեցւոյն, եւ զառաջնոց օտայից եւ այլոց շինուածոց, եւ տարեալ խառնեցաք ի Քանքանն նոյն Փիլիպպոս Կաթողիկոսին. որով եղեն երկուք օգտութիւնք, մի՝ որ յատակ եկեղեցւոյն եւ բոլոր շինուածք եւ միաբանից օտայքն ցամաքեցան, որք առաջ տիրեցեալք էին ի խոնաւութենէ։ Երկրորդ՝ զի ջուրքն յորդեցան՝ ի ՌՄԺԷ թուոջն մերում։

Դարձեալ Յակոբ Կաթողիկոսն Ջուղայեցի հանէ զջուր նոյնպէս գետնափոր՝ ի կողմանէ Քարձաղ գետոյն մերոյ ի միջոյ արեւմտից եւ հիւսիսոյ գեղջս մերոյ. որ եկեալ ընդ յատակաւ գեղջս մտանէ ի հիւսիսոյ կուսէ ի սուրբ Աթոռս ի պարտեզ վեհարանիս, եւ ելանէ յերեսս հողոյն. եւ աստի քարակերտ եւ կրաշաղախ առուիւ բաց ընթացեալ ընդ միջով Ղազարապատին՝ եւ ելանէ արտաքս ի պարսպէն, եւ ընթացեալ ի հարաւակոյս ի վայրն՝ խառնի ի վերոյ ասացեալ գետնափոր ջրոյն Փիլիպպոս Կաթողիկոսին, որք եւ ի միասին գնացեալ ոռոգանեն զներքին դաշտն, որ է ի ներքոյ Գայիանէին մինչեւ ի Շորաքեաթ կոչեցեալ տեղիսն, մինչեւ ի Ղառուղն եւ ի մեծ ծովակն Յակոբ Կաթողիկոսին, (զորմէ յետոյ ասասցուք,) եւ զայլ միջոցսն այսոցիկ տեղեաց։ Եւ լինէին երկոքեանն ըստ չափու ջրոյ երկուց ջրաղացից, եւ են յատկապէս սրբոյ Աթոռոյս։ Այս ասացեալ երկրորդիս ջրովս զրեթէ կեան եւ կենդանավարին Աթոռայինքս եւ գեօղականքն ըստ մեծի մասին։ Քանզի յայսմանէ եւ ծիւղ մի բաժանեալ մտանէ ի մերձ պարիսպն միաբանից, որով ոռոգին բոյսք եւ ծառք պարտիզին, եւ լուանին եւ զովանին միաբանքն հանապազ։ Քանզի ի յամառն տօթաշատ ժամանակին ցրտանայ, եւ ի ձմեռն ցրտաշատ եղանակին ջերմանայ, եւ ոչ սառի երբէք։ Նոյնպէս եւ գեօղականքն եւ ամենայն անցորդք, զի ի յամառն զցուրտ ջուր ըմպայէ, եւ ի ձմեռնն տաք, զի մինչ ամենայն

---

1) Սենեակ։

ջուրք սառին և պակասին, նա արբուցանէ զամենեսեան։ Ի վերայ այսր ջրոյս շինեաց այս երանելիս ի հարաւակողմ մերձ սրբոյ Աթոռոյս զջրաղացն՝ որ Քանքանի ջրաղաց ասի, (զոր ի վերդ ասացաք ի ճառ. ջրաղացացն,) որ և գոյ չէն մինչև ցայսօր և բանի ի յամառն և ի ձմեռն. զի ոչ սառի ջուրս այս որպէս ասացաք։ Նոյնպէս և ի վերայ այս ջրոյս շինեցաւ կից սորին ջրաղացիս բամբակահանն, այսինքն զշղղատուն խմբուած ժամանակի, (որպէս ասացաք ի ճառս ջրաղացաց.) որ բանի անդադար և հանէ զբամբակ յամառն և ի ձմեռն։ Բայց այսոքիկ վերոյիշեցելոց երկոցունց ջրոցս առուքն՝ որք են գետնափորք և խորինք ի յատակս հողոյ, երբեմն երբեմն թէպէտ էին նորոգեցեալք ի յառաջնոց Հայրապետացն, սակայն ի մերում ժամանակի (զոլով կարի հնացեալք և փլփլեցեալք և ի բազում տեղիս ևս լցեալք հողով,) եղեն ի ծայրէ ի ծայր նորոգեցեալք և հաստատնապէս շինեալք քարիւ՝ թէ առուքն և թէ բերանք հորիցն ամենեցունց։

Դարձեալ զգետնափոր ջուր մի ևս (այս ինքն զՔանքան) հանէ սոյն երանելի Յակոբ Կաթուղիկոս ի ներքոյ ի հարաւակողմն սրբոյ Աթոռոյս. որոյ ակն է նոյնպէս ի նոյնոյ Քարձաղ գետոյս մերմէ հանդէպ Ալիբէկլու կոչեցեալ գեղջն. յորմէ նեխաղ ընթանայ զառ ի վայր ի հարաւակոյս ի փոսորակ արտորայսն մեր (որք Փոսի հողք կոչին, և ի ԺԵ ճառն արտորէից՝ Հերանանք գրեցան,) և ոռոգանէ զնոսա։ Յորոց վերայ զգինգ մի ևս շինեաց նոյն երանելին, որպէս ասացաք ի գլուխն ջրաղացից։ Շինէ նա ևս փոքրիկ ծովակ մի ի վերայ սոյն ջրոյս, զորմէ յետոյ ասասցուք։ Բայց այժմ աւերք են և խափանեցեալք ի վաղուց հետէ ջուրն, գինգն, և ծովակն։ Իսկ ի ՌՄԾԷ թուոջն մերում նոր ի նորոյ նորոգեցաք մեք զՔանքանս զայս, և հանաք զջուրն, և հաստատնապէս շինեցուցաք զբերանս հորիցն և զջրագնաց առուն քարիւ և կրով։

Ծովակք եւ լիճք ջրոց (այս ինքն գեօղ սրբոյ Աթոռոյս որ ի յայս գեօղս մեր):

Վերոյիշեալ Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի (բազմաշխատն և յոգնաշահն սրբոյ Աթոռոյս զկնի երանելւոյն Փիլիպպոսի) շինէ նախապէս զմեծ ծովակն՝ որ է ի վերին կողմն գեղջս մերոյ ի հիւսիսակոյս ի գլուխ անդաստանաց գեօղիս և հանդէպ Մոլայուրսուն կոչեցեալ գեղջն, որ կոչի ռամկօրէն Քարաքիթի - գեօլ։

Երկու մտօք շինէ այս երանելիս զայս ծովակս, նախ՝ զի ի յանձրևաց և ի ձեանց և ի գետոյս մերմէ ևս (ի յորդ ժամանակին, յորմէ և զյատուկ առու ևս ունի) առեալ զջուրս լնիցի, և յետոյ ի հարկաւոր ժամանակին սակաւ առ սակաւ ոռոգանիցէ զառ ի վայր դաշտս մեր. երկրորդապէս զի կապար և սահման լիցի ի մէջ մեր հողոց և Մոլայուրսունեցւոց. զի մի՛



ոտնածեալ ձեռն արկցեն ի հողս մեր վասն մերձաւորութեանն, որպէս երբեմն արարեալ են։ Արդ ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ այդ Մոլայուրսունցիքդ զոլով տաճիկք՝ զօրացեալք կամին զաւթել զայս ծովակս՝ ասելով թէ՝ տեղին այն մեր է։ Եւ աթոռայինքս ընդ գեօղականացս արզ առնեն Երևանու խանին. և խանն զմարդ ոմն կարգէ յիւրոցն, զի վերահասու լիցի ճշմարտութեանն։ Որ և եկեալ ի գեօղօրայս. ի բազմաց Տաճկաց և ի Հայոց զվկայութիւնն լուեալ՝ զբազմականիք մահզար մի շինէ, որք գրեն և կնքեն՝ թէ տեղին այն Էջմիածնի է, և զծովակն զայն Յակոբ Կաթուղիկոսն է շինեալ։ Զայս վկայական գիրս գտցես յերևան գրեցեալ ցուցակաւն։ Այժմ աւեր է ի վաղուց հետէ, յորում երբեմն զՃօւթու առնեմք։

Երկրորդապէս շինէ նոյն երանելին զփոքրիկ ծովակ մի ևս ի վայր քան զնա, ի գլուխ այգեստանեացն գեղջս մերոյ ի յարևելակոյս վասն վերնոյ ասացեալ նախկնոյ պատճառին, որ ևս է աւեր խպառ։

Երրորդապէս շինէ նոյն երանելին զծովակ մի ևս ի վայր քան զնա՝ ի վեր կոյս սրբոյն Հռիփսիմէի վանիցն յարևելակողմն ի ներքոյ Երևանու ճանապարհին։ Որ ևս էր աւեր ի վաղուց հետէ, զոր մեք նորոգեցաք ի ՌՄԺԴ թուոջս մերում։

Չորրորդապէս շինէ սոյն երանելիս զմեծ ծովակ մի ևս լայնարձակ և պարսպաւոր, ծառուտ և գեղեցկավայել՝ ի վայր քան զնոսա՝ ի ներքոյ գեղջս մերոյ ի մէջ արևելից և հարաւոյ՝ հանդէպ Շոռլու կոչեցեալ գեղջն և Ղուռուղ կոչեցելոյն։ Առ յոր մտանեն ջուրք երկուց Քանքանիցն Փիլիպպոս Կաթուղիկոսին և սոյնոյ երանելւոյս, և այլ ջուրք աստի և անտի, զորմէ ասացեալ եմք ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէիցն։ Զայս ծովակս խնդրեաց Լէկզի Սէֆի - ղուլի խանն ի սոյն երանելւոյս, և ի յոչ տալն սորա չարացաւ յիշեալ խանն և բազում չարիս գործեաց ընդ Կաթուղիկոսին՝ որպէս յիշեցաք ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէիցն, և վերջապէս Կաթուղիկոսն զաղտ ելեալ գնաց առ Շահ - Սուլէյմանն, և արզ արար զաբարմունս խանին։ Եւ բարկացեալ Շահին զմարդ առաքէ յԵրևան, մինչ նստէր խանն տամբք իւրովք ի Ղալա - բուլաղ կոչեցեալ տեղւոջն ի զբօսանս, ի վերայ եկեալ մարդկանց Շահին, կալեալ զխանն կապեն՝ և գնացեալ յԵրևան զբովանդակ ինչսն զաւթեն, և զխանն կորուսանեն, և զոր ինչ ունի՝ տանին առ Շահն։ Եւ ապա ի տեղի սոյն խանիս գայ յԵրևան խան Վրացի Սէֆի խանն, որ զՍէֆիապատ կոչեցեալ ջուրն բերէ ի սև ջրոյն և խէյրաքն առնէ՝ որպէս ասացաւ ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէից։ Այժմ է աւեր ասացեալ լիճս, միայն ի տեղիս տեղիս որմունքն և հիմնատեղիքն կան և յայտնապէս երևին։

Հինգերրորդապէս, սոյն երանելի Յակոբ Կաթուղիկոսս Ջուղայեցի ի հանելն զնելքի Քանքանն՝ որ ի վայրդ ի հարաւակոյսն մեր, (որպէս ասացաւ ի վերդ.) որոյ ջրովն ոռոգանէին Նելքին-փոսի կոչեցեալ արտորայքըն, շինէ և զփոքրիկ լիճ մի ի ներքոյ ծայրին նոյնոյ Քանքանին, որ կայ այժմ և է վարելահող որպէս տեսանես, ի վերայ ճանապարհին ի գնալդ ի փոսի արտորայսն մեր ի Քիւլթափայն.

Դարձեալ ի ժամանակս Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսին մերոյ և յիշխանութեանն Օսմանցւոց, մինչ առեալ զերկիրս ի Պարսից տիրէին, Պետրոս վարդապետն (որ մականուամբ Քիւթուր կոչիւր,) որ էր Համշկլայեցի և սրբոյ Աթոռոյս միաբան և աթոռակալ, կամեցեալ է ի Մեծամօր կոչեցեալ Սև-ջուր գետոյն ջուր բերել ի յարտորայս գեղջս մերոյ, և ոչ է լեալ հնար. Որոյ նշանն և առուատեղն գոյ արդէն, որ է սկսեալ ի վերին ծայրից Սև ջրոյն. Բայց յայնմ միջոցին մինչ կամեցեալ են հանել զառուն ի բերել և ի հասուցանել ի գեօղս մեր, ոմանք գիւղորայք՝ ընդ յորս անցանել պարտ էր ասացեալ առուդ՝ դաւ են յարուցեալ՝ ասելով թէ՝ ոչ թողումք՝ զի ընդ հողս մեր անցանիցէ ջուրդ այդ և առուդ. Ուստի և գնացեալ ի շարն, և շարն վճռէ թէ ջուրդ այդ որքան և կայցէ՝ երկու բաժին լիցի, մին բաժինն բերողին, և միւսն այնց գեօղորէից՝ ընդ որովք անցանէ առուն և ջուրդ այդ.

Գիր զայս հուճէթս յերեսն գրեցեալ ցուցակաւն. Նմանապէս և գիր մի ևս Իպրահիմ Փաշայն (որ յաւուրսն յայնոսիկ իշխող է լեալ Երևանու,) տայ. Զոր ևս գտցես ցուցակաւն. Այս լինի ի ՌՃԽԵ թուին Տաճկաց՝ և ի ՌՃՁԱ թուոջն մերում. Սակայն ոչ են կարացեալ ի բերել զջուրն, մնացեալ է անկատար.

Դարձեալ Երևանցի Պուրճ-ալի-բէկ տաճիկ ոմն ի Հրազդան գետոյն՝ (այս ինքն Զանկի գետոյն) ի ներքոյ կուսէն ջրաղացացն Նորագեղու և Սարվանլար կոչեցեալ գեղջն ծակեալ զլեառն՝ ջուր հանէ, և ընդ յատակաւ երկրի բերէ՝ մինչև ի փոքր ձորակն հասուցանէ, յորոյ հիւսիսակողմն է Իւչ-թափայ կոչեցեալ բլուրներն, իհարաւակողմն է Ղարա-թափայ կոչեցեալ Քարաբլուրն (որ է յայնկոյս գետոյն,) և յարևմտակողմն՝ (ուր աւարտի Տաճկի բերեալ առուն,) Գեօկ-գումբէթ կոչեցեալ գիւղն. Մինչև աստ ջուրըս այս ի ներքոյ երկրի գայ, և աստ ի ձորակըս ելանէ ի յերեսս և երևի. Եւ զխտաւորութիւն Տաճկիս այսորիկ այն է լեալ՝ զի զջուրս զայս տարեալ ի վայր դաշտն Կաւակերտու և յայն կողմունսն՝ ոռոգանիցեն. Ապա ի սատակել սոյն Պուրճ-ալի բէկ տաճկիս, միրասխորք 1) նորին, Խոսմատ-ղուլի

1) Ժառանգք:



բէկն, Մահմատ-ղուլի բէկն, և Թամուր-Ղայա-բէկն ծախեն զայս ջուր Նահապետ Կաթուղիկոսին՝ յիսուն թումանի. Որոյ զղապալայն գիտ յերեսն գրեցեալ ցուցակաւն. Որ գրի ի թուին տաճկաց ՌՃԺ. և Նահապետ Կաթուղիկոսն ի յառնուլն զայս ջուրս ի ձորակէն յայնմանէ (որ ասացաւ,) սկիզբն արարեալ բերէ զվերին կողմամբն ընդ գլխովն Փարաքարու և իջուցանէ ի դաշտ գեօղիս մերոյ, ընդ հիւսիսակողմամբն Երևանու ճանապարհին՝ որ առ մեզ գայ, որոյ առուն բաց գոյ մինչև ի Փոքր բլուրներն, որ հանդէպ Հռիփսիմէի վանքին դէպ ի հիւսիսակողմն ի յարևելս, և յայն տեղեան ընդ յատակաւ հողոյն գայ ընդ միջոց ինչ, որոյ հորոց բերանքն գոն յայտնի մինչև ցայսօր՝ որպէս հորք Քանքանի, և զջուրս զայս ի կեր արկանէ սուրբ Աթոռս ի յայգիս և յարտորայս մինչև ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին. Իսկ ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին՝ յազգականաց վերոյիշեալ Տաճկացն ոմանք ձեռնամուխ լինին ի ջուրս յայս, և ի վերայ ջրոյն զբօստանս և զայլ ինչ սերմանեն և զջուրըն տանին ի յայնս. և զայլս այսպիսիս, և ոչ թողուն զջուրն ամբողջ գալ յայս գեօղ. Վասն որոյ և Աստուածատուր Կաթուղիկոսն արզ գրէ Երևանու խանին, և խանն առաքէ առ շարն. Եւ շարն տեսեալ զհաստատուն ղապալայս մեր՝ զոր առեալ եմք զջուրն ի վերոյգրեցեալ Տաճկացն՝ գրէ յետկոյս արզային և կնքէ սաստելով այնց Տաճկացն, զի մի՛ ևս ձեռնամխեսցեն ի յայս ջուր. Գիր զայս գիրս յերեսն գրեցեալ ցուցակաւն. Որ գրի ի Տաճկաց ՌՃԻԹ թուին. Արդ առուս այս յօրէն յայնմանէ՝ չգիտեմ յանհոգութենէ Կաթուղիկոսացն՝ եթէ յայլ ինչ պատճառէ՝ խափանեալ կայ մինչև ցայսօր.

Ջուր ի Դաւրէժ:

Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի, ի Դաւրէժ ի Հաճի-Մահմատ-Բաղրի որդւոյն ի Մուհամմատ-Մուսանէն երկու շաբաթէն ջուր առնու վեց թումանի՝ ի ՌՃԻԴ թուին Տաճկաց. որոյ անունն Սէէթ-Ճէբէմ թահրիզէ կոչի. Գիր զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն.

Դարձեալ նոյն Աղէքսանդր Կաթուղիկոսն ի Մահմատ-շէֆի տաճկէ միօջէ առնու ի Թաւրէզ ի նոյն Սէխտ-միրիմ-քահրիզ կոչեցեալ ջրոյն՝ երկու շաբաթէն ջուր՝ հինգ թումանի և ինն հազար դիանի՝ ի թուին Տաճկաց ՌՃԻԵ՝ Մանուկի որդի Աբրահամին ձեռօքն. Գիր զղապալայն ցուցակաւն.

Դարձեալ ի սոյն թուոջս առնու սոյն Կաթուղիկոսս ի Դաւրէժ ի Սաչախանում Տաճկէ մէկ շաբաթէն ջուր՝ երեք թումանի և երեք հազար դիանի՝ ի ձեռն Առաքել կոչեցելոյ ումեմն. Գիր զղապալայն ցուցակաւն:

Դարձեալ Նոյն Աղէքսանդր Կաթուղիկոսն ի Դարէժ ի Մահմատ-ալի Տաճկի որդի Քեալբալի-Մահմատ-Իւսուփէն առնու ի նոյն Քահրիզի ջրոյն . . . շաբաթէն ջուր՝ խօթն թումանի՝ ի ՌՃԻԶ թուին Տաճկաց։ Գիր ղղապալայն ցուցակուն։

Դարձեալ ի Դարէժ Հաճի Ռաճապ-ալու որդի Մահմատ Ռահիմն ի նոյն վերոյիշեալ ջրոյն ծախէ սրբոյ Աթոռոյս ձեռամբ Թարվիզեցի Տէր Ներսիսին ի ԺԴ յօրէն մէկ աւուր ջուր՝ վեց թումանի՝ ի ՌՃԼԲ թուին Տաճկաց։ Գիր ղղապալայն ցուցակուն։

Դարձեալ ի սոյն թուոջս Դաւրիժեցի Խօճայ Բարսեղ ոմն ծախէ սրբոյ Աթոռոյս ի սոյն ջրոյն երեք շաբաթէն ջուր՝ ինն թումանի՝ ձեռամբ նոյն Տէր Ներսիսին Դաւրիժեցւոյ։ Գիր ղղապալայն ցուցակուն։

Ցետին երկուքս ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին լինին։ Զայս վեց ղալամ ջուրս՝ զոր առնուն լուսահոգիքն՝ վասն այգեաց մերոց առնուն՝ զորս ունեցեալ եմք ի Դարէժ։

Գլ. ԺԹ.

Յորում ցուցանին սրբոյ Աթոռոյս դռունքն, խանութքն, ծորքն, և այլ այսպիսիքն, թէ ո՞ւր և ո՞րպէս, է ասորել:

Գեօղս այս Վաղարշապատ, որ է կից սրբոյ Աթոռոյս, քանիցս անգամ տեղափոխեցեալ է, ոչ ըստ բոլորին, այլ ըստ մասին։ Զի տունք ոմանց ի տեղւոջէ ի տեղի են փոխեցեալք, ոմանք նորապէս շինեալք, և շատք ևս պակասեալք. այս երբեմն ի բերմանէ ժամանակին է լեալ, և երբեմն ըստ մեծի մասին ի հարկեցմանէ Հայրապետացն սրբոյ Աթոռոյս։ Քանզի երանելիքն մեր Մովսէս և Փիլիպպոս և այլք զկնի նոցա Կաթուղիկոսքն ի կանոնաւորելն՝ ի պայծառացուցանելն և ի հաստատացուցանելն զսուրբ Աթոռս (որպէս ասացաւ բազմիցս), և մանաւանդ ի լայնացուցանելն զսա շինուածովք, առեալ են ի չորից կողմանց ի գեօղէն մերմէ զտեղիս, զորս և աւերեալ են զտնատեղս, ձիատեղս, և զայլս անասնատեղիս։ Այլ և զբուրաստանս, պարտէզս, կալատեղս, զյատուկ պարիսպս և բակս արտաքոյ պարսպին տաճարիս, որպէս և տեսանես։ Որոյ ոչ գոյր ղապալայ ինչ՝ զի գրէաք։ Այլ միայն զերկուս Հայերէն ղապալայս գտաք, որ գրին ի ժամանակս Նահապետ Կաթուղիկոսին։ Որոց մին է մէկ ձեռք տուն իւր պարագայիւքն, զոր Սահրափի որդի Խաչատուրն ծախէ սրբոյ Աթոռոյս՝ երեք թումանի և երեսուն սոմար ցորենոյ՝ ի ՌՃԽԲ թուոջն մերում. որ է մեր բաղանեաց տեղն։ Եւ միւսն ի նոյն Կաթուղիկոսի ժամանակն Մարտի-



րոսի որդիք Աստուածատուրն և Սաֆարն ծախեն մէկ տուն և մէկ չորքոտի՝ մի թումանի՝ ի ՌՃԽԴ թուոջն մերում. որ է ի մէջ Ղազարապատին։ Զտաճկերէն ղապալայ մի ևս Անտոնի որդիք Աւետիքն, Մկրտիչն, և Յովհաննէսն տան ծախելով Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ քսան և հինգ հազար դիանի՝ հինգ տուն, ի Տաճկաց թուին ՌՃԻԵ։ Որոյ կողմունքն գրին սրբոյ Աթոռոյս Քանքանի ջրաղացն, ճանապարհն, և գերեզմանատունն, որ է մեր Քանքանի ներքոյ եղեալ տունն՝ յորում նստիւր օճառն, և մեք քակեցաք։ Գի՛տ զայսոսիկ երիս ղապալայսս յերեսն գրեցեալ ցուցակօքն։ Եւ ոչ միայն այսք, այլ և (որպէս ասացաք) զշատս ևս առեալ են, զորն դրամով՝ զորն հոգեբաժին, և զայլն այլով կերպիւ, և քակեալ են վասն հարկաւորութեան սրբոյ Աթոռոյս, և կամ զայլ ինչ են շինեալ։ Բայց որովհետև ըստ պատահման տեղեացն էին այնք շինուածք այս ինքն՝ գոմքն, ձիատունքն, ջորատունքն, իշատունքն, ուղտատունքն, նախրատունքն, և այլք այսպիսիք, վասն որոյ էին անյարմարք, ցան և ցիր, ի միմեանց հեռիք, և մանաւանդ անպարիսպք և երկիւղալիք։ Իսկ ի մերս ժամանակի, յաջողմամբն Աստուծոյ մինչ շինեցաք զբոլոր պարիսպն արտաքոյ շուրջանակի, որպէս ասացաւ յայլում տեղւոջ, զվերոյիշեցեալ տեղիսդ քակեցաք զամենայնն և ի մէջ պարսպին արկեալ կից իրերաց շինեցաք նորապէս ի մէջ միոյ յատուկ պարսպի իւրեանց պարագայիւքն, որք են ի յարևելեան կողմն սրբոյ Աթոռոյս։

Այլ և մինչ գեօղս մեր էր հուպ և յարակից Աթոռոյս, և ցան և ցիր շուրջ զկողմամբքն սորին, որովք և նսեմնայր գեղեցկութիւն պարսպին՝ զոր շինեցաք շուրջանակի հաստատուն բրգօք և հրացանատեղիօք, յորոց երկիւղք և վտանգ ևս ծնանէին սրբոյ Աթոռոյս, վասն որոյ զգեօղս մեր ըստ մեծի մասին, այս ինքն զհարաւակողմն և զարևմտակողմն ըստ բոլորին, և ի հիւսիսակողմէն ըստ մասին իբր հրացանի միոյ ձգման չափ՝ քակեցաք խապառ հանդերձ Եկեղեցեաւն՝ զոր Նահապետ Կաթուղիկոսն էր շինեալ, այն ևս էր հնացեալ և փլփլեցեալ։ Եւ հեռացուցեալ ի պարսպէս ի հիւսիսակողմն շինեցաք վերստին ի միում կարգի ծախիւք սրբոյ Աթոռոյս զտունս և զեկեղեցին վայելուչ քան զառաջինն։ Զորոց յայլում տեղւոջ ասացեալ եմք։ Վասն որոյ գրեթէ տունքս գեղջս մերոյ ըստ մեծի մասին են սրբոյ Աթոռոյս։ Գործեցաւ այս ի թուոջն մերում ի ՌՄԺԶ։

Տունք սրբոյ Աթոռոյս ի Ցօշական գեօղն:

Ի Ցօշական գեօղս յայս մինչ ունի սուրբ Աթոռս զքանիս այգիս, և է մերձաւոր գեօղ սրբոյ Աթոռոյս՝ որպէս ասացաք, վասն որոյ ունի և

ղձեռք մի տունս յատուկ պարսպով, ներքնատամբ, վերնատամբ, գինատամբ, ձիատամբ, գարմանատամբ, և այլովք հարկաւորօք, որոց կողմունքն են։ . . . . . .

Տունք սրբոյ Աթոռոյս ի յԵրեւան ի Զօրագեղ:

Ի գեօղս յայս Զօրագեղ, որ կոչի Խնկաձոր, ունի սուրբ Աթոռս զմեծ պարսպապատ տուն մի իւր սարօքն, յորում գոն երկու Եկեղեցիք, և.. օտայք, ձիատունք, աշխանայս, և այլովք պարագայիւք։ Եւ նոյն մեծ պարիսպն յերկուս բաժանեցեալ միջնահատ որմով, մին որ ի կողմն հիւսիսոյ՝ միով Եկեղեցեաւն և այլովք հարկաւոր տամբք՝ է հասարակ միաբանից տեղի՝ և անասնոց և այլոց այսպիսեաց, յորում եղեալ յԵկեղեցին գան ժողովուրդք օտարականք և վաճառականք ի յաղօթել։ Ցորում և կացուցանի սեւագլուխ մի վերակացու և կառավարիչ քանի միաբանիւք ի Հայրապետէն ի պաշտել զկարգն Եկեղեցական և ի շինութեան պահել։ Եւ միւսն որ ի հարաւակողմն՝ միով եկեղեցեաւն՝ է յատուկ տեղի Հայրապետին, զի ի գնալն Կաթուղիկոսին ի յԵրեւան, անդ ագանի իւրովք սպասաւորօքն։ Որ և ունի զյատուկ պարիսպս յատուկ դրամբ, և արգելեալ ի հասարակութենէ։ Այս երկոքեանս են՝ որք գոն ի մէջ միոյ մեծի պարսպի, և են շէն և ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս, կոչին միով անուամբ Զօրագեղու-անապատ, որ է հանդէպ բերթին Երեւանու ի հիւսիսակոյսն, ի բարձրահայեաց գագաթանն մեծախոր ձորոյն, ուր անցանի գետն Հրազդան։ Տեղիս այս լեալ է յառաջագոյն տուն և այգեկերպ մեծ բաղչայ ումեմն Զօրագեղցւոյ Բայընդուր կոչեցելոյ Համազասպեան, վասն որոյ կոչի Համազասպենց տներ։ Որոյ որդի Ասլանն ծախէ Կարնեցի Տէր Սուքիասի որդի Մահտեսի Ղեւոնդին՝ քառասուն թումանի՝ ի ՌՂԴ թուին Տաճկաց։ Զորոյ զղապալայն գիտ ցուցակաւն։

Ցորում գոյ մէկ այգի, յորոյ մէջն երկու թանապի, երկու այվան, մի աշխանայ, մէկ մառան, մէկ բաղչայ, մէկ մարաք, մէկ չէրղամբէ, և մէկ ոտից ճանապարհ։ Եւ սահմանք սորին գրին Հրազդան գետն, Հաճի-Նիազի այգին, Զօրագեղու այգեաց քուչէն և Զօրագեղու Եկեղեցին։ Իսկ ի սոյն թուոջս նոյն Մահտեսի Ղեւոնդն ծախէ զայս տեղիս բոլոր պարագայիւքն Եղիազար Կաթուղիկոսին՝ ես քառասուն թումանի։ Զորոյ զղապալայն ես գիտ ցուցակաւն։ Ցորում գոյ տասն և մէկ մեծ բաղչայ, որք են նոյն վերոյ ասացեալքդ։ Եւ սահմանքն ես նոյն վերոյ ասացեալքդ գրին։ Այդ վերոյ ասացեալ ղապալայիցդ մէկ մէկ սաւատ ես գոն, զորս ես գիտ ցուցակօքն։ Եւ քան զայս իրակութիւնս, զորս ամսու յառաջ վերոյիշեցեալ Բայընդուրի որդի Ասլանի եղբայր Փիրին զիւր բաժին տունն և բաղչայն



ծախէ իւր եղբայր Ասլանին՝ երեք թումանի՝ ի ՌՂ թուին Տաճկաց, որոյ զղապալայն ես գիտ ցուցակաւն. զի յառնուլն Եղիազար Կաթուղիկոսին զայս բոլոր տեղիս՝ զորս ասացաք, առնու նա և զհին ղապալայն այս տեղոյս ի Ղեւոնդէն, զորս Ղեւոնդն առեալ էր ի Ասլանէն։ Այլ և քան զԵղիազար Կաթուղիկոսի առնուլն զայս տներս յիսուն և հինգ ամ յառաջ՝ զայս տներս Աւագ և Շահուն կոչեցեալ Բ եղբարք ծախեն ումեմն Ալիբէկ կոչեցելոյ Տաճկին ի ՌԼԹ թուին Տաճկաց՝ ԻԳ թումանի։ Որոյ ղապալայն գոյ։

Եւ յետ երկուց ամաց ի ՌԽԱ թուին Տաճկաց՝ նոյն Ալիբէկն ծախէ Տէրտէրենց կոչեցելոյ խօճայ Սաֆարի որդի խօճայ Միքայէլին՝ յիսուն և հինգ թումանի։ Որոյ ղապալայն ես գոյ։ Այս երկու ղապալայքս եկեալ հասանին ի ձեռս սոյն Միքայէլի եղբայր խօճայ Պետրոսի թոռն խօճայ Աղա-Միրին։ Ապա յորժամ Եղիազար Կաթուղիկոսն առնու զայս տներս ի ՌՂԴ թուին տաճկաց, ի Համազասպեան Պայընդուրի որդի Ասլանէն ի ձեռն Մահտեսի Ղեւոնդին՝ քառասուն թումանի՝ որպէս ասացաք՝ երկուք հաստատուն ղապալայիւք, ոչ եղեւ յայտնի մեզ թէ Աղայ-միրին այն վերոյիշեցեալ գոն յարուցանէ յայնմ միջոցին, և զեան ինչ առնու ի յԵղիազար Կաթուղիկոսէն, կամ թէ ինքն Եղիազար Կաթուղիկոսն տեղեկացեալ թէ այս տանց հին ղապալայքն գոն ի ձեռս Աղայ-միրին, որպիսի կերպիւ և իցէ զերկուս հին ղապալայս ես առնու ի յԱղա-միրէն։ Մին Աւագ և Շահում կոչեցեալ եղբարքն ծախեն նախապէս Ալիպէկ Տաճկի միոյ ի ՌԼԹ թուին Տաճկաց, և միւսն նոյն Ալիբեկն ծախէ ի ՌԽԱ թուին Տաճկաց սոյն Աղա-միրիս պապ խօճայ Միքայէլին՝ որպէս ի վերդ ասացաւ. և ի սոյն յետին ղապալայիս յետկոյսն գրէ սոյն Աղա-միրիս, թէ որովհետև իմ նախնիքն զայս տներս վաճառ էին արարեալ սրբոյ Էջմիածնի, և ես զայս ղապալայս ետու և վախմ արարի։ Այս լինի իՌՃԼԹ թուին Տաճկաց, և ի մեր թուոջն ի ՌՃԲ։ Գտցես զայսսիկ ղապալայքս ես յերեսուն գրեցեալ ցուցակօքն, Որք եղեն այս մեր անապատիս Զօրագեղոյ հինգ ղապալայ և երկու սուրէթ, որք գոն այժմ ի սուրբ Աթոռոջս։ Այլ և սոյն Եղիազար Կաթուղիկոս առնու ի կից սորին տեղւոյս զտուն մի շէն և զտեղի ես միոյ տան՝ երեք թումանի, ի ՌՃԲ թուին Տաճկաց, ի Ղազարի որդի Խաչատուրէն։ Որոյ կողմունքն գրին ծախողի տունն և Եղիազար Կաթուղիկոսի վերոյ ասացեալ առած տները. գիտ զղապալայն ցուցակաւն։ Զոր ես ի յառնուլն՝ խառնէ ընդ վերոյիշեալ տեղիսն։

Արդ յորժամ վերոյիշեալ Եղիազար Կաթուղիկոսն առնու այսպէս հաստատուն ղապալայիւք զայսքան տներս, և այն մեծ բաղչայն, ապա

Նորակէս ի մէջ միոյ հաստատուն պարսպին տանս, և զտունս զամենայն քակեալ՝ զքանի մի ատայս շինէ վասն վանականաց, և զփոքրիկ եկեղեցի մի ևս շինէ յանուն սրբոյն Յակոբայ ի հիւսիսակողմն սոյն տեղւոյս, ընդ նոսին և զայլ պարագայսն։ Եւ ապա ի նոյն պարսպէն բաժանեալ յատուկ որմով և պարսպաւ ի հարաւակողմն՝ շինէ ի նմա զփոքրիկ եկեղեցի մի ևս յանուն սրբոյն Գէորգայ, և զքանի ատայս ևս յաղագս յատուկ Հայրապետին և իւրոցն՝ որպէս խմբրդ ասացաք։ Ցետոյ Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի զհայրապետանիստ տեղին քակեալ մեծացոյց և վայելչացոյց։ Զկնի նորա Յակոբ Կաթուղիկոսն Շամախեցի և ևս վայելչացոյց և յաւել զշինուածս թէ ի Հայրապետարանումն և թէ ի միւս հասարակ պարսպոջն, և արտաքուստ կուսէ Հայրապետարանին պարսպեաց լաւապէս և ամրացոյց։ Որք զոն այժմ ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս, թէ ներսի պարիսպն և թէ արտաքինն։

Եւ մինչ Եղիազար Կաթուղիկոսն առեալ զայս տեղիս շինէ վանք և տեղիք իւրեան և միաբանիցն, ապա սորա սոյնոյ ի ձորոջն եղեալ բնակիչքն (որոց տունքն ի ներքոյ սոյնոյ տեղիս զոն ումանք Հայք և ոմանք պլղզիք,) սկսանին խօսիլ և տրտնջալ, որպէս օրէն է աշխարհի, զի ի ներքոյ եղեալքն ի հարկէ ի վերոյ եղելոցն խրտնին և աղմուկս յարուցանեն։ Վասն որոյ և ի նստել Նահապետ Կաթուղիկոսին առնու և զայն ներքին տներն ի Թումանենց Յարութիւնի որդի Ազամալէն՝ երեք թումանի ի ՌՃԳ թուին Տաճկաց։ Որոյ կողմանքն են ներքին կողմն, Զորագեղու քուչէն, վերի կողմն քարափն, (յորոց գլուխն է մեր վերոյիշեալ տներն)։ մի կողմն Պետրոսենց և միւս կողմն Մինասենց տներն։ Գի՛տ զղապալայն ցուցակաւն։ Զոր և յառնուլն քակեալ ամայի առնէ, զի մի ոք ևս բնակեսցի։ Իսկ ի մերումս ժամանակի ի ՌՃՀԸ թուին Տաճկաց, և ի մեր ՌՄԺԳ թուոջն՝ Զորագեղցի Զուլունենց Յովհանի որդի Ներսէսն ստիպեալ ի քաղցէն՝ դաւ յարոյց վասն սոյնոյ տան տեղւոյն թէ իմ է, և մեք ի ձեռն շարին ոչ ինչ արարեալ զդաւ նորին՝ իբր ողորմութիւն տուաք նմա մէկ թուման, և ի գլուխ նոյնոյ ղապալային գրեցաք շարին ի բերանոյ նորին զհուճէթ մի թէ փուչ է իմ դաւիս. և այժմ կողմանք նոյնոյ տեղւոյն են Տաճիկ Ճաղալ աղա Հիւսէյնի տունն, Աւզեցի խարաբա տունն, քարափն և քուչէն։

Դարձեալ ի Զորագեղ ի Քարափագլուխ մահլայոջն՝ ի մերձ մեր վերոյիշեալ անապատի մեծ գլանն, Զորագեղցի Յովհաննէսի որդի Օհանն ի նոյն գեղջեցի Երանոսի որդի Պօղոսէն առնու զերիս տունս միով հիսարով, քառասուն ղուռուշի, և տայ վախմ անուամբ սրբոյ Աթոռոյս, բայց զքառասուն ղուռուշն առնու, ի Տաճկաց թուին ՌՃԽԱ, ի յիշխանու-



թեանն Օսմանցւոց։ Որոյ կողմանքն են մեր անապատի պարիսպն, Զորագեղու Եկեղեցին և քուչէն։ Որ զոյ և այժմ ընդ իշխանութեամբ սրբոյ Աթոռոյս։ Որոյ զղապալայն գի՛տ ցուցակաւն։

### Տունք սրբոյ Աթոռոյս յԵրեւան քաղաքն:

Զորագեղցի Արիստակէսի դուստր Սիտիխան անուն կին ոմն այրի ի հայրենեաց մնացեալ զայգի մի ի Նորագեղ, (որոյ կողմանքն են, Զորագեղցի Հաճի Մուհամմատ—վէլու այգին, Զորագեղցի Կարապետի այգին, Նորագեղցի Դաւթի այգին, և Երևանցի Իսրայէլի այգին, որպէս յիշեցաւ ի ճառս այգեաց Նորագեղու։ Այլ և զտուն մի բաղչայով ի յԵրեւան քաղաքն, որոյ կողմանքն են, քարտաշ Պետրոսի տունն, Ջալալենց տունն, Խուպօնց տունն, և ուստայ Ազարարի տունն վախմ տայ սրբոյ Աթոռոյս ի ՌՃԻԴ թուին Տաճկաց, և ի մեր թուոջն ՌՃԿ, ի ժամանակս Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ։ Երկուց վախուպնամայն մի է, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն։ Որոյ բաղչայումն եղեալ տունքն են այսոքիկ, մէկ այվան, մէկ թանապի, մէկ սանդուխխանայ, երկու զերզանպի, մէկ աշխանայ, մէկ մառան, մէկ թալվայ, և մէկ մարագ։ Այսպէս գրի ի վախուպնամայոջն թէ զայսոսիկ վերոյիշեցեալ տունքս հանդերձ ի միջի իւրեանց կահիւքն և ամենայն ընչիւքն զամենայն վախմ ետու սրբոյ Էջմիածնի։

### Տունք, գեօղք, խանութք, եւ այլք այսպիսիք ի Վրաց տունն:

Կախեթու պարոն Թէմուրազ-խանն, և իւր որդի Հերակլն, և իւր կին Խարի-շանն ի մէջ Կախեթու և Քիսեղու, ի Էնիսուլ կոչեցեալ նահանգոջն զգեօղ մի Թոամալուր կոչեցեալ տան Յակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ ամենայն բնակչօքն՝ ամենայն այգեստանիօքն՝ ջրօքն և ամենայն պարագայիւքն՝ ի ծառայութիւն սրբոյ Աթոռոյս՝ ի յիշատակ յաւիտենական, ի թուոջն մերում ի . . . . գի՛տ զղապալայն Վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

### Խանութք որք ի Թիֆլիզ:

Ի մէջ փոքր Զարաս կոչեցեալոյն, երեք խանութք զոն, ի միումն Շիշման Պետրոսի որդի Բեժանն նստի այժմ, որոյ յաջակողմն՝ Կենճեցի Խիթարի խանութն է, և ձախ կողմն ևս Աթոռոյս խանութն է, յորում Ազաջանն նստի։ Եւ այս Ազաջանի նստեալ խանութիս (որ Աթոռոյս է) ի ձախ կողմն ի ներքոյ թաղին փոքր խանութ մի ևս զոյ սրբոյ Աթոռոյս, որոյ ձախ կողմն քուչայ է։ Զայս երեք խանութս խօճա-Բէհբութի որդի Ասլանն

տայ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին ի ՌՃԺԳ թուոջն մերում։ Գի՛ր զկախմնամայն Վրացերէն։ Աստի ի վեր ընթացեալ դէպ ի Նորաշէն յաշպաղ-խանի փողոցումն խանութ մի ևս գոյ սրբոյ Աթոռոյս, որոյ աջ կողմն Ղարանին խանութն է, և ձախն Աղալնոց, զայս խանութս ևս մէլիք Աշխալ-բեկն է տուեալ յիշատակ սրբոյ Աթոռոյս, որ եղբայր է Նոյն Ասլանին։ Աստի ի վեր ընթացեալ դէպ ի մեծ չարսուն՝ թաղի առաջն խանութ մի գոյ, զոր Հոգիկոյենց Մոլսէսն է տուեալ սրբոյ Աթոռոյս։ Որոյ վերի կողմն ևս իւրեանց խանութն է, և Ներքի կողմն Իմէրէլ-Գեօրկոնց խանութն է։

Աստի ևս ի վեր ընթացեալ դէպ ի Գուլասպոնց փողոցն՝ խանութ մի ևս գոյ սրբոյ Աթոռոյս, զոր Հոգինենց Ասին է տուեալ յիշատակ։ Որոյ վերի կողմն մաշտեսի Մելքոնի խանութն է, և Ներքին կողմն ***** Գարսէվանի փեսայ Օթարինն։

Աստի ևս ի վեր ընթացեալ դէպ ի սուրբ Նշանի փողոցն՝ խանութ մի գոյ՝ որ Շահնազարենց կոչեն, զոր Կիկոսենց Նասխիթն է տուեալ սրբոյ Աթոռոյս, որոյ Ներքին խանութն ևս Նոյն Կիկոսենց Յարութիւնին է, և վերի կողմն Ապովենց ոսկերիչ Ռուստամի տունն է, և առաջն փողոց։

Գոյ ևս ի քաղաքս յայս միոյ տան տեղ, զոր Նօնենց Ռոստամն է տուեալ սրբոյ Աթոռոյս յիշատակ, որոյ վերն Փիթոնց Դանիէլին, վայրն՝ Հէջուբենց Ռոստամին, աջ կողմն Միրիչքեարի տան տեղն, և ձախ կողմն՝ Փիթոյենց Դաւութ բէկի տունքն են։

Գոյ ևս ի քաղաքս յայս ի Տափի-թաղումն սուրբ Նշանի Տէր Մովսէսի այգոյն կից մէկ այգետեղ զոր Լօյինենց Յովաննիսի որ ի Սիմաւօնն է տուեալ վախմ սրբոյ Աթոռոյս. որոյ երկու կողմն Տէր Նիկողոսի այգին է, երկու կողմն ճանապարհ։

Մոնթոյենց Մկրտումն և իւր որդի Յովսէփն զխանութ մի ետուն սրբոյ Աթոռոյս յիշատակ ի Նոյն քաղաքն. որոյ մի կողմն Ապովենց Դաւիթն է, մի կողմն Դուլօյենց Գօրկին է, առաջն փողոց, և յետկոյն պարոնի Քեարվանսարէն։ Որոյ ղաբալայն գիտ Հայերէն։

Դարձեալ ի յերկիրն Վրաստանու՝ ի գեօղն Շուլաւէր՝ Ջհանշիրի որդիք տանուտէր Թահմազն և Բայրամն, և Թահմազի որդիք Ռէվազն, Բալինդուրն, և Զալն ի Նոյն գեօղն զմի մեծ այգի տան յիշատակ սրբոյ Աթոռոյս ի ձեռն Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսին, չէն և ապրշումեայ ծառոջք լի, ի ՌՃԻԵ թուոջ մերում։ Գիտ զկախմնամայն Վրացերէն գրեցեալ՝ յերեսն գրեցեալ ցուցակաւն։



Ճորտք այս ինքն ճարկատու ծառայք սրբոյ Աթոռոյս ի նոյն երկիրն:

Ի քաղաքն Թիֆլիզ Աստուածատուր Կաթուղիկոսն Համատանցի զԽախուտի որդի Յարութիւնն գնէ ի ճորտութիւն սրբոյ Աթոռոյս որդւովքն և բոլոր ընտանեօքն ի ՌՃԿԴ թուոջն մերում։ Գի՛տ զղապալայն Վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Դարձեալ Նոյն Աստուածատուր Կաթուղիկոսն գնէ ի Նոյն քաղաքն ի Թումանենց ազգէն զՅակոբի որդի Պապէն, զնորին որդիսն՝ զՅակոբն և զՄամալօն բոլոր ընտանեօքն ի ճորտութիւն սրբոյ Աթոռոյս ի ՌՃՀ թուին մերում։ Գի՛տ զղապալայն Վրացերէն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Այլ և են ճորտք սրբոյ Աթոռոյս Ղալայճի (անագագործ) Պաղտասարն, Քօհնեց Պաղտասարի թոռ Պաղտասարն, Դարբաղ (կաշեգործ) մաշտեսի Դաւթի որդի Յովհաննէսն, Խելթուփենցի տէր Դաւիթն, Խելթուփենցի Աւթանդիլն և իւր որդի Աբրահամն, Բախալ (Նպարավաճառ) Լալուի որդի Յովհաննէսն և Մկրտումն, Պասմաճի Ասլանի որդի Գրիգորն, Գիւրջի Մարգարի որդի Յովհաննէսն, Թէչպաղ Ասլանի թոռն Պապէն, Ծկանցի Աւթանդիլի որդիք Դաւիթն և Յարութիւնն. ղալայճի Պաղտասարի փեսայ ղալայճի Մեհրապն, Ճօն Անտօնի որդի Պազաղ Յարութիւնն, Երևանցի Աւագի որդի դաբաղ Յարութիւնն, Ճաշկեցի Աղաջանն, Դիլաջանեցի Տէր Սարգսի որդիք Լեհինզ, Մելքոն և Պաղտասարն, Կրցխվանեցի Էսի որդի Օթարն, Ղալախեցի դաբաղ Մարգարն, Երևանցի պազազ Գաբրիէլն։

## ԳԼ. Ի.

Յորում ցուցանէն տաղմն Նախարարաց Պորոնց և Քորոնն էշխողաց Շահամէաէաց և այլոց այլաշխատաց հարկատուր գրեանց, որք գան ի սուրբ Աթոռոյս, Նէ ո՞րպէս, ե՞րբ, և վասն ո՞յր պատճառի։

Եւ որքան առ այս՝ ծանի՛ր սիրելի ընթերցող, զի ի ձեռնարկելն իմ զայսմանէ՝ կարի և շատ տարակուսանօք և յոգնոց հանելով գրեցի. քանզի որոց ցանկայի և. յուսայի գտանել, զորս և հաւաստեաւ գիտէի խնկ գոլ յԱթոռոջս, զբազումս և զբոլորէն ոչ գտի։

Ոչ գիտեմ ի Նախանձակտուր, ի Նենգալի և ի թշնամի մարդկա՞նց էին անհետացեալք, թէ ի յանհոգութենէ յաջորդողացն տեղւոյս, և թէ ի մօտ առ մօտ վախճանեցմանէ և ի պղտորմանէ և ի տարուբերմանէ երկրիս և երկրականացս, ընդ որս և Աթոռոյս և Աթոռայնոցս։ Ոչ միայն զյառաջնոցն ասեմ և զՀնագունիցն, այլ և զյետնոցն և զմօտագունիցն։ Արդ մինչ զբազումն ոչ գտի, որպէս ասացի, վասն որոյ և զսակաւն՝ զորս

առձեռն ունիցայ, տեսի և վերահասու եղէ մտացն և գիտմանցն, գրեալ աստ արձանացուցի, զի մի՛ և սոքա անհետասցին։ Քանզի թէպէտ տուղքըն են պղպջակք և թշնամիք մերոյս կրօնի, սակայն՝ տուրք և հրամանագիրք նոցին են ըստ աշխարհիս օգտարարք, բուժիչք, և ապահովացուցիչք, որպէս ի յօձից թունաւորաց սպասեմք առնուլ զթրակէզս ի բուժումն պէս պէս ցաւոց։ Զայս վասն այսորիկ երկարեմ, զի և դու ի յունիդ զգուշութեամբ պահեսցես զմնացեալսն առ քեզ։ Եւ մի՛ ասիցես թէ՛ այժմ այս ինչ ռաղամ անօգուտ է, և կամ թէ թագաւորքն ոչ գոն, զի՞նչ օգտեն հրամանք նոցա. զի պիտոյանան բազմիցս և իւրաքանչիւրոցն գոյ ժամանակ պիտանաւորութեան, որպէս մեք փորձեցաք բազմիցս։ Եւ մանաւանդ որքան թագաւորական գիր գտանի յԱթոռոջս, այնքան պատիւ է սմա, որքան առ յայս՝ բաւ լիցի խոհեմութեանդ։ Ուրեմն զորս ունիցայ և տեսի, են այսոքիկ, զոր սկսեալ ի յառաջնոյն Շահ Թահմազէն մինչ ի յետին Շահ-Թահմազ, և զկնի նոցա զՕսմանցւոցն և զայլոց Շահապէս իշխողաց՝ կարգաւ գրեցի ցանկապէս համարովք՝ և հանդերձ գիտմամբք և թուովքն իւրեանց։ Բայց ի սոցունց՝ որք յիշեցեալք են ի գրքոջս ի հարկաւորութեանն տեղւոջ՝ աստ ես անշանապրին կարճառօտաբար. և որք ոչ են յիշեցեալք երբէք, միայն որպիսութեամբքն իւրեանց գրին։

Ի սկսանիլ երկրորդի դաւաղանի թագաւորութեան Պարսից, ի ՋԽ թուոջն մերում, և ի ՊՂԷ թուոջն տաճկաց, ի Շխօճաղ կոչեցելոյն, յորում նախապէս նստաւ Շահ-Իսմայէլն, յորմէ զռաղամ ինչ ոչ գըտաք, և զկնի նորա թագաւորէ Շահ-Թահմազն ի ՃՀԷ թուոջն մերում, և ի տաճկաց ՃԼԳ թուին։ Այս Շահ Թահմազս ռաղամ մի տայ Միքայէլ Կաթուղիկոսին ի ՋԾԵ թուոջն Տաճկաց, և ի մեր թուոջն ՋՂԵ, վասն Նախիջևանու, Գեղարքունույ, Ղափանու, Խոյու, Սալմաստու, Կէնճէու, Բարտայու, Ախտաւու, Ջակամներու, և Լօռու, զի Էջմիածնի լիցին վիճակ և հնազանդ նորին Կաթուղիկոսացն, որպէս յառաջնմէ լեալք են։ Քանզի ի յամսյանսն սրբոյ Աթոռոյս, զվերոյիշեցեալ վիճակսդ, զորն Գանձասար էր զաւթեալ, և զորն Աղթամար։ Գիտ զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցական և . . Նշան համարաւ։ Որոյ սաւատ մի ևս գոյ, գիտ դոյն նշանօքդ։ Ցիշեցաւ այս ի Թ գլուխն ի ճառս Գանձասարու։

Մեծ Շահ-Աբասին ռաղամ մի գոյ ի սուրբ Աթոռս, զոր գրէ առ Ամիրգունէ խանն ըստ արզայի Դաւիթ Կաթուղիկոսին ի ՌԺԹ թուին Տաճկաց, թէ զմասունս սրբոց Հռիփսիմեանցն ի դող Պարիզեցն առ և Էջմիածնի թաղեմ արա, և զպատրիչսն հալածեա։ Գիտ յերեսն գրեցեալ ցուցական և . . համարաւ։



Մեծ Շահ-Աբասին ռաղամ մի ևս գոյ ի սուրբ Աթոռս, զոր ի ժամանակս Մելքիսէթ Կաթուղիկոսին գրեալ յանուանէ զամենայն սերմանելի տեղեաց սրբոյ Աթոռոյս, հրամայէ՝ զի մի՛ ոք ձեռնամուխ լիցի նոցա, ի ՌԻԲ թուին Տաճկաց։ Գիտ յերեսն գրեցեալ ցուցական և . . համարաւ։ Ցիշեցաւ այս ի ճառս արտօրէիցն ի ԺԵ գլուխն։ Ցոր նախ Շէխ-Իսլամն գրէ յանուանէ զսերմանելի տեղեան Սրբոյ Աթոռոյս, և ապա Շահն ի գլուխն ռաղամ գրէ։

Մեծ Շահ-Աբասին ռաղամ մի ևս գոյ ի սուրբ Աթոռս, գրէ ըստ արզայի Մելքիսէթ Կաթուղիկոսին թամպէհ ազգիս Հայոց, զի յուր և իցեն, հնազանդ լիցին Կաթուղիկոսին Էջմիածնի, որպէս օրէն է ի բնէ անտի, ի . . . թուին Տաճկաց։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցական, և . . . համարովն։

Մեծ Շահ-Աբասին ռաղամ մի ևս գոյ ի սուրբ Աթոռս, յորում զԼուսարարութիւնն սրբոյ Աթոռոյս տայ Սիւնեցի Մովսէս վարդապետին ըստ արզայի նորին։ Որ յետոյ եղև Կաթուղիկոս։ Գիտ յերեսն գրեցեալ ցուցական և ( . . ) համարովն։ Որ գրի ի Տաճկաց ՌԼԶ թուոջն։

Շահ-Սէֆու ռաղամի սաւատն է, բայց հաստատուն կնքով, յորում Շահ-Սէֆին զհարիւր թումանն մուլքաթէն բառնայ ի սուրբ Աթոռոյս ըստ արզայի Մովսէս Կաթուղիկոսին, որ էր հաստատեցեալ ի մեծէ Շահ-Աբասէն, ի ժամանակս Մելքիսէթ Կաթուղիկոսին։ Որ գրի ի Տաճկաց ՌԼԸ թուին։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցական, և . . . համարովն։

Շահ-Սէֆուն ռաղամ. զի արդ առնեն Խաչենու և բոլոր Աղուանից երկիրն թէ՝ մեք ի բնէ Էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու Կաթուղիկոսն ի վերայ մեր մի՛ իշխեսցէ։ Եւ Շահն գրէ հրաման՝ զի այսպէս լիցի, զի Էջմիածնի լիցին հնազանդք և նմա տայցեն զհոգևորականութիւնս։ Գիտ ցուցակաւ և . . համարով։ Որ գրի ի ՌԽԴ թուին Տաճկաց։ Սորա սաւատ մի ևս գոյ, գիտ ցուցական և . . համարով։ Ցիշեցաւ այս ի Թ գլուխն ի ճառս Գանձասարու։

Շահ-Սէֆու ռաղամ, յորում գրէ թէ՝ Նուիրակացն Էջմիածնի և կամ Խալիֆայի մարդկանցն ամենևին մի՛ ոք խօսեսցի և խառնիցին իրանըս և ի գործս նոցա, և կամ զբան ինչ պահանջիցեն ի շրջելն աստ և անդ, ըստ արզայի Փիլիպպոս Կաթուղիկոսին, ի ՌԽԸ թուին Տաճկաց։ Զոր գիտ ցուցական և . . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, յորոյ մի կողմն Շէխ-Իսլամն զֆաթվէյ գրէ, և ի միւս երեսն Շահն ռաղամ գրէ ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին թէ՝ ի Հատրբեջան ոմանք ի զուր զբան պահանջեն ի Հայոց,

որպէս արդ արարին մեզ, մի՛ ես լիցիմ պատուհաս։ Եւ ի ժամանակս Օսմանցւոց զ՛ի շարժէ աւերեալ Եկեղեցիսն եթէ նորոգել կամիցին, մի՛ ոք ներհակիցի, զի հարկատու են մեզ. և ի բանս օրինաց նոցա մի՛ ոք խառնեսցի. ի ՌԾԳ թուին Տաճկաց։ Զոր գիր ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, յորում ի մի երեսն Շէխ-Իսլամն գրէ զամենայն սերմանելի տեղիսն սրբոյ Աթոռոյս և վկայէ թէ՛ այսոքիկ վախմ են սրբոյ Էջմիածնի. և ապա ի միւս երեսն Շահն ռաղամ գրէ թէ՛ մի՛ ոք ձեռնամուխ լիցի նոցա, ի ՌԾԴ թուին Տաճկաց։ Գիր ցուցական և . . համարով։ Սոյնանման ռաղամ մի ևս ի մեծէ Շահ-Ապասէն գոյ, գիր ցուցական և . . համարովն։ Որք յիշեցան ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէիցն։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, յորում ըստ արզայի Փիլիպպոս Կաթուղիկոսին զմի գութան մաղաֆ առնէ սրբոյ Աթոռոյս. զի չարն Մահմատ-ղուլի խան՝ կամեցեալ է բռնհրայ առնուլ։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։ Զոր գիր ցուցական և . . համարովն, որ գրի ի ՌԾԵ թուին Տաճկաց։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, յորում գրէ թէ՛ վանօրայքն Երևանու՝ զոր ինչ ի ժամանակս Ամիրկունէ խանին տուեալ են, զնոյնն առնուցէ Մահմատ-ղուլի խանն և մի՛ ինչ աւելի, ի ՌԾԵ թուին Տաճկաց։ Գիր ցուցական և . . համարովն։

Փոքր Շահ Ապասին ռաղամ, յորում ըստ արզայի Փիլիպպոս Կաթուղիկոսին գրէ սաստիկ պատուէր, զի Նուիրակացն Էջմիածնի՝ խանք և պէք իշխօղք մի՛ լիցին ձեռնամուխք, ի ՌԾԵ թուին Տաճկաց։ Գիր ցուցական, և . . . համարովն։ Յիշէ ևս թէ՛ որպէս ի ՌԽԸ թուին Շահ-Սէֆին ևս է տուեալ այսպէս ռաղամ, որպէս ի վերդ գրեցաւ։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ վասն Երևանու երկրիս Եկեղեցեաց նորոգութեան և շինութեան՝ ըստ արզայի Փիլիպպոս Կաթուղիկոսին։ Գիր յերեսն գրեցեալ ցուցական և . . համարովն, ի ՌԾԵ թիւն Տաճկաց։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, յորում գրէ ըստ արզային Փիլիպպոս Կաթուղիկոսին թէ՛ եթէ Հայք ընդ միմեանս զդաւ ինչ ունիցին, առ խալիֆայն և առ յայլ կարդացողս իւրեանց գնասցեն ի դատ, Տաճիկք ոչ արգելուցուն և ոչ խառնիցին։ Այլ և Հայք եթէ զեր ինչ վախմ տան Էջմիածնի, Տաճիկք մի արգելուցուն. յորոյ միւս երեսն ևս շարն գրէ զփաթվայ։ Գիր ցուցական և . . համարովն, ի ՌԿ թուին Տաճկաց։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, զի Փիլիպպոս Կաթուղիկոսն արզ առնէ թէ՛ այս Աթոռս թէ ի յայս գեօղս և թէ յայլ ուրեք ունի զմուլքս,



զայգիս, և զջրաղացս, որք ի բնէ վախմ են Աթոռոյս, և այժմ խանք և պէք իշխօղք ոչ թողուն մեզ վայելել զնոսա։ Երկրիս իշխօղ Խոսրով խանն ևս ի սոյն արզայումս զվկայութիւն գրէ Կաթուղիկոսի արզային։ Յորում ինն այգի գրի և ինն ջրաղաց գոլ Աթոռոյս։ Որոց աղագաւ Շահն սաստիկ թամպէհ գրէ, զի մի՛ ոք լիցի ձեռնամուխ, ի ՌԿ թուին Տաճկաց։ Գիր ցուցական և . . համարովն։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, զի Փիլիպպոս Կաթուղիկոսն արզ առնէ թէ՛ զԳեօզալ-դարայի ջուրն (որ է ինն ջրաղացի ջուր) բերի ի գետս մեր խառնեցի, որ մեծ օգնութիւն եղև երկրիս. բայց մեզ ոչինչ օգուտ, զի մուլք գեղջս մերոյ (որ բնական Աթոռոյս է լեալ) այն ևս Ամիրկունէ խանի որդի Թահմազ-ղուլի խանն իւր տիւլ-ուլէ տեղ զաւթեալ եկեր, որ և մինչ ցայսօր այնպէս պէք ուտեն, խնդրեմ զի մեզ շնորհեսցես զմուլք գեղջս մերոյ։ Երկրիս իշխօղ Խոսրով խանն ևս յայս արզայոջս գրէ զվկայութիւն, և զբարերարութենէ Կաթուղիկոսին. և խնդրէ կատարել զխնդիր նորին։ Վասն որոյ և Շահն ռաղամ գրէ բաշխելով ոչ միայն մուլքն Հէշդանկ գեղջս մերոյ, այլ և զբոլոր մուտախիլն սորին, որ գրի հարիւր թմնուն խալուար և հինգ լիտր։ Գիր զայս ռաղամս յերեսն գրեցեալ ցուցական և . . . համարովն, ի ՌԿ թուին Տաճկաց։ Յիշեցաւ այս ի ԺԵ գլուխն ի ճառս մքատուութեան գեղջս մերոյ։ Որ կարի պիտանի է, մանաւանդ որ ինն ջրաղացաց ջուր յատուկ սրբոյ Աթոռոյս գոյ ի գետս մեր, բաց ի հասարակ բաժնէն, որոյ կէսն Աթոռոյս է։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, յորում Փիլիպպոս Կաթուղիկոսն յետ ճառելոյ զբարերարութիւնս իւր, զԳեօզալ-դարայի ինն ջրաղացի ջուրն բերելն, և զՄուրթուզայ փաշայն յետս դարձուցանելն ԲՃ թուման տալով, ապա զերիս խնդիրս առնէ յատուկ յատուկ։ Նախ թէ զմուլքսն սրբոյ Աթոռոյս՝ զայգիս, զջրաղացս, զվարելահողս, զանասունս, և զայլսն՝ մաղաֆ արասցես, զի կերեալ աղօթեսցուք վասն քո։ Երկրորդ թէ՛ Աթոռս այս ի Նախնեաց մինչև ցայսօր զորքան վախուպ մուլքս ունեցեալ է և ունի, մի՛ ոք ձեռնամուխ լիցի նոցա։ Երրորդ թէ հրաման տուր՝ զի յԵրուսաղէմ գնացից։ Եւ շահն իւրաքանչիւրց խնդրոցն յատուկ յատուկ ի գլուխսն հրաման գրէ և կնքէ, ի ՌԿ թուին Տաճկաց։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։ Գիր յերեսն գրեցեալ ցուցական և . . համարովն։ Շատ հարկաւոր է և լաւ պահելի։

Փոքր Շահ-Ապասին ռաղամ, զի արզ առնեն Շամախու և Շիրուանու երկիրն թէ՛ մեք ի բնէ Էջմիածնի եմք լեալք վիճակք, և զնուիրակութիւ-

նըս մեր Էջմիածնի ևք տուեալ կամիք ևս այսպէս լինիլ. Գանձասարու Կաթուղիկոսքն ի վերայ մեր մի իշխեսցեն։ Շահն գրէ հրաման՝ զի այսպէս լիցի, ի ՌԿ թուին Տաճկաց, զոր գտցես ցուցական և . . համարով։ Սորա սուտ մի ևս գոյ, գիտ ցուցական և . . համարով։ Յիշեցաւ այս ի Ժ գլուխն ի ճառն Գանձասարու։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զի սրբոյ Աթոռոյս վէքիլ Թումանն գընացեալ ի յԱսպահան՝ արզ առնէ Շահին թէ՝ Բաթրինճ գեօղն Էջմիածնի մուլք է և խոտհարք վասն անասնոյն. Քոչարի Տաճիկք եկեալ բընակեն ի նմա, երկրին և Էջմիածնի վնաս տան։ Վասն որոյ և Շահն սաստիկ թամըհ գրէ նոցա, մի ևս բնակիլ անդ։ Յիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս Բաթրինճու, ի ՌԿ թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ Աբասին ռաղամ վասն Փիլիպպոս Կաթուղիկոսին յԵրուսաղէմ գնալոյն և վասն նորա վէքիլին մի ոք ներհակեսցի։ Գիտ ցուցական և . . համարով, ի ՌԿ թուին Տաճկաց։

Փոքր ռաղամ մի ևս շնորհակալութիւն վասն ընծայից Փիլիպպոս Կաթուղիկոսին և զլխոյ յղելոյն։ Գիտ ցուցական և . . համարով, ի ՌԿ թուին Տաճկաց։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զի Երևանցի Սէթի որդի խօճայ Յակոբն, զոր յիշեցաք ի ճառս Նորագեղու և յայլս տեղիս, զՆորագեղու չորս դանգ և կէս մուլքն ունեցեալ է հաստատուն ղաբալայով, Տաճիկք ոմանք յափշտակեալ են ի նմանէ, և Յակոբն արզ առնէ Շահին, և յինքն դարձուցանէ՝ և յետոյ տայ վախմ սրբոյ Աթոռոյս ընդ Նորագեղու մլքին և ընդ այլոց, վասն որոյ և զայս ռաղամս տայ Աթոռոյս։ Յիշեցաւ ի ԺԳ գլուխն ի ճառս Եղուարդայ, ի ՌԿԲ թուին Տաճկաց. գիտ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զոր ըստ արզայի Փիլիպպոս Կաթուղիկոսին և Յակոբ վարդապետին գրէ թէ՝ Էջմիածնի նուիրակունքն ուր և գընան, Ջալիթք, Խանք և Ռահդարք [1]) մի մերձեսցեն և մի զինչ պահանջեսցեն։ Բայց եթէ մաքսի արժան ինչ ունիցին, տայցեն ըստ կարգին զմաքսն, ի ՌԿԲ թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զի Յակոբ Կաթուղիկոսն և այլ շրջակայ գիւղօրայքն վերստին արզ առնեն վասն Քեօչարի տաճկացն՝ որք գան ի Բաթրինճ գեօղն իջանեն և վնաս հասուցանեն։ Վասն որոյ սաստիկ

(1) Մաքսաւոր։



թամըհէ գրէ, զի մի՛ ևս մտցեն ի գեօղն յայն, ի ՌԿԷ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զի նախ շարն վճռէ թէ՝ եթէ ումն Տաճիկ ումեմն քրիստոնէի ի ձեռն շարի և ղաբալայիւ զմուլք ինչ ծախէ, այլ ոչ կարէ դարձ առնել, և յետս խնդրել։ Այլ և՝ եթէ ծախող Տաճկին ազգական մի եկեալ դաւ յարուցանէ ընդ գնող քրիստոնէին վասն այն ծախեցեալ մլքին, ոչ ինչ է և ընդունայն։ Ապա և Շահն ի գլուխ փաթվային գրէ լինել այսպէս, ի ՌԿԸ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զի Նաճաֆ-խանն կամեցեալ է բահրայ առնուլ յԱթոռոյս, և Յակոբ Կաթուղիկոսն արզ առնէ թէ՝ Փիլիպպոս Կաթուղիկոսին դու մէկ գուլթանի մաղաֆութիւն ես տուեալ, այժմ սորա զպատուէրդ ոչ պահեն։ Վասն որոյ և Շահն վերստին հաստատելով զմէկ գուլթանի մաղաֆութիւն, գրէ սաստիկ թամըհէ Նաճաֆ-խանին, զի մի՛ առցէ, ի ՌԿԹ թուին։ Գի՛տ ցուցական և . . . համարով։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, որ (որպէս . . և . . ռաղամքն,) գրէ յամենայն իշխանութիւնս իւր թէ՝ Էջմիածնի Կաթուղիկոսն և նորին մարդիկքն ուր և շրջին, մի՛ ոք արգելցէ, կամ զեր ինչ պահանջեսցէ, և կամ ի գործս և ի յօրէնս նոցա խառնեսցի։ Գի՛տ ցուցական և . . համարով, ի ՌԿԹ Տաճկաց թուին։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, յորում նախ Շէխ-իսլամն վճիռ գրէ թէ՝ արծաթագին ծառային ջզիայ և խարճ ոչ գոյ։ Ապա և Շահն հրաման գրէ լինել այնպէս, ի ՌԿԹ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, յորում նախ Շէխ-իսլամն վճռէ թէ՝ ումն Հայ մեռանի, և ումն եկեալ առ մնացորդսն մեռելոյն ասասցէ թէ՝ մեռեալդ ինձ այս ինչ տալոց էր, և կամ թէ զայս ինչ աւանդ եդի առ դա, ոչ կարէ հաւաստել և առնուլ մինչև ի ձեռն շարի և բազմաց վկայութեամբ ոչ ստուգեսցէ։ Ապա և Շահն գրէ այնպէս լինել, ի ՌԿԹ թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Երևանցւոց և Նախիջևանցւոց թէ՝ զաւեր եկեղեցիսն եթէ նորոգել կամիցին, մի ոք ներհակեսցի, ի ՌԿԹ թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . համարով։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, յորում նախ շարն գրէ զվճիռ թէ, ումն Հայ ուր և իցէ զմուլքս, և զվարելահողս ունիցի իւրեան հաստատաբար՝ երբ և կամիցի կարէ վարել և տիրել, ոչ ոք կարէ արգելուլ և կամ տի-

րել. և Շահն գրէ այնպէս լինել. ի ՌԿԹ թուին տաճկաց. գիր ցուցական է . . . համարումն։

Փոքր Շահ-Աբասին ռաղամ, յորում նախ Շխ-իսլամն վասն երից իրակութեանց զվճիռ գրէ, նախ թէ՝ եթէ ոք զմուլք ինչ վախմ արասցէ մեռելոյ ուրուք, ոչ կարէ յետս առնուլ։ Երկրորդ թէ՝ եթէ ոք ի մեռանելն իւրում գկտակ ինչ առնիցէ, որդի նորին ոչ կարէ բացասել զայն։ Երրորդ թէ՝ եթէ ոք ի մեռանիլն իւրում զոք վէքիլ կարգեսցէ՝ զի ըզկտակն իւր կատարեսցէ, որդի մեռանողին ոչ կարէ արգելուլ։ Եւ Շահն հրաման գրէ ի գլուխն, զի այսպէս լիցի, ի ՌՀԱ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . համարումն։

Շահ Սուլէյմանին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Քանաքեռցւոց թամ-պէհ թէ՝ ի Հայոց ոմանք որք ի յօրէնս մեր դառնան, այլ ոչ կարեն յազ-գականաց իւրեանց զինչս խնդրել և կամ դաւ յարուցանել։ Գրէ և Երևանու իշխող Սէֆի-ղուլի խանին պատուէր, զի մի թողուցու, ի ՌՀԷ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . համարումն։

Շահ Սուլէյմանին ռաղամ վասն Մուղնու սրբոյն Գէորգեայ վանիցն նորոգութեան։ Յորում նախապէս շարն զվճիռ գրէ թէ՝ որովհետև յառաջմէ լեալ է, և հնացեալ է, այժմ եթէ նորոգեսցեն քարիւ և կրով՝ ոչ է անտեղի։ Եւ Շահն հրաման գրէ լինել այնպէս, ի ՌՀԲ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . համարումն։

Շահ-Սուլէյմանին ռաղամ վասն Եկեղեցեաց նորոգութեան։ Յորում նախ շարն զվճիռ գրէ թէ՝ Հայքն մինչ հնազանդ են թագաւորի և հարկատու, ոչ է անտեղի՝ եթէ զաւերեալ Եկեղեցիսն իւրեանց նորոգեսցեն։ Եւ Շահն զհրաման գրէ լինել այնպէս, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . համարումն։

Շահ-Սուլէյմանին ռաղամ, յորում նախ վճռէ շարն թէ՝ Էջմիածին, վանորայք, և այլք Եկեղեցիք Հայոց, որք ըստ օրինաց իւրեանց զմեռեալս իւրեանց համարձակ թաղեն, զպսակս առնեն, յԵկեղեցիս բարձր ձայնիւ երգեն, զանգակ հնչեն, և զայլս այսպիսիս, ոչ է արգելելի, որովհետև հարկատու են թագաւորին, և Շահն հրաման գրէ, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . համարումն։

Շահ-Սուլէյմանին ռաղամ, զի արզ առնեն ամենայն Հայքն Հատրբէջանու երկրիս թէ՝ մեք հարկատու եմք թագաւորին, Տաճիկք ոչ թողուն մեզ զանգակ հնչել, ժամ կոչել և բարձր ձայնիւ ժամ ասել, և ամենայն օրինաց մերոց հակառակին։ Ապա Շահն գրէ զվճիռ թէ՝ ոչ է պարտ Տաճկաց այսպէս առնել, և Շահն ևս ի միւս երեսն հրաման գրէ



մի այնպէս առնել, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . . համարումն։

Շահ-Սուլէյմանին ռաղամ, յորում նախ շարն զվճիռ գրէ թէ՝ որքան Հայք՝ որք գան ի յիշխանութիւնս թագաւորութեան մերում, որք են հարկատու և հնազանդ, մի՛ ոք իշխեսցէ զնոսա ի տաճկութիւն հրաւիրել, և կամ բռնադատել։ Այլ և եթէ զաւերեալ Եկեղեցիսն իւրեանց նորոգեսցեն քարիւ, կրով, աղիւսով, և փայտիւ, ոչ ոք կարէ արգելուլ։ Եւ Շահն հրաման գրէ լինել այնպէս, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գիր ցուցական է . . . համարումն։

Շահ-Սուլէյմանին ռաղամի սեւատ, բայց շարի կնքով։ Յորում նախ շարն վճռէ թէ ի Հատրպէճան յերկրոջս, Տաճիկք ոմանք զՀայոց ազգն նեղացուցանեն, և ի զուր զնոս պահանջեն, և կամ ի նորոգելն նոցա զհնացեալ Եկեղեցիս իւրեանց՝ արգելուն, և ի բանս օրինաց նոցա խառնին. որոց պատուէր լիցի մի՛ առնել այսպէս։ Եւ Շահն ի միւս երեսն գրէ հրաման սաստիւ այնպիսեացն, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գի՛ր ցուցական է . . համարումն։ Այսպէս ռաղամ մի ևս փոքր-Շահ Աբասն տայ ի ՌԾԳ թուոջն Տաճկաց։ Զոր գտցես ցուցական է . . համարով։

Սապէս ռաղամ մի ևս տայ Փոքր Շահ—Աբասն վասն նորոգութեան Եկեղեցեաց բոլոր Հատրպէճանու երկրիս, ի ՌՀԱ թուին Տաճկաց։ Բայց սեւատ է և շարի կնքով, գիր ցուցական է . . համարով։

Շահ-Սիւլէյմանին ռաղամ խիստ լաւ և շատ հարկաւոր և պիտանի։ Զի Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն զպէսպէս հակառակութիւնս և զգըլխացաւութիւնս կրելով վասն գեղջս մերոյ Էջմիածնի վեց դանկ մլքին ի խանից և յայլոց տաճկաց, արարեալ է զայս մեծ բարերարութիւնս մեծաւ խոհեմութեամբ։ Քանզի զմեծ վախումնամայն Մակուեցի Գրիգոր Կաթողիկոսին, (որ գոյ ի սուրբ Աթոռոջս, որով գնեալ է զբոլոր գեօղս մեր իւրով սահմանօքն) զԱմիրկիւնէ խանի տուեալ հուճէթն, (որ ժամանակ ինչ զգեօղս մեր զաւթեալ ունէ, և յետոյ զվերոյիշեալ վախումնամայն տեսեալ՝ որով և հաւաստեալ է թէ՝ գեօղս այս վախմ է սրբոյ Աթոռոյս, զայն հուճէթն տայ թէ յիրաւի գեօղս Էջմիածնի է, այսուհետև մի ոք ձեռնամուխ լիցի ի գեօղս յայս յաղագականաց խնդ, որ գրի ի ՌԽԹ թուին Տաճկաց. որոյ երկուք սեւատքն գոն ի սուրբ Աթոռս շարի կնքով)։ Այլ և սոյն Ամիրկիւնէ խանի որդի Աբաս Ղուլի խանի տուեալ հուճէթն, որ յառաջ քան զխան լինելն երկրիս՝ եկեալ դաւի է արարեալ ընդ Յակոբ Կաթուղիկոսին վասն գեղջս այսորիկ թէ՝ մեր է, և հայրն իմ յայսքան ժամանակ եկեր զսա։ Եւ Յակոբ Կաթուղիկոսն վերոյիշեալ մեծ վախումնամայիւն և նորին հօր տուեալ վերոյիշեալ հուճէթիւն պապանձեցուցեալ է

զնա առաջի Շահին, և զայն հրամանն առեալ ի նմանէ ի ՌՀԳ թուին Տաճկաց, յորում գրէ թէ՝ յիրաւի գեօղս այս բոլորովին Էջմիածնի է, որոյ սուտանն զոյ յԱթոռոյս։ Այլ և զհրամէթ և զվկայական գիր մի ևս ի ՌՀԹ թուին Տաճկաց գրեցեալ։ Զայսոսիկ չորեսին թուղթս (զորս ասացաք) առեալ Յակովբ Կաթուղիկոսն գնայ ի յԱսպահան, և ցուցանէ Շահսլամին և այլոց դիւանագրաց նորին, և ծանուցանէ զամենայն որպիսութիւնս գեղջս մերոյ։ Ապա ի տեսանել Շահսլամին և ի վերահասու լինելն, գրէ ըղհաստատուն և գլխահաստ հրամէթ մի, կնքէ ինքն և այլոց մեծամեծաց կարգացողաց կնքեցուցանէ թէ՝ տեսաք մեք զՀին մեծ վախուսթնամայն, զԱմիրկիւնէ խանի գիրն և զայլ գրեանս, և վերահասու եղաք ստուգութեամբ՝ որ այս գեղջս ոչ միայն զշեշ դանկ մուլքն, այլ և բոլորովին հողըն, մաղախիւնն և բահրայն Էջմիածնի են լեալ ի բնէ անտի։ Որոյ յաղագս ոչ ոք զաւ յարուցանէ՝ փուչ է և անընդունելի։ Ապա և Յակոբ Կաթուղիկոսն առեալ զայս հաստատուն գիրս՝ մատուցանէ Շահ Սուլէյմանին արզայիւ հանդերձ։ Եւ Շահն ի տեսանելն զվկայութիւն Շահին և այլոց մեծամեծացն, գրէ ռաղամ ի միւս երեսն նոյն հաստատուն հրամէթին թէ՝ որ ինչ գրեցեալ է ի միւս երեսն թղթոյս վկայութեամբ Շահին, և ես հրամայեցի՝ զի այդպէս լինիցի։ Գրեալ ի նմա և զպատուէր Երևանու իշխողացն, զի մի՛ ոք ընդդէմ գրեցելոցս շարժիցին, ի ՌՁԲ թուին Տաճկաց։ Գի՛տ զայս ռաղամն յերեսն գրեցեալ ցուցակաւն և . . համարովն։

Ցիշեցաւ այս ռաղամս և որպէսն սորին ի ԺԳ գլուխն ի ճառս միքատուութեան գեղջս մերոյ։ Ունի սա և զերկուս սուտաս շարի կնքով կնքեցեալ, բայց մինն սոյնանման՝ մի յերեսն շարի վկայութիւնն և ի միւս երեսն Շահի ռաղամն, և միւսն միայն Շահի վկայութիւնն, զի Շահի ռաղամ երեսն չէ գրեցեալ։ Զորս գտցես ցուցակօքն և . . համարօքն։

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ է ամենայնիւ նոյն և նման ընդ վերնոյ ասացեալ ռաղամիդ։ Բայց այսքան ունի զանազանութիւն, զի ի վերնումդ ի շարի վկայութեանն յիշի թէ՝ մեք վերահասու եղաք, որ Էջմիածնի գեղջ հաւըլն, մաւտախիլն և բահրայն են բոլորովին Էջմիածնի, բայց Շահն ի միւս երեսն զայսոսիկ յատուկ յատուկ ոչ յիշէ, այլ գրէ թէ որ ինչ ի միւս երեսն շարն վկայեալ է, և ես հրամայեցի։ Իսկ յայս ռաղամումս, որպէս շարն գրէ զայն բառսն յանուանէ, նոյնպէս և Շահն գրէ յանուանէ ի ռաղամն ի միւս երեսն։ Եւ երկրորդս գրի ի ՌՁԵ թուին Տաճկաց, զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և . . համարովն։ Շատ պիտանիք են այս երկու ռաղամքս և լաւ պահելիք։

Շահ Սուլէյմանին ռաղամ, զի մեր գեօղականքս արզ արարին թէ՝ առու մի ունինք մեք շահի-արխ անուամբ, որ բնական մեր է, այժմ Հաճի-



ղարացիք զայն առին և ջուրն յափշտակել կամին ի մէնջ։ Եւ Շահն ի գլուխ արզային ռաղամ գրէ ի վերայ Հատրպեճանու սարդարին և Երևանու իշխողին թէ՝ վերահասու լերուք, եթէ ջուրն այն Էջմիածնի է, նոցա տուք, և Հաճի-ղարացիք մի՛ մտանիցեն, ի ՌՁԵ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Աթոռակալ Ոնոփրիոս վարդապետին ի վերայ իշխողաց երկրիս թէ՝ ի վանօրէից աւելի քան զընական կանոնն զիր ինչ մի՛ պահանջէք, ի ՌՁԵ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Սուլէյմանին ռաղամ վերահաստատութեան Կաթուղիկոսութեանն Յակովբայ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ի ՌՁՋ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Սուլէյմանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Յակոբ Կաթուղիկոսին ի վերայ Երևանու խանին թէ՝ Էջմիածնի մուլքն ո՛վ ոք բռնութեամբ զաւթեալ իցէ, յետս դարձուցանել տայցես։ Զի անիծեալ Լալզի-Սէֆիղուլի խանն զամենս մուլքս Աթոռոյս զաւթեալ է երբեմն՝ ի ՌՂԱ թուին Տաճկաց. գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Սուլէյմանին ռաղամ, զի Խալդար անուամբ ոմն տաճկացեալ՝ յեզմուլք ինչ (զոր ազգականքն իւր վախմ են տուեալ սրբոյ Աթոռոյս) յետս առնու։ Եւ Եղիազար Կաթուղիկոսն արզ տանէ Շահին, և Շահն զայս ռաղամս տայ, զի Խալդարն այն յետս դարձուսցէ զառեալ մուլքն։ Ի ներքոյ արզային և շարն գրէ զփաթվայ, ի ՌՂԵ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Սուլէյմանի ռաղամ վասն Եղիազարի Կաթուղիկոսութեանն, ի ՌՂԹ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն . . համարովն։

Շահ Սուլէյմանին ռաղամ վասն Նահապետի Կաթուղիկոսութեանն, ի ՌՃԲ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ վասն Նահապետի Կաթուղիկոսութեանն ի ՌՃԶ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ վասն վերստին Կաթուղիկոսութեանն Նահապետին յետ Ստեփաննոսին, ի ՌՃԺԱ թուին Տաճկաց։ Գի՛տ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ Հատրպեճանու երկրիս իշխողացն թամպէհ թէ՝ Հայոց ննջեցելոցն համարձակ թաղեսջին, քակեցեալ եկեղեցեացն նորոգելոյն, և այլ օրինաց նոցա մի՛ ոք հակառակեսցի կամ նեղացուսցէ, կամ զիր ինչ պահանջեսցէ, ի ՌՃԺԱ թուին տաճկաց։ Գի՛տ

ցուցակաւն և . . համարովն։ Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, զոր գոցես ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զի Դանիէլ անուն ոմն չարախօսէ զՆահապետ Կաթուղիկոսէն առ Շահն, և Արդաստում խանն բարեկամ գոլով Կաթուղիկոսին, բարեխօսէ վասն նորա։ Վասն որոյ և Շահն գրէ զայս ռաղամն ի միամտութիւն Կաթուղիկոսին, և միաբանիցն ի հնազանդութիւն նմա ըստ օրինի, ի ՌՃԾԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Շահ Հիւսէյինի ռաղամ, զոր գրէ ի ՌՃԾԲ թուին տաճկաց վասն Կաթուղիկոսութեանն Աղէքսանդրի Ջուղայեցւոյ ի թուին Տաճկաց . . . ։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինի ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ վասն Փռանկաց թէ մի՛ խրէք երևեսցին յիշխանութեանս խմէժ, և ոչ զօրէնս իւրեանց ուսուսցեն և կամ հրաւիրեսցեն զոք ի յաղանդս իւրեանց, մի՛ զմանկունս ուսուսցեն, և ի Հայոց ըզկանայս մի առցեն, և այլ այսպիսիք պատուէրք, ի ՌՃԻԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ պլատնի, զի զերկուս գումանս և զհինգ հարիւր ոչխարս սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնէ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ի ՌՃԻԳ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։ Ցիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս։

Շահ Հիւսէյինին ռաղամ ըստ արզայի Աղէքսանդր Կաթուղիկոսին վասն Փռանկ պատրչացն՝ զի մի իշխեսցեն զՀայս դարձուցանել, և զայս այսպէս թամլէքս։ Ցիշէ ևս թէ՝ ի ՌՃԻԲ թուոջն ևս եմ տուեալ այսպէս փարման, (որ ի վերդ յիշեցաւ), սոսանոր շատ սաստկութեամբ գրէ, ի ՌՃԻԳ։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։ Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, գիտ սոյն թուովս, և . . համարովս։

Շահ Հիւսէյինին ռաղամ՝ ըստ արզայի Աղէքսանդր Կաթուղիկոսին, զի գնասցէ Ցունաց յերկիրն. և Խանին պատուէր գրէ՝ զի տեղապահին և Աթոռոյս մուղայէթ 1) լիցի, ի ՌՃԻԳ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամն է՝ զոր տուեալ է ըստ արզայի Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսին զի [illegible] Բէգլէրբէգ, և այլք Տաճիկք, ի մէջ վանօրէից և Եկեղեցեաց մի՛ նստիցեն, ի ՌՃԻԳ թուին Տաճկաց։

(1) Վերահասու, փոյթ ունել։



Գիտ ցուցակաւն և . . համարովն։ Սորա սաւատ մի ևս գոյ շարի կնքով, գիտ ցուցակաւն և . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զի Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսին զվեց ռաղամս առաջնոց թագաւորացն տուեալ ցուցանէ, և ի նմանէ ըզվերահաստատութիւն խնդրէ։ Որոց առաջինն է մեծ Շահ-Աբասինն, յորում գրին բոլոր սահմանելի տեղիքն սրբոյ Աթոռոյս, որ գրի ի Տաճկաց ՌԻԲ թուոջն, զոր գոցես ցուցակաւն և . . համարովն։

Երկրորդն է փոքր Շահ-Աբասինն, յորում գրի՝ Հայոց առևտուրն շարով ընդունելի լիցի, որ գրի ի ՌԿԲ թուին Տաճկաց։ Զոր գոցես ցուցակաւն և . . համարովն։

Երրորդն է Շահ-Սուլէյմանինն, յորում գրի մերս գեղջ մքատու, և սրբոյ Աթոռոյս մաղաֆ գոլն, ի ՌՁԵ թուին Տաճկաց։ Զոր գոցես ցուցակաւն և . . համարովն։

Չորրորդն է փոքր Շահ Աբասինն, յորում գրի վասն Նուիրակաց սրբոյ Աթոռոյս, ուր և գնայցեն, ոչ ոք ներհակեսցի, և յօրէնս մեր մի՛ ոք ձեռնամուխ լիցի, ի ՌԿԹ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Հինգերորդն է փոքր Շահ-Աբասինն, յորում գրի թէ՝ եթէ ոք վանօրէից վախմ ինչ կտակեսցէ, ազգականքն նորա ոչ ևս կարեն յետս առնուլ, ի ՌՀԱ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Վեցերորդն է Շահ-Սուլէյմանինն, յորում գրէ թէ՝ Հայքն մինչ հարկատու են մեզ, մի՛ ոք նոցա եկեղեցական արարողութեանցն արգելիչ լիցի, կամ զնոսա ի տաճկութիւն բռնադատեսցէ, և կամ եկեղեցեաց նորոգութեանն խօսող լիցի, ի ՌՀԹ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։

Շահն զայսոսիկ տեսեալ և ինքն ևս յատուկ յատուկ գրէ զսոսա վերստին, և ի ներքոյ գրէ սաստիւ թէ՝ և ես հրաման ետու, զի ընդդէմ այդ հրամանացդ ոչ ոք շարժեսցի, և կամ ընդդէմ կացցէ, ի ՌՃԻԳ թուին Տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . համարովն։ Ցիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս գեղջս մերոյ մքատուութեան։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ յամենայն իշխանութիւնս իւր ըստ արզայի Աղէքսանդր Կաթուղիկոսին, զի թէ Կաթուղիկոսն և թէ իւր մարդիկքն ուր և շրջիցին, մի՛ ոք խօսիցի և արգելցէ, և կամ յօրէնս նոցա խառնիցի։ Եւ [illegible] ի յէջմիածնի մարդկանցն ի ճանապարհին գձի մի առնուցուն։ Սորա սաւատ մի՛ ևս գոյ շարի կնքով, զոր գիտ ցուցակաւն և . . համարովն։ Ի ՌՃԻԳ թուին տաճկաց. գի՛տ ցուցակաւն համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ, որ գրէ յամենայն յիշխանութիւնս իւր թէ
որպէս օրէն է և սովորութիւն Հայոց, թողէք այնպէս վարին. մի՛ ոք
խառնիցի ի յօրէնս նոցա և կամ չէլթիւ 1) առնիցէ, ի ՌՃԻԴ թուին Տաճ-
կաց։ Գիտ ցուցական և . . համարով։ Ցիշեալ թէ և ի ՌՂԹ թուին
Շահ-Սուլէյմանն ևս է տուեալ այսպէս ռաղամ։

Շահ Հիւսէյինին ռաղամ՝ որ գրէ ըստ արզայի Ալէքսանդր Կաթու-
ղիկոսին թէ՝ ամենայն Վանօրայք Երևանու՝ զոր ինչ կանոն է ի բնէ՝
զայնս տայցեն, այլ մի՛ ոք իշխեսցէ աւելի զեր ինչ պահանջել ի նոցանէ,
ի ՌՃԻԴ թուին Տաճկաց. գի՛տ ցուցական և . . . համարով։ Ցիշէ ևս
թէ Շահ-Սուլէյմանն ևս է տուեալ այսպէս ռաղամ ըստ խնդրոյ Ոնոփ-
րիոս վարդապետին, ի ՌՂՆ թուին, որ յիշեցաւ ի վերդ։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ալէքսանդր Կաթողի-
կոսին թէ՝ վանօրայքն Երևանու զոր ինչ ի ժամանակս Ամիրկունէ խանին
տուեալ են, զնոյնն տայցեն, մի ոք աւելի զեր ինչ պահանջիցէ. ի ՌՃԻԴ
թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։ Սորա սաւատ
մի ևս դոյ շարի կնքով, զոր գիտ ցուցական և . . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ալէքսանդր Կաթողի-
կոսին Երևանու խանին թէ՝ ով ոք յԷջմիածնայ բռնութեամբ մուլք է ա-
ռեալ՝ յետս դարձո և մի թողուր զի այդպէս արասցեն, ի ՌՃԻԴ թուին
Տաճկաց. գիտ ցուցական և . . . . համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ զոր գրէ ըստ խնդրոյ Ալէքսանդր Կաթողի-
կոսին թէ՝ որպէս Շահ Սիւլէյմանն ի ՌՂԱ թուին տուեալ է ռաղամ՝
(զոր գիտ ցուցական և . . . համարովն) նոյնպէս և ես հրամայեմ, Ե-
րևանու խան՝ ով ոք զմուլք ինչ յԷջմիածնէ բռնութեամբ զաւթեալ է՝
յետս դարձուսցես. ի ՌՃԻԴ թուին Տաճկաց։ Գիտ ցուցական և . . .
համարով։

Շահ Հիւսէյինին ռաղամ, զոր գրէ ըստ արզայի Կարփունաշխայի գեօղա-
կանացս վասն Քիւրաքանլու թարաքեամա տաճկացն (որք ի Բաթրինջ
նստին և երկրին վնաս տան), սաստիկ թանպէհ, զի մի ևս նստիցին անդ.
ի ՌՃԻԴ թուին Տաճկաց. գիտ ցուցական և . . . համարովն. յիշեցաւ
այս ի ԺԳ գլուխն ի ճառս Բաթրինջու։

Շահ Հիւսէյինին ռաղամ՝ զի արզ են արարեալ Շիրուանու երկրին թէ՝
մեք ի բնէ Էջմիածնի եմք վիճակք, Գանձասարու Կաթողիկոսն ի վերայ
մեր մի իշխեսցէ։ Եւ Շահն հրաման գրէ այնպէս լինել, ի ՌՃԻԴ (թ.)
Տաճկաց. գիտ ցուցական և . . . համարովն։ Սորա սաւատ մի ևս դոյ, գիտ

---

(1) Շըլթաղ, զրպարտութիւն։



ցուցական և . . . համարովն։ Ցիշեցաւ այս ի Ժ գլուխն ի ճառս Գանձա-
սարու։

Շահ Հիւսէյինին ռաղամ վասն Աստուածատուրի Կաթողիկոսի Կա-
թողիկոսութեանն, ի ՌՃԻԸ թուին Տաճկաց. գիտ ցուցական և . . .
համարովն։

Շահ Հիւսէյինին ռաղամ՝ զոր գրէ ըստ Աստուածատուր Կաթողի-
կոսին վասն Փռանգ պատրիացն, զի մի՛ իշխեսցեն յիշխանութեանս մերում
մնալ, և զոք յաղանդն իւրեանց դարձուցանել։ Ցիշէ ևս թէ՝ ի ՌՃԻԲ
թուոջն ևս եմ տուեալ այսպէս ռաղամ Ալէքսանդր Կաթողիկոսին։
Գիտ ցուցական և . . . համարովն, ի ՌՃԼ թուին Տաճկաց։

Շահ Հիւսէյինի ռաղամ՝ որ խիլայ յղէ Աստուածատուր Կաթու-
ղիկոսին. ի ՌՃԼԳ թուին տաճկաց. գի՛տ ցուցական և . . . հա-
մարովն։

Շահ-Թահմազի ռաղամ, որ գրէ ըստ արզայի Աստուածատուր Կա-
թողիկոսին թէ՝ տաճկացեալքն ի Հայոց յազգականաց իւրեանց զեր ինչ
մի՛ պահանջեսցեն, ի ՌՃԼԶ թուին տաճկաց, գիտ ցուցական և . . .
համարով։

Շահ Թահմազի ռաղամ, զի Աստուածատուր Կաթողիկոսն արզ ա-
նէ թէ՝ յառաջ քան զիս խալիֆայքն, ի սերմանելոց զբահրայ ինչ ոչ
են տուեալ. այժմ զմեզ նեղացուցանեն։ Շահն գրէ թամպէհ մի առնել
այնպէս. ի ՌՃԼԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համա-
րովն։ Ցիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

Շահ Թահմազի ռաղամ, զի Աստուածատուր Կաթողիկոսն արզ ա-
նէ թէ՝ բաց ի կանոնեալ հարկէն զոր յամ յամէ տան վանորայքն, զա-
ւելի զեր ևս պահանջեն։ Եւ Շահն գրէ մի՛ առնել այնպէս. ի ՌՃԼԶ
թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։

Շահ Թահմազի ռաղամ վասն Կաթողիկոսութեանն Աբրահամ Կա-
թողիկոսին Մշեցւոյ. ի ՌՃԽԳ թուին տաճկաց. գիտ ցուցական և
. . . համարովն։

Շահ Թահմազի ռաղամ, զոր գրէ թէ՝ տաճկացեալքն ի յազգականաց
իւրեանց զեր ինչ մի՛ պահանջեսցեն. ի ՌՃԽԳ թուին տաճկաց. գիտ ցու-
ցական և . . . համարովն։

Շահ Թահմազին ռաղամ՝ զոր գրէ ըստ արզայի Աբրահամ Կաթողիկո-
սին Մշեցւոյ թէ, զոր ինչ ռաղամ տուեալք են նախնի թագաւորքն մեր
Էջմիածնի և Հայոց, ամենեքեան ընդունելիք լիցին և կատարեսցին, մի՛ ոք
իշխեսցէ ընդդէմ գրեցելոցն նոցա շարժել. ի ՌՃԽԳ թուին տաճկաց։
Գիտ ցուցական և . . . համարովն։

Շահ Թահմազի ուղամ, զոր գրէ ի տարագրութեան ժամանակին (յորժամ հանդիպեալ է վերջանալ թագաւորութիւն իւրեանց) առ Աբրահամ Կաթուղիկոսն Մշեցի թէ՝ աղօթեա վասն մեր. զի որպէս մեր նախնիքն զխնամս են ունեցեալ այդ Աթոռիդ, նոյնպէս և մեք եմք ունելոց. ի ՌՃԽԳ թուին տաճկաց։ — Աստ վերջացաւ թագաւորութիւնն Պարսից Շէխօճաղլին, և բռնութեամբ տիրեաց Նատր կոչեցեալն և թագաւորեաց։

Նատր-շահին ուղամ, զոր տայ ըստ արզայի Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ, վասն Թարվիզու այգեաց ճանապարհին, զի մեր մարդկանցն և անասնոց մի՛ ոք նեղացուսցէ, ի ՌՃԻԸ թուին տաճկաց. գիտ ցուցական և . . . համարովն։

Նատր-շահի ուղամ, զոր գրէ ըստ արզայի Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ վասն եօթն մուլքատու գիւղօրէիցն մերոց այսինքն՝ Էջմիածնի, Ցօշականու, Փռանկանոցի, Մաստարայու, Քիրաշլուի, Տիպակլուի, և Զալալքեանտին. զի մի՛ ոք ձեռնամուխ լիցի նոսա. ի ՌՃԽԸ թուին տաճկաց. գիտ ցուցական և . . . համարովն։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն, ի ճառս Զալալքեանտին։

Նատր-շահի ուղամ, զոր գրէ ըստ արզայի Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ, զի սրբոյ Աթոռոյս նեղութիւն ինչ մի՛ տայցէ ոք, և ի կալս և ի խմաւլս մի՛ ոք չափեսցէ. ի ՌՃԽԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս։

Նատր շահին ուղամ, որոյ երկու սաւատք եւ գոն. զոր գրէ ըստ խնդրոյ Թրակացի Աբրահամ Կաթուղիկոսին վասն երկրիս Երեւանու վանօրէիցն, զի բաց ի կանոնաւոր հարկէն, այլ պահանջմունս ոչ առնիցեն իշխօղ.ք. ի ՌՃԽԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական. և . . . համարովն։

Նատր շահի ուղամք երկուք ընդ միմեանս կցեալ.ք եռանկիւնի ձեւով թուղթ, զոր գրէ ըստ խնդրոյ Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ. և մաղաֆ առնէ զԱթոռս և վանօրայսն Երեւանու։ Զոր գտցես ցուցական, և . . . համարովն։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեանն։ (ՌՃԽԸ)։

Նատր շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ, վասն չափարաց, ռահտարաց, և այլոց այսպիսեաց, զի յԷջմիածնի մարդկանցն ուր և պատահիցին, ոչինչ պահանջեսցեն, ի ՌՃԽԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն. որոյ սուրէթ մի եւ գոյ շարի կնքով, զոր գիտ ցուցական և . . . համարով։

Նատր շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ թէ՝ մինչև ի Շահէն ուղամ չլինի և կամ ի դիւանէն բա-



րաթ, ամենևին զոչ ինչ տամք խնդրողաց. ի ՌՃԾԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։

Նատր շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին թէ ի յԷջմիածնի գեօղս ռահդար ոչ նստիցի, ի ՌՃԾԴ թուին տաճկաց. գիտ ցուցական և . . . համարով։

Նատր շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին թէ՝ հաքիմ, ախունդ, և այլ.ք տաճիկ.ք ի գործս և ի յօրէնս Սեաւզխաց ոչ խառնիցին. ի ՌՃԾԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։ Սորա սուրէթ մի եւ գոյ։

Նատր շահի տղային ուղամ, զի ըստ արզայի Ղազար Կաթուղիկոսին գրէ թէ՝ սրբոյ Աթոռոյս Նուիրակացն ի շրջագայելն մի՛ ոք նեղացուսցէ և կամ զիր ինչ պահանջիցէ։ Եւ խան, չափար, ռահդար, և այլ.ք ի յԱթոռոյս զեան ինչ մի՛ պահանջեսցեն բռնութեամբ։ Եւ թէ՝ ի յերկրէս Շահն՝ ձի, ջորի, ուղտ, և զայլ ինչ պահանջեսցէ, ի մէնջ մի՛ խնդրեսցեն. ի ՌՃԾԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։ Յետ Նատր շահին թագաւորէ եղբօրորդի նորին Իպրահիմ շահն։

Իպրահիմ շահի ուղամ, որ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին գրէ պատուէր, զի խանք և այլ.ք իշխօղ.ք ի յԱթոռոյս զիր ինչ մի՛ պահանջեսցեն. ի ՌՃԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։

Իպրահիմ շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին, զի ի չորից մուլքատու գիւղօրէիցն մերոց. յԷջմիածնայ, Ցօշականայ, Փրանկանոցէն, և Մաստարայու, (զի Քիրաշլու, Դիպակլու, և Զալալքեանտն աւեր էին) առանց գիտութեան Կաթուղիկոսին զիր ինչ մի՛ պահանջեսցեն. ի ՌՃԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։

Իպրահիմ շահի ուղամ, որ գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին, զի զհայոց տղայս և զաղջկունս մի՛ քարշեսցեն. ի ՌՃԿԱ թուին տաճկաց. գիտ ցուցական և . . . համարով։

Իպրահիմ շահի ուղամ, որ գրէ ըստ արզայի Ղազար Կաթուղիկոսին, զի չափարք և ռահտարք՝ ի միաբանից մերոց զիր ինչ մի՛ պահանջեսցեն. ի ՌՃԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարովն։

Իպրահիմ շահի ուղամ, որ ըստ արզայի Ղազար Կաթուղիկոսին՝ զսրբոյ Աթոռոյս մաղաֆութիւնն վերահաստատէ՝ որպէս առաջին թագաւորքն արարեալ են. ի ՌՃԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։

Իպրահիմ շահի ուղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին, զի Շխիսլամ և այլ.ք տաճիկ.ք ի բանս օրինաց մերոց ոչ խառնիցին. ի ՌՃԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։

Իպրահիմ շահի ռաղամ, որ գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին, զի տաճկացեալքն ի Քրիստոնէից, յազգականաց իւրոց զգաւի ոչ առնիցէ վասն ընչից. ի ՌՃԿԱ թուին տաճկաց. Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Իպրահիմ շահի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին՝ զի զայլիթք և դիւանագիրք ի մէքատու գիւղօրէից սրբոյ Աթոռոյս յէջմիածնայ, ի Ցօշականայ, ի Փառնկանոցէն, և ի Մաստարայու (զի Քիւրաշլուն, Դիպակլուն, և Զալալիքեանտն ասիւք էին,) առանց Կաթուղիկոսի գիտութեան զիր ինչ մի պահանջեսցեն. ի ՌՃԿԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։ Ցիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեան սրբոյ Աթոռոյս։

Ցետ Իպրահիմ շահին վերջացաւ և թագաւորութիւնն ի յազգէն Նատրին, և միանգամայն ի յազգէն Պարսից։ Ապա ժամանակ ինչ թագաւորապէս տիրեաց բոլոր երկրիս Պարսից Աղուան Ազատ խանն, որ էր զօրապետ Նատր շահին, որոյ ռաղամքն տես։

Ազատ խանին ռաղամ, որ գրէ ըստ արզայի Մինաս Կաթուղիկոսին Անեցւոյ, զի Հայքն զօրէնս իւրեանց համարձակ պաշտեսցեն, և Կաթուղիկոսն ըստ օրինին իւրեանց կառավարեսցէ զազգն իւր, և մի՛ ոք խառնեսցի և կամ ներհակեսցէ. ի ՌՃԿԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Մինաս Կաթուղիկոսին ըզմաղափութիւնն սրբոյ Աթոռոյս վերահաստատելով լաւապէս ըստ ամենայնի. ի ՌՃԿԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, որ յամենայնի մաղաֆ առնէ զսուրբ Աթոռս. ի ՌՃԿԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Մինաս Կաթուղիկոսին թէ ով ոք ի յԱթոռոյն գչալթուք է փոխ առեալ, յետս դարձուսցէ զփոխն. ի ՌՃԿԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին թէ մինչ վանորայքն ամայի են լեալք, նոցա տասն և եօթն թումանն քեզ բաշխեցի. ի ՌՃԿԷ թուին տաճկաց։ Այս հինգ ռաղամս յիշեցան ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեան։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին երկրիս իշխողացն թէ Էջմիածին զոր ինչ ռաղամս ունի ի հին թագաւորացն, զամենայն ընդունեցիք. ի ՌՃԿԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։



Ազատ խանի ռաղամ, զոր ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին Պօլսեցւոյ գրէ թէ որպէս ի բնէ անտի թագաւորաց ռաղամօք մաղաֆ է լեալ Էջմիածին, նոյնպէս և ես մաղաֆ արարի (ուրեմն ոչ ոք խնդրեսցէ ի նոցանէ զբահրայ, զբաղալթ, զմալուճահալթ, խարճ ոչխարի, անասնոց, քեարվանսարայի, ջրաղացի, գնկի, ձիթահանքի, համամի, և այլոց այսպիսեաց.) ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին Պօլսեցւոյ թէ ի ժամանակս Նատր շահին, որ Էջմիածնի մաղափութիւնն լեալ է տասն թուման, և ԷՌ տիւան նաղտ, և վաթսուն և վեց խալվար ցորենս, նմանապէս և ես հրամայեմ լինել մաղաֆ։ Իսկ ի քոյդ ժամանակիդ, որ տասն թուման նաղտ և քառասուն և մէկ խալվար ցորենս աւելի է ի մաղափութենէդ, զայդ ես քեզ բաշխեցի. ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր գրէ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին թէ Էջմիածնի եկողաց և գնացողաց, սեւագլխաց և ուխտաւորաց ռահտարք և այլք մի՛ մերձեսցին և զիր ինչ պահանջեսցեն. ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։

Ազատ խանի ռաղամ, զոր տայ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին վասն ամայի վանօրէից տասն և եօթն թումանին, զի յԱթոռոյս մի՛ պահանջեսցեն. ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարովն։ Ցիշեցաւ ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեան։

Քեարիմ խանին ռաղամ, (որ և սա փայլի ի ներկայումս ի մերս ժամանակի,) զոր գրէ վասն Կաթուղիկոսութեանս մերոյ ի ՌՃՀԷ թուին տաճկաց։

Քեարիմ խանին ռաղամ, զի առաքեցաք մեք առ սա զօրինակ այնր թղթոյն, զոր Ցակոբ Կաթուղիկոսն Շամախեցի և մեք ի Հիւսէյին-ալի խանէն առեալ եմք տասն և չորս գլխով. (որ յիշեցաւ ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեանն,) և ի նմանէ խնդրեցաք զայնպիսի թուղթ։ Որ և գրեաց նոյնպէս յատուկ յատուկ և սաստիկ պատուիրմամբ երկրիս իշխողացն։ Որ լաւ պիտանի և հարկաւոր է. ի ՌՃՀԷ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն և . . . համարովն։ Եւ զօրպէսն տասն և չորից խնդրոցն, ի ԻԱ գլուխն և ի ճառս խանից գրեանցն տես։

## ԳԼ. ԻԱ.

Յորում ցուցանին հոլովակ կտակարանի Նուշիրվ Պարսկական խանից, և հրամանքն և շրջաբերականք թագաւորացն Շէխալամց, և այլոց այլազգեաց փոքանաւաց ... որպէս և յե՞նչ պատճառէ, որ է յառաջեալք:

Մեծն Շահ-Աբաս թագաւորն Պարսից ի յաւուրս զերկիրս Հայաստանեայց ի յՕսմանցւոց, կարգէ երկրիս Երևանայ խան զԱմիրկիւնէ կոչեցեալն, ի թուին տաճկաց ՌԺԲ և ի մերում թուիս ՌԾԲ, ի ժամանակս Մելքիսէթ Կաթողիկոսին: Ապա ի փախստեան իշխանութեանց և յանիրաւութենէ Աթոռոյս, նոյն Ամիրկիւնէ խանն զմուլքս գեղջս մերոյ Էջմիածնի զաւթեալ ունէ ի բազում ժամանակս: Ապա ի ցուցանելն Աթոռոյնոցս զվախումնամայն Մովսէսի Գրիգոր Կաթողիկոսին, (զորս յիշեցաք ի ԺԳ գլուխն ի ճառս մլքատութեան գեղջս մերոյ) Ա. գիր մի տայ թէ՛ չգիտելով իմ գեօղս այսորիկ Էջմիածնի զոլն, ժամանակ ինչ բռնութեամբ կերի զմուլքն սորին, յետոյ ի գիտելն իմ՝, շնորհեցի վերստին Աթոռոյս: Ուրեմն մի՛ որ իշխեսցէ այսուհետև թէ յազգականաց իմոց և թէ յայլոց ձեռնամուխ լինել ի մուլք գեղջս այսորիկ. ի թուին տաճկաց ՌԻԹ. թղթոյս այսորիկ երկու սաւառք զոն շարի կնքով: Զորս գտցես յերեսն գլոբեցեալ ցուցակօքն:

Բ. Աբաս-ղուլի խանն, որդի Ամիրկիւնէ խանին, յարուցանէ դաւ ընդ Յակոբայ Կաթողիկոսին Ջուղայեցւոյ (որպէս յիշեցաւ ի ԺԳ գլուխն ի ճառս մլքատութեան գեղջս մերոյ) թէ մուլք գեղջս Էջմիածնի իմ է. զի հայրն իմ եկեր յայնքան ժամանակ: Յետոյ ի հաւատալն փախուցանմայն և այլովք թէ Աթոռոյս է լեալ ի բնէ, ապա և սա տայ զթուղթ մի շարի վկայութեամբ թէ՛ հաւատացի զիտացի որ մուլք գեղջս այսորիկ Էջմիածնի է: Որոյ սաւատն գոյ շարի կնքով. ի ՌՀԲ թուին տաճկաց: Գիտ ցուցակաւն:

Գ. Խոսրով խանն (որ չորրորդ էր զկնի Ամիրկիւնէ խանին), երկու թուղթ տայ ըստ խնդրոյ Փիլիպպոս Կաթողիկոսին և մաղաֆ առնէ զսուրբ Աթոռս. ի ՌԾԷ և ի ՌԾԹ թուոցն տաճկաց. զորս գտցես ցուցակօքն: Յիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեան. յորս գրի ինն այգի, ինն ջրաղաց և ութ հարիւր յիսուն ոչխար մաղաֆ:

Ե. Վերոյիշեցեալ Աբաս-ղուլի խանն ի խան նստելն յԵրևան՝ շատ սէր ցուցանէ Յակոբ Կաթողիկոսին Ջուղայեցւոյ. (սա տայ զիւր հօր շինեալ այգին սրբոյ Աթոռոյս, որ է մերձ սուրբ Շողակաթին, որպէս յիշեցաւ ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէից): Եւ այս Աբաս-ղուլի խանիս արդ առ-



նէ Յակոբ Կաթողիկոսն թէ՛ որպէս հայր քո Ամիրկիւնէ խանն, և եղբայր քո Թահմազ-ղուլի խանն զսէր և զբարեկամութիւնս են ունեցեալ առ սուրբ Աթոռս, նոյնպէս և դու պարտիս ունել: Երկրորդ թէ՛ Պաթրինջ գեօղն գիտես որ սուրբ Աթոռոյս է և խոտհարքն սորին, նորա հարկն մէկ թուման էր, մենք եօթն թուման տամք, եթէ աւելի պահանջէք, աւերի գեօղն: Երրորդ թէ՛ ի մէջ Էջմիածնի զջուր հանեցի քանքանաւ, որ մեծ օգուտ եղև գեղջն, ի վերայ այն ջրոյն եթէ զաւրմ ինչ սերմանեցեմք՝ ոչ պարտին զբաժհրա առնուլ: Եւ խանն ըստ երից խնդրոցն յատուկ յատուկ հրաման գրէ և կնքէ ի վերայ միոյ մեծ թղթոյ: Գիտ ցուցակաւն:

Զ. Սոյն Յակոբ Կաթողիկոս մինչ կրկին գնայ ի յՍտամպօլ և անդ վախճանի իսկ, սորին Տեղապահ և Լուսարար սրբոյ Աթոռոյս Ստեփաննոս վարդապետն արզ առնէ Վրացի Սէֆի-ղուլի խանին թէ՛ գիտես որ Բաթրինջ գեօղն սրբոյ Աթոռոյս խոտհարքն է, և Շահի հրամանաւ մեք հանել տուաք զԲիւրաքանլու քիւրտսն ի նմանէ, այժմ կամին զայն գեօղն առնուլ ի մէնջ: Երկրորդ թէ Կաթողիկոսն յԱթոռոջս չէ, աստի և անտի զան և դաւ յարուցանեն ընդ Աթոռոյս և զապալոյ խնդրեն. խնդրեմ զի տիրութիւն արասցես. և խանն ըստ իւրաքանչիւր խնդրոցն գրէ հրաման և կնքէ. մի թուղթ է. զոր գտցես ցուցակաւն: Յիշեցան սոքա ի ԺԳ գլուխն ի ճառս Պաթրինջ գեղջն:

Է. Ի ժամանակս Շահ-Սուլէյմանին և Եղիազար Կաթողիկոսին մեծոյ, դիւանագիրք արքունի տան սրբոյ Աթոռոյս զգիր մի մաղաֆութեան, յորում գրեն տասն և երկու այգի, ութ ջրաղաց, հինգ ձինկ, երեք քըրքրայ՝ սրբոյ Աթոռոյս, և քսան և չորս այգի, և քսան և երեք ջրաղաց տասն և չորս Վանօրէից, ի ՌՂԸ թուին տաճկաց: Զոր գիտ ցուցակաւն: Որոց որպէսն լիովին յիշեցաւ ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեանն:

Ը. Սոյնպէս թուղթ մի ևս ի ժամանակս Շահ-Հիւսէյնին և Աստուածատուր Կաթողիկոսին մերոյ տան սրբոյ Աթոռոյս դիւանագիրք: Յորում երեսուն և չորս այգի գրեն, տասն և մէկն սրբոյ Աթոռոյս, և քսան և երեքն վանօրէից: Երեսուն և ինն ջրաղաց գրեն, տասն և երկուսն սրբոյ Աթոռոյս, և քսան և եօթն վանօրէիցն: Քսան ձիթհանք գրեն, երկուքն սրբոյ Աթոռոյս, և տասն և ութն վանօրէիցն: Ինն ձինկ գրեն, հինգն սրբոյ Աթոռոյս, և չորսն վանօրէիցն, ի ՌՃԼԱ թուին տաճկաց. զոր գիտ ցուցակաւն: Յիշեցաւ այս լիովին ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան: Յայս թղթոյս մի ևս գոյ նման սմին ամենայնիւ:

Թ. Ի ժամանակս Շահ-Հիւսէյնին և Ջուղայեցի Աղէքսանդր Կաթողիկոսին մերոյ՝ Մէհրալի խանն Երևանայ զթալղայ մի տայ սրբոյ Աթոռոյս հինգ տաճիկ վկայից կնքով, ի ՌՃԻԱ թուին տաճկաց. նոյնպէս

և ի ժամանակս Աստուածատուր Կաթուղիկոսին մերոյ Ալլահ-ղուլի խանն Երևանու զԹալղայ մի տայ սրբոյ Աթոռոյս միոյ տաճիկ վկայի կնքով, ի ՌՃԼԴ թուին տաճկաց։ Եւ ի ժամանակս Պօլսեցի Աղէքսանդր Կաթուղիկոսին մերոյ՝ Ազուան աղատ խանն ռաղամ մի տայ սրբոյ Աթոռոյս, ի թուին տաճկաց ՌՃԿԲ։ Եւ երկոքեանքն ևս վկայելով թէ կէս գետոյդ Քարցախու՝ Էջմիածնի է, և կէսն միւս գիւղօրէից, ի բնէ անտի թագաւորաց հրամանաւ։ Հրամայեն և ինքեանք՝ զի այսպէս լիցի միշտ։ Գիտ զայս երեք թուղթս ընդ միմեանս կցեալ, յերեսն գրեցեալ ցուցակաւն և Թ. համարով. յիշեցաւ այս ի ԺԲ գլուխն ի ճառս ջրոյն։

Ժ. Նադր-շահի դիւանագիրքն զթուղթ մի տան սրբոյ Աթոռոյս ի ՌՃԽԲ թուին տաճկաց ըստ խնդրոյ Աբրահամ Կաթուղիկոսին Թըրակացւոյ թէ այս եօթն գիւղօրայքս այս ինքն, Էջմիածին, Օշական, Փըռանկանոց, Մաստարայ, Քիրաշլու, Դիպակլու, և Զաւարիքեանտ, մեք հաւատեաւ վերահասու եղաք, որ ի բնէ անտի մուլք են Էջմիածնի։ Գիտ զայս գիրս ցուցակաւն։ Յիշեցաւ այս ի ԺԳ. գլուխն ի ճառս Էջմիածնի գեօղից մլքատուութեանն։

ԺԱ. Շխ-իսլամի հիւճէթ և բազմակնիք թուղթ, որ գրեն և վկայեն թէ Քիւլթափեցիքն ի յԷջմիածնի ջրոյն ոչ ունին զբաժին և ոչ են տարեալ զնա ի ցանքս իւրեանց, ի ՌՃԾԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

ԺԲ. Սոյնպէս և խանն Երևանու, ըստ խնդրոյ Ղազար Կաթուղիկոսին գիր տայ սրբոյ Աթոռոյս թէ Քիւլթափեցի տաճիկքն յԷջմիածնայ ջրոյն ջուր չունին բնաւ։ Վասն որոյ ոչ պարտին մերձենալ ի ջուրս նոցա. ի ՌՃԾԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։ Յիշեցան սոքա ի ԺԲ գլուխն ի ճառս ջրոյն։

ԺԳ. Շխ-իսլամի հուճէթ և տաճկական բազմակնիք թուղթ վասն արօտատեղեաց անասնոցն մերոց յառկացուցեալ սահմանօք ի կողմն Քիւլթափոյ կոչեցելոյս. գրեցեալ ի . . . թուոյն տաճկաց։ Զօր գտցես ցուցակաւն։ Յիշեցաւ այս ի ԺԵ գլուխն ի ճառս արտօրէից։ Գոն և այլք թուղթք վասն այս Քիւլթափեցւոց, զորս յիւրաքանչիւրն ի տեղւոջն տեսցես։

ԺԴ. Ի մեր Քարվանսարայօջս կամ ի գեօղս ռահդար ոչ է նստեալ երբէք։ Սակայն ի ժամանակս Ղազար Կաթուղիկոսին ռահդար մին Իբրահիմ աղա կոչեցեալ՝ ի միւս գեօղօրայսն ոչ կարացեալ նստիլ վասն նեղութեան ժամանակին, եկեալ առ Ղազար Կաթուղիկոսն աղաչէ՝ զի թողուցու ժամանակ մինչ ի մեր գեօղս նստել. և Ղազար Կաթուղիկոսն զգիր մի առնու ի նմանէ, որ գրէ թէ՝ ի յայս գեօղս ռահդար ոչ է նստեալ երբէք, ես խնդրեցի ժամանակ մինչ նստել այսու պայմանաւ, զի ի հանգարտել



միջոցին գնացեալ յիմ տեղս նստիցիմ, ի ՌՃԾԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն, որ է վկայական ի հարկաւորութեան ժամանակին։

ԺԵ. Խալիլ-խանն ըստ խնդրոյ միաբանից սրբոյ Աթոռոյս հրամայէ դիւանադպրաց վերահասու լինել մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս. որք և երեք անձինք վերահասու լեալ գրեն և կնքեն հաւաստի գոլ։ Ապա և խանն ի գլուխ արզային գրէ զհաստատ մաղաֆ գոլն սրբոյ Աթոռոյս. ի ՌՃԿԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԺԶ. Սոյն Խալիլ-խանս ի սոյն թուոջս զգիր մի ևս սրբոյ Աթոռոյս տայ գրելով թէ՝ որովհետև դուք մաղաֆ էք, ձեր մասին ոչ պարտի հափել. գիտ ցուցակաւն։ Յիշեցաւ ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԺԷ. Սոյն Խալիլ-խանս զգիր մի ևս տայ ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին գրելով թէ՝ ուխտաւորաց և միաբանից Աթոռոյն ռահդարն ոչ բնաւ մօտեսցի. ի ՌՃԿԷ թուին տաճկաց. ցուցակաւն գտցես։

ԺԸ. Սոյն Խալիլ-խանս զգիր մի ևս տայ սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին գրելով թէ՝ Օշականայ գետոյ ջրոյն կէսն Էջմիածնի է և կէսն միւս գեօղօրէիցն. ի ՌՃԿԸ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն։ Յիշեցաւ այս ի ԺԲ գլուխն ի ճառս ջրոյն։

ԺԹ. Սոյն Խալիլ-խանս զգիր մի ևս տայ սրբոյ Աթոռոյս վասն մեր քարվանսարային թէ՝ որպէս ի բնէ կարգն է, վաճառականաց բեռն բացուի և կապուի, Երևան նստող բաժդարքն մի խօսեսցին. ի ՌՃԿԹ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն։

Ի. Ղաջար-հասան-ալի-խանն (որոյ զերկու աչսն բրեաց Նադր-շահն, և երբեմն խան նստաւ յԵրևան,) զգիր մի տայ սրբոյ Աթոռոյս ըստ արզայի Յակոբ վարդապետին Շամախեցւոյ վասն մեր քարվանսարային թէ՝ դիւանի խարջն վանքին կուտան ի նմա նստողքն, և վանքն տայ դիւանին. Երևանայ բաժդարներն ոչ կարեն խառնել ի տուրս և յառս նոցա, ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

ԻԱ. Սոյն Հասան-Ալի-խանիս Աղէքսանդր Կաթուղիկոսն զարզայ մի գրէ թէ՝ երկրիս վանօրայքն (զորս յանուանէ գրէ) ամայի են՝ որպէս գիտես, զհարկս նոցա երբեմն խնդրեն ի մենջ դիւանադպիրքն։

Այլ և մեր Աթոռս մաղաֆ է որպէս գիտես, բայց երբեմն նեղութիւն տան մեզ. խնդրեմ որ այնպէս գիր մի տաս մեզ՝ որ յաւիտեան յիշատակ մնայ քեզ. Ապա ըստ հրամանի խանին՝ նախապէս երկրիս բոլոր մեծամեծ տաճիկքն գրեն և կնքեն թէ՝ վանօրայքն երկրիս ամայի են՝ զորս գիտեմք, և Էջմիածին ի բնէ մաղաֆ է յամենայն կողմանէ, որում մեք վկայեմք։ Ապա և խանն ի գլուխ արզային գրէ հրաման թէ՝ որովհետև վանօրայքն

ամայի են, վասն նոցա ոչ ոք պարտի զիր ինչ պահանջել ի յէջմիածնէ։ Նոյնպէս և Էջմիածին մինչ ի բնէ մաղափ է լեալ յամենայնի, նոյնպէս և պարտի մաղափ մնալ. ի ՌՃԿԸ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։

Շատ լաւ Թուղթ է և պիտանի, և զգուշութեամբ պահելի վասն մաղափութեան սրբոյ Աթոռոյս՝ մինչ բազմութիւնքն վկայեն։ Ցիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս մաղափութեան։

ԻԲ. Զկնի այս Հասան-Ալի-խանիս, նստի Երևան խան սորին եղբայր Հիւսէին-Ալին և տիրէ որպէս Թէ ինքնագլուխ, որ իշխէ ևս ի ներկայումս, ի ժամանակս մեր։ Ի ժամանակս սորա նստի Կաթուղիկոս յԱթոռս, Շամախեցի Ցակոբ Կաթուղիկոսն (զոր ի բազում տեղիս յիշեալ եմք.) ի ՌՄԸ Թուոջն մերում, և ի տաճկաց ՌՃՀԳ Թուոջն։ Արդ այս Ցակոբ Կաթուղիկոսս գոլով այր հանճարեղ, խելօք և տեղեակ ամենայնից այսպիսեաց իրակութեանց, մինչ տեսանէ ի ժամանակս իւր ոչ գոլ հանրապէս իշխող Թագաւոր, և առաջնոց Թագաւորաց ռաղամիցն ևս ոչ այնքան անսային, վասն որոյ զամենայն ռաղամն հնոց Թագաւորաց (որք տըրեցեալք են սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոց յառաջնոց Հայրապետացն խուրաքանչիւրքն վասն յատուկ յատուկ խնդրոց.) ի մի բերեալ և ժողովեալ զնիւթս և զգլխաւորս նոցին, և զաւելի խնդիրս ևս ինքն մուծանէ ի նոսա. և գրեցուցեալ ի վերայ Թղթոյ միոյ արզայապէս մատուցանէ յիշեալ Հիւսէյին Ալի-խանին ասելով Թէ՝ որովհետև մեր իշխօղն այսօր դու ես, ի գլուխ Թղթոյս հրաման և ռաղամ գրեա, զի քոյդ հրամանաւ կատարեսցեն այսպիսի խնդիրք և քեզ յիշատակ յաւիտենական մնասցէ յԱթոռոջս։ Եւ գրեցեալ խնդիրքն և հրամանքն են տասն և չորք։ Որք են այսոքիկ. Նախ՝ Թէ որպէս առաջնոց Թագաւորաց ռաղամօքն հաստատեալ է, զի Էջմիածնի խալիֆայն և ամենայն իւր միաբանքն և մարդիկքն և ամենայն մուլքն յամենայնի մաղափ լիցին, և ոչ ոք իշխեսցէ պահանջել ի նոցանէ զլինար մի. և ամենայն արտօրայք և մասիլք նոցին ոչ չափեսցին, նոյնպէս և այժմ լիցի։ Երկրորդն՝ Թէ յԵրևանու երկրէն Թէ Հայք և Թէ տաճիկք եԹէ ի յէջմիածնի հողն զսերմ ինչ սերմանեսցեն, զմուլքն տայցեն խալիֆային՝ որպէս օրէն է։ Երրորդն՝ Թէ զզանգակ՝ զկոչնակ համարձակ ծեծեսցեն Հայք ի յէջմիածին և ի վանօրայս և յամենայն յեկեղեցիս, ուր և իցեն, զմեռեալս իւրեանց համարձակ բարձցեն, զժամ կոչեսցեն, բարձրաձայն ժամ ասասցեն Թէ ի վանօրայս և Թէ ի յեկեղեցիս՝ ոչ ոք լիցի խօսող և ներհակ. զի ի բնէ կանոն է ըստ հրամանի Թագաւորաց։ Չորրորդն Թէ՝ զմուլքսն Էջմիածնի, Թէ այնք՝ որք վախմ են, և Թէ այնք՝ զորս դրամով են գնեալ, եԹէ ոք ի զուր և խլափիշար զաւԹեալ իցէ՝ յետս դարձուսցէ։ Հինգերրորդն Թէ՝ խալիֆայի սարիշտային և գործոյն



մի՛ ոք հակառակեսցի, ոչ վարդապետք, ոչ քահանայք, ոչ աշխարհականք, ոչ Հայք, և ոչ տաճիկք։ Վեցերորդն Թէ՝ ի վաղուեմ ժամանակսն, ոմանք զինչս բերեալ ամանաթ 1) ի յԱթոռս, յորոց զոմանս տէարքն տանին, զոմանս երկրի իշխողքն զաւԹեն, և ոմանք աստ և անդ փչանան։ Ցետոյ տեարքն նոցին Թէ տանողքն և Թէ ոչ տանողքն գան դաւի առնեն։ Հրամայեմ զի մի՛ լիցի այսպէս։ ԵօԹներորդն Թէ՝ եԹէ ոք Էջմիածնի զմուլք ինչ ծախեալ իցէ և կամ վախմ տուեալ, յետ մեռանելոյ նորին ազգականք նորին զդաւա մի՛ արասցեն, ոչ վասն ծախեցելոցն և ոչ վասն վախմիցն։

ՈւԹերորդն՝ եԹէ տաճիկք թէմէսսուկ 2) գրեալ և կամ տուեալ ինչ տալոց իցեն Էջմիածնի, և ոչ տան, դու Բեկլար բեկի, առցես և տայցես Էջմիածնի։ Իններորդն՝ տաճիկք բռնուԹեամբ զհայս մի՛ տաճկացուսցեն։ Տասներորդն Թէ՝ Էջմիածնի նուիրակունքն և այլք միաբանքն յուր և իցէ՝ ի շրջելն ըստ սովորուԹեան իւրեանց, գէօմրիւկճի, 3) բէքճի 4) ռահդարք, մի՛ մերձեսցին ի յինչս և ի քուրս նոցա, և մի՛ ինչ պահանջեսցեն. նոյնպէս և յուխտաւորացն Էջմիածնի մի՛ ոք զիր ինչ պահանջեսցէ։ Մետասաներորդն Թէ՝ չափարք մի՛ իշխեսցեն առնուլ զձիս ի յէջմիածնի մարդկանցն։ Երկոտասաներորդն՝ Թէ տաճիկք և Թէ Հայք, մի՛ ոք իշխեսցէ յանդս, և ի յայգեստանս, և յայլս տեղիս Էջմիածնի զսերմն սերմանել և կամ յափշտակել։ Երեքտասաներորդն Թէ՝ Ցօշականու գետոյ ջրոյն կէսն Էջմիածնի է, և կէսն միւս գիւղօրէիցն, հաստատեցեալ ի բնէ անտի ռաղամօք Թագաւորաց, նոյնպէս և լիցի միշտ։

Չորեքտասաներորդն Թէ՝ Էջմիածնի Միաբանքն ի բնէ անտի մաղափք են ռաղամօք Թագաւորաց և նեթալք ի ղալամից, որք ոչ ինչ պարտին տալ ումեք։ Արդ ի յայս չորեքտասան խնդիրս, ի վերջ իւրաքանչիւրոցն գրէ յատուկ յատուկ պատուէր և սաստիկ Թամբէհ իշխողաց, միրզայից, և այլոց գործակալաց, զի զայսօրիկ հրամանս կատարեսցեն անպակաս։ Եւ մանաւանդ ի յիւրաքանչիւրսն ևս գրէ Թէ՝ որպէս ունին և ռաղամն ի Թագաւորաց։ Լինի այս ի ՌՃՀԳ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։

Արդ ուրեմն մտածեա դու զպիտանաւորուԹիւն և զշահաւէտութիւն Թղթոյս այսորիկ և լաւապէս պահեա։ Զի Թէ տուողն չէ Թագաւոր, սակայն վկայէ Թէ՝ այսպէս են լեալ ի բնէ, և ունին և ռաղամն ի Թագաւորաց։ Եւ մանաւանդ եԹէ Աստուած տայցէ զԹագաւոր, կարես ըստ այսմ օրինակի և ի Թագաւորէն առնուլ՝ որպէս մեք առաք ի Թագաւորապէս իշխող Քեարիմ խանէն, զորմէ յետոյ տեսցես։

(1) Ի պահեստ, աւանդ։ — (2) Պարտամուրհակ։ — (5) Մաքսապետք։ — (4) Պահապանք։

ԻԳ. Ըստ վերոգրեալ ԺԳ գլխոյ թղթոյդ, յետոյ և մեք ռուսք ի յաջորդելն մեր զկնի Ցակոբ Կաթուղիկոսին՝ ի նոյն Հիւսէյին-ալի-խանէն, ի ՌՃՀԶ. թուին տաճկաց։ Որ ամենևին մի և նոյն է ընդ վերնոյն։ Գիտ յերեան գրեցեալ ցուցակաւն։ Ապա ի բռնանալն Քեարիմ-խան-զանդ կոչեցելոյն, և ի գալն ի Դաւրէժ, և ի յՈրմի, ի նմանէ ևս խնդրեցաք զայսպիսի թուղթ մի, առաքելով զօրինակն սորին։ Որ և գրեալ տայ մեզ ի ՌՃՀԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։ Սակայն Քեարիմ խանի տուեալն ևս զօրեղ է և հաստատ։ Եւ ի վերջ իւրաքանչիւրոցն նոյնպէս սաստիկ գրէ խանին և այլոց գործակալաց. գրելով թէ՝ այդպէս են լեալք ի բնէ ռաղամօք թագաւորաց։ Որք երեքեանքն ևս պիտանիք են և լաւ պահելիք։ Ցիշեցան սոքա ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան, և ի Ի գլուխն ի ճառս թագաւորաց գրեանցն։

ԻԴ. Վերոյիշեցեալ Հիւսէյին-ալի-խանն թուղթ մի տայ սրբոյ Աթոռոյս ըստ արզայի մերում թէ՝ Իմամիրին (որ է մեր հողն՝ որ յիշեցաւ ի ԺԵ գլուխն ի ճառս արտօրէիցն.) սրբոյ Էջմիածնի է, ոչ ոք կարէ ձեռնամուխ լինել ի նա և կամ մուլք պահանջել. ի թուին տաճկաց ՌՃՀԶ։ Գիտ ցուցակաւն. վասն սորա և այլք թուղթք գոն, զորս տեսցես ի նոյն գլուխն։

ԻԵ. Սոյն Հիւսէյին-ալի-խանս հուճաթապէս և վկայական գիր մի տայ սրբոյ Աթոռոյս ըստ արզայի մերում վասն Աշտարակու, Եղուարդու, Մողնու, և Քիրաշլու գիւղօրէիցն մլքատու լինելոյն սրբոյ Աթոռոյս ի բնէ անտի, յիշելով և զԳրիգոր Կաթուղիկոսի մեծ վախուփնամայն։ Զոր կնքէ ինքն, կնքեցուցանէ Շէխ-իսլամին, և այլոց գիւանագրաց և մեծամեծաց ի ՌՃՁԲ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն։ Ցիշեցաւ այս ի ճառս մլքատուութեան սոյն գիւղօրէիցս ի ԺԳ գլուխն։

Սոյն խանս զգիր մի ևս տայ սրբոյ Աթոռոյս ըստ խնդրոյ մերում, վասն երեք դանկ մլքատուութեան Փռանկանոց գեղջն սրբոյ Աթոռոյս. ի ՌՃՁԲ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն։ Ցիշեցաւ այս ի ճառս մլքատուութեան սոյն գեղջս ի ԺԳ գլուխն հանդերձ պարագայիւքն։

## ԳԼ. ԻԲ.

Յորում ցուցանին փորմանք Օսմանցւոց Թագաւորաց, և հարկաւոր գրեանք, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս։

Նախապէս գիտելի է, զի ի բնէ անտի կանոն և սովորութիւն է լեալ, զի Կաթողիկոսունքն սրբոյ Աթոռոյս հաւարձակ և անմիջնորդ առ յամենայն թագաւորս, թէ քրիստոնէից, թէ Պարսից, և թէ Օսմանցւոց, զգիրս և զարզայս գրեսցեն երբ և կամիցին։ Որպէս տեսանես աչօք ըղձաղամն Պարսից և զփարմանս Օսմանցւոց թագաւորաց, զորս արզայիւքն իւրեանց (և կամ՝ ի ձեռն վեքիլից և կամ՝ ոմանց իշխանաց) առեալ են Կաթուղիկոսքն մեր ի յիւրաքանչիւր ժամանակս, որ և է այսպէս մինչև ցայսօր առ քրիստոնեայ թագաւորսն եթէ (հարկ լինիցի), և առ Պարսից թագաւորսն, (թէ լինիցին)։ Իսկ առ Օսմանցւոց թագաւորսն տևեաց այս կանոն մինչև ի ՌՃՀԵ թիւն մեր, և ի ՌՃԼԸ թիւն տաճկաց, յորժամ ընտրեցաւ ի մեծ քաղաքն Պօլիս ի Կաթուղիկոս սրբոյ Աթոռոյս՝ Կարապետ վարդապետն Զէյթունցի և առաջնորդն Էնկիւրիոյ, և ի Պօլիս օծեցաւ Կաթուղիկոս թեկադրութեամբ Բաղիշեցի Ցովհաննէս վարդապետին (որ Պատրիարգ էր նոյնոյ քաղաքին), և զնոյն Ցովհաննէս վարդապետն, և զայլս ոմանս վարդապետս ի նոյն քաղաքօջն ձեռնադրեաց Եպիսկոպոս։ Արդ որպէս ասացաք, մինչև յայս Կարապետ Կաթուղիկոս, Էջմիածնանիստ Կաթուղիկոսքն, ինքեանք և կամ իւրեանց նուիրակօքն, և կամ՝ ի ձեռն ոմանց իշխանաց, անխտիր գրէին զարզայ առ թագաւորսն Օսմանցւոց, և առնուին զհրամանս զորս կամէին, որպէս տեսանես ի յառաջակայդ։ Միայն ի նոր հրաւիրելն Կաթուղիկոսացուին ի Կաթուղիկոսութիւն, արզայն ի բերանոյ ժողովրդոցն գրիւր առ թագաւորն, և նա ըստ խնդրանացն տայր զպէրաթ [1] փէրմանն Կաթողիկոսութեան։

Ապա ի հրաւիրելն ի Կաթողիկոսութիւն վերոյիշեալ Կարապետ Կաթողիկոսիդ, (որ էր յայն կուսացի, և մանաւանդ ի վիճակէն Սըսոյ), Աթոռոյս որպիսութեան, պատուոյն և իշխանութեան ամենևին անտեղեակ, ինքն ևս ծեր և պարզամիտ։ Իսկ այն Ցովհաննէս վարդապետն Բաղիշեցի (որ էր Պատրիարգ Պօլսոյ) խորամանկ, շքմօղ, կեղծաւոր, և խաբող, որպէս բնքքն է Բաղիշու և այնց կողմանց։

Վասն որոյ ժամ գտեալ այս Ցովհաննէսիսի (որում ի վաղուց հետէ ցանկայր), զարզայն, և զայլս խնդրանաց գրեանսն Կարապետ Կաթուղիկոսին, ինքն նոյն Ցովհաննէս վարդապետն գրէ ի յիւր բերանոյն առ թագաւորն, գրելով թէ՝ ըստ խնդրոյ ազգիս մերոյ զԿարապետ վարդապետն Կաթուղիկոս արարաք։ Եւ թագաւորն ևս գրէ թէ՝ ըստ արզայի Ցովհաննէս Փաթրիկին, տուաք զհրաման։ Այսու հնարիւք այդ Ցովհաննէս նենգաւորդ հատանէ զգիրս և զարզայս Կաթուղիկոսացն սրբոյ Աթոռոյս ի դրանէ թագաւորին և յիւր կողմն արկանէ։ Որ և մնայ այս

(1) Պէրաթ, հրովարտակ արքունի։

սովորութիւն. զի Կաթողիկոսաց բարաթքն, և այլք հրամանքն սրբոյ Աթոռոյս՝ Պօլսոյ Պատրիարգի արզային լինիցին, և ինքեանք Կաթողիկոսքն և այլք իւրայինքն ոչ կարիցեն զարզայ ինչ գրել առ Թագաւորն Օսմանցւոց, որպէս և տեսանես ի յառաջակայդ. զի ի Կարապետ Կաթուղիկոսէն ցայս վայր որքան փարմանք և բարաթք գոն ի յՕսմանցւոց Թագաւորէն, ըստ արզայից պատրիարքին են տրեցեալք։ Եւ մինչ այսու նենգաւորութեամբ առին Պօլսոյ Պատրիարգունքն զպաշտօն Կաթուղիկոսացն ի ձեռս իւրեանց, այնուհետև սկսան խաղացուցանել զնոսա որպէս և կամեցան։ Զի ի խնդրելն Կաթուղիկոսաց զփարման ինչ ի պատրիարգաց, եթէ անվնաս է իւրեանց, և Կաթուղիկոսացն ևս ոչ այնքան օգտակարք, առնուն և առաքեն. իսկ եթէ նշուլիւք ինչ վնաս է իւրեանց, և կամ Կաթուղիկոսացն մեծ օգտաւէտ, պատճառաւ իւիք բացասեն, պատասխանելով թէ՝ ոչ կամի Թագաւորն։ Եւ հոգացելոց փէրմանացն ևս զծախսն միայն տասնապատիկ բարդելով առնուն ի Կաթուղիկոսացն։ Զօր օրինակ ի բարաթս Կաթուղիկոսացն, տուրքն զորս տան յարքունիս ի Նոր նստելն, վեց հազար և ութն հարիւր ստակ տրին, որ է յիսուն և վեց ղուրուշ Օսմանցւոց և քսան և վեց փարայ և երկու ըստակ։ Այս է տուրք Կաթուղիկոսացն մերոց, որք ի նստելն՝ որպէս թէ զընծայ իմն, և կամ զմախթու տան Օսմանցւոց Թագաւորացն ի սկզբանն միայն։ Դիցուք թէ և քանի դրամ ևս ի գրունսն վատնիցին։ Բայց պատրիարգունքն ի հոգալն զպէրաթսն Կաթուղիկոսաց, առնուն որքան և կամին, մինչև ի յերկու և յերեք հազար ղուրուշս աւելի ցուցանելով զծախսն։ Այս միայն Կաթուղիկոսական բէրաթին յաղագս։ Իսկ եթէ պատահի, զի և զայլս փէրմանս ևս հոգալոց իցեն, վասն նոցա ևս յատուկ առնուն աւելիօք։ Այս այսպէս։

Դարձեալ ի յառաջնոց Կաթուղիկոսաց բարաթոցն, մինչև ի Շամախեցի Ցակովբ Կաթուղիկոսն, (որ նստաւ ի ՌՄԲ թուոջն մերում) արքունական տուրքն՝ յիսուն և վեց ղուրուշ քսան և վեց փարայ և երկու ստակ են տրեցեալք՝ որպէս ասացաք, որ է վեց հազար և ութն հարիւր ստակ։ Իսկ ի բարաթն Շամախեցի Ցակովբ Կաթուղիկոսին տասն հազար և ութն հարիւր ստակ է տրեցեալ, որ է իննսուն ղուրուշ։ Որոյ պատճառն է, զի վասն Զմիւռնիոյ քաղաքին՝ որ է Տէրունի թեմ սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի . . գլուխն, (որոյ Նուիրակն ի սրբոյ Աթոռոյս գնայ, և Առաջնորդ ևս կոչի. որ է այսպէս մինչև ցայսօր) Պօլսոյ պատրիարգունքն մախային միշտ և մնձային անդադար, զի ի կողմն իւրեանց արկցեն, որպէս զի և զնորին Առաջնորդն ինքեանք առաքեսցեն (որպէս և արարին այլոց քաղաքացն, որպէս ասացաւ լիովին ի Ը. գլուխն), պատճառելով թէ՝ Թա-



գաւորն թէֆթիշ առնէ, և զմախթուն խնդրէ ի մէնջ, և թէ ի Պարսկաստան նստի Կաթուղիկոսն, և յիմ երկիրս առաջնորդ առաքէ առանց փարմանի։ Եւ զայլս այսպիսիս ստապաճոյճս յօդեալ ասէին միշտ։ Ապա ի վերջիընցեալ թուոջն՝ յորում նստաւ Ցակովբ Կաթուղիկոսն Շամախեցի, մեք ի Պօլիս նուիրակ էաք, և սոյն վէճս ևս յարոյց տեղւոյ պատրիարգ Ցակովբ վարդապետն Զմմառացի ի Սսոյ տանէն, մինչ զի թէ առնուլ կամէր զԻզմիր։ Ապա մեք խորհրդակցեալ ընդ ումանս բարեպաշտօն իշխանս, խնդրեցաք զհնարս գտանել առ ի յազատել զԻզմիր ի բերանոյ նոցա. որք և գտեալ հոգացաք իսկ Աստուծով։ Քանզի Իզմիրու մախթուն (որ է արքունական հարկն՝ զոր ի նստելն առաջնորդին տալ պարտի) էր չորս հազար ստակ, որ է, երեսուն և երեք ղուրուշ, ԺԳ փարայ և Ա ստակ. զայս ևս եդեալ ի վերայ մախթուին Կաթուղիկոսացն, արարաք զնա տասն հազար ութն հարիւր ստակ, որ է իննսուն ղուրուշ։ Ապա փոխելով զբէրաթն Ցակովբ Կաթուղիկոսին՝ ձգեցաք և զանուն Զմիւռնոյ ի մէջ բէրաթին, որ եղև սովորութիւն յայնմ հետէ, զի ի մէջ Կաթուղիկոսական բէրաթին Իզմիր ևս յատուկ գրեցի և մախթուն իննսուն ղուրուշ (որ է տասն հազար և ութն հարիւր ըստակ) հաշուեցի։ Այսու հատաք զձայն նոցին յականջաց Կաթուղիկոսացն, որք ոչ ևս կարեն ի բերան բերել զԶմիւռնին։ Այլ և այս է գիտելի. Զի Ցակովբ Կաթուղիկոսի արքունական գրեանքն ամենն մեր ձեռօքն եղեն հոգացեալք։ Որք էին, մէկ Կաթուղիկոսական բէրաթն, մէկ հավալէ [1] փարման, մէկ փարման թէ՝ Կաթուղիկոսն ի Կարին, ի Ղարս, ի Պայազիտ և յայլս տեղիս ի կողմանս Օսմանցւոց, ուր պատահիցի և նստիցի, ոչ ոք խօսեսցի։ Եւ մէկ փարման ևս թէ՝ եթէ դաավաճի [2] ինչ յարիցէ ի վերայ Կաթուղիկոսին և ի վերայ նորին մարդկանցն, նոցա դատաստանն ի յըՍտամպօլ տեսցի։ Այսոցիկ չորից փէրմանացս բոլոր ծախսն եղաւ եօթն հարիւր յիսուն ղուրուշ։ Նմանապէս և ի նստելն մեր զկնի Ցակովբայ Կաթուղիկոսին, զգոյն յիշեցեալ չորեսին փարմանս ևս այդքան դրամով հոգացին իշխանքն ի Պօլիս։ Որք եթէ Պատրիարքի ձեռօքն իցէին հոգացեալք, քառապատիկ երթայր ծախսն։ Որ հարկաւոր է գիտել Կաթուղիկոսաց, վասն այսորիկ գրեցի։

Դարձեալ և զայս գիտեա՛, զի յառաջնումն չէ լեալ սովորութիւն և հարկ՝ զի Կաթուղիկոսն ի նստելն՝ առնուցու ի յՕսմանցւոց Թագաւորէն զՊէրաթ Կաթուղիկոսութեան մինչև ի Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն (որպէս հարկ է առնուլ ի Պարսից Թագաւորաց. որովհետև Աթո-

(1) Հավալէ, յանձնարարական։ — (2) Դատախազ։

ըլս ի յիշխանութիւնս Պարսից է)։ Այլ յետ նուաղելոյն ռազմօք Պարսից թագաւորաց, յետ այնորիկ եթէ ունեցեալ է զխնդիր ինչ ի յՕսմանցւոց թագաւորացն, վասն այսորիկ յառաւել արզ է արարեալ ինքն Կաթողիկոսն, և հանեալ է զփարման։ Իսկ ի նստելն Ջուղայեցի Աղէքսանդր Կաթողիկոսին, առեալ է նա և զՊէրաթ Կաթողիկոսութեան և ի յՕսմանցւոց թագաւորէն, որպէս տեսանես ի յօրինակութիւնս փարմանացդ։ Որոյ պատճառն է գլխաւորապէս Եղիազարու և այլոց նոյնապիսեաց սեպագլխաց լրբութիւնն։ Ուստի յայնմ հետէ եղև սովորութիւն, զի Կաթողիկոսն ի նստելն, ի յՕսմանցւոց թագաւորէն ևս առնուցու զբերաթ փերման Կաթողիկոսութեան։

Տես ուրեմն զգրեանս Օսմանցւոց թագաւորացն։

Ա. Սուլթան Մուհամմատին փարման, առ յոր արզ առնէ Փիլիպպոս Կաթողիկոսն թէ՝ Նուիրակունքն մեր ըստ սովորութեան մերում՝, ի շրջագայելն ի յերկիրս քո, Վօյվատայք, Ենկիչարիք, և այլք զայլթք, զերս պահանջեն ի նոցանէ։ Եւ թագաւորն գրէ թամբէհ, զի մի՛ առնիցեն այնպէս, ի ՌԿԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարով։

Բ. Սուլթան Մուհամմատի փերման, որ ըստ վերնոյդ գրէ ըստ արզայի Փիլիպպոս Կաթողիկոսին ի վերայ Պաշի կոչեցելոցն, զի ի յէջմիածնի Նուիրակացն զեր ինչ մի՛ պահանջեսցեն. ի ՌԿԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարով։

Գ. Սուլթան Մահմէտին փարման, զի Ջուղայեցի Յակոբ Կաթողիկոսն ի ձեռն Եսայի կոչեցեալ վէքիլին իւրոյ արզ առնէ թագաւորին թէ՝ Վանայ երկիրն իւրովք գաւառօքն, նա և Տիարպէքիր, Արճէշ, Դլաթ, Մուշ, Բաղէշ, Խօշապ, և այլք շրջակայքն սոցին, ի բնէ Էջմիածնի են վիճակք, իսկ Մարտիրոս կաթողիկոսն Աղթամարու երբեմն ձեռնամուխ լինի ի նոսա։ Վասն որոյ և թագաւորն գրէ փարման ի վերայ Վանայ փաշային, զի մի՛ թողուցու Աղթամարու Կաթողիկոսացն ձեռնամուխ լինել ի յայն վիճակսն, ի ՌՀԲ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն և . . . համարով։ Զվերոյգրեալսդ տես լիովին ի ԺԱ գլուխն ի ճառս Աղթամարու։

Դ. Սուլթան Մուհամմատին փարման, զի յորժամ Յակոբ Կաթողիկոսն հանէ զոտս Աղթամարցւոց ի Վանայ և յայլ վիճակացդ վերոյիշեցելոց, և առաքէ յայնս զՆուիրակս, բռնաւորք տեղեացն թէ զառաջին վէճն արծարծելով, և թէ յայլ ինչ պատճառս, ի Նուիրակացն Աթոռոյս զեր ինչ պահանջեն, վասն որոյ արզ առնէ թագաւորին և զայս փարմանս հանէ սաստիկ պատուիրմամբ ի վերայ տեղեաց իշխողացն, զի մի՛ ինչ պա-



հանջեսցեն ի Նուիրակացն Աթոռոյս, ի Ռ . . թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն և . . . համարով։

Ե. Սուլթան Մահմէտին փարման, զի Եղիազար վարդապետն Հռոմկլայեցի (որ լինի Պատրիարգ սրբոյ Երուսաղէմի) թելադրութեամբ Օնոփրիոս և այլոց ոմանց վարդապետաց օծանի կաթողիկոս ի Բերիա ընդդէմ սրբոյ Աթոռոյս և Յակոբ Կաթողիկոսին Ջուղայեցւոյ, ի ՌՀԶ թուին տաճկաց, և ի ՌՃԺԴ թուիս մերում, և փարման առնու ի Սուլթան Մահմէտէն՝ զի և յԵրուսաղէմ միւռոն օրհնեսցէ և անտի զՆուիրակս առաքեսցէ յամենայն յազգս Հայոց, որ և խոստանայ տալ յամի հազար հինգ հարիւր ստակ ի յարքունիս։ Ապա Յակոբ Կաթողիկոսն ելեալ գնայ ի յՍտամպօլ, և արզ առնէ թագաւորին ծանուցանելով զօրութիւն սրբոյ Աթոռոյս և զընդդիմութիւնն Եղիազարու։ Եւ թագաւորն տայ զայս փարմանս, գրելով թէ՝ որովհետև ի բնէ յէջմիածին օրհնի Միւռոն, որպէս և ի Ջամբռն մեր ևս գրեցեալ գոյ, հրամայեցի և ես զի ի յէջմիածին օրհնեսցի և Յակոբն լիցի Կաթողիկոս։ Եւ այն փարմանն զոր եառ Եղիազարն, անընդունակ լիցի։ Գրի այս ի ՌՀԷ թուին տաճկաց։

Զ. Բայց սորա սուրատն գոյ՝ զոր գտցես ցուցակաւն և (Ե) համարով։ Սմա երկու սուրաթք ևս գոն գրեցեալք ի ՌՀԹ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակօքն և (Զ) համարով։

Է. Սուլթան Մահմէտին փարման, զի յորժամ Յակոբ Կաթողիկոսն զայդ վերոյիշեցեալ փարմանդ առնու, և բմբերանէ զլրբութիւնն Եղիազարու, Եղիազարն ոչ դադարի ի նոյն լրբութենէն։ Վասն որոյ վերստին արզ առնէ յԱթոռոյս Յակոբ Կաթողիկոսն նոյնոյ թագաւորին թէ՝ ես քո փարմանաւդ եղէ Կաթողիկոս, և հազար եօթն հարիւր ամ է որ այս է մեր Աթոռն, և սուրբ Միւռօնն մեր աստ օրհնի, և այլ այսպիսիք։ Այժմ Եղիազարն ոչ դադարի ի հակառակութենէն։ Վասն որոյ և թագաւորն գրէ զայս փարմանս ի վերայ ամենայն իշխողաց, զի ուր և իցէ Եղիազարն՝ ընկճեսցեն զլրբութիւն նորին, և թամբէհ արասցեն։ Գիտ երեան գրեցեալ ցուցակաւն. որ գրի ի ՌՁԱ թուոջն տաճկաց, և (Է) համարով։ Սորա Բ սուրաթք ևս գոն, զոր գտցես ցուցակօքն։ Յիշեցաւ այս իրակութիւնս ի Դ գլուխն ի ճառս Յակոբայ Կաթողիկոսին Ջուղայեցւոյ։ — Իսկ յետ Յակոբայ յորժամ Եղիազարն հրաւիրի ի Կաթողիկոսութիւն սրբոյ Աթոռոյս, ըստ օրինի. այլ ոչ ևս առնու զնորոգ փարման ի յՕսմանցւոց թագաւորէն, այլ նոյնով առաջնով փարմանաւն (զոր առեալ էր ի ՌՀԶ թուին տաճկաց, զի յԵրուսաղէմ նստեալ կաթողիկոսութիւն արասցէ,) գայ յԱթոռս և լինի Կաթողիկոս, Սօղոմն ի Պօղոս փոխեցեալ.

ի ՌՃԼԱ թուոջն մերում։ Եւ մեք այրեալ անհետ արարաք զայն փերմանն Գրիգի զի գիտասջիք։

Ը. Սուլթան Մահմետին փարման, զի արդ առնեն վարդապետքն և քահանայք թէ՝ մեք ի Մահմետէն գիր ունիմք, և ի բնէ այսպէս է լեալ, զի կարգաւորք մեր գլխարած և գլխապանծ մի՛ տայցեն։ Թագաւորն գրէ ի վերայ Հալապու, Շամու, և Ռումէլու փաշայից և դատաւորացն, զի մի՛ առցեն. ի ՌՂԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և (Ը) համարով. սաւատ է։

Թ. Սուլթան Մուստաֆային փարման, զի յետ Եղիազարու Կաթուղիկոսին՝ յորժամ Նստի յաթոռ Նահապետն Ուրհայեցի Կաթուղիկոս, ըղմտաւ ածեալ թէ՝ մի՛ գուցէ նորինմնապէս Պատրիարգունքն Երուսաղէմի և կամ այլք սնապարծք զԵղիազարին օրինակ առեալ արծարծեսցեն զայն գործ և ինքեանք լըբասցին, վասն որոյ արդ առնէ Սուլթան Մուստաֆային թէ՝ ի բնէ անտի Աթոռն Հայոց Էջմիածին է, և սուրբ Միւռոնն աստ օրհնի, և Կաթուղիկոսն աստ Նստի։ Իսկ յառաջ քան զայս Եղիազարն ստապատիր բանիւք արդ արարեալ թագաւորութեանդ ձեռամբ եհան զփերման, զի յԵրուսաղէմ Նստիցի և Կաթուղիկոսութիւն արասցէ. Յակոբ Կաթուղիկոսն արդ արար Սուլթան Մահմետին և փարման եհան վերստին՝ զի յԷջմիածին լիցի Կաթուղիկոսարան, և միւռոնն անդ օրհնեսցի, որով և խափանեաց զԵղիազարու անկարգութիւնն։ Արդ խնդրի ի տէրութենէդ՝ զի և դու զփարման մի տայցես մեզ՝ զի հաստատ մնասցէ այս կանոն, և մի՛ ևս իշխեսցէ ոք զայն առնել։ Եւ թագաւորն գրէ սաստիկ հրամանաւ, զի այսպէս լիցի. ի ՌՃԲ թուին տաճկաց։ Գիտ յերեսն գրեցեալ ցուցակաւն և (Թ) համարով։ Սաւատ մի ևս ունի սա։

Ժ. Սուլթան Մահմետին փարման, զոր գրէ ըստ արզայի Ջուղայեցի Աղեքսանդր Կաթուղիկոսին, զի Նուիրակունքն Էջմիածնի (ուր և գնայցեն)՝ մի՛ ոք նեղացուսցէ զնոսա և կամ զեր ինչ պահանջեսցէ. ի ՌՃԻ թուոջն տաճկաց. չորս հատ սուրաթ է այս շարի կնքով։ Գիտ յերեսս գրեցեալ ցուցակքն և (Ժ) համարով։

ԺԱ. Սուլթան Ահմետին փարման ի վերայ Զմիւռնոյ Դազեացն վասն տեղւոյ առաջնորդին, զի մի՛ նեղացուսցեն զնա, և յօրէնս Հայոց մի՛ խառնիցին, ի հազար հարիւր քսան և մէկ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և (ԺԱ) համարով։

ԺԲ. Սուլթան Ահմետին պէրաթ փերման, զոր գրէ ըստ արզայի Աղեքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ վասն Կաթուղիկոսութեան Նորին, ի ՌՃԻԳ թուին տաճկաց։ Գիտ յերեսն գրեցեալ ցուցակաւն և (ԺԲ) համարով։ Երեք սուրաթ ևս ունի։



ԺԳ. Սուլթան Ահմետին պէրաթ փարման, զոր գրէ ըստ արզայի Հայոց Ազգին վասն Կաթուղիկոսութեան Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ ի ՌՃԻԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԳ համարով։

ԺԴ. Սուլթան Ահմետին փերման, զոր գրէ ըստ արզայի Յովհաննէս Պատրիարքին Պօլսոյ, վասն Աղթամայ Յարութիւն վարդապետին՝ առաջնորդին Ախլցխայու, զի աքսորեսցի անտի, ի ՌՃԼԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԴ համարով։

ԺԵ. Սուլթան Ահմետին փարմանի երկու սուրէթ շարի կնքով, որ գրէ ի վերայ Կարնոյ և Կարսայ փաշայից թէ՝ յԷջմիածնայ ուխտաւորացն զեր ինչ պահանջել մի՛ թողուցուք ումեք. ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԵ համարով։

ԺԶ. Սուլթան Ահմետին փարման, զոր ըստ արզայի Յովհաննէս Պատրիարքին գրէ ի վերայ ամենայն Դազեացն որք ի Թէմն Իզմիրու թէ՝ Հայոց օրինաց, և Առաջնորդի գործոյն, և չհասութեան պսակից և կամ քահանայից վէժխնդրութեան առաջնորդին մի՛ խառնիք դուք, զի այդքին Առաջնորդին են գործ, ի ՌՃԼԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԶ համարով։

ԺԷ. Սուլթան Ահմետին փարման, զի ի ՌՃՀԲ թուոջն մերում, և ի ՌՃԼԶ թուոջն տաճկաց, յորժամ հանդերձեալ էր գալ և առնուլ զերկիրս մեր Օսմանցին, որ և էառ, Երևանցի Սիմէօն վարդապետն ի Պօլիս Նուիրակ լինի, վասն որոյ արդ առնէ թագաւորին, զի զօրքն նոցա յԷջմիածնի մուլքսն, յայգիս, ի ջրաղացս և յանասունս, և յայլ ինչս Աթոռոյս մի մերձեսցին, և միաբանից Էջմիածնի մի նեղացուսցեն, և ուր և իցեն, բաց ի խարաճէն՝ զայլ ինչ մի՛ պահանջեսցեն ի նոցանէ. ի ՌՃԼԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԺԷ համարով։ Յիշեցաւ այս ի Գ. գլուխն ի ճառս Կարապետ Կաթուղիկոսին։

ԺԸ. Սուլթան Ահմետին փարման, վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս ըստ արզայի Աստուածատուր Կաթուղիկոսին Համատանցւոյ (յորժամ էառ զերկիրս մեր ի Պարսից Օսմանցին ի Շահ - Հիւսէյինէն, ի ՌՃՀԳ թուոջն մերում, և ի տաճկաց ՌՃԼԷ թուոջն), յորում գրեցեալ մաղափ իրքն են սոքա. Երկու գութան, հինգ հարիւր ոչխար, երկու գինկ, և երկու ձիթահանք. և բովանդակ ջրաղացք և այգիք, որքան և իցեն, ամենայն միաբանքն ի խարաճէ և յիսպանջէ ազատք լիցին։ Ընդ Աթոռոյս և չորեքին վանորայքն ևս ազատք լիցին յամենայնէ։ Անյիշատակաց ինչքն Աթոռոյս հասանիցին, և միայն ի տարին ԳՃԾ դուրուշ տայցէ յարքունիս, որպէս ի բնէ կանոն է, ի ՌՃԼԸ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն և

ԺԸ. համարով։ Գ. սաւատ ևս գոյ սորա՝ չարի կնքով. որպէս ցուցակօքն
և ԺԸ. համարօքն ցուցանեն։ Ցիշեցաւ այս ի ԺԴ. գլուխն ի ճառս մաղա-
փութեան։

ԺԹ. Սուլթան Ահմէտին փարման, զի Կարապետ Կաթուղիկոսն ի Պօ-
լիս գոլով՝ զՆերեանցի Սիմէօն վարդապետն Ախթառական արարեալ առաքէ
ի յԱթոռս. Վասն որոյ և զայս փարմանս հանէ ի վերայ Փաշային. Ղա-
զեաց, և այլոց իշխողաց, զի ուր և պատահիցի Սիմէօն վարդապետն, մի՛
ոք նեղացուսցէ զնա, ի ՌՃԼԲ. թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԹ
համարով։

Ի. Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Երևանու փաշային՝ ըստ վերնոյ
փարմանին, զի մուղայէթ լիցի Սիմէօն վարդապետին. ի ՌՃԼԲ. թուին
տաճկաց։ Գիտ ցուցական և Ի համարով։

ԻԱ. Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Ղազեաց ամենեցունց ըստ
արզային Յովհաննէս Պատրիարգին վասն Կարապետ Կաթուղիկոսին Նախ-
րակացն, զի ի յանենչն զսուրէթ փարմանի՝ մի պատճառեսցեն թէ այդ սու-
րէթ է և ոչ ասլն, և զեր ինչ պահանջեսցեն, այլ ընկալցին զսուրէթն
որպէս զխսկսն, ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԱ համա-
րով։

ԻԲ. Սուլթան Ահմէտին փարման, ըստ վերոյգրելոյդ ի վերայ Ղազեացն
և Պաճչոց, զի ընկալցին փարմանին զսուրէթ որպէս զխսկսն, ի ՌՃԼԲ
թուին տաճկաց։ Գիտ ցուցական ԻԲ և . . . սուրաթ մի ևս գոյ սորա,
գիտ ցուցական և ԻԲ համարով։

ԻԳ Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Երևանու և Թաւրիզու Փա-
շային, և Ղազեացն և այլոցն թէ՝ Կաթուղիկոսն ուր և կամիցի գնալ, մի
ոք ասասցէ թէ հրաման առ և գնա, և կամ ի գնալդ և ի գալդ զայս ինչ
տուր մեզ. ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԳ համարով։
Սուրաթ մի ևս ունի։

ԻԴ. Սուլթան Ահմէտին փարման վասն Կարապետ Կաթուղիկոսին, զի
ուր և շրջեսցի՝ խօսող և կամ զեր ինչ պահանջող մի լիցի. ի ՌՃԼԲ
թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԴ համարով։

ԻԵ. Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Երևանու Փաշային, Ղազեաց,
և այլոց մեծամեծաց, զի բայրամ անուամբ ի Կաթուղիկոսէն մի՛ պահան-
ջեսցեն զղումաշ, շաքար և այլ ինչ. ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ
ցուցական և ԻԵ համարով։ Սաւատ մի ևս գոյ սորա։

ԻԶ. Սուլթան Ահմէտին փարման վասն Կարապետ Կաթուղիկոսին կա-
թուղիկոսութեան, յորում այս ինչ աւելի գոյ ի վերայ այլոց, զի զանա-
գլուխ մի ևթէ կամիցի Կաթուղիկոսն պատժել և կամ ի Սևան առաքել,



մի ոք ընդդիմասցի. ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԶ
համարով։

ԻԷ Սուլթան Ահմէտին փարման ըստ մտաց վերնոյդ ի վերայ Երևանու
փաշային գրէ վասն Կարապետ Կաթուղիկոսին, ի ՌՃԼԲ թուին տաճկաց։
Գիտ ցուցական և ԻԷ համարով։

ԻԸ. Սուլթան Ահմէտին հավալէ փարման վասն Կարապետ կաթուղիկո-
սին, ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԸ համարով։

ԻԹ. Սուլթան Ահմէտին փարման վասն Կարապետ Կաթուղիկոսին, զի
ի Պօլսոյ ի գալն ի ճանապարհին՝ ուր և պատահիցի՝ ի պատիւ ունիցին, ի
ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԻԹ համարով։

Լ. Սուլթան Ահմէտին փարման վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս՝
ի յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին. յորում մաղաֆ եղեալքն են այ-
սոքիկ։ Երկու գութան, հազար հինգ հարիւր սոմար սերմն, հինգ հարիւր
ոչխար, երկու ջինկ, և երկու ձիթահանք։ Ջրաղացք և այգիք որքան ու-
նի։ Բոլոր միաբանքն զխարաճ և զիսպանջ և զայլ խարճ ամենևին մի
տայցեն. և չորս եկեղեցիքն ևս ընդ Էջմիածնի մաղաֆ լիցին։ Անխշտակ
մնասցեն Աթոռոյն մեղրից ինչքն յԱթոռն հասցին։ Ցօշականու մուլքն տացին
Իսկ Կաթողիկոսն ի տարին Գ.ՃԾ ղուշ. տայցէ յարքունիս՝ որպէս կանոն
է ի բնէ. ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Լ համարով։
Ցիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԼԱ. Սուլթան Ահմէտին փարման գրքաձև ի յաւուրս Կարապետ Կա-
թուղիկոսին. ի ՌՃԽ թուոջն տաճկաց։ Զի զգրքաձև տեֆթեր մի շինեն՝
գիտութեամբ Երևանու Փաշային և Շէխ-իսլամին տաճկերէն, յորում նախ
գրեն յանուանէ և ուրոյն ուրոյն զտունս, զայգիս, զջրաղացս, զպարտէզս,
զերմանելի տեղիսս. և զայլս այսպիսիս գեօղիս մերոյ։ Եւ ապա գրեն զոր-
պիսութիւնս Աթոռոյս թարց յատկացուցիչ թուոց թէ՝ ունի զայգիս,
զջրաղացս, զջինկս, զձաղանիս, զքեարվանսարայս, և զայլս մուլքս, այլ և
երկու գութան, հազար հինգ հարիւր սոմար սերմն, վեց հարիւր ոչխար.
Աթոռոյս և երից վանիցն մերոց միաբանքն։ Որք ամենքեան մաղաֆք են
յամենից հարկաց, միայն թէ Կաթուղիկոսն ի տարին Գ.ՃԾ ղուշ. տայ
յարքունիս, և ոչ այլ ինչ։ Այլ և Էջմիածնի գեօղս Ցօշական և Մաս-
տարայ մուլք են սրբոյ Աթոռոյս։ Զայս ամենայն գրէ Շէխ-իսլամն և
կնքէ զվերջ բանիցն, և առաքեն առ թագաւորն. և թագաւորն ևս ի գլ-
րուխ զրքաձև տեֆթերին գնէ զթուրէն, հրամայելով զի այսպէս լիցի։
Գիտ յերեսն գրեցեալ ցուցական և ԼԱ համարով։ Այսու ձևով փէր-
ման մի ևս գոյ՝ զոր ի վերըդ տեսցես։ Ցիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս
մաղաֆութեան։

ԼԲ. Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Երեւանու փաշային, Ղազուն, և այլոց մեծամեծացն վասն Կարապետ Կաթուղիկոսին թէ ես զնա ընտրեալ եմ տուեալ, լաւ պատուով պահեցէք զդա, ի ՌՃԽ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԲ համարով։

ԼԳ. Սուլթան Ահմէտին փարման ի վերայ Երեւանու փաշային, Ղազուն, և այլոց մեծամեծացն, վասն Կարապետ Կաթուղիկոսին թէ ես զնա ընտրեալ եմ տուեալ, ի շարէն ես փաթվայ ունիմ, զոր ինչ շինուածս շինել կամիցի՝ մի՛ ոք ներհակեսցի, ի ՌՃԽ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԳ համարով։

ԼԴ. Սուլթան Ահմէտին կրկին բերաթ վասն Կարապետ Կաթուղիկոսին կաթուղիկոսութեան, ի ՌՃԽԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԴ համարով։

ԼԵ. Սուլթան Ահմէտին բարաթ ֆէրման վասն Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսի կաթուղիկոսութեան, ի ՌՃԽԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԵ համարով։

ԼԶ. Սուլթան Մահմուտին բարաթ փարման վասն Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսին կաթուղիկոսութեան, ի ՌՃԽԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԶ համարով։

ԼԷ. Սուլթան Մահմուտին զբքաձև փարման, յորում նախ Շխ-իսլամն երկրիս գիտութեամբ փաշային գրէ զորպիսութիւնս ցեղիս մերոյ, և ապա զմուլքն և զորպիսութիւնն սրբոյ Աթոռոյս վկայելով մաղաֆութեան, կնքէ և զվերջն թղթոյն։ Եւ ապա առաքէ առ Սուլթան Մահմուտն, և նա դնէ ի գլուխն զթուրայն, ի ՌՃԽԳ թուին տաճկաց, յաւուրս Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսին։ Որ ամենեւին նոյն է ըստ փարմանի Սուլթան Ահմէտին, զոր տայ յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին, ի ՌՃԽ թուին տաճկաց. զոր յիշեցաք ի վերդ ԼԱ համարաւն. և զայս գիտ ցուցակաւն և ԼԷ համարովն։ Յիշեցաւ և այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԼԸ. Սուլթան Ահմէտին փարման, որ գրէ վասն Վանեցի Յարութիւն և Այվազ կոչեցելոյն ի վերայ Երեւանու և Նախիջեւանու դատաւորացն, զի սաստեսցեն նմա վասն շառաթութեան։ Քանզի զկնի մահուան Կարապետ Կաթուղիկոսին զսուտ թեմեսուկ մի է հանեալ յանուն Կարապետ Կաթուղիկոսին, և նորին Աթոռակալ Աղէքսանդր վարդապետին թէ ինձ վեց քիսայ դրամ են տալոց ի ՌՃԽԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԼԸ համարով։ Վասն սորա Իպրահիմ փաշայէն՝ ի նորին քեահեայէն ես գոն գրեանք, և երկու հուճէթք ես ի Շխ-իսլամէ գրեցեալք իբր սուտ ցուցանելով զնա։ Զորս գտցես ի յիւրաքանչիւր տեղւոջն։



ԼԹ. Սուլթան Մահմուտին փարման, զոր գրէ ի վերայ փաշային, Ղազուն, և այլոց գործակալացն Երեւանու վասն մաղաֆութեան սրբոյ Աթոռոյս, ի ժամանակս Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսին, ի ՌՃԽԴ թուին տաճկաց։ Որ ամենեւին նոյն է ըստ փարմանի Սուլթան Ահմէտին, զոր տայ ի ՌՃԼԹ թուին տաճկաց, յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին, զոր յիշեցաք ի վերդ ի Լ թիւն։ Եւ զայս գիտ ցուցակաւն և ԼԹ համարով։ Յիշեցաւ և այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

Խ. Սուլթան Մահմուտի փարմանի սուրաթ վասն Ֆրանկացելոցն սաստիկ թամպէհ, զի մի շրջեսցին ի մէջ Հայոց ի Զմիւռին, յԱնկիւրիա և յայլ կողմանսն, ի ՌՃԽԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Խ համարով։

ԽԱ. Սուլթան Մահմուտին փարման՝ զոր տայ Կրետացի Աբրահամ վարդապետին, ի վարդապետութեան ի գալն յուխտ ի սուրբ Աթոռս, զի մի՛ ոք նեղացուսցէ ի ճանապարհին, ի ՌՃԽԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԱ համարով։

ԽԲ. Սուլթան Մահմուտին փարման պերաթ վասն Աբրահամ Կաթուղիկոսին Կրետացւոյ կաթուղիկոսութեանն, ի ՌՃԽԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԲ համարով։

ԽԳ. Սուլթան Մահմուտին պարաթ ֆէրման վասն Ղազար Կաթուղիկոսին Ճահկեցւոյ կաթուղիկոսութեանն, ի ՌՃԾԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԳ համարով։ Սուտ է։

ԽԴ. Սուլթան Մահմուտի փարման, վասն արեւելցի վաճառականացն՝ որք ի յերկիրն Օսմանցւոց, զի մի՛ պահանջեսցեն զհարկ ինչ ի նոցանէ, ի ՌՃԾԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԴ . . . սուտ է։

ԽԵ. Սուլթան Մահմուտին փարման, որպէս զհալալէ փարման, և թէ դաւին ի յՍտամպօլ տեսցի՝ վասն Աղէքսանդր վարդապետին Պօլսեցւոյ մինչ յԻզմիր Առաջնորդ է լեալ. ի ՌՃԾԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԵ համարով։

ԽԶ. Սուլթան Մահմուտին փարման պէրաթ վասն Մինաս Կաթուղիկոսին Ակնեցւոյ կաթուղիկոսութեանն, ի ՌՃԿԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԶ համարով։

ԽԷ. Սուլթան Օսմանին պէրաթ փարման՝ վասն Պօլսեցի Աղէքսանդր Կաթուղիկոսի կաթուղիկոսութեան, ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ տես ցուցակաւն և ԽԷ համարով։

ԽԸ. Սուլթան Օսմանին հալալէ փարման. (վասն) վերոյ Աղէքսանդրի Կաթուղիկոսութեան, ի ՌՃԿԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԽԸ համարով։

ԽԹ. Սուլթան Օսմանին փարման վասն Աղէքսանդր Կաթուղիկոսին՝ թէ ի կողմն Օսմանցւոց հանդիպիցի և նստիցի, մի՛ ոք խօսեսցի. ի ՌՃԿԹ թուին տաճկաց. գիր ցուցակաւն և ԽԹ համարով։

Ծ. Սուլթան Մուստաֆային փարման վասն Իզմիրցի Մնացականի որդի Մարգարին՝ որ ի զուր դաւի առնէ ընդ Աթոռոյս վասն տասն և եօթն քեսայի, զոր առեալ է Ղազար Կաթուղիկոսին, և փոխեցալ ի Նուիրակացն առեալ, և թամասուկն Ղազար Կաթուղիկոսին ի յինքն պահեալ՝ զոր մեք առաք և պատառեցաք։ Փարմանս վասն այնորիկ է՝ զի եթէ միւսանգամ դաւ արասցէ՝ աքսորեսցի. ի ՌՃՀԳ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և Ծ համարով։ Սուտ է։ Սակայն ի ՌՄԺԷ թուոջս մերում, Սիմէօն Կաթուղիկոսն ի շատ թախանձանացն նոյնոյ Մարգարին, և յաղաչանաց միջնորդ եղեալ Իզմիրու իշխանացն, հարկեցեալ վասն ինչ եւս նոյնոյ Մարգարին, և ի բերանոյն գիր էառ գիտութեամբ և վկայութեամբ նոյն իշխանացն Իզմիրու, ձեռամբ Իզմիրու Առաջնորդ և Նուիրակ Ղուկաս վարդապետին՝ որ այլ մի՛ եւս յիշեսցէ զայս վէճս։ Որ ահա գոյ առ մեզ յԱթոռս այն գիրն։ Զի կարի յուսահատեալ էր Մարգարն այն ի չքաւորութենէ։

ԾԱ. Սուլթան Մուստաֆային պէրաթ փարման, վասն Յակոբ Կաթուղիկոսին Շամախեցւոյ, ի ՌՃՀԳ թուին տաճկաց։ Առաջին է յորում Իզմիր ոչ գոյ։ Գիր ցուցակաւն և ԾԱ համարով։

ԾԲ. Սուլթան Մուստաֆային հալալէ փարման, վասն Շամախեցի Յակոբ Կաթուղիկոսին, ի ՌՃՀԳ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԲ համարով։

ԾԳ Սուլթան Մուստաֆային կրկին պէրաթ փարման, վասն Յակոբ Կաթուղիկոսին Շամախեցւոյ, յորում Իզմիր իւրովք վիճակօքն յանուանէ գրի։ (Որպէս յիշեցաք ի վերդ ի յառաջաբանութեան սոյն գլխոյս) ի ՌՃՀԵ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԳ համարով։

ԾԴ. Սուլթան Մուստաֆային փարման, վասն Շամախեցի Յակոբ Կաթուղիկոսին, թէ ի Պայազիտ, ի Ղարս, ի յԷրզրում, և յայլ կողմանսն պատահեալ նստիցի, ոչ ոք խօսիցի. ի ՌՃՀԵ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԴ համարով։

ԾԵ. Սուլթան Մուստաֆային պէրաթ փէրման, վասն Երևանցի Սիմէօն Կաթուղիկոսի կաթուղիկոսութեան, յորում Իզմիր եւս գրի յանուանէ. ի ՌՃՀԷ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԵ համարով։

ԾԶ. Սուլթան Մուստաֆային հալալէ փարման, վասն Երևանցի Սիմէօն Կաթուղիկոսին, ի ՌՃՀԷ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԶ համարով։



ԾԷ. Սուլթան Մուստաֆային փարման, վասն Սիմէօն Կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի եթէ դաւաճան ինչ եղիցէ իւրն, կամ իւր մարդկանցն, դատն ի յՍտամպօլ տեսցի, և ոչ յայլ ուրէք. ի ՌՃՀԷ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԷ համարով։

ԾԸ. Սուլթան Մուստաֆային փարման, վասն Սիմէօն Կաթուղիկոսին Երևանեցւոյ, զի եթէ պատահիցի ի յԷրզրում, ի Պայազիտ, ի Ղարս, և յայլ կողմունսն Օսմանցւոց նստել, մի՛ ոք լիցի խօսող. ի ՌՃՀԷ թուին տաճկաց։ Գիր ցուցակաւն և ԾԸ համարով։

ԾԹ. Սուլթան Մուստաֆային փարման վասն Ախլցխայու յատկապէս՝ ըստ խնդրոյ Սիմէօն Կաթուղիկոսին Երևանեցւոյ։ Զի ի ժամանակս Շամախեցի Յակոբ Կաթուղիկոսին, Եւդոկիացի ոմն Գէորգ անուն չէք սեւագլուխ մի գայ լինի Եպիսկոպոս ըստ խնդրոյ Կարնեցւոց և Կարնոյ Կարմիր վանից Առաջնորդ Մշեցի Յակոբ վարդապետին ի միաբանութիւն նոյնոյ վանիցն։ Եւ յետոյ գնայ յԵւդոկիա ի պատճառս ժողովարարութեան, և անդ յայտնէ զպէսպէս Լօթերական աղանդս։ Եւ ապա գնացեալ ի Պօլիս առնու ի Յակոբ Պատրիարգէն զԱռաջնորդութիւն Արծաթահանու փարմանաւ (որ Տէրունի էր և ի սրբոյ Աթոռոյս կարգիւր Առաջնորդն նորին). իբրև գիտացեալ Յակոբ Կաթուղիկոսին բանադրէ զնա, և նա գնացեալ ի Պօլիս անկանի յիշխանս յոմանս անպարտս ցուցանելով զինքն, միջնորդս արկանէ առ Կաթուղիկոսն ի յարձակել զինքն. և Յակոբ Կաթուղիկոսն ոչ արձակէ զնա ասելով թէ՝ եկեսցէ ի սուրբ Աթոռս. Ապա յայսմ միջոցի վախճանի Յակոբ Կաթուղիկոսն, և նստի Սիմէօն Կաթուղիկոսն Երևանցի։ Եւ նոյն բանադրեցեալ Գէորգն առ սա յարուցանէ զնոյն իշխանսն ի միջնորդութիւն ի յարձակել զինքն ի կապից։ Եւ Սիմէօն Կաթուղիկոսն եւս զնոյն պատասխանէ թէ՝ եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Վերջապէս առեալ զգիրս աղաչանաց ի բազմաց գայ ի յոտս Սիմէօն Կաթուղիկոսին՝ ծունր դնէ և գիր տայ ի բերանոյն՝ ոչ եւս ցուցանել զնշան ախմարմայութեան, և ոչ նստել ի Կարմիր վանքն մինչև ի մահն։ Եւ արձակեցեալ գնայ։ Եւ յետ փոքր միջոցի, գնայ ի յԱխլցխայ ի գործ նոյնոյ Կարմիր վանքին, (որովհետև նոյնոյ վանիցն է վիճակ Ախլցխայ) հրամանաւ նորին Առաջնորդ վերոյիշեցեալ Յակոբ վարդապետին։ Եւ ի յԱխլցխայ յայտնապէս քարոզէ զԼօթերականութիւն, գաս քարշելով զՀայս և զԵկեղեցիս և զԱթոռս Հայոց։ Որոյ բողոքն հասանէ ի չորից կողմանց առ Սիմէօն Կաթուղիկոսն։ Ապա և սոյն Կաթուղիկոս վերստին նոր ի նորոյ չարաչար բանիւ առնէ զչէք Գէորգն և զհամախոհսն նորին, ընդ նմին և զԿարմիր վանից Առաջնորդ զՅակոբ վարդապետն, վասն պատճառ լինելոյ Եպիսկոպոսութեան նորին և առաքելոյն ի

յԱխլցխայ, այլ և գրէ ի Պօլիս առ Պատրիարգն և յիշխանսն, և բերէ զֆէրման մի, յորում գրի թէ՝ Գէորգ, Պօղոս, Ստեփաննոս և Յովհաննէս սեպըուհք և քահանայքն վարիցին ի յէջմիածին, Պատրիքն հալածի- ցին ի յերկրէն իւրեանց, զի ես խնդրեցեալն պատժեսցեն տուգանօք, և ի բերանոցն զգլր առնուցուն ի շարուածն, մի՛ ևս հնաւէր աղանդոյ նոցին։ Եւ երեք եկեղեցիքն որք դոն յԱխլցխայ, Հայոց քահանայից յանձնեսցին, որպէս ցուցանէ քեզ յերեսն գրեցեալ ցուցակն և ԾԹ համարն. . Հաստատեալ ես գոյ սոյնոյ փարմանիս, որպէս ցուցանեն ցուցակքն։ Լինի այս՝ ի թուին տաճկաց ՌՃՀԸ և ի մեր ՌՄԺԳ թուոջն։

Կ. Սուլթան Մուստաֆային փարման վասն Ղօշայ վանից և Կարսայ բոլոր երկրին Առաջնորդութեան յանուն Սիմէօն Կաթուղիկոսին Երևանեցւոյ։ Զի ի ժամանակս սորին Կարսայ Առաջնորդն (որ փարմանաւ Նոտիւր հրամանաւ Պատրիարգին Պօլսոյ, որպէս և յայլ վիճակսն Օսմանցւոց երկրին նստին,) խոյս երևեցաւ Աթոռոյս և սորին Նուիրակացն։ Վասն որոյ և Սիմէօն Կաթուղիկոսն հարկեաց Պօլսոյ Պատրիարգ Գրիգոր վարդապետին, զի զառաջնորդական փարմանն նոյնոյ վիճակին յանուն իւրեան հանեալ առաքեսցէ, և զԱռաջնորդն զայն յԱթոռս յղեսցէ. որ և արարն իսկ։ Եւ Սիմէօն Կաթուղիկոսն զայն առաջնորդն բերեալ յԱթոռս արար միաբան, և ի տեղի նորին առաքեաց ի Ղարս Առաջնորդ ի միաբանից սրբոյ Աթոռոյս։ Որով և զՂօշայ վանքն ևս նորոգեալ ի շինութիւն եբեր, որ քան ամաւ աւեր էր։ Այժմ Ղարսայ առաջնորդական փարմանն է յանուն Սիմէօն Կաթուղիկոսին, և է ի սուրբ Աթոռս։ Զոր գիտ ցուցակաւն և Կ համարով. Սորա սաւաթ մի ևս ունի, զոր զով ոք և կարգեալ առաջնորդ Ղարսայ յղեսցէ Վեհին, տանի ընդ ինքեան. ի ՌՃՀԹ թուին տաճկաց, և ի ՌՄԺԳ թուոջն մերում եղև այս գործ։ Որ և յայնմ հետէ եղև Ղարս իւրովք վիճակօքն Տէրունի թեմ սրբոյ Աթոռոյս։ Որոյ Առաջնորդն ի սրբոյ Աթոռոյս կարգի և ոչ ի Պօլսոյ Պատրիարգէն։ Յորմէ ոչ սակաւ օգտութիւն լինի սրբոյ Աթոռոյս, ի ցորենւոյ, ի գարւոյ, ի յանասնոց, ի յերկաթոյ, ի փայտէ և յայլոց այսպիսեաց։ Սորա օրպէսն և ի Գ գլուխն ի ճառս Սիմէօն Կաթուղիկոսին ասացաւ լիովին։ Զոր անդ տեսցես։

ԿԱ. Սուլթան Մուստաֆային փարման վասն վրէժխնդրութեան Աղ- թարմայից, Էրզրումայ, Ղարսայ, Ախալցխայու, բոլոր Քրիստոնէից երկրին, և այլոց շրջակայից, ըստ խնդրոյ Սիմէօն Կաթուղիկոսին Երևանեցւոյ ի ՌՃՀԹ տաճկաց թուին։ Սորա . . հաստ սաւատ ևս գոյ, զորս գտցես ցուցակօքն և ԿԱ համարով։



ԿԲ. Սուլթան Մուստաֆային փարման կրկին վասն Ախլցխայու ըստ վերոյ գրեցելոյդ, ի ՌՃՁԱ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն և ԿԲ համարովն։

Գ.Լ. ԺԳ.

Ցուցակ ցուցանէն հարկաւոր հրամանք Օսմանեանց փաշայից, Շէյխ-իսլամից և այլոց իշխողաց, զորս տուեալ են սրբոյ Աթոռոյս:

Յառաջ քան զՌՃՀԳ թիւն մեր, և ՌՃԼԷ թիւն տաճկաց, (յորում առին Օսմանցիքն զերկիրս մեր ի Պարսից), ոչ ունիմք զթուղթ ինչ յայսպիսեաց։ Վասն որոյ և յայնմ հետէ զոր ինչ ունիմք, զորս տեսեալ վերահասու եղաք՝ գրեսցուք։

Ա. Ռաջափ փաշայի տուեալ գրքաձև գիր, յորում գրէ զամենայն տունս գեղջս մերոյ և զմուլքսն յանուանէ։ Եւ ապա գրէ յատուկ յատուկ զմուլքսն սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնելով ըստ խնդրոյ Աստուածատուր Կաթուղիկոսին։ Յորում գրին սրբոյ Աթոռոյս տասն ջրաղացք, երկու գինկ, տասն այգի, քսան և ինն արտ, երեք ծօնջալը, վեց հարիւր ոչխար։ Նմանապէս և զերիս վանսն մեր, և զԵրևանու զերկուս անապատսն մաղաֆ. միայն թէ Կաթուղիկոսն ի յարքունիս տացէ ի տարին վեց հազար ԲԾ ստակ. ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Ա համարով։ Ցիշեցաւ ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեանն։

Բ. Ռաջափ փաշային գիր, զի արզ առնէ Աստուածատուր Կաթուղիկոսն թէ, Աթոռս ի բնէ զերկուս զուլթանս, զքսան և ինն վարելահողս և զերիս ծօնջալըս, և զայլս մուլքս ունեցեալ է, այժմ գեօղականք և այլք ոմանք ոչ թողուն մեզ վայելել։ Փաշայն գրէ ի վերայ Սօռբաշուն 1) գեօղին զի սաստեսցէ հակառակողացն, ասելով թէ՝ ի յարքունի դէվթէրն գրեցեալք են. ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Բ համարով։ Ցիշեցաւ ի ԺԴ գլուխն մաղաֆութեան։

Գ. Ռաջափ փաշային գիր, որ զամենայն վանօրայսն երկրիս մերոյ մաղաֆ առնելով գրէ թէ՝ միայն ի տարին գՃԾ զուռուշս տան՝ որպէս կանոն է, և այլ ոչ ինչ բնաւ. ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Գ համարով։

Դ. Սոյնամիտ գիր մի ևս տայ սոյն փաշայս ի սոյն թուոջս վասն վանօրէից յամենայնէ մաղաֆ առնելով։ Զորս գտցես ցուցակօքն և Գ և Դ համարօք։ Ցիշեցան և սոքա ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեանն։

---

(1) Ջրապետ կամ ջրբաժան։

Ե. Ռաջափ փաշային գիր, ի լուսանցն եւ շարի վճիռ, որք գրեն ըստ արզայի վանօրէից թէ՝ որովհետեւ ձեր խարճն ի վերայ Էջմիածնի է լեալ ի բնէ, և նոյնպէս լիցի ի ձէնջ մի՛ ոք զեր ինչ պահանջեսցէ. ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ե համարով։

Զ. Ռաջափ փաշայն (յորժամ սրբոյ Աթոռոյս մաղափութեան փարմանն գայ ի Սուլթան Ահմետէն ըստ արզայի Աստուածատուր Կաթուղիկոսին, որպէս ասացաւ ի ԻԲ գլուխն ի ճառս թագաւորացն գրեանց, ի ՌՃԼԸ թուին տաճկաց,) գիր տայ թէ՝ որ ինչ մաղափ է արարեալ թագաւորն, ի նոցանէ ոք զեր ինչ մի՛ պահանջեսցէ. ի ՌՃԼԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Զ համարով։

Է. Ռաջափ փաշային գիր, որ ըստ խնդրոյ Կարապետ Կաթուղիկոսին գրէ զմաղափութիւն սրբոյ Աթոռոյս, երկու գութան, հազար հինգ հարիւր սոմար սերմն, հինգ հարիւր ոչխար, և զի մլքատու գեօղօրայքն մեր տայցեն մեզ զմուլքս ըստ բնական կարգին. ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Է համարով։ Ցիշեցան և սոքա ի ԺԴ գլուխն ի ճառս մաղափութեան։

Ը. Շէխ-իսլամի գիր թէ՝ որպէս ի բնէ Էջմիածին, Ցօշական, Մաստարայ, և այլք գեօղք, տուեալ են Աթոռոյն զտասանորդս, նոյնպէս և տայցեն. ի ՌՃԼԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ը համարով։

Թ. Շէխ-իսլամի գիր թէ՝ որպէս տուեալ են ի բնէ մլքատու գեօղքն Աթոռոյս զմուլքս, նոյնպէս և տայցեն։ Նոյնպէս և ցանքն, այգիքն և ջրաղացքն, և այլք մուլքն և միաբանքն Աթոռոյս՝ որպէս մաղափ են լեալք, նոյնպէս և մաղափ լիցին. ի ՌՃԼ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Թ համարով։ Ցիշեցան ի ԺԴ գլուխն ի ճառս մաղափութեան։

Ժ. Ռաջափ փաշային, որ գրէ թէ՝ կէս Քարսաղ գետոյդ որպէս ի բնէ Աթոռոյն է լեալ՝ և կէսն գեօղօրէից, նոյնպէս և լիցի, ի ՌՃԼԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Թ համարով։ Ցիշեցաւ ի ԺԴ գլուխն ի ճառս ջրոյն։

ԺԱ. Ահմէտ փաշային գրքաձեւ թուղթ, որ նման Ռաջափ փաշային գրքաձեւ թղթոյն, (որ ի վերդ յիշեցաւ ի Ա համարն) գրէ զորպէսն գեղջս մերոյ, և զամենայն մուլքսն սրբոյ Աթոռոյս մաղափ առնելով. ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԱ համարով։ Ցիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղափութեան։

ԺԲ. Մուստաֆայ փաշային գիր, զոր գրէ թէ՝ զոր ինչ մաղափ է արարեալ թագաւորն փարմանով, մաղափ լիցի. ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԲ համարով։



ԺԳ. Ղազու հուճէթ։ Զի Զալըղ կոչեցեալ Մուստաֆայ տաճիկ ոմն եկեալ դաւի առնէ ընդ Կարապետ Կաթուղիկոսին թէ՝ ես Աստուածատուր Կաթուղիկոսին ԲՌ ղուշի ապրանք ետու, նորա զրամն տուք ինձ։ Աթոռակալ Սիմէօն վարդապետն ընդ նմա գնան ի շարն, և տան նմա զվեց հարիւր ղուշս. և զայս հուճէթս առնուն ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԳ համարով։

ԺԴ. Մուստաֆայ փաշային գիր, որ յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին գրէ թէ՝ Աթոռս զոր ինչ մուլքս ունի և ունեցեալ է՝ զորս վայելեալ են այլք Կաթուղիկոսքն, նոյնպէս և սա վայելեսցէ՝ որպէս փարման թագաւորին է. ի ՌՃԽԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԴ համարով։

ԺԵ. Իպրահիմ փաշայի գիր, զոր գրէ թէ՝ որպէս Ռաջափ փաշայն տուեալ է այսպէս գիր, նոյնպէս և ես տուեալ հրամայեցի, զի կէս գետոյդ Ցօշականայ Էջմիածնի լիցի՝ կէսն միւս գեօղօրէիցն, ի ՌՃԽԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԵ համարով։

ԺԶ. Իպրահիմ փաշային գիր ի վերայ Երեւանու Ղազուն վասն Վանեցի շառաթ Ցարութիւնին թէ՝ մեք վերահասու եղաք որ դաւին զորա փուչ էր, դու եւս փուչ արա և ի բաց վանեա, ի ՌՃԽԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԶ համարով. սորա փարման եւս գոյ։

ԺԷ. Ղազու հուճէթ վասն շառաթ Ցարութիւնին Վանեցւոյ, որ ասէր թէ իմ հայր Միրզայն ի Պօլիս վեց քիսայ դրամ տուեալ է Կարապետ Կաթուղիկոսին և նորին Աթոռակալ Աղէքսանդր վարդապետին, ես կուխընդրեմ զայն դրամն։ Եւ Ղազին հետեւեալ գտանէ զնա սուտ. վասն որոյ և զայս հուճէթս տայ Աթոռոյս՝ ի բաց վանելով զնա. ի ՌՃԽԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԷ համարով։

ԺԸ. Իպրահիմ փաշայի քեահեան գրէ ի վերայ Ղազուն վասն նորին Ցարութիւնին (որ Այվազ եւս գրի), թէ առաջագոյն գիտես որ սուտ է զորա դաւին, այժմ փարման եւս բերին Էջմիածնեցիք ի թագաւորէն վասն զորա շառաթութեան։ Վասն որոյ եթէ եւս եկեսցէ առ քեզ, ի բաց վանեա զնա. ի ՌՃԽԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԸ համարով։

ԺԹ. Երեւանու Ղազու կրկին հուճէթ վասն շառաթութեան Վանեցի Ցարութիւնին յետ փարման գալոյն։ Որ գրէ թէ լաւ վերահասու եղէ ստութեան, և զայս հուճէթս ետու Աղէքսանդր վարդապետին, ի ՌՃԽԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և ԺԹ համարով։

Ի. Մուստաֆայ փաշային գիր զոր գրէ սրբոյ Աթոռոյս մաղափութիւն, Բ. գութան, ՌԵՃ սոմար սերմն, ԵՃ ոչխար, ձիթահանք, ջինկ, այգիք, ջրաղացք, սեաղլուխք և միաբանք։ Այլ և մեր գեօղս, Ցօշական, և Մասջրաղացք, սեաղլուխք և միաբանք։ Այլ և մեր գեօղս, Ցօշական, և Մաստարայ զմուլքս տայցեն որպէս կանոն է. միայն ի տարին տայցէ յաքքուտարայ զմուլքս տայցեն որպէս կանոն է. միայն ի տարին տայցէ յաքքու-

նիս ԳՃԾԵ ղուռուշ. ի ՌՃԽԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Ի համարով։

ԻԱ. Իպրահիմ փաշային գիր, զի յորժամ յաւուրս Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսին կամեցեալ են ի ՍԵ ջրոյն զջուր բերել ի գեօղս մեր, միջոցի գեօղօրայքն դաւաչի են եղեալ. վասն որոյ և փաշայն հրամայէ թէ՝ որքան ջուր գայցէ, կէսն Էջմիածնի լիցի և կէսն միջոցի գեօղօրէիցն, ի ՌՃԽԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԻԱ համարով։

ԻԲ. Մուստաֆայ փաշային գիր, զոր գրէ ի վերայ դիւանագրաց Երևանու թէ՝ որովհետև թագաւորին արզ արարեալ խալիֆայն զփարման եբեր վասն մաղաֆութեան Էջմիածնի մլքիցն, դուք մի՛ ինչ պահանջէք ի նոցանէ. ի ՌՃԽԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԻԲ համարով։ Ցիշեցան սոքա ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԻԳ. Ղխ-խոլամի թուղթ, որ ըստ վերնոյ փաշային գրէ վասն ՍԵ ջրոյդ (զոր կամեցեալ էն բերել Աթոռոյինքս) թէ՝ կէս Էջմիածնի լիցի և կէսն գեօղօրէիցն միջոցին։ Գիտ ցուցակաւն և ԻԳ համարով։ Ցիշեցան սոքա եւ կրկեանս ի ԺԸ գլուխն ի ճառս ջրոցն։

ԻԴ. Հիւսէյին փաշային գիր, զոր գրէ ռահդարին թէ՝ ի յէջմիածին եկող ուխտաւորացն և այլոց եկողաց և գնացողաց զեր ինչ մի՛ պահանջեսցէ, որովհետև մաղաֆ են, և սովորութիւն ևս չէ. ի ՌՃԽԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւ և ԻԴ համարով։

ԻԵ. Հիւսէյին փաշային գիր, զոր գրէ թէ՝ Էջմիածնի երկու գաւթանն, հազար հինգ հարիւր սոմար սերմն, այգիքն, ջրաղացքն, ձիթահանքն և զինկն մաղափք են և մաղաֆ լիցին։ Եւ միաբանքն զխարճ մի՛ տայցեն։ Էջմիածին, Ցօշական և Մաստարայ տայցեն զմուլքս իւրեանց՝ որպէս օրէն է. ի ՌՃԽԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԻԵ համարով։ Ցիշեցաւ այս ի ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեան։

ԻԶ. Ալի փաշային գիր, զոր գրէ թէ՝ որպէս Ռաջափ և Իպրահիմ փաշայքն տուեալ են զգիր, նոյնպէս և ես տուեալ հրամայեմ, զի Ցօշականու գետոյն կէսն Էջմիածնի լիցի, և կէսն միւս գեօղօրէիցն. ի ՌՃԽԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և ԻԶ համարով։ Ցիշեցաւ ԺԳ գլուխն ի ճառս մաղաֆութեանն։



ԳԼ. ԻԴ.

Յորում ցուցանին չարճառութ բանիւ և ըստ նոսայն միայն են՝ որքան ղապալայք և վախուղնամայք գոն ի սուրբ Աթոռոյս, եւ հայերէն կրով և եւ գոմէշխան։

Զի որովհետև ամենայն իրաց (այսինքն այգեաց, ջրաղացաց, զինկից, ջրոց, տանց, մլքատու գեօղօրէից, և այլոց այսպիսեաց, զորս ստացեալ է սուրբ Աթոռս, թէ գրամատուութեամբ առեցեալք և թէ փախմատուութեամբ տերանցն տրեցեալք) ղապալայքն և վախղնամայքն գրեցան իւրաքանչիւրն ի տեղւոջն իւրեանց հանդերձ պարագայիւքն իւրեանց, վասն որոյ աստանօր ոչ ևս վերակրկնեմ, այլ միայն զորքանութիւնն գրեմ ցուցանելով թէ՝ այս ինչ իրք և կամ այս ինչ գեղջ յաղագաւ այսքան ղապալայք և վախուղնամայք և կամ այսքան գրեանք գոն յԱթոռոջս։ Զի զայս գլուխս առձեռն ունելով, դիւրաւ և փութով գտցես և գիտասցես թէ՝ այս ինչ գեղջ վեց դանկ մլքին յաղագաւ, և կամ այս ինչ այգւոյ և այս ինչ ջրաղացի, և այլոց այսպիսեաց յաղագաւ այսքան ղապալայք և գրեանք գոն։ Որպէս տեսանես ի յըստորեւդ։

Ղապալայք Էջմիածնի գեղջս։

Էջմիածնի գեղջս վեց դանկ մլքին ղապալայքն։

Ա. Մեր Էջմիածնի գեղջս վեց դանկ մլքին յաղագաւ մեծ կոնդակաձև բուն ղապալայ և վախուղնամայ, զոր առեալ է Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսն ի յուլթ հարիւր երեսուն և երկու թուին տաճկաց։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և Ա համարով։

Բ. Դարձեալ մեծ և կոնդակաձև ղապալայ մի ևս վասն Էջմիածնի գեղջս, Աշտարակու, Բաթրինջու, Նորագաւթայ, Ագունատան, Քիրաշլուի, և Մողնու գեօղօրէից վեց դանկ մլքին, զոր առեալ է նոյն Գրիգոր Կաթուղիկոսն Մակուեցի ի յուլթ հարիւր երեսուն և հինգ թուոյն տաճկաց։ Զոր գտցես յերեսն գրեցեալ ցուցակաւն և Բ համարով։ Սորա սուտ մի ևս գոյ, զոր ևս գիտ ցուցակաւն և Բ համարով։

Է. Դարձեալ հին ղապալայք հինգ հատ, զորս առեալ է Ջուղայեցի Ցակովբ Կաթուղիկոսն ի յոմանց դաւաճանից վասն մլքի գեղջս այսորիկ. Մին ի ՉԿԳ, մին ի ՌԻԱ, մին ի ՌԻԴ, ի ՌԻԷ, ի մին ՌԼ թիւսն տաճկաց գրեցեալք. զոր գտցես ցուցակօքն, և Գ համարէն մինչև ի Է համարն։

Ժ. Դարձեալ երեք հատ Ղխ-խոլամի տուեալ հուճէթք ի բերանոց դատախազից, զորս առեալ է նոյն Ցակովբ Կաթուղիկոսն ի ՌՀԱ, ի

ՌՀԴ, և ի ՌՀԷ թուին տաճկաց գրեցեալք։ Զորս գտցես ցուցակօքն և Ը համարէն մինչև ի Ժ համարն։ Որք եղեն տասն հատ գրեանք և ղապալայք վասն միքատուութեան գեղջս մերոյ Էջմիածնի։

Գոն ևս ռաղամք և ֆարմանք թագաւորաց և գրեանք խանից և փաշայից և գիւանագրաց տրեցեալք վասն վեց դանկ միքին սոյն գեղջս, զորս լռովին ի յիւրաքանչիւր տեղւոջն, և մանաւանդ ի ԺԴ գլուխն ի ճառս միքատուութեանն սոյն գեղջս տեսցես հանդերձ ամենայն պարագայիւքն իւրեանց։

Ի յէջմիածնի գեօղս այգեաց ղապալայք։

Դաւի այգւոյն մերոյ ղապալայք։

Երկու ղապալայք յանուն Ռուստամի որդի խօճայ Յովհաննիսին գրեցեալք, ի ՌՂԲ և ի ՌՂԷ թուին տաճկաց, և զորս գտցես ցուցակօքն։

Ղապալայ մի ևս Հայերէն, վասն միոյ ջրաղացի և միոյ այգւոյ Նորք անուանեցելոյ, զորս առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի յԻւզբաշի Մելքոնի յորդւոցն, ի ՌՃԿԲ թուոջն մերում գրեցեալ։

Ղապալայ մի ևս Հայերէն, զոր գտակակար Աւետիքի որդիքն տան Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ի ՌՃԿԱ թուոջն մերում։

Ղապալայք երեք ևս վասն Տէր Նահապետի այգւոյն, զորս առնու Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի, մին Հայերէն ի ՌՃՂ թուոջն մերում գրեցեալ, և երկուքն տաճկերէն ի ՌՃԾԴ թուին տաճկաց։ Զորս գտցես յերեսն գրեցեալ ցուցակօքն։ Որք եղեն եօթն ղապալայք վասն Դաւի այգւոյն մերոյ, զորոց զօրպէսն տեսցես ի ԺԶ գլուխն ի ճառս Դաւի այգւոյն լռովին։

Մանկասարենց այգւոյն մերոյ ղապալայք։

Վախուպլամայ մի, Հայերէն, վասն չորս տախտակ այգւոյ, զոր տայ Եղիազար Կաթուղիկոսին Մանկասարի որդի Մէհրումն, ի ՌՃԼ թուոջն մերում գրեցեալ։

Ղապալայ մի ևս վասն միոյ և կիսոյ տախտակ այգւոյ տայ Մանկասարենց Միրիճանի որդի Յարութիւնն Նահապետ Կաթուղիկոսին ի ՌՃԴ թուոջն տաճկաց։ Զոր գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի ևս վեց տախտակի այգւոյ՝ զոր առեալ է Նահապետ Կաթուղիկոսն ի Շահրիմանլու-Բայատ-Եօնջալու կոչեցելոյն ի ՌՃԴ թուին տաճկաց։ Գտցես ցուցակաւն։

Դարձեալ ի սոյն թուոջս մէկ ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ Հնձաւորի, զոր առնու Աթոռակալ Մինաս վարդապետն ի վերոյիշեցեալ Մի-



րիճանի որդի Սահակէն և յայլոց ի յանուն սրբոյ Աթոռոյս։ Զոր գտցես ցուցակաւն. որք եղեն չորս հատ ղապալայք վասն մեր Մանկասարենց այգւոյն։ Զորոց զօրպէսն լռովին տես ի ԺԶ գլուխն ի ճառս սորին այգւոյս։

Մեր վերին այգւոյն ղապալայք։

Ղապալայ մի մեծ, զոր առեալ է Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի տաճկաց, ի ՌՃԻԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի ևս Հայերէն, զոր առնու Աթոռս ձեռամբ վէքիլ Ալէքսանին, ի ՌՃՀԸ թուոջն մերում ի Տէր Մկրտչի որդի Սահակէն։

Եւ ղապալայ մի ևս տաճկերէն նոյնպէս ի ՌՃԽԱ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակօքն։

Դարձեալ երկու ղապալայք ևս՝ մին Հայերէն ի ՌՄԺԵ թուոջն մերում գրեցեալ, և միւսն տաճկերէն ի ՌՃՀԹ թուին տաճկաց, վասն Ղևոնդեանց այգւոյն, որ է կից սոյն վերի այգւոյս. զոր մեք առաք. զորս գտցես ցուցակօքն։

Դարձեալ գիր մի ևս ի խանէն մերմէ Հիւսէյին-ալի կոչեցելոյ, զոր մեք առաք վասն ումեմն տաճիկ պառաւի միոյ դաւաճանի. ի ՌՃՀԸ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն։ Որք եղեն վեց թուղթք վասն վերոյ այգւոյն մերոյ. զորոց զօրպէսն ի ԺԶ գլուխն ի ճառս Վերի այգւոյն տեսցես լռովին։

Խանբարի կոչեցելոյ այգւոյն մերոյ ղապալայք։

Ղապալայ մի վասն սոյն այգւոյս բոլորին՝ զոր Սիմէօն Կաթուղիկոսն Երևանցի առնու ի Սայիդ կոչեցելոյ տաճկէ միոյ. ի ՌՃՁ թուին տաճկաց։ Գիտ երեսն գրեցեալ ցուցակաւն։ Ընդ սմին և գիր մի ի բերանոյ նոյն տաճկին թէ՝ զին այգւոյս անպակաս ինձ էհաս. կցեալ ընդ ղապալային։

Եւ ղապալայ մի ևս զոր Մատթէոսն էր առեալ ի Խանբարէն ի ՌՃՀԱ թուին տաճկաց։ Եւ հուճէթի սուրէթ մի ևս վասն սոյն այգւոյս. որք եղեն չորս թուղթք վասն սոյն Խանբարի այգւոյս. զորոց զօրպէսն լռովին տես ի ԺԶ գլուխն ի ճառս սոյն այգւոյս։

Ղապալայք վասն աւեր այգետեղեաց մերոց ի գեօղս յայս։

Ղապալայք և վախուպնամայք, Հայերէն, և տաճկերէն, տասն և երկու հատ, վասն այգետեղեացն մերոց, որք են ի մէջ սրբոյն Հռիփսիմէի և Մանկասարենց այգւոյն մերոյ։ Զորոց զօրպէսն լռովին տես ի ԺԶ գլուխն ի ճառս այգեացն։

Ղապալայ մի ևս վասն միոյ այգետեղւոյ, զոր Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն առնու ի յայս գեօղս յԱնանի որդի Մկրտումէն, ի ՌՃԽԵ Թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցականն։

Ղապալայ մի ևս վասն միոյ պարտիզի, զոր առնու Աթոռոյս վէքիլ Սարգիսն ի մէլիք Յովհաննիսէն. ի ՌՃՀԹ Թուին տաճկաց. գիտ ցուցականն։ Զորոց ամենեցունց զօրպէսն լիովին տես ի ԺԶ գլուխն ի ճառս այգեաց մերոց՝ որք ի յայս մեր գեօղս։

Դարձեալ Հայերէն ղապալայ և շարթնամայ՝ զոր Կարիու Նաշխայի մեծք և փոքունք տան սրբոյ Աթոռոյս վասն Խանըլ կոչեցեալ այգւոյն, ի ՌՃԾԵ Թուոյն մերում։ Զորոյ զօրպէսն տես ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէից։

Ղապալայք վասն ջրաղացից, դնկից, եւ այլոց այսպիսեաց ի յէջմիածնի գեօղս:

Ղապալայ մի Հայերէն վասն Իւզբաշոնց ջրաղացին, ի ՌՃԿԲ Թուոյն մերում։

Ղապալայ մի ևս Հայերէն վասն Մեսրոպենց ջրաղացին, ի ՌՃԿԳ Թուոյն մերում։

Ղապալայ մի ևս Հայերէն վասն Կուզալի կէս ջրաղացին, ի ՌՃԿԴ Թուոյն մերում։

Ղապալայ մի ևս վասն մեր դնկին զոր Ղազար Կաթուղիկոսն առեալ է ի յայս գեօղացի Բուդաղէն ի ՌՃԿԳ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։ Զայս ամենայն լիովին տես ի ԺԷ գլուխն ի ճառս ջրաղացիցն։

Ղապալայք վասն Սեփիապատ եւ Խոյաբուն-արխ կոչեցեալ տեղւոյն, որ է ի վայր հարաւակողմն գեղջս մերոյ ի վերայ Մեծամօր գետոյն եւ է խոտհարք սրբոյ Աթոռոյս:

Ղապալայ մի վասն նոյն տեղւոյս՝ զոր առնու Աստուածատուր Կաթուղիկոսն Համատանցի ի յԱլիբէկլի գեօղականացն ի ՌՃԼԱ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։

Գիր մի ևս վասն այսորիկ, վասն վէքիլութեան ոմանց, զի ծախեսցեն զայս տեղիս. գիտ ցուցականն։

Շէխ-իսլամի գիր մի ևս վասն այսորիկ ի բերանոյ նոյն գեօղականացն։ Զոր ևս գիտ ցուցականն։

Ղապալայ մի ևս վասն այսորիկ, զոր Թրակացի Աբրահամ Կաթուղիկոսն առնու ի նոյն գեօղականացն ի ՌՃԽԸ Թուին տաճկաց։ Զոր ևս գիտ ցուցականն։ Սոցա օրպէսն լիովին տես ի ԺԵ գլուխն ի ճառս արտորէիցն։



Ղապալայք վասն ջրոց ի գեօղս յայս, զորս ունի սուրբ Աթոռս:

Ղապալայ մի վասն երից բաժնեաց մի բաժնի. ջրոյ Յուշականցւոյն, զորս ունին ի գլուխ դաշտիս մերոյ, զոր տուեալ են Աստուածատուր Կաթուղիկոսին ի ՌՃԼԴ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։

Ղապալայ մի վասն Դալմայ կոչեցեալ ջրոյն (որ ի Զանգի գետոյն ելեալ գայ ի գեօղս մեր), զոր առեալ է Նահապետ Կաթուղիկոսն ի Բուրճալիբէկ կոչեցեալ տաճկի ազգականացն ի ՌՃԾ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։ Այս երկուց և այլոց վասն ջրոց գրեանց օրպէսն տես լիովին ի ԺԲ գլուխն ի ճառս ջրոցն։

Ղապալայք տանց որք ի մեր էջմիածնի գեօղս:

Ղապալայ մի Հայերէն, զոր առեալ է Նահապետ Կաթուղիկոսն ի յայս գեօղացի Սահրատի որդի Խաչատուրէն, վասն միոյ ձեռք տանց, ի ՌՃԽԲ Թուոյն մերում. որ է մեր բաղնեաց տեղն։

Ղապալայ մի ևս վասն միոյ տան, զոր Նահապետ Կաթուղիկոսն առնու ի նոյն գեօղացի Մարտիրոսի որդւոցն, ի ՌՃԽԴ Թուոյն մերում. որ է ի մէջ Ղազարապատին։

Ղապալայ մի ևս տաճկերէն, զոր Աղէքսանդր Կաթուղիկոսն Ջուղայեցի առնու ի յայս գեօղացի Անտոնի յորդւոցն վասն հինգից տանց. ի ՌՃԻԵ Թուին տաճկաց։ Գիտ ցուցականն։ Որ էր օթարի կեցեալ տունն, զոր մեք փակեցաք ընդ այլոցն. զայսցանեաց օրպէսն տես լիովին ի ԺԹ գլուխն ի ճառս տանց։

Ղապալայք Յօշականայ գեղջն, որ է մուլք սրբոյ Աթոռոյս։

Ղապալայք վասն մլքին գեղջս այսորիկ։

Ա. Բ. Ղապալայք երկուք վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զորս առնու Փիլիպպոս Կաթուղիկոսն ի Ահալթլուեցի Սուլթան բէկ տաճկէն ի ՌՃ, և ի ՌՃԱ Թուն տաճկաց գրեցեալք։ Զորս գտցես ցուցակօքն և Ա և Բ համարով։ Որոց սուրէթ մի ևս գոյ սոցա նշանիւքն։ Ա համարով։

Գ. Դարձեալ ղապալայ մի վասն միոյ դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն Կաթուղիկոսն ի Բաբայ, ի Բանդալու և ի Բէկում տաճկացն. ի ՌՃԱ Թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցականն և Գ համարով։

Դ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու նոյն երանելին ի Հասան և ի Հիւսէյին տաճկաց ի ՌՃԱ Թուին տաճկաց։ Զոր գիտ ցուցականն և Դ համարով։

Ե. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ. զոր առնու նոյն երանելին ի Սուլթանբէկ և ի Մէվլամ-ղուլիբէկ տաճկացն ի

ՌՃԲ թուին տաճկաց։ Գիր ցուցական և Ն համարով։ Սորա սուրէթ մի ևս գոյ։

Զ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին ի Սէֆի-ղուլիբէկ և ի Մեժլումբէկ տաճկացն, ի ՌՃԳ թուին տաճկաց։ Գիր ցուցական և Զ համարով։

Է. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին ի Հաջղէյնալ տաճկէն ի ՌՃԴ թուին տաճկաց։ Գիր ցուցական և Է համարով։

Ը. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին, զոր առնու նոյն երանելին ի Մէջլումբէկ տաճկէն. ի ՌՃԵ թուին տաճկաց։ Գիր ցուցական և Ը համարով։

Թ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին ի Հիւսէյին բէկին ի ՌՃԵ թուին տաճկաց։ Սորա երկու սուրէթ ևս գոն։ Զորս գտցես ցուցակօքն և Թ համարով։

Ժ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին, զոր առնու Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի ի Խանաղան-ղուլի տաճկէն ի ՌԿԶ թուին տաճկաց։ Գիր ցուցական և Ժ համարով։

ԺԱ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին, զոր առնու նոյն երանելին ի Տարխան տաճկէն. ի ՌՀԷ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԱ համարով։

ԺԲ Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին ի Սէֆի-ղուլի տաճկէն ի ՌՉԳ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԲ համարով։

ԺԳ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու Ոնոփրիոս վարդապետն ի Սէֆի-ղուլի տաճկէն ի ՌՂԱ թուին տաճկաց։ Սորա աղագաւ հուճէթ մի ևս գոյ ի Շխ-իսլամէ տուեալ ի ՌՉԴ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԳ համարով զղապալայն և զհուճաթն ևս։

ԺԴ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին Յակոբ Կաթուղիկոսն ի Մուշուտ տաճկէն ի ՌՂԱ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԴ համարով։

ԺԵ. Դարձեալ ղապալայ մի վասն կէս դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առնու նոյն երանելին ի Հայ Գասպարէն ի ՌՂԲ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԵ համարով։

ԺԶ. Դարձեալ ղապալայ մի վասն վեց դանկ մ.քին Մանկանոց կոչեցեալ մահլային. զոր առնու նոյն երանելին ի յեասաղուլ Նաբիբէկ տաճկէն ի ՌՀԸ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԺԶ համարով. սորա



հին ղապալայն ևս գիր ցուցական և ԺԶ համարով։ Սորա Ա սուրաթ ևս գոյ, գիր նոյն ԺԶ համարովն։

ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. Դարձեալ չորս հատ ևս հուճէթք ի բերանոյ դատաւորաց առեալ ի ՌՉԷ, ի ՌՂ, ի ՌՂԴ և ի ՌՂԶ թուին տաճկաց գրեցեալ.ք։ Զորս գտցես ցուցակօքն և ի ԺԷ համարէն մինչև ի Ի համարն։

ԻԱ. Դարձեալ ղապալայ մի մեծ հին և կնդակաձև վասն վեց դանկ մ.քին գեղջս պսորին. զոր առեալ են ի հին տերանցն։ Յորում գրի գեօղս չորեք սահմանօքն, գրեցեալ ի յՌՃԴ թուին տաճկաց։ Գիր ցուցական և ԻԱ համարով։

Լ. Այլ և ընդ սմին առեալ են երանելիքն մեր զհին ղապալայս վասն մ.քին գեղջս պսորին ի հին տերանց, Թ. հատ։ Զորս գտցես ցուցակօքն և ԻԲ համարէն մինչև ի Լ համարն։

ԼԱ. ԼԲ. Դարձեալ սոյն Յօշականու գեօղականքս զերկուս ղապալայս ևս տան սրբոյ Աթոռոյս, մին Աստուածատուր Կաթուղիկոսին ի ՌՃԼԴ թուին տաճկաց, և միւսն Կարապետ Կաթուղիկոսին ի ՌՃԼԸ թուին տաճկաց, վասն կրկին մուլ.ք տալոյ սրբոյ Աթոռոյս։ Զոր գտցես ցուցակօքն և ԼԱ և ԼԲ համարօքն։ Սոյնանման և սոյնահամար թուղթ մի ևս գոյ, որք եղեն ընդ ամենն Խ հատ թուղթք վասն Յօշականու մ.քատուութեանն։ Որոց զօրպէսն լիովին պարագայիւքն իւրեանց տես ի ԺԳ գլուխն ի ճառս մ.քատուութեան սոյն գեղջս։

Ղապալայք վասն այգեաց սրբոյ Աթոռոյս որք ի Յօշական։

Ղապալայ մի վասն մասին մեծ այգւոյն՝ որ կոչի Ներքի-այգի, զոր առնու Մելքիսէթ Կաթուղիկոսն ի յԱլի-ղուլի տաճկէն, ի ՌԽ թուին տաճկաց։ Գիր ցուցական։

Աշխլամայ (1) մի վասն մասին սոյն այգւոյս, զոր առնու Փիլիպպոս Կաթուղիկոսն ի Մեհտի-վեկիլբէկ. ի ՌԾԶ թուին տաճկաց։ Գիր ցուցական։

Ղապալայ մի Հայերէն վասն մասին սոյն այգւոյս, զոր առնու Աբրահամ Կաթուղիկոսն Թրակացի ի Կարինեցի Անտօնի յորդւոցն ի ՌՃՉԴ թուին մերում։ Գիր ցուցական։

Դարձեալ ղապալայ մի վասն միւս Արեգունի այգւոյն մերոյ (որ կոչի Վերի-այգի) միոյ մասին, զոր առնու Աթոռս ի Բաբամի որդի Մուրատէն ի ՌՂԷ թուին տաճկաց։ Գիր ցուցական. որք եղեն չորս հատ թուղթք վասն երկուց այգեաց մերոց Յօշականու։ Որոց զօրպէսն լիովին տես ի . . . գլուխն ի ճառս այգեացն Յօշականու։

---

(1) Գուցէ Սուլճեանն, գիր իրաւախոհութեան։

Դարձեալ երկու վախսաւլամայք, մին Հայերէն ի ՌՃԽ թուոջն մերում գրեցեալ, և միւսն տաճկերէն ի ՌՃԲ թուոջն տաճկաց գրեցեալ՝ ի ժամանակս Եղիազար Կաթուղիկոսին։ Երկու ղապալայ ևս հին, զորս տայ սրբոյ Աթոռոյս Մուղնեցի Հայրապետի որդի գրագիր Ալէքսանն վասն միոյ այգւոյ, զորս գտցես ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի զոր առնու Աթոռակալ Մինաս վարդապետն վասն միոյ այգւոյ ի Թումանէն, ի Մուրատէն և յայլոց գեղականացն, ի ՌՃԲ թուին տաճկաց, զոր գտցես ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ զոր առնու նոյն Մինաս վարդապետն ձեռամբ Թումանին ի Մարխամէն ի ժամանակս Նահապետ Կաթուղիկոսին, ի ՌՃԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու Նահապետ Կաթուղիկոսն ի Մարուք վարդապետէն ի ՌՃԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի մեծ հին գրեցեալ ի ՌՃԽԶ թուոջն տաճկաց, և ղապալայ մի նոր ի ՌՃԼԱ թուին տաճկաց, վասն ինն այգւոյ և տասն և երկու ջրաղացից, զորս առնու Աստուածատուր Կաթուղիկոսն ի յԵրեւանցի խօճա Մովսէսէն։ Գիտ ցուցակօքն։

Դարձեալ ղապալայ մի վասն քսան այգւոյ և հինգ ջրաղացից, զորս առնու Աստուածատուր Կաթուղիկոսն ի Սհաթլուեցի Վաղիրէն, ի ՌՃԼԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակօքն։

Դարձեալ երկու Հայերէն ղապալայք վասն երկու տախտակ այգւոյ, և մէկ կարասոլի չերախանայի, զորս առնու Ղազար Կաթուղիկոսի սպասաւոր Նիկողայոս վարդապետն ի Յարութիւնէն, ի ՌՃՂԴ թուոջն մերում։ Զորս գիտ և տես։

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու սուրբ Հռիփսիմէի Առաջնորդ Անտոն վարդապետն ի Բասմենց տղայոցն, ի ՌՃԽԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ, զոր առնու սուրբ Շողակաթի Առաջնորդ Մարտիրոս վարդապետն ի Մաթէոսէն, ի ՌՃԽԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի վասն միոյ այգւոյ. զոր սուրբ Հռիփսիմէի և սուրբ Շողակաթի Առաջնորդ Անտոն և Մարտիրոս վարդապետքն առնուն ի Բասմենց ի ՌՃՁԵ թուոջն մերում։

Դարձեալ երկու Հայերէն ղապալայք, մին վասն միոյ այգւոյ, զոր սուրբ Գայիանէի Առաջնորդ Եղիազար վարդապետն առնու ի Քիւթուրէն



ի ՌՃՂԷ, և միւսն վասն երկու Շիրախանայի և տասն կարասի զորս առնու ի Ղևոնդենց Գրիգորէն, ի ՌՄ թուին մերոյ։

Դարձեալ չորս հատ ղապալայք Հայերէն և մին տաճկերէն վասն երեք հնձանի և երկու մարագի. զորս առնու սուրբ Աթոռս ի յայս գեղացւոցս ի ՌՃԾԸ, ի ՌՃԿԱ, ի ՌՃՀԱ, ի ՌՃՁԷ թուոջն մերում և ի ՌՃՀԸ թուին տաճկաց։ Զորս գիտ և տես։ Որք եղեն ընդ ամենն . . . ղապալայք այգեաց և հնձանաց Յօշականու։ Զորոց որպէսն լինելն ի ԺԶ գլուխն և ի ճառս սոյն գեղջս այգեացն տեսցես։

Ղապալայք Յօշականու ջրաղացից, ձիթահանքից։

Ղապալայ մի վասն վեց ջրաղացից, զորս առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի Բասմենց Առաքելի յորդւոցն, ի ՌՃՀԳ թուին տաճկաց. Գիտ ցուցակաւն։

Ղապալայ մի վասն միոյ ջրաղացի և միոյ այգւոյ, զորս առնու սուրբ Աթոռս վէքիլ Դաւթին ձեռօքն ի Տէր Հայրապետի դստեր Կիւրլուէն, ի ՌԺԳ թուին տաճկաց. գիտ ցուցակաւն։ Զորպէսն սոցա տես լինելն ի ԺԷ գլուխն ի ճառս սոյնոյ գեղիս ջրաղացից։

Ղապալայք վասն Յաւանկանոց գեղջ վեց դանկ մլքին։

Ա. Ղապալայ մի վասն սոյնոյ գեղջս վեց դանկ մլքին, զոր առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի յԱրալեցի Ալի-աղայի յորդւոցն ի ՌԿԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Ա համարով։ Ընդ սմին առնու և զհին ղապալայն սոյն գեղջս, զոր Աֆլուլայն տայ Իպրահիմ և Սուլէյման տաճկացն, որ գրի ի ՌԽԲ թուին տաճկաց, զոր ևս գիտ ցուցակաւն։

Բ. Ղապալայ մի ևս՝ զոր սոյն գեղականքս տան Աբրահամ Կաթուղիկոսին Մշեցւոյ, վասն կրկին մուլք տալոյ սրբոյ Աթոռոյս, ի ՌՃԽԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Բ . . . ։ Գիր մի ևս սոյն գեղջս աղայ Մուստաֆայ բեկն տայ վկայական և հաւանական վասն այսորիկ, զոր ևս գտցես ցուցակաւն և Բ համարով։

Գ. Գիր մի ևս բազմակնիք, խանի, շարի և այլոց տաճկաց կնքով վկայութիւնք վասն սոյնոյ գեղջս թէ ի բնէ անտի մլքատու է Էջմիածնի. ի ՌՃՀԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Գ համարով։

Դ. Գիր մի ևս Հիւսէյին Ալի-խանին տուեալ վասն երեք դանկ մուլքին սոյն գեղջս, գիտ ցուցակաւն։ Յիշեցաւ ի ճառս սոյն գեղջս։ Զայս ամենայն լինելն տես ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջս։ Գիտ զայս Դ համարով։

Ղաւալայք և գիրք վասն վեց դանկ մլքի Մատարոյ գեղջն։

Ա. Ղաւալայ մի վասն երկու և կէս դանկ մլքին գեղջս այսորիկ. զոր սոյն գիւղացի Ոսկանի որդի Թարխանն առնու ի Բաարխանի որդի Մահամատէն ի ՌԿԶ թուին տաճկաց, և ի ՌԿԷ թուին տաճկաց։ Ի գլուխ նորին ղաւալային փոխմամբ գրեցուցեալ տաճկերէն տայ սրբոյ Աթոռոյս։ Զորս գտցես ցուցական և Ա համարով։

Ա. Դարձեալ հուճէթ մի ի բերանոյ Ալփաուտ Իպրահիմ խալիֆայի որդի Ռաղաղուլուն վասն սոյն երկու և կէս դանկին, ի ՌՀՆ թուին տաճկաց։ Յորում յիշի թէ՝ Կեսաուր գեօղի վեց դանկ մուլքն սոյն տաճիկս ծախեալ է Աթոռոյս։ Զոր գտցես ցուցական և Ա համարով։

Բ. Դարձեալ ղաւալայ մի վասն միոյ դանկի երեք բաժին մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի Սարգսի որդի Մհերէն ի ՌՃԻԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Բ համարով։

Գ. Դարձեալ ղաւալայ մի Հայերէն վասն կէս դանկ մլքին գեղջս այսորիկ. զոր առնու Աթոռս ի նոյն Մհերի թոռանցն, ի ՌՃԿԳ թուին մերում։ Գիտ և սա Գ համարով։

Դ. Դարձեալ ղաւալայ մի վասն միոյ դանկ մլքին գեղջս, զոր առնու Աստուածատուր Կաթուղիկոսն ի նոյն Մհերի թոռանցն, ի ՌՃԼԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Դ համարով։

Ե. Դարձեալ հին և բուն ղաւալայ վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ. յորում գրի գեօղս այս սահմանօքն, զոր առնուն զօւչի Մահմատ աղայն և Սէյիտի որդի Մահամմատ աղայն ի Միրաշահի յորդւոցն, ի ՋԽԵ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ե համարով։ Զմերոյ գրեցեալսդ տես լիովին հանդերձ պարագայիւքն ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջս։ Զգրեանսն թագաւորաց և իշխողաց յիւրաքանչիւր տեղւոջն տեսցես։

Ղաւալայք և գրեանք վասն Քերաշլու գեօղի (որ է յԱպարանու նահիէն.) մլքատուութեանն սրբոյ Աթոռոյս։ Սա Փիրի-Տուրիշ ևս կոչի։

Ղաւալայ մի մեծ վասն սոյն գեղջս ընդ այլոց վեցից գեօղօրէից. զոր Գրիգոր Կաթուղիկոսն Մակուեցի առնու ի յԱմիր Ռուստամէն։ Զոր տես ի վերդ ի ղաւալայս Էջմիածնի գեղջս։

Ա. Դարձեալ գիր մի ի դաւաճանի բերանոյ, զոր առնու Փիլիպպոս Կաթուղիկոսն վասն վեց դանկ մլքին գեղջս, ի ՌԿԴ թուին տաճկաց։ Տես ցուցական և Ա համարով։

Բ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէն, զոր առնու Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի ի ՌՉԲ թուին տաճկաց։ Տես ցուցական և Բ համարով։



Գ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէն, զոր առնու Լուսարար Ստեփաննոս վարդապետն, ի ՌՂԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Գ համարով։

Դ. Դարձեալ գիր մի ի դաւաճանէ, զոր առնու Նահապետ Կաթուղիկոսն, ի ՌՃԺԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Դ համարով։ Զայս ամենայն լիովին պարագայիւքն տեսցես ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջս։

Ղաւալայք վասն Մուղնի գեղջ վեց դանկ մլքին, որ է սրբոյ Աթոռոյս։

Ղաւալայն մեծ, զոր առնու Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսն վասն եօթնանց գեօղօրէից։ Տես լիովին ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

Ա. Հուճէթ մի ի բերանոյ դատախազից վասն մլքին գեղջս, զոր առնու սրբոյն Գէորգայ վանից Առաջնորդ Դաւիթ վարդապետն, ի ՌՉԶ թուին տաճկաց։ Զոր գիտ ցուցական և Ա համարով։

Գիւղաքլու գեղջ (որ Հայերէն Սանո կոչի։

Ա. Հին ղաւալայ մի գոյ գրեցեալ ի ՋՂԳ թուին տաճկաց. զոր ծախեն Մահմատ և Ահմատ աղայքն Իպրահիմ խալիֆայ տաճկին։ Յորում գրի գեօղս սահմանօքն։ Եւ զայլ ամենայն որպէսն տես ի Քիրաշլու գեղջ յորպիսութեանն, և ի ճառս սոյն գեղջ։

Քէշիշքեանտ, որ Զալալի-Քեանտ և Այրին Տավրիշ ևս կոչի. որոյ վեց դանկ մուլքն սրբոյ Աթոռոյս է։

Ա. Ղաւալայ մի վասն վեց դանկ մլքին սորա, զոր առնու Յակոբ Կաթուղիկոսն Ջուղայեցի ի Ղուլ-Ֆահրատ և ի Ղուլ-Իսմայէլ տաճկացն, ի ՌՉԲ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ա համարովն։

Բ. Գիր մի ևս ի սոյն Իսմայէլէս, ի լուսանցն և խանի գիր և կնիքն։ Զոր գտցես ցուցական և Բ համարով։

Գ. Ղաւալայն սորա հին, գրեցեալ ի ՋՋ թուին տաճկաց։ Զոր գիտ ցուցական և Գ համարովն։ Եւ զայլ որպէսն լիովին տես ի Քիրաշլուն։

Ղաւալայք վասն Նորագեղու, որ է ի մերձ Երևանու։

Ա. Բ. Ղաւալայք և փոխանակամայք երկուք, մեծք և բազմակնիք, վասն վեց դանկ մլքին Նորագեղու, չորս և կէս դանկ մլքին Եղուարդայ և Մարխանենց այգւոյն որ յԵրևան, և մէկ այգւոյ ի Զորագեօղ, և միոյ ջրաղացի ի Զորագեօղ. զորս տայ յիշատակ սրբոյ Աթոռոյս խօճայ Սեթի որդի խօճա Յակոբճանն, ի ՌԿԹ թուին տաճկաց։ Զորս գտցես ցուցական և Ա և Բ համարով։ Տես զորպէսն լիովին ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեօղիս։

Ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ ի սոյն գեօղս, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի Դամուրբուլաղցի Հասան աղայէն, ի ՌՃԻԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . և հին ղապալայն սորա ևս գիտ՝ որ գրի ի ՌՃԻԱ թուին տաճկաց։

Ղապալայն Սիրախանի այգւոյն այն, որ ասացաւ ի . . . գլուխն ի ճառս սոյն գեղջս, և ի . . . գլուխն ի ճառս տանցն Երևանու, ի ՌՃԽԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . ։

Հուճէթ մի կրկնեցեալ վասն միոյ այգւոյ (որ Համաղի բաղ և Քեօշկի Համզա կոչի) ի բերանոյ Փաթմային, ի ՌՃԻԶ և ի ՌՃԻԸ թւոյն տաճկաց գրեցեալ։ Գիտ ցուցական և . . . ։

Դարձեալ երկու հուճէթք ևս վասն սոյն այգւոյս, մին ի Փաթմայէն նոյնոյ ի հազար հարիւր քսան և երեք, և միւսն ի Մահմատ-զասում բէկէն, ի ՌՃԼԱ թւոյն տաճկաց գրեցեալք։ Զորս գտցես ցուցակօքն և . . . համարով։ Տե՛ս ի ԺԶ գլուխն ի ճառս այգեացն Նորագեղու զորպէսն սոցա լիովին։

Ղապալայք և գրեանք վասն Եղուարդայ գեղջն։

Ա. Ղապալայք երկուք վասն չորս և կէս դանկ մլքին գեղջս այսորիկ, զորս յիշեցաք ի վերդ ի ճառս ղապալայիցն Նորագեղու։

Ա Հուճէթ մի ի բերանոյ դատաւորի առեալ վասն սոյն մլքիս, ի ՌԿԴ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ա համարով։ Եւ ռաղամ մի ևս վասն այսորիկ։ Եւ զայլ որպէսն լիովին տես ի ԺԲ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

Ղապալայք վասն Նոր գեօղին։

Ա. Ղապալայ մի վասն վեց դանկ մլքին գեղջս այսորիկ, զոր առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի խօճա Սեթի թոռն Սարուխանէն, ի ՌՁԽ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Ա համարովն։

Բ. Ղապալայ մի ևս հին վասն սոյն գեղջ վեց դանկ մլքին, զոր առնու Ամիրկիւնէ խանի որդի Նազրկեօնն ի յայլոց տաճկաց, ի ՌԻԷ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և Բ համարով։ Եւ զայլ զորպէսն լիովին տես ի ԺԳ գլուխն ի ճառս մլքատուութեան սոյն գեղջս։

Ղապալայք ևս երեք հատ, մին Հայերէն՝ ի ՌՃՁԵ թուին մերում, և երկուքն տաճկերէն՝ ի ՌՃԽԲ, և ի ՌՃԽԵ թւոյն տաճկաց գրեցեալքն. որովք Նոյքցի Մարգարի որդի մահտեսի Զաքարիայն զեւր տունն, զհինգ այգին և զամենայն ունեցեալն ծախէ սրբոյ Աթոռոյս։ Գիտ ցուցականն։ Զորպէսն լիովին տես ի ԺԶ գլուխն, ի ճառս այգեաց սոյն գեղջս։



Ղապալայք Եղշի և Ամիրի գեօղ կոչեցեալ գիւղօրէից։

Ա. Ղապալայք վասն Եղշի կոչեցեալ գեղջն, որ է յերկիրս յԵրևան ի Ծաղկունեաց ձորն, որոյ վեց դանկ մուլքն է սրբոյ Աթոռոյս, և վասն Ամիրի գեօղ կոչեցելոյն որ է ի Գեօղարքունի, որոյ չորս դանկ և կէս մուլքն է սրբոյ Աթոռոյս. ի ՌՀԱ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցական և Ա համարով։

Դարձեալ վասն այսորիկ ռաղամ սուրէթ մի չարի կնքով, ի ՌԾԸ թուին տաճկաց։ Գիտ ցուցական և . . . համարով։ Զորոց զորպէսն տես լիովին ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեօղօրէից։

Ղապալայ Բոլխնիս գեղջ։

Ա. Ղապալայ և վախմնամայ մի վասն Բոլխնիս կոչեցեալ գեղջն (որ տաճկերէն Չաչուրլու ասի, որ է ի Կարփու նահիէն ի սիրտն Արագածու մերձ Ամբերթ կոչեցեալ ամրոցին) վեց դանկ մլքին, որ է սրբոյ Աթոռոյս. ի ՌՀԱ թուին տաճկաց։ Զորս գտցես ցուցական և Ա համարովն։ Զորպէսն լիովին տես ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

Ղապալայ Ծօփանիս գեղջ։

Ա. Գիր մի վասն Ծօփանիս կոչեցեալ գեղջն (որ է ի Կարփու նահիէն) մլքատուութեան սրբոյ Աթոռոյս. ի ՌՂԹ թուին տաճկաց։ Զոր գիտ ցուցական և Ա համարով։

Բ. Ղապալայ մի ևս հին վասն այսորիկ, գրեցեալ ի ՋՀԲ թուին տաճկաց։ Զոր ևս գիտ ցուցակաւ և Բ համարով։ Զորպէսն տես լիովին ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

Ղապալայք վասն Պօթրինջ գեղջ մլքատուութեանն սրբոյ Աթոռոյս։

Նախապէս մեծ ղապալայն Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոսին, զոր յիշեցաք ի գլուխն և ի ճառս Էջմիածնի և սոյն գեղջս։

Ա. Դարձեալ ղապալայ մի ևս վասն մէկ դանկ մլքին սորա, զոր առնու Ցակովբ Կաթուղիկոսն Ջուղայեցի ի Բայրամբէկ տաճկէն. ի ՌԿԶ թուին տաճկաց։ Գտցես ցուցական և Ա համարով։

Բ. Ղապալայք երկուք ևս հին վասն այսորիկ, մին ի ՌԿԴ, և միւսն ի ՋՁԵ թւոյն տաճկաց գրեցեալք։ Զորս գտցես ցուցակօքն և Ա և Բ համարովք։ Եւ զայլ որպէսն լիովին տես ի ԺԳ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

Ղապալայ Մելիքի գեղջ։

Ա. Ղապալայ մի վասն Մելիքի գեօղ կոչեցելոյ (որ է յԱպարանու նահիէն) վեց դանկ մլքին, զոր առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն

ի Ողջաղոլի տաճկէն, ի ՌՀԵ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցակաւն և Ա համարով։ Զորպէսն տես ի ճառս սոյն գեղջ.

### Ղապալայ Ղարաղօյունլու գեղջ։

Ա. Ղապալայ մի վասն վեց դանկ մլքին Ղարաղօյունլու կոչեցեալ գեղջին (որ Եօլբասան ևս ասի, որ է ի Գառնույ նահիէն,) զոր առնու Ջուղայեցի Յակոբ վարդապետն, ի ՌԿԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և Ա համարով։ Տես զորպէսն ի ճառս սոյն գեղջ.

### Ղապալայք Սրբոյ Աթոռոյս վասն Աշտարակու գեղջին։

Նախապէս մեծ ղապալայն Գրիգոր Կաթուղիկոսին Մակուեցւոյ վասն վեց դանկ մլքին սորա, զոր յիշեցաք ի ԺԳ գլուխն ի ճառս Էջմիածնի գեղջս։

Ա. Գիր մի հուճէթապէս և վկայական Հիւսէին-ալի խանին և այլոց մեծամեծաց կնքովք. ի ՌՃՁԲ թուին տաճկաց։ Վասն Աշտարակու, Մուղնու, Եղուարդայ, և Քիրաշլուի միքատու լինելոյն սրբոյ Աթոռոյս։ Տես ի ճառս Աշտարակու։

Դարձեալ ղապալայ մի վասն այգւոյ միոյ, զոր առնու Մովսէս Կաթուղիկոսն ի յԵրևանցի Մուրատի գատերէն, ի ՌԽ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ, զոր առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի . . . տաճկէն, և տայ յիշատակ Սաղմոսավանից. ի ՌՁ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն և . . . համարով։ Զայլ որպէսն տես ի ԺԶ գլուխն ի ճառս այգեաց սոյն գեղջ.

### Ղապալայք սրբոյ Աթոռոյս վասն Փարաքար կոչեցեալ գեղջն։

Ղապալայք և գրեանք եօթն հատ վասն մեր մեծ և պարսպաւոր այգւոյ զոր ունիմք ի գեօղս յայս։ Հինգն տաճկերէն և երկուքն Հայերէն։ Տաճկերէն երկուքն ի ՌԽԶ և ՌԿԴ թուօջն գրեցեալք յաւուրս Փիլիպպոս Կաթուղիկոսին։ Մին ի ՌՀԶ թուին տաճկաց, յաւուրս Յակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ։ Մին ի ՌՃԺԴ թուին տաճկաց յաւուրս Նահապետ Կաթուղիկոսին։ Մին Հայերէն ի ՌՃՁԵ թուին մերում յաւուրս Աբրահամ Կաթուղիկոսին Թրակացւոյ. մի ևս տաճկերէն սորա հին ղապալայն, որ գրի ի ՌՃԶ թուին տաճկաց։ Եւ մին ևս Հայերէն ի ՌՃՀԸ թուօջն մերում յաւուրս Կարապետ Կաթուղիկոսին։ Զորս գտցես ցուցակօքն։ (Այժմ ամենայն ի մէջ մեր այգւոյ են ի մի խառնեցեալք։



Դարձեալ վախուփնամայ մի տաճկերէն վասն միոյ այգւոյ. զոր տայ սրբոյ Աթոռոյս նոյն գեօղացի Ղարակեօզն, ի ՌՁԱ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Դարձեալ վախուփնամայ մի Հայերէն վասն միոյ այգւոյ. զոր տայ սրբոյ Աթոռոյս սոյն գեօղացի Յովհաննէսն ի ՌՃՂԹ թուօջն մերում,

Դարձեալ ղապալայք երկուք, մին վասն միոյ այգւոյ, և միւսն վասն միոյ այգետեղւոյ և միոյ արտի. զորս առնու ի սոյն գեօղացի Դիլանէն, և ի տիրացու Նիկողայոսէն, ի ՌՃՂԴ թուօջն մերում, և տաճկաց ի ՌՃԾԸ, Սուրբ Հռիփսիմէի Առաջնորդ Անանիա վարդապետն Պօլսեցի։ Զորս գտցես ցուցակօքն։ Զվերոյ գրեալդ զամենայն տես լիովին պարագայիւքն ի ԺԶ գլուխն ի ճառս սոյն գեղջ.

### Ղապալայք սրբոյ Աթոռոյս Քալարաւ գեղջն։

Ղապալայ մի վասն երկուք ջրաղացատեղեաց ի գեօղս յայս, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի սոյն գեօղացի Առաքելի որդի Սարգսէն և ի Պետրոսի որդի Յովհաննիսէն. ի ՌՃԺԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Ղապալայ մի ևս վասն երկուց աւեր ջրաղացաց ի սոյն գեօղս, զոր առնու Ջուղայեցի Աղէքսանդր Կաթուղիկոսն ի Ղաճար-Մահմատ բէկէն ի ՌՃԻԶ թուօջն տաճկաց։ Գիտ ցուցակաւն, որ է մեր չէն գինէն։

Հուճէթ մի ի չարէն և թալլայ ևս ի Հիւսէին-ալի խանէն գոն վասն այսորիկ վասն դաւաճանի միոյ, ի ՌՃՀԸ թուօջն տաճկաց գրեցեալք, և ի մեր ՌՄԺԳ թուօջն։ Զորս ևս գտցես ցուցակօքն։ Զսոցունց ամենից որպէսն լիովին տես ի ԺԷ գլուխն ի ճառս սոյն գեղջ։

### Ղապալայք սրբոյ Աթոռոյս վասն կաւակերտ եւ Գեօկքիւմբէթ կոչեցելոցն։

Վախուփնամայ մի վասն ցանելոյ հողոյ. զոր տան բոլոր գեօղականքն սրբոյ Աթոռոյս, ի ՌՃԺԶ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Ղապալայ մի վասն երկուց ջրաղացաց ի գեօղս յայս, զոր առնու Ղազար Կաթուղիկոսն Ճահկեցի ի Յօհանի որդի Աւագէն, ի ՌՃԾԳ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Ղապալայ մի հին վասն միոյ դնկի, ի ՌՃԳ թուին տաճկաց գրեցեալ։ Գիտ ցուցակաւն։ Զսոցունց որպէսն լիովին տես ի . . գլուխն ի ճառս սոյն գեղջ։

### Ղապալայք սրբոյ Աթոռոյս ի յԵրևանայ քաղաքն։

Ղապալայ մի վասն երկուց այգեաց է յԵրևան, զոր առնու Քանաքեռցի Միքայէլ վարդապետն ի Գոլվաթ-Կեալտի տաճկէն, ի ՌԿԲ թուին տաճ-

կաց։ Գոյ և սորա հին ղապալայն ի ՌԽԱ թուին տաճկաց գրեցեալ, զորս գտցես ցուցակօքն։ Եւ Միքայէլ վարդապետս այս սրբոյ Աթոռոյս տայ զայս պզիքս։

Ղապալայ մի և վախուպնամայ մի վասն միոյ այգւոյ ի յԵրևան, որ կոչի Ղարաղաշենց այգի, զորս առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի խօճա Սեթի թոռն Սարուխանէն և յԱբրահամէն, ի ՌՁԶ թուին տաճկաց։ Գոյ և սոյն այգւոյս հին ղապալայն ի ՌԿ թուին տաճկաց գրեցեալ, զոր Քեալանթար Սահակն առնու ի Զամանէն։ Հուճէթ մի ևս գոյ ի գաւաճանից առեալ վասն սոյն այգւոյս, ի ՌՂԳ թուին տաճկաց։ Զորս գտցես ցուցակօքն։

Ղապալայ մի վասն միոյ այգւոյ (որ Ջխմշկենց կոչի), զոր առնու Աթոռս ձեռամբ Երևանցի Սիմէօն վարդապետին, ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։

Ղապալայն Մորխանենց այգւոյն՝ այն է որ յիշեցաւ ի .. գլուխն ի ճառս մլքատուութեան Նորագեղու։

Վախուպնամայ մի վասն միոյ այգւոյ, զոր տան խօճա Թորոսն և խօճա Մանուկն Փիլիպպոս Կաթուղիկոսին, և Փիլիպպոս Կաթուղիկոսն շնորհէ Անանիայ առաքելոյ անապատին։ Գիտ ցուցակաւն. ի ՌՃԾԴ թուին տաճկաց։

Ղապալայ մի ևս վասն միոյ այգւոյ, զոր Փիլիպպոս Կաթուղիկոսն առնու ի խօճա Մաթէոսէն և ի Թադէոսէն, ի ՌԾԴ թուին տաճկաց, և շնորհէ նոյնոյ անապատին։ Գիտ ցուցակաւն։

Հուճէթ մի ևս գոյ վասն սոյն այգւոյ, զոր Յակոբ Կաթուղիկոսն առնու ի գաւաճանէ տաճկէ, ի ՌՁ թուին տաճկաց։ Գիտ ցուցակաւն։ Զվերոյ գրեցելոց այգեաց որպիսութիւնն տես լիովին ի . . գլուխն ի ճառս Երևանու այգեացն։

Ղապալայք սրբոյ Աթոռոյս վասն Զորագեղու։

Ղապալայք և վախուպնամայք երկու Թորոսենց այգւոյն, և Գառնուկենց ջրաղացին, զորս տայ սրբոյ Աթոռոյս խօճա Սեթի որդի խօճա Յակոբճանն ի ձեռն Յակոբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ, ընդ մլքին Նորագեղու և ընդ այլոց. այնք են զոր յիշեցաք ի . . . գլուխն ի ճառս Նորագեղու, զորս գիտ ցուցակաւն։

Ղապալայն միւս ջրաղացի որ ի գեօղս յայս, յիշեցաւ ի . . գլուխն ի ճառս Եայծի և Ամիրի գեօղօրէից և ի . . գլուխն ջրաղացաց սոյնոյ գեղջս. զոր ծախէ Քեալանթար Սահակն։ Գիտ ցուցակաւն։



Վախուպնամայք երկուք, և Ա. ղապալայ, մի ևս սուրաթ վախուպնամայի, վասն երկուց ջրաղացաց ի սոյն գեօղս, զորս տայ յիշատակ Անանիա առաքելոյն Փիլիպպոս Կաթուղիկոսն ի ՌԾԴ թուին տաճկաց, զոր գտցես ցուցակօքն։ Զսոցունց որպէսն տես լիովին ի . . գլուխն ի ճառս ջրաղացիցն սոյն գեղջս։

Ղապալայք Զորագեղու մեր անապատին եւ տանցն շրջակայից։

Ղապալայ մի վասն սոյն անապատի տեղւոյն, զոր մահտեսի Ղևոնդն Կարնեցի առնու ի նոյն Զորագեղցի Ասլանէն. ի ՌՂԴ թուին տաճկաց։ Սաւատ մի ևս գոյ սորա։

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր նոյն Ղևոնդն ծախէ Եղիազար Կաթուղիկոսին ի նոյն թուոջն։ Սաւատ մի ևս սորա գոյ։

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Ասլանն վերոյիշեցեալ առնու ի Փարիէն ի ՌՂ թուին տաճկաց։

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Ալիբէկ տաճիկ ոմն առնու ի Շահում և Աւագ եղբարցն ի ՌԼԹ թուին տաճկաց։

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, նոյն Ալիբէկն տայ Տէրտէրենց խօճա Միքայէլին, ի ՌԽԱ թուին տաճկաց։

Ղապալայ մի ևս վասն սոյն տեղւոյս, զոր Եղիազար Կաթուղիկոսն առնու ի Ղազարի որդի Խաչատուրէն, ի ՌՃԲ թուին տաճկաց։ Վերոյ գրեցեալ վեց ղապալայքդ են մեր Զորագեղու անապատի պարսպի միջի եղեալ տեղեաց ղապալայ.ք. զորս գտցես ցուցակօքն։ Եւ զորպէսն սոցա լիովին տես ի . . գլուխն ի ճառս սոյնոյ գեղջ տանցն։

Դարձեալ ղապալայ մի վասն ի ներքոյ անապատի ձորոյն եղեալ տանցն, զոր առնու Նահապետ Կաթուղիկոսն ի յԱզամալէն, ի ՌՃԳ թուին տաճկաց։

Ղապալայ և վախուպնամայ մի ևս վասն երեք տանց (որք են հանդէպ մեր անապատի մեծ դրանն) զոր Երանոսի որդի Պօղոսն տայ Յովհաննիսի որդի Յօհանին, և Յօհանն տայ սրբոյ Աթոռոյս, ի ՌՃԽԱ թուին տաճկաց։ Զայսոսիկ ևս գտցես ցուցակօքն։ Զվերոյ գրեալդ լիովին պարագայիւքն իւրեանց տեսցես ի . . գլուխն ի Զորագեղու տանցն։

Ղապալայք եւ գրեանք սրբոյ Աթոռոյս վասն — կալուածոց — Դավրիժու։

Ղապալայապէս հուճէթ մի վասն այգւոյ միոյ ի Դավրէժ, զոր առնու Սիմէօն Կաթուղիկոսն Երևանցի ի Դավրէժցի Միրզա-շեֆու որդի Միրզա Ռաֆիէն ի ՌՃՁ թուին տաճկաց։ Ընդ այս գոն և այլք գրեանք. զորս

գիտ ցուցակաւն։ Եւ գլխովն որպէսն տես ի . . գլուխն ի ճառս Դավրիժու այգեաց։

Ղապալայ.ք վեց հատ վասն ջրոյ, զորս առնուն Աղէքսանդր և Աստուածատուր Կաթուղիկոսքն ի Դաւրէժ ի Սէյիդ Միրիմ կոչեցեալ ջրբոյն։ Զորս գտցես ցուցակօքն, ի ՌՃԻԳ, ի ՌՃԻԵ դարձեալ, ի ՌՃԻԶ, ի ՌՃԼԲ, ի ՌՃԼԵ թուին տաճկաց գրեցեալ.ք։ Զորոց զորպէսն լեալն տես ի . . գլուխն ի ճառս ջրոյ։

Ղապալայ.ք երեք հատ վասն մեծ այգւոյն մերոյ որ ի Դուխուրգան կոչեցեալ գեօղն, զոր առնու Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն, ի ՌԿԵ և ի ՌԿԷ թուին տաճկաց գրեցեալ.ք, զորս գիտ ցուցակօքն։ Եւ զլխովն որպէսն տես ի . . գլուխն ի ճառս այգեացն։

Ղապալայք և գրեանք վասն Վրացտանու երկրին։

Վախուշնամայ մի Վրացերէն վասն միոյ գեղջ Թամալուր կոչեցելոյ (որ է ի մէջ Կախէթու և Քիսիղու ի յԸնխսուլ նահանգն) զոր տան Կախէթու Թէմուրազ պարոնն և իւրքն՝ Յակովբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի . . թուոջն մերում՝։ Գիտ ցուցակաւն։

Վախուշնամայ մի Վրացերէն վասն միոյ մեծ այգւոյ ի Շուլաւէր գեօղն, զոր տան Ջուանշիրի որդիքն Յակովբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԻԷ թուոջն մերում՝։ Գիտ ցուցակաւն։

Վախուշնամայ մի Վրացերէն վասն երից խանութից ի Թիֆլիզ քաղաքն, զոր տայ Բէհբութի որդի պարոն Ասլանն Յակովբ Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ ի ՌՃԺԳ թուոջն մերում՝։ Գիտ ցուցակաւն։

Վախուշնամայ.ք երկու.ք Վրացերէն վասն միոյ այգեստանւոյ ի քաղաքն Թիֆլիզ, զոր տուեալ է Սիմէօնի կին Խանումն սրբոյ Աթոռոյս, ի ՌՄԺԶ թուոջն մերում՝։ Գիտ ցուցակաւն։

Ղապալայ.ք երկու.ք Վրացերէն, վասն Խախուտի որդի Յարութիւնին և Յակովբի որդի Պաւլին ի քաղաքն Թիֆլիզ, զորս առնու Աստուածատուր Կաթուղիկոսն բոլոր ընտանեօքն ի ծորտ սրբոյ Աթոռոյս, ի ՌՃԿԴ և ի ՌՃԸ թուոջն մերում՝։ Գիտ ցուցակ.քն։

Ղապալայ մի ևս Վրացերէն վասն Թումաննից Յակովբին, Պաւլին և բոլոր ընտանեացն նոցին ծառայութեան սրբոյ Աթոռոյս, ձեռամբ Աստուածատուր Կաթուղիկոսին, ի ՌՃՀ թուոջն մերում՝։ Գիտ ցուցակաւն։



ԳԼ. ԻԵ.

Ցուցումն ցուցանէ որպիսութեան վանօրէիցն որ յերկրումս Երեւանու, և նոյն ընդ և վիճակին, և մասն և այլ ունեցեալ առաջնորդ յառաջ յառաջ։

Ո՜հ, աւա՜ղ գրչիս աստանօր. զի յիրաւի նմանիմք աւերիցեալ և մերկացեալ ընչակորոյս վաճառականի, որ ի յաւնեւորութեան ոչ ինչ հոգայցէ և ոչ փոյթ ունիցի զունեցելոցն և զօրքանութենէ նոցին. իսկ յետ մերկանալոյն յամենայնէ, ապա սկսանիցի մեծաւ հոգաբարձութեամբ և մանրամասն խուզմամբ թուել, կանոնաւորել, և յարձանի նկարագրել զկորուսեալսն։ Քանզի մինչ ունէաք զևղճալի վանօրայսդ առ ձեռն ի շինութեան և յաւնեւորութեան, լցեալ միաբանիւք և հարուստ ընչիւք, մլքովք և վիճակօք, ոչ ինչ հոգացաք զսոցունց և զունեցելոցն սոցին ի կանոնաւորել և ի յարձանագրել, և զուգունակութեամբ պահել. այժմ մինչ վասն մեղաց մերոց կան ի յամայութեան և ի յաւերման, եղեալ փարախ անասնոց և գազանաց, որջ.ք գողոց և աւազակաց, լցեալ.ք զարշութեամբ և աղբիւք, վիճակ.քն աւերք և անյայտք, ունեցեալ մուլ.քն ոչ ինչ և անհետք. Ապա սկսանիմք որել և հոգալ, և զկորուսեալսն մեծաւ խուզմամբ ի հաշիւ արկանել և յարձանի նկարել։

Այլ սակայն որովհետև անհուն է ողորմութիւնն Աստուծոյ և գթութեան նորին ոչ գոյ չափ, և խրատելով խրատէ և ոչ իսպառ մատնէ ի մահ, յուսամք, զի իցէ թերևս երբեմն հարկեցեալ ի մարդասիրութենէ իւրմէ, և խոնարհեալ ի յաղաչանս իւրոց ծառայից և իւրահաճոյ սրբոցն (յորոց անուն կառուցեալ.ք են այնք եկեղեցիք,) այց արասցէ և վերանորոգեսցէ զշնութիւն եղծելոյ Ազգիս մերոյ և վանօրէիցս։ Եւ յայնժամ եթէ զշէնս ոչ, գոնէ զաւեր տեղիսն մ.քից և զվիճակս իւրեանց ճանաչեսցեն իւրաքանչիւրքն։ Քանզի ի ներկայումս յորում գրեմ զսոցունց, երեսուն և երկու ամ է աւերութիւն երկրիս և ամայութիւն վանօրէիցս, զորս մեք և շատք վարդապետք և աշխարհականք տեսաք ի շինութեան և ի շքեղութեան, որոց և ոմանց Առաջնորդ.քն ևս գոն կենդանի յԱթոռոջս և յայլ ուրեք. սակայն ի գրելն մեր զսոցունց, և ի տարակուսիլն վասն վիճակի և մ.քի և կամ գեղոց պարագայիցն վանից ուրուք, զմեծ տառապանս կրէաք, զի հասարակ մարդիկ հնազոյնք եթէ ոչ կարողանային լուծանել զտարակուսանս մեր, ոչ լինէր այնքան ցաւ, որքան այնք սևագլուխք՝ որք միաբան և մանաւանդ առաջնորդ.ք էին լեալ.ք վանօրէից ոմանց, որոց ի հարցանելն մեր զորպիսութիւն ինչ զվանից յայնցանեաց, միայն պապանձեալ.ք, զի զճանապարհս զինետանցն միայն էին սերտեալ.ք և ոչ զայլ

ինչ։ Արդ եթէ այժմ այսպէս, ապա յետ քանեաց ամաց ո՞րպէս, խոհեմութեամբ իմանալ կարէք։ Եւ դարձեալ ի վանօրէիցդ ոմանք ապատակչաց և գերողաց պատահեցեալք մերկացան յամենայնէ և ամայացան. չէ զարմանք եթէ այնպիսեաց վանօրէից հին կոնդակք, թուղթք, ղապալայք, վախուսնամայք, թէմեսուկք, և այլք այսպիսիք գրեանք ընդ այլոց աւերեցեալ իրաց իցեն վատնեցեալք և կորուսեալք, որ հաւաստի իսկ է։ Իսկ մեծ զարմանք այն է, զի այնք վանօրայք որք ոչ աւարեցան և ոչ գերեցան, (այլ առաջնորդք և միաբանքն նոցին չկարելով տանել ժամանակի վշտաց և նեղութեանցն, ինքնին դատարկեալ զվանքսն եկեալ են ի յԱ-թոռս և յայլ չէնս. յորոց շատքն և կենդանի ևս են՝ որպէս ասացաք)։ Այսպիսեաց վանօրէից հարկաւոր գրեանքն և ղապալայքն ևս իցեն անհետացեալք ի վատութենէ Առաջնորդացն. յորոց ի հարցանելն մեր և ի խնդրելն, յերկիր հայէին և գլխակոր լինէին։ Եւ թէ զոմանս թուղթս ևս ունէին և պահեալ էին, այնք ևս հնացեալք, աղճատեալք և պատառոտեալք, և ի ջուր անկեալք, որպէս թէ՛ ընդ կորուսելոյն համարեցեալք։ Ո՜հ արդեօք գրիչս և շարժեցան ցաւքս, վասն որոյ կարճառօտել հարկաւորեցայ։

Արդ ուրեմն, զոր մեր գիտելով, և զոր աստի և անտի հայցմամբ առ ձեռն բերելով, զորս գիտացաք հաւաստեաւ և ունեցաք, գրեցաք. իսկ զորս ոչ կարացաք առձեռն բերել, բաց թողաք զտեղիսն։ Տես ուրեմն զստուգեւ. իսկ զթուղթսն զորս ձեռն բերաք վասն վանօրէիցդ էին ամենեւին աղճատեալք և պատառոտեալք՝ որպէս ասացաք, զայնս մեք կարկատելով որպէս թէ՛ որքան էր հնար, վերանորոգեցաք և զերեսսն գրեցաք ըղ-պատճէն իւրեանց՝ որպէս տեսանես։

### Սրբոյն Գեղարդայ վանից որպիսութիւնքն։

Վանքս այս, որ այլ անուամբ կոչի Այրիվանք, (որ է ի Գառնու նահիէն մերձ գիւղաքաղաքին Գառնւոյ,) նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ . . . .

Ունի վիճակք յերկրիս Երեւանու զՆորագաւիթ, զՆորք, զԵնկիճէ, զՏաճարափակ, զՊորտիկ, և զԲարծաքի։

Ունի և զմ.քասոու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն մէկ։ Որք են, Պորտիկ, Վերի Աւգալներ և Ագարակ կոչեցեալ գեօղօրայքն. այլ և Գողթ գեղջ երեք դանկ մուլքն, որք ի բնէ անտի վանիմեն տրեցեալք։ Պորտիկ գեղջ մ.քին յաղագս ի Մէմինբէկ տաճկէ դաւաճանէ միջէ հուճէթ մի ևս գոյ, զոր գիտ ցուցակաւն։



Վարելահողքն, այգիք, ջրաղացք, զինկք, և այլք այսպիսիք են այսուքիկ։

Քանաքեռու բոլոր գեօղականքն՝ ի Նորագաւթայ հանդումն երկու հարիւր սօմար սերմի տեղ հող ծախեն սոյնոյ վանքիս, ձեռամբ սորին Առաջնորդ Պետրոս վարդապետին ճահկեցւոյ, տասն թումանի, ի ՌՃԾԳ թուին տաճկաց. որոյ սահմանքն են, սոյն վանից վախմ՝ տեղին, ճանապարհն, և առուն։ Գիտ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն։

Դարձեալ՝ Նորագաւթցի Մուխսի որդի Բարդուղիմէոսն՝ հինգ սօմար սերմի տեղ հող ծախէ ի նոյն գեօղն՝ սոյնոյ վանքիս՝ ձեռամբ սորին առաջնորդ Պետրոս վարդապետին ճահկեցւոյ՝ տասն և հինգ հազար դիանի. ի ՌՃԾ թուին տաճկաց։ Որոյ սահմանքն են, Մանուկի հողն, քուչէն, Համազոզի այգին և ճանապարհն։ Գիտ զղապալայն յերեսն գրեցեալ ցուցակաւն . . . Զհող մի ևս ունի ի սոյն գեօղս երեսուն սօմարէն տեղ, որ Հարամի-գաւառ կոչի։ Զհող մի ևս ունի Գ սօմարէն տեղ, որ Չոպանի-տեղ կոչի։ Զհող մի ևս ի Քանաքեռու հանդի տակն՝ քառասուն սօմարէն տեղ, որ Տեւակ կոչի։ Զհող մի ևս ի Սեւահողումն՝ տասն և երկու սօմարէն տեղ։ Յիսուն սօմարէն տեղ ևս Մեծ ձորւտն է, որ մէկ կողմն՝ Ենկիճէու ճանապարհն է։ Յիսուն սօմարէն տեղ ևս Ներքի ձորւտն է, որոյ մէկ կողմն ճանապարհն է և մէկ կողմն Ուլուխանլուն։ Զվաթսուն սօմարէն տեղ ևս ի Հրեշտակափոսն ունի։ Զվաթսուն սօմարէն տեղ ևս ունի ի սոյն գեօղս, որոյ մէկ կողմն վանից ճանապարհն է, և վերի կողմն՝ Նորքայ, և Երեւանու կողպարն։ Ի յԵնկիճէ գեօղի հողումն ունի զմեծ հող մի վարելի, երեսուն սօմարի տեղ, որ մինչև ի խանդակն՝ ի մէջ Նորագաւթայ և Ենկիճէի։ Քսան սօմարէն տեղ ևս ունի ի սոյն գեօղս ի Թուլքի-թափայի տակն, որոյ վերջն Ուլուխանլուի ճանապարհն է. ունի ևս ի Բարձարի գեօղն զերկուս մեծ վարելահողս, մերձ սրբոյն Սարգսի։

Դարձեալ ի Գոլոդ գեղջ հանդումն ունի զհող մի վաթսուն սօմարէն տեղ, զոր Հայոցթառցիք են տուեալ յիշատակ սոյն վանքիս։

Այլ և ունի ի գեօղն Նորագաւիթ՝ զմեծ այգի մի, ի վաղուց հետէ վախմ և յիշատակ։ Սոյն այգւոյս յառաջն զհող մի ևս ունի՝ Զ սօմարէն տեղ, որ Թագաւորենց տեղի կոչի։ Այլ և՝ ունի սոյն վանքս զայգի մի՝ ի սոյն գեօղս, զոր Քեալաշ Ազարիայն տայ վախմ սոյն վանքիս՝ ի ձեռն սորին Առաջնորդ Պետրոս վարդապետին ճահկեցւոյ, ի ՌՃՁԸ թուոջն մերում։ Գիտ զվախուսնամայն Հայերէն։

Այլ և՝ ունի ի սոյն գեօղս՝ զդինկ մի ի վաղուց հետէ, և զջրաղաց մի ևս ընդ նմա ի միում տան՝ ի վերայ Ուլուխանլուի ճանապարհին։

Սորա յառաջն մէկ հող տասն սօմարէն տեղ, մէկ կողմն նոյն ճանապարհըն է, և մէկ կողմն գեօղի այգիքն։

Այլ և՝ ունի ի սոյն գեօղս զերկուս ջրաղացս, զորս սոյն գեօղացի Բարդուղիմէոսն է տուեալ վախմ ի յառաջնորդութեանն Ղունկիանոս վարդապետին։ Ի ներքոյ բանտի սոյնոյ ջրաղացիս՝ ունի զհող մի ևս վեց սօմարէն տեղ, որոյ վերջն է նոյն վանից կալն։ Նորագաւթցի Տիլանի որդի Համազաղն՝ ունելով ի նոյն գեօղն զմի զինկ՝ և զմի քըքըրս, և զերկուս ջրաղացս, զոցա կէսն ծախէ Երևանցի Մարգարի որդի Ղազարին, վեց թումանի. ի ՌՃԽԹ թուին տաճկաց։ Եւ կէսն ծախէ սոյնոյ վանքիս՝ ի ձեռն սորին Առաջնորդ Պետրոս վարդապետին Ճահկեցւոյ, չորս թումանի ի ՌՃԾ թուին տաճկաց։ Գիր զայս երկուս զապալայքս յերեսսն գրեցեալ ցուցակօքն։ Եւ յետ վեց տարւոյ վերոյիշեալ Մարգարի որդի Ղազարն, և իւր երկու եղբարքն Յովակիմ և Զաքարիայն՝ զիւրեանց առած զինկի, քըքըրայի և երկուս ջրաղացաց բաժինն ևս տան վախմ սոյնոյ վանքիս, ի ձեռն նոյն Առաջնորդ Պետրոս վարդապետին. ի ՌՃՂԲ թուոյն մերում։ Գիր վախուսնամայն Հայերէն գրեցեալ. որ լինին կատարեալ սրբոյն Գեղարդայ վերոյիշեալ զինկն, քըքըրայն, և երկու ջրաղացքն։ Որոյ սահմանքն են՝ նոյն Համազաղի վարեալահողն, և մէլիք Յակովբճանի զինկն։ Դարձեալ՝ սոյն գեօղացի Աւագի որդի Վարդանն ի սոյն գեօղս զթավլիլա մի ծախէ սոյն վանքիս, ձեռամբ նոյնոյ Պետրոս վարդապետին՝ հինգ հազար դիանի. ի ՌՃԽԹ թուին տաճկաց։ Որոյ կողմունքն են՝ Միրու և Ստեփանի տունքն։ Գիր զապալայն ցուցակաւն . . .

Այլ և՝ ունի ի սոյն գեօղս զմէկ ձեռք չէն տունս ամենիւք հարկաւոր շինուածովք։ Մէկ ձեռք տուն ևս յառաջն սորին, որ Աղատ Տէրւոր շինուածովք Մէկ ձեռք տուն ևս յառաջն սորին, որ Աղատ Տէրտէրենց կոչի։ Այլ և ունի սոյն վանքս զայգի մի ի յԵրևան քաղաքն ի Ղերի մահլէն ի վերայ սրբոյն Սարգսի առուին, յորոյ մէջն անցանէ Դլոխլերի մահլէն ի վերայ սրբոյն Սարգսի առուին, յորոյ մէջն անցանէ Դլոխբուլախ կոչեցեալ ջուրն։ Որոյ կողմունքն են չէն այգաւոր և բախչայաւոր տունք։ Զայգի մի ևս ի Նորք ունի, որ կոչի Բուդաղբէկենց այգի, զոր Աթոռս ծախէ. (Մահտեսի Զաքարիայինն էր)։ Այլ և ունի ի սոյն գեօղս զկիսաձիթահանք մի, զոր սոյն գեօղացի Վարաքի որդի Սիմէօնն ծախէ երկու թումանի, ձեռամբ սոյնոյ վանից Առաջնորդ Պետրոս վարդապետին. ի ՌՃՁԵ թուոյն մերում, և տաճկաց ՌՃԾ։ Գիր զերկուս զապալայսն, Հայերէն և տաճկերէն . . .

Դարձեալ՝ սոյն գեօղացի Համազաղի որդի Սեթն, ի սոյն գեօղս զմէկ անշէն տնատեղ ծախէ ութն հազար դիանի, սոյնոյ վանքիս, ձեռամբ սորին Առաջնորդ Պետրոս վարդապետին, ի ՌՃԾԳ թուին տաճկաց։ Կողմունքն են Ահարոնի քեալավայքն և ճանապարհն։ Գիր զզապալայն ցուցակաւն . . .



Դարձեալ՝ զձեռք մի տուն ծախէ սրբոյ Աթոռոյս Տեղապահ Միքայէլ վարդապետն, ի Նորք գեօղն սրբոյն Գեղարդայ վանիցն, ձեռամբ նոյնոյ Պետրոս վարդապետին՝ չորս թումանի. ի ՌՃԿԴ թուին տաճկաց։ Որոյ կողմունք են Տէր Յովակիմի տունն և բախչայն, քուչայն և ճանապարհն։ Գիր զզապալայն ցուցակաւն . . . . Այս է Մահտեսի Զաքարիայի տունն՝ զոր ծախէ սրբոյ Աթոռոյս, որպէս ասացաւ ի . . գլուխն։

Դարձեալ՝ Ախցուանցի Առաքելի որդի Բէկլինն՝ ի նոյն գեօղն զբաղչայ մի տայ վախմ սոյն վանքիս, ի ՌՃՂԱ թուին մերոյ։ Զորոյ վախուսնամայն Հայերէն՝ գիր ցուցակաւն . . .

Այլ և՝ ի Բարծարլի, ի Շահապ, և ի Ծար գեօղօրայսն՝ ունի այս վանք՝ զմէկ մէկ ձիթահանք ի վաղուց հետէ։

Ի յիւր մօտն ևս ունի զջրաղաց մի, յինքենէ ստացեալ։ Այս ջրաղացս, Շահապայ և Ծարայ ձիթահանքքն, Նորագաւթայ, Նորքայ, և Երևանու այգիքն, յիշեին ի գրեանս գլւանագրացն ի ԺԴ գլուխն, ի ճառս մաղափութեան։ Անդանօր ևս տեսցես։

Սրբոյն Ամենափրկչի վանից որպիսութիւնքն։

ի գաւառն մերձ Հայոց-Թառ

Վանքս այս (որ է ի Գառնւոյ նահիէն ի գաւառն մերձ Հայոց-Թառ) նախապէս կոչեցելոյ գեղջն։ Կոչի և տաճկերէն Ղզլվանք և Կարմիր վանք.) նախապէս կոչեցելոյ գեղջն։ Կոչի և տաճկերէն Ղզլվանք և Կարմիր վանք.) Նախապէս է հիմնաւորեցեալ ի թուոջ մերում ի ՃՀԳ, ի յառաջնոյ Աշոտ իշխանին յորդւոյ մեծի քաջին Սմբատայ Բագրատունւոյ. ի Հայրապետութեանն Սահակայ Ձորափորեցւոյ, (որ գնաց ի Խառան ընդ յառաջ Մահմետի, և անդ մեռաւ)։ Քանզի այս Աշոտս առաքեաց զորդին իւր ի Կոստանդնուպօլիս առ թագաւորն Կոստանդ թոռն Հերակլեայ, և եբեր զանձեռագործ պատկերն Փրկչական (որ ասի Ամենափրկիչ. զոր շնորհեաց Քրիստոս ծնողին իւրոյ սըրբուհւոյ Աստուածածնին նկարեալ ի փայտի, որ այժմ է ի սուրբ Աթոռս Էջմիածին), վասն որոյ և շինեաց զվանքս զայս հրաշալի յանուն նոյնոյ անձեռագործի պատկերին, և կոչեաց Ամենափրկիչ։ Եւ ինքն ննջեալ ի Մամիկոնեան Գրիգորէ, թաղի ի սոյն վանքս։ Ապա յետ ժամանակաց վերստին նորոգեաց զսուրբ վանքս զայս Գրիգոր Մագիստրոսն Պահլաւունի, որդին Վասակայ Բջնեցւոյ քաջին, (որ ի Սերկեվիլ գեղջն քարընկեց եղև). և զշրջակայ վայրսն ամենայն գնեալ արծաթով, շնորհեաց սոյնոյ վանիցս ի յիշատակ ինքեան. և զորդին իւր զՎահրամ (որ նոյն ինքն է Գրիգոր Վկայասէրն, որ յետոյ եղև Կաթուղիկոս Սրբոյ Էջմիածնի) նստուցանել ետ ի սմա Առաջնորդ ի ՆՀԲ թուոջն մերում, և ի Հայրապետու-

թեան Տեառն Սարգսի, և ի թագաւորութեան Բագրատունեաց Գագկայ Շահնշահի։ Ապա վերջինեալ Գրիգոր Մագիստրոսն մինչ վերանորոգեաց զվանքս զայս, և հաստատեաց զսա հողովք, և ջրովք, և զորդին իւր ետ կացուցանել ի սմա Առաջնորդ՝ որպէս ասացաք, վասն որոյ և յայնմ հետէ որպէս թէ զհայրենի մուլք արարեալ զսա որդիք և թոռունք և յետագայ ազգատոհմք սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զԱռաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութեանն Հայոց, այլ և ի ժամանակս թագաւորացն Պարսից մինչև գրեթէ ի ժամանակս մեր՝ որքան չէն էր վանքս այս, որպէս տեսանելոց ես ի յառաջակայսդ։ Այլ և զկնի ժամանակաց անցելոց՝ փլեալ էր եկեղեցին շինեալն ի Գրիգորէ Մագիստրոսէ, Աստուածատուր Կաթուղիկոսն Համատանցի կամեցաւ վերստին շինել զոր և շինեաց իսկ զորմունսն քարակոփ, մինչև ի տանեաց կամարն, ի ՌՃՀ թուոջն մերում. սակայն ի ձախորդութենէ ժամանակին մնաց գործն անկատար, և կայ այնպէս կիսատ մինչև ցայսօր։ Եւ ի վերստին շինելն Աստուածատուր Կաթուղիկոսին զփլեալ որմունսն, գտեալ եղև արձանաքար մի, յորում գրեալ էր վերոյ գրեցեալ Գրիգոր Մագիստրոսն զյիշատակարանս իւր. զորոյ երեսն առեալ գրեցաք աստ ի գիտութիւն ապագայիցդ։ Որ է այս։

«Թուին ՆԿԲ. ի թագաւորութեանն Գագկայ, և ի Հայրապետութեանն Տեառն Սարգսի, ես Գրիգոր Մագիստրոս, վերստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ և ծնողացն իմոց։ Նա և ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն և դաշտամբն, և ամենայն կազմութեամբն որ ի սմա քառագէմ չորս անկեամբ յաջամբ և ահեկամբ, ի գլխոց և ի թիկանց։ Եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով, և աշխարհական թագաւորի թղթովն, և կայսերական կնքովն, հաստատեցաք ձեռագրով, և Հայրապետական նամակովն։ Եւ ի նաւակատիս տաճարիս զոր շինեցաւ, ընծայեցաք զհայրենիս մեր Սուրբ Եկեղեցւոյս, որ է Հայոցթառ, հանգստարան և օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յօհաննու աւետարանչին, հրամանաւ Մօր Տեառն մերոյ սուրբ Աստուածածնին. և նորոգեալ հաստատեցաք վերստին զսուրբ Ուխտս վերջինս քան զառաջինն։ Աստ եդաք զվէմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցւոյս։ Գրիգոր Վահրամ՝ պիտանին։» Մինչև ցաստ էր արձանագիրն։

Արդ վանքս այս ի յերկրոջս ունի զթէմ և զվիճակ յատուկ, զԵրևան քաղաքն, զԿօնդ, զՆորագեղ, զՇէնգաւիթ, զՁորվէզ, զփլուզաքաղաքն Գառնի, զԿոխպ, և զՀայոց-թառ։ Ունի և զմլքատու գեօղօրայս, յորոց առնու զմուլքս ի տասնէն զմէկ. որք են այսոքիկ. Հայոց-թառ, Կուտուց վանք, (որ Թափաքեանի գեօղ ևս կոչի), Թառնիս, և Ագարակ. յորոց առնու զվեց դանկ մուլքս։ Այլ և Կոխպ, Մանկուս, Աւանիկ, Դաշվերթ,



և սուրբ Սարգիս գեօղօրէից զերեք դանկ մուլքն. որոց զորպէսն այսպէս գիտեա։ Ի յազգէ վերոյ գրեալ Գրիգոր Մագիստրոսին՝ մի զկնի միոյ յաջորդելով՝ նստի առաջնորդ ի վանքս յայս ի նոյն գեղջէն Հայոցթառու Զաքարիայ վարդապետն. թուի թէ՝ այս Զաքարիայ վարդապետս է մի ի յայնց վարդապետաց, որք զԿիրակոսն հանեն՝ և զԳրիգոր Մակուեցին դնեն Կաթողիկոս Էջմիածնի. ի ՊՂԲ թուոջն մերում։ Զոր յիշէ Թովմա պատմագիրն։ Արդ այս Զաքարիա վարդապետս զվեց դանկ մուլքս այսոցիկ, այս ինքն, Մանկուս, Աւանիկ, Կուտիս, Հայոցթառ, Կուտուց վանք, Աւանասար, Թառնիս, և սուրբ Սարգիս կոչեցելոց գեօղօրէիցս, և Կոխպա երեք դանք մուլքն, որք են իսն գեօղք, ի տաճկէ միոջէ, որ կոչի Ամիրքեամալ Արղինբէկ, որդի Նաւրուզի որդւոյ Հէյդարի՝ հինգ հազար դինարի, ի ՊՂԴ թուին տաճկաց և ի ՋԼՋ թուոջն մերում, զորոյ զղապալայն գտցես ցուցակսն . . . ։ Յորում գրին իւրաքանչիւրքն յատուկ յատուկ սահմանոքն իւրեանց, որք են ի Գառնւոյ նահանգոջն։ (Մեր Յօշականու վեց դանկ մուլքն ևս սոյն Ամիրքեամալ Արղին բէկս ծախէ տաճկի ումեմն Սատի-վախկալ կոչեցելոյ, ի սոյն թուոջս, որպէս տեսանես ի ճառն Յօշականու։) Արդ՝ Զաքարիա վարդապետս զայսոսիկ ի յառնուլն, յիւր անունն առնու, և զանուն Ամենափրկչին ոչինչ յիշէ ի ղապալայոջն, և զվախմ անունինչ ո՛չ գրեցուցանէ. որոյ պատճառն է՝ զի սոքա ի բնէ անտի ազատազունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և ընչիւք, և իւրեանց էր համարեցեալ գեօղն և վանքն առանց խտրութեան։ Վասն որոյ և ինքն մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուլքս, թէպէտ յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութենէն։ Եւ յետ գնելոյն զայսքան մուլքս, յետ քանեաց ամաց մինչ հաստատի Պարսից Շխօճաղի թագաւորութիւն, և նստի Շահիսմայէլն առաջին, սոյն Զաքարիա վարդապետս զղաղամ մի առնու ի Շահիսմայէլէն ի թուոջն տաճկաց . . թէ Ամենափրկչի վանքն ամենևին մաղաֆ է, ոչ խարճ դիւանի, ոչ մուլք, և ո՛չ այլ ինչ հարկ տայցէ ումեք. զոր գտցես ցուցակաւն . . . ։ Ապա յետ սոյնոյ Զաքարեայ վարդապետին, ի փոփոխել ժամանակին, ի նուազիլ կարողութեանց և իշխանութեանց սոցա, և ի բաժանիլ ազգականացն յիրերաց, սկսաւ խտրութիւն անկանիլ ի մէջ վանականացն և աշխարհականացն վասն մլքից և այլոց ընչից, և այլք ևս աստի և անտի դաւ յարուցանէին վասն յիշեցելոց մլքիցդ՝ և յափշտակել կամէին, և կամ գեղականքն զմուլք տալ ո՛չ կամէին, վասն որոյ յազգականաց սոցա Զաքարիա և Համազասպ վարդապետքն յայնմ ժամանակին, Հայոց թառ, Մանկուս, Աւանիկ, Բաղերթ, և սուրբ Սարգիս կոչեցելոց

գեօղորէից զկէս մուլքն (որ է երեք դանկն,) բաժանեալ՝ յատուկ վախմ զրեն անուն Ամենափրկչի վանիցն տաճկերէն գրով, ի ՋԼԴ թուին տաճկաց։ Զոր գտցես ցուցական . . . ։ Եւ սոյն Զաքարիա վարդապետս յետ այսպէս առնելոյն, զերկուս ռաղամս ևս, ի յառաջնոյ Շահ-Թահմազէն առեալ վասն յիշելոց գեօղորէիցդ՝ թէ պարտիք զմուլքս ձեր տալ Զաքարիա վարդապետին. զոր գտցես ցուցակօքն, ի ՋՁ և ի ՋՁԴ թուոջն տաճկաց գրեցեալք։ Ապա և յետ միջոց անցանելոյ, թէ յաղքատութենէ աշխարհական ազգականացն, զրամով ծախե՞ն թէ կամաւ տան, և թէ այլ որպիսեաւ կերպիւ լիցի, ո՛չ կարացաք գիտել, զՀայոցթառու մնացեալ երեք դանկն, զԿուտուց վանք կոչեցելոյ վեց դանկն, զԹառնիս կոչեցելոյ վեց դանկն, այլ և Կոխդ գեօղի երեք դանկն տան սոյնոյ վանքիս։ Որոց ի հարկէ գիր լեալ է, սակայն թէ ո՞ւր է, ո՛չ գիտացաք. զպատճառն ի յառաջաբանութեան սոյն գլխոյս ասացաք։ Արդ ի մերս ժամանակի մինչ չէն էր վանքս այս, զՀայոց թառու, զԹառնիսու և զԿուտուց վանքի վեց դանկ մուլքն առնոյր, մինչ սոքա ևս էին չէն և տաճկաբնակ. Նոյնպէս և Կոխդ գեօղն որ չէն էր, տայր զերեք դանկ մուլքն սոյն վանքիս։ Իսկ Մանկուս, Աւանիկ, Քաղբերթ և սուրբ Սարգիս (զորս ամայի տեսաք մեք,) որոց զհողն վարէր վանքս այս, իսկ այժմ մինչ գրէաք, ամենեքին ամայի են վանքն և գեօղորայքն խպառ։ Ո՜հ, ո՜հ։ Բաւ է։

Վարելահողքն են այսոքիկ։ Որ է Ցղի տակն, Խորագետիկ կոչեցեալ տեղիքն, ի ծագէ ի ծագ. որոյ սահմանքն են, արևելեան կողմն, Դատենց հողն։ Հիւսիսային կողմն, Մեծ Սէլաֆատեղն, որ Արթուլու Սէլաֆ կոչի։ Արևմտեան կողմն, Կոնտն և հարաւային կողմն՝ Ցղի գլուխն։ Դարձեալ՝ Ռեգանտափ կոչեցեալ հողն, և երկու Ծվարներն մինչև ի Կատեպանի Կոնտն. զորս Հայոցթառու գեօղականքն տան վախմ՝ սոյնոյ վանքիս։ Գիտ զԼախուպնամէն Հայերէն . . . ։

Դարձեալ՝ Աւազնեբ կոչեցեալ տեղեն մինչև ի Սաբաթ աղբիւրն, և նոյն Սաբաթ աղբեր ջուրն, Ջըպաձորու ջուրն, և Իշխանախոռ կոչեցեալ տեղւոյ մերձ աղբիւրն, սոքա ամենքեան սոյնոյ վանիցս են ի Գրիգոր Մագիստրոսէ անտի նուիրեալ։ Դարձեալ՝ ի սոյն գեօղս, սոյն գեօղացի Տէր Անդրէասն ծախէ սոյն վանից առաջնորդ Մաղաքիա վարդապետին Լ սոմարէն տեղ հող մի՝ մէկ թումանի, ի ՌՃԾԷ թուին տաճկաց։ Զորոյ զղապալայն գիտ ցուցական . . . ։

Դարձեալ հինգ սոմարէն տեղ հող ևս ի Կոխդ գեօղն ունի սոյն վանք. զոր նոյն գիւղացի Փիլումի որդի Մանուկն է ծախեալ հինգ հազար դինարի, ի ՌՃՁԶ թուին մերոյ։ Գիտ զղապալայն Հայերէն։ Այլ և ի սոյն գեօղս ունի զերկուս ջրաղացս։ Այլ և ունի ևս ի գեօղս յայս մէկ բաղչայով



տուն՝ զոր Արգուլեցի Աղասու որդի Խալաֆն ծախէ սոյնոյ վանքիս, սորին Առաջնորդ Յովհաննէս վարդապետի ձեռամբն՝ վեց հազար դինարի. ի ՌՃՂԴ թուոջն մերում։ Գիտ զղապալայն Հայերէն . . ։

Ունի և զայգիս յԵրևան քաղաքն, որոց զօրպէսն տես. Նախապէս սորին Առաջնորդ Մատթէոս վարդապետն առնու զայգի մի՝ ի Տէրունի որդի Աստուածատրէն իւր հնձանովն՝ քսան և վեց թումանի, ի ՌԿԹ թուին տաճկաց։ Որոյ կողմունքն գրին, մահտեսի Յովհաննէսի այգին՝ (որ յետոյ և սոյն Յովհաննէսս զայս այգիս տայ վախմ սոյն վանքիս.) Մրխանին այգին՝ (որ վախմ է սրբոյ Աթոռոյս), Լօք Մահմատի և Քիւթուրի այգիքն։ Գիտ զղապալայն ցուցական . . . ։

Վասն սոյնոյ այգւոյս սոյն Աստուածատուրս յետոյ զհայերէն վախուպնամս մի ևս տայ, ի ՌՃԺԱ թուին մերոյ։ Դարձեալ՝ կից սոյն այգւոյս, խոճայ Գրիգորի որդի Քեալանդար Սահակն ունելով զայգի մի, որով զկէսն վախմ տայ սոյն վանքիս, որոյ կողմունքն գրին, սոյն այգւոյ կէսն, մահտեսի Յովհաննէսի այգին, քուչէն, և վերոյ յիշեալ Աստուածատրի այգին։ Եւ զկէսն սորին միաբան Յովհաննէս վարդապետն առնու՝ ի սոյն Սահակէ՝ երեք թումանի, և վախմ տայ ևս սոյն վանքիս։ Որոյ կողմունքն գրին, նոյն վերոյ յիշեալ կէսն, սրբոյ Աթոռոյս վախմ Մրխանենց այգին, և վերոյիշեալ Աստուածատրի այգին. գիտ զղապալայն և զվախուպնամայն ցուցակօքն։ Որք գրին ի ՌՀԴ թուին տաճկաց։ Դարձեալ վերոյիշեալ մահտեսի Յովհաննէս (որ է Ուլուբէկի որդի) զիւր այգին (որ սահման գրեցաւ ի վերդ) տայ վախմ սոյնոյ վանքիս՝ ձեռամբ սորին Առաջնորդ Մատթէոս վարդապետին, ի ՌՁ թուին տաճկաց. որոյ կողմունքն գրին, Ամիրբէկի այգին, նոյն վերոյիշեալ այգեքդ. գիտ զվախուպնամայն ցուցական . . . ։ Յետոյ զայսոսիկ միացուցեալ շինեն մի մեծ այգի։ Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն, ի ճառս մաղաֆութեան ի գրեանս դիւանագրաց։ Դարձեալ ունի սոյն վանքս ի յԵրևան քաղաքն զձեռք մի տուն իւր բաղչայովն, զոր սորին Առաջնորդ Մաղաքիա վարդապետն առնու ի Գասպարի որդի Բաբիջանէն՝ յիսուն ղուռուշի, ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Որոյ կողմունքն են, Պետրոսի Կարապետի, Բարխուտարի և Խուպոնց Սաւրաղի տունքն և քուչէն։ Գիտ զղապալայն ցուցական . . . որ է Վանանց տունն։ Ունի ևս ի յԵրևան քաղաքն զձեռք մի տուն ևս, զոր սորին Առաջնորդ Ազարիա վարդապետն առնու ի Պօղոսէն՝ ութն հազար դինարի, ի թուին տաճկաց ՌՃԾԸ։ Որոյ կողմունքն են, Պօղոսի և Ազարիայ վարդապետի տունքն, և երկու կողմն քուչայ։ Գիտ զղապալայն ցուցական . . ։ Դարձեալ ունի ի Նորագեօղ զայգի մի վեց տախտակ՝ որ չորս տախտակն ի վաղուց հետէ վախմ են տուեալ, և զերկուս տախտակն Նորին Առաջնորդ Մա-

ղպքիս վարդապետն առնու ի Սուլէյմանբէկ տաճկէն՝ քսան ղուռուշի, ի ՌՃԼԹ թուին տաճկաց։ Գիր զղապալայն ցուցակաւն . . . ։ — Վասն սորա փաշայի միոյ գիր մի ևս գոյ ի սոյն թուոջս գրեցեալ։ Գիր ցուցակաւն . . . ։ Դարձեալ սորին Առաջնորդ Ազարիա վարդապետն կից սոյն այգւոյս, զտախտակ և կէս այգի մի ևս առնու ի յԵրևանցի Տէր Յովհաննիսէն՝ երկու թուման և երկու հազար դիանի, ի ՌՃԿԲ թուին տաճկաց։ Որոյ կողմունքն գրին Դանիէլի փայն, քուչէն, Մոլլա-քեալ-պալու այգին և սառած Սալմանի այգին. գիր զղապալայն ցուցակաւն . . . ։ Եւ կից սմին զկէս տախտակ այգի մի ևս ունի, զոր Տէր Մոսէսի որդի Յոսէփն առնու ի սոյն գիւղացւոյս՝ երկու թումանի, և տայ յիշատակ սոյնոյ վանքիս, ի ՌՃԾ թուին տաճկաց։ Որոյ կողմունքն գրին, վերոյ այգիքդ, Աբխողումի այգին, և Զանգիբախարն։ Գիր և զայս ղապալայս ցուցակաւն . . . ։ Զայգի մի ևս ունի կից սոյն այգեացս, (որ է Երամի չրաղ անյիշատակ Մատթէոսինն) զոր Երևանցիք տան վախմ սոյն վանքիս, ի ՌՃՂԶ թուին մերոյ։ Գիր զհայերէն վախֆնամայն։ Որոյ կողմունքն գրին. Աւետի և Սալմանի այգիքն, և քուչէն։ Զայգի մի ևս ունի կից սոյն այգեացս՝ մէկ մեծ տախտակ, զոր Կոնտեցի Կոնկորենց Յակոբն տայ սոյն վանքիս։ Այժմ Անանիայ առաքեալն ունէ։

Այլ և ունի ի Գառնի զբաղչայ մի մերձ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն։ Այլ և յետ կոյս լանջին զհող մի՝ զոր Գրիգորենց հող կոչեն։ Այլ և զհող մի ևս, զոր Դաստապիւլենց Կիրակոսի Քարուտ ասեն։ Այլ և ունի յիւր մօտն սոյն վանքս զբաղչայ մի ի վաղուց հետէ, ի նիւքոյ ի սուրբ Յարութեան, զոր Հաղնազարի որդի Խաչատուրն է տուեալ։ Այլ և մինչ Գրիգոր Մագիստրոսն վերահաստատէ զսուրբ վանքս այս, զշրջակայ վայրս սորին բոլորն գրամով գնեալ յիշատակ տայ սոյնոյ վանքիս, որպէս գրեցեալ արձանն յայտ առնէ, որ ի վերդ գրեցաւ։ Երևանու և Նորագիղու այգիքն և Գառնու ջրաղացն, և այլք ոմանք յիշին ի ԺԴ գլուխն, ի ճառս միւրվէիզի գրեանցն։

Սրբոյն Խորվիրապայ վանից որդիսութիւնքն։

Վանքս այս (որ է ի Գառնոյ գաւառին, և է տեղի չարչարանաց և բանտ սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, յորում եկաց ամս երեքտասան) նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ . . . ։ Ունի զվիճակս յերկրոջս Երևանու զՎեդի, զԱրկուռի, զԱրտաշար, զՄուշաղբիւր, զՋղուն, զՎանստան, զՄանկուս, զԱւանիկ, զԼանիկ, զԴեղձնավանք, և զՈւսձաձորն բոլոր։

Վանքս այս ի բառնել թագաւորութեան Պարսից, յամս քանիս ամայացաւ (որպէս և այլք բազումք), զորոյ եկեղեցիսն և զպարիսպն, զոմ-



խաչանց և հանգոյք պարշտութեանց էին արարեալ տաճիկք. և մեք յաջողմամբն Աստուծոյ ի բաց վանեալ զտաճիկսն, մաքրեալ զվանքն, բերաք ի շինութիւն, և կարգեցաք զառաջնորդ և արարաք վանք միաբանակեցաց՝ որպէս յառաջն, ի փառս Աստուծոյ և սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ, ի ՌՄԾԴ թուոջըն մերում։ Որ և է չէն և հաստատ ի մերում ժամանակի։

Այրոց վանից որդիսութիւնքն։

Վանքս այս (որ է ի Գառնի գաւառին, և յանուն սրբոյն Ստեփաննոսի քահանայի որ ընդ սրբոց Հռիփսիմեանցն էր) նախապէս հիմնարկեցաւ ի թուոջն . . . ։

Ունի զվիճակս յերկրոջս յԵրևանու, զՃաթղուան, զՄեծ Գիլան և զՓոքր Գիլան։

Սրբոյն Գեղարդեայ վանից որդիսութիւնքն։

Վանքս այս (որ և Զագավանք և Զայղայթարան ևս կոչի) նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջն . . . ։

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու, զԶագավանք, զԶագ, զԱւան, զՇըհայն, զԱրամուս, զԱղասօր, զԱրախուսս։ Ունի ևս զմիքատու գեօղ, զիւր մերձ գեօղն Զագ կոչեցեալ, յորմէ առնու զառաջնորդս։ Զոր Երևանցի Մոծակենց Մկրտիչն գնեալ տայ վախմ սոյնոյ վանքիս ի ՌԿ թուոջն մերում։ Այս ի ճակատ մատուռին նոյն վանիցն արձանագրեցեալ է. որոյ յաղագաւ բազմակնիք թուղթ մի ևս գոյ տաճկերէն, զոր գրեն և կնքեն Գըրխուլաղու նահիայի Հայք և տաճիկք, վկայելով երդմամբ թէ Զագավանք գեղջ մուլքն Գեղարդեայ վանիցն է։ Զոր գոցես ցուցակաւն . . . ։

Վարկյանողն սոյն վանիցս։

Բազմաշէն կոչեցեալ մեծ հողն, որ է ի մէջ Եղուան և Շհապ գեօղօրէիցն, որոյ վերին կողմն առուի բանտն, ներքի կողմն Թնդոցնիրն, մէկ կողմն գետն, և միւս կողմն ճանապարհն. ի բնէ սոյն վանիցս է։ Որոյ յաղագաւ բազմակնիք վկայութեամբ թուղթ մի գոյ տաճկերէն։ Գիր ցուցակաւն . . . ։

Այլ և սորին յաղագաւ գիր մի ևս գոյ տաճկերէն, յորում միաբանք սոյնոյ վանիցս արդ առնեն խանին. և խանն թայխայ գրէ ի ճակատն. և նորին ի լուսանցն գրէ թէ՝ հողս այս Զագավանիցն է։ Գիր ցուցակաւն ի ՌՃԾԶ թուին տաճկաց։ Ռաղամ մի ևս ի Նատրշահէն գոյ վասն սոյն

հողոյս ընդ արգոյի Վարդան վարդապետին. ի ՌՃԾԼ: թուին տաճկաց. Գիտ ցուցական . . . . :

Այստեղ կոչեցեալ մեծ հողն, որ է ի մէջ Աւան, Զագ և Տաճարափակ գիւղօրէիցն, սոյնոյ վանիցս է։ Որոյ յաղագս բազմանկնեք վկայութեանն թուղթ մի գոյ տաճկերէն. Գիտ ցուցական . . . . Ճանապարհն որ յԱւանայ ի սոյն վանքս, ի ներքոյ նորին ճանապարհին Կեչուտ կոչեցեալ հողն սոյն վանիցս է. Որոյ կողմունքն գետն և ճանապարհն։ Ի գլուխ սոյն Կեչուտ կոչեցեալ հողոյս առուն, որ ի գետոյն ելեալ ռուզէ մինչև ի Դաղի, և մինչև ի Խաչերն Աւանայ, Զագայ գիւղացիքն ծախեն սոյնոյ վանքիս։ Մեծ հող մի ևս՝ հարիւր սոմարի տեղ, ի Շհապ գիւղն ունի որոյ կողմունքն են, Զագայ ղըն, գետն, ջրաղացքն և կամուրջն։ Մեծ հող մի ևս Ելառ գիւղացիքն տան սոյն վանքիս, որ Ծաղկեւտ կոչի, որոյ կողմունք են, Ելառայ առուն, ճանապարհն, Ելառայ բլուրն և գետն։ Երկու այգի ի յԵրևան քաղաքն, մին ի ձորն ի ներքոյ Նորք գեղջն ի վերայ Դրխթուլաղու գետոյն, որ ի ընէ վախմ է սոյն վանքիս, որ այժմ սերմանելի արտ է. զոր Հաճի-Աճմատ խանն զաւթեալ էր, մեք յետս առաք, և է ի ձեռս մեր։ Երկրորդն ի յԵրևան ի կողմն Դամուրբուլաղու, ի ներքոյ Նորքայ ճանապարհին, որ է ի ձեռս մեր. որոյ յաղագս գրեանք գոն՝ գացես, Անտօնենք են վախմ տուեալ սոյն վանքիս։ Ի Զագավանք գիւղն՝ ունի մէկ ջրաղաց, կալ, մարագ, գոմ, և Դ պարտէզ.ք։ Ի միւս Զագ գիւղն՝ ունի մէկ ձիթահանք, երկու պարտէզ.ք, մինն Դօլումեանց Վարդանէն յիշատակ, և միւսն Աղամէն։ Ի Շհապ գիւղն՝ ունի մէկ ձեաք տուն, և մէկ մարաք և մէկ գոմ։ Ի յԱւան գիւղն՝ ունի զերկս բաղչայս, միոյն ղապալայ գոյ տաճկերէն, զոր Վարդան վարդապետն է առեալ յԱւանցի Հայրապետի որդի Զաքարիայէն։ Ի յԱռինջ գիւղն՝ ունի մէկ ջրաղաց, զոր Վարդան վարդապետն է առեալ ի յԱռինջեցի Արզումի որդի Ահարօնէն։ Գոյ ղապալայն տաճկերէն։ Ի յԱղասոր գիւղն՝ ունի զերկու ջրաղացս, զոր նոյն գիւղացի Տէր . . . Իւիցու որդիքն տան սոյն վանքիս, մին ի տեղի պարտուց իւրեանց, և միւսն հոգեբաժին հօրն իւրեանց։

Սրբոց Առաքելոց վանից որպիսութիւնքն։

Վանքս այս (որ Կարենսու վանք ևս կոչի), Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուոջն . . . :

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու, զԿարենիս և զԴալաօրան . . . :



Կէչառիսու վանից որպիսութիւնքն։

Վանքս այս . . Նախապէս հիմնաւորեցեալ է ի Թուոջն ՆԽԴ, յԱպիրատ իշխանէ։

Ունի զվիճակ ի . . զԲուրտակն, զՀարպանտն, զԸշակղուտուրան, զԹաքալուկն, ևս զՇօորադն։

Մաքենեաց վանից որպիսութիւնքն։

Վանքս այս . . . Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուոջ . . . :

Ունի զվիճակս ի Գեղարքունոյ նահիէն, ի կողմն Արեգունոյ, զԿոթ, զՀոտած աղբիւր, որ Դրխթուլաղ ևս կոչի, զՑրտագէտ, զՍալամալէք, զՆշխարք, զերկու Կզնուտն մեծ և փոքր, զԿածիս, զԲար, զՎարդենիս, զԲաւթառանոց, զՍալկուտ, զՓառակունիս, զԲոլատակ, զԿէտանոց, զՎանէվան, զԱխէնիս, զԿալթիկ, զԿալթաշէն, զԱղջաքիլիսէ, զՄաքենիս, զԿարմիրշէն, զՎելիշէն, զԲասար, զԾուկրուկ, զԽօսկաշէն, զԱկունք, զԴարկիս, զՈսկեշէն, զԱնմեռ, զԽոլինակ, զՄազրայ, զԷտիլ, զԴաւալանոց, զՍոթ, զԿալէր, զԱղբաունէր, զԾրիցաշէն, զՋաղացաձոր, զՀամամթիար, զԴարանակս, զԱղջաղալայ, զԻրիշատ, զՈկունիս, զՋիլ, զԱրտաւուճ, զԳետիկ, զԿարմունջ և զԼարաքեափանակ։

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով, զՎարդենեաց անապատն, զԿոթայ անապատն (որ Կուսանաց է), զՍալկուտի անապատն, զԲոլատակի անապատն, որ է անուամբ սուրբ Աստուածածնին, և զանապատ մի ևս ի մէջ ծովուն որ Ագա կոչի։

Խոշրավանից որպիսութիւնքն։

Վանքս այս . . Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուոջ . . . :

Ունի վիճակս զբոլոր երկիրն Քեօլանու, որոյ Հայերէն անունն Ծարայ երկիր կոչի, որ է սահմանակից Խամսայու. բայց Էջմիածնի է վիճակեալ, և ընդ ձեռամբ Երևանու իշխողին։ Որոյ գիւղօրայ.քն են այսոքիկ. Էրք, Ծնկլանց, Ծուղ-Կարմիրշէն, Սալամալէք, Քաւթառանց, Ուռուցփոր, Ատարէնիս, Արեգունբուղաշէն, Հոսաքար, Կեաւալու. սոքա յայսկոյս լերինն են, կից Արեգունւոյն Գեղամայ։ Իսկ յայնկոյս լերինն, Մեծ Ծար, Կաժ, Անուխս, Խօլօզանց, Դաշտակ, Հաճար, Ապահէն, Ճումէն, Քարատակ, Զուար, Մաս, Սևաջուր, Ծովատեղ, Խրանց, Հալուճ, Մոթանց, երկու Դաւաչխուր, մեծ և փոքր, Լև, Եանշաղ, Բարսեղի շէն, Մէյտանն, Երիցիշէն, Խուլթավանք, Զափար, Կեարաք, Նորշէն, Խնթրավանք։

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով, զԽնդրավանից անապատն, և զՃարայ անապատն։

Հայրեվանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ և կոչի . . . որ է ի Գեօղարքունի) Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուոջ . . . ։

Ունի զվիճակս ի Գեօղարքունոյ Նահիէն, զՓոնադար, զԿկավանք, զԴալուդարաշ, Ափասար, զԲիդնի, զԳուլալի, զՆորատուս, զԳշլախ, Առնեղի, Գանձակ, Բուզխանայ, զԳարաբիլիսայ, զԴուտանկի, զԵկդանկի, զՄէդանկի, զԲեհամանտրալաղ, զՊարոնբէկի գեղ, զԽշլաձագ, զԲեկիթ, զԱզատ քաղաք, Հասանքալաղ, Կարմիրչէն։

Ունի և զանապատս ընդ ձեռամբ իւրով, զԴափուցվանք, որ է Կուսանաց՝ առընթեր Նորատուսոյ։ Զանապատ մի և Կուսանաց, ի նոյն Նորատուս գեղջն։ Զանապատ մի և, Ոսկեվանք գեղջն, որ և է կուսանաց։

Շղռաշրայ վանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ կոչի սուրբ Գրիգոր, որ և է ի Գեօղարքունի) Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուոջ . . . ։

Ունի զվիճակս ի Գեօղարքունեաց Նահիէն, զԿորզարակ, զՄեծ Զագ, զՓոքր Զագ, զԵանխատ, զՇղուաք, զԾակքար, զԵրբէճի, զԲեթավոր, զԴիլանչի, Կարմիրքար, և Կարմիրքար, զԵաստիեոլում, զՄարիս, զԲալախատափ, զԳրացաշէն, զԱմրդար, զԱլթունթալաթ, զԿարմիր ադշիր, զԴառնակիր, զԳիլիշէն, զՀարուլ։

Մասրուց անապատն և ընդ ձեռամբ սորին է։

Սեվանոյ անապատի որպիսութիւնքն.

Անապատս այս որ է ի Ծովակն Գեղարքունեաց, որ և . . . Նախապէս հիմնարկեցաւ ի Թուոջ . . . ։

Ունի զվիճակս ի Գեօղարքունի, զԿախմախի, զԲառակալ, զԼարգել, և զԼարգել, զՓշմակալ, զԲուղտաթափայ, զԳարադալու, զՊորտակ, զԿորատեղ։ Իսկ ի Ծաղկունեաց նահանգէն զայս լինչ ունի. զԴրախտիկ, զՍուրեծառ, զՄեծատափ, զՋիպուխլու, զՑամաքաբերդ, զԳոմաձոր, զԼարսեր, զՇալխ, զԿօրբել, և զԾաղկունք։

Բջնոյ վանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ և կոչի սրբուհւոյ Աստուածածնի վանք) որ է ի Կոտեաս գաւառի, մերձ Հրազդան գետոյն։



Ունի զվիճակս ի Կոտէից գաւառի, զՔանաքեռ, զԿեթրան, զԱրծնի, զԿլան, զԳեամիէս, զԹուլթ, զԳեօք-քիլիսայ, զՔեա մալ, զՔանքան, զԱգորան, զԴըղլղալայ, զԴղլօրան, զԹէգխարապ, զԵղնաջար, զԱղլաքակ, զԱւազանք, զԿարմրաւերակ, զՀազարաբերթ, զՆանունիս, զԱրքօլ, զԿաբէնուց, զԳզկրաշէն, զՕզան, զԳրանկանոց, զԹեղի, զԱլարեր, զԱլաճաքիլիսայ, զԴառգռ, զԱրտազաքան, զՄեղուս, զԴալուլար, զԲջնի և զԾար։ Ի Ծաղկունիս գաւառին, զՕղրաձոր, զԵայջիլար, զԴգմաշէն, զԹիթենաձոր, զՌնդամալ, զԳառնեղի, զՆախամար, զԱղփարայ, զԱզատէն, զՋամանկուտ, զՇխեր, զԿորկոտան, զԽորաձոր, զԿաղս, զՄասրիս և զՍօլաք։ Ունի և մէկ դանկ. մուլքն Կեղաւն գեղջն, զոր առեալ է սոյնոյ վանքիս առաջնորդ Մեսրոպ վարդապետն՝ ԸՌ դիանի, ի Յովանիսի որդի Մկրտչէն, ի ՌՃԾԴ Թուին տաճկաց։ Գիտ զղարալյն ցուցակաւն . . . ։

Այլ և ի Շնգաւիթ ունի զհող մի ԾԴ սոմարի տեղ. զոր առեալ է սոյնոյ վանիս Առաջնորդ Յովհաննէս վարդապետն ի նոյն գեօղացի Փանոսի որդի Նարինէն՝ երկու թումանի, ի ՌՃԻԸ Թուին տաճկաց։ Որոյ սահմանքն գլին՝ Այվազի հողն, խանտակն, ճանապարհն և ծախողի հողն։ Գիտ զղարալյն ցուցակաւն։

Այգիք սոյնոյ վանքիս ի Կեղաւն։ Սոյնոյ վանից առաջնորդ Մեսրոպ վարդապետն ի Կեղաւն գեօղն զայգի մի առնու ի Սիմոնի որդի Մարտիրոսէն՝ մէկ թումանի, ի ՌՃԲ Թուին տաճկաց։ Որոյ սահմանքն գլին, Առաքելի Մահմատ-դուլու, Խաչատրի այգին, և Եօնջալղ մի։ Գիտ զղապալյն ցուցակաւն . . . ։ Դարձեալ ի սոյն գեօղս Սարգսի որդի Արզումն զերկու տախտակ այգի մի և, խարապ հնձանովն, ծախէ նոյնոյ Մեսրոպ վարդապետին՝ տասն և երկու հազար դիանի, ի ՌՃԴ Թուին տաճկաց։ Որոյ սահմանքն գլին, վերոյգրեալ այգին, Աւետքի այգին, ծախողի եղբօր որդւոյ այգին, և Թանգրի Դուլու այգին. գիտ զղապալյն ցուցակաւն . . . ։ Դարձեալ ի սոյն գեօղս Թարաղուլի որդի Գրիգորն զկտոր մի այգի ծախէ սոյնոյ վանից առաջնորդ Դաւիթ վարդապետին՝ եօթն հազար դիանի ի Թուին տաճկաց ՌՃԻԱ։ Որոյ կողմունքն գլին, վերոյիշեցեալ վանից այգիքն, Սարգարի այգին և սարն։ Գիտ զղապալյն ցուցակաւն . . . ։ Կից սոյնոյ այգւոյս, նոյն Թարաղուլի որդիք Գրիգորն և Յակոբն զայգի մի և, (որ եօնձալղ և ասի․) ծախեն նոյն Դաւիթ վարդապետին՝ եօթն թումանի ի տաճկաց Թուին ՌՃԻԳ։ Որոյ սահմանքն, վանից այգիքն, և Սարգարի այգին։ Գիտ զղապալյն ցուցակաւն . . . ։ Սոցա հայերէն Բ զապալյաւս գոյ . . . ։ Սոյն գեօղացի և սոյն Թարաղուլի որդի Գրիգորն, իւր եղբայր Յակոբի և քեռ Սանդխտոյ կամաւն, զայգի մի ծախէ նոյնոյ վանից առաջնորդ Յովհաննէսն վարդապետին՝ երեք թումանի, ի տաճկաց Թուին ՌՃԻԷ։ Որոյ

կողմանքն գրեն, Գրիգորի այգին, մէկ հոնձաղ. գիտ զղապալյան ցուցական . . . ։ Սոյն գեօղացի Սիմոնի որդիք Թորոսն և Դովլաթպէկն, ի սոյն գեօղս ծախեն զայգի մի Նոյն Առաջնորդ Յովհաննէս վարդապետին՝ վեց թումանի, ի թուին տաճկաց ՌՃԻԸ։ Եւ սոցին քոյր Խանում Աղայն ևս զիւր բաժնին յատուկ ղապալայ գրեցուցանէ ի վայր կոյս նոյն ղապալային, և ծախէ նոյն վանքին։ Որոյ սահմանքն գրին, վանից այգին, հոնձաղն, Սարն և Սարգսի այգին։ Գիտ զղապալյան ցուցական . . ։ Սոյն գեօղացի Գրիգորի որդի Թօխումն, ի սոյն գեօղս զբաղչայ մի ծախէ Նոյնոյ Առաջնորդ Յովհաննէս վարդապետին՝ յիսուն շահւոյ, ի տաճկաց թուին ՌՃԻԹ։ Կողմանքն Անանիայի բաղչայն, առուն և Եկեղեցւոյ կողմն. գիտ զղապալյան ցուցական . . ։ Դարձեալ ի սոյն գեօղս Սիմոնի որդի Դօլումն զայգի մի ծախէ սոյն վանից Առաջնորդ Կարապետ վարդապետին՝ երկու թումանի, ի ՌՃԾԴ թուին տաճկաց։ Որոյ կողմանքն են, վանից այգին, Սիմոնի բաղչայն, ձորն, և Դօլումի բաղչայն։ Գիտ զղապալյան ցուցական . . ։ Դարձեալ երեք ղապալայ ևս հին գոն վասն սոյն այգեաց . . ։ Ի Քանաքեռ գեօղն, սոյն գեօղացի Յարութիւնի որդի Գրիգորն, և սորին հօրեղբայր Անդրէասն, զիւրեանց բաժին այգին, վախմ տան սոյն վանքիս, ի ՌՃԼԳ թուին տաճկաց։ Որոյ կողմանքն են, Յարութիւնի և Ջանումի այգիքն, Խոնձաղն և քարափն։ Գիտ զվախումնամայն ցուցական . . ։ Ի Քանաքեռ Աղամալի կինն զայգի մի ծախէ սոյն վանքիս Առաջնորդ Յովհաննէս վարդապետին՝ տասն և երեք հազար դիանի, ի տաճկաց թուին ՌՃԻԳ։ Որոյ սահմանքն են, սոյն վանից այգիքն, Ալլահվերդի այգին և առուն։ Գիտ զղապալյան ցուցական . . ։ Դարձեալ՝ ի Քանաքեռ Վարդիկ անուն աղջիկ մի զմէկ լաւ բաղչայ հանդերձ իւր տնկոքն, տայ վախմ սոյնոյ վանքիս, ի ձեռն սորին Առաջնորդ Յովհաննէս վարդապետին, ի տաճկաց ՌՃԻԱ թուին, և ի ՌՃԾԷ թուոջն մերում։ Գիտ զղապալյան ցուցական . . ։ Յօշական գիւղն ունի վանքս այս զմեծ և հռչակաւոր այգի մի, զոր Էմինենց այգի ասեն, զոր առեալ է սոյն վանից Առաջնորդ Յովհաննէս վարդապետն ի Վէգիրէն (զորոյ պատմութիւնն է ի . . գլուխն սոցայք). յետոյ Էմինի որդի Անդրէասն դաւի առնէ, ընդ Դաւիթ վարդապետին. (որ զկնի Յովհաննէս վարդապետին Նստի Առաջնորդ սոյն վանքիս)։ Իսկ Մշեցի Աբրահամ Կաթուղիկոսի հրամանաւն բան մի տան Անդրէասին և ի բերանոյն գիր առնուն հայերէն, ի ՌՃՀԲ թուին մերոյ։





Բճնեցի Վարդանի որդիք Մելքոնն և իւր քոյր Անգլուտն, և այլք ի նոյն գեօղն զիւրեանց մէր Թուրվանտայի սեպհական մուլք խոտհարքն (որ է ի յափն Հրազդան գետոյն, տան վախմ սոյնոյ վանքիս. ի ՌՃԽ թըւին մերոյ։ Երկու կողմն Հրազդան գետն, ի վերն քարափն, և ի հարաւն. Արտաշաքանու սահմանն։ Դարձեալ՝ Բճնեցի Մէլիք բէկի որդի Սարգիսն ծախէ նոյնոյ վանից Առաջնորդ Սիմէօն վարդապետին մէկ խոտհարք, ի նոյն գեօղն. (որ է չխման մի Թնդոց կոչեցեալ տեղւոյ յառաջն.) հինգ հազար դիանի, ի ՌՃԼԷ թուին մերոյ։ Դարձեալ Նանասեցի Շիրվանի որդիք, Յակոբ և Վարդանն, ի ձորոջն մէկ ծառաստ տան վախմ սոյն վանքիս, ի ձեռն սոյն վանիս Առաջնորդ Յովհաննէս վարդապետին։ Ի թուին մերոյ ՌՃԿԲ, մէկ կողմն Մարալի բաղչայն և միւս կողմն Եկեղեցին։ Բճնեցի Գալուստի որդիք Սիմոնն և Խեչիրաքն զիւրեանց էրանկի չիմանն տան վախմ սոյն վանիցս ի ձեռն Առաջնորդ Դաւիթ վարդապետին, ի թուին մերոյ ՌՃԿԳ։ Որոյ մէկ կողմն, միջի աղբիւրն, և միւս կողմն Տէր Յովսէփի չիմանն։ Բճնեցի Փիլիպպոսի որդի Ավիրայն, մէկ կտոր տեղ, ի գաւառն Ամենափրկիչ կոչեցելոյն, տայ վախմ սոյն վանքիս, ի ձեռն Առաջնորդ Դաւիթ վարդապետին, ի ՌՃՁԲ թուին մերոյ։

Դարձեալ՝ ունի զկէս ջրաղաց մի ի Բջնի, զոր սորին Առաջնորդք Յովհաննէս և Դաւիթ վարդապետքն առնուն ի Ղազարէն և Յակոբէն՝ ութն հազար դիանի, ի ՌՃԿԵ թուին մերոյ. որոյ կողմանքն են, Սարուխանենց առուն, վանքի առուն և Բուլասանենց առուն, որոյ կէսն Ագիբէկենցն է լեալ։ Վարդանի և Մելքիսեթի որդիքն են Ղազարն և Յակոբն։ Դարձեալ՝ Բճնեցի Խաչիկի որդի Մաթէոսն և իւր որդիքն, մէկ ջրաղացի կիսոյ երեք բաժնին մէկ բաժինն՝ և մէկ Էրանկի կոչեցեալ ձօթն տան վախմ սոյն վանքիս՝ ի ձեռն Առաջնորդ Յովհաննէս վարդապետին։ Զվերոյ գրեալ Հայերէն ղապալայսդ՝ գտցես յԱթոռոջս։

Դրլաղայ վանից որդիխութիւնքն.

Վանքս այս (որ է ի Շիրակ գաւառին . . ) Նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ ՑԽԴ, ի Սմբատ թագաւորէն Բագրատունոյ։

Ունի զվիճակս զԴրլաղ և զՇիրակ։

Կոշայ վանից որդիխութիւնքն.

Վանքս այս (որ կոչի սուրբ Գէորգայ վանք.) որ է ի Նիգ գաւառի, Նախապէս ի թուոջ հիմնաւորեցաւ . . ։

Ունի զվիճակս զիւր Կօշ գեօղն, և զԱղունատուն։

### Տեղերոյ վանից որպիսութիւնքն

Վանքս այս (որ կառուցեալ է յանուն սրբուհւոյ Աստուածածնին ի կուրծն Արագածու ի վերայ ձորոյն Անբերդ կոչեցելոյ). Նախապէս հիմնաւորեցաւ ի Թուին . ։

Ունի զվիճակս զիւր մերձ գեօղն Տեղեր. զԲիւրական, Ագարակ, զԱղձ, և զՎ.ժան.

### Սաղմոսավանից որպիսութիւնքն

Վանքս այս (որ կառուցեալ է յանուն Սաղմոսաց ի մէջ Արագածու և Արայու, ընդ ափն և ի ներքոյ սորին ի մէջ ձորոյն և ի վերայ Քասաղ գետոյն, սուրբ անապատն որ Լուսաւորչի Անապատ կոչի.) Նախապէս հիմնաւորեցան ի Թուին Փրկչին մերոյ ի ՅԼ, ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ. Քանզի Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր, յորժամ լուսաւորեաց զհայս քրիստոնէական հաւատով, և զարդարեաց հոգևոր և Աստուածահաճոյ կարգօք և բարեզարդ կրօնիւք, շինեաց զեկեղեցիս և կարգեաց ըզքահանայս և զպաշտօնեայս. Ապա ձեռնադրեաց զկրտսեր որդին իւր զսուրբն Արիստակէս ի տեղի իւր Հայրապետ և կառավարիչ հօտին իւրոյ, և ինքն այնուհետև սկսաւ մեկնիլ յաշխարհէ և անտեսանալ ի մարդկանէ, և շրջիլ ի լերինս, ի յայրս և ի ձորս, և կեալ հրեշտակական վարուք որպէս անմարմին և ընդ Աստուծոյ միայն խօսակցիլ, զոր իսկ տեսանէր հանապազ. Որ և եկեալ ի ծայր լերինն Արագածու և առնէր անդ զաւուրս բազումս. ուր և յօրինեաց զտաճար մի փոքրիկ ի ներքոյ վիմի միոյ յանուն ամենասրբոյ Երրորդութեանն, և կախեաց ի նմա զկանթեղ մի առանց առասանի, և ելից զնա իւրովք արտասուօքն և խնդրեաց յԱստուծոյ, զի երկնային լուսով վառեցեալ անշէջ մնասցէ մինչև ի կատարած աշխարհի. որ և եղեն իսկ ըստ խնդրոյն. որ կայ մինչև ցայսօր ի փառս Աստուծոյ և ի պարծանս ծառային իւրոյ. (Զոր նոյն իսկ աչօք յայտնապէս սուրբ Գրիգոր ականատեսն յետ ժամանակաց. զորմէ յետոյ ասելոց եմք. որ վասն այնորիկ կոչեցաւ ականատես.) Արդ՝ երանելիս այս սուրբ Գրիգոր Լուսաւորիչս մեր, ի յամարայնոյ եղանակոջ ի գլուխ լերինս այսորիկ ճգնէր որպէս ասացաք, և ի ձմերայնոյ եղանակին իջանէր ի ստորոտ սոյնոյ լերինս ի ձորն Քասաղ գետոյն և անդանօր պարապիւր ի պաշտօնս Աստուածայինս. Որ և երբեմն ի ձորն մնայր, և երբեմն ի գլուխ ձորոյն ի բարձրահայեաց տեղւոջն. Վասն որոյ և յերկոսեան տեղիսն ևս շինեաց զփոքրիկ եկեղեցիս, և ելից մաքրակեաց միաբանեօք. և կարգեաց նոցա կանոնս և զԱստուածահաճոյ կարգս և զաւանդութիւնս. Զանուն վերնոյն կոչեաց Սաղմոսաց Անապատ, (զի միշտ ի սաղմոսերգութիւնս պարապէին.) և ներքնոյն անունն



կոչեցաւ Լուսաւորչի անապատ. Որք և կացին և մնացին այսու կարգաւ մինչև ի . . Թիւն մեր ի ժամանակս բարեպաշտ իշխանին Վաչէի և սրբոյն Գրիգորի ականատես վարդապետին (որ ի վերդ յիշեցաւ)՝ որ էր Առաջնորդ երկուց անապատացս. Ապա բարեպաշտս այս Վաչէ շինեաց զհրաշակերտ և զմեծ եկեղեցին գեղեցիկ և վայելուչ ձևով հանդերձ ներսի շինուածովքն և արտաքին գաւթովքն և այլովք պարագայուքն՝ որ կոչի սուրբ Սիօն և կամ Սուրբ Նշան, և զարդարեաց պարսպօք և այլովք բազմօք շինուածովք, որ կայ մինչև ցայսօր շնորհօքն Աստուծոյ, և կոչի Սաղմոսավանք.

Ունի զվիճակս Ապարանու նահիյէն, որոյ գեօղորայքն են, Բաշ-Ապարան, Մույք, Ղարանլըղդարայ, Ճանճիկ, Զարհաճի, Գիւմպէթլու, Գիւլըլու, Սարուբուդաղ, Դամջլու, Մոլլաղասում, Քիրաշլու, Ղարաբուլաղ, Աստուածընկալ, Կերուկարդ, Ղալաճը, Գիւլլուճայ, Բալչըլու, Ղըզըլբուլին, Ալիքուչակ, Շիրաղալայ, Բոյլուր, Արնագեօղ. Այլև ի Կարփու նահիյումն՝ զՍերկևիլ, զԱշտարակ, այլ և զկէս Հարապխանին. Քանզի զբոլոր Հարապխանէն ըստ Յօհաննավանքին գրեալ խառն և անորոշ. Այլև ի Գեօղարքունի զԳաւառագեօղն, (զՀարապխանի գեօղօրայսն ի ճաշըս Յօհաննավանքին տեսցես). Ունի զմիքատու գեօղօրայս, յորոց առնու ի տասնէն մէկ զմուլքս. Որք են, իւր մերձ եղեալ Սաղմոսավանք գեօղն, զորոյ զմէկ և զկէս դանկ միքի ղապալայն գտցես ցուցակաւն. . . . Զոր սորին Առաջնորդ Մանուէլ Վարդապետն առնու ի Մուրատէն և ի Մարիամէն, ի ՌԽԲ Թուին տաճկաց՝ երկու Թումանի. Իսկ զչորս դանկ և զկէս մուլքն վախմ ունի ի բնէ անտի. Գտի ևս վասն սոյն գեղջս հին ղապալայ մի ՄՁԹ Թուին տաճկաց գրեցեալ. Եւ ռաղամ մի ևս ի մեծ Հահապաւէն ի ՌԺԳ Թուին տաճկաց գրեցեալ՝ վասն երեք դանկին սոյն գեղջս, զոր ևս գտի ցուցակաւն . . . ։ Սոյնպէս և Քեարվանսարայ կոչեցեալ գեղջ Գ դանկ մուլքն (որ է մերձ քարեայ Քարվանսարային). որոյ վասն ի սորին Առաջնորդ Ոսկան Վարդապետէն Երևանցւոյ գոյ վկայական գիր մի, որ գրի ի Թուին մերոյ ՌՃԺ, զոր ևս գտի. Այլև Համամլու, Ալվաղալի, և Քուրտալի կոչեցեալ գեօղորէից մուլքն ևս են լեալք սոյնոյ վանքիս, բայց . . վարդապետ Առաջնորդն սորին ունելով զբարեկամ տաճիկ մի՝ հաւատալով նմա, տայ զղապալայսն սոյն գեօղորէիցս ի ձեռն տաճկին, տայ նմա և զգրամ, զի գնացեալ ի յԱսպահան ի Շահէն զռաղամ հանցէ ըստ ոճի ղապալայիցն, զի հաստատուն մնասցեն մուլք գեօղորէիցդ. Եւ տաճիկն գնացեալ՝ ըստ տաճկական բարուցն ի յիւր անուն դարձուցանէ զղապալայսն և զռաղամն, և եկեալ զաւթէ զմուլք վերոյ ասացեալ երից գեօղորէիցդ.

Վարելահողքն սոյնոյ վանքիս են այսոքիկ։

Երկու չուլուրմատեղիքն, որոց մինն մերձ վանքին, և միւսն ի ներքոյ վանքին, որոց կէսն վարելահողք են և կէսն Խոտհարք։ Մէկ հող ևս մերձ կալին և առաջի մեծ դրանն սոյնոյ վանից։ Սոյնոյ տեղւոյս մերձ դէպ ի կողմն Արագածու՝ Երկայնադարձ կոչեցեալ հողն։ Մեծ հողն երեսուն սոմարէն տեղ, որ է ի վերայ Ապարանու ճանապարհին, սոյնոյ տեղւոյս ներքին առաւելն ի վերայ ձորոյն տասն և ութն սոմարէն տեղ։ Մէկ հող ևս յիշեցեալ մեծ հողին լերին տակն, որոյ վասն մէկ Հայերէն ղաբալայ գոյ ի ՌՃՂԱ թուին մերոյ գրեցեալ. Ախտինքներ կոչեցեալ հողքն՝ երկուք կից իրերաց՝ ի գլուխ Վասակամուտ կոչեցեալ ձորոյն։ Երեք հողք և երեք մանր ձորք կից իրերաց, ի մէջ Սերկևլոյ և Ցուշու ճանապարհացն, որք Վասակամուտ կոչին, զորս Սերկևիլ գիւղականքն են տուեալ սոյն վանքիս, իբրու ապաշխարանք [ի]քեանց վասն յիմարաբար սպանանելոյն զիշխանն Վասակ։ (Ի ներքոյ սոյն հողոցս, դէպ ի մեծ ձորն, զերկուս հողս ևս Յօհանավանքին են տուեալ սոյն գիւղականքս՝ վասն սոյնոյ պատճառիս, որք ևս կոչին Վասակամուտք, որպէս յիշին ի տեղւոջն)։ Ի հիւսիսակողմն վանքին ի վերն խարակի, Գ ձորքն առ ափն մեծ ձորոյն։ Գիւղէիկի ձորոյ ի վանքի կողմն եղեալ հողքն (յորոց մէջն ճանապարհն է վանից ջրաղացաց) բոլորքն վանիցն են։ Այս ձորոյս ի միւս կողմն, ի վերնակողմն ջրաղացաց, երեք հողք ևս գոն։ Ի վերայ Գիւղէիկ ջրոյն եղեալ քարեայ կամրջի արևելեան և արևմտեան կողմանց հողքն սոյն վանիցս են։ Արնակօղի առտնիքն՝ որ է մէկ հող (որոյ կողմունքն են, մեծ ձորն, Գիւղէիկն, քարեայ կամուրջն և քարեայ հաւուզն) սոյնոյ վանիցս է. սորա յաղագս տաճկերէն վկայական գիր մի ևս գոյ. զոր գիտ ցուցական . . . ; Երկուք տաճկերէն վկայական գիրք և հուճէթք ևս գոն, որք յատկացուցանեն ըզսահմանս սոյնոյ վանից և Արնակօղին, զորս ևս գիտ ցուցակըն . . . . Տաճկերէն թուղթ մի ևս գոյ, որ յատկացուցանէ զսահմանս սոյնոյ վանքիս և Յօհանավանքին, զոր ևս գիտ ցուցական . . . ; Ունի զայգիս ի Յօշական և յԱշտարակ գիւղն, զորոց որպէսն ի գլուխն ի ճառս նոցին այգեացն տեսցես։ Դարձեալ ունի յԱշտարակ գիւղն զմէկ զերզամալի, և ի գլուխն շիրախանոյ, զորս սորին Առաջնորդ Աւետիք վարդապետն առնու ի Սարգսի յորդւոյն ութն հազար գնանի, ի ՌՃՁԷ թուին մերոյ։ Գիտ ըղղապալայն Հայերէն . . . , Մերձ սոյնոյ զտուն մի ևս ունի։ Որք այժմ աւերք են։ Ի մէջ բերդին Աշտարակու ունի զմէկ թանարի հանդերձ ներնատամբ և միով շիրախանայիւ, յորս կուսանքն բնակին։ Ի Սերկևիլ գիւղըն ունի զաւեր այգի մի, զբաղչայ մի, (զոր Սիմոնենց կոչեն), նաև զտուն մի (զոր Չիթչոնց Մարտիրոսի դուստր Անախաթունն տայ վախմ սոյն վանքիս)։



Գիտ զվախուպնամայն Հայերէն . . . ; Ունի ևս զձիթահանք մի ի սոյն գիւղս Սերկևիլ։ Ունի ևս զերկուս ջրաղացս ի վերայ Գիւղէիկ ջրոյն հանդէպ ինքեան, որք յիշեցան ի մէջ հողիցն։ Ջրաղաց մի ևս ի ներքոյ իւր ի մէջ ձորոյն ունի՝ զոր Ականատեսի ջրաղաց կոչեն։ Ունի ևս կից իւրեան զծառաստ բաղչայ մի։ Այլև ունի ի մէջ մեծ ձորոյն ի սիրտ քարափին զերկուս մեծ այրս, մին բնական իւրն է, և զմիւսն ի վերն սորին, զոր Կեանջուենք են տուեալ յիշատակ սոյն վանքիս։ Որ և ասի Գեանջուենց այր։ Այլև ունի զչորեսին ուխտատեղս, զորոց զբերան առնու. մին է սրբոյն Լուսաւորչի աղօթատեղն ի գլուխն Արագածու, որ ի վերն յիշեցաւ։ Երկրորդն ի ծոյն Արայու լերինն, որ Ծաղկեվանք կոչի։ Երրորդն է ի մէջ ձորոյն ի ներքոյ Սերկևիլ գեղջն յանուն Աստուածածնի վիմափոր մատուռ մի։ Չորրորդն է ի յԱշտարակ գիւղն Կարմրաւոր անուամբ անապատն կուսանաց։ Վերոյ գրեցելոցդ զոմանց որպէսն տես ի . . գլուխն ի ճառս մաղափութեան։

Սուրբ Լուսաւորչի անապատի որպիսութիւնք

Անապատս այս և սորին որպիսութիւնն յիշեցաւ ի ճառս Սաղմոսավանից. տեսցես անտանօր։

Յօհանավանից որպիսութիւնքն։

Վանքս այս (որ կառուցեալ է յանուն սրբոյ Կարապետին, ի Նիգ գաւառի), նախապէս հիմնաւորեցաւ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն մերմէ. քանզի ի բերելն զնշխար սրբոյ Կարապետին և յամփոփելն ի գաւառին, զմասն ինչ եբեր յերկիրս այս, և ամփոփեաց յայսմ տեղւոջ. և շինեաց ի վերայ տաճար մի փոքրիկ յանուն սրբոյ Կարապետին, և արար վանք միաբանակեցաց։ Յետոյ ի ՈԿԶ. թուին մերոյ, ի յիշխանութեանն Զաքարեայ իշխանին, ի նմանէ կարգեցեալ իշխող և կառավարիչ երկրիս Երևանու մեծահաւատ իշխանն Վաչէ շինէ զմեծ տաճարն զարմանալի տեսողաց՝ որպէս Սաղմոսավանքն։ Եւ յետոյ ի ՈԴԹ թուին, սորին որդի Քուրդ կոչեցեալն շինէ զմեծ գաւիթն հրաշալի ձևով, որք կան մինչև ցայսօր։ Եւ ի սրբոյն Գրիգորէ շինեալ փոքրիկ տաճարն (որ ասացաւ ի վերդ), աւերեալ էր ի ՌՃՁԳ թուոյն մերում, նորոգեաց Թրակացի Աբրահամ Կաթողիկոսն։

Ունի զվիճակս զԿարբին, զիւր փոքր գիւղն, զՓարպին, ու գէկն Շարապխանայ կոչեցեալ նահանգին։ Գիտեա զի Շիրակվան, և Ապարան, և կամ՝ Շարապխանայ, Յօհանավանք, Սաղմոսավանք, և Մարմարաշէն ի միասին են կերեալ խառն և անորոշ։ Ունի զմիքատու գիւղս, զիւր մերձ գիւղն Յօհանավանք, այլև զԳոթուրբուլաղ կոչեցեալ գիւղն։

Սրբոյն Սարգսի վանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ է ի Նիգ գաւառի կառուցեալ յանուն սրբոյն Սարգսի) նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ . . . ։

Ունի զվիճակս յերկրոջս Երևանու, զՑուշի, զԼազրվան, զերկու Թամիրսն, զԹալին, զՄաստարայ, զԳեօզլու, զՔեարվանսարայ, զՁրփլու, զԱղին, զԻլուն։

Մօղնու վանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ կառուցեալ է յանուն սրբոյն Գէորգայ զօրավարին ի Նիգ գաւառի) նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջ . . . ։ Եւ յետոյ նորոգապէս շինեցեալ մեծապէս և վայելուչ ի Նորին Առաջնորդ Մարտիրոս վարդապետէն ի . . թուին, ի ժամանակս Փիլիպպոս Կաթուղիկոսին։

Ունի զվիճակս, զիւր Մօղնի գեօղն, զՇահրիար, զՄոլաբայազիտ, զՋափարապատ։ Ունի միքատու զիւր մերձ գեօղն Մօղնի. բայց գիտեա, զի մուլք գեղջս այսորիկ Մուղնի կոչեցելոյ՝ է սրբոյ Աթոռոյս ի վաղուց հետէ, իսկ Փիլիպպոս Կաթուղիկոսն շնորհէ ձրիապէս սոյնոյ վանիցս ի ժամանակս սորին Առաջնորդ Մարտիրոս վարդապետին։ Որոյ զորպէսն տես լիովին ի . . գլուխն ի ճառս միքատուութեանն սոյնոյ գեղջս։

Վարձկանողքն սոյնոյ վանքիս են այսոքիկ.

Կաւահանք, երկու Անկանակներ, Անղաւակ, և Ջանջուղենց կոչեցեալ տեղիքն։ Այլ և Կեւ ճոթն, աւազ խլիցու հողն, Յակոբենց տեղն, ծովն, Մօտեղենց խուպանն, կոռաւոյն, Սևահողն։ Երկու զվարներն, տանձուտասեսենց խուպանն, կոռաւոյն, Սևահողն։ Երկու զվարներն, Եղիկըն, ծառուտի ճոթն, եօնջալղներն, Քոչարենց տեղն, տեննտահողն, Եղիկենց հողերն, Շահնազարենց հողն, Յովակիմի ածն, Յովակիմի հողն, որ Յարութիւնն առեալ էր։ Այլ և Ասլանի տեղն, Բաղալի հողն, դուան առաջն, և Գալստենց Աստուածատրի հողն։ Արդ յայսց գրեցելոց տեղեացս՝ Անկանակ կոչեցեալ տեղեաց միոյն՝ (զոր Տիրիճասի որդի մելիք Կարապետն ծախէ քսան և հինգ հազար դիանի, ի թուին Հայոց ՌՃԳ) և Գալստենց Աստուածատրի հողոյն, (զոր Աստուածատրի որդի Դաւիթն և Յովհաննէսն ծախեն տասն և երեք հազար դիանի, ի թուին տաճկաց ՌԿԳ, սոյնոյ վանքիս, ձեռամբ սոյնոյ վանից Առաջնորդ Մարտիրոս վարդապետին. զորոց) զղապալըյսն միայն գտաք, մինն Հայերէն և միւսն Տաճկերէն։ Իսկ միւսքն ի հարկէ ի բնէ անտի վախմ են սոյնոյ վանիցս։ Այլ և ունի ի սոյն գեօղս ի ձորումն զերկու չիմանս, (որ է խոտհարք). զոր առեալ է սորին Առաջնորդ Գրիգոր վարդապետն ի ՌՃԽԲ թուոջն մերում, ի Սարգսի որդի Յով-



հաննիսէն, զորոյ ղապալըյն գիտ Հայերէն . . . ։ Դարձեալ ունի ի Կարփի գեօղն զմարաք մի, զոր առեալ է սորին Առաջնորդ Դաւիթ վարդապետն ի Կարփեցի Թանգրիղուլու որդի Եաղուբէն՝ երեք հազար և երեք ապասու, ի ՌՂԲ թուին տաճկաց, զորոյ ղապալըյն գիտ Հայերէն . . . ։

Անանիայ առաքելոյ վանից որպիսութիւնքն.

Վանքս այս (որ է յԵրևան, որ է սրբոյ Աթոռոյս իւրայնովքն ամենաքումիք), նախապէս հիմնաւորեցաւ ի թուոջ . . . ։

Ունի զվիճակս զԱռինջ, և զամենայն Բոշայից ազգն։ Որոյ այգիքն գրեցան ի . . գլուխն ի ճառս այգեացն Աթոռոյս, և ջրաղացքն ի . . գլուխն ի ճառս ջրաղացացն։

Այս մատեան Զամբռ անուանեալ՝ գործ տաժանակիր քրտանց Սիմէոն բազմարդիւն Կաթողիկոսի Երեւանցւոյ, հանելով ցանկ վասն դիւրագիւտ լինելոյ խնդրելեացն, վասն որոյ ժողովեալ որ ինչ ի սմա համառօտակի ըստ այբուբենական կարգի դրոշմեցաւ աստէն ի 1828 թուականութեան Փրկչին մերոյ.

Ա.

Աղատո—Նէ—Ն Աթոռոյն Էջմիածնի յամենայն արքունական հարկաց՝ թէ Աթոռն, թէ կարգաւորքն, թէ անասունքն եւ թէ մշակաւոր եւ պտղատու վայրքն՝ քաջագործութեամբ Մովսէսի, Փիլիպպոսի եւ Յակոբայ Կաթողիկոսացն, եւ Աղէքսանդրու Ջուղայեցւոյ, Համատանցի Աբրահամու եւ Աստուածատրոյ (ազատք եւ վանորայք ոմանք), Կարապետի եւ Աբրահամու Թէքիրթաղցւոյ, Ղազարու եւ Աղէքսանդրի, Յակոբայ Շամախեցւոյ եւ Սիմէոնի, թէ Աթոռս եւ թէ բոլոր վանորայք երկրիս Երեւանայ հանդերձ ստացուածովք իւրեանց ազատք յօրինի եւ յետ հարկաց, բաց ի փոքր ինչ տրոց՝ որ ի ձեռն Կաթողիկոսացն լինէր. . . 130—152

Աղո—Նտո—Ն գեղջ գլեց դանկ մուլքն գնէ Մակուեցի Գրիգոր Կաթողիկոսն, եւ յետոյ ստանայ հաստատութեամբ Սիմէոն Կաթողիկոս. 129

Աճրէ գեղջ չորս եւ կէս դանկ մուլքն գնէ Յակոբ Կաթողիկոսն. . . . . . 124

Ի Վաղարշապատ գիւղս

Այգի ղոլի անուանեալ . . . 164
Այգի Մանկասարենց անուանեալ . . 165
Այգի Վերի անուանեալ )
Այգի Խանբաբին ) . . . 166
Այգի Մատթէոսի
Այգի Դաւթայ
Այգի Յարութեան — Հասարակօրէն կոչին Մխիթարենց
Այգի Խաչատրոյ — այգիք, եւ են այժմ վարելահողք. . 168
Այգի Մկրտչի
Այգի Տէր Ստեփաննոսի
Այգի Մխիթարի . . . 170
Այգի Խաչատուրի
Այգեստեղ Խանլըս կոչեցեալ . . . 155
Այգի մի Հռիփսիմեայ վանիցն
Այգի մի Շողակաթի վանիցն . . 167
Այգի մի Գայեանեայ վանիցն )
Այգի մի եւս Գայեանեայ վանիցն ) . . 170



ՅՕշական գիւղ.

Այգի մի մեծ Ներքի անուանեալ .
Այգի Արեգունի Վերի անուանեալ . .
Այգիք չորս . . .
Այգիք հինգ . . .
Այգիք ինն . . .
Այգի մի Հռիփսիմեայ վանացն . .
Այգի մի Շողակաթի վանացն . .
Այգի մի եւս Հռիփսիմեայ եւ Շողակաթի վանացն
Այգի մի սուրբ Սարգսի վանացն . . 171—176

ՅԱշտարակ գիւղ.

Այգիք հինգ . . . . 176—177

Ի Փարաքար գիւղն.

Այգի մի մեծ ի հարաւակողմն ճանապարհին Երեւանայ )
Այգիք հինգ . . . ) 177—180

ՅԵրեւան քաղաք.

Այգի մի գնեալ Միքայէլ վարդապետի ի տաճկէ միոյ
Այգիք երկու, որոց մինն կոչի Մարխանենց այգի՝ յիշատակ Յակոբին Սէթեան .
Այգի մի անուանեալ Ղարաղաշենց՝ յիշատակ Աբրահամու Սահակեան . . .
Այգիք երեք՝ կից առ իրեարս՝ Անանիայ առաքելոյ վանացն 180 182

Ի Նորագիւղ.

Այգիք երեք . . . . 182—184

Ի Ջրագիւղ.

Այգի մի յիշատակ Յակոբին Սէթեան, որ կոչի Թորոսենց այգի . . . . 184

Ի Դավրէժ

Այգի մի՝ պայմանաւ մնալ ի ժամանակս ինչ ի ձեռս տաճկի ուրուք . . .
Այգի մի մեծ ի սահմանս Դավրիժու ի Դուխուրղան գիւղ . . . 184

Ի Տփխիս.

Այգեստղ մի . . . . 185
Այգեստղ մի . . . . 207
Այգի մի մեծ ի Շուլաւէր գիւղ . . . 208
Աշտարակ գեղջ գվեց գանկ մուլքն գնէ Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոս, և յետոյ ստանայ հաստատութեամբ Սիմէօն Կաթուղիկոս . 128
Աջ սուրբ Լուսաւորչին թէ ո՞րբ և ուստի՞ բերաւ ի սուրբ Աթոռս Էջմիածին . . . . 7—8. 20. 22

Բ.

Բաղանէծ գեղջ գվեց գանկ մուլքն գնէ Մակուեցի Գրիգոր Կաթուղիկոս. — Այս գիւղ լեալ է երբեմն երբեմն ամառանոց և տեղի զբօսանաց Կաթուղիկոսացն Էջմիածնի . . . . 125
Բերական գիւղ . . . . 129
Բախենիս գեղջ գվեց գանկ մուլքն նոյն գիւղացիք յօժար կամեցողութեամբ իւրեանց նուիրեն Էջմիածնի՝ հաստատ զապալեցիք ի ժամանակս Յակոբ Կաթուղիկոսին . . . . . 126

Դ.

Ի Վաղարշապատ գիւղ.

Դինկ երկու, որոց մինն աւեր . . 189

Ի Քեաշարայ գիւղ.

Դինկ երկու . . . . 189

Ի Կաւակերտ գիւղ.

Դինկ մի՝ յիշատակ մէլիք Սահակին . . 190

Ե.

Եայծէ գեղջ գվեց գանկ մուլքն գնէ Յակոբ Կաթուղիկոս . 124
Եղուարդ գեղջ զչորս և զկէս գանկ մուլքն յիշատակ տայ Յակոբ-ջանն Սէթեան . . . . 122

Թ.

Թուղթք, հրովարտակք, շարթնամայք խանից գիւանադպրաց և Շխիսլամի . . . . . 232—234





Խ.

Խանութք ութն ի Տփխիս . . . 207

Ծ.

Ծոպանիս գեղջ մուլքն է սուրբ Էջմիածնի . . 127

Հ.

Հածէկար գիւղն . . . . 129
Հնձան երկու յՕշական գիւղ . . . 174
Հողք սերմանելիք՝ այն է արտօրայք սուրբ Էջմիածնի Աթոռոյս 152

Ձ.

Ձիթահանք երկու աստ յԱթոռս . . 157
Ձիթահանք մի ևս՝ դպրեվանայ ասացեալ՝ ի շուկայն Աթոռոյս 158
Ձիթահանք յՕշականք գիւղ . . . 157

Ղ.

Ղապալայից և վախուսնամայից օրքանութիւնք թէ հայկական և թէ տաճկական գրովք, որք գտանին աստ ի սուրբ Աթոռս Էջմիածին. 253
Ղարաղշանլու գեղջ գվեց գանկ մուլքն գնէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն ի Վարդապետութեանն . . 127
Ղուուղ մեծ յարևելակողմն Աթոռոյս . 158—9. 162
Ղուուղ որ ի միջավայրի ջուրցն Սէֆիապատի, Խաթունարխի, Մեծամօր և Քասախ գետոց . . . 161
Ղուուղ արտաստեղի ի Բաթրինճ գիւղն . . 162

Ճ.

Ճորթք հարկատուք Աթոռոյս . . . 209

Մ.

Մաղաքութեան՝ այս ինքն ազատութեան թուղթք . 227
Մաստարայ գեղջ գվեց գանկ մուլքն գնեն Յակոբ, Աղէքսանդր և Աստուածատուր Կաթուղիկոսունք . . 114
Մարաք երկու յՕշական գիւղ . . 174
Մեղրէ գեղջ գվեց գանկ մուլքն գնէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն, և Փիլիպպոս Կաթուղիկոս շնորհէ Ս. Գէորգեայ վանիցն յԱռաջնորդութեան Մարտիրոս վարդապետին . . 125

Մուշէ գեղջ գլխոյ գանկ մուլքն գնէ Մակուեցի Գրիգոր Կաթու- . 117
ղիկոս

Ն.

Նուրաջեղջ գլխոյ գանկ մուլքն տայ Աթոռոյս քիշատակ Ցակոբջանն
Սէթեան ի ժամանակս Ցակոբ Կաթուղիկոսին . 121
. 129
Նուրաջուէն գիւղն. . 122
Նուր գեղջ գլխոյ գանկ մուլքն գնէ Ցակոբ Կաթուղիկոսն .

Շ.

Շիրախանայ երկու յՕշական գիւղ ) . . 174
Շիրախանայ մի ևս կարասօքն հանդերձ )

Պ.

Պարտէզ երկու բանջարեղինաց և ծառուտ ի Ս. Աթոռս ) 169
Պարտէզ մի ևս . . . )

Ջ.

. . 22՝ 191—194
Ջուր՝ կէս բաժինն Քասախ գետոյ
Ջուր՝ յերից բաժնից զմինն ջուրց Մօլլատուրսուն գեղջ գնէ Աստուա-
. . 194
ծատուր Կաթուղիկոսն.
. . 195
Ջուրց աղագաւ վէճ ընդ Քիւլ-Թափէցին . . 197
Ջուր քանքանի Աթոռոյ ասոի ի Փիլիպպոս Կաթուղիկոսէ . 197
Ջուր քանքանի ի կողմանէ Քասաղ գետոյ յարևմտեան հիւսիսոյ ի
Ջուր քանքանի ի կողմանէ Քասաղ գետոյ յարևմտեան հիւսիսոյ ի . . 197
Ջուղայեցի Ցակոբ Կաթուղիկոսէ
Ջուր քանքանի ի կողմանէ Քասախ գետոյն ի հարաւակուսէ Աթոռոյս
. . 198
ի սոյն Ցակոբ Կաթուղիկոսէ
. . 198
Ջուրց ծովակ, լիճք, որ է կեօլ
Ջուր հանեալ յականցն Սեաւ Ջրոյն բերել ի սահման Աթոռոյս, և
Ջուր հանեալ յականցն Սեաւ Ջրոյն բերել ի սահման Աթոռոյս, և . . 200
ցարդ կայ այնպէս անկատար առու Նորին
Ջուր Դալմա ասացեալ՝ զոր ի Հրազդան գետոյ հանեալ բերեն ի սահ-
. . 200
մանս Աթոռոյս

ի Դովրէժ

Ջուր երկշաբաթական }
Ջուր ևս երկշաբաթական } . . . 201
Ջուր մի շաբաթական }
Ջուր շաբաթական }



Ջուր միոյ աւուր զկնի տասն և չորս աւուրց )
Ջուր երեք շաբաթական. այս ամենայն վասն այ- ) . 202
գեացն անդր եղելոց )

ի Վաղարշապատ գիւղս

. . . 186
Ջրաղացք ութն

ՑՕշական գեօղ

. . . 187
Ջրաղաց քսան և չորս

ի կաւակերտ ևս ի Գեօկ-գիւմբէթ

. . 188
Ջրաղացք երկու

Ցերևւան ևս ի Զորագիւղ

Ջրաղացք երկու ) . . . 188
Ջրաղացք երկու )

Ռ.

Ռաղամք Թագաւորաց Պարսից և բուռն իշխողաց . 209

Ս.

. . 181
Սառնատուն մի յԵրևան քաղաք

Վ.

Վաղարշապատ գեղջ գլխոյ գանկ մուլքն գնէ Գրիգոր Կաթուղիկոսն, 99:
Եւս և զշրջակայ սահմանսն և զ՝ ի միջի եղեալ մ՝քատու շինուածսն, 100:
Գնէ վերստին զայս գիւղ և զայլ վեց գիւղօրայս, 102: Դարձեալ զրաւեն
այլազգիք բռնի, զոր յետոյ Փիլիպպոս Կաթուղիկոս արգ առնէ առ
Ապաս շահն, և հաստատուն աղամօք սեպհականէ Աթոռոյն, 104: Կրկին
նորոգէ զհաստատութիւնն Ցակոբ Կաթուղիկոս գրովք Շահին և դատա-
ւորաց, 105: Ապա ի տիրել Օսմանցւոց երկրիս, Աստուածատուր Կաթու-
ղիկոս գրովք նոցին հաստատէ զամենայն գիւղօրայս Աթոռոյս և զայլ
հարկաւորսն, 106: Վերստին ի տիրել Պարսից ևս ըստ այնմ: 108
. . 272
Վանք սուրբ Գեղարդի և որպիսութիւնքն
. . 275
Վանք Ամենափրկչի, և հանդամանքն
. . 280
Վանք Խոր-վիրապայ և պարագայքն

Վանք Աղջոց և որպիսութիւնքն . . 281
Վանք Գետարգելայ և որպիսութիւնքն . . 281
Վանք Առաքելոց՝ որ և Կարեսու վանք . . 282
Վանք Կեչառիսու և որպիսութիւնքն . . 283
Վանք Մկբնեաց և որպիսութիւնքն . . 283
Վանք Խութայ՝ որ է Խութավանք, և որպիսութիւնքն . 283
Վանք Հայրոյ, և որպիսութիւնքն . . 284
Վանք Շղուաքայ և որպիսութիւնքն . . 284
Վանք Սևանայ և որպիսութիւնքն . . 284
Վանք Բջնւոյ և որպիսութիւնքն . . 284
Վանք Դրչաղայ և որպիսութիւնքն . . 287
Վանք Կօշայ և որպիսութիւնքն . . 287
Վանք Տեղերու և որպիսութիւնքն . . 288
Վանք Սաղմոսաց և որպիսութիւնքն . . 288
Վանք՝ որ է անապատ սուրբ Լուսաւորչի, և որպիսութիւնքն 291
Վանք Յօհանայ և որպիսութիւնքն . . 291
Վանք սուրբ Սարգսի և որպիսութիւնքն . . 292
Վանք սուրբ Գէորգեայ և որպիսութիւնքն . . 292
Վանք Անանիայ առաքելոյ և որպիսութիւնքն . . 293
Վիճակք Առաջնորդական և Նուիրակական՝ թէ ո՞յք են և զիա՞րդ ունի զնոսա սուրբ Էջմիածին . . 48

S.

Տէղէնիս գեղջ զվեց դանկ մուլքն վերստին հաստատեն լինել Աթոռոյս Ստեփաննոս վարդապետ և այլ միաբանք . . 119
Տունք բազումք ի Վաղարշապատ գիւղս, և ընդ սմին հարկաւոր գիտելիք ի մասին Աթոռոյս և գեղջս . . 202—203
Տուն մի յՕշական գիւղն, բոլոր պարագայիւքն . 203
Տուն մի մեծ՝ բոլոր պարագայիւքն՝ պարսպապատ յԵրևան քաղաք՝ որ այժմ Անապատ կոչի, գնեալ յԵղիազար Կաթուղիկոսէ
Տունք ինչ ի ներքոյ սոյն Անապատիս
Տունք երեք մերձ ի մեծ դուռն անապատիս
Տուն մի հանդերձ պաղճայովն եւս յԵրևան . 204
Տուն մի ի Տփխիս քաղաքի . . 207
Տունք բազում ի Թասմալար գիւղն հանդերձ բնակչօքն և ամենայն պարագայիւքն . . 207



Ք.

Քէշիշ-քէանդ գեղջ զվեց դանկ մուլքն գնէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն . . . . 120
Քէրաշլու գեղջ զվեց դանկ մուլքն գնէ Գրիգոր Կաթուղիկոս, և յետոյ հաստատեն Փիլիպպոս, Յակոբ, Նահապետ, և Աբրահամ Կաթողիկոսունք . . . . 116
Քէօլնուֆայ գիւղն գնէ իւր սահմանօքն Սիմէօն Կաթողիկոսն փոխարինութեամբ Ֆռանկանոց գեղջն . . 114

O.

Օշական գեղջ զհինգ դանկ մուլքն գնէ Փիլիպպոս Կաթողիկոսն ի տաճկաց, 108։ Եւ զմի դանկն գնէ Յակոբ Կաթուղիկոս, 108։ Եւ ապա վերստին սոյն գիւղացիք առնուն յԱստուածատուր Կաթուղիկոսէն հարիւր յիսուն թումանի, և տան հաստատուն գիր՝ այնուհետև տանին երկու տալ մուլք . . . 111

Ֆ.

Ֆարմանաց թագաւորացն Օսմանցւոց և այլ հարկաւոր գրեանց հանգամանք և ծանօթութիւնք . . . 234
Ֆռանկանոց գեղջ զվեց դանկ մուլքն գնէ Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն , 112։ Վերստին սոյն գիւղացիք առնուն յԱբրահամ Կաթողիկոսէն 600 ղուռուշ, որ էր յայնժամ տեղւոյս դրամ 40 թումանի, և յաւելուն զմուլքն 10-ին 2։ Եւ այլ վէճք վասն գեղջս ընդ Յակոբ և ընդ Սիմէօն Կաթողիկոսացն։ . . . 112

ՑՈՒՑԱԿ ԱԶԳԱՑՆՈՑ ՄԵՐՈՑ ԳԱՆՁԱԿՆԵՑՒՈՑ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ԾԱԽՍ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՋԱՄԲՌ ՄԱՏԵՆԻՍ։

| | |
|---|---|
| Գրիգոր Վարդապետ Տէր Ստեփաննոսեանց, Յաջորդ | 10 |
| Արսէն քհնյ. Եսայեան | 2 |
| Գրիգոր քհնյ. Բաբաքեւխեանց | 5 |
| Գրիգոր քհնյ. Տէր Յովսէփեանց | 5 |
| Եփրեմ քհնյ. Մահտեսի Մարտիրոսեան | 5 |
| Սարգիս քհնյ. Տէր Առաքելեանց | 2 |
| Աբրահամ Յովհաննիսեան Մէլիքեանց | 5 |

| | |
|---|---|
| Ալեքսանդր Նազարիչ Մէլիքեանց | 5 |
| Աղաճան Մահտեսի Ազարեանց | 1 |
| Աղամիր Մնացականեանց | 2 |
| Աղայ Աղայեանց | 2 |
| Աղայ Վարդանեանց | 2 |
| Առուստամ Ափանոսեանց | 2 |
| Առուստամ բէկ Մելիք Հախիճանեանց | 1 |
| Առուստամ Սարգիսեան | 2 |
| Արշակ Մահտեսի Յովսէփեան | 80 |
| Արտեմ Պետրոսեանց Սիմէօնեան | 5 |
| Աւագ Խաչատուրեանց | 2 |
| Աւագ Հալլարեանց | 1 |
| Աւետիս Բաղալբեկեանց | 5 |
| Աւետիս Նասիրեանց | 2 |
| Աւետիս Տէր Մատթէոսեանց | 2 |
| Բաղալ Սարգիսեան Ասորի Ուռումեցի | 5 |
| Բաղամ Շահրիեանց | 2 |
| Բարսեղ Մահտեսի Ամիրխանեանց | 1 |
| Բէկլար բէկ Բարուչեանց | 5 |
| Գորկի Աղաճանեանց | 1 |
| Գրիգոր բէկ Սարդարեանց | 1 |
| Գրիգոր Խաչատուրեան | 5 |
| Գրիգոր Մակարիչ Թիրաքեանց | 5 |
| Գրիգոր Մահտեսի Յարութիւնեանց | 2 |
| Եղիշէ դպիր Յովհաննէսեան | 3 |
| Եղիշէ Մահտեսի Գրիգորեան | 2 |
| Լազր Իւանիչ Լազարեանց | 3 |
| Կարապետ Մահտեսի Համբարձումեան | 1 |
| Կարապետ Վերդեան | 4 |
| Համբարձում Ղարիբեան | 5 |
| Ղահրաման - Սերգէիչ Յովհաննիսեան | 4 |
| Մաղաթ Շահուպարոնեանց | 1 |
| Մակար Սերգէիչ Տէր Ազարեանց | 1 |
| Մահտեսի Առուստամ Կնեազչեանց | 1 |
| Մահտեսի Եփրեմ Գարչինեանց | 1 |
| Մահտեսի Մկրտում Յարութիւնեանց | 1 |
| Մահտեսի Մնացական | 5 |



| | |
|---|---|
| Մահտեսի Յովհաննէս Մահտեսի Ծատուրեան | 2 |
| Մաղաքիէլ Տէր Մարտիրոսեանց | 1 |
| Մանուէլ Սուլխանեանց | 2 |
| Մելիք Ստեփանեանց | 2 |
| Մէժլում բէկ Մէլիք Շահնազարեանց | 1 |
| Մինաս Վասակեանց | 5 |
| Միրզայ Տէր Աստուածատուրեանց | 2 |
| Միրզաջան բէկ Բարուչեանց | 5 |
| Միքայէլ Աղայեանց | 5 |
| Միքայէլ Յովհաննէսեան | 2 |
| Մկրտիչ Երեցփոխանեանց | 2 |
| Մկրտիչ Խօջայեանց | 1 |
| Մկրտիչ Մանուէլեանց | 1 |
| Մկրտիչ Մօփիրաղեանց | 2 |
| Մնացական Սէյրանեանց | 5 |
| Մովսէս բէկ Բէկզատեանց | 5 |
| Մովսէս Պապլեանց | 2 |
| Յակոբ Ասիլեանց | 1 |
| Յակոբ Լիսիկեանց | 5 |
| Յակոբ Տէր Մովսէսեան Խոջայեանց. | 2 |
| Յարութիւն Աթայեան | 2 |
| Յարութիւն բէկ Բէկզատեանց | 1 |
| Յարութիւն Ջառաբեանց | 1 |
| Յարութիւն Մկրտումեան | 1 |
| Յարութիւն Մնացականեանց | 1 |
| Յարութիւն Նանասեանց | 2 |
| Յովհաննէս Աւետիսեան | 5 |
| Յովհաննէս - բէկ Մամիկոնեանց | 2 |
| Յովհաննէս բէկ Պրօտոպոպովեանց | 5 |
| Յովհաննէս Խալաթեանց | 1 |
| Յովհաննէս Յովհանջանեան Մարտինեանց | 1 |
| Յովհաննէս Վարդապետեանց | 2 |
| Յովհաննէս Տէր Խաչատուրեանց | 1 |
| Յովհաննէս Փաթալեանց | 5 |
| Յովսէփ Եսայեան | 5 |
| Յովսէփ Տէր Յովսէփեանց | 1 |
| Նազար բէկ Մելիք Շահնազարեանց | 5 |

| | |
|---|---|
| Ներսէս Տէր Ներսէսեանց | 5 |
| Նիկալայ Նազարից Մէլիքեանց | 5 |
| Ոսկան Սեհրանեանց Ջակիրցի | 1 |
| Պետրէ Աթայեանց | 5 |
| Պետրոս Աւետեան | 5 |
| Պետրոս Նարաթեանց | 5 |
| Պօղոս Եսայեանց | 2 |
| Պօղոս Մարգարեան | 2 |
| Ջաւատ Տէր Գէորգեանց | 1 |
| Սարգիս Ափանոսեանց | 5 |
| Սարգիս Անտօնեանց | 2 |
| Սարգիս Մալիեանց | 2 |
| Սարգիս Նանասեանց | 2 |
| Սարգիս Շահուպարոնեանց | 5 |
| Սարգիս Տէր Սահակեանց | 1 |
| Սերգէյ Յովհաննիսեանց Աթայեանց | 5 |
| Սիմէօն բէկ Ջոհրապեանց | 5 |
| Սիմէօն Խասհակեանց | 1 |
| Սիմէօն Շահրիեանց | 2 |
| Սողոմօն Ոսկանեանց | 2 |
| Սողոմօն Պօղոսեան Ղազարչոնց | 2 |
| Սուլթան բէկ Մելիք Հախնազարեանց | 5 |
| Վասիլ Տէր Ստեփաննոսեան Եղիեանց | 5 |
| Վարդազար Հայրումեան | 5 |
| Վիրապ Մկրտումեան | 1 |
| Քերովբ Տէր Մարտիրոսեանց | 5 |
| Քոչար Պետրոսեանց | 1 |

Բոլոր գումարն որբ· 519

ՀՀ Ազգային գրադարան
NL0031436
ՀՀ Ազգային գրադարան
NL0031560
ՀՀ Ազգային գրադարան
NL0031559